



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



The image shows the front cover of an old book. The cover is decorated with marbled paper featuring a pattern of irregular, interconnected shapes in shades of green, yellow, and brown, set against a light blue background. The spine of the book is visible on the left, bound in dark, worn leather. A small, white, rectangular label is affixed to the lower-left corner of the cover. The label contains two lines of text: the first line reads 'ՍԵՐԵՐ' and the second line reads '466'.

ՍԵՐԵՐ

466







1871

3 11 9 11 9 11 9 11 9 11

1871



ՍԵՐԵՐ

466 48

7

ՅԱՆՈՍԻ

Յ Ա Ղ Ա Գ Ս Պ Ա Պ Ի Ն

ԵՒ

ԺՈՂՈՎՈՅ ՆՈՐԱ

ՀԻՆՈՒՄ



387

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ա Տ

ԳԱՐԻԷԼ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆՑ

ՄԻԱՐԱՆ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՄԵՒ



Ի Վ Ա Ղ Ա Ր Հ Ա Պ Ա Տ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱՄԵՒ

ՌՅԻԱ - 1871

ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. ԳԻՈՐԳԱՅ Դ.

ՎԵՀԱՓՈՒ ԵՒ ՍՐԲԱԶՆԵԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



( 4192 | 466-2009  
41

ԱՌ

ՎԵՀԱՓԱՌ ՀՈԳԵԻՈՐ ՏԷՐՆ ՄԵՐ

ՏԷՐ ԳԷՈՐԳ Դ.

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ.



283



ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ,

**Չ**այն գուժեաց ի Հռովմայ, և շան-  
 թեցաւ հեռադրովք ծագաց ի ծագս  
 աշխարհի, թէ գումարեալն անդանօր  
 ժողով լատին և կեղեցւոյ ընկալաւ ուրու-  
 րեմն իբրև զսահման ուղղափառ հաւա-  
 տոյ զանտանելին ողջամտաց զմոլորու-  
 թիւն անսխալութեան պապին: Յա-  
 պուշ հարաւ լուսաւորեալն ևւրոպէ, և  
 ոչ զիտէր ընդ որ ինչ յաւէտ զարմա-  
 նալ, ընդ այնքան տգիտութիւն, կամ  
 ընդ անարժան գնացս եպիսկոպոսացն  
 հարիւրաւորաց ի մի վայր եկելոց, եթէ  
 ընդ զարմանալին ձեռներիցութիւն Պիո-  
 սի Թ, որ մարդ գոլով ապիկար՝ յանձն  
 իւր ընկալաւ կամակար զտուեալն ինքեան  
 ի շողմարար մարդկանէն զանուն և ըզ-  
 կոչումն՝ զաստուածականին միայն իշ-

խանութեան և հրամանաց վայելուչ:—  
Սորին աղադաւ մինչ չև իսկ կնքեալ բան-  
քն էին, և վախճան լեալ էր ձայնի ա-  
ղաղակին, և ահա ի շունդն համբաւոյ  
ահեղ պատերազմի Վաղղեացւոց և Բը-  
րուսիացւոց՝ փութացեալ ի բաց առին  
Վաղղեացիքն զսուինս իւրեանց և ըզ-  
հրաշունչ մեքենայսն՝ յորս միայն յեց-  
եալ կայր յամաց բազմաց հետէ խարխուլն  
այն և դողդոջոտ գահաւորակ աշխար-  
հական իշխանութեան պապին. անկաւ  
կործանեցաւ ամբողջ նորազանկումն ան-  
կանգնելի. ի փախուստ խուճապեալ  
ցրուեցան եպիսկոպոսունքն հոլոնեալք,  
և հինն Հռովմ ազատացեալ հուսկ ու-  
րեմն յանտեղի տեսչութենէ հոգևորա-  
կան իշխանութեանն այնորիկ ի վերայ  
քաղաքաժողով մարդկան և աշխարհա-  
կան կարգաւորութեանց, հրատարակե-  
ցաւ դարձեալ մայր քաղաքացն Իտա-  
լացւոց աշխարհին:

Իսկ Ռու, ո՛վ Վաջդ Հովուապետ  
Հայաստանեայցս Եկեղեցւոյ, որ ի վայ-  
րի դալարւոջ անսայթաք վարդապետու-  
թեան արևտարանին, և առ ջուրս հան-

գստեանն անստերիւր գնացից Հարցն մե-  
րոց սրբոց սնուցանես և դարմանես խը-  
նամով զՏօտ Վո փոքրիկ, ի լուր համ-  
բաւոյն բօթաբերի աւաղեցեր վեհանձ-  
նօրէն ինձ լու ի լու զահահասեալ աղէ-  
տըս եկեղեցեացն արեւմտից, և փոյթ  
յանձին կալար պնդագոյնս պատասպա-  
րել զՎո ժողովուրդսդ ի նորահնար  
ուսմանէ անտի: Հրաման ետուր անդէն  
և իմուսն նուաստութեան յեղուլ ի հայ  
բան զՅաննիս մատեան աշխարհաքարոզ,  
յորում կանխեալ և հիմնովին քան-  
դեալ է առն ուրումն քաջի զքստմնելին  
զայն զմոլորութիւն:— Օ, որ և իմ կա-  
տարեալ աւասիկ մտադիւր ջանիւ ըզ-  
նուիրական հրաման Վեհիդ, արկանեմ  
խոնարհութեամբ զայս վաստակ դուզ-  
նաքեայ առ ոտս Վո:

Հաճեսցիւ արդ, Աստուածարեալ  
Հայրապետ, քաղցր ակնարկել յիմն  
երկասիրութիւն, և Վոյով ձեռամբդ  
պարգևես զսա իբր զճարակ հոգևոր  
Վումդ ուղղադաւան հօտի: Մնդ նմին  
և առատազեղ օրհնութեանցդ շնորհիւ  
վարձահատոյց եղիցես անդրդուելի հա-

ւատարմութեանս իմում առ Աթող  
Սրբոյ Հօրն մերոյ և լուսատուին Գրի-  
գորի, և անստգիւտ հարազատութեանս  
առ Աստուածարեալդ Գլուխ, որով եմս  
և՛ մնամ,

ՎԵՀԱՓԱՌՍԵՐՐ

ԳՈՒՄԴ ՍՐԲՈՒԹԵԱՆ

ԱՆՔԻՆՆԱՆՈՐԳ ԺԱՌԱՅ Լ ՍՐԳՆ

ԴԱՐՐԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶՆԱՆ:

Ի ԹԻՒՐԿԻՆԻՆ

23. ԴԵԿ. 1870.



## ՁԵԿՈՒՑՈՒՄՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ

**Ի** ժամանակին յորում Պիոս Թ. քաջայերեալ և յորդորեալ ի նախանձայոյզ մասնէ կաթողիկաց, և մանաւանդ ի հզօրացելոցն զարդիս կրօնաւորաց եզու իթական կարգին, հանդերձեալ էր զուամարիւ ժողով տիեզերական, — զարմանք ունէին զամենեսեան՝ զի զպատճառս Ժողովոյն լռել ակտորժէր նա քան թէ ասել, հակառակ վաղնջուցն սովորութեան Ալեկեղեցւոյ Վրիստոսի: Այլ և ի թուղթս անդ հրաւիրանաց զորս առ պատրիարքունս եկեղեցեացն արևելից առաքէր՝ չհարցանէր ինչ ի նոցանէ խորհուրդ կամ կարծիս զտեղւոյ Ժողովոյն՝ թէ ո՛ր արժան իցէ զուամարել զայն, և ոչ զխնդրոցն առաջարկելեաց ի նմին: Ասան որոյ և Ալեկեղեցիքն այնոքիկ ընդ ձեռն Պատրիարքաց իւրեանց բացէ ի բաց հրաժարեցին ի զնաւոյ յանկանոնն յայն և ի նորանշան զուամարումն Ժողովոյ:

Աքանչելի իմն ցուցաւ յայնմ հանդիսի և Հայաստանեայցս Ալեկեղեցւոյ անխզելին միութիւն և խոհական արիութիւն, որում ոչ արդեօք ունէին ակն ո՛չ գահն հռովմական և ո՛չ որ նովաւ պալատն և հոյլք կաթողիկաց: Իբր զի Արքազան Պատրիար-

քունքն Առստանդնուպոլսոյ և Արուսաղէմի, ևս և ամենայն զողջես Առաջնորդք տեղեաց տեղեաց Օսմանեան աշխարհին, հրաւիրեալք ի պապէն և ի պապականաց անտի ի ժողովն յայն՝ դարձուցին անդէն զաչս իւրեանց ի գերագահն Աթոռ Արքոյ՝ ուսատուն մերոյ Պարիզորի ի սուրբ Աջմիածին, և նորին հաճութեան և հրամանացն կալով պատկառ. հարցանել զխորհուրդ՝ թէ արժան իցէ ինքեանց դնալ ի կոչ հայրապետին Առովմայ, և կամ երեսփոխանս ի ժողով անդր արձակել: Իսկ որ արժանաժառանգ աթոռակալն է Պարիզորի՝ ուսատունն Առդեոր Տէրն մեր Տէր Պէտրոզ Պ, — որ ընդ խաղաղասիրի ոգւոյն ճշմարտիւք իրատոնէական սիրոյն առ եկեղեցիս ուղղափառաց քաջ քաջ լծորդեալ բերէ յանձին զբազմափորձ հմտութիւն անցիցն անցելոց ընդ Ակեղեցին հոովմէական և զարիաջան պաշտպանութիւն անկապտելի իրաւանց Աօտին ի խնամս իւր ապսպարելոյ, — ակնարկեաց առ իւրսն ձեռնպահ լինել ի կցորդութենէ Ժողովոյն այնորիկ, և անպատրուակ բանիւք հրատարակեաց զպատճառսն ծանունս, և որոյ վասն պարտ և արժան համարէր կալ մնալ առ ժամն ի բացէ, և երկայնմտութեամբ սպասել ելից իրացն՝ զորս կանխաւ նկատեալ զուշակէր զգօնութեամբ: Վանզե որպէս ի սրատես մտաց բազմաց եպիսկոպոսաց արեւելից և արեւմտից, ևս առաւել ի մերոյ Ա՛յն հափառ Այրապետի խորին հեռատեսութենէ ոչ ծածկեցաւ և այս ինչ՝ թէ կէտ նպատակի Ա՛յտիկանեան ժողովոյն էր զխաւորապէս սահմանել իրբու վարդապե-

տութիւնն Վաթուղիկէ Նշիկեղեցւոյն Վերիստոսի և մասըն հաւատոյ ուղղափառութեան զաղարտեալն և զմերժեալն ի վաղուց հետէ և ի բիւրաւոր ժողովրդոց զԳերաֆահո-Նի-ն պապին շնորհմայ, ընդ նմին և զանտեղին զայն ենթադրութիւն թէ անհրաժեշտ է պապն ի վճիռս իւր՝ ի խնդիրս հաւատոյ և ի կանոնս բարոյականին : Նշ զայս ամենայն այլովքն հանդերձ մեծաւ և արդարադատ կշռութեամբ բացայայտէր Վաթուղիկոսն ամենայն շայոց ի Վոնդակին իւրում հրատարակելոյ ի 11 Փետրուարի 1869 ամի. ընդ որ իրաւամբք հիացան օտարացն անգամ իմաստունք՝ եկեղեցականք և աշխարհիկք՝ զԹարգմանութիւն նորին յիւրեանց օրագիրսն վերծանելով \*) :

(\*) Ներեցի մեզ ի մէջ բերել աստանօր զԹուղթ սրբազան Պատրիարքին Վոստանդնուպօլսոյ առ Վեհապատիւ Վաթուղիկոսն, և զՆորին առ այն պատասխանի զտպագրեալն արդէն յԱրարատ ամագրին 1869 ամի (ՏԵ՛ս Մարտ. Է. ԺԱ. Շրջն Ա. յերես 135 — 135) :

(Պատճեն գրութեան Գեր. Պատրիարքի.)

## ՎԵՀԱՓՈՒ ՏԻՐ

Հայրազեան հռովմէական Եկեղեցւոյ Պիոս Թ. Մատոյց և մեզ յաւուրս սոստիկ ի ձեռն հոգևոր պաշտօնէից Եկեղեցւոյ իւրոյ ի Մայրաքաղաքիս տեսրակ իմն Լատինաբարբառ :

Եկեղեցւոյ աստի առ մեզ Լատին Եկեղեցականաց ժանեաց կէն պարունակութիւն տեսրակին այնորիկ հրուէր է Ազգային Եկեղեցւոյ մերոյ առ համազումար ժողովն, որոյ զումարումն ասէին լինել ի Հռովմ յութերրորդի աւուր Դեկտեմբերի ամսոյ 1869 տարւոյ :

Մէջ որպէս պարտն էր պատասխանի արարաց այսպէս թէ, է և մեր Գերազոյն Հայրապետ ի Ս. Ելմիաթին, զլուիս Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ միայն ունի զբրաւասութիւն ի վերայ սրբոյ Եկեղեցւոյ մերոյ և ամենայն հոգե-

Այլ և որք միանգամ իմաստնազոյնքն էին և արիա-  
գոյնք յիպիսկոպոսացն Գաղղիացւոց և Գերմանա-  
ցւոց, Անգղիացւոց և Ամերիկացւոց, ոչ այլ ազգ ինչ  
հաւանեցան երթալ հասանել ի ժողով անդր, եթէ ոչ

ւոր հովուաց նորին. վասն որոյ և նմա անկ է քննագատել զհրաւիրագիրն :  
Ի վեր է քան զձեռնահասութիւն մեր, և որ ընդ մեզք Եպիսկոպոսաց ամե-  
նեցուն խօսիլ ինչ յաղագս բանիս այսորիկ :

Ընդ այս յայտարարութիւն մեր մեկնեցան եկքն և թողին զտետրակն,  
զորոյ և զշայերէն թարգմանութիւն աւասիկ մատուցանեմք Ձերում Վեհափա-  
ռութեան, և յանձն առնեմք իմաստութեան մեծի Հայրապետիդ առնել զոր ար-  
ժանն է :

Լսեմք ևս եթէ և այլոց Վիճակաւոր Եպիսկոպոսաց Տաճկաստանի առ-  
քեալ իցէ ի տետրակաց անտի :

**Մ'նամբ Ալեհափառաբնիւան Ձեռնամ**

ՊԱՏՐԻԱՐԲ Կ. ՊՕԼՍՈՑ ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Տեղի կ'ըրոյ).

Հ.Ր. 1417

Ի 14 Դեկտ. 1868

ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կ. Պոլիս :

(Պատճեն կոնցակի Վեճ. Հայրապետիկե.)

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ԲՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕԲՆ  
ԱՍՏՈՒԾՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵ-  
ԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՑ ՍՐԲՈՑ ԿԱ-  
ԹՈՒՂԻԿԻ ԷԶՄԻԱԾՆԻ .

Գերապատել Գառորհարգի Կ. Պօլսոյ Պօղոսի Սրբազան Արքեպիսկոպոսի սիրելի  
եղբոր մերոյ խնդալ :

Ջյայտարար զբնութիւն Ձեր ի 14 Դեկտեմբերի անցելոյ ընդ համարաւ  
1417 ընկալեալ հանգերձ թարգմանութեամբ թղթոյ Սրբազան. Հայրապետին  
Հառվմայ Պիտոբ Թ. մատուցելոյ Ձեզ ի կողմանէ ֆրիւանդիդ նորին եղելոյ

սպառազինեալք բովանդակ հմտութեամբն իւրեանց և ճարտարութեամբն ի բան և ի զիր՝ առ իշիջուցանելոյ եթէ իցէ հնար, զհրդեհն մեծ և բազմադէտ, զոր ի վաղուց հետէ սլատրաստէին բորբոքել եզուրթացն չարանիւթից և այլոց կրօնամոլ պապականաց դասակք ձեռամբ պապին տկարամտի, այս ինքն է ի հերքել և ի մերժել յամենայն զօրութենէ իւրեանց զվարդապետութիւնն զայն՝ զին չարաչար հետեանօք վնասակարօք Ակեղեցւոյ : Ասակ յորովք ի նոցանէ տեսեալ յետ գումարման Ժողովոյն՝ թէ չիք հնար զառաջս

այք ի Մայրաքաղաքիդ, և ընթերցեալ զայն ուչի ուչով տեղեկացաք զիտուորութեանն, որով մտադիր է կազմել ժողով ընդհանրական յՑ-ն Գեկտեմբերի այսր ամի ի Հոռովմ. առ որ հրաւիրեալ է զՁեզ և զայս :

Ըստ անհասանելի կամաց Բարձրելոյն Աստուծոյ և մերս նուստութիւն զուով մի ի Հովուապետաց Քրիստոսական Հօտին, թէ և ցանկաւք միութեան կաթուղիկե Եկեղեցւոյ և փափաքիմք հանապազ տեսանել զիրճիմն հակառակութեան բարձեալ ի միջոյ, և զտէր և զխաղաղութիւն ի միութեան անդ Եկեղեցւոյ թաղաւորեալ, ըստ որում հակառակորդին է զորժ ընդդէմ կալ միութեան մարմնոյ Եկեղեցւոյն Քրիստոսի. բայց քալ հասու եղեալ մտաց և իմաստից թղթոյ Ս. Պիոսի Թ, ցաւիմք յոյժ, զի բազմալին և մեզ միութիւն, զոր կամի և Փրկինն աշխարհի և աղօթէ առ Հայր թէ : Եկեղեցին մի, որպէս և մեք մի եմքս, անյուսալի իմն երևի այժմէն իսկ ի ժողովոյ անտի :

Եթէ իրապէս փափաքեալ էր Հոռովմայ միութեան եկեղեցւոյն Քրիստոսի, ապաքէն պարտ էր կանխառ հետամուտ լինել այնմ, թէ ուստի սկիզբն էառ պառակտումն եկեղեցւոյ ի միութենէ, և զմէ արդեօք զաւանտութեամբ և սիրով ի միութիւն Գլխոյն Քրիստոսի զօղեալ անդաւք որոշեցան ի միմեանց, և ծագեցառ ցաւալին այն բազմադարեան գժտութիւն յընդհանուր Քրիստոնեայս, ոչ ապաքէն որպէս քաջայայտ է բովանդակ աշխարհի, ծնունդ էր այն աքնութեանց Աթոռոյն Հոռովմայ առ ի նախապատիւ և զերբազան հանդիսանալ քան զայլ Աթոռս Արևելեայց :

Ապա ուրեմն ցանկալի էր ամենայն շնորհասիրաց տեսանել նախ զճան Նորին Սրբազնութեան ի բառեալ զնախասկիզբն գժտութեան ի միջոյ և ընթանալ ընդ արահետ շաւիղս նախնի Հարցն օրոցոյ, և ըստ օրինի կանխապէս խորհրդակցեալ ընդ Արևելեան Եկեղեցւոյ Հովուապետս իւրաքանչիւր Ազգաք

չարեացն ունելոյ, ամապարեցին պէսպէս պատճառանօք խոյս տալ ի Ճողովոյ անտի, և դարձ առնել յիւրաքանչիւր տեղիս, արք իբր երկերիւր և աւելի. և որք կացին և մնացին այնուհետև առ պապին, թէպէտ և տակաւին ևս բազմադոյնք թուով՝ բայց նուազք զօրութեամբ և քաջութեամբ սրտի, զուցէ և գիտութեամբ մտացն, ոչ կարողանային զդէմ ունել եզուրութացն հնարագործութեանց, և ի վարանս տարակուսի տարաբերեալ ծփէին :

Եւ ահա յայն միջոց ժամանակի ի վեր երևեցան ի կողմանս կողմանս Եւրոպայ բազմաթիւ գրուածք

յայտնել կանոնական յօրուածոյք զրուն նպատակ իւր և զկէտս խնդրոց քննելեաց ի ժողով անդ, և յետ ընդունելոյ զհաւանութիւն Նոյնն համակրութեամբ որչափ զտեղի և զժամանակ ժողովոյն :

Սակայն ի բաց թողեալ Ս. Հայրապետին Հռովմայ զայն որ յրէժալին հայի միութիւն ի Յիսուս Քրիստոս, ինքնին հաճեալ է հրատարակել նախ զօրինակ հրաւիրական թղթոյ, և ապա առաքել զայնս առ Հովիւս՝ Եկեղեցւոյ, որով է կարծիս սոյ չգտիլ ամենեցուն թէ, Նորին Սրբապնութիւն կամք զանձն իւր ցուցանել գերագոյն իշխող, և զուիս Քրիստոնէութեան ոչ ճանաչելով զՀռովմայեան Արևելեան Եկեղեցւոյ համապատիւ ինքեան աստիճանօք և իրաւասութեամբ և Առաքելական յախորդութեամբ պատուելոյ, զորս Հոգին սուրբ հաւասար իշխանութեամբ և շնորհօք զարգարեաց : Եւ զի զԱթոս՝ Հռովմայ բացայայտ հռչակէ ի թղթին կեդրոն միութեան, զորպիսի վարդապետութիւնս ոչ ընդունի սուրբ և ուղղափառ եկեղեցին Հայաստանեայց ընդ այլոց ազգաց Արևելեան եկեղեցեաց, Կուիս եկեղեցւոյ զՓրկին մեր միայն զՔրիստոս ճանաչելով :

Նա որ խնդրէ զմիութիւն Եկեղեցւոյ, զանց արարեալ զկարի կարևորօք, որք պարտ էին լինել անչլիք հիմն գումարման ժողովոյն, իւրովն կարծեցեալ միապետական գերիշխանութեամբ ինքնին իսկ ևս քան զևս հեռանայ ի միութենէ Կաթողիկէ Եկեղեցւոյ. և ում լիցէ յայտնի թէ յայնպիսի սկզբանց հակառակելոց իմաստից ողջամիտ վարդապետութեանց սրբոյ Աւետարանին, զժուարին է ակն ունել ճշմարիտ միութեան. թրեւս նորոնոր վէճից և անգարմանելի պառակտմանց ևս և դառնազին հակառակութեանց բացցին ասպարէզ ի գոյթակցութիւն բազմաց և ի նախատինս Քրիստոնէական սուրբ կրօնի :

զօրաւորք ընդդէմ գործոց և սահմանաց և զիտաւո-  
րութեանց պապական յօղորդոյն, ընդ որս և ի Գեր-  
մանիա այս մատեան Յաննասի ի լեզու Գերմանացի,  
որ և իսկոյն թարգմանեցաւ ի զանազան բարբառս ազ-  
գացն Նւերոպացւոց, և որպէս բաղմահմուտն ( ) վեր-  
պէք ասէ, ելեքտրացոց իմն զԳերմանիա, զՎաղղիա,  
զՆիդղիա և զԻտալիա : Իսկ ի Հռոմ վահասեալ ճշմար-  
տախօս մատենիս, — ուրանօր սովորութիւն է ի բա-  
ղում դարուց և այսր՝ գոչել ընդդէմ գուշակացն ար-  
դարութեան թէ «Մի մարգարէանար վասն մեր, ա-  
պա թէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց», — անդէն և

Ապաքէն մեք, որ յամենայն ժամ աքնիմք վասն հօգւոց ի Քրիստոս հա-  
ւատացեալ ժողովրդոց յանձնելոց մեզ ի Տեառնէ, և ջանամք պանել զանդոր-  
քութիւն Հօտին մերոյ, և պարծիմք Տերամք յԱռաքելական սուրբ Եկեղեցի  
մեր, որ ի ձեռն սրբոց Առաքելոցն Թաղեսի և Ռարգուղիմէոսի հաստատեցաւ  
ի վեմն Քրիստոս, և ազօթիք բաղմաշարչար նահատակի Ս. Գրիգորի մեծի  
Հայրապետի ցայսօր կայ անդրդուելի ի գրանց դժօխոց, ինքնուրոյն իբուսու-  
թեամբ, հարկ անհրաժեշտ համարիմք ժանուցանել Սրբազան Եզրայրութեան  
Ձերում զգոյշ լինել ի հրաւիրմանէ անտի և ի ժողովոյ որ գրկեալ գասնի ի  
հիմանց օրինաւորութեան, և զգուշացուցանել նա և զԱրքեպիսկոպոսուսն, և  
զամենայն Առաքնորդս վիճակաց և Եկեղեցեաց մերոց որ ի Տահկաստան,  
չառլ տեղի չփոթից և տարածայնութեան:

Եւ միաբան ազայեցուք յամենայն օրով, որպէս և միշտ ազանմքս,  
զի Գլուխն անկեան և խաղաղութիւն Եկեղեցւոյ սրբոյ Քրիստոս Փրկիչն ամե-  
նեցուն, որ արօր խաղաղութիւն արեամբ Խային իւրոյ կոչելով զամենեւեմ ի մի  
արօս Աւետարանական վարչապետութեան, պահեսցէ ի խաղաղութեան զեկե-  
ղեցի իւր սուրբ, և զազգս Հայոց պահպանեսցէ յանակնաւնելի փորձութեանց:

Ուջ լե՛րո՛ւ՝ զբացեալ Տերմ՛ք:

(Ստորագրութիւն):

Համար 54

Ի 44 փետրւորէ 1869

Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՅԻՆ:

անդ դատապարտեցաւ ի պապականաց անտի և փակեցաւ ընդ արգելանօք : Աւ արդեօք յիրաւի. քանզի մատեանս այս Յանոսի յայտ յանդիմանութեամբ ցուցանէ զանհնարին փտութիւն հիմանց պապական շինուածոյն, և ի ձեռն հաւաստի վկայութեանց քաղելոց ի ստոյգ աղբերաց՝ խայտառակեալ հրատարակէ զամենայն զանվաւեր և զանհարազատ բանս և ըզստայօդ գրուածս և զխարդախեալ զըոյցս շահասէր պաշտօնէից և շողոքորթաց պապիցն Հռովմայ, որք և ի վերայ այնպիսեացն ինքնահնար ստութեանց հիմնել և հրատարակել թեակոխէին ի ժամուն ըզնորալուրն իւրեանց վարդապետութիւն զանսխալականութենէ պապին՝ իբրու զօրինաւոր ինչ և զվաւերական ճշմարտութիւն. — զոր և արարինն իսկ ի սկիզբն ամսեանն Յուլիսի այսր 1870 ամի, և չարաչար զայթակղեցուցին ոչ միայն զարեւելեայս համօրէն, և զՌողոքականս առ հասարակ, այլ և ի նոցունց իսկ իկաթ ոլեկացն քրիստոնէից զանթիւ ժողովուրդ\*):

---

(\*) Ահաւասիկ թարգմանութիւն բանից սահմանի ժողովոյն զայսմ ինդրոյ. « Ասն որոյ պինդ կալեալ զաւանդութիւնն որ իսկզբանէ անտի քրիստոնէութեան, ի փառս Աստուծոյ Փրկչին մերոյ, ի պայծառութիւն կաթուղիկէ (իմա հաւանքի) հաւատոյ, և ի փրկութիւն քրիստոնեայ ժողովրդոց, ուսուցանեմք՝ և սահմանեմք՝ հաւանութեամբ սրբոյ ժողովոյս, զի վարդապետութիւն է հաւատոյ յաստուածուստ յայտնեալ, թէ քահանայապետն Հռովմայ յորժամ խօսիցի յաւանոյ, այս ինքն է յորժամ կատարելով զպաշտօն հովուի և ուսուցչի ամենայն քրիստոնէից՝ զօրութեամբ գերազոյն առաքելական իշ-

Յայնժամ կարի իրաւամբ ասացին և հասարակացն կարծիք և հաղարաւոր լրագիրք Աւրոպայ և Ամերիկոյ՝ թէ եզուիթքն չկարելին կշռել պապական աթոռոյն հարուած սաստիագոյն և մահաբեր քան զոր հասուցինն նմա հրատարակմամբ այնր վարդապետութեան. հարուած արդարև ահագին և սարսափելի, որ զհոգեւորական զօրութիւն իշխանութեան պապին ջլատեաց բոլրովին, իսկ զաշխարհականն և զմարմնաւոր թաղաւորութիւն նորա անդէն առ նմին կորզեաց և էառ ի ձեռաց նորա: Բ-թեցան և խորտակեցան այնուհետև զէնք ստուերակերպ վարձկան զօրակ սնաց պապին առաջի արխական արշաւանաց ազատական ազդին Խապաղցոց, եզուիթքն և համամիտք նոցա ի փախուստ և ի թաքուստ աճապարեցին յերեսաց սրամտութեան յաղթական ժողովրդոց, և ուր ուրեմն ձողոպրեցաւ Հոովմ քաղաք ի ձեռանէն Պիոսի Թ. և որ աւուրբք ինչ և եթ յառաջագոյն

,,խանութեան իւրոյ՝ սահմանէ թէ այս ինչ վարդապետութիւն  
 ,,ի վերայ հաւատոյ կամ բարուց պարտի ընդունելի գոլ ընդ-  
 ,,հանուր Եկեղեցւոյ, ունի լիովին — օգնականութեամբն Աս-  
 ,,տուծոյ՝ որ խոստացեալ է ի դէմն երանելոյն Պետրոսի — զայն  
 ,,անսխալականութիւն, որով կամեցաւ Փրկիչն ճոխացուցա-  
 ,,նել զԵկեղեցի իւր ի սահմանել անդ զիւր վարդապետու-  
 ,,թիւն զհաւատոյ կամ զվարուց, և թէ՛ հետևարար այնպիսի  
 ,,սահմանք քահանայատեոսին Հոովմայ անկողի են ըստ ին-  
 ,,քեանց, և ոչ զօրութեամբ հաւանութեան Եկեղեցւոյ: Եւ  
 ,,եթէ որ յանդգնեցի, զոր Տէր մի՛ արասցէ, ընդգէմ կալ  
 ,,մերումն սահմանի, նզովեալ եղեցի:

յաւակնելը ունել զանսխալ, զանյեղի և զանկրեղ զիտութիւն աստուածայնոցն և մարդկային ճշմարտութեանց՝ չկարաց աստանել զխորխորատն ահագին զոր փորեալ էին ընդ ոսիւք աթոռոյ նորա ելուիթացն ջուկք և արբանեակք նոցա :

ՅԱւրոսպացւոցն աղգս և ի լեզուս յաճախեալ են ապաքէն և յաճախեն օր ըստ օրէ մատեանք մեծամեծք և մանունք, որ հիմն ի վեր տապալին զկազմած և զգրութիւն պապական Ակեղեցւոյ, և ս և զկարծիան անսխալականութեան պապին, և սակայն, որպէս կանխեցաք ասացաք, պակասեր տակաւին և առ նոսս գրուած ինչ այնպիսի՝ որպիսի Յանսկին է, այս ինքն որ ի սուղ և ի սակաւ բանս ամփոփեալ ունիցի բազում ինչ կարեոր ի զիտել, և այն պարզ և մեկին սճով, անխառով հանդարտութեամբ ոգւոյ և գեղեցիկ կարգարանութեամբ զրեալ :

Իսկ թէ քանի կարեոր իցէ զրուած այսպիսի և ի ձեռս մերոցն բանասիրաց՝ եկեղեցականացն և աշխարհականաց, ոչ է հարկ ասել. և ահա Ա Ն հափառ Հայրապետին մերոյ Ակեղեցւոյս շնորհէ՝ եթէ և ազգըս Հայոց յիւրն ընթեռնու արդ հայրենի բարբառ զնոյն զՅանսկին մատեան. քանզի Նորին Արքութեան հրամանաւն բուռն հարեալ զԹարգմանութենէ սորին և աւարտեցաք Աստուծով :

Միայն հարկ համարիմք նշանակել աստէն ինչ ինչ զմերմէ Թարգմանութենէս : Նախ, զե յայտմ աշխատութեան առաջի աչաց ունէաք ընդ գերմանական բնագրին և զգաղղիացի և զուս թարգմանութիւնսն :

Արկրորդ, զի առաւել պարզութեան ոճոյ թարգմանութեանն ուշ կգեալ՝ քան ճշգումթեան կանոնաց հայկաբանութեան՝ եթէ ըստ բառիցն ընտրութեան և եթէ ըստ դարձուածոցն շարամանութեան, յերկրեցաք զթարգմանութիւնս մեր ըստ կարի մեկն և դիւրիմաց բանիւ, որ գոգցես փոքու և եթ զանազանիցի ի ռամկական խօսից. — զի և այս իսկ կալք էին Ա. և Հ. Աթողիկոսին. — ուստի և ոչ խղճեցաք առնուլ ի կիր բազում ուրեք և զնոտանս ի բառից և յասացուածոց՝ անարուեստաբար սպրդելոց արդէն ի մերս յԱւրոպացւոցն լիզուաց :

Արկրորդ, զի զճանօթութիւնս հեղինակին որպէս և կինն, և զանուանս այլոցն հեղինակաց և մատենից յիշատակելոց ի նմանէ ի հաստատութիւն բանից բընադրին՝ լաւ համարեցաք թուահամարօք ի վերջ թարգմանութեանս մերոյ յարել, յոլովադոյնս նովին բառիւք և տառիւք՝ որովք և ի բնադրին կան, ի պէտս լիզուագիտաց, և զմանց միտին եղաք և ըզհայերէն թարգմանութիւնսն առննթեր :

Չորրորդ, զի խնամ կալեալ դիւրիմաց գործելոյ ըստ կարի մերոցն ընթերցանելնաց զեմաստս մատենիս, ոչ դանդաղեցաք յաւելուլ և ի մէջ ծանօթութիւնս ինչ համառօտս աստեղանիշ՝ զանուանց մարդկան և զտեղեաց և զսովորութեանց, ի ստորևս իջից գրոցս մերձ դնելով զնոսին :

Հինգերորդ, զի զնորադիրս հատուածոց մատենին ոչ միայն ի վերջոյ սորին դրոշմեցաք, որպէս և հեղինակին արարեալէ, այլ և ի բուն ի ներքս անդ

զրոյն ըստ նորուն իսկ ցուցակին և ըստ գաղղիական թարգմանութեանն, և յաւելոյք ևս մակագրել անդէն զղլեաւոր հատուածն, և այս յառաւելագոյն հանդիստ վերձանողաց, և ի դիւրութիւն մատուցութեան բանիցն զրելոց :

Աւ վեցերորդ, զի Յանսոյ անուն, որպէս յայտ է բաղմաց, ստեղծարանեալ կոչուին է հեղինակի զըրոցս, որ՝ որպէս և ինքն ասէ ի պէս պէս պատճառաց բերեալ, և արժան համարեալ է ի գաղանխ ունեւ զիւրն անուն : Իայց հաւաստեաւ երևի մի ի սակաւուց անախ դոլ ի հզօրացն և յիմաստնոց և յազատամիտ աստուածաբանից Պերմանիոյ. և կարծելի է՝ թէ ի նոցին իսկ ի հռովմէականացն ոք իցէ. — որ հարկաւ մեծագոյն ևս և անժխտելի վկայութիւն է ճշմարտութեան : Պաղղիացի թարգմանիչ մատենիս՝ Պ. Ժիւո — Թէօլոն (Giraud - Teulon, fils) համարի թէ ոչ մի ոք միայն իցէ հեղինակ սորին, այլ բազումք համախորհուրդք և համալաստակք \*) : — Իսկ զի զՅանսոյն ընտրեալ է հեղինակն զանուն, թուի ի քաջագիպութենէ իրացն հանգամանաց յայս մտարբերեալ, և զաւանդեալն զՅանսոյն՝ յինքն և ի վաստակ իւր

(\*) Պ. Փռէսանսէ ի վերլուծութեանն զոր արարեալ է ի գաղղ. օրագրին Revue des deux mondes, համարի՝ թէ յօրինիչ մատենիս է Պ. Լուպէո՝ մեծահամբաւ վարժապետ աստուածաբանութեան ի համալսարանին Միւնխէնի, բայց ձեռնառու օժանդակ լեալ է նմին և հոչակեալն արդ ընդ ամենայն աշխարհ Տէնլինկէն :

(ՏԵՐԼԷՆԳԷՆ)

պատշաճեցուցեալ : Վանդի Յանս թաղաւոր ասի լեալ Խապիոյ և Նատիոնի ( իբրու 1400 ամօք նախ քան զգալուսա Ֆրիչին ), այր խաղաղասէր այնչափ մինչև պաշտել զնա զիւցակրօն Խոտալացւոց ժամանակացն իբրև զաստուած խաղաղութեան : Աւանդի և Հռոմուլեայ մեհեան ի պատիւ Յանսուի կանգնեալ ի Հռովմ, և սահմանեալ ի բաց զգրուեն մեհենին ունել ի ժամանակս պատերազմի, և ի խաղաղութեան փակել, որպէս և փակեցան երկիցս անգամ յառաջ քան զաւուրս Օդոստեայ կայսեր. մի՛ առ Աուժայիւ, և յերկրորդումն յետ առաջնոյ Պունիկեան պատերազմին : — Հռովմայեցիքն համարէին զՅանոս և խնամակալ տարւոյ. նմին իբրի և զանգրի նորա կռեալ կոփէին երկզիմի զլեռով, այնպէս զի մեռով զիմաւն յանցեալն ժամանակ թուէր նա հայել, և միւսով յառաջիկայսն : — Ալ թէ որքան ունիցի այլաբանութիւնս այս յարմարութիւն ընդ անձին և զիտաւորութեան և երկասիրութեան մեծարոյ հեղինակի զրոյս, ի գատումն բարեսէր ընթերցանելեաց առնեմք սպաստան :

4192  
91



# ԲՈՂԱՆԴՍԿԻՆԻԹԻՒՆ

	Երես
Ուղերս . . . . .	Ա
Ջէկուցումն թարգմանելին . . . . .	Ե
Ք. վանդակութիւն . . . . .	ԺԶ
Յառաջաբան . . . . .	1
Նախագիծ Վատիկանեան Ժողովոյն յեզուիթացն յօրինեալ . . . . .	15

## ՄՆԱՆ ԸՌՆԱԳՒՆ

Բովանդակութիւն Պետի Թ. եւ անցանկ յօղուածոց Լորին Թ կարգ վարդապետութեան հաւատոյ . . . . .	22
Ա. Բացասական առաջարկութիւնք «Բովանդակութեան» . . . . .	25
Բ. Իշխանութիւն Եկեղեցւոյ ի վեճի մարմնաւոր պատիմս . . . . .	24
Գ. Քաղաքական զիջումքութիւն պատից . . . . .	26
Դ. Սրբազրութիւնք պատմութեան բնա հանոյս պապականաց . . . . .	28
Ե. Բանագրութիւն խզմի մտաց . . . . .	29
Զ. Գաղափարութիւն արդի քաղաքականութեան եւ սահմանադրական կառավարութեանց . . . . .	55

## ՄՆԱՆ ԵՐԿՐՈՐԳ

### Աճախարհային պատիւ

Ա. Անդրալեւնական վարդապետութիւն . . . . .	46
Բ. Հեռուանք վարդապետութեան զանօխարութեանէ պատիւն . . . . .	62
Գ. Սիտանք եւ հակասութիւնք պատից . . . . .	67
Դ. Գրութիւն Եպիսկոպոսաց Հռոմայ ի նախնի Եկեղեցւոց . . . . .	79
Ե. Գերագահութիւն ի նախնի կաթմութեան Եկեղեցւոյ . . . . .	88
Զ. Վկայութիւն Հարց զգերագահութեանէ պատիւն . . . . .	96
Է. Սուտանունն Իսիդորոս եւ կոնզակագիրք ևորս . . . . .	102
Ը. Գրիգորեան խարդախանք . . . . .	108
Թ. Քննութիւն խարդախանաց Հռոմեացւոց . . . . .	126
Ճ. Պապական մատենան կամ Գաղափարագիրք պատից . . . . .	150
ՃԱ. Գարգելատրութիւն կրօնանդիանութի . . . . .	155
ՃԲ. Կանոնագիրքն Գրատիանութի . . . . .	144
ՃԳ. Հեղինակութիւն Գրատիանութի . . . . .	147
ՃԴ. Անունն պապական իշխանութեան ի ՃԲ եւ ՃԳ դարս . . . . .	149
ՃԵ. Կարգումն նախագից . . . . .	158

ժԷ. Բացառութիւնք եւ արեակներ . . . . .	160
ժԸ. Պայտան . . . . .	160
ժԹ. Լիազօր իշխանութիւն պապից . . . . .	162
Լ. Բազրմուներ . . . . .	164
ԻԱ. Բաշխումն շահաբեր վիճակաց եւ ժողովրդապետութեանց . . . . .	167
ԻԲ. Երզումն նապակուրթեան առ պապի . . . . .	168
ԻԳ. Կառնումն ի կառավարութիւնս վիճակաց . . . . .	169
ԻԴ. Պարար Եպիսկոպոսաց, արքիւր շահու հռովմէական պալատան . . . . .	170
ԻԵ. Սասնութիւն Եկեղեցւոյ . . . . .	172
ԻԶ. Անժնական դրութիւն պապից . . . . .	174
ԻԷ. Անփութեմն իշխանութեան ի ձեռս պապական պալատանն . . . . .	177

**ՄՆԱՆ ԵՐՐՈՐԳ**

Պատգ և ժողովք ի մէջիւն դարս

Ա. Տիեզերական ժողովք տառչինք . . . . .	180
Բ. Ուսումն աստուածարանութեան արձամարեալ ի Հռովմ . . . . .	186
Գ. Նախապատուութիւն իրաւապետութեան քան զաստուածարանա- կան գիտութիւնս . . . . .	188
Դ. Ժողով կարգինայաց . . . . .	191
Ե. Պայտան պատական . . . . .	197
Զ. Դատարութիւնք ժամանակակից մարդկանն . . . . .	202
Է. Կրօնս բնութիւն . . . . .	211
Ը. Դատաստանք ընդդէմ կախարհութեանց . . . . .	223
Թ. Նորանոր խարդախութիւնք Դոմինիկեանց . . . . .	255
ժ. Հետեւեալ խարդախութեանց Դոմինիկեանցն . . . . .	257
ժԱ. Գիտակցութիւն տեսալարութեան պապին . . . . .	244
ժԲ. Մոլորութիւն կրկին ձեռնադրութեանց . . . . .	244
ժԳ. Կարգախօսք պատմութեան . . . . .	246
ժԴ. Կարգախօսք պատմութեան Սպանիոյ . . . . .	254
ժԵ. Առաջարկութիւնք Թորքեմատայի . . . . .	255
ժԶ. Սրգելմուներ . . . . .	255
ժԷ. Հիշուման հռովմէական Եկեղեցւոյ . . . . .	257
ժԸ. Ժողովն կոստանդեան . . . . .	265
ժԹ. Ժողովն Բասիլեան . . . . .	274
Ի. Եկեղեցական միաբանութիւն ընդ Յոյս . . . . .	278
ԻԱ. Գործնական վաւերացումքիւն եղեալ ի Պուրք բաղարի . . . . .	285
ԻԲ. Յաշտութիւնք պապին . . . . .	284
ԻԳ. Գիտակցութիւնք պապից . . . . .	286
ԻԴ. Հռովմ եւ գաշինք համաձայնութեան . . . . .	287
ԻԵ. Կարծիք հասարակաց եւ զրուիւն Եկեղեցւոյ ի ժն զարու . . . . .	294
ԻԶ. Ժողովն Լատերանու . . . . .	299
ԻԷ. Անհրաքութիւն Հռովմէական պալատանն . . . . .	504
ԻԸ. Սահարկութիւնք ի պապական գիւանդն . . . . .	505
ԻԹ. Կոնսկոստ եւ Սասնադրոյս . . . . .	505

Լ. Խոտիտ և պարտն պարական.	506
ԼԱ. Կարծիք Խոտալացուն.	507
ԼԲ. Լեւոն ժ.	509
ԼԳ. Եպիսկոպոսուհի Գաղղիացուց և Լոսիմ.	510
ԼԴ. Խոտաժանութիւն Կայեւանասի.	511
ԼԵ. Կարդինալ Քանթարինի.	512
ԼԶ. Խոտաժանութիւնը Եղիսկոպոսացն Խոտալացուց և Կուիրակաց պատկն ի Տրիդենտեան ժողովի.	515
ԼԷ. Ժարգն Տրիդենտո ի.	516
ԼԸ. Լուսարակացն Կարծիք ի Գերեանիս.	217
ԼԹ. Աստուածաբանք Խոտալացուց և Խնդիր անտալականութեան պատկն.	519
Խ. Աղբիանոս Զ.	522
ԽԱ. Խոտաժանութիւն պաշտարանդացն անտալականութեան պատկց.	525
ԽԲ. Կտեղակ Չոզսի Գ.	526
ԽԳ. Կնեզակն Ընթրեաց Տեառն.	528
ԽԴ. Կարգ Եզուիթաց և անտալութիւն պատկն.	550
ԽԵ. Բելլարմինս.	552
ԽԶ. Բոյրանիտ և Եսրանոք Խարգախանք.	557
ԽԷ. Վարդապետութիւն յաթուոյ.	541
ԽԸ. Եկեղեցին և պարն, և Խնդիրն անտալութեան.	547
ԽԹ. Կարծիք պատկց զանտալութեանէ իւրեանց, և Եւաւանք Եսրին.	549
Մ. Ազատութիւն ժողովոց.	555
Մանթու թիւեր.	559
Վրիպակք.	407



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Առաջիկայս գրուած առ այն կարգեալ է զիսաւորապէս, զի ընթերցողքն կարողասցին տեղեկանալ պատմութեան խընդրոցն այնոցիկ՝ որք առաջարկելոց են ի լուծումն տիեզերական Ժողովոյն, որպէս երևի ի հաւաստի տեղեկութեանց: Եւ քանզի մեք փոյթ յանձին կալաք ապացուցանել զբանս մեր ի ձեռն փաստից քաղելոց անմիջապէս ի ընդի աղբերաց անտի, թերևս ոչ ի յանդգնութիւն զրեսցի մեզ յուսով ակն ունել՝ թէ աշխատութիւնս այս ի կաճառս իմաստնոց ոչ անպատիւ եղիցի, և ի մթերս եկեղեցական պատմութեան ոչ ընդ խոտանս համարեսցի:

Բայց կէտ նպատակի գրուածոյս մերոյ ոչ այն է և եթ՝ զի անդորրաւէտ ոգւով և անբռնապբոս ոճով ի գրի հարկանիցեսք զիրացն զդէպս, այլ և այլ ինչ կարևոր: Ընթերցող գրոցս դիւրաւ առցէ ի միտ՝ զի առաջի եղեալ է մեր զընդարձակագոյն իմն նպատակ եկեղեցական և քաղաքական միանգամայն: Քանզի վաստակս մեր այս է օրինաւոր իմն գործ անձնական պաշտպանութեան, ձայն բարբառոյ առ խոհական մասն հաւատացելոց քրիստոնէից, բողոք հիմնեալ ի վերայ պատմութեան ընդդէմ սպառնալեաց մտալուտ ժամանակի, բողոք ընդդէմ միումն ի հզօրագոյն դաւակցութեանց անտի՝ որ է զի յայտնապէս ներգործեն, և է զի ծածկարար, և յոր աշխատ լինին օր ըստ օրէ և ժամ՝ ի ժամէ հաղարաւոր ձեռք արանց գործունէից:

Ի գրերս մերում զմատենանս զայս առաջի աչաց ունէաք հանապազ զվտանցն ահազին որ սպառնայ ի հարկէ Լուովմէական եկեղեցւոյ և ներքին հանգամանաց նորին. վտանգ որ ևս քան զևս յաւելցի անշուշտ ի սաստկութիւն, յորժամ ոչ միայն ընդ իւրե գրաւեալ ի կորուստ մատնիցէ հարիւր և ութ-

սուն միլիոնս մարդկան \*), այլ և դարձցի ի դժուարակնճիոն խնդիր ընկերական, և մնասեսցէ նաև այնոցիկ յեկեղեցեաց ազգաց և ժողովրդոց՝ որք արտաքոյ են կաթողիկ Եկեղեցւոյ :

Այս մտանց տարակուսի ոչ յերիկէ ինչ սկիզբն արար կալ առաջի, և ոչ յօրէ անտի յայտարարութեան ժողովոյն. այլ ահա քսան և չորք ամբ են յորմէ հետէ ի կաթողիկ Եկեղեցւոջ ի վեր երևի շարժումն այն, որ արդ սաստկացեալ և զամ քան զդամ՝ զայրացեալ՝ հանդոյն իմն յորդահոսան ուղիսից հեղեղաց պատրաստի ընկլուզանել զԵկեղեցին բովանդակ և զամենայն զկենսական զօրութիւնս նորա :

Մէք, — և կամիմ՝ զի այսպէս բազմաւորակի առցէ զբանս ընթերցողն ըստ տառին, և ոչ թէ իբրու ձևով իմն ասացեալ, — մէք այնու ակամբ հայիմք ի կաթողիկ Եկեղեցի և ի զօրութիւն նորա, որով հային ի նա արք —չ—տ—մ—ր—տ՝ ըստ կոչելոյ զնոսին հակառակորդացն :

Բառդ այդ բազում՝ անգամ՝ ի թիւր միտս առեալ ի կիր՝ ի պատճառս իւրոյ տարտամ՝ նշանակութեանն, բայց յոյժ ի դէպ գայ ի վիճարանական խնդիրս. Հաւատարիմ հպատակք հըռովմէական Պալատանն\*\*), և կարգն Եզուի(ժաց\*\*\*), — և յայտեսի է թէ կրկին զօրութիւնքս այսոցիկ որպիսեան անձուկ զօ-

(\*) Չիմբուելիաց ասէ :

(\*\*) Պալատն լարին յայնին « Ժո՛ւրէա », է հոմբախն անան ասէ. եայն պաշտանարեղիւցն իս՝ պաշտամանց համբոսմար առելոց՝ ի իսառաջարութեան պապին Հառաջնոյ :

(\*\*\*) Լաւ համառիմ այսուէս « Եղսելիս », ի ոչել շիրժնասորան զանասանեալս է լարին քարքառ « Եղսելիս », ի տալիբին « Ճիղսելիս », յօրմէ ասակախանն միւր « Ճիղսելիս », և քարչիւնքին « Թիղսելիս », Ժան թէ ՅԵՍՈՒՍԵԱՆՍՍ ... նա շէ ոչ վարչարար համադր էմն է որդանանոր այդ է լիղսս Երբոպացոցն՝ յայնիցս « Ինչքասոր, վարիւնքի, նին քասոր, բասսան », և այլն :

դիւ կապակցեալ են արդ ընդ միմեանս, — ընծայեն բառիդ այդմիկ զվատթարադոյն նշանակութիւն, և ոչ այլ ազգ առնուն զդա ի բերան՝ եթէ ոչ դառնութեամբ մաղձի։ Իսկ մէք համամիտք եմք այնոցիկ՝ որք հաւանեալ են նախ՝ թէ կաթուղիկէ Եկեղեցին չպարտի թշնամարար և մերժողական եղանակաւ վարել ընդ սկզբունս քաղաքական, մտաւորական և կրօնական ազատութեան, և ընդ ազատ ընտրողութեան. իբր զի մարթիսկ է առնուլ զգոսին ի քրիստոնէական միտս, և համարել քաղեալս յոգւոյ և ի բանից աւետարանին։ Նմին հակառակ պարտի ուղղափառն Եկեղեցի մտանել իսկ ի նոսին, միաբանել ընդ նոսին, և ջանալ զի անկորուստ կացցեն մնացցեն՝ օժանդակեալք ի նորին մաքրողական և աղնուացուցիչ ներդրութեանէ։ Երկրորդ՝ համատրհուրդ եմք մէք այնոցիկ՝ որք համարին թէ անհրաժեշտ հարկ ի վերայ կայ հոյսմէական Եկեղեցւոյ առնուլ վաղ կամ անագան զմեծ իմն և զվստճանական վերանորոգութիւն։

Ըստ մերում՝ կարծեաց՝ կաթուղիկէ (կամ կաթողիկ) Եկեղեցին ոչ է բնաւ նոյն ընդ պապականութեան. ուստի թէպէտ և արտաբուստ արտաքս ունիցիմք ինչ ընդ նմին հաղորդակցութիւն, այլ ըստ ներքնոյն խորագոյն անջրպետութեամբ զատուցեալ կամք յայնցանէ՝ որք համարին թէ անկ իցէ Եկեղեցւոյ տիեզերակալութիւն հոգևորական, և եթէ հնար է՝ նաև բնական, ընդ իշխանութեամբ միոյ միայնոյ միապետի, որ բռնանայցէ ի վերայ ամենեցուն, և աշխարհականն իշխանութիւն ձեռն տայցէ հոգևոր իշխանաւորաց ի ճնշել և ի հեղձուցանել զամենայն շարժումն՝ որ չիցէ նմա հաճոյական։

Համառօտ ասել ի բաց հերքեմք մէք զայն վարդապետութիւն և զայն կարծիս և զցնորս զԵկեղեցւոյ, զոր ի բազում ամաց հետէ հռչակեն Եզուիթացն օրագիրք իբրև զմի միայն ճշմարիտ վարդապետութիւն, և փրկական խարխիս ազգի մարդկան անկեղոյ ի վտանգ կորստեան։

Եւ առ յայտնադոյնս նշանակելոյ զմերս կէտ տեսութեան, բեր ի մէջ անցուր զբանս առնն՝ որով պարծի Գերմանացոցն

եկեղեցականութիւն, այսինքն է զկարգինալ արքեպիսկոպոսին Տիփինպոզքի, որ աշակերտ էր և համախորհուրդ անսոռանալի առն Սայէռի :

Բարեկամ նորա Փաստականթ առաջի արար զկարծիս իւր՝ թէ պարտ է ձեռն արկանել ի վերանորոգութիւն Եկեղեցւոյ, փոխել զեկեղեցական դասակարգութիւն, և կակղել և մղմել ըզտարանջատն զանազանութիւն ի մէջ հոգևորականաց և աշխարհականաց. թէ ժողովուրդք պարտին կցորդ լինել տեսչութեան եկեղեցական գործոց, և թէ հարկ է հռովմական պալատանն կերպարանափոխ լինել : Առ այս ետ պատասխանի Տիփինպոզք. «Միայն այդու ճանապարհաւ կարող եմք մէք բարի առնել ազգի մարդկան, վերամբառնալ և ազնուացուցանել զիրս աշխարհիս այսորիկ, որ և պարտի սեփական գործ լինել քրիստոնէութեան. միայն բարգաւաճելով և ոգևորելով զեկեղեցականն բարեկարգութիւն, ևս և զվարդապետութիւնս Եկեղեցւոյ, կարող են ի մերումն նշանաւոր ժամանակի շարժմունք մտաց և հետազօտութիւնք յամենայն կողմանս ի վեր երևեալք հասանել նպատակի իւրեանց և գտանել զանորոքութիւն :

«Յայտ իսկ է՝ զի որ ի հակառակ կուսէ են եկեղեցականքն՝ ջան ի գործ արկանեն հասանել նպատակի իւրեանց ընդդիմակ ճանապարհաւ. սակայն յանհնարիցն իմն է ի կարգի պատմութեան այդպիսի յետախաղաց քայլափոխութիւն : Միջնադարեան ժամանակք վաղու ևս անցեալ են զմեզք, և միայն ստուերատիպ յիշատակք նոցին մարթին երևել ետանդուն երևակայութեանս Ա. պարոնին և ընկերաց նորա\*) իրրև զհանդերձեալ ինչ նոր ապագայ վասն մեր : Ամենայն արք

(\*) Թո՛ւն անարկել է Առնթաւանդեա գողցիւցի և է նմանիս նորա. որտ զնայելու յիշարտիւրտ օրինակն քարոսցն իւր զերթեամբորտութեան և որքեդ իբրևամարտիւթեան՝ զան է գործ առնելն և առնելն քաղցրացոսցանել է իմն այժմոս պոպոխութեաց ևս նայնպիսի իմաստս :

« խոհականք, որք ազատորէն խորհրդածեցին, ճանաչեն այժ-  
 « մէն զանհրաժեշտ հարկ վերանորոգութեան Եկեղեցւոյ, բայց  
 « սակաւք ոմանք և եթ խոստովանին այդպիսեալ բացայայտու-  
 « թեամբ՝ որպիսեալ ճանաչէք զուր զազգ և զյեղանակ վե-  
 « րանորոգութեանն այնորիկ: Համարիմ ես՝ թէ պարտք իմն  
 « են սիրոյ առ մարդիկ՝ հրապարակաւ ասել և հռչակել զգա-  
 « ղափարս այդպիսիս: »

Ի շարադրածաց Հիւկլէրի, Հեռէսի, Ե. քըթէյնի, Փրանցի,  
 Պատէռի, Մեօլէրի մարթ էր դիւրաւ ի մէջ բերել զերկարա-  
 ձից վկայութիւնս, յապացուցանել՝ զի իմաստնագոյնքն և  
 գիտնագոյնք ի գերմանացի կաթոլիկաց ունէին կարծիս և հայ-  
 եցուածս համանմանս ի վեր այսր յիշատակելոցն:

Տիփենպոզ տակաւին յայնպիսում ժամանակի կեայր՝ յո-  
 բում չև ևս սաստիկ էին կարծիք անորալեռնախնացն\*), զորս  
 ուրուագրէր նա. և այն որ առ նորա ժամանակոցն երևէր իր-  
 րև մասնաւոր ինչ և ազօտ իմն ընթացք գործոյ, այժմ ձևա-  
 ցեալէ հզօր կուսակցութիւն մի՝ որ ունի նպատակս հաստա-  
 տունս, և ի ձեռն կարգին Եղուիթաց ընդ ամենայն կողմանս  
 տարածելոյ՝ ունի զամրապինդ հիմնաւորութիւն. զի և եկեղե-

(\*) Տ) և բառք «անորալեռնախնացն», լեռնախնացութեան է քաղցի-  
 անին «խալիսալեռնախնացն», որով իմանան Քաղցիկացիքն զայնուսին է իս-  
 լախիկացի կամ է պապականաց անոր, որք յարաւելա կամ է Հոռով յա-  
 բեալ ինչով բնախնացութեամբ և իարժեօք, առաւել քան զայլ իսլախիկան  
 ջերմ պաշարներէս ևս պապին և ջորաբովք իարժեցեալ իրաւանց նորա  
 և անախալեռնան. և յայն սահա իսլախն զնոսա «անորալեռնախնացն»,  
 զի հոմախնացութեամբ Քաղցիկոյ քաղանին նոսա «անոր», կամ «յայն-  
 իսլախիկանցն», Ալպեայց: Կերհախնաց անորալեռնախնացին են «Քաղ-  
 ցիկանան», կամ «Պալլիխան», որք պինքս ունին զորաւանսլեռնա  
 կիղիցոյն Քաղցիկոյ, և հոմախնաց լեռնախնացիկան ժողովք է վերեն  
 իջեռնախնացութեամբ քան զպապն. լեռնախնացիկան իջեռնախնացիկան ոչ է  
 հարկաւոր պապին. լեռնախնացիկան իսլախիկան է ևայն:

ցականքն դաստիարակեալք ի վարժարանին Եզուիթաց ի Հր-  
 ուովմ՝ պատրաստք են իրրէ բաղմամբիւ ամբողջ սպառազէնք  
 յօգնականութիւն նորա : Մեր ստիպեալ գոլով կալ ընդդէմ  
 այնմ կուսակցութեան՝ որ դճեա պնդեալ է գործադրութեան  
 խորհրդոց իւրոց՝ կամ առանց գիտելոյ զպատմութիւն Եկեղե-  
 ցւոյ, կամ թէ զիտութեամբ խարդախելով զայն, պարտիմք զը-  
 ծագրել զնախնական կարգն նախապատուութեան յԵկեղե-  
 ցւոջ, և համեմատել զայն ընդ ձեռնն՝ զոր յետոյ ընկալաւ :  
 Ըստ այսմ ի կամել անդ մերում բացայայտել զայս փոփոխու-  
 թիւն՝ հարկադրեցաք յիշատակել հանդերձ ցաւով սրտի և ըզ-  
 մթին կողմանս պապական իշխանութեան : Ամենայն որ որակն  
 եղեալ զննիցէ զանցս Եկեղեցւոյ ըստ ներքին կապակցութեան  
 նորին, անշուշտ գայ ի հաւանութիւն, զի ի ԺՎ զարե և այսր  
 ի բովանդակ պատմութեան Եկեղեցւոյ ոչ գոյ գտանել և ոչ զմի  
 միջոց ժամանակի, յոր կարող իցէ որ ակործ հաճութեամբ կա-  
 ուցանել զճեառազօտ հայեցուածս իւր : Եթէ փորձ փորձիցէ  
 որ գտանել զպատճառս խանգարման եկեղեցական ոգւոյ և կար-  
 գաց, խանգարման ասեմ՝ որ յայնմ ժամանակէ հետե գամ-  
 քան զգամ խորագոյնս բունեալ և ընդարձակագոյնս տարա-  
 ծեալ է, գտանէ զի զխաւոր պատճառք իրացն է խեղամիւր  
 ուսումն զգերագահութենէ և զնախապատուութենէ պապին\*) :

Եթէ ի գերագահութեան անդ հաստատեալ իցէ ի միոյ կող-  
 մանէ ոյժ և զօրութիւն կաթողիկ Եկեղեցւոյ, յայլմէ կողմանէ  
 ոչ է մարթ ժխտել՝ զն եթէ հայիցիմք յայն աչօք նախնական  
 Եկեղեցւոյ, այսինքն է յառաքելոցն ժամանակաց մինչև ցամն  
 իրր 843, տեսանեմք զպապականութիւնն նմանեալ պալարածե-  
 ու ուղից կամ խուլի իմիք երևելոյ ի մարմնի Եկեղեցւոյ՝ իր-

(\*) Այն է հարձիւ պատմականացն, ինչ պատմ Էստիմայ ասնի ըզ-  
 նախագահութեան և զնախապատուութեան ի վերայ աշխարհեան և  
 աբեխեան ակառօց առ հասարակ, և այն որդիս ինչ յաստատածային  
 իբրևանց ընդդէմէ նմա :

րև զմասն տգեղացուցիչ յոյժ և արգելիչ շնչառութեան, և պատճառ ցաւոց և հիւանդութեան, որ խափանէ և քակտէ զպատուականագոյն հիւթս կենդանութեան, և զՏեա իւր ձրգեալ բերէ զբազմութիւն պլոց ախտաւորութեանց, Ապաբէն ամբ բազումք են արդէն՝ յորմէ հետէ ջանադիր լինին հիմնարկանել այնմ վարդապետութեան՝ որ ձգտի ի քակտումն ամենայն եկեղեցական բարեկարգութեանց, և հաստատելով զվարդապետութիւնն որ յաղագս անխալութեան պապին՝ պեղել բրել շուրջ զեկեղեցեաւ զխորխորատ անանցանելի, Զայս տեսեալ ամենայն որ՝ որ ցանկայ բարիս Եկեղեցւոյ և ժողովորդեան, — որովհետև Եկեղեցին մի է ի տարեբաց կենսականութեան ժողովրդոց, — պարտի անպատճառ ջանահնար լինել բոս շափու կարողութեան և գիտութեան իւրոյ, և խնդրել թէ զի՞նչ ինչ արդեօք մարթ իցէ տակաւին առնել առ ի զառաջս ունեղոյ այնքանոյ ողբալի և ահագին կործանման :

Ոչ ինչ երկմտիմք մէք, զի բնդէմ՝ գրոցս այսոցիկ և հեղինակի սորին յարեցնն յամենայն կողմանց պարսաւք և մեղադրութիւնք, որպէս թէ հակառակ ընդդէմ խօսիցի սա պապականութեան : Թիւ այնպիսի արանց՝ որոց վասն ոչ ինչ ունին ազդեցութիւն այս բանք սուրբ գրոց թէ «Լաւ են հարուածք բարեկամի՝ քան զկամակոր համբոյրս թշնամւոյ», լեգեովն է. չըկարեն այնպիսիքն ի միտ առնուլ՝ թէ զիւրդ հնար իցէ սիրել և մեծարել զկարգ ինչ իրաց, և միանգամայն մատնանիչ առնել ի նմին զխաւարային կողմանն, պարսաւել զթերութիւնս նորին, և խայտառակել զվնասակար ազդեցութիւնն : Ըստ նոցա կարծեացն՝ պարտ է մեծաւ խնամով լռել զայնպիսեաց, կամ թէ յիշատակել գնոսին՝ բոյց արդարացուցանելով : Առ ի բացատրելոյ զայս իմաստ՝ վաղու ևս յարմարեալ են զբանս Բարեպաշտութեան. վասն որոյ ի բարեպաշտութիւն համարի առ նոսա՝ մտադիւր սիրով և իբր ի պարտուց հաւատս ընծայել առասպելեացն և ստութեանցն հնարելոց վասն հասանելոյ այնպիսի նպատակաց, զորս բռնազբօսեալ կապեն ընդ կրօնից, և իւրեանք պատատին աղաբողոնաւ բարեպաշտութեան : Նոյնպէս

Է Բարեպաշտութիւնն Համարեալ է առ նոսա անտես առնելն ըզ-  
 վնասակարութիւնն իրաց և զզեղծմունսն եկեղեցական կարգաց,  
 և զվրիպակս տեսչութեան Եկեղեցւոյ. և եթէ ոչ ևս Հնարա-  
 ւոր իցէ այն՝ զոննա պաշտպան լինել անկարգութեանցն, և  
 պատճառս գտանել տեսանելոյ ի նոսին զտանելի ինչ կողմն ։  
 Իսկ յորժամ վերջացեալ իցէ որ յայսպիսի զգացմանց, ընդ  
 ամբարիշտս գրի. յորոց սակի եղիցի անշուշտ և մերս գրու-  
 թիւն ։ Բայց մեզ մի լիցի արդարացիս ճանաչել զպատճառանս  
 նոցա. քանզի կարծեմք մեր՝ եթէ բարեպաշտիկն պատկառանք  
 յայնժամ և եթէ գովելի՝ յորժամ լուծեամք կամ ներդ-  
 ղամտութեամբ ակնարկիցէ յանձնական տկարութիւն կամ ի  
 մոլորութիւն մարդոյ՝ որ անցեալ կայցէ ի պուխ Եկեղեցւոյ.  
 ուստի մեծապէս սխալի՝ եթէ զՏեա բերիցէ այսմ՝ թէ պարտ  
 է լուել կամ թաքուցանել զպատմական անցս և զլի թերու-  
 թեամբ սահմանադրութիւնս ։ Վարծեմք մեր՝ թէ պարտիմք ըզ-  
 նորին հակառակն՝ պատկառանս յոյժ ունել նախ քան զամե-  
 նայն աստուածայնոցն սահմանադրութեանց Եկեղեցւոյ և ճշմար-  
 տութեան. սմին իրի ինքն իսկ բարեպաշտութիւնն պահանջէ ի  
 մենջ արիաքար մարտ դնել ընդդէմ ամենայն խարդախութեան,  
 ընդդէմ ամենայն շիտթութեան ։ Եւ զայսպիսի մարտադրու-  
 թիւն յայն սակս իսկ առաւել կարևոր համարիմք մեր՝ զի հա-  
 ղորդական չարիքն ոչ միայն փոխանակեն զմիմեանս, այլ և ա-  
 ճելով աճեն նորանոր խարդախանօք. — և այս ամենայն կատա-  
 րի յայնպիսում ժամանակի՝ յորում սովորական իմն եղեալ է  
 օտարանալն ի քրիստոնէութենէ, և ընդ ամենայն տեղիս խո-  
 րամուխ եղեալ ։ Այլ և վասն այնորիկ այսու եղանակաւ վա-  
 րիմք մեր, զի ընդ բազմակոյտ աւերակօք ծածկի ի կարճատես  
 աչաց ժամանակիս այսորիկ աստուածային սերմն բազմաբեղուն ։  
 Առ ի յայտ առնելոյ՝ թէ այսպիսի ընթացիւք, և ոչ այլ ազգ  
 ընթանալով՝ պահելով պահեմք մեր զՏոգի Եկեղեցւոյ, կարեմք  
 ի մեջ բերել երկուս Հիմնական վկայութիւնս, յորոց զմին ա-  
 սացեալ է մի ոմն ի պապից, և զմիւսն այր ոմն մեծարոյ. Քան-  
 զի Իննովկենտիոս Վ ասացեալ է. « Այլ է պարտ հանդուրժել

ստուծեան ընդ պատրուակաւ սրբութեան, . և Քեռնարդոս ազաղակէ . « Լաւ է զի գայթակղութիւն ծագեցի՝ քան թէ ճշմարտութիւնն ի բաց թողցի, » :

Ենդհին գերագահութեան ընդերկարեցաւ Նկեղեցւոջ առ ժամանակ մի, վասն այնորիկ՝ զի այնպէս պահանջէին ներքին հանգամանք իրացն . բայց ապա, այս ինքն է յիննորորդ դարէ և այսր, ծագեցաւ արուեստական իմն և ակտահաւակ՝ քան թէ առողջ և բնաւորական անցումն գերագահութեան ի պատահանութիւն : Եւ այս յաւէտ ապականութիւն էր՝ քան թէ յառաջագիւմութիւն, և հետեանք նորին եղև քակտումն մարմնոյ Եկեղեցւոյ՝ որ մինչև ցայնժամ մի միայն էր յերիս մեծամեծ մասունս կամ մարմինս հակառակս միմեանց : Յորժամ գերագահութիւնն Նկեղեցւոջ փոխեցաւ ի տիրապետութիւն ի վերայ նորին, յորժամ փոխանակ նախապատիւ եպիսկոպոսի, որ խորհրդակցելով ընդ Եգիպտոս իւր՝ դատիր և վճռէր զգործս Եկեղեցւոյ՝ օրինակ դանձն ընծայելով հպատակելոյ եկեղեցական կանոնաց, զտեղին զայն փոխանակեաց և կալաւ բռնաւորական իշխանութիւն բացարձակ միապետի, յայնժամ ահա քակտեցաւ միութիւնն եկեղեցւոյ՝ որ յառաջն այնքան սերտ էր և հաստապինդ :

Ի զուր է արդեօք մեզ հետազօտել և որոնել ի նախնի դարս քրիստոնէութեան զայնպիսի իրաւունս՝ որ հաստատութեամբ սահմանեալ իցնն և հասարակաց ընդունելի եղեալք, և այնու վարեալ իցէ հաւասարապէս ի բովանդակ Եկեղեցւոջ եպիսկոպոսն Հռոմմայ իրրև գերագահ որ և նախապատիւ քան զամենեկին : Աչ է հնար գտանել ի վաղնջուց ժամանակս և ոչ զհետս անգամ այնր իշխանութեան՝ զոր պապքն յետոյ հնարագործեցին, կամ յոր թեւակոխել ձգտեցան . ոչ է հնար ապացուցանել ընաւ՝ թէ առ այն իշխանութիւն լեալ իցէ երբէք անընդհատ և ընդհանրական իմն իրաւունք : Ե յսու ամենայնիւ ոչ սակաւ դէպս իրաց գտանեմք՝ յորոց յայտնապէս տեսանի, զի եպիսկոպոսունք Հռոմմայ ոչ միայն համարէին զանձինս իւրեանց ունողս գերադոյն իրաւանց, և ըստ այնմ վարէին,

այլ և եղեալ էին ի մտի՝ թէ ընկերակիցքն իւրեանց ևս զնոյն իրաւունս արդեանքք ընծայէին նոցա. — Եթէ ոմանք վեր ի վայր յեղեղեն, ընդ որս և ժողովն Քաղկեդոնի, թէ արտօնութիւնք Եկեղեցւոյն Հռովմայ շնորհեալ են նմին ի Հարց Եկեղեցւոյ, յուշ առնեմք մէք նոցա՝ զի գերագահութիւնն ըստ ինքեան և նախապատուութիւնն առ այլովք Եկեղեցեօք՝ պարտի հիմնեալ գոլ ոչ եթէ ի վերայ տրւութեան ժողովոյ իրէք սահմանեալ ժամանակի, այլ միշտ իսկ տուեալ գոլ անդստին յառաքելական ժամանակաց։ Եթէ Հարցանիցէ, օրինակ իմն, ի հետեւ նոսաց որ՝ թէ ո՞րն յԵկեղեցեաց ձեռոց նախապատիւ իցէ, և վկայութիւն նորին առաւել պատկառելի, ամենայն որ տայ արդեօք պատասխանի. Եկեղեցին Հռովմայ, յորում երկրքին զըլխաւոր առաքելայքն Պետրոս և Պօղոս մահուամբ կնքեցին ըզվարդապետութիւն իւրեանց\*) :

Բայց և զայն ևս չպարտիմք ծածկել, զի նախագահութիւնս այս անտարակոյս Հաստատեալ էր յերևակայութեան մասնաւոր տեղական Եկեղեցեաց, ուստի և ոչ երբէք եղեալ էր այն իշխանութիւն Հաւասարապէս տարածեալ ամենայն ուրէք և օրինօք Հաստատեալ. Ոչ որ ի հմտիցն պատմութեան համարձակեսցի ասել՝ թէ պապքն երբ և իցէ վայելեալ իցին կամ ստացեալ միօրինակ իրաւունս գերագահութեան յԱփրիկէ և յԵգիպտոս՝ ի Քաղղիա և ի Միջագետս։ Այսմ շատ իսկ վկայ են արդիւնք իրաց քաջածանօթք ամենեցուն, զի ի բովանդակ ընթացս իրաւանց նախնի Եկեղեցւոյ, յամենայն Հաւաքմունս կանոնաց արևելեան և արևմտեան Եկեղեցեաց ոչ յիշատակին և ոչ առ մի նուագ պապական իրաւունք. ոչ ուրեք մտադրու-

(\*) Այս ըստ հռովմայական հայեցողութեան. ուր թէ ոչ ըստ ճշգրիտ պատմութեան իրաւանց՝ ի նախնական եկեղեցւոց փրկարանք չի՞ յառաժեպու և յառաժեպական պետութեան մեծութեան և գոտրիութեան, այլ համահասարակ իշխանութեան, որպէս իրարմէ և ի բողոքոյր բանից փրկին :

Թիւն լեալ տեսանի երբէք իրաւարանական ազդեցութեան եւ պիսկոպոսին Հռովմայ ի վերայ այլոց Եկեղեցեաց, ի բաց առեալ զկանոն ժողովոյն Սարգիկեայ, այն որ ոչ ունի զնշանակութիւն ինչ և ոչ իսկ յարեմուտս :

Յարարերութիւնքն զծագրեալք աստանօր յայտնազոյնս տեսանին ի դէպս ժողովոյն Քաղկեդոնի, որ եղև յամին 451 : Արդարև իսկ պապն Լևոն թէպէտև բացական էր անձամբն ի ժողովոյ անտի, սակայն ազդեցութիւն մեծ ունէր ի վերայ նորա . և այնպիսի ետուն պատիւ նմա և Եկեղեցւոյ նորին՝ որպիսի ոչ էր տուեալ երբէք ումէք յեպիսկոպոսաց . և նուիրակք նորա նախաթոռ բազմեալ էին մեծարանօք յայնմ ատենի՝ որ քան զամենայն եկեղեցական ժողովս նախնի ժամանակացն ի բազմութիւ Հարց էր կազմեալ : Այսու ամենայնիւ դէպ եղև ուր ուրեմն և անդ՝ զի ժողովն չհամաձայնեցաւ ընդ նուիրակաց պապին, և ոչ հաւանեցաւ հրահանգացն տուելոց նոցա ի Լևոնէ, և յոչինչ զրեալ զընդդիմակացութիւն Հռովմայ՝ պընդեցաւ կատարել զկամս իւր և կատարեաց 1) :

Մէք ի մատենիս յայտնիկ արարեալ եմք զառաջին փորձ պատմագրելոյ զննթաղրութենէն կամ զկարծեացն որ յազագս անսխալութեան պապին, սկիզբն առնելով յաւուրց անտի ի վեր երևելոյ նորին մինչև ցվախճան ժՁ դարուն, յորում վերջաւորեալ թուի : Այս կարծիք կամ ննթաղրութիւն թէպէտ և անագան ուրեմն հնարեալ, թէպէտ և ընդ երկար ժամանակ հակառակութիւն կրեալ, եթէ և յառաջիկայսն ևս մնայր ի կարգի լոկ ննթաղրութեան՝ իրրև պարզապէս աստուածաբանական կարծիք, սակայն յամենայն ժամանակս գտանէր ինքեան հետևողս . քանզի քաջայարմար է ի խարէութիւն և շահաւէտ . կարող է համառօտազոյն ճանապարհաւ, զիւրազիւտ հնարիւք և ի սուղ ժամանակի կատարել ի մեր վերայ զայն ինչ՝ զոր և նախնականն Եկեղեցի, որ այնքան ծախեաց առ այս աշխատութիւն, ժամանակ և արարողութիւնս : Իսկ եթէ անսխալութիւնն ընկալեալ լիցի իրրև մասն հաւատոյ, ոչ միայն եղիցի այն իրրև զբարձ ինչ փափուկ՝ յորոյ վերայ հան-

զիցէ յանհոգս և յանդորրու վաստակարեկ և պարտասեալ հոգի աստուածաբանից և աշխարհականաց առ հասարակ, այլ և ցուցցէ հոգևորական աշխարհին ի կրօնական խնդիրս զայնպիսի խնայութիւն ժամանակի և աշխատողական ուժոյ՝ զորպիսի ցուցին ի նիւթական աշխարհիս շոգեշարժ մեքենայքն և թելք ելեքորականք : Հոռով՝ ևս չկարէ գտանել զղիւրազոյն և զօգտակարազոյն հնարս խնայութեան ժամանակի, աշխատութեանց և հոգևորական վաստակոց . քանզի յետ սակաւուց այս վարդապետութիւն մինչև յայն հասուեցէ զՀոռովայեցիսն, զի և ի ստորագրութեան և եթ անուան պապին տեսցի իսկապէս անսխալութիւն նորա, և պապն այսու եղանակաւ կատարումն տացէ վճռոց վեր ի վերոյ գծագրելոց ի ձեռն միոյ ուրուք յանդամոց ծողովոյ կամ յաստուածաբանից իւրոց, — Արպէս և արդէն բազում անգամ նկատեալ են բազումք՝ զի նորադարձքն, մանաւանդ որք սակաւ ունին ուսումն աստուածաբանական՝ բայց շատ իսկ նորամուտ եռանդն բարեպաշտութեան, մտաղիւր սիրով և խնդութեամբ սրտի մատնեսցեն զանձինս ի գերութիւն անսխալ հրամանատարին հոգւոց, և երանելիս համարեսցին զանձինս՝ զի ունին ի պապն զտէր երևելի և շօշափելի, և զիւրամատոյց առ ամենայն հարցարանութիւնս : Քրիստոս վասն նոցա կարի յոյժ բարձր է և հեռաւոր, Եկեղեցին կարի մեծ և ընդարձակ, այլ և բազմաձայն յոյժ, մինչդեռ են խնդիւք ինչ՝ զորոց ցանկալի է ունել զղիտութիւն հաւատոյ, և Եկեղեցին լուէ զնոցանէ : Ընդ հակառակն՝ քանի՜ զիւրազոյն է ջանացողացն՝ ընդունել ի պապէն զվարդապետութիւն հաւատոյ, Յուշ լիցին մեզ միայն վճիռք Աղիքսանդրի է, Աղեմայ ԺԱ, Բենեզիկտոսի ԺԿ, և ազգեցութիւնքն որ նորօք ներգործեցին :

Եթէ հրատարակմամբ անսխալութեան պապին իրրև զմասն հաւատոյ, ի միոյ կողմանէ ի հոռովական Եկեղեցւոջ զազարեսցի զոցցես մտաւորական շարժումն և գործունէութիւն ուսումնական, յայլմէ կողմանէ ամբարձեալ կանդնեսցի ընդ մեջ նորա և ժողովուրդոց բաժանելոց ի նմանէ ըստ կրօնից՝ նոր միջնորմն և ամբարտակ ամբազոյն և անտախկ քան զամենայն պա-

ըստ որ կային մինչև ցայժմ. և յայնժամ հարկ լինի մեզ բաց է ի բաց հրաժարել ի գեղեցիկ յուսոյ անտի՝ զոր ոչ որ ի քրիստոնէից կարող է խել ի սրտէ իւրմէ, ի յուսոյ անտի ասեմ միարանութեան արևելեան և արևմտեան Եկեղեցեաց բաժանելոցն ի միմեանց: Քանզի ոչ որ ի գիտողաց փոքր ի շատէ զպատմութիւն արևելեան Եկեղեցւոյ և բողոքական ժողովրդոց՝ ոչ խորհեցի այնուհետև թէ եկեցէ հասցէ երբէք ժամանակ, յորում երևելի ինչ մասն Եկեղեցեացն այնոցիկ կամակար մտօք հպատակեցի ինքնահաճոյ տիրապետութեան ան միոյ՝ որ ի պատճառս վարդապետութեանն զանխալութեանէ իւրմէ անցանէ զանցանէ քան զայժմու չափ և զսահման բռնակալութեան իւրոյ: Այսպիսի հպատակութիւն յայնժամ միայն կարէ արդեօք ունել զտեղի՝ յորժամ հրդեհակ բոցակիզեցին համօրէն ամենայն պատմական յիշատակարանք մատնադարանաց, և քրիստոնեայքն արևելից և արևմտից այնչափ միայն գիտակք եղիցին պատմութեան իւրեանց՝ որչափ վայրենի բնակիչք նորոյն Զեղանտիոյ գիտն զիւրեանցն, և յորժամ սքանչելեօք իմն ամենայն ազգք և ազինք հրաժարեցին ի կրօնական սահմանադրութեանց իւրեանց և ի մտածութեանց:

Ո՞ է որ ետ ժողովոցն Վաստանդիայ և Բասիլիոյ ի ժեղարուն զայնքան հզօր իշխանութիւն և զայնպիսի ազդեցութիւն բազմաժամանակեայ ի վերայ գործոց Եկեղեցւոյ. — ապաքէն հասարակացն կարծիք. քանզի սա ի նոցա կողմն էր: Եւ եթէ այժմ հասարակացն կարծիք Եւրոպոյ, ևս և Գերմանիոյ լոկոյ հզօրն և միաձայն, և միանգամայն լի հաւատով, յայտնապէս ընդդէմ ելանէ և հակառակի պապական իշխանութեան, չիք երկրայութիւն՝ զի բարեբաղդարար ճողոպրեցուք մեք ի վտանգէ անտի որ առաջի մեր կայ: Մերս այս վաստակ կարգեալ է ի փորձ զարթուցանելոյ զայդ կարծիս հասարակաց, և մատակարարելոյ զմին զհնարս ուղղութեան ընթացից նորա: Թերևս արդիւնք այսր աշխատութեան նմանեցնն քարի արկելոյ ի ջուր՝ որ առ ակնթարթ մի շքեցուցանէ զերեսս ջուրցն, և ապա իսկոյն թողու զնոսին որպէս և էինն. սակայն գուցէ

նմանեսցեն և ուսկանի արկելոյ ի ծով, որ ձգեալ Հանիցէ անտի որս բազում և առատ :

Իսկ զի շարագրածս մեր այս ոչ ունի ի ճակատի իւրում զանուն Հեղինակի, այդմ բողոքատիկ են պատճառք: Մեզ այնպէս թուի՝ թէ յոյժ գործնական է եղանակ գրութեան սորին, և թէ ամենայն բանք սորա հիմնեալ են ի վերայ փաստից քաղիլոց ի բուն յաղբերաց անտի. սմին իրի կտող է և պարտի իսկ ինքնին ներգործել՝ ոչ ինչ միտ զնկուլ անուան շարագրողին: Մեզ այն է ցանկալի, զի բովանդակ մտադրութիւն ընթերցողին յառեսցի միայն յիսկութիւն գործոյն: Եթէ մատեանս այս պատճառս տայցէ հակաճառութեան իմիք, կամ միմք՝ զի հակաճառութիւնն այն լինիցի ուսումնական ոճով, հանդերձ ծանրութեամբ և ըստ պատշաճի, զի օգնեսցէ ի պարզաբանութիւն ինդրոցն կարևորաց որ ի սմա, և մի՛ փոխադրեսցէ յայլ շրջան վիճաբանութեան և կռուոյ մահարեր թունիւ կասկածանաց և հայհոյանաց ընդդէմ անձին Հեղինակիս:



ՆԱԽԱԳԻԾ ՎԱՏԻԿԱՆԵԱՆ ԺՈՂՈՎՈՑՆ

ՅԵԶՈՒԻԹԱՅՆ ՅՕՐԻՆԵԱԼ

Պատրուակն այն որով ծածկեալ էին մինչև ցայժմ պատ-  
րաստութիւնք մեծի տիեզերական ժողովոյն՝ այժմ գրեալ թէ  
վերացաւ, և գաղտնի դիտաւորութիւնքն յայտնի եղին :

Իտալական օրագիրն *Չէլէլլեմ' Վաթլեօլէտ \**) ի 6 Փետրուա-  
րի հրատարակեալ է ի ձև նամակի որպէս թէ եկելոյ ի Գաղղիոյ  
զառաջիկայ յօդուածդ՝ յոյժ նշանաւոր. «Աղատամիտ կա-  
11 թուիկքն կասկածեն՝ թէ ժողովն պատրաստեալ է հրատա-  
11 րակել զվարդապետութիւն Բոժմարտիւնեան \*\*» և զանսխա-  
11 լու թիւն պապին իրրև զմասն հաւատոյ. այսու ամենայնիւ ոչ  
11 կորուսանեն զյոյս իւրեանց՝ թէ կարող է ժողովն փոփոխել  
11 կամ բացատրել զյօդուածս ինչ Բովանդակութեանն յայն  
11 միտս՝ որ հաճոյալան է գաղափարաց իւրեանց, և թէ խըն-  
11 դիրն անսխալութեան պապին կամ ոչ բնաւ ի մէջ բերցի,

(\*) Օրագիրը եզրափակումը Հոռոմայ՝ սիրելի պապին և մերնայն  
անբարեխառնումն անսանեալ ինքնակից : Զխոսակումն անոան օրագր-  
բոյր մարթէ է իտալականի է մերս «ինքնազնիկեայ Բազմախոսութեան»,  
Բայց բնիկ և գործնական նշանակութեան նորին է «ինքնակիցումն Բա-  
զմախոսութեան», այսինքն «Եզրափակումն Բարեբարութեան» :

(\*\*) Այն է անսանեալն լատիներէն՝ յոսնական յայնիւ՝ «Ո՛րք  
լատինս», զոր այժմուս պապն հրատարակեաց իբրև զխոսակի Բոժմար-  
տիւնի սարսափութեան, ի նորախոսակումն և Բազմախոսական «Մարտ»,  
վարդապետութեանց (բար իւրոսմն ասելոյ), և հերքման կամ գո-  
րապարգսութեան նոյնն :

,, և կամ մնացէ առանց որոշման : Իսկ ճշմարիտ կաթողիկէքն  
 ,, (այսինքն է մեծ մասն հաւատացելոց) ունին ակնկալութիւնս  
 ,, բողոքովին հակառակս . քանզի ցանկան նորա՝ զի ժողովն  
 ,, հրատարակեացէ զվարդապետութիւնս Բողմանդակութեան, և  
 ,, յայնժամ գործ ժողովոյն եղիցի ասել միայն զբազանապէս  
 ,, և կարևոր բացատրութեամբք զայնոսիկ սահմանս՝ որք ի բո-  
 ,, վանդակութեան եղեալ են բացասական ոճով, և այնու փա-  
 ,, րասել զտարակուսանս մնացեալս տակաւին առ ոմանս ի  
 ,, մարդկանէ : Վաթողիկէքն ընկալցին ուրախութեամբ զհրատա-  
 ,, րակութիւն անսխալութեան պապին՝ իբրև զվարդապետու-  
 ,, թիւն հաւատոյ : Գիտէ ամենայն որ, զի պապն ինքնին ոչ  
 ,, ունի յօժարութիւն սահմանելոյ զայնպիսի ինչ, որ անկ է իւ-  
 ,, բուժ՝ անձինն . սակայն կաթողիկէքն յուսան՝ թէ ժողովն  
 ,, յայտնութեամբ Հոգւոյն սրբոյ՝ միաձայն վկայութեամբ հաս-  
 ,, տատեսցէ զանսխալութիւն պապին : Այլ և բազմաց ի կա-  
 ,, թողիկաց ցանկալի է, զի ի լուսնն յարգութեանց ընծայելոց  
 ,, Եկեղեցւոյ ամենասուրբ Առսին՝ հրատարակեցի և վարդա-  
 ,, պետութիւնն որ յաղագս հրաշափառ փոխման նորա յերկինս  
 ,, իբրև զմասն հաւատոյ , , :

Յառաջ քան զայս ասի ի նմին օրագրի . « Համարին կա-  
 ,, թողիկէք՝ թէ ի զիսաւոր նիւթս եպիսկոպոսունքն համաձայն  
 ,, գացին ընդ իրեարս . իսկ փոքրագոյն մասն եպիսկոպոսաց թէ-  
 ,, պէտ և պատրաստ իցէ ըստ ամենայնի յընդդիմակացութիւն,  
 ,, բաց ոչ կարողացի ընդ երկար հակառակել , , :

Ի միումն ի վերջին թուահամարոց այնք օրագրի՝ ի նամա-  
 կի ուրեք եկելոյ ի Բելգիոյ, նոյնպիսի և կամ նոյն ցանկու-  
 թիւնք գնին և ի բերանս կաթողիկաց Բելգիացւոց . « Որք ոչ  
 ,, միայն անձնատուրք են, ասէ, Եկեղեցւոյ և սրբոյ աթոռոյն հո-  
 ,, զուով և մարմնով, այլ և բողոքովին պատրաստք են ընդունել  
 ,, զամենայն սահմանս հաւատոյ՝ որք ելանիցեն յաթոռոյ ան-  
 ,, տի , , —

« Յուսան նորա, ասի անդանօր ի միջի այլոց բանից, թէ  
 ,, ժողովն հուսկ ուրիմն ի բաց բարձցէ զբաժանումն որ կայ ի

,, մէջ կաթողիկաց, կըսելով զվախճանական հարուած մի հո-  
 ,, դոյ և ուսմանց աղատամտութեան, Յուսան նորա՝ թէ  
 ,, տիեզերական Ժողովն հաստատեցէ զվարդապետութիւնն որ  
 ,, յաղագս անխաղութեան պապին, և զգլխաւորութիւնն նորա  
 ,, ի վերայ տիեզերական Ժողովոյ, — Յետ լացատրելոյ զայ-  
 ,, ստիկ ակնկալութիւնս և զցանկութիւն նախանձայոյզ կաթո-  
 ,, լիկաց, յիշատակէ նամակն այն և զներհական ակնկալութիւնս  
 ,, աղատամիտ կաթողիկաց, «Որոց թիւ համարոյն ոչ նուազ  
 ,, ինչ է, ասէ, մանաւանդ ի մէջ դեռահասակ եկեղեցականաց :  
 ,, Սորա ոչ բոլորովին հպատակելով բացայայտ վարդապետու-  
 ,, թեանց ընդհանրական թղթոյ պապին և Բովանդակութեան,  
 ,, պնդին՝ թէ քաղաքական խնդիրք ոչ են անկ պապական իշ-  
 ,, խանութեան, և թէ նա ոչ ունի առ նոսին զձեռնհասու-  
 ,, թիւն : Վասն որոյ ոմանք ի նոցանէ ուժովն ընդդէմ՝ կրանն  
 ,, ընդհանրական թղթոյ պապին և Բովանդակութեան : Նոցայն  
 ,, կուրու թիւն, զի մի՛ ասացուք այլ ինչ յոռեզոյն, պարտի  
 ,, այնքան օտտտիկ լինել, զի ակն ունին այնպիսի սահմանա-  
 ,, դրութեանց՝ որք կամ բոլորովին հակառակ լինիցին այնոցիկ  
 ,, կոնդակաց սրբոյ զահին՝ և կամ բացատրեսցնեն զնոսին ըստ  
 ,, իւրեանց իմացուածոյ : »

Յայս ամենայն ծանուցմունս զակնկալութեանց և զցան-  
 կութեանց ճշմարիտ կաթողիկաց՝ ձևացեալս կերպարանօք աղեր-  
 սաբորոց առ Աթոռն Հռովմայ՝ տեսանեմք յայտնապէս կանխա-  
 զնկոյց ազգարարութիւնս առ եպիսկոպոսն, որպէս զի պժմէն  
 ընդեկացցին նորա առաջարկութեանն որ լինիցի ի Ժողովի անդ,  
 և մի՛ վայրապար մտարերիցն յանօգուտ հակառակութիւնս :  
 բայց և առ այս ի կաթողիկաց լինի ազգարարութիւն, որպէս  
 զի առ սակաւ սակաւ պատրաստեցին նորա ընդունել զմտա-  
 լուտ յայանութիւնս Հոգւոյն սրբոյ :

Չօրապիրն ԶԷԷԷ՝, յորում գրեն եզուիթքն Հռովմ քա-  
 ղաքի, և զոր պապն մի ամօք յառաջ զովեալ էր առանձին  
 կոնդակաւ, և անուանեալ «ընտրեալոյն օրադրական գործի  
 ճշմարիտ վարդապետութեան Եկեղեցւոյ, մարթ է համարել

466-2009 3887



պաշտօնական լրագիր հռոմեական պալատանն : Որոշ վասն ոչ ի չափազանցութիւն բանից գրեցցի մեզ՝ եթէ ասիցեմք աներկբայապէս, թէ կարծիք ԶԷԷԷԷ՝յէ ի մեծամեծ և ի հանրական խնդիրս համանմանք են մտաց գերազոյն զխոյ հռոմեական Եկեղեցւոյ, որպէս և այլոց ԷԷԷԷ բազմաց ի Հռոմ վարաքի : Այսմ պաշտօնական գրութեան ԶԷԷԷԷ՝յէ համեմատ է և վերամբարձ ոճն այն՝ որով վարի նա, և արհամարհոս ցնացք նորին ընդ ամենայնի որ հակառակիցի նմա : Ազգարարութիւնք նորին ընկալեալ լինին իբրև զպապական կոնդակս՝ կերպարանօք օրագրական յօդուածոց . վասն որոյ ոչ է մարթ գտանել զլաւագոյն և զարժանահաւատ աղբիւր ինչ վասն իմանալոյ՝ թէ յոր խորհուրդս յածիցին ի Հռոմ ի գումարել անդ զԺողով :

Եւ ոչ միայն ի ԶԷԷԷԷ՝ օրագրին, այլ և յայլ բազում գրուածս է տեսանել ազգարարութիւնս խրատականս և բացարութիւնս այնպիսիս : Եզուիթքն ի վաղ ժամանակաց հետէ ջան ի գործ արկանեն հիմնելոյ զմիարանութիւնս և զընկերութիւնս, որք խոստանան ընդունել զանխալութիւն պապին իբրև զման հաւատոյ, և տարածել զվարդապետութիւնն զայն : Յաւել առ այս և զայն, զի գաւառական Ժողովք յընթացս վերջին տասն ամաց ընդունէին ի Հռոմէ բազում անգամ ըստիպողական ազգարարութիւն սակս այնր խնդրոյ : Որպէս յայտ է յատենագրութեանց հրատարակելոց ի գաւառական Ժողովոց Գերմանիոյ և այլոց աշխարհաց, Ժողովքն այնոքիկ ընկալեալ են հրաման ի Հռոմէ ի զննել և յասել զկարծիս իւրեանց զինդրոյ անխալութեան պապին, և զսահմանաց Բովանդակութեանն : — Եզուիթն Շնէկման, որ պատմ զայս 2), վկայէ զի գաւառական Ժողովք Վոլոնիոյ, Քոլոչայի, Ութրէքթի, Նոյնպէս և Ժողովքն գումարեալք յԱմերիկա ընկալան զանխալութիւն պապին . և ապա ի վերայ բերէ . « Այսպիսի », եզրակացութիւնք գաւառական Ժողովոց զանխալութենէ պապին վերադննեալք ի Հռոմ՝ ունին վասն մեր ոչ դուզնաբեայ ինչ նշանակութիւն . վասն զի յայտ առնեն՝ թէ

,, յիշատակեալդ առանձնաշնորհութիւն պապական՝ թէպէտ և  
 ,, չիցէ տակաւին ձեւաորեալ վարդապետութիւն հաւատոյ,  
 ,, սակայն աներկբայելի իմն համարի յաչս Հռովմայ և յաչս  
 ,, իշխանաց Եկեղեցւոյ, — քանզի սաստկագոյնս արգելեալ է գա-  
 ,, ւառական Թողովոց սահմանել զորպիսի և իցէ վճիռ ի հա-  
 ,, կառակելի մասունս առարկայից հաւատոյ, ,,

Աւնելով մեր առաջի աչաց զայսպիսի վկայութիւնս առն  
 որ անտարակոյս քաջահմուտ էր իսկութեան խնդրոյն, զուրին  
 է մեզ գտանել զճշմարտութիւն իրին՝ եթէ վարկանիցիմք թէ  
 ի Հռովմ ոչ միայն յուսային յայսպիսի վճռահատութիւնս  
 Թողովոցն, այլ թէ անտի յառաջագոյն իսկ առաքեալ էր ի  
 գաւառական Թողովն հրաման՝ զի առ հարցմունսն եղեալս  
 առ նոսա տացնն ստորասական պատասխանի, — Գատափճիոք  
 գաւառական Թողովոցն ի Հռովմ յայն սակս՝ զի հնար լինցի  
 յենուլ ի նոսա իբրև զվաւերական վկայութիւնս՝ թէ այն է  
 հաւատ մեծագուննի մասին կաթողիկե կախկոպոսաց, Այսու օ-  
 րինակաւ սահմանն վարդապետութեան զանխաղութենէ պա-  
 պին այնպիսի իմն կերպարանս առցէ՝ որպէս թէ ոչ է բողոքո-  
 վին զործ եղուիթաց, և միայն եղուիթաց : — Ըստ ամին այսմ  
 օրինակի վարեցաւ Պիոս Թ և ի հրատարակել անդ զվարդա-  
 պետութիւնն յաղազս անարատ յղութեան սրբոյ կուսին :  
 Զայսմանէ այսպէս պատմէ Քլիո. « Պապն յանակնկալս զի-  
 ,, ջաւ ի խնդիրն Ռաւշելի, և ի բաց եթող — ի կոնդակէն  
 ,, վարդապետութեան որ զանարատ յղութենէ՝ զմասն ինչ բա-  
 ,, նից, որք ոչ ըստ բաւականին զօրեղք էին. քանզի, ասէ  
 ,, իսկ ինքն, թէպէտ և նուաստութիւն եղիցի այս Հռովմայ,  
 ,, սակայն հարկ է հանդուրժել, զի մի՛ ասիցենն թէ ամենայն  
 ,, ինչ ի ձեռս եղուիթացն է, ,, 5) :

Յայտնի է մեզ ի ստոյգ աղբերաց, զի բովանդակ նախա-  
 գիծն ձակատամարտին՝ յորում պատրաստի յաղթութիւն  
 վարդապետութեան որ զանխաղութենէ պապին, գրեթէ ըստ  
 ամենայն մասանցն արդէն յօրինեալ է : — Մի ոմն յԱնգղիաց-  
 ւոցն եկեղեցականաց (զորոյ և զանուն կարող էար տալ) յանձն

իւր առեալ է զաշխատութիւն տուաջի առնելոյ սրբոյ Հօրն — իսկզբան անդ ժողովոյն զխոնարհական խնդիր՝ իսկոյն ամբառնալոյ զկարծիս անսխալութեան պապին յաստիճան վարդապետութեան հաւատոյ : — Մեծ մասն եպիսկոպոսաց, որպէս համարին եղութիւնք և համատուր նոցա, վաղու ևս պատրաստեալ գողով և անցեալ ի կողմն նորահար վարդապետութեանն, միաձայնութեամբ միաբանեցին ընդ աղերարկու եկեղեցականին այնմիկ. և սրբազան Հայրն տեղի տուեալ անհակառակելի աղերսանաց Հարց ժողովոյն, յանակնկալ իմն և որպէս թէ յանկարծական ներշնչմամբ իւրք ի վերուստ՝ յօժարեցի անշուշտ զիջանկ խնդրուածոց նոցա, այնպէս զի նորահար վարդապետութիւնն՝ առանց պլլ ևս կարօտանալոյ բացատրութեանց, և իրրու հարուածով իմն մոզական զաւազանի, ի վեր երևեալ հրատարակեցի ի ժողովոյ անտի : Չորօրինակ Փակարանն \*) յայտ առնէ Հռովմայեցոց՝ յետ ընտրութեան նորոյ պապին՝ թէ «Ունիմք զպապ», ըստ նմին օրինակի յերեկոյն այնր գումարման ժողովոյն ամենայն ժողովք կաթողիկաց լուիցն զաւետիս թէ՛ «Ունիմք զպապ անսխալական», : Եւ յայնժամ, որպէս հաւաստի առնն եղութիւնքն, նորանշոյլ ծագմամբ նորոյ արեգական Աստուածային ճշմարտութեան՝ հպարտական ցրուեցին յաւիտեան ամենայն ցնորք սուտանուն զիտութեան, ամենայն երևոյթք պոժմու քաղաքականութեան :

(\*) Այն է լատիներէն «+մե+լա՛մէ», իռլեցեալն ժողովարեղի կարգնաւոց հաստեւելոց յընտրութեան պապի : Մինչև ջոմն 1274 ընտրութիւնն պապին լինելի է ժողովրդեան և յեկեղեցախմանց Հռովմայ. պապն Գրեգոր Ժ կարգեաց զգահարանն, յորում գովին կարգնաւոյն, ոչ ինչ բնաւ իցարութեան ընդ արարութեան ասելով. և յորժամ կարարեցի ընտրութեանն, մի ան է կարգնաւոց ասելով ժողովրդեան է լատին Բարբառ՝ թէ «հապէ՛տաւ գահ՛գահ», այնմէն է՝ «ասնի՛տ զպապ» : Արդ ասէ Եանուս, թէ բնացե աստարարեցեց յանկարծ և ժողովք (որպէս և արարն) ասելով, «հապէ՛տաւ գահ՛գահ ինճաւելի պիլէ՛տ», նոյն է՝ «ասնի՛տ զպապ անսխալական» :

Ն[ժ]է մէք կամիցիմք Հիմնել զբանս մեր ի վերայ վերջիշեալ յօղուածոց և և թ ԳԼԷԻՆՅԱՅԻՆ, այն և ս շատ է ի ցուցանել յայտնապէս՝ [ժ]է Թողովն պարտի զումարիլ զխաւորապէս այսու նրպատակաւ, զի կատարեսցէ զվաղեմի ցանկութիւն կարգին և զուխիթաց, և զայնր մասին պալատանն՝ որ յեզուխիթացն առաջնորդի :

Յառաջիկայոց ջանասցուք պարզաբանել զայս ամենայն, և զնխ[ժ] շարագրածոց այնպէս կարգաւորեսցուք, զինաս ի քնին առցուք զԲՈՎՆԱԿԱՆՆԵՆ և զնպատակս նորին, և ապա Հիմնելով զբան մեր ի վերայ պատմական անցից, ջանասցուք տեղեկանալ՝ [ժ]է զինչ իցէ վարդապետութիւնն զպապական անօխալութենէ :

## ՄՄՄՆ ԵՌՄՁԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՊԻՈՍԻ Թ, ԵՒ ԱՆՑԱՆԵԼ ՅՕԴՈՒԱԾՈՑ  
ՆՈՐԻՆ Ի ԿԱՐԳ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՆԱԻԱՑՈՅ:

Վարդապետութիւն Բովանդակութեան՝ ըստ թախանձանաց ջերմեռանդն կաթողիկաց պարտի առնուլ զկերպարանս էական մասանց հաւատոյ: Եւ յու եղանակաւ անտարակոյս ճոխասցի (հռովմէականն) Եկեղեցի բազմութիւ վարդապետութեամբ հաւատոյ, որք մինչև ցայժմ՝ անյայտք էին, և կամ յաճախ հակասակամբ իսկ թուէին: — Բայց թէպէտև անսխալութիւն պապին լինիցի հանրական դաւանութիւն Եկեղեցւոյ, — սակայն այս ևս զեռ սկիզբն և եթ եղիցի այնր առատ հնձոց՝ որ գանձեալ պահին ապագայ ժամանակաց: — Սովմբ այսու կաթողիկացն Եկեղեցին հետ զհետև սեղմեալ ամիրոփեսցի, և զուցէ այնչափ նուազեալ փոքրկացի, զի դարձեալ տեսցէ աշխարհ զտեսարանն զայն՝ զոր եցոյց մի ոմն ի պապից, այն է Պետրոս Տէլուճա: Պապս այս՝ Բենեդիկտոս ԺԳ անուանեալ, դատապարտեաց ի բարձրամուր աշտարակէն իւրմէ Պենիսկոլա անուանելոյ զամենեսեան որք չկամէին ընդունել զքրիստոնէական հաւատս իւր, և ի վերջէ՝ իբրև Աստանդեան Ժողովն (յամին 1417) հանդիսապէս ընկէց զնա ի պապական իշխանութենէ, և թիւ համարոց հպատակաց նորա նուազեցաւ յոյժ յոյժ, արար յայտարարութիւն այսպիսի. «ի Պենիս—կոլա, և ոչ ի Աստանդիա ժողովեցաւ համօրէն Եկեղեցի, որպէս երբեմն ի տապանին նոյի գտանէր համօրէն ազգ մարդկան,» Բայց թուի թէ ոչ է հարկ տալնապել ընդ այս. զի որչափ առաւել դասք արանց զիտնոց ի բաց փտարեսցին յժ-

կեղեցւոյ, այնքան դուրագոյն լիցի հաւատարիմ Ղեկավարաց յառաջ տանել զնաւն, և այնքան աւելի հպատակօրէն հնազանդեսցի նոցա մնացեալ հօտն հաւատարիմ ոչխարաց: — Վաթորիկութիւնն որ մինչև ցայժմ համարեալ էր յաչ ու մանց դաւանութիւն տիեզերաց, յայնժամ անտարակոյս ծաղր եղեալ յիւրմէ իսկ ճակատագրէն՝ դարձցի և եղիցի ամենևին իսկ հակառակն անուան իւրոյ և նշանակութեան:

## Ա.

Բացասական առաջարկութիւնք “ Բովանդակութեանն ,,  
դարձուցեալք ի Շուասերէ ի դրականս: — Աշխարհա-  
կան իշխանութիւն Եկեղեցւոյ:

Յառաջիկայ Ժողովին ոչ այլ ինչ աշխատութիւն մնայ եւ պիտկոպոսաց՝ եթէ ոչ զրոշմել զկնիք Ժողովական ի վերայ այնր՝ զոր ստյոյգ կանխատեսութեամբ արդէն արարեալ է եզուիթն Շուասեր ի Վեննա: Նա արդէն զբացասական և զուրացական սահմանադրութիւնս Բովանդակութեանն<sup>(\*)</sup> փոխեալ է ի ստորասական 4), որով դիւրին է մեզ այժմէն իսկ առանց իրիք՝ աշխատութեան պատրաստել զկանոնադրութիւնս Ժողովոյն: Յամին 1870 կաթողիկացն Եկեղեցի ճոխացեալ հարստացի առաջիկայ ճշմարտութեամբք, և պարտական եղիցի հաւատալ առաջիկայ դրութեանց՝ եթէ չկամիցի զրկիլ ի փրկութեանէ:

Ա. Եկեղեցին ունի իշխանութիւն ի կիր արկանելոյ զարտաքին տոխպումն. ունի նա ուղղակի և անուղղակի զաշխարհական իշխա-

(\*) Քանզի յօդոսած է բանից “ Բովանդակութեանն ,, առ հասարակ՝ յարմնեալ էն է յն բացասումն՝ զի որտեքոյն է լինելոյն է որտեպարտել, որդէս տեսցի յառաջիկայս, և է ծանօթութեան հեղինակն որ է վերջ Բարեխի:

նութիւն, որոյ ներհակն է իշխանութիւն հոգևորական, որ ըստ եկեղեցական բարբառոյ նշանակէ զքաղաքական և զքնական իշխանութիւն պատժողականն) : — Եւ թէ զայս այսպէս պարտ է իմանալ՝ յայտ է զլիաւորապէս ի բանիցն Շոտաերի որ ասէ. « Եկեղեցական իշխանութեան ենթարկեալ են ոչ հոգիքն միայն, » :

Բ.

Իշխանութիւն Եկեղեցւոյ ի զնել մարմնաւոր պատի-  
ժըս : — Պիոս Թ. և Կանոնիկոսն Նուից :

Բայց առաւել ևս բացայայտ եղանակաւ խօսի զայսմանէ եղբայրակիցն նորա և կարգակից՝ Գերարդոս Շնէէման որ ասէ. « Եթէ Եկեղեցին ունի իրաւունս արտաքին գառաստանի, « ապա ուրեմն կարող է նա տալ և աշխարհական պատիժս  
« պատուհասի, և առնուլ ի յանցաւորաց ոչ զհոգևորական  
« և եթ ըստիս . . . Սէրն երկրաքարչ՝ որ լուծանէ զկանոնս և  
« զեալս Եկեղեցւոյ՝ անշուշտ ոչ կարէ նուաճիլ և շքանալ  
« հոգևորական և եթ պատուհասիք, և բարձմամբ հոգևորա-  
« կան բարեաց. և յետինս այս պատիժ ոչ մեծ ինչ վիշտս  
« ցաւոց պատուհասելումն ազդէ : Ապա ուրեմն, եթէ պատիժն  
« անկարգութեան պարտի պատճառել շարչարանս և ապաշա-  
« ւանս վասն մեղացն հեշտութեան, պարտին ի կիր արկանել  
« և աշխարհական կամ զգալի պատուհասք, » յորոց կարգի համարի Շնէէման զգրամական տուգանս, զբանտ, զգանայարու-  
թիւն և զքրտոր : — Այսու բանիւ ոչ այլ ինչ առնէ նա՝ եթէ ոչ կրկնել զասացեալն ի միում ուրեք ի յօդուածոց Զէ՛լէ՛ւ՛այէ  
« Յաղագս ստիպողական իշխանութեան Եկեղեցւոյ, » . յորում ցուցանի՝ թէ անպատճառ հարկ ի վերայ կայ Եկեղեցւոյ ի գործ արկանել ընդդէմ յամառեցոց զպատիժս աշխարհականս, այսինքն է զբամական տուգանս, պահեցողութիւնս, բանտարկութիւնս և գանահարութիւնս, իբր զի առանց

արտաքին հարկադրական իշխանութեան՝ ոչ կարէ Եկեղեցին հաստատուն մնալ մինչև ցկատարած աշխարհի : Նմին միայնոյ անկ է զնել և սահմանս պատժոց . և եթէ որ կամիցի հակառակել և խլել ի ձեռանէ նորա զայս իրաւունս՝ ապստամբ համարեսցի յԱստուծոյ : Ընէէման ոչ զիտէ թէ որպէս սանձահարիցէ զանհնարին ցաւ սրտի իւրոյ ընդ այն՝ զի այժմու աշխարհս հեռացեալ է յոյժ ի զիտութենէ փրկագործ ճշմարտութեանցս այսոցիկ և գործադրութեան սոցին : — «Տեսանեմք, ասէ նա, զի տէրութիւնն կատարէ՝ ոչ միշտ զայն ամենայն՝ զոր ըստ աստուածային կարգաց պարտական էր առնել վասն Եկեղեցւոյ . այլ և զայս ևս կարեմք յաւելուլ՝ թէ ոչ միշտ կարող է կատարել զայնպիսիս ի պատճառս չարութեան մարդկան : Ուստի և յայն հասեալ եմք, զի իրաւունքն զորս ունի Եկեղեցին ի գործ զնելոյ զաշխարհական պատիժս և զոյժ բնական, զրեա թէ չքացեալ են իսպառ » ( 6 ) :

Այս իսկ ընթացք ուղղութեան, զոր աստէն բացատրեցաք՝ եղև պատճառ, զի յամին 1857 Պիոս Թ դատապարտեաց զառաջարկութիւն Նուից անուն կանոնիկոսին Թուռին քաղաքի . քանզի ասէր նա՝ թէ Եկեղեցին ունի միայն զհոգևոր իշխանութիւն պատժողական ( 7 ) : Ի նոյն պատճառաց և ի դաշնակցութեանն եղելոյ յամին 1865՝ ընդ ազատ նահանգաց Հարաւային Ամերիկոյ՝ ասի յութերորդ յօդուածին՝ թէ աշխարհական իշխանութիւնք պարտին անպատճառ կատարել զամենայն պատիժս սահմանեալս յեկեղեցական դատաստանաց : Ի թրղթին Պիոսի Թ առ կոմսն Տիւվալ տը Պոլիէօ, որ հրատարակեալ է յԵրևանս անուանեալ լրագրին յ15 Նոյեմբերի 1864 ամի, յայտնապէս պաշտպանի իշխանութիւն Եկեղեցւոյ ( իմա աստանօր զիշխանութիւն հռովմէական պալատանն ) ի վերայ զեկապարտութեան աշխարհիկ ժողովրդոց, իրաւասութեան նորա և իրաւունք մտանելոյ ուղղակի ի յարաբերութիւնս տէրութեան :

## Գ.

Քաղաքական զխաւորութիւն պատից : — Կրօնաբն-  
նութիւն պատուեալ ի պապականաց : — Մարտիրոս  
պապ, եւ Պետրոս արքայ Արրապոնացուց :

Այսպէս ահա ի մեծի մոլորութեան գտանին այնորիկ՝ որք  
Համարին թէ հոգին աստուածաշունչ գրոց և նախնի քրիստո-  
նէութեան հզօրագոյն է քան զայն ոգի միջնադարեան ժամա-  
նակաց, որով Եկեղեցին հռովմէական բռնակալեալ ամենայն  
ուրիշ՝ հրամանագրէր արկանել զմարդիկ ի բանտս և հանել  
զնոսին ի կախաղանս և ձգել ի խարոյկս : Ընդ հակառակն այս  
վարդապետութիւնք պարտին այժմ՝ զգննուլ զսրբութիւն իշ-  
խանութեան տիեզերական ժողովոյ, և սիրելին այն երեւակա-  
յութիւն պապից՝ թէ իշխանք և պետք աշխարհի առ ահի բա-  
նադրանաց և նշովից պարտին կատարել զամենայն դատավճիռս  
իւրեանց՝ յաղագս գրաւելոյ զինչս յանցաւորաց յարքունիս,  
յաղագս բանտարկութեանց և առ ի մահ դատապարտութեանց,  
պարտի այժմ՝ եղանիկ վարդապետութիւն հաւատոյ, Յայտնի  
իմն է զի այսու ոչ միայն արգարանայ ասացուածն՝ թէ զոյր ի  
հնումն ատեանն կրօնաբնութեան, այլ և ի պատճառս յա-  
ճախելոյ յայժմու ժամանակիս անհաւատութեան՝ գովի և  
պատուելի ատեանն այն իբրև ամենակարևոր ինչ : Զի ինչոյն  
վաղու և ս զրուտեալ էր զայն ատեանն՝ կոչելով զնոյն « վսեմ  
տեսարան կատարելութեան հասարակաց մարդկան », 8) . և այն  
զի մի զհետ միոյ անցուցան ի կանոնս սրբոց կրօնաբնելիք երկու  
(որ եղև ի մտաւոր ժամանակս) միացեալ ընդ սմին՝ առնու  
զնոր լուսաւորութիւն և ոչ փոքր ինչ նշանակութիւն :

Բ. Ըստ բացատրութեանն զոր առնէ Շաատէր զրական  
ոճոյ 25 յօդուածոյն Բաժնաբանութեան, պատարթաբարձրութեան ոչ  
երբէք անցեալ զանցեալ են զսահմանօք իշխանութեան իւր-  
եանց 9) : Ըստ այսմ՝ օրինակի յապա ժամանակս ամենայն  
կաթողիկէն զիտասցնն և ամենայն ուսուցիչք արքունական ի-

բաւանց և աստուածարանութեան ուսուցեն թէ պապք ունին իշխանութիւն ըստ իւրեանցն հաճոյից փոփոխելոյ զթագաւորս, և ըստ կամի բաշխելոյ ում և իցէ զամբողջ թագաւորութիւնս և զազգս :

Այսու եղանակաւ յորժամ, օրինակ իմն, արքայն Արրագոնացւոց Պետրոս՝ յետ վտարանջելոյ Սիկիլիացւոց ընդդէմ բռնակալութեան Վարդուսի Ա (յամին 1782) յայտ արար ըզժառանգական իրաւունս իւր ի վերայ Սիկիլիոյ, յայնժամ պապն Մարտինոս Գ նախ բանադրեաց զնա, և ապա շնորհեաց զնորոգութիւն մեղաց ամենեցուն՝ որք օգնական եղն ինքեան և Վարդուսի ի պատերազմին ընդդէմ Պետրոսի, և հուսկ ուրեմն հրատարակեաց առ ամենեւին՝ թէ Պետրոս անկեալ է ի թագաւորական իշխանութենէն և ի պատուոյն, զոր և ետ Վարդուսի Վալուա փոխանակ տարեկան հարկի : (Այսու գործով երկոքին թագաւորքն Արրագոնացւոց և Գաղղիացւոց զբաւեցան ի կենաց. և Գաղղիացիք կորուսին զբանակս իւրեանց) 10) : Այս ամենայն՝ ասեմ՝ ոչ էր բնաւ ինքնակամ յախշտակութիւն, այլ միայն կատարումն աստուածային իրաւանց, զոր և այժմ լի բովանդակ ունի մէն մի ի պապից : Սակայն յայժմութեանակիս այլ ևս առ սակաւ մի ժամանակ խոհանութիւնս պահանջէ արդեօք անգործ թողուլ զիրաւունս զայս, և սպասել պատեհի :

Պապն Վղեմէս Գ, յետ վաճառելոյն միլիոն մի մարդկան կոմսին Վարդուսի Անժուացւոց ի փոխարէն տարեկան հարկի 8000 ունկեաց ոսկոյ, յամին 1265 յայտ արար առ ամենեւին, զեւթէ յանկարծ ոչ հատուցէ զայն Վարդուս յառաջնումն իսկ ժամադրութեան հատուցմանն, բանադրեցից ասէ զնա. և ապա եթէ զանց տունիցէ զհատուցմամբ և յերկրորդումն ժամադրութեան, ազգն ողջոյն անկցի ընդ արդեականօք, այսինքն է բարձցին ի նմանէ իրաւունք կատարելոյ զկարգս աստուածպաշտութեան և խորհրդոց 11) :

Այսու ամենայնիւ հանդերձ՝ եպիսկոպոսունք առաջիկայ թողովոյն հարկեացին ընդ մասունս հաւատոյ գրել զայս՝ թէ

պապն այնու ևս ոչ էանց ըստ սահմանս իշխանութեան իւրոյ, և թէ նա՝ Հետեւարար ի նկատի ունելով քաղաքական կամ զրամական նպատակս, միայն զօրութեամբ կամաց անձին իւրոյ կարող է ի բաց բառնալ ի միլիոնաւոր անմեղ մարդկանէ զայնոսիկ միջոցս կամ Հնարս փրկութեան, որք ըստ վարդապետութեան Եկեղեցւոյ առաջնորդնն ի կեանսն յաւիտենից :

Դ.

Արրազրութիւնք պատմութեան ըստ հանոյս պապականաց : — Պատմագրութեան պաշտօն էզուիմացն է և ևն մերապահեալ :

Գ. Յորժամ Ժողովն ի գործ դիցէ զնախագիծն յօրինեալ է ԶԷԷԷԷԷԷ, այնուհետեւ ձեռն արկցի ի սրբագրութիւն այնր պատմական աւանդութեան՝ որ ընդունելի էր հասարակաց մինչև ցայժմ : Մինչև ցայժմ ընթեռնուաք մէք յամենայն պատմական և յիրաւարանական մատեանս և ի զըջոցս, թէ արտօնութիւնք եկեղեցականաց, զորօրինակ առանձինն զատաստան, անսահման ազատութիւն արուեստից, ազատութիւն ի հարկաց և յարբունի ծառայութեանց տուեալ էին Եկեղեցւոյ առ սակաւ սակաւ ի կայսերաց Հռոմայ, և ապա ի թագաւորաց, ուստի և առաջ զային ի զօրութենէ քաղաքական իրաւանցիսկ յայսմ հետէ կարծիքդ այդ մերժեալ հերքեսցին իրրև ըզհերետիկոսութիւն 12) :

Նոյնպէս ընդ հերետիկոսս համարեսցի՝ որ դք համարձակեսցի զրել կամ ուսուցանել՝ թէ ամբարհաւած և տիրապետական անիրաւ պահանջմունք պապից պատճառք եղնն բաժանման արևելեան Եկեղեցւոյ յարևմտականէն, թէպէտ և ամենայն որ կարող է ընթեռնուլ զայդ ի բուն իսկ յիշատակարանս ԺԲ և ԺԳ դարուց, և ի վկայութիւնս բազմաթիւ մարդկան ժամանակին 13) :

Ձայսպիսի կարգադրութիւնս առաջի աչաց ունելով՝ խորհուրդ տամք այնոցիկ ի կամոյիկ հեղինակաց որք պատրաստեցն շարադրածս պատմականս, ևս և իրաւարանականս, զի հրատարակեցն զհետազոտութիւնս և զգիրս իւրեանց յառաջ քան զերեսուն Գեկտեմբերի 1869 տարւոյս . քանզի անտի և անոր «Մեծ իմն բոլորովին ծագեցի դարուց կարգ», և միայն եղութիւնք և սանք նոցին ծանկեցն զանձինս իւրեանց կռնեցեալս և ընդունակս ի դրել առանց հերետիկոսական խառնուածոյ՝ տիեզերական և եկեղեցական պատմութիւնս, քաղաքական իրաւանց գիտութիւնս, եկեղեցական պատմութիւնս, և որ այն ևս :

Գոնեա կամեցողացն այնուհետև վաստակել յաշխատութիւնս գրաւորականս և ուսումնականս՝ հարկ լինցի փոփոխականութիւն իմն և առաձգականութիւն ողոյ և զրչի, զոր յայժմու ժամանակիս է տեսանել միայն յօրադրական յօրինուածս :

## Ե.

Բունդատու թիւն խղճի մտաց : — Ազատութիւն դաւանութեանց դատապարտեալ ի պատկանաց : —  
Կարծիր Բէթէլէոի՝ դատապարտեալ ի նոցունց :

Գ. Եթէ ըստ ցանկութեան եղութեացն և այնոցիկ ի ԷԷ : Իոյ ԵԷԷԷԷԷԷԷ որք լսեցին նոցա, սահմանք Բովանդակութեանն զարձցին ի մասունս հաւատոյ, խնդիրքն որ զազատութենէ խղճի առաւել ևս սաստկացին, և սկիզբն եղցի կրօնական բանդատութեան . քանզի Բովանդակութեանն դատապարտուանէ զամենայն կարծիս պիտու մարդկան զազատութենէ խղճի, զհաւատոց և զգաւանութեանց : — Ըստ սահմանելոյ Բովանդակութեանն, մոլորութիւն չար է տալ բողոքականաց զնոյն իրաւունս՝ զոր ուղղափառքն ունին, կամ հրաման տալ բողոքականացն պանդխտելոց՝ ազատօրէն կատարել զկարգս աստուած-

պաշտութեան 14) : Բռնադատութիւնն և Հալածանք՝ ըստ վարդապետութեան եղութեաց՝ նուիրական պարտք են մարդոց, շատ է զի ունիցի նա ի ձեռին իւրում զիշխանութիւն, — Սակայն Եկեղեցին առ ժամանակ մի ի գործ դիցէ զիրաւունս իւր՝ դնելոյ աշխարհական պատիժս՝ մեծաւ աշարջութեամբ և զգուշութեամբ, և հայելով ի հանգամանս իրաց ըստ ասելոյն Շնէէմանի 15), և ոչ ևս այնպէս որպէս առնէրն ի միջնադարեան ժամանակս : Եւ չիք երկրայութիւն, զի այսու օրինակաւ աճեացի և պահպանեսցի՝ ազգէ յազգ անցանելով՝ ստութիւն, կեղծաւորութիւն և նենգութիւն. այլ այս ամենայն փոքր չարիք են տակաւին . քանզի ըստ Բովնդալիս-Բեմն ասելոյ՝ ազատութիւն կարգաց աստուածապաշտութեան և ազատութիւն կարծեաց ծնանին զանբարոյականութիւն և զժանտախտն անտարբերութեան կամ անխտրականութեան, — Եւ այսպէս յապա ժամանակս այդպիսի կարծիք Բովնդալիս-Բեմն ևս դարձցին և եղիցին վարդապետութիւնք հաւատոյ, և առ ի հաստատել զայնս՝ մեկնիչքն վճռոց առաջիկայ ժողովոյն ի մէջ բերցնն զփորձսն և զդիտողութիւնս՝ ըստ որոց ազգք և ժողովուրդք (Գերմանացիք, Անգղիացիք, Պարզիացիք, Բելգիացիք)՝ որք ունին զազատութիւն աստուածապաշտութեան, մեղապարտք են քան զամենայն մարդիկ. ընդ հակառակն՝ Սպանիացիք, և բնակիչք եկեղեցական նահանգին՝ յորս գտանի (կամ դեռ ևս գտանէր) կրօնականն բռնադատութիւն, փայլեն ի մէջ ամենայն ազգաց շնաշխարհիկ առաքինութեամբ իւրեանց, Զուղիղն ասելով, ճակատամարտն հրատարակեալ ընդհանրական թղթով պային (յամին 1864) յառաջ վարելոց է նորով իմն սաստկութեամբ, ի գործ արկանելով զամենայն զօրութիւնս և զհնարս Եկեղեցւոյ, ճակատամարտ ընդդէմ հասարակաց գիտակցութեան կամ խղճի, և ընդդէմ կարծեացն՝ զոր այժմու քաղաքակիրթ ժողովուրդք և սահմանադրութիւնք նոցա ունին զիրաւանց :

2և ևս բազում ժամանակ է, զի եպիսկոպոսն Մոպունտիոյ Քէթէլէն \* ) ի մատենի միում (որ յայնմ ժամանակի մեծապէս զրուատեցաւ յամենան կաթողիկական օրագրաց, և ցանկալի գտաւ ամենեցուն վերծանութիւն նորին) ջանացեալ էր ցուցանել զչափաւորութիւն, զհամեստութիւն և զներողամբտութիւն կաթողիկ Եկեղեցւոյ՝ համեմատելով զնա ընդ քաղաքական իշխանութեան և ընդ բաժանեալ Եկեղեցեաց: Արդ ասէ նա՝ թէ «Եկեղեցին այնքան ի մեծարանս ունի զպատուութիւն խղճի և կրօնից, զի բացէ ի բաց հերքէ իրրև զանբարոյական ինչ և ամենեին աննորելի՝ զոր և իցէ արտաքին բռնադատութիւն ի վերայ այնոցիկ՝ որք ոչ հպատակին ինքեան. թէ չիք ինչ այնպէս օտար ի մտաց Եկեղեցւոյ՝ որպէս ցանկութիւն ի գործ արկանելոյ զեկեղեցական իշխանութիւն առ ի պատժել զայնոսիկ՝ զորս ի պատճառս մկրտեալ գոյցնոցին համարի որդիս իւր. թէ ընդհակառակն կամակար թողունա՝ զի ամենայն որ աղատօրէն ընտրեսցէ զհաւատ իւր. — և թէ բնաւին իսկ ստութիւն է այն՝ որով ջանահնար լինին ոմանք համոզել զբողոքականսն, որպէս թէ Եկեղեցին կաթողիկաց ըստ պառնայ խտտութեամբ և բուռն զօրութեամբ վարել ընդնոսա, և այլն 16), — Ոչ է հարկ ասել՝ թէ պատմական ստուգութիւն բանիցդ այդոցիկ կասկածելի է յոյժ :

Եւ զայսպիսիս համարձակէր զրել եպիսկոպոսն այն յայնժամ՝ մինչդեռ խրատեալ էր ի բանից Բովանդարութեան և մեկնչի նորին Շուատերի, թէ այնպիսի ասացուածովք անկանի ի դատապարտեան ի պապէն յազատամտութիւն, որ ըստ հրոսովմէական հայեցուածոյ՝ մի է ի վնասակարագոյն մոլորութեանց մերոյ ժամանակիս, և թէ հարկ էր ընդունել ի Հռով-

(\* ) Այլք մեծանուն առ Գերմանացիս, որ աշխարհիկ բնով և պարանալեան պերդոսի-պարտաւ, յայն 1857 ընդմեջ է ըլլ յեռանդարութեան եպիսկոպոսութեան, յովով բարուածանի երկելի և ոմանի ի հարարաբիւսութեամբն :

մէ զառանձինն իմն վճիռ՝ զի մի՛ անկանխցի մատեան իւր ի ցուցակ արգելեալ գրենոյն : Արպիտի՛ յոյս պայծառ ծագեաց պսու պատահարաւ ի վերայ գրութեան Եկեղեցւոյ, որպիսի՛ ի վեր երևեցաւ պսու ստրկութիւն ոգւոյ՝ յոր եղութիւնքն կաշկանդէին զկաթողիկոս գերմանացիս : — Գերահռչակ եպիսկոպոսն այն ասաց զկարծիս իւր համարձակ, և զովարանեցաւ յամենեցուն, և առանց բնաւ հակառակութիւն ինչ կրելոյ յայրոցն եպիսկոպոսաց՝ խօսեցաւ զայնպիսի կարևոր խնդրոց որ կարօտին ստոյգ պատասխանոյ, զի զպատասխանոյ անտի կախեալ կայ իրաւունք և ազգեցութիւն Եկեղեցւոյ : — Եւ ահա յետոյ բազում ինչ ամաց հերքէ պատն զվարդապետութիւն նորա՝ ի հարկէ ոչ տալով զանուն նորին, և իսկոյն նոյն մարդիկն՝ որք այնքան զովէին զգիրս եպիսկոպոսին, այժմ՝ խոնարհազոյն ևս երկրպագութեամբք ներրողն զընդհանրական թուղթ պապին, ի մտի եղեալ՝ թէ այն զոր ինքեանք մինչև ցայժմ սպիտակ համարէին՝ իրօք սեաւ է և ոչ սպիտակ : — Քէթէլէն կամեցեալ զանձն արդարացուցանել՝ ձեռն էարկ յողորմելի հնարքս, և ասաց, որպէս թէ յօղուածն այն Բուստրուս-Բիստուս պապին յայտ առնէ ոչ թէ զհանրական սկիզբն կամ զվարդապետութիւն ինչ, այլ ակնարկէ ի մասնաւոր կողմանս աշխատի և եթ, և յանուանէ ի Սպանիա 17) : Եւ այսպէս ի յայտ գայ՝ թէ եպիսկոպոսունք մեր և աստուածաբանք և քարոզիչք առհասարակ ո՞րքան պարզամիտ հաւատացեալք ոմանք են, զի և ոչ զայն գիտէին՝ թէ զի՛նչ իցէ իսկական վարդապետութիւն Եկեղեցւոյ. քանզի զայդ գիտէին միայն այնզօրիկ ի միանձանց, այն Բուստրուս-Բիստուս \* ) և մանաւանդ եղութիւնք, յորոց կազմի համախումբս ատեանն \*\* ) հռովմեական, և որք յետ ամաց

(\*) «Մծնօնեօտն», Էրուսեան պարոտանան է եպիսկոպոսոց, և ի Հուստրուս Էրեք Էրեքս Էրեքս Էրեքս Էրեքս Էրեքս Էրեքս :

(\*\*) Լատին յայնիս «Բուստրուս-Բիստուս» :

բազմաց այն առաջին անգամ՝ զկնի ընդհանրական թղթոյն Գրիգորի ԺՁ՝ դարձեալ բացին զաղբուրս դիտութեան զխրցեալսն մեծաւ նախանձայուզութեամբ։ Գործովն այնուիկ ի վեր երևեցաւ այս ինչ նշանաւոր, զի ազգք և ժողովուրդք կաթուղիք դաւանութեամբ ի վաղուց հետէ դարձան և եղևն այլադաւանք, և զի նորա որք պարտական էին զզուշութեամբ պահպանել զյատակութիւն հաւատոյ՝ առաւել ևս ձեռնտու եղևն զօրանալոյ մոլորութեանց, և կամ լուռ և եթ կացին, և երդուան զհաւատարմութիւն առ այնպիսի սահմանադրութիւնս՝ որք հիմնեալ են ի վերայ խեղաթիւր սկզբանց՝ այժմ՝ առաւելապէս ծանրացելոց նզովիւք Հռովմայ։

## 2.

Դատապարտութիւն արդի քաղաքականութեան եւ սահմանադրական կառավարութեանց։ — Տէրութիւնն եւ Էկեղեցի։ — Սահմանադրութիւնք Անգլիոյ, Գաղղիոյ, Բելգիոյ, Պաւարիոյ։ — Իննովկենտիոս Ժ եւ Ղեստֆալեանն դաշնադրութիւն։ — Տարբերութիւն կարծեաց կաթուղիկացն։ — Ակնկալութիւնք Էզուիմաց ի ժողովոյն։

Ե. Բովանդակութիւնն, որպէս յայտնի է, աւարտի յայտարարութեամբն այսուիկ՝ թէ «Նզովելի մոլորութեան դտանին ամենեքեան նորա որք համարին՝ թէ կարելի և ցանկալի է հաշտել պապին ընդ նորումս քաղաքակրթութեան», 18)։

Այժմու սահմանադրութիւնք ամենայն տէրութեանց Եւրոպայ (բաց ի Ռուսիոյ և ի պապական նահանգէն) ոչ այլ ինչ են՝ եթէ՛ ոչ արգասիք քաղաքակրթութեան նորոյ ժամանակիս։ Ազատութիւն դաւանութեանց և աստուածալաշտութեան, ազատութիւն բանի, հաւասարութիւն առաջի օրինաց, հաւասարութիւն քաղաքական իրաւանց և պարտուց՝ հանդերձ իրաւամբ ինքնին կարգադրելոյ զտուրս հարկաց, հան-

դերձ տեղական ինքնազուլու կառավարութեամբ և զործակցութեամբ ժողովրդեան յօրէնսգրութեան, — այս ամենայն զաղափարք և սկզբունք զօրացեալք և տարածեալք յամենայն սահմանադրութիւնս՝ այնպէս կապակցեալ են ընդ միմեանս, այնպէս բղիսն յիրերաց և զմիմիանց կալեալ ունին, զի յորժամ մին ի պահանջմանց այտի զկատարումն առնուցու, անպատճառ զՏեա իւր ձգէ և զայլոցն զկատարումն, Իսկ Եկեղեցին ի բազմադարեան ամաց Տեառէ, մանաւանդ թէ անդատին ի ժամանակէ Իստորեան կոնդակագրոցն, սկսաւ անխոտոր ընթացիւք ունել զճանապարհ դէմ ընդդէմ այսմ հակառակ, Եկեղեցական կառավարութիւնն Տեա զՏեառէ դարձաւ ի բացարձակ բրտնաւորութիւն անսահման և սակաւեպետական. իսկ զրազրական կամ զիւսական կեդրոնականութիւնն զամ քան զզամ աճեցեալ և ամենայն ինչ խառնեալ՝ սպան բոլորովին, և կամ եթող միայն յանշան կերպարանս զբովանդակ կենսականութիւն նախնի Եկեղեցւոյ՝ հանդերձ նորին անդամոցն ներդաշնակ կապակցութեամբ և ժողովրդեան ինքնազուլու կառավարութեամբ:

Եւ այսպէս Եկեղեցին և տէրութիւնն զտանին ընդ միմեանս յայնպիսում յարարելութեան՝ որպիսի են երկու զետք զուգահեռականք իրերաց, յորոց մին ընթանայ ի հիւսիս, և միւսն ի հարաւ, այսինքն քաղաքական պայմանք այժմու տէրութեանց և բերմունք ժողովրդոց՝ որք անդադար ձգտին յինքնազուլու կառավարութիւն, և ի չափաւորել զինքնահասձոյ կառավարութիւնս թաղաւորաց, զտանին ի դէմ ընդդէմ կառավարութեան ընդ հոռոմէականութեան, որոյ բուն արմատն և զիսաւոր կէտ նպատակին է հաստատել և զօրացուցանել յԵկեղեցւոյ զբացարձակ ինքնակալութիւն: Սակայն տէրութիւնն և Եկեղեցին գրեթէ անբաժանելի եղանակաւ աճեցեալ են ընդ միմեանս. միշտ ընդ միմեանս ներգործեն յամենայնի. ուստի և քաղաքական տեսութիւնք և կարգադրութիւնք ժողովրդեան յընթացս ժամանակաց անպատճառ ունին ազդեցութիւն մեծ ի վերայ եկեղեցական կառավարութեան, և բարեկարգեն և ս զնոյն:

Այս իսկ է պատճառ անհաշտ ատելութեանն այնորիկ՝ որով վառեալ է ի խորոց սրտի ամենայն այր ճշմարտապէս անբռնելուհան ընդդէմ ազատական կարգադրութեանց, ևս և ընդդէմ որոյ և իցէ սահմանադրական կառավարութեան առ հասարակ: Ոչ բազում ժամանակ է զի Չեֆէլեմյն յոյժ բացառայտ բանիւք նկարագրէր զայս յասկն. «Ոչ ևս են յաշխարհի քրիստոնեայ տէրութիւնք. հասարակութիւնն վերստին զարձեալ է ի հեթանոսութիւն, և նման է մարմնոյ ի հողոյ կազմելոյ՝ որ սպասէ միայն շնչմանն Աստուծոյ: Բայց առ ի Աստուծոյ չիք ինչ անհնարին. նա ըստ մարգարեական ձայնին Եզեկիէլի կենդանացուցանէ նաև զոսկերս ցամաքեալս: Ցամաքեալ ոսկերքն այնորիկ են քաղաքական իշխանութիւնք, խորհրդարանք, ընտրողական քուէից սափոր, քաղաքական պատկք, քաղաքական կառավարութիւնք: Իսկ համալսարանքն ոսկերք են ոչ միայն ցամաքեալք, այլ և նիսեալք, և սաստիկ է յոյժ զարշահոտութիւնն բուրեալ ի ժանտ և յապականիչ վարդապետութեանց նոցին: Եւ սակայն զոսկերսն զայնոսիկ ևս մարթ էր կոչել ի կենդանութիւն՝ եթէ լսէին զբանն Աստուծոյ, այսինքն ընդունէին զաստուածային, օրէնս զորս քարոզէ նոցա անսխալ վարդապետն գերագոյն, այն իսկ է պապն» (49):

Յուշ լիցի մեզ՝ զի պատուական նահապետն և նախածնող եւրոպական սահմանադրութեանց՝ անզղիականն ասեմ՝ Քարտեֆտ \*), այսինքն սահմանադրութիւնն, սոյնպէս հանդիպեցաւ

(\*) Յռնելու թառս «Գարտե» (Քաղաքեան «Գարտ») վարէ աւերակոյցիս նշանակութեամբ թառիս «սահմանադրութեան», կամ «Գարտե» արեւմտեան, ընդ հպարտաւոյ իւրոց: Կրկնն են երեւելիսն է Գարտես Եւրոպացոց. «Մեծ Գարտեան», Անգլիոյ, հին անգլիական ազատութեանց, որտեալ յարտայնն նոցա է Յովհաննէ Անհոլմէտ յամին 1215, և «Գարտեան սահմանադրութեան», Գաղղիոյ, զար Եւրոպայի ժողովոյ ժողովոյ 1814, և հասարակաց փոփոխութեամբ էն լոստրոլիոյ ժողովոյ յամին 1850:

ծանրացասումն բարկութեան պապին Իննովկենտիոսի Գ, որ յոյժ բարւոք իմանայր զնշանակութիւն և զգորութիւն այնր սահմանադրութեան: Քանզի տեսանէր ի նմին արհամարհութիւն առ ավթոն առաքելական. վասն այնորիկ հրատարակեաց՝ թէ յոչինչ զրելի է այն, և հնարողքն նորա Պարոնքն Ընդդիացւոց՝ փակեալ են ընդ եկեղեցական նզովիւք 20): Ապա ուրեմն թող իրաւունս տամք Պիոսի Թ և խորհրդականաց նորա եզուիթաց՝ զիսաւոր յօրինողաց Բովանդակութեան և Ընդհանրականին, զի նորա կատարեցին յամին 1864 զայն միայն՝ զոր մարգարէական հայեցուածն Իննովկենտիոսի օգտակար համարէր արդէն Եկեղեցւոյ յամին 1215: Եւ սակայն մեծն այն Քարտէս, որ յայնժամ տակաւին ընծիւղ կամ բողբոջ իմն էր փախուկ և տկար, ոչինչ միտ զնելով նզովեցն երկող ի վերայ նորա ի հզօրագունէն ի պապս, աճեաց և եղև ծառ սաղարթագեղ, և տարածանէ զստուեր իւր ի վերայ կիսոյ մասին աշխարհիս, և օրհնաբանի բարգաւաճեալ որդւովքն և թոռամբք. և ահա վասն այսորիկ իսկ և կրտսերագոյնն ի սերնդոց նորին, աւստրիականն ասեմ՝ սահմանադրութիւն, զոր անհամեմատարար իբրեւ է յովորդս Իննովկենտիոսի \*) զեւ ևս ի 22 Յունիսի 1868 ամի կոչէր «անպարտելի քարշառիւն», կարող է հանգչել և մտիթարեալ որդով բողբոք ունել յընդհանրական դատաստան տիեզերական պատմութեան: Եւ ունի նա առ այս իրաւունս յոյժ՝ մանաւանդ վասն այնորիկ՝ զի քանի մի ամօք յառաջ քան զայն նոյն ինքն Պիոս Թ ոչ ամօթ համարեցաւ հարցանել ի Լոնտոն՝ թէ զո՞յ արդեօք յայնմ ազատական աշխարհի օրէնք ինչ և վասն իւրոյ անբոյթ ապաստանի:

Ոչ ինչ նուազ թշնամութեամբ վարեցաւ Լոտով՝ և ընդ Գաղղիացւոցն սահմանադրութեան: Զի Լեոն ԺԲ առաքեաց յամին 1824 թուղթ առ Լուդովիկոս ԺԷ, յորում ցուցա-

(\*) Իւր «Պիոս Թ»:

նէր նմա զվնասակարութիւն սահմանադրութեանն Գաղղիոյ, և մեծաւ փութով խրատ տայր ի բաց թողուլ ի հրովարտակէ անտի զայնտակ յողուածս որք կարի իմն ազատականք երեւէին 24)։ Եորժամ Կարոլոս Ժ փորձ փորձեաց հրովարտական Յուլիսի (1850) փոխել զսահմանադրութիւնն զայն, ամենեքեան ասնն թէ պատճառ իրացն էին եկեղեցական խորհրդականք նորա, և մանաւանդ խոստովանաչայր նորին Կարղինայն Լաթիլ . և այն եղև պատճառք կործանելոյ տոհմին Պուրպոնեանց։ Այն ինչ զեռ ևս աւարտեալ էր յօրինուած սահմանադրութեանն Բելգիոյ յամին 1852, պապն Գրիգոր ԺԶ հրատարակեաց զՏոչակաւոր ընդհանրականն իւր, զոր պժժ ի գործ եղ և հաստատեաց Պիոս Թ, յորում ազատութիւնն խրղձի պարսաւեցաւ իբրև զանմիտ յիմարութիւն, ազատութիւնն տպագրութեան՝ իբրև զժանտախտ կատաղութեան՝ զօրոյ ոչ է հնար բանիւք բացատրել զգարչութիւն, Առաջինն և զլիաւոր ի հետեւանս այնր կոնդակի այս եղև, ազատականքն Բելգիոյ անհաշտ թշնամութեամբ վառեցան ընդդէմ կաթողիկեաց, Բառասուն ամբ են յորմէ հետէ երկրքին կուսակցութիւնքն մարտ եղեալ կուռին ընդ միմեանս. և բաժանումն որ ի նոսա՝ աճէ և մեծանայ օր ըստ օրէ, և առելութիւնն զամ քան ըզգամ սաստկանայ. և քանզի ~~անբարեւոյնն~~ անհնարին գործէ անդանօր զոր և իցէ համաձայնութիւն, վասն այնորիկ հակառակ կուսակցութիւն քաղաքական զօրանայ յոյժ յոյժ, և ձեանայ բանակ մի կանոնաւոր ի պատերազմել ընդդէմ որոյ դրական կրօնի առ հասարակ։ Կաթողիկէն Բելգիոյ ոչ երբէք կարացին մեղմել զամբաստանութիւնն որ լինի զնոցանէ, թէ նոքա պարտին անպատճառ թշնամի լինել սահմանադրութեան, որովհետև պապն հերքեաց զայն. ուստի ամենայն բանք նոցա՝ որովք պնդեն թէ ինքեանք մեծաւ հաւատարմութեամբ կատարողք են օրինաց և սահմանադրութեան՝ ոչ այլ ինչ են եթէ ոչ խարէութիւնք։ Աստի յայտմանէ զհետ զայ՝ զի թէպէտև ժողովուրդն Բելգիոյ կրօնասէր է յոյժ, սակայն կուսակցութիւնն ազատականաց և թշնամեաց հաւատոյ

որ քան զոր յառաջէ, մինչդեռ կաթողիկէքն երկպառակեալք ի պատճառս զանազանութեան անդրալեւնականաց և աղատամտաց, այսինքն այնպիսի կաթողիկաց որք հաւատարիմք են սահմանադրութեան, — ոչ ևս ունի կարողութիւն ձեացուցանելոյ երկարատե խորհրդարան մի ոստիկանաց տիրութեան, Փորձն Ժողովոյ 1863 ամի ի Մալին (Մէքիլն) քաղաքի ոչ յաջողեցաւ, քանզի նախագիծն նորին յաղագս հաշտեցուցանելոյ զԵկեղեցի ընդ քաղաքական ազատութեան, զոր այնքան պիտի ճախոսութեամբ յօրինեալ էր Մոնթալանպէն \*), զմահու վրձիւն ընկալաւ ի Բալթիկայի մէջնէ պապին :

Ի Միացեալ Նահանգս Հիւսիսային Ամերիկոյ կաթողիկէքն ոչ կազմեն զկուսակցութիւն ինչ, սակայն և անդ, որպէս հաւաստի արար մեզ մի ոմն յամերիկացի եպիսկոպոսաց, զրութիւն նոցա ցաւալի է յոյժ՝ ըստ քաղաքական ազդեցութեան, կամ թէ յորժամ բանք լինիցին զթոյլ տալոյ ումէք անուղ զպաշտօն ինչ : Քանզի բողոքականքն ասեն անդադար՝ թէ նոքա ի կանոն գործողութեանց իւրեանց ունին միշտ զխրատս պապին, ուստի և չկարեն պարզմտութեամբ ընդունել զազատութիւն հասարակաց և զպարտականութիւնս հիմնեալս ի վերայ նորին. ընդ հակառակն՝ ունին միշտ զթաքուն խորհուրդս ջանալոյ կործանել զսահմանադրութիւն՝ եթէ ունիցին առ այն զօրութիւն բաւական :

Պապական կառավարութիւնն ի գործ եղ զամենայն զՆարքս իւր՝ զի մի թողոքէ Աւստրիոյ և տէրութեանց Իտալիոյ ընդունել յիւրեանս զազատական խորհրդարանս, և զկարգադրու-

(\*) Կոման Մոնթալանպէն Կաթողիկէք և պերճախօս այր՝ Վալթիկայի մէջնէ, անուանի իւրովն յոյժքէն Եւանգելիստէ Վալթիկայի մէջնէ նախապաշարմանց միջնադարեան ժամանակաց, ի վերջին սուստ ինչոց իւրոց բայնախնայ էր ընդ որպարայտան հնարաբար թախտեանս Եւանգելիստէն, և ընդ անյնադար լինելու այժմոս պապին ի յիւս նոցա :

Թիւնս ժողովրդական Վարդադրութեան : Վաւերական գրուածք որք ապացուցանին զայս՝ ահա տպագրեալք են և կան առաջի աչաց մերոց : Հռովմէական պալատն ծանոյց, զի նա ոչ կարե հանդուրժել ձեանալոյ շուրջ զիւրև խորհրդարանաց՝ որչափ և չափաւորեալ իցեն այնոքիկ, իբր զի ի շար օրինակ են այլոց 22) : Բարեմիտն և ընդհանրապէս խոհական՝ մեծ դուքսն Թոսկանայի Լէոփոլտ արար ընդդէմ կամաց իւրոց, և հարկադրութեամբ հռովմայ, զհրաման փոխելոյ զայն յօգուած սահմանադրութեանն, յորում տուեալ լինէր ամենայն Թոսկանացոց՝ առանց խտրելոյ զդաւանութիւնսնոցին՝ հաւասարութիւն առջի օրինաց . քանզի պապն ազդ արար և ասէ . «Այդ յօգուած չկարէ հրատարակիլ ուղղութեամբ խղճի մտաց», (Թիւս 25) : Նոյին հարկադրութեամբ բարձաւ յամին 1852 ի Հրեայ բժշկաց Թոսկանայի շնորհեալն նոյա ի վաղնջուց իրաւունք ի գործ դնելոյ զարուեստ իւրեանց : Չայսպիսի դէպս իրաց առաջի աչաց ունելով, ո՞վ դք կարող իցէ տակաին զարմանալ ընդ այժմու ատելութիւնն զոր ունին Իտալացիք ընդդէմ պապական իշխանութեան, և ո՞ կարող իցէ երկարատև համարել զխաղաղական յարաբերութիւնսն որ ի մէջ Իտալիոյ և այնպիսոյ եկեղեցական իշխանութեան :

Նաև սահմանադրութիւնն Պաւարիոյ ի պատճառս շնորհելոյն զհաւասարութիւն ըստ իրաւանց՝ ամենայն դաւանութեանց, և ի պատճառս հաւասարութեան մարդկան որոյ և իցէ վիճակի առաջի օրինաց, — անհաճոյ դտաւ յաչս Հռովմայ . և զայս յայտ առնեն յանդիմանութիւնքն զորս արար հռովմէական պալատն կառավարութեանն Պաւարիոյ անդէն իսկ յամին 1848 24) : Իսկ և նոր սահմանադրութիւնն Աւստրիոյ արժանացաւ ի Վատիկանէ բանադրանաց և նզովից . քանզի պապն յատենախօսութեան իւրում ի 22 յունիսի 1868 ամի ասէր . «Չօրութեամբ մերումն առաքելական իշխանութեան հերքելիք և զատապարտելիք զնոր օրէնս աւստրիականս առ հասարակ, և առանձին զայն ամենայն՝ որ թէ ի նոսին և թէ յայլ կարգադրութիւնս աւստրիական կառավարութեան կամ պաշտօ-

,, նարանս նորին սահմանեալ և կարգադրեալ իցէ հակառակ  
 ,, իրաւանց Եկեղեցւոյ . զօրութեամբ նոյն իշխանութեան յայտ  
 ,, առնեմք՝ զի օրէնքն այնորիկ հանդերձ ամենայն հետեւու-  
 ,, թեամբք իւրեանց ոչ ունին բնաւ և ոչ ունիցին երբէք զոյժ  
 ,, և զազդեցութիւն : Իսկ զՏեղինակս նոցին, մանաւանդ զյան-  
 ,, դգնեալն առաջարկել զօրէնն զայնոսիկ կամ զովել և ի  
 ,, կատարումն ածել, զգուշացուցանեմք, և երգմնեցուցանեմք  
 ,, զնոսա զմտաւ ածել զայնոսիկ հոգևորական պատիժս պա-  
 ,, տուհասի՝ ընդ որովք անկանին նովին իսկ գործով՝ զօրու-  
 ,, թեամբ առաքելական սահմանաց և կանոնաց տիեզերական  
 ,, Թողովոց՝ ամենեքեան որք մեղանշնն ընդդէմ իրաւանց Եկե-  
 ,, ղեցւոյ :

Եւ ապա դնին նզովք և բանադրանք ի վերայ օրէնսդրա-  
 կան և պաշտօնական խմբից Աւստրիոյ, որոց զուխ է կայսրն  
 Փրանկիսկոս Յովսէփ . և Աւստրիացիքն պարտին շնորհակալ  
 ևս լինել՝ զի պապն ոչ վարեցաւ ընդ նոսա ըստ նախնի եղա-  
 նակին, որ առ վերջին նուազ ի գործ եղաւ ի վերայ Վենետ-  
 կոյ, այսինքն զի ոչ արկան ընդ արգելանօք ամենայն կալուածք  
 արքունականք :

Պիոս Թ՝ վասն այնորիկ դատապարտ առնէ զսահմանադրու-  
 թիւն աւստրիական, զի ի նմա տուեալ լինի կաթողիկոսն հը-  
 րաման թաղելոյ ի գերեզմանատունս իւրեանց զՏերտոսիկոսս՝ ե-  
 թէ չունիցին սոքա գերեզմանատունս սեպհականս, և զարշիւի  
 անուանէ զսահմանադրութիւնն վասն այնորիկ՝ զի թոյլ տայ  
 այն բողոքականաց և Հրէից կանգնել ուսումնարանս և այլ տե-  
 ղնս դաստիարակութեան : Թուի թէ բողոքովին մոռացեալ է  
 զայս ինչ՝ զի յայլ կողմանս աշխարհի ի վաղուց հետէ կային  
 նոյնպիսի օրէնք, ընդդէմ որոց ի կողմանէ Հռովմայ ոչ եղև  
 ինչ հակառակութիւն :

Եթէ կամքն Չէկէլեայի առնուցուն զկատարումն, եպիսկո-  
 պոսք հրապարակաւ դատապարտեսցեն զսահմանադրութիւնս  
 աշխարհացն՝ յորս բնակեն, ևս և զօրէնս զորս երգուեալ են  
 պահել զգուշութեամբ . ապա ուրեմն պարտին աշխատ լինել

յամենայն զօրութենէ՝ զի փոխեսցին օրէնքն այնորիկ, և սահմանադրութիւնքն ի բաց մերժեսցին: Ի հարկէ ոչ այսպիսի յայտնի բանիւք ասացնն զայս. ընդ հակառակն՝ Զէ՛լէ՛ւիւնն և համախոհք նորին զայն ինչ ասացնն՝ զոր ի 1864 ամէն և այսր բազում անգամ ասացին, այսինքն թէ՛ Եկեղեցին յայժմու ժամանակիս պարտի խոհական խնայութեամբ վարիլ. և թէպէտ իրաւամբ պահանջէ նա զհաշիւ ի կարգադրութեանց եղելոց և ի պատահմանց ի զլուխ ելելոց, սակայն ոչ բնաւ հրաժարելով ի սկզբանց իւրոց՝ արտաքուստ միայն հպատակի կարգադրութեանցն այնոցիկ և պատահմանց, և ի ներքուստ պախարակելով պախարակէ զնոսին: Իսկ եպիսկոպոսունք խոհեմութեամբ շարժին՝ համբերելով այսմ իրրև փոքրագոյն չարի, մինչև յայտնի ինչ վտարանջութիւն արկցէ զամենեսեան ի չարագոյն շփոթութիւնս և յառակազոյն վնաս Եկեղեցւոյ: Այլ այս հպատակութիւն նոցա, կամ լու և ս անկ՝ լու թիւն և թողտուութիւն՝ զի ամենայն ինչ գնացէ այնպէս որպէս և գնայն, առ ժամանակիս իմն է, և այսբայն միայն ունի նշանակութիւն, զի զփոքրագոյն չարն նախապատիւ համարի քան զչարն մեծագոյն և քան զհակառակութիւն անյոյս:

Իսկ յորժամ հանգամանք իրաց փոխեսցին, և պատերազմին ընդդէմ ազատական օրինաց տայցէ զյոյս յաջողութեան, իսկոյն փոխեսցի նաև եղանակ գնացից եպիսկոպոսացն ընդ եկեղեցականաց, որք գտանին ընդ ձեռամբ նոցա: Յայնժամ և երգումն զոր ամենայն որ երգուեալ է վասն պահպանութեան սահմանադրութեան ընդհանրապէս, և օրինացն կարգելոց ի նմա մասնաւորապէս, կորուսցէ՝ ըստ անկոյ հոռովեական պալատանն և Եզուիթաց՝ զպարտաւորիչ զօրութիւն իւր: Այժմ՝ հռչակեալն բան առաքելոյն թէ՛ «Պարտ է մանաւանդ Աստուծոյ հնազանդել՝ քան մարդկան», ըստ մեկնելոյ Եզուիթացն նշանակէ, Պապին իրրև փոխանորդի Աստուծոյ ի վերայ երկրի և անխալ թարգմանչի աստուածային կամաց՝ պարտ է առաւել հնազանդել՝ քան թէ որում և իցէ աշխարհական իշխանութեան և արքունական օրինաց: Ըստ այսմ՝ Բննովկեն-

տիտս Ժ Ի կոնդակին իւրում որ Ի 20 նոյեմբերի 1648 ամի, որոյ սկիզբն է «նախանձ տանն Տեառն», Հրատարակեաց՝ Թէ Հաշտութիւնն Վեաթֆալիոյ «Ոչինչ է և աննշան ամենեւին, անխաւեր, դատապարտեալ, և զուրկ յամենայն ազդեցութենէ յանցեալն, Ի ներկայս և Ի Հանդերձեալն», և յայտնազոյնս յաւերու ասել՝ Թէ ոչ որ՝ նաև յերզուկոց անտի պահպանել Հաւատարմութեամբ զպայմանս Հաշտութեանն այնորիկ՝ ոչ է պարտական կատարել զեղբակացութիւնս նորին և զկարգազրութիւնս 25) :

Առաւելագէս այնորիկ Ի յօդուածոց Վեաթֆալեան Հաշտութեանն լցին զսիրտ պապին, որպէս ասէ նա, անհարին ցաւով, որովք առեալ ընէր բողոքականացն Հրաման ազատութեն կատարելոյ զկարգս աստուածաշտութեան իւրեանց, և Հասանելոյ յօր և իցէ իշխանութիւնս : Այն դաշնագրութիւն եկաց մնաց այնպէս իբրև անխաւեր. քանզի նաև յամին 1789 պապն Պիոս Զ յայտ արար Ի Թղթին իւրում առ եպիսկոպոսունս Պերմանիոյ՝ Թէ «ԶՀաշտութիւնն Վեաթֆալիոյ ոչ երբէք Հաւանեալ ընկալաւ Եկեղեցի» :

Այլ և յամին 1805 Պիոս Ե, Ի Թղթին առ նուիրակն իւր որ Ի Վեննա Հաստատէ զպատիժսն սահմանեալս յՆնոպկենտիոսէ Պ. Ի վերայ Հերետիկոսաց՝ դրամամբ ստացուածոց նոցին յարբունիս, և ազատ առնէ յամենայն պարտականութեանց և Ի Հաւատարիմ՝ Հպատակութենէ զայնոսիկ որք ծառայեն կամ վարեն պաշտամունս ինչ ընդ իշխանութեամբ Հերետիկոս թաղաւորաց. միայն ընդ այս ցաւ է նմա՝ զի Հասեալ եմք յայսպիսի ողբալի ժամանակս, և զի Հարսնն Քրիստոսի անկեալ է յայն ատիժան անարգութեան՝ զի անկարանայ ածել Ի կատարումն զսփոքուն որքունն կարգաբարձունս, այլ և ոչ կարէ Հարկ Համարել յիշատակել զնոսին. վասն որոյ և ստիպեալ է սանձահարել զիրաւացի խստութիւն իւր ընդդէմ Թշնամեաց Հաւատոյ 26) :

Եւ այսպէս նորիւնդ և որքունն սահմանոց այդքիկ մնացին առ ժամանակ մի անդործադրելիք, Թէպէտ և ըստ նախա-

զծին զոր հրատարակէ այժմ՝ ընկերութիւնն Եզուիթաց յառաջիկայ Թողովի ի ձեռն անխաղութեան պապին ամբարձցին և նորա յատիճան անդրժեկի վարդապետութեանց հաւատոյ : Ապա ուրեմն լաւագունից պարտէ սպասել ժամանակաց, որպէս զի վերստին յարիցէ Եկեղեցի (իմա պալատն հռովմէական) ի հողոյ անտի անարգութեան՝ յոր իջուցին զնա, և վերասցի դարձեալ յաժժոռ իւրոյ համաշխարհական տիրապետութեանն :

Յայսմ մասին հայեցուածք ընիկ կաթողիկաց անգամ զանազանին ի միմեանց . քանզի նորա որք առեալ իցեն զուսումն և զկրթութիւն, և ունիցին կարողութիւն ճանաչելոյ փոքր ի շատէ զհարկ և զընթացս մերոյ ժամանակիս և քաղաքակիրթ աղլաց, յորոց ի ձեռս է ներկայս և ապագայն, նորա ոչ բնախարեն զանձինս՝ թէ կարելի է կամ նաև մերձ է ժամանակն հաղարամեայ թագաւորութեան պապական իշխանութեան : Սմին իրի բողոքովն յուսահատ են նորա ի մարդկայինս աղղէ, որ կուրացեալ գողով՝ արհամարհէ զմի միայն խաբխան փրկութեան իւրոյ : Նորա համարին զժամանակս մեր վերջալոյս գալտական թագաւորութեան նեոխն, ժամանակ տագնապի և պատրաստութեանց՝ յետ որոց յայտնեցի նեոն մարմնացեալ, կատարեցէ յամս քանի մի զգործ պաշտաման իւրոյ, և ապա եկեցէ կատարած աշխարհիս և դատաստանն ահագին :

Այս հայեցուած կամ կարծիք (որոյ գլխաւոր ներկայացուցիչն ի Պաւարիա էր գիտնական ոմն վախճանեալ ի հերուն՝ այր զօրաւոր ազգեցութեամբ յեկեղեցական խնդիրս, և յորմէ էանց կարծիքս այս ի հովուական թուղթն Աէյլախ կարդինալին) հիմնեալ է ի վերայ առաջիկայ խորհրդածութեանց : Արովհետև պատմութիւնն ոչ ընթանայ ընդ շաւիղն՝ զոր մեք ցուցանեմք նմին, ապա ուրեմն չէ արժան պատմութեան առհասարակ ունել բնաւ զգոյութիւն. կամ թէ, աշխարհս պարտի վերջանալ, որովհետև դրութիւն և կարծիք մեր ոչ կարեն անուղ զկատարումն : Ար է ասել, թէ որովհետև աղբիւր իմաստութեան իւրեանց սպառեալ է, համարին նորա թէ սպառեալ իցէ և իմաստութիւն նախախնամութեանն Աստուծոյ :

Արք տիրացեալք այսմ հայեցուածոյ համարին՝ թէ աւելորդ իմն է կոչումն եկեղեցական Թողոլոյ մերձ ի կատարած աշխարհի. կամ թէ կոչումն այնպիսի Թողոլոյ է վերջին իմն ազդարարութիւն բարկութեան տուեալ առ ազգս մարդկան ի կարեկից մտաց :

Իսկ այլք ի ստոյգ կամօղիկաց, մանաւանդ Եզուիթքն, համարին ընդ հակառակն՝ թէ Թողոլն այն պարտի լինել վերջին աստղն փրկութեան, և ակնկալեալ սպասեն՝ թէ ընդ հրատարակել անսխալութեան պապին և սահմանաց ԲՈՎԱՆԳԱՆՆ, ազգ մարդկան իսկոյն խոնարհեցուցէ առաջի նոցա զգոռոզութիւն պարանոցի իւրոյ, ի հօւր մամանեալ տոչորեցէ զայն ամենայն զոր պաշտէրն մինչև ցայժմ, և պաշտեսցէ զայն ամենայն զոր յառաջն հրոյ ճարակ մատներ :

Եպիսկոպոսն Փրանկիսկոս Սպեղացի բացայայտ բանիւք ցուցանէ զբժգոհութիւն իւր ընդ այնպիսի գրուածս՝ որք խորհրդածեն զքաղաքական խնդրոց, զորօրինակ զանմիջական իշխանութենէ պապին ի վերայ թաղաւորաց. և ունէր նա առ այս լիուլի իրաւունս. քանզի ի ժամանակի յորում Եկեղեցին ունի արդէն շատ իսկ թշնամիս արտաքինս՝ ոչ է հարկ և նորանորս յաճախել 27) : Բայց բանք Փրանկիսկոսի Սպեղացւոյ ոչ ունին զյարգ և զգոռութիւն յաչս Եզուիթաց :

Մարթ է գուշակել, — իբր զի ըստ առածին Գաղղիացւոց «Եխորժակն ուտելով զայ», — թէ այդ ընկերութիւն Եզուիթաց յետ ժամանակաց առաջարկեսցէ աշխարհի ի հարուստ գանձարանէ աւանդութեանց իւրոց և ի սիրելի վարդապետութեանց աստուածարանութեանցն իւրոց այլ ևս թանկագին գանձքս բազումս, զի և այնորիկ դասեսցին ընդ մասունս հաւատոյ : — Այսպիսի է, օրինակ իմն, վարդապետութիւնն յաղապստանն ի բարոյական խնդիրս, որ ոչ ինչ նուազ քան զԲՈՎԱՆԳԱՆՆ և քան զանսխալութիւնն պապական սիրելի է սրտին Եզուիթաց, և արդեամբք ցուցեալ է նոցա մեծամեծ և զարմանալի ծառայութիւնս : Աւ յիրաւի որպիսի հրաշարիտ ազոյն արդարացուցումն լինէր բազմապարսու կար-

զին Եզուիժաց՝ եթէ Թողովն առ խոնարհութեան իւրում և հնազանդութեան զրոշմէր և ի վերայ այնր վարդապետութեան զկնիք մասին հաւատոյ :

Եզուիժքն սպասնն ընդունել ի Թողովոյ անտի և այլ ևս կարևոր ծառայութիւնս, մանաւանդ զայս՝ զի կարգն իւրեանց հրատարակեցի իրրև միմիայն յարմարաւոր առնելոյ յիւր վերայ զկառավարութիւն վարժարանաց և զբարձրագոյն ուսումնարանաց, և զի եպիսկոպոսունք պարտական լինցին և խոստացին իսկոյն աւանդել ի ձեռս հարց ընկերութեանն զգլխոցս և զուսումնարանս. ի պատճառս այսր ամենայնի ցանկալի էր արդեօք յոյժ յոյժ, այլ և անհրաժեշտ հարկաւ կարևոր, զի և բարոյական վարդապետութիւն կարգին Եզուիժաց, որ ցանկ եղևալ է ի վերայ անուան նոցա իրրև զվէրս իմն խղիւայթեալս, բժշկեցի սահմանադրութեամբ Թողովոյն :

## ՄՆԱՆ ԵՐԿՐՈՐԳ

ԱՆՍԽԱԼՈՒԹԻՒՆ ՊԱՊԻՆ :

Ա.

Անդրապետնական վարդապետութիւն : — Անտանան  
միապետութիւն պապից : — Հոսովմայեցիքն միայն ժո-  
ղովուրդ Աստուծոյ : — Հոսովմ միայն պատգամատե-  
ղի պապականաց :

Հիմնական գիտումն կարծեսց ընդհանրապէս կամ պապ-  
էան կաթողիկոսաց այս է, զի նորա ընդ լինել բանից զՆկեղեցւոյ,  
զիրաւանց նորին և զիշխանութենէ, Նկեղեցի ասկով իմանան  
միշտ զպապն, և միայն զպապն : «Յորժամ մէք զՆկեղեցւոյ  
խօսիմք, զպապն իմանամք», ասաց եզուէիմն Արէցեռ, մի ի  
գիտնագոյն աստուածաբանից Գերմանիոյ ի սկզբան ժէ դա-  
րուն և վարժապետ Ինկոլշթատ քաղաքի : Ըստ ասկոյ կար-  
գինալին Վայնտանոսի՝ գերագոյն աստուածաբանին հոռովմեա-  
կան պալատան, Նկեղեցին ըստ ինքեան առեալ՝ իրրև հասա-  
րակութիւն հաւատացեկոց, կղերին և եպիսկոպոսաց, է լոկ մի-  
այն շախէն պապին : Ոչ Նկեղեցին ողջոյն և ոչ մասունք նո-  
րին (այսինքն են ազգային Նկեղեցիք) ոչ կարեն կամել և ոչ  
գոմել կամ պարսաւել զայն ինչ՝ որ մինչև ց յովա մի չիցէ  
համաձայն մտաց և ցանկութեանց պապին : Ի միումն ի յօդ-  
ուածոց Ձէվէլէնայէ՝ ընդ այսու մակագրաւս, «Պապն հայր հա-  
ւատացեկոց», ասի : «Ոչ է բաւական զի ժողովուրդն գիտասցէ՝  
,, թէ պապն է զբոլոս Նկեղեցւոյ և եպիսկոպոսաց . պարտինան և  
,, զայս իմանալ, զի իւր իսկ յատուկ հաւատն, իւր իսկ սեպ-

11 Հական կեանքն կրօնական՝ ի պայն Հաստատեալ կան, և  
 11 զի ի նմա բովանդակի կայն որ միաւորէ զուղղափառս, զօ-  
 11 բութիւնն որ ամրապնդէ զնոսա, առաջնորդութիւնն որ ուղ-  
 11 զէ զնոսա, զի նա է բաշխող Հոգեւորական շնորհաց, նա է  
 11 տուիչ ողորմութեանց խոստացելոց Եկեղեցւոյ, նա պահպա-  
 11 նիչ արգարութեան, նա պաշտպան տառապելոց, Եւ այս ևս  
 11 չէ բաւական. Հարկ է զի Հերքեսցին ամբաստանութիւնքն  
 11 որք լինին զպայէն յանաստուածից և ի բողոքականաց, և  
 11 ցուցցի՝ թէ ճիշտն բարերար զտան պապական իշխանու-  
 11 թիւնն և պապք ընդ ամենայն ժամանակա առ քաղաքական  
 11 ընկերութիւնս, առ ժողովուրդս Բտալիոյ, առ ընտանիս և  
 11 առ սոսկականս ևս, և այն նաև յաշխարհական օգու-  
 11 տքս, 28)։

Երանելին Հերոնիմոս վաղու ևս կշտամբէր զՊեղագիանն, զի ըստ նոցա վարդապետութեանն՝ Աստուած լարեաց միան-  
 գամ՝ առ միշտ զընթացս մարդկան՝ որպէս լարի ժամացոյցն,  
 և ապա Հանգեալ, այնպէս զի ոչ ևս մնաց նմա առնել ինչ։  
 Աստանօր առաջի մեր կայ եզուիթականն ննեղաւորութիւն,  
 իրր զի Հանգեալ Աստուած, զի ի տեղի նորա տնօրինէ ի վե-  
 րայ երկրի անբուն Հսկողն և անսխալ փոխանորդն նորա, և  
 նա է կառավարիչ աշխարհի և բաշխող զթութեանց և պատ-  
 ժոց։ Բանքն Պօղոսի՝ թէ «Նովա կեամք, շարժիմք և ևմք»,  
 աստանօր փոխադրեալ են ի պայն։ Միայն սակաւք ոմանք ի  
 կանոնադիտաց Բտալացոց ժե դարուն կարողացեալ էին վեր-  
 տանել մինչև յայտ բարձրութիւն, այսինքն միայն այնորիկ  
 ի շողմամբարաց պապին՝ որք անյագ բերմամբ Հետամուտ էին  
 բազմաշահ եկամտից, և որք վնասակարք Համարին նաև ի Հը-  
 ոտիմ՝ իրրև գլխաւոր պատճառք ապականութեանն, որով ա-  
 պականեցին պապք զԵկեղեցին։ Իսկ առաջնորդութեամբ նո-  
 րոյ կարգին ժՁ դարու (Եզուիթաց) անցաւ զանցաւ չափն  
 ամենայնի որ ինչ մինչև ցայնժամ ասացեալ և արարեալ լի-  
 թէ յայն աստիճան Հասին՝ զի ի գրուածս իւրեանց սկսան

ուղղակի փոխ — Աստուծոյ կոչել զպապն, զայս այնպիսիքն արարին՝ որպիսի են Բելլարմինոս և այլք յԵզուիթաց :

Ըստ նմին օրինակի ընթանան և յօրինողք Զէ՛լէլէ՛յն, յայտ առնելով՝ թէ ամենայն զանձք աստուածային յայտնութեան, ճշմարտութիւնք, արդարութիւնք և շնորհք տուեալ են յԱստուծոյ ի ձեռս պապին, որ է միմիայն մատակարար նոցին և պահապան. և հուսկ ուրեմն այսպէս եզրակացուցանեն զբանս իւրեանց, թէ « Պապն շարունակէ ի վերայ երկրի ըզ-  
 ,, գործն Քրիստոսի, և նկատմամբ առ մեզ այն որ է նա՝ որ  
 ,, որ լինէր ինքն Քրիստոս՝ եթէ ինքնին և երեւելի եղանակա-  
 ,, կառավարէր զՆկեղեցին, » 29) : Աստի յայտմանէ քաջապիտի մի և եթ մնայ՝ զի հրատարակեցէ պապն ինքնին զանձն իւր՝ թէ Տէրն է մարմնացեալ և մարդացեալ :

Յայտ ուրեմն է զի անբարեկամներն անուանեալն է իսկապէս անբարեկամներն, և յառաջ զայ յայնմ առաջարկութենէ՝ թէ պապն ունի զանսխալ իշխանութիւն ոչ միայն ի ինդիրս հաւատոյ, այլ և ի բարոյականս առ հասարակ, նա անվրէպ առնէ դատաստան՝ թէ զորպիսի յարաբերութիւնս պարտի ունել հաւատն առ մարդիկ, և Նկեղեցին առ Տէրութիւնն, և ս և զկարգադրութեանց տէրութեան. և յայտ իսկ է զի ամենայն վճիռ այսպիսի պահանջէ անպատճառ՝ զի ամենայն կաթողիկէք բոլորով սրտիւ հպատակեացին այնմ, և ընկալցին զայն : Եւ ըստ այսմ ահա իշխանութիւն պապին ի վերայ Նկեղեցւոյ է իսկապէս միապետական, որ ոչ ճանաչէ բնաւ զորպիսի և իցէ չափ և զսահման : Պապն է ինքնակալ բացարձակ. այլք ամենեքեան են միայն ծառայք նորա՝ միջնորդարար կամ անմիջապէս առ ինձանէ կարգեալք, և միայն կատարողք յանձնարարութեանց նորա, և նա կարող է զիշխանութիւն նոցին չափաւորել կամ բոլորովին առնուլ ըստ հաճոյից անձին իւրոյ : Ըստ կարծեաց անդրալեռնականացն՝ Նկեղեցին որչափ առաւել յամենայն մասունս իւր և ի բաժանմունս ազգաց կառավարիցի յամենայնի ի ձեռս Հռոմմայ, այնչափ ի ծագկեալ և ի կանոնաւոր վիճակի գտանի. և Հռոմմ

պարտի լինել և ներգործել իրրև զսոսկավիթխար մերենայ հազարաձևունի՝ կոտավարիչ Եկեղեցւոյ, և ձեռք նորին հաստանն վարձանական կերպիւ զամենայն վճիռս, ամենայն ուրիշ միսին ամբաստանութեամբք, մատնութեամբք, քննադատութեամբք, պէսպէս բունաորական հնարագործութեամբք, և զուն գործեն մուծանել յամենայնի զմիակերպութիւն. քանզի միմիայն ուխտ սրտի և ջանացողութիւն պապականացն է՝ հրոսովեացուցանել զամենայն առանձին տեղական Եկեղեցիս, և ճնշել և բառնալ զամենայն յատկութիւնս ազգային եկեղեցական կարգաց: Նոցայն կէտ նպատակի և վարք բարոյականք այս են՝ զի ամենայն ազգք և ազինք միաորեալ զանգեցցին ըստ կարի ըստ մտածութեանց Ետալական եկեղեցականաց, և զնոցա կարծիսն սեպհականեցեն ինքեանց: Եւ զհամրդ իսկ կարող էին նոքա այլ ազգ ինչ ածել զմտաւ, մինչդեռ Չէ՛՛՛նայն ինքնին ասէ յայտնապէս, թէ «Զորքինակ Հրեայքն էին երբեմն ժողովուրդ Աստուծոյ, նոյնպէս և այժմ ի նոր օրէնս», Լուովմայեցիք. և այս մի է ի գերբնական աստիճանաց պատուոյ» (30):

Յաչա անդրալեռնական ատն շիր ինչ այնպէս բարձր և վրսեմ՝ որպէս հռովմեական օրէնքն և սովորութիւնք: Ասան նորա Լուովմէ հոգեւորական ատեան զատաստանի և աղբիւր ամենայն տեղեկութեան, կամ թէ լաւ և սասել, հաստատուն պատգամատեղի (Չէ՛՛նայն կոչէ իսկ զպայսն շէրմէնայն պարտեւէն), յորոյ ի ձեռս է անտալ լուծումն որոց և իցէ կարծեաց և երկրայութեանց, որոց և իցէ ուսումնական կամ գործնական խնդրոց: Մինչդեռ այլք ի քննադատել անդ զանցս և բզգեպս իրաց պատահելոց՝ առաջնորդ ինքեանց առնուն զբարոյական և զկրօնական գաղափարս զարգացեալս Եկեղեցւոց, անդրալեռնականքն ի տեղի այսր եկեղեցական և բարոյական օրինաց դնեն զհռովմեականն իշխանութիւն կամ զՏեղեկանութիւն, և զհանգամանս և զբարս քաղաքին Լուովմայ՝ որոյ ինքեանք հետեին՝ ընծայեն իրրև մի միայն օրինակ հետեելի: Ի Լուովմ յորժամ յախշտակին առնուն ի ձեռաց երբայեցի

ձնողաց զորդինոցին բռնութեամբ՝ զի ի քրիստոնէութեան կրթութեացն զնա, այր անգրալեռնական համարի թէ այս զործ ամենայն իրօք օրինաւոր է. զի ըստ կարծեաց նորա՝ բնական իրաւունքն մարդոյ պարտին տեղի տալ առաջի հոգովական օրինաց, որչափ և անագան իցնն հնարեալ օրէնքն այն, թէպէտ և յայլմէ կողմանէ հաստատն աստուածաբանք՝ թէ աստանօր բնական իրաւունքն է միանգամայն և աստուածային, ուստի և ի վեր է քան զլոկ մարդկային եկեղեցական օրէնս։ Այլ և այժմ իսկ ի տէրութեան Եկեղեցւոյ կրօնաքննութիւնն սպառնայ բանադրել և զրկել ի խորհրդոց Եկեղեցւոյ զամենայն ուսար և դրուսար՝ որք ոչ ամրաստան լինիցին զձնողաց իւրեանց, և ոչ մատնիցնն զնոսա ի բանտ՝ յորժամ ձնողքն յաւուր պահօց կերեալ իցնն զմիս կամ զկաթն, և կամ ընթերցեալ իցնն զարգելեալ զիրս. հաւատարիմ արբանեակն Հոռովմայ արդարացուցանէ և զայս զործողութիւն։ Յորժամ հոռովմական կատալարութիւնն պաշտպան լինի ի ձեռն վիճակահանութեան (տէրէի)՝ զոր յայտնապէս առնեն քահանայքն նորա՝ ախտի փառամոլութեան, այսինքն քանդման բազում անգամ բազմութիւ ընտանեաց, ԶԷԼԷԼԵՆ՝ իսկոյն զրէ զջատագովութիւն վիճակահանութեան, թէպէտ և Աղեքսանդր Ե՛ և Բենեդիկտոս ԺՊ՝ արդիւնեալ են զայն սպառնալեօք բանադրանաց։ Յայտնի է զի ի հասարակաց տեղիս ի Հոռովմ կան մեան քահանայք ոմանք՝ «սհանայ» հրատարակէ անուանեալք, որք սղասնն զի որ եկեալ վարձեցէ զնոսա ի մատուցանել զպատարագ. և սակայն այս ևս այնքան միայն ընդհարկանի յաչս առն հոռովմայեցւոյ՝ որչափ և վաճառումն տոմսակաց՝ յորոց վերայ գրեալ են ներողութիւնք մեղաց. և սպասաւորքն որք առաջնորդն օտարականաց ի Հոռովմ քաղաքի, յետ ցուցանելոյ նոցա զամենայն ինչ որ արժանի իցէ տեսութեան, և յետձանութեացուցանելոյ զնոսա ամենայն զուարճութեանց քաղաքին, ի վասնանի ակնարկնն նոցա միտ զնել և այնմ։ Այլ անգրալեռնական գէթ ներելի յոյժ համարի և զայն, զի վաճառաչահութիւն ներողութեանց և արձակմանց մեղաց և պատժոց

ի Հռովմ՝ աղբիւր է եկամտից, այնպէս զի վաճառին յԵկեղեցիս ոմանս մէն մի ընդ միոյ վահանափողոյ (սկս-քէ) արտօնութիւնք խորանաց, և այսու տուեալ լինի սնունդ և ածումն թանձրախոր սնապաշտութեանց յաղագս աղատութեան հոգւոց ի քաւարանէ :

Յաչս պապականաց ոչ ինչ է այն՝ զի վասն մեծատանց չիք ինչ դժուարութիւն լուծման պսակի՝ հատուցմամբ մեծագումար դրամոց, մինչդեռ շքաւորացն չիք բնաւ հրաման առ այս : Չև ևս բազում ժամանակ է՝ զի ի միում ի տէրութեանց Գերմանիոյ հռովմէական պալատն ջանահնար եղև՝ ընդդէմ յայտնի պայմանաց զաշնագրութեանց՝ փոխադրել ի Հռովմ՝ զմի ի ինդրոց ամուսնութեան պսակի, և այնպէս հարկադրել զքաղաքացիսն ի վարել զթանկագին գատս արտաքոյ տէրութեան իւրեանց. սակայն նորն այն հնարագործութիւն կարի իմն զգուելի թուեցաւ և յանդգնական նոցին իսկ եպիսկոպոսաց այնր տէրութեան, մինչ զի առաջի արարին նոքա պալատանն Հռովմայ գանգատանս ծանունս, որոց պտուղ այն եղև՝ զի առ ժամն զաղարիցոյց պալատն զպահանջմունս իւր, և եթող զլուծումն ինդրոյն ապագայ ժամանակի :

Հռովմ՝ ևս յիւրմէ կողմանէ ոչ զաղարէ ի ջանալոյ զի կաթովիկքն հաստատեցին օր քան զօր յայսպիսի մտածութիւնս իտալական կղերին : Յիտալացւոց կաղմեալ են ինն մասամբ ի տասանց ժողովական ատենակալք և պաշտօնեայք հռովմէական պալատանն՝ որ կառավարէ զնոսին ի ձեռն հրամանագրոց և վճռոց տուելոց յանուն պապին, յորս և քննեալ լինի ամենայն ինչ մինչև ցիտքրագոյն իսկ հանգամանս իրաց : Որ և իցէ կրօնական շնչաութիւն պարտի կանոնաւորիլ անպատճառ իտալական եղանակաւ : Եպիսկոպոսարանքն ոչ իտալականք պարտին աւանդիլ ըստ կարի ի ձեռս արանց՝ որք զկերպ մտածութեան իւրեանց առեալ իցեն ի Հռովմէ, կամ զէթ դաստիարակեալ իցեն յձգուիթաց և յաշակերտաց նոցա :

Եշխարհ ինչ կամ վիճակ որչափ առաւել ի Հռովմ՝ դիմիցէ պէսպէս հարցուածովք, որքան առաւել բերիցէ անտի

Թանկագին բուժմունս կամ վճիռս, ներողութիւնս, արտօնութիւնս խորանաց, օրհնեալ իրաց մանունց և այլն, և որչափ առաւել առաքիցէ անդր ընծայս զբամականս, այնքան առաւել հռչակի գովասանութեամբք սակս իւրոյ բարեպաշտութեանն և ճշմարտապէս հռչակական ուղղութեան մտածութեանցն։ Ըստ կարծեաց պալատանն Հռովմայ՝ կաթողիկոսն հաւատք յայտմ հաստատեալ կան՝ զի ամենայն որ պարտի յարդարել զանձն և զմտածութիւնս իւր կրօնականս ըստ իտալական կերպի։ մինչ զի եթէ, օրինակ իմն, գերմանացի որ կամ զազդիացի կամ անզդիացի, հնարեսցի ի բաց ձգել յանձնէ զօտարտաբի ձև կերպարանացն, և զցենուլ զպլ իմն ձև՝ որ առաւել հաճոյ իցէ սրտի իւրում՝ իբրև զընկի ինչ և զհայրենի, նովին իսկ խտորեցաւ արդէն յուղիղ ճանապարհէ, և ոչ ևս է ինչ-որէր, այլ աշտարակ կաթողիկ։ Այսպէս զանազանն Եզուիթքն զայնտիկ՝ զորս այլոցն սովորութիւն է զանազանել բարիքս անբարեանս, և ստակապէս իւրեանս։

## Բ.

Հետեւանք վարդապետութեան զանսխարութենէ Պուսին։ — Անչափ հեղինակութիւն նան տղատագունին ի պապս։ — Աւելորդն լինել ժողովոյ եպիսկոպոսաց և աշխատութեան աստուածարանից։ — Հարկ խանդարելոյ և խարդախելոյ զպատմութիւնս։ — Ստայօղ պատմութիւն Եկեղեցւոյն Սպանիոյ։

Բովանդակ մտածութիւն անգրալեոնականաց յայս բերի՝ թէ պատն ինքն անձամբ անսխալ է, և վասն այնորիկ պնդեն Եզուիթքն՝ թէ ցանկութիւն ամենայն ճշմարտ կաթողիկոս այս է, զի այդ մտածութիւն հանգիստապէս հռչակեսցի յառաջիկայ Թողովին՝ ամբարձեալ յաստիճան վարդապետութեան հաւատոյ։ Եթէ այս ցանկութիւն առնուցու զկատարումն, յետ այնորիկ ի վեր երևեսցի նոր իմն զօրութիւն անչափ և

անսահման, և այս զօրութիւն հրատարակեալ մի անգամ իրրև անմատոյց ինչ, տիրապետեսցէ այնուհետև, և պահանջեսցէ զի ամենայն որ անպատճառ հպատակեսցի որպիսում և իցէ վճռոյ պապին ի կրօնականս, ի քաղաքականս, ի բարոյականս և յուսումնականս: Այնուհետև ոչ ևս իշխեսցէ որ ճիկ հանել զչափազանցութենէ իշխանութեան պապին, և ոչ զայնմանէ թէ ընդէր խառնի նա յօտարին իրս. քանզի ինքն միայն անսխալ պապն է որ կարգադրէ զամենայն որպէս և զիտէ, և սահման դնէ վարդապետութեան իւրում. և ամենայն գործողութիւնք նորա և սահմանադրութիւնք առնուն նոյնպէս զկնիք անսխալութեան: Յորժամ անվայել հաւատարմութիւն բազմաց յաստուածարանիցն կաթողիկաց առ նախնի աւանդութիւնս և առ նախկին վեցեսին դարս յաջողակի խորտակեսցի, տղայական երկիւղն յերեսաց նորոյ վարդապետութեանդ բոլորովին փարատեսցի, և այն առաջարկութիւն Ա.ինկենտիոսի Լ.իրինացոյ թէ «վարդապետութիւն հաւատոյ կարէ լինել այն ինչ միայն՝ որ միշտ, ամենայն ուրեք, յամենեցուն ընկալեալ և հաւատացեալ է», — որ տակաւին ևս ունի ինչ նշանակութիւն ի տեղիս տեղիս, — ոչնչացի, յայնժամ որ և իցէ պապ՝ որքան և իցէ տգէտ յաստուածարանութեան՝ կարողացցի ըստ քմաց իւրոց ի գործ դնել զիւրն զօրութիւն արարչական ի ըստեղծագործել նորանոր վարդապետութիւնս, և պարտաւորել զնկեղեցին ողջոյն ի հնազանդել անձնական մտածութեան իւրում: Ասացաք՝ թէ «բնութիւնս և ոգիս իցէ ոգին», քանզի աստուածարանութիւն կարգին Եզուիթաց արդէն կանխատես եղեալ է այսմ շատ իսկ յաճախ երևելոյ պատահարի՝ անհնարին տգիտութեան պապից յաստուածարանական խնդիրս, և մի ոմն յԵզուիթաց, որ է վարժապետն Երպէտման ի Մոզուստիոյ, արդէն յուշ արարեալ է մեզ՝ թէ «Անսխալ կարող է լինել նաև պապ որ ամենատգէտ, վասն զի Աստուած ցուցեալ է մարդկան յերբեմն ժամանակի զուղիղն ճանապարհ բերանով իչոյ», 51): Եւ եթէ յետ ամբառնալոյ անսխալութեան պապին ի կարդ վարդապետութեանց հաւատոյ՝ տակա-

ւին ևս համարձակեցի որ ասել՝ թէ այս ինչ առաջարկութիւն հաւատոյ կոխեալ ի Ատրիկանեան փողերանոցին՝ կեղծ է կամ պակասաւոր դրամ, ըստ կարծեաց Նզուխթացն արտաքս ընկեցեալ լինի բանադրանօք յՆկեղեցոյ յայտ՝ աշխարհիս, և ի հանդերձեալն մատնի ի դատապարտութիւն յախտնական, Եւ այսպէս այնուհետեւ ոչ ևս պիտոյ լինին երբէք ժողովք եկեղեցականք, Թէպէտ և եպիսկոպոսունք ընդ ժամանակս ժամանակս ժողովեցին ի Հոռով՝ բայց այն լիցի միայն վասն առաւել ևս զարդարելոյ զհանդէս արարողութեանցն՝ որովք պապն նորանոր մարդիկ անցուցէ ի դասս սրբոց, կամ զայլ ինչ հանդէս կատարիցէ. իսկ զմասանց հաւատոյ ոչ ևս եղիցի բան կամ խնդիր ինչ. իբր զի եթէ մտաբերէին յանկարծ յիրեանց կողմանէն հաստատել զվճիռն տուեալ արդէն աստուածային ներշնչմամբ ի պապէն, — զորօրինակ ժողովն Քաղկեդոնի ոչ էառ յանձն հաւանել ընդ տոմարն Աւոնի պապին՝ մինչև և ամենայն խնամով քննեալ զայն, — նման լինէր այս այնմ՝ եթէ կամիցի որ լապտերօք ածնցուցանել զլոյս արեգական, Այնուհետեւ բանքս, «անձնէու որդւորէրէն», որովք սովոր են եպիսկոպոսունք ձեռնագրել զվարդապետական եղբակացութիւնս ժողովոց, լինիցին բանք հայհոյութեան:

Եթէ անսխալութիւն պապին ընկալեալ լիցի ի ժողովոյն իբրև մասն հաւատոյ, պատճառս տացէ այնպիսի աստուածաբանական, եկեղեցական, այլ և քաղաքական շիտթից և յուզմանց, զորս այժմ թերևս սակաւք ոմանք յոյժ (և նուազ քան զամենեւին պահանջողքն պնդապէս՝ զի ընկալեալ լիցի վարդապետութիւնդ այդ) կարող են երևակայել, և ոչ զտցի և ոչ մի ձեռն մարդկային որ կարողացի յառնուլ զառաջս նոցին: Յայնժամ ի վերայ նորին իսկ Հոռովայ կատարեցի բանն, «Եու անտարակոյս միւս ևս անգամ սասանեալ զդողանի հարցիս վասն քոյոյ աստուածանմանութեանդ»:

Նոսի քան զամենայն հարկ լիցի իսկոյն ընտրել առնուլ զնորահնարդ զայդ վարդապետութիւն իբրև զհիմնական վէճ անկեան ուսումնական շինուածոյ հոռովեական կաթոլիկաց:

և յայնժամ՝ բովանդակ աշխատութիւն աստուածարանից ի գործ դիցի վանն հետամուտ լինելոյ պապական դատաւճոց ըստ այսմ կամ ըստ այնմ՝ խնդրոյ վարդապետութեան, և ապա վանն խնդրեալ գտանելոյ և ընդ նորինք արկանելոյ օրինակս և ապացոյցս ի պատմութեանց և ի մատենագրութեանց : Առաջի տիրերեան պատգամախօսին որ զլիակատար ներշնչմունս իւր ընդունիցի ի բարձանց, և միշտ զիւրամատոյց գտանիցի առ ամենայն հարցմունս, մթազնի այնուհետև այլ ամենայն իշխանութիւն կամ հեղինակութիւն :

Առ ի՞նչ պիտոյ իցեն այնուհետև տաժանական հետազօտութիւնք բանից աստուածաշունչ զրոց . առ ի՞նչ աշխատութիւնք ուսանելոյ զաւանդութիւնս, որ այնբանոյ կարօտին ժամանակի և դժուարութեանց, և նախընթաց տեղեկութեանց, եթէ մի միայն բան անտալ պապին կարող է միով վիճամբ ջախջախել զոր և իցէ աստուածարանական բարեմիտ աշխատասիրութիւն, յոր ծախեալ իցէ որ զկեանս իւր բովանդակ, և եթէ ի ձեռն հեղադրոյ հարցումն ինչ առնելով ի Հոռով՝ կարելի է յետ քանի մի ժամուց կամ աւուրց առնուլ զպատասխանի՝ որ արդէն ունիցի զկերպարանս վարդապետութեան հաւատոյ կամ անտալ վճռոյ : Աւ այսպէս ի միոյ կողմանէ աշխատութիւն աստուածարանից զիւրացի, բայց ի միւսմէն զրութիւն նոցա առաւել ևս դժուարացի և կնճեցի : Արդէն այժմ՝ իսկ միմիայն ստորակէտ ի միում ի կոնդակաց (Պիոսի Ա ընդդէմ՝ Բայոսի) պատճառս ետ անհամար վիճարանութեանց . քանզի ոչ գիտեն թէ յայնմ կոնդակի զառս քանի մի յառաջ պարտ իցէ դնել քան զստորակէտն՝ թէ յետ ստորակիտին . զզրութենէ այնր ստորակիտի կախեալ կայ բովանդակ ուղղութիւնն հաւատոյ նշանակեալ ի կոնդակին : Արեք հարիւր ամբ կն յորմէ հետէ այս վիճարանութիւն ձգեալ զայ, և չէ հնար լուծանել զնա և ոչ իսկ քննութեամբ բնագործն պահելոյ ի Հոռով՝, որովհետև ըստ հին սովորութեան գրեալ է այն առանց նշանաց կէտադրութեան : Աւ արդ օրպէս արգեօք լինիցի յայսմ հետէ և անդր : Ասեն բարունիքն Հրեից՝ թէ « Ի

վերայ միոյ միոյ ի նշանախնայից աստուածաշնչին կախեալ կան ահագին լերինք՝ յորս թագուցեալ կան զանձք իմաստութեան, զայս բան մարթ է ապաքէն յարմարել և նշանախնայից պապական կոնդակաց։ Եւ այսպէս յայսմ հետե ի ձեռս անդրալեոնական զպրօցին՝ որ տիրապետեալ է ի Հռովմ՝ աստուածաբանութիւնն հետզհետե լինելոց է աղգ իմն Թալմուտի Հրեից։

Առ ի ցուցանելոյ զճշմարտութիւն վարդապետութեանն որ յաղաքս անխալութեան պապին՝ ի պատմութենէ, հարկ ի վերայ կայ անպատճառ խանգարել և խարդախել զողջոյն իսկ զպատմութիւնս։ Հարկ լիցի մեկնաբանել զբացատրութիւնս պապից՝ որք հակառակին թէ վարդապետութեանց հաւատոյ և իրերաց (որպէս պատահեցաւ այս նաև մի և նոյն պապին)։ հարկ լիցի զամենայն հաւասարել, և յայն կերպարան ածել՝ զի ասացուածքն այնորիկ հակառակք ողջոյն Եկեղեցւոյ և կամ քանդիւք իրերաց՝ ըստ ինքեան զարձեալ ընդ վարդապետութիւնս հաւատոյ գրեցին. և եթէ յասացուածոյ միոյ բարձրի ինչ, և ի միւսն յաւելուած ինչ գործիցի, զարձեալ մի լինիցի ի նոսա հակասութիւն, այլ ի վախճանի ամենեքին զնոյն բան համարեցին ասել։ Առ ի զուխ հանելոյ զաշխատութիւն այսպիսի՝ թերևս օգտակար լիցի ապագայ աստուածաբանից ուսումն առնուլ ի բարունեացն զպրօցի. թէպէտ ըստ ինքեան և ի բարոյագիտաց ընկերութեանն Եզուիթաց կարելի է յայսմ մասին բազում ինչ ի փոխ առնուլ. իսկ վասն շրջելոյ զեկեղեցական պատմութիւնն յոր կողմն և կամիցի որ, և վասն խարդախելոյ զայն՝ լաւագոյն վարժապետս իրնդրել անհնարին իմն է և աւելորդ ևս։ Շարագրելն զեկեղեցական պատմութիւն ոչ երբէք լեալ է վասն նոցա գործ ինչ զբժուարին. յայմ մասին նաև հիանալի իրս հրաշագործեալ են նոքա։ Թողից ասել զեռանդն փութոց նոցա ի հնարել և ի տարածանել անկանոնական և անվաւեր պատմութիւնս յաղաքս հրաշից սրբոց, որովք լցեալ են նոքա զփաս և զուռնս հաւատացելոց։ Աստանօր յիշատակեցուք միայն զխարդախելն նոցա զպատմութիւն Եկեղեցւոյն Սպանիոյ՝ յոր ձեռն արկեալ

ին ահագին աշխատութեամբ : Նորա պարգևեցին Սպանիոյ զեկեղեցական պատմութիւն մի բոլորովին նոր, և համեմատ նրապատակաց կարգին իւրեանց, որպէս և ազգային ցանկութեանց Սպանիացւոցն, և վարդապետութեան զյղութենէ սրբոյ կուսին, զոր անշուշտ և շարադրել իսկ չկարէին՝ եթէ կարգակից ընկեր նոցին Ռոմանոս Տէլա — Խիկուէրա չշարադրէր ինքնին զժամանակագրութիւն և զհնագիտական յիշատակարանս, հանդերձ կարևոր պարագայիւք զմասանց սրբոց, զորոց ստուգութիւն պարտ էր ապացուցանել ի ձեռն հրաշագործութեանց հրատարակելոց կամաւորապէս առ այս վախճան :

Գ.

Ախարանք եւ ճակատութիւնք պապից : — Վ. միռ Ին. նովկենտեայ Ա եւ Գեղասիոսի Ա զհաղորդութենէ տղայոց : — Վաւերականութիւն եւ անվաւերութիւն ձեռնագրութեան արժանաւոր կամ անարժան պապից եւ եպիսկոպոսաց : — Մկրտութիւն յանուն Քրիստոսի : — Ղուծումն պսակի ստրկաց : — Ղուծումն պսակի յանկանել միոյ յամուսնացն ի ճերեփկոտութիւն : — Վարդապետութիւն Կափառնաւմեանց : — Ամբոթիւն կապալցութեան եպիսկոպոսի ընդ իւրում վիճակին : — Զօրութիւն Էրկրորդ օրինաց յեկեղեցւոց Քրիստոսի : — Խնդիր կարգին Փրանկիականց : — Կոնդակ Էպիսկոսի Գ, առ Հայա : — Սերքստոս Ե, եւ աստուածաշունչն հրատարակեալ ի նմանէ :

Որպէս զի առաւել ևս լուսարաննացուք զինչգիրն որ յազգս անսխալութեան պապին, ի մէջ բերցուք աստանօր զմանս ի զժուարութեանց անտի որք ընդ առաջ ելանեն նմին ի պատմութեան :

Կենովկենտեոս Ա, և Գեղասիոս Ա, — առաջինն ի թղթին առ Թողոմէ Միլեիոյ, և երկրորդն ի թղթին առ եպիսկոպոսն

Պիկենացոց, — հաստատեցին՝ թէ հաղորդութիւն մանկանց տղայոց այնպիսի անհրաժեշտ կարևորութեամբ հարկաւոր է, զի տղայքն առանց հաղորդութեան մեռեալք՝ զնան դէպ ուղիղ ի դժոխս 52) :

Յետ հազար ամաց զայս վարդապետութիւն փակեաց ընդ նորովիւք ժողովն Տրիդենտեան :

Մի ի հաստատուն վարդապետութեանց Եկեղեցւոյ այս է՝ զի ձեռնադրութիւնն եղեալ յեպիսկոպոսէ ի տալ զսուրբ աստիճան՝ չկարէ յռինչ զրիլ, թէպէտ զուրկ իցէ ձեռնադրողն յանձնական արժանաւորութենէ կամ պակասաւոր որ : Հաստատութիւն խորհրդոց Եկեղեցւոյ, բաց ի խորհրդոյ մկրտութեան, հաստատեալ կայ ի վերայ այլո մասին հաւատոյ, և վասն այսորիկ Եկեղեցին յամենայն ժամանակի հերքեալ և մերժեալ է զկրկին ձեռնադրութիւնն իրրև զգործ ինքնահնար, որ անպատուութիւն բերէ խորհրդոյն : Սակայն ի ժամանակս վարբենութեանն յոր անկաւ Բտալիա յետ բազմամեայ պատերազմաց Գոթացւոցն և Լոնգորարաց ի միջնաշխարհին, ի Հռոմ վաղասեցին իսպառ ուսմունք զիտութեանց, որով և վարդապետական աւանդութիւնք խառնակեցան և շփոթեցան : Անդստին յութեորդ դարէ սկսան անդանօր յռինչ զրիլ զձեռնադրութիւնս պապից ոմանց, և բռնադատել զեպիսկոպոսունսն և զերիցունս ձեռնադրեալս ի նոցանէ՝ առնուլ զնոր ձեռնադրութիւն : Առաջինն յայսպիսի զիպաց եղև յամին 769, յորժամ պապն Կոստանդին Բ, հաստատեալ յաթոռ իւրում զինու զօրութեամբ և տիրապետեալ նմին ամիսս երեքտասան՝ զրկեցաւ յաչացն և ընկեցաւ յաթոռոյն ժողովական վճռով : յետ որոյ հրատարակեցաւ թէ անվաւեր են ամենայն ձեռնադրութիւնքն եղեալք ի նմանէ :

Բայց առաւելապէս հռչակեալ է իրրև զործ արտաքոյ կարգի՝ պատահեալն ի վախճան իններորդի դարուն, յորժամ յետ մահուան Փորմոզոսի պապին՝ հրատարակեցան անվաւերս լինել ամենայն ձեռնադրութիւնքն եղեալք ի նմանէ ի հնդիսին ամս պապութեան նորա. զի բովանդակ իտալական Եկեղեցին

յուզեալ շփոթեցաւ, և ամենայն ուրիշ անկան վարանք տա-  
րակուսի՝ թէ բնաւ մնացեալ իցէ տակաւին խորհուրդ ինչ յԻ-  
տալիա: Աւքսիլիոս ոմն ականատես վկայ իրացն ասէ. «Ի  
պատճառս այնոցիկ հանրական ձեռնադրութեանց, լուծման  
ձեռնադրութեանց և կրկին ձեռնադրութեանց (բրախմոս, էփե-  
բրախմոս, սիքերբրախմոս) յայն աստիճան հասին ի Հոռով,  
զի ահա ի 20 ամաց հետէ շիջեալ է բոլորովին քրիստոնէա-  
կան կրօն յԻտալիա,»: Քանզի պապք և Թողովք է զի վաւե-  
րականս գոլ վճռէին զձեռնադրութիւնսն, և է զի անվաւերս.  
և յայտնապէս կորուսեալ էին ի Հոռով՝ զյստակ իմացուածն՝  
թէ զի՛նչ իցէ ձեռնադրութիւն: Յանուն բազմաթիւ քահա-  
նայից և եպիսկոպոսաց, որոց եկեղեցական աստիճանքն ընդ  
երկրայութեամբ արկեալ էին ի պատճառս վճռոց Ստեփանոսի  
Է, և Սերգիոսի Պ, պահանջէ Աւքսիլիոս (ի վերջ երկրորդի թրդ-  
թոյն իւրոյ) զի արգարացի քննութիւն կարգեսցի ի տիեզերա-  
կան Թողովի. քանզի այն մնայր մի միայն հեղինակութիւն՝ որ  
կարող էր տակաւին պարզել և լուծանել զկնճիռն զայն հնա-  
րեալ ի պապից 33):

Բայց Թողովն այն ոչ զուժարեցաւ, և անդիտութիւն այնր  
վարդապետութեան և յուզմունք շփոթից մնային ի Հոռով՝  
որպէս և էինն: Ի մէջ կոյս մետասաներորդի դարուն սկսաւ  
ճակատամարտն մեծ ընդդէմ սիմոնականութեան, որ յայնժամ  
զուգահաւասար համարեալ լինէր հերետիկոսութեան. և ահա  
դարձեալ սկսան ընդ անվաւերս զրել զձեռնադրութիւնսն ե-  
ղեալս յեպիսկոպոսաց ամբաստանելոց ի սիմոնականութեան:  
Վասն այսորիկ Լևոն Թ, որպէս վկայէ մեզ Պետրոս Գամիա-  
նոս, ձեռն էարկ ի բազմապատիկ կարգադրութիւնս 34): Գրի-  
գոր Է, ի հինգերորդ Թողովն Հոռովմայ զանվաւերութիւն ամե-  
նայն սիմոնական ձեռնադրութեանցն այնոցիկ անցոյց ի կարգս  
կանոնաց. իսկ առաջարկութիւնն Ուրբանոսի Բ, — թէ սիմոնա-  
կանն որովհետեւ բնաւ ինչ ոչ ունի՝ ոչ կարէ և տալ ինչ ի  
ձեռնադրութեան, — էանց նաև ի շարս վճռոց Գրատիանո-  
սի 35):

Յայտ ամենայն դէպս իրաց՝ վարդապետութիւնն և արդիւնք գործոց սերտութեամբ կապակցեալ էին ընդ միմեանս՝ որպէս թուի, միայն վասն այնորիկ՝ զի պատգամ ի դատաւճիտս իւրեանց ունէին զուտ և զխեղաթիւր և զվնասակար կարծիս ի վերայ խուճապէան և զօրութեան այնր խորհրդոյ, և եթէ յայնժամ համարէին զնոսս այլքն անսխալս, անշուշտ ահագին խռովութեանց լինէին պատճառք ոչ միայն յՄատիւս, այլ և յամենայն Եկեղեցիս առհասարակ:

Պատն Պեղագիտս հրատարակեալ էր արեւելեան և արեւմտեան Եկեղեցւոյ, թէ կոչումն ամենատուրր Երրորդութեան ի մկրտութեան անպատճառ հարկաւոր է. նմին հակառակ՝ Նիկիոցայոս և հաւատացուցանէր Բուրլարաց՝ թէ ի մկրտութեան բաւական է յիշատակել միայն զանուն Քրիստոսի. որով ըզքրիստոնեայն զայնոսիկ էարկ ի վտանգ կատարելոյ զմկրտութիւն անվաւեր եղանակաւ: Եւ զայս արար նոյն պատ՝ որ հրատարակեաց, թէ զորոշմն տուեալ ի քահանայիցն Յունաց ըստ վաղնջուց աւանդութեան արեւելեան Եկեղեցւոյ՝ անվաւեր է, և պատուիրեաց եպիսկոպոսաց վերստին օժանել միւռոնաւ զայնոսիկ՝ որք արդէն օժեալք էին. ուստի ուրացաւ կամ յոչինչ համարեցաւ զմին ի խորհրդոց յունական Եկեղեցւոյ, և այսու էարկ զհիմն գժտութեանցն այնոցիկ, որք աժին հասուցին զերկոտին Եկեղեցիան ի բաժանումն շարունակեալ մինչև զայժմ (56):

Ստեփանոս Բ (կամ Գ) հրաման ետ լուծման պսակի ըստբուռն օրհորդաց և աննկոյն զայլ կին, մինչդեռ այլք ի պատից առ հասարակ համարէին զպսակն ամուսնութեան ազատաց և ստրկաց անլուծանելի (37): Նա ինքն Ստեփանոս վճռեաց՝ թէ վաւերական է խորհուրդն մկրտութեան կատարեալ զինուով ի ստիպել հարկին (58):

Սեկստինոս Գ ջանահնար եղև թուլացուցանել զկապ պըսակին, յայտ ամենկողմ թէ յորժամ մին յամուսնաց դառնայցէ ի հերետիկոսութիւն, պսակն լուծանի: Իսկ Կննովկենտիոս Գ և Եղբրանոս Գ հերքեցին զայն վճիռ, և զՍեկստի-

նոս հերետիկոս կոչեցին : Յետ ժամանակաց զվճիռն զայն ջընջեցին բարձին ի միջոյ, բայց Սպանիացի աստուածաբանն Տէքասթրոյ տակաւին ևս տեսեալ էր զգրչագիր օրինակ կոնդակին այնորիկ 39) :

Նիկողայոս Բ առաջարկեաց ի Ժողովին Հռոմայ յամին 1059, և ստիպեաց զԲերենգարիոս ընդունել զվարդապետութիւն Վափառնաումեանց զհիւրքեալն յամենայն Ակեղեցւոյ իրրև մոլորական, — զի հակառակ էր վարդապետութեան անախտականութեան մարմնոյն Քրիստոսի, — որպէս թէ ի պահուհաղորդութեան մէջ զգայական եղանակաւ մերձենամք ի Քրիստոս, բեկանեմք զնա և ատամամբք կոտորեմք : Լանֆրանք մեղադիր լինէր յետոյ Բերենգարիոսի վասն այնորիկ՝ զի զկնի ժամանակի իրիք անցանելոյ ջանացեալ էր նա բառնալ զպատասխանատուութիւն այնր մոլորական վարդապետութեան ի պապէն, և արկանէր ի վերայ Վարդինալին Հումբրատոսի 40) :

Իննովկենտիոս Գ առ ի տալոյ պապական իշխանութեան զծայրագոյն փառահեղութիւն աստուածային ամենակարողութեան, հնարեաց զնոր իմն վարդապետութիւն, որպէս թէ հոգևորական զօգն, որ կապէ զպիսկոպոսն ընդ վիճակի նորա, ամբաղոյն է և առաւել ևս անլուծանելի՝ քան զմարմնական զօգ ամուսնութեան ի մէջ առն և կնոջ, և թէ միայն Աստուած կարող է լուծանել զառաջինն, այսինքն փոխադրել զպիսկոպոսն ի միոյ վիճակէ յայլ վիճակ : Եւ որովհետև պապն է փոխանորդ ճշմարտին Աստուծոյ ի վերայ երկրի, նա միայն լուծանէ զսրբազանն զայն կապակցութիւն, և այն՝ ոչ զօրութեամբ մարդկային իշխանութեան, այլ զօրութեամբ աստուածայնոյն, և լուծանէ ոչ իրրև մարդ՝ այլ իրրև Աստուած 41) : Մերձաւորագոյն և բնական հետեանք այսր վճռոյ այն էր՝ թէ պապն կարող է անտարակոյս լուծանել զկապակցութիւնս ոչ նոյնչափ զօրաւորս և սուրբս, այսինքն է զպսակս : Այսմ ոչ եղև մտադիր Իննովկենտիոս Գ, որ ինքն իսկ յայտնապէս դատապարտեալ էր զառաջարկութիւն Ալեխստինոսի Գ, յաղագս լուծանելի գոյոյ պսակաց, և այնպէս յանգէոս անկաւ ի հա-

կառակութիւն բանից ընդդէմ անձին իւրոյ : Ոմանք ի կանոնագիրաց իրաւացի դատեցան և զյս ևս հետեանս վարդապետութեան նորա :

Իննովկենտիոս ամենազէտ երևեցաւ յաստուածաբանութեան՝ յայտ առնելովն թէ հինգերորդ մատեանն Մովսեսի որովհետև կոչի երէրորդ օրէնս՝ կամ երէրորդսն օրէնս՝ ունի զօրութիւն վաւերական և ի քրիստոսականս Եկեղեցւոջ, որ է երկրորդ Եկեղեցի : Պապն այն մեծ ոչ էր ընթերցեալ երբէք, որպէս թուի, զԵրկրորդ օրէնս. ապա թէ ոչ՝ դժուարին էր արդեօք անկանել նմա յայնպիսի սխալանս. ըստ որում՝ արգելումն ուտելեաց բազմաց, զոչք ողջակիզաց, ծանր ծանր պատիժք և արիւնահեղ պատերազմաց օրէնք, արգելումն ասուելէն հանգերձից, պարտաւորէին ի պահպանութիւն նոցին և զքրիստոնեայս : Եւ որովհետև ի զիրս Երկրորդ օրինացն հրաման տուեալ լինի Հրէից արձակել զկին որ չիցէ հաճոյ, և ամուսնանալ ընդ այլում, Իննովկենտիոս Պ, այսու եղանակաւ ինքն իսկ գտանէր ի վտանգի անկանելոյ ի ծանրագոյն ևս մոլորութիւն, քան զՍեկեստիոս Պ, ի մասին վարդապետութեան Եկեղեցւոյ յաղագս պսակաց :

Եւ անձինն իմն եղանակաւ արժանի է գիտողութեան վասն առաջիկայ խնդրոյս պատմութիւն փոփոխակի եղելոյն զովութեանց և հալածանաց կրօնաւորաց Փրանկիսկեան կարգին \*) ի կողմանէ պապից :

Նիկողայոս Պ, ի կոնդակին իւրում՝ որոյ սկիզբն է, «Եւ սերմանահան»,՝ ետ զբացատրութիւն կանոնացն Փրանկիսկոսի, և հաստատէր՝ թէ հրաժարելն յամենայն անձնական և ընկերական սեպհականութենէ՝ զորժ է սուրբ և արժանի վար-

(\*) Կարէ փրանկիսկեան իրմատորացն Լադիմացաց հիմնեցաւ յապն 1208 է փրանկիսկոսէ իւր՝ Պրանկիսկոսէ Աստիղացոյ. և զանազան ճեպգ և սրբն հաստատէ անսասի իւրն առ խմարհասիւն «Կրթութեզարք» : և «Մտաբացիլ իրմատոր» :

ձուց, և թէ ինքն Քրիստոս ուսոյց զնոյն և հաստատեաց իւրովն օրինակաւ. զնոյն ուսուցին և նախկին հիմնադիրք Եկեղեցւոյ: Սմին իրի որ և իցէ ստացուած Փրանկիսկեանց պարտի գտանիլ ի ձեռս նոցա՝ միայն ի վայելումն, և ոչ թէ ի տիրանալ նոցին: Իսկ իրաւունք սեպհականութեան ի վերայ ըստացուածոցն նոցա՝ ըստ կարգադրութեան պապին՝ անկէ հըռոսովմական Եկեղեցւոյ:

Նիկողայոս արար և յայտնադոյն և ս յաւելուած մի ի կոնդակն իւր, ասելով թէ բացատրութիւնն տուեալ ի նմին կանոնաց Փրանկիսկոսի՝ պարտի ունել զօրութիւն մշտնջենաւոր, և ոչինչ ընդհատ յայոց կարգադրութեանց կամ կոնդակադրոց պարտին ընթեռնուլ զայն և ըստ բառիցն բացատրել ի դպրոցս: Անդ սպառնալեօք զըկման ի հաղորդութենէ արգելեալ էր ամենայն մեկնարանութիւն հակառակ բառական իմաստից բացատրութեան պապին:

Զիք ինչ բնաւ տեղի երկրայութեան՝ զի Նիկողայոս Գ այսու գործով եղեալ էր ի մտի առնել զհամոզիսական ինչ վըճուահատութիւն. քանզի ի բացատրութեան անդ իւրում ոչ թէ միայն ընդ Փրանկիսկեան կարգին խօսէր, այլ և առ զըպրոցս կամ համալսարանս և ընդհանրապէս առ համօրէն Եկեղեցին ուղղէր զբանս իւր:

Ետ այնորիկ Աղէմէս Ե կրկնեաց ի կոնդակին իւրում՝ որոյ սկիզբն է. «Նլի ի դրախտէն», զկարգադրութիւն յաղագս անցանելոյ իրաւանց սեպհականութեան ստացուածոց Փրանկիսկեանց առ Եկեղեցին Լոսովմայ: Յովհաննէս ԻԲ, ի կոնդակին որ սկսանի բառիւս «Ոմանց», նոյնպէս հաստատեաց թէ այն սահմանադրութիւն Նիկողայոսի Գ, և Աղեմայ Ե, օգտակար է, անլուծանելի է և բացայայտ է: Այլ յետ սակաւուց իրրև գժտեցաւ Յովհաննէս ընդ Փրանկիսկեանսն, մասամբ վասն այնորիկ՝ զի ջանայր չափաւորել զտարապայման և զբթմէ ծաղրական հետեւողութիւն աւետարանական աղքատութեան, և մասամբ վասն այնորիկ՝ զի ի միջոյ միաբանից այնր կարգի սկսան լսելի լինել ուժղին պարսաւանք անկարգութեանց պապական պալա-

տանն, և պահանջմունք ընդարձակ վերանորոգութեան Եկեղեցւոյ, յայնժամ սկսաւ նա առ սակաւ սակաւ խախտել զսահմանադրութիւնն Նիկողայոսի՝ որչափ կարողն է առնել առանց նուազեցուցանելոյ զյարգանս իւր առ նա : Յառաջ քան զամենայն երարձ զարգելս զւր եղեալ էր Նիկողայոս՝ մեկնարանելոյ ոչ ըստ բառից և ըստ տառից զիւրն բացատրութիւն կանոնաց Փրանկիսկոսի, առ որ եղան և բանադրանք. ապա ըսկսաւ դատաքննել և զոմանս ի յօդուածոց բուն իսկ սահմանադրութեանն : Այնուհետև ջերմաջերմ՝ վիճարանութիւնք երթալով երթային և սաստկանային. Հռէքրէմէն \* ) անուանեալք՝ դաշնակցեալք ընդ Լուզովիկոսի Պաւարիացւոյ՝ սկսան հերետիկոս կոչել զպապն Յովհաննէս : Յայնժամ և նա ի ձեռն նորոյ կոնդակի յայտ արար՝ թէ անհնար է դնել զանազանութիւն ի մէջ սոսկ վայելման իրին, և իրաւունս սեպհականութեան ունելոյ ի վերայ նորին, և թէ հարկաւոր իսկ ոչ է այն՝ ոչ վասն քրիստոսական Եկեղեցւոյ, և ոչ վասն քրիստոնէական կատարելութեան, և ի վերջ բանիցն հերքեաց իբրև հերետիկոսական և հակառակ Եկեղեցւոյ զվարդապետութիւն նախորդացն իւրոց, որպէս թէ Քրիստոս և առաքեալքն օրինակք եղնն բանիւ և գործով այնմ ազքատութեան յոր դէտ ակն ունին Փրանկիսկեանք :

Եւ այսպէս ընծայէր Եկեղեցին խռովայոյղ իմն տեսարան. զի մին ի պապից ուղղակի ամբաստան լինէր զայլոցն պապից իբրև զմոլորամտաց : Զայն ինչ զոր Նիկողայոս Պ, և Աղէմէս Ե, հանդիսական վճռահատութեամբ հռչակէին իբրև զգործ իրաւացի, և սուրբ, զնոյն այլ ոմն պապ յետ ժամանակաց զատապարտէր իբրև զվնասակար ինչ և զանիրաւ : Փրանկիսկեանքն վերստին առաւելագոյն և սաստկութեամբ ամբաստան եղնն զՅովհան-

(\*) : այս անուն իւրէին զանյննս սմանէ ի կրօնաորոցն Փրանկիսկեանց, ի շշանակ աւելի իմն հաբեախրութեան խաբեանց և կանոնապահութեան :

նէ ԻԲ, իբրև զՏերետիկոսէ. զի ասէին թէ «Որ ինչ միանգամ վճռեալ է հաւանութեամբ և իմաստութեամբ պապից, զայն մի իշխեսցէ արկանել ընդ երկրայութեամբ յաջորդն նոցա, (42)» :

Բայց Յովհաննէս ԻԲ զատապարտեաց զգրուածս մեծագունի մասին աստուածաբանից նոցա, որպիսի էր՝ օրինակ իմն Տ՛Օ-լիվա, և պատասխանի արար համօրէն եղբայրութեան Հոգևորեանցն և Ֆրաթրիչկեանց — որպէս անուանէին զանձինս հետևողքն այնորիկ տարապայման աղքատութեան, — կրօնաքննութեամբ. քանզի յամեն 1516. ջամն 1552, հարիւր և չորք անձինք ի նոցանէ ի հուր պրեցան իբրև նահատակք աւետարանական աղքատութեան ի թիւր միտս առեղջ, և պապական անսխալութեան. իբր զի նորա առաջինք էին յայնժամ ի ջատագովս այնր վարդապետութեան, որ այն ինչ զեռ ևս ի վիր երևեալ էր յեկեղեցւոջ : Յետ երկար և ծանր ծանր հալածանաց Հոգևորեանքն ընկալան ի Սեքստոսէ սակաւ ինչ զիւրութիւն. քանզի պապն այն հրամայեաց արկանել ընդ քրննութեամբ զգրուածս աստուածաբանին նոցա և մարգարէի՝ Տ՛Օ-լիվայի, և հակառակ վճռոյն Յովհաննու ԻԲ՝ վկայեաց զնոցանէ ուղղափառս զոյ : Յապա ժամանակս դարձեալ զրաւեցին պապքն ընդ ձեռամբ եկեղեցւոյն Հոռովմայ զայնոսիկ ի ըստացուածոց կարգին՝ յորոց հրաժարեալ էր Յովհաննէս ԻԲ :

Մին յընդարձակագոյն վաւերական թղթոց պապից ի խընդիրս հաւատոյ՝ է կոնդակն պապին եւղինէոսի — Հայոց, տրուեալ ի 22 Նոյեմբերի 1459 ամի, այսինքն յետ երից ամսոց զինի աւարտման Փլորենտեան Ժողովոյն : Դաւանութիւն է այն հաւատոյ եկեղեցւոյն Հոռովմայ, որպէս թէ հանգերձեալ էր լինել վասն Հայոց իբրու թեղ իմն առաջնորդիչ առ վարդապետութիւնս՝ նկատմամբ խնդրոցն այնոցիկ՝ յորս նորա մինչև ջայնժամ տարածայնէին : Ի դասնանքն անգ առաջի եղեալ ևն վարդապետութիւնք յաղագս միութեան էութեանն Աստուծոյ, յաղագս երրորդութեան, յաղագս մարդեղութեան Փրկչին և յաղագս եօթն խորհրդոց, Ի նմին կոնդակի և զայս ևս ասէ պապն՝ թէ հրատարակեալն այն յիւրմէ կոնդակ կամ

վճիռ՝ հաստատեալ է ի Փողովոյն, այսինքն յայնոցիկ եպիսկոպոսաց Իտալացւոց՝ զորս տակաւին կալեալ ունէր նա ի Փըլորենտիա :

Երդ եթէ պապական կոնդակն այն արդարև կանոն էր հաւատոյ, արևելեան Եկեղեցին փոխանակ եօթն խորհրդոց ունէր արդեօք խորհուրդս չորս և եթէ, իսկ արևմտեան Եկեղեցին յընթացս գէթ ութ հարիւրոց ամաց կացեալ մնացեալ էր զուրկ յերկոց խորհրդոց, յորոց մի է այն՝ առանց որոյ պակասին նշանակութիւնք և այլոցն չորից խորհրդոց՝ բաց ի միոյն : Քանզի Եւզինէոս Պ սահմանէ յայնմ կոնդակի զձև, զնութ և զիսկութիւն խորհրդոց, զորոց զոյութենէն կամ զանզոյութենէ կախեալ կայ և զոյութիւն նոցին իսկ խորհրդոցն : Ընդունի նա զայնպիսի ձև խորհրդոյ զրոշմին, որ ոչ երբէք լնալ է ի միումն յերկուց մասանց Եկեղեցւոյ, և ի միսումն մտեալ է կիրառութիւն նորին զկնի տասներորդի դարուն և եթէ : — Զնոյն առնէ և ի խօսելն զխորհրդոյ ապաշխարութեան : Երբև հաւան մասն խորհրդոյն աստանօր և ստեալ լինի նմին ձև մի այնպիսի՝ զոր յունական Եկեղեցին ոչ երբէք զիտաց, իսկ արևմտեանն ոչ զիտէր յընթացս մետասան դարուց : Եպա ուրեմն եթէ ի խորհուրդն ձեռնադրութեան հպկն յանօթս և բանքն ասացեալք ի նմին պահու համարին իբրև էական ինչ և կարևոր ձև, աստի զհետ գայ թէ յընթացս հազար ամաց Եկեղեցին Լատինացւոց ոչ ունէր յինքեան ոչ քահանայս և ոչ եպիսկոպոսունս : իսկ յունականն՝ որ ոչ երբէք ընկալեալ էր զայնպիսի սուղորութիւն և ցարդ ևս ոչ ունի, բաց ի մկրտութենէ, թերևս և բաց ի պսակէն՝ ոչ ունի ամենևին խորհուրդս Եկեղեցւոյ \*) 45) :

(\*) Աս է պարզաբոյնս իմանալոյ զայս հարստաք թանկ՝ արժան համարելի յոչ առնել զի ո. յարեւելեան եկեղեցեա զբարոշմն ոչ եպիսկոպոսան որայ մկրտելոց, որպէս առ Լատինս է սուղորութեան, և որպէս պահովէ Եւզինէոս ի կոնդակն, այլ շահանոյն. Թ. զի զնե-

Նշանաւոր իմն է՝ զի այս կոնդակ, յորոյ ի կանգուն կալն կանգնի, և յանկմանն անկանի յեկեղեցւոյ անսխալութիւնն պապական կամ բովանդակ իսկ եկեղեցական դասակարգութիւնն հանդերձ իւրովքն խորհրդովք, յամենայն աստուածաբանից ի վկայութիւն կոչեցեալ և կամ հերքեալ է. և սակայն արքանեակքն անսխալութեան պապին ոչ երբէք ձեռնարկեալ են ի բացատրութիւն նորին, ոչ Բելլարմինոս, ոչ Շարլաս, ոչ Ակուիր, ոչ Օրսի և ոչ բնաւ այլ ոք ի ջատագովից հռովմեական պալատանն ոչ է խօսեցեալ զայսմանէ:

Ի ժամանակի անդ՝ յորում պապքն Հռովմայ սկսանէին հղօրագոյնս պահանջել, զի անսխալութիւն իւրեանց ընդունելի լինիցի ամենեցուն, Սեքստոս Ե յանկարծակի իմն անկաւ ի վարանս տարակուսի ի հրատարակել անդ իւրում զաստուածաշունչն: Քանզի ժողովն Տրիդնտեան յայտ արարեալ էր՝ թէ թարգմանութիւնն Հերոնիմոսի է վաւերական բնագիր աստուածաշնչին վասն արեւմտեան եկեղեցւոյ, բայց չև ևս գոյր ի միջի տպագրութիւն ինչ Լատին աստուածաշնչի հաստատեալ յեկեղեցւոյ իբրև հաւատարիմ կամ վաւերական: Սեքստոս Ե ձեռն կարկ յայն տպագրութիւն, և աստուածաշունչն ի լոյս

նորոգութեանն արեւելեայ: համարէն իւրեան ման խորհրդոյ խորհիւն, և ոչ զընդունութեան անօրոյն և սպասաց, զոր խորիւ պահանջին այժմ Լատինս. և ք. զի ի խորհուրդն ապաշխարութեան զընթացն և զիստաօգնանութեան մեղացն և զաղաշխարանս համարին արեւելեայ: Իւրեորս առ իւրութեան խորհրդոյն, և ոչ զարձայմանն և ելի զյե, որպէս Եւֆրեմուս համարէ: Ապա՛ էն գոյնպէս հասարայր, առ Եւնաս, և արեւմտեանն Եփեղեցի մինչև ցատորս Եւֆրեմուս, սպա որեմն զսոր գոյնն օրինակի զարբի մայր և նա ընդ գորս Բազուս յեբեցն այնոցիկ խորհրդոց, ի գրուշեմ, և ի յեռնաորոգութեան և յաղաշխարութեանէ. իսկ ի պայտսել վաւերութեան յեռնաորոգութեան Կահմայից՝ հարչուս անվաւեր և անզոր մայրն և այլ ամենայն խորհուրդուն՝ Բաց ի մկրտութեանէ, արդէ: Իսկ պապին խորհրդոյ:

ընծայեցաւ զարդարեալ սոփորական անաթեմայիւք և բռնազբօսութեամբք : Ի կոնդակի նորին հրատարակեալ էր՝ թէ այն տպագրութիւն ուղղագրեալ ձեռամբ նորին իսկ պապին՝ պարտի առեալ լինել յօրինակ ամենեցուն՝ ընդ սպառնալեօք նըզովից, իբրև միմիայն ստոյգ և վաւերական բնագիր, և որ և իցէ փոփոխութիւն ի նմին թէպէտ և միոյ և եթ բառի՝ պարտի անկանել ընդ պատժով բանադրանաց :

Բայց տեսաւ իսկոյն՝ զի տպագրութիւնն այն լի է սխալանօք, և դտան ի նմա իբր երկու հազար անուղիղ տեղիք, որոց պատճառ ինքն իսկ պապն եղեալ էր : Հարկ ուրեմն էր հրապարակաւ խափանել և արգելուլ զՍեքստեան աստուածաշունչն . բայց Բեկլարմինոս խորհուրդ ետ հեռացուցանել ըստ կարի զվտանգն՝ յոր արկեալ էր Սեքստոս զՆկեղեցին . ուստի վճռեցին յետ ժողովի ի վաճառմանէ զամենայն օրինակս աստուածաշնչին այնորիկ, և նոր ի նորոյ տպագրել աստուածաշունչ ուղղագրեալ ընդ անուամբ Սեքստոսի Ե, բացատրելով ի յառաջարանին՝ թէ անուղղութիւնն առաջնոյ տպագրութեանն յառաջ եկեալ է յանհոգութենէ շարագրաց և տպողաց : Ինքն իսկ Բեկլարմինոս ընկալաւ զյանձնարարութիւն զըրկոյ զյառաջարանն, և այնպէս հրատարակեցաւ ստութիւն՝ յորոյ վերայ նորընտիր պապն եղ զանուն իւր :

Եզուիթն այն կարգինալ Բեկլարմինոս պարծի յինքնագիր կենսագրութեան իւրում՝ թէ այսու եղանակաւ հատոյց նա Սեքստոսի զըարութիւն ընդ չարութեան . քանզի պապն ընդ արգելմամբ արկեալ էր զգլխաւոր գրուածն Բեկլարմինոսի, յորում ցուցանէր նա թէ պապին անուղղի և եթ անկ է տիրապետութիւն ի վերայ ամենայն աշխարհի . բայց և յայսմ պատահաց նոր իմն ձախորդութիւն . քանզի կենսագրութիւնն Բեկլարմինոսի գրեալ նորին իսկ ձեռամբն՝ պահեցաւ ի դիւանս Եզուիթացն Հռովմայ, և հրատարակեցաւ ի Հռոմ յերկուս պատճէնս գաղափարեալս անտի : Վասնորոյ կարգինալն Աձձուլինի առաջարկեաց՝ զի գրուածն այն Բեկլարմինոսի, որ զերիս պապս խայտառակէր, և զերկուս այլս (զԳրիգոր ԺԳ, և զՎրե-

մէս Ը,) ստախօս ցուցանէր, — բարձցի ի միջոյ և պրեսցի, և այս ամենայն թարուցեալ մնացէ ի գաղտնիս 44) :

Գ.

Պրուծիւն Եպիսկոպոսաց Հռովմայ ի նախնի Եկեղեցւոջ : — Բազմադարեան լուծիւն զվճռոց եւ զհանգամանաց պապիցն յԵկեղեցւոջ : — Խնդիրը զգատկէն, զապաշխարութենէ, եւ զմկրտութենէ հերձուածողաց : — Մոլորութիւն Լիբերիոսի պապին, եւ շփոթը ի պատճառս արիանոսաց : — Զօրութիւն նախնի Ժողովոց եւ անջօրութիւն պապից : — Պեղազեանցն մոլորութեան խնդիրը : — Աղղեցութիւն Լեոնի ի Ժողովն Քաղկեդոնի. — Վիգիլիոս եւ երեք զուխրն : — Մոլորութիւն Միակամեաց եւ Ո՛նորիոսի պապին : — Աղբիւնոս Ա, եւ խնդիր յարգութեան պատկերաց : — Խնդիրն յուզեալ դասառւածային նախասահմանութենէ :

Յընթացս 15 դարուց տիրապետեալ էր յԵկեղեցւոջ և յԵկեղեցական մատենադրութիւնս զարմանալի իմն լուծիւն զայնպիսեոյ ծանր և կարևոր նիւթոյ՝ որպիսի է անսխալութիւն պապին : — Եւ ոչ ի միում ուրիշ ի նախնի դաւանութեանց հաւատոյ, և ոչ ի միում քրիստոնէական վարդապետութեան, և ոչ ի միում զրուածի Հարցն սրբոց, որ շարագրեալ իցէ վասն կրօնական կրթութեան ժողովրդոց, չիք և մի բան զպապէն ասացեալ : Զիք և ոչ ինչ ակնարկութիւն՝ թէ ի նմանէ միայն պարտ է առնել զհաստատութիւն հաւատոյ և վարդապետութեան : Ոչ զոյր յընթացս առաջնոցն հազար ամաց բընաւ ամենևին և ոչ մի ինչ խնդիր վարդապետական որ վըճռեալ իցէ միայն սահմանադրութեամբ պապին :

Յայն ամենայն յուզմունս շփոթից որք եղնն յԵկեղեցւոջ յերեսաց Վնոստիկեան աղանդաւորաց (Մոնտանեանց և Հարամեայց) եպիսկոպոսունը Հռովմայ ոչ բնաւ եղնն մասնա-

կիցք : — Ի պատմութիւնս առաջնոցն չորիքհարիւրոց ամաց ոչ է տեսանել Հետս անգամ գոյութեան որպիսեց և իցէ պատպան կոնդակի : Կրօնական հակառակութիւնք ընդդէմ Պօղոսի Սամոսացւոց, որք ընդ երկար ժամանակ յուզեցին զարեւելանն Եկեղեցի, և պատճառք եղեն զումարման Ժողովոց բազմաց, պատահեցին և աւարտեցան առանց իրիք կցորդութեան պապիցն Հռովմայ : — Ըստ նմին օրինակի ոչ գոյ գտանել և ոչ զմի ապացոյց առ այն՝ թէ եպիսկոպոսունք Հռովմայ միջամուխ լիալ իցեն և ի միւսն յայն վէճ՝ հակառակութեան, որ ձգեցաւ զամս հարիւր և յիսուն ընդդէմ Արտեմնի, Նոյնտիոսի, Սարելի, Բերկլիոսի, Աունկիանոսի Անտիոքացւոյ և այլոց : Միմիայն վարդապետական գրուած ի ժամանակին յայնմիկ ի կողմանէ Հռովմայեցոց է ճառն Գիոնիսիոսի եպիսկոպոսին Հռովմայ : Եթէ ճառն այն Գիոնիսեայ առնոյր յայնժամ զընդհանրական ինչ նշանակութիւն, կարող ջնջել զմոլորութիւն արիանոսաց, և անդէն ի սկզբան խափանել զհերձուածն զայն : Սակայն ոչ ումք ծանօթ էր ճառն արտաքոյ Աղէքսանդրիոյ, վասնորոյ և ինչ ոչ ազդեաց ի վերայ առաջիկայ վիճմանց և հակառակութեանց զմասանց հաւատոյ. և առ հասարակ որք զիտակ իցեն այնմ՝ զիտեն զայն միայն ի հատուածոց անտի՝ զորս ի մեջ բերէ սուրբն Աթմանաս :

Եկեղեցին Հռովմայ յառաջին դարս անդ եռանդազին իմն եղանակաւ միջամուխ եղև յերիս միայն ինդիրս. այսինքն ի ինդիր տօնի զաակին, մկրտութեան հերետիկոսաց, և սպաշխարութեան : Յերեսին իսկ ինդիրսդ յայդոսիկ ոչ կարաց նա կատարել զկամս իւր, և պարտաւորել զայս Եկեղեցեաց յընդունել զիւրն սովորութիւն. և թեպէտ եպիսկոպոսն Վիկտոր ստիպեաց բանադրանօք զԵկեղեցիս փոքրուն Ասիոյ՝ տօնել զզատիկն ընդ հռովմեական Եկեղեցւոյ, բայց ջանք նորա ի գերեկելն :

Վէճն որ յաղագս եկեղեցական ապաշխարութեան, այսինքն յաղագս առաւել կամ նուազ տւողութեան նորին (օրինակ իմն՝ թէ չիցէ՞ պարտ արգեօք զյանցանս ինչ կարի իմն

ծանունս պատժել բանադրանք մինչև ցմահ յանցաւորին), այն վէճ ասեմ ձգեցաւ ընդ երկար ժամանակ՝ [Թէ ի Հռովմ և Թէ յայլ տեղիս: Սակայն որչափ արդեօք ցանկային ի Հռովմ՝ ընդունելի առնել ըստ այսմ մասին զիւրեանցն կարծիս այլոցն Եկեղեցեաց՝ ոչ է յայտ: Անդէն իսկ ի չորրորդի դարուն սպանիական Թողովն Ելուիրեան սահմանեաց և առ այն զկանոնս՝ որք բոլորովին հետ ի են ի կանոնաց Եկեղեցւոյն Հռովմայ:

Աէճն ծագեալ ի միջի անդ երրորդի դարուն յաղագս վաւերականութեան մկրտութեան հերետիկոսաց՝ ունէր զձև բոլորովին վարդապետական. և յայնժամ յայտնապէս ասացաւ զոր ինչ միանգամ կարծիս ունէր Եկեղեցի՝ [Թէ՛ զզօրութենէ խորհրդոց և [Թէ զպայմանաց վաւերականութեան նոցին: — Բողբ Ստեփանոսի պապին ընդդէմ սահմանադրութեանց Եկեղեցեացն Ափրիկէի և Ասիոյ յաղագս անվաւերութեան մկրտութեան հերետիկոսաց՝ ոչ յաջողեցաւ: Պամեցաւ իմն պապն բանադրել զԵկեղեցիսն զայնոսիկ իբրև զհերձեալս ի հաղորդութենէ Եկեղեցւոյ. բայց եպիսկոպոսունք Ափրիկեայ և Ասիոյ խտտազոյն կշտամբանօք յոտն կացին ընդդէմ այնպիսոյ ապօրինաւոր պահանջման. Վիպրիանոս և Փիրմելիանոս պատասխանեցին նմա՝ [Թէ ոչ ունի նա իրաւունս՝ հարկադրել զայլս Եկեղեցեաց և եպիսկոպոսաց յընդունելութիւն վարդապետութեան իւրոյ, և բազումք յարեւելեան Եկեղեցեաց անփոյթ արարեալ բոլորովին զհռովմէական վարդապետութեամբն՝ կացին մնացին ի սովորութիւնս իւրեանց: — Չայնմ վիճարանութենէ ասէ Օդոստինոս՝ [Թէ դատավճիռ պապին որբան և բացայայտ բանիք իցէ ասացեալ, ոչ է տակաւին սահմանադրութիւն Եկեղեցւոյ, և [Թէ ըստ այսմ Վիպրիանոս և Ափրիկեցիքն ունէին լիուլի իրաւունս մերժելոյ զայն միայն սահմանադրութիւն մեծի Թողովոյն (որով իմանայ աստանօր Թողովն Արեւատայ յամին 514) ունի զընդհանրական զօրութիւն պարտաօրիչ 45):

Ի վիճարանութիւնս ընդդէմ արիանոսաց որք յերկարաձգեցան զամս աւելի քան զհարիւր և յիսուն, և որոց վասն

եղին ժողովք աւելի քան զյիսուն, աթոռն Հոռովնայ չեղև ինչ կցորդ գործունեայ եղանակաւ : Ոչ պապն Սեղբեստրոս (514—535) և ոչ նախորդք նորա (269—514) ոչ թողին և ոչ զմի ինչ գրուած, և ոչ զմի նշան կցորդութեան իւրեանց ի գործս Եկեղեցւոյ : Միայն Յուլիոս և Լիբերիոս լուծին զըռուութիւն նախորդացն իւրեանց . բայց և յայնժամ աճեաց այնու վտանգն Եկեղեցւոյ . քանզի Յուլիոս յայտ արար ի ժողովի՝ թէ ուղղափառ է Մարկեղոս Անկիւրացի՝ աշակերտն Սարկի . իսկ Լիբերիոս դարձաւ յաքսորանաց՝ դատապարտելովն զԱթանաս, և ստորագրելով արիտական դաւանութեան հաւատոյ : «Անաթեմայ, նդովեալ եղիցիս, ս՛վ Լիբերիէ,» գոչեցին յայնժամ լի ցամամբ եպիսկոպոսունք արևմտեայց, ընդ որս և Իլարիոս եպիսկոպոս Փուաթիէ քաղաքի Գաղղիոյ : Այս մոլորութիւն Լիբերիոսի ի հաւատոց ընդ ամենայն ժամանակս միջին դարուց եղև նոր պացոյց՝ թէ պապ և ս հանդոյն այլոց ի մարդկանէ կարող է անկանել ի հերետիկոսութիւն :

Ապա յետ չարաբաստիկ ելից ժողովոյն որք եղև ի Մեզիոյան, ի Սիրմիոն, յԱրիմինի և ի Սելեկիա, վստահութիւն հաւատացելոց ի ժողովան յայնստիկ իբրև ի մի միայն գործիս ճշմարիտ վարդապետութեան այնպէս զրդուեալ խախտեցաւ, զի Հերոնիմոս գրէր, «Աճիւք ժողովոցն այնոցիկ արիտասկանք գտան, և զարմանք կալան զաշխարհ ամենայն,» : Վարելի էր արդեօք սպասել՝ թէ յետ այնպիսի դիմաց հաւատացեալքն և Եկեղեցիք ամենայն աշխարհաց խռովեալք և տարակուսեալք զիմեացն առ պապն ի խնդրել զխորհուրդ և զօգնութիւն նորա իբրև զմիակ խարսիսի փրկութեան և ապաւինի ուղղափառութեան . սակայն ոչ պատահեցաւ բնաւ այնպիսի ինչ . այնպէս զի յամենայն ճառախօսութիւնս և ի ժողովական խորհրդածութիւնս յԱրիմինի և ի Սելեկիա՝ յամին (559) անուն իսկ պապին ոչ յիշատակեցաւ և ոչ մի անգամ : — Միայն յետ քանի մի ամաց եցոյց պապն զնշանս կենդանութեան, յորժամ գովեաց զգնացս ժողովոյն Աղէքսանդրիոյ ընդդէմ եպիսկոպոսաց Արիմինեան ժողովոյն 46) :

Ի բուխանդակ ընթացս չորրորդի դարուն ժողովքն միայն էին որ լուծանէին զխնդիրս հաւատոյ. և եթէ զիմէին երբէք առ եպիսկոպոսն Հռովմայ՝ իբր խնդրելով զլուծումն, յայն միտս և եթ առնէին զայն՝ զի նա զուամարեացէ զԺողով, և ժողովն տացէ զհայցեալն պատասխանի. — Յերկրորդումն տինգերական ժողովի, որ սահմանեաց զվարդապետութիւնն որ յաղագս Հոգւոյն սրբոյ, և ոչ իսկ գտաւ որ նուիրակ ի զիմաց Եկեղեցւոյն Հռովմայ. ուստի որպէս այլոց Եկեղեցեաց՝ նոյնպէս և նմա հաղորդեցին զվճիռս ժողովոյն: Թէպէտ և յերկուս ժողովս Հռովմայ առ Իւանաստիւ (578) կարգեցան քանի մի նզովք ընդդէմ մելորութեանց՝ որոց հեղինակքն ոչ յիշատակին, սակայն պապն Սիրիկիոս (384 — 393) ոչ էառ յանձն հատանել զվճիռ զմղար վարդապետութենէ եպիսկոպոսի ուրումն, վասն զի ոչ ունէր առ այն իրաւունս ինչ, և լաւ համարեցաւ առնուլ նախ զկարծիս եպիսկոպոսաց զաւառացն, որպէս զի և զիւրն դատաստան յարմարեացէ դատման նոցին 47). — Իսկ ի Հռովմ թէպէտ նա ինքն հերքեաց զնոր մելորութիւնն Յովիանոսի, սակայն դարձեալ ի ձեռն ժողովոյ արար զայն:

Առաւել քան յայլ ամենայն խնդիրս ժամանակացն առաջնոց՝ միջամուխ եղին պապքն ի մրցմունս ընդդէմ Պեղագեանց, Իննովկենտիոս Ա, հրաւիրեալ յեպիսկոպոսացն Ափրիկեցւոց, հաստատեաց զվճիռս երկոցուն ժողովոց նոցա՝ զուամարեոց ի Միլենէ և ի Վարթագինէ (417) և զգրուածն Պեղագիտի դատապարտեաց իբրև զհերետիկոսական. այնպէս զի Օգոստինոս ասաց ի միումն ի քարոզութեանց իւրոց. «Այժմ՝ գործն աւարտեցաւ», 48): Սակայն չէք երկրպարութիւն՝ զի սխալեաց նա. քանզի վէճն յայնժամ մանաւանդ բորբոքեցաւ ամենայն սաստկութեամբ, և աւարտեցաւ զկնի ամաց բազմաց վճռով տինգերական ժողովոյ յամին 451. — Պապն Զոսիմոս ասաց զկարծիս իւր զվարդապետութենէ Պեղագեանց բողոքովին ի հակառակ միտս անմիջական նախորդին իւրոյ, Իննովկենտիոսի Ա, Մեծաւ գովասանութեամբ խօսեցաւ նա զպապէն Պելիտիստոսէ, որ ուրանայրն զսկզբնական մեղս, և վասն այնորիկ ամ-

բաստաննալ լինէր իբրև զհերետիկոս. իսկ զԵպիսկոպոսունան Ափրիկեցւոց ամբաստանէր և պարսաւէր վասն այնորիկ՝ զի համարձակեցան զայնպիսի այր ուղղափառ ընդ մոլորեալս համարել, Ափրիկեցւոցն եպիսկոպոսունք խստազոյնս արարին պատասխանի Ջոսիմոսի՝ թէ նա ինքն մոլորեալ է, և թէ ինքեանք կան և մնան հաստատուն ի կարծիս և ի վճիռս իւրեանց. ապա ի Ժողովն Վարթագինեայ վերստին նշույնցին զմոլորութիւն Պեղագիոսի և Աելեստինոսի, և յայնժամ և եթ միաբանեցաւ պապն ընդ վճռոյ նոցա :

Յորժամ Իննովկենտիոս Ա զատապարտեաց՝ որպէս ասացաքն՝ զվարդապետութիւն Պեղագիոսի, ասացեալ էր Օգոստինոս. « Այժմ գործն աւարտեցաւ : Չայս բան ի մէջ բերեն իբրև ապացոյց՝ թէ Օգոստինոս, որ մերժեալ էր զանսխալութիւնն պապական ի խնդիրն որ յաղազս մկրտութեան հերետիկոսաց, յայս խնդիր հաւանէր ընդ այն. սակայն գիտաւորութիւն այսպիսի հեռի էր ի նմանէ : — Պեղագեանցն աղանդ յաչս Օգոստինոսի այնպիսի իմն մոլորութիւն թուէր կորստական, զի վասն դատապարտելոյ զայն չէր իսկ պիտոյ գումարումն Ժողովոյ իբրք, որ աւելի իսկ էր հերձուածն այն յերկուց Ժողովոց Ափրիկեայ 49), ընդ որոց վճիռս հաւանեալ էր և պապն. ուստի և Օգոստինոս կարէր համարել զգործն աւարտեալ : Բայց թէ զվճիռն Հռովմայ ըստ ինքեան ոչ համարէր նա վաճառական ինչ՝ այնպէս զի ոչ կարօտիցի այն ժողովական հաստատութեան, նա ինքն յայտնապէս ցուցանէ յաղում տեղւոջ, և զնացք եպիսկոպոսացն Ափրիկեցւոց ընդ Ջոսիմոսի պապին առաւել ևս հաստատեցին զնա ի կարծիս նորին :

Թամէն 450 մինչև ցվախճան եթմեբորդի դարուն յերկարաձգին վիճարանութիւնք յաղազս մարդեղութեան Բանին և միաւորութեան երկուց բնութեանց ի Բրիտոս, և յայնմ իսկ ժամանակէ սկսանի նոր շրջան վարդապետական գործունէութեան պապից : Պապն Աելեստինոս զատապարտեաց զաղանդն նետորի. բայց այն դատապարտութիւն ոչ ինչ ազդեաց՝ մինչև ցգումարումն ընդհանուր Ժողովոյ : Տիեզերական Ժողովն

Եփեսոսի, որ եղև յամին 454, քննեաց զայն դատապարտութիւն և հաստատեաց, — Իբրև ի վեր երևեցաւ մոլորութիւնն Եւտիքեայ, մեծն Լևոն գրեաց առ Փլարիանոս թուղթ (որ առաջինն է ի վարդապետական կոնդակս պապից), զոր թէպէտ ընդհանրապէս զովլութեամբ ընկալան արևելեայք և արևմտեայք, սակայն ոչ յառաջ՝ այլ զկնի որոյ քննեցաւ ի ժողովն Քաղկեդոնի, Ինքն իսկ Լևոն խոստովանէր՝ զի թուղթ նորակամ տուամբն՝ առ ի լինելոյ հաստատուն կանոն հաւատոյ՝ կարօտի առնուլ զնոյնպիսի հաստատութիւն և ի կողմանէ եպիսկոպոսաց 30) :

Ոչ նոյնպէս բարեբաղդ գտաւ պապն՝ Վիգիլիոս ի վէճն որ յաղագս Երից զլիոց . քանզի նեստորամիտ գրուածս Ինոզորի, Թէոդորինտեայ և Իբասայ իսկզբանն (346) հրատարակեաց նա ուղղափառական լինել, ապա յետ միոյ ամի դատապարտեաց . յետ այնորիկ (յամին 353) զարձեալ հրատարակեաց զնոսին ուղղափառս գոլ . որով և հակառակեալ գտաւ սահմանաց հինգերորդի տիեզերական ժողովոյն, որ կարճեաց կամ արդել զեկեղեցական հաղորդակցութիւն ընդ նմա, — Ի վերջոյ հնազանդեցաւ նա վճռոց ժողովոյն, և հրատարակեաց՝ զի մինչև ցայնժամ լիալ էր զործի սատանայի ի կործանումն Եկեղեցւոյն Աստուծոյ, և տարածայնեալ էր եղբարցն իւրոց յեպիսկոպոսաց, և թէ այժմ լուսաւորեաց զնա Տէր 31) : Այսպէս ահա պապն Վիգիլիոս երիցս անգամ հակառակ անձին իւրում խօսեցաւ, մինչև կայսրն և ժողովն յաղթահարեցին զպապն փոփոխամիտ : Լեւուանք իրացս այն եղին՝ զի անկաւ յարևմուտս բազմամեայ հերձուած և բաժանումն . քանզի տեղական Եկեղեցիք Ափրիկոյ, հիւսիսային Իտալիոյ և Կիբրիկէի խորշեցան յունելոյ հաղորդակցութիւն ընդ պապից՝ որք դատապարտութեամբ Երից զլիոցն որպէս թէ առտոն հարեալ էին զհաւատս և զհեղինակութիւն ժողովոյն Քաղկեդոնի : — Յաջորդն Վիգիլիոսի Պնդագիոս Ա, որոյ ուղղափառութիւնն կասկածելի էր յաչս արքային Գաղղիոյ և եպիսկոպոսացն զաղղիացւոց, ոչ մտարբերեաց քնաւ ստել՝ թէ եպիս-

կոպոսունք Հոռովմայ անսխալականք են. ընդ Հակառակն առաջի արար զգաւանութիւն իւր արքային, և յայտ արար՝ թէ պատրաստ է ինքն միում միում՝ յեպիսկոպոսաց տալ զգաւանութիւն Հաւատոյ. Թէպէտ և ստէպ ստէպ և փութով պընդութեամբ յորդոր լինէին պապք եպիսկոպոսացն բաժանելոց և օտարացեալ Եկեղեցեաց զալ դարձեալ ընդ միմեանս և ընդ իւր ի միարանութիւն, բայց ոչ երբէք ի մէջ բերէին զառանձինն իշխանութիւն իւրեանց և զանսխալութիւն պապական աթոռոյն.

Մոլորութիւն Միակամայցն, որք ասէին՝ թէ ոչ են ի Քրիստոս երկու կամք՝ աստուածային և մարդկային, այլ միայն աստուածային, դարձեալ պատճառս ետ զումարման տիեզերական ժողովոյ (յամին 680). Անդէն իսկզբան ժողովոյն Մնորիոս պապ իբրև Հարցաւ յերիցն պատրիարքաց, ետ պատասխանի մոլորական, որով և մեծապէս նպատեալ եղև տարածելոյ աղանդոյն այնորիկ.

Թէպէտ և պապն Մարտինոս տակաւին և ս յամին 649, ժողովով Հարիւր և Հինգ եպիսկոպոսաց Հաւաքելոց ի Հարաւային և Հիւսիսային Իտալիոյ Հերքեաց զմոլորութիւն Միակամայցն, բայց քանզի մճիռն պապական ոչ Համարէր յայնժամ գերագոյն ինչ և անհակառակելի, կայսրն Վոստանդին Հարկ Համարեցաւ ժողով զումարել ի Վ. Պօլիս. ժողովն այն Հռչակաւ և մեծաւ Հանդիսիւ դատապարտեաց զՄնորիոս սակս Հերետիկոսական մոլորութեան նորա, և չգտաւ և ոչ մի զք որ բանայցէ զբերան ի ջատագովութիւն նորին, թէպէտ և ի ժողովի անդ էին և նուիրակքն պապին. Վարդապետական զբրուածքն Մնորիոսի ի Հուր դատեալ այրեցան իբրև ապականեալք Հերետիկոսութեամբ, և պապքն Հպատակեալ անհրաժեշտ Հարկին՝ ստորագրեցին ի նզովան, և ինքեանք իսկ փոյթ կալան՝ զի Հերետիկոսն Մնորիոս, դատապարտեալն յարեւելեան և յարևմտեան Եկեղեցւոյ՝ ի բաց ընկեսցի յեկեղեցական զրեւնոյ. Այս դէպք պայծառագոյն քան զլոյս ցուցանեն՝ զի յայնժամ չէր ինչ բնաւ յայտնի բովանդակ տիեզերական Եկեղեցւոյ զպապական անսխալութենէ. ուստի ջատագովքն անսխա-

լուծեան պապին (Թորքուէմատա, Բելլարմինոս և այլք) ոչ այլ ինչ ելն հնարից գտին առ այս՝ թէ ոչ կասկածել ընդ վաւերականութիւն ժողովական սահմանացն, և ասացին թէ Յոյնք խարդախեալ իցեն զնոսին։ Յայս կարծիս կացին մնացին աստուածաբանք կարգին Եղուիթաց մինչև ցկէս անցելոյ դարուն. բայց յորմէ հետէ բացէ ի բաց՝ հերքեցաւ այն, ձեռն արկին այնպիսի մեկնաբանութիւնս տալ բանիցն Ուորիոսի՝ որպէս զի կարելի իցէ քաղել յայնցանէ փոքր ի շատէ իմաստ ինչ ուղղափառական։ Յաջողեցան արդեօք ի գործն թէ ոչ, սակայն այս ինչ յայտնի է զի ի ժամանակս Ուորիոսի թէ տիեզերական ժողովն և թէ պապն ինքնին համոզեալ էին ընդ սխալականութիւնն պապական։

Յետ ամաց հարիւրոց պապն Աղրիանոս Ա, թէպէտ և զամենայն հնարս հնարեաց՝ զի վճիռքն երկրորդի ժողովոյն Նիկիոյ յաղաքս յարգութեան պատկերաց ընկալեալ լինին նաև ի մեծէն Կարողոսէ և յեպիսկոպոսացն Գաղղիոյ, բայց ոչ եղև զամազիտ. — ժողովն եկեղեցական գումարեալ ի Փրանկիորտիա յամին 794 հակառակեցաւ և մերժեաց զսահմանս երկրորդի նիկիական ժողովոյն, և պապն Աղրիանոս ոչ իշխեաց ընդդէմ կալ նմին և հերքել զբանս նորա։ Նաև յամին 824 եպիսկոպոսունքն ժողովեալք ի Փարիզ խստագոյն և անխնայ բանիք յարձակեցան ընդդէմ այլանդակ բանից պապին Աղրիանոսի, որ պատուէր տայր ընդունել զնոստի պաշտօն ըստ ասելոյ նոցա՝ պատկերաց 52)։

Ոչ ինչ ընդհատ յայդմանէ նշանական իմն է դրութիւն արևմտեան եպիսկոպոսաց ժամանակին և պապական իշխանութեան ի դէպս վիճարանութեան ծագելոյ յաղաքս աստուածային նախասահմանութեան։ — Ա. էճս այս՝ զոր յարոյց Վոլթալք կրօնաւոր, տեւեաց զամս տասն, և պատճառս ևս բազմաթիւ գրուածոց և ժողովոց։ Գերահռչակ եկեղեցականքն Հինկմարոս, Հռաբանոս, Ամողոս, Պրուդենտիոս, Անիզոս և այլք հակաճառէին ընդդէմ իրերաց, ժողովք ընդ ժողովս վիճարանէին, և հնար ինչ միաբանելոյ զնոսա չերևէր ի միջի։

Եւ սակայն ոչ որ մտաբերեաց դիմել յատեան զատաստանի պապին, որ յայնմ ժամանակի ախորժ հաճութեամբ միջամուխ լինէր ի գործս Եկեղեցւոյն Գաղղիոյ, միայն Առթշալք դիմեաց առ նա, — և այն ի զուր, որպէս զի մեղմեցի խտուրթիւն թշուառութեան իւրոյ :

Մինչև ցերեկ Իսիդորեան կոնդակագրոց ոչ որ ոչ ուրեք ձեռն էարկ ի հաստատութիւն նորամուտ վարդապետութեան Հոռովմայ յաղագս անխալութեան պապին, և նոքին իսկ պապքըն ոչ երբէք ածին զմտաւ՝ զայս առանձինն չնորճ սեպհականեցի ինքեանց : Առ այս հարկ լինէր՝ զի յարաբերութիւնք եպիսկոպոսաց Հոռովմայ առ Եկեղեցին հիմնովին առնուցուն զիոփոխութիւն : զի կարծիքն գերագահութեան պապին զայցեն ի հնութիւն, և զի յառաջագոյն պատրաստիցի երկիրն՝ յորում մարթիցէ սերմանել զսերմն վարդապետութեան զպապական անխալութիւնէ : — Այս վարդապետութիւն մեծաւ ջանիւ էառ տակաւ զաճումն, բայց և մեծաւ զանդաղութեամբ :

Ե.

Գերագահութիւն ի նախնի կազմութեան Եկեղեցւոյ : — Գումարումն ժողովոց : — Նախագահութիւն ի ժողովս : — Հաստատութիւն ժողովական վճռոց : — Պապական վճիռք զհաւատոց : — Օրէնսդրական, կառավարչական եւ դատողական իշխանութիւնք : — Լուծմունք օրինաց եւ արտօնութիւնք : — Իշխանութիւն բանադրանոց : — Իրաւունք վախճանական վճռոց : — Պապական դրութիւն : — Տեղական Եկեղեցիք, զորօրինակ Հայաստանեայցն, եւ կառավարութիւն նոցա : — Սկիզբն ընդարձակելոյ պապական իշխանութեան :

Որպէս զի տեսցեն ընթերցողք՝ թէ քանի ահագին զանազանութիւն է ի մեջ անուանեալ և իրական գերագահու-

Թեան պապին, թէ որպէս ձևացաւ այն ի հռովմեական Եկեղեցւոջ, և զոր կերպարանս էառ ի միջին դարս, շատ գրեցի մեզ ի մեջ բերել զառաջիկայդ հանգամանս իրաց :

Ա. Պապն Հռովմայ ոչ ունէր բնաւ մասնակցութիւն ինչ ի գործ գումարման Թողովոց : Ամենայն Թողովքն մեծամեծք՝ յորս գտան եպիսկոպոսունք յայլ և այլ աշխարհաց՝ գումարեցան հրամանաւ կայսերաց, որք ոչ երբէք հարցանէին յառաջագոյն զկամս պապիցն առ այն : — Յորժամ պապքն կարևոր համարեկին զգումարումն Թողովոյ, պարտական էին յայտնել զայն յառաջագոյն աղայանօք հանդերձ ի կայսերական պալատն (որպէս արարին զայս պապն Իննովկենտիոս ի գործն սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի և Լևոն պապ զինի Թողովոյ 449 ամի, բայց և յայնպիսի դէպս ոչ միշտ հասանէին ցանկութեան իւրեանց, որպէս պատահեաց այս և ընդ վերջիշեալ պապսն :

Բ. Նախագահութիւն ի Թողովս ոչ միշտ պապիցն տուեալ լինէր, թէպէտ և ոչ որ հակառակեր նախապատուութեան նոցա յԵկեղեցւոջ, նուիրակք պապին կալան զառաջին տեղի՝ միայն ի Թողովն Քաղկեդոնի (յամին 434) և Վ. Պօլսոյ (ի 680). իսկ ի Նիկիա, յՍփեսոս և ի հինգերորդ տիեզերական Թողովին (533 ամի) այլք կալան զնախագահութիւնն : — Այլ և ինքեանք իսկ պապքն ոչ երբէք յայտ արարին պահանջումն ինչ նահագահս լինելոյ, որպէս յայտ է այս ի գնացիցն Լևոնի Ա, որ առաքեաց ի Թողովն Սփեսոսի զնուիրակ իւր, թէպէտ և զիտելով գիտէր՝ զի ըստ կամաց կայսերն՝ զնախագահութիւն Թողովոյն ունելոց էր եպիսկոպոսն Ադէքսանդրիոյ :

Գ. Սահմանադրութիւնք Թողովոց, եթէ այնոքիկ որ պատշաճ էին վարձապետութեանց հաւատոյ, և եթէ այնոքիկ որ կանոնք էին բարեկարգութեան, ոչ կարօտ էին երբէք հաստատութեան պապից. վասն զի զօրութիւն և իշխանութիւն սահմանացն այնոքիկ հիմնեալ էր ի վերոյ միաձայն հաւանութեան Հարց Թողովոյն ընդ ուղղութիւն նոցին : Եւ քանզի այս եղանակ գործողութեան ոչ յոյժ ձեռնտու էր հռովմեա-

կան սկզբանց, հնարեցին ոմանք ասել՝ որպէս թէ վճիռք առաջնոյ տիեզերական ժողովոյն հաստատեցան ի պապէն Սեղբեստրոսէ :

Դ. Յառաջին հազար ամս Եկեղեցւոյ ոչ եղև և ոչ մի դիպուած՝ յորում պապքն եղեալ իցեն սահման ինչ վարդապետական որպիսի և իցէ ի պէտս համօրէն Եկեղեցւոյ, Վարդապետական յայտարարութիւնք նոցին, յորժամ հարկ լինէր դատապարտել զմոլորութիւն ինչ, էին պատասխանիք առ հարցմունս սակաւուց ոմանց կամ բազում եպիսկոպոսաց՝ և յայնժամ միայն լինէին նորին ընդհանրական կանոնք հաւատոյ՝ յորժամ ընթերցեալ լինէին ի ժողովի և առնուին զհաւանութիւն ժողովականացն :

Ե. Պապքն չունէին ոչ զօրէնսդրական, ոչ զկառավարչական և ոչ զդատողական իշխանութիւն : Միայն ժողովն Սարգիկեայ յամին 543 ետ պապիցն առիթ ի ձեռս բերելոյ զիշխանութիւն դատողական. քանզի յայնմ ժողովի սահմանեցաւ (թէպէտ և սահմանն այն ակնարկէր միայն յանձնական իրաւունս Յուլիոսի պապին), թէ պապն ունի իրաւունս ի ձեռն փոխանորդի իւրոյ ի դատ կոչել զեպիսկոպոս դք, և ի դէպս երկրորդ անգամ բողոքելոյ նորա հատանել զվախճանական վրձիւ : Բայց այս սահման ժողովոյն Սարգիկեայ ոչ եղև ընդունելի ոչ արևելեայց և ոչ Եկեղեցւոյն Ափրիկեայ. իբր զի արևելեայքն ոչ երբէք պահեցին զայն, և Ափրիկեցիք միշտ հերքեցին, և առ հասարակ մինչև ցերեկ խիզորեան կոնդակագրոց՝ կանոնն այն ոչ երբէք և ոչ ուրեք ունէր զոթ ազդեցութեան : « Հաստատութեամբ եղեալ եմք ի մտի, գրէին եպիսկոպոսունք Ափրիկեցւոց առ պապն Վոնիփակիոս Ա, յամին 449, չտալ մուտ այդպիսում ձեռներիցութեան, » 55) :

Ոչ երբէք մտաբերեալ է պապից ի գործ դնել զօրէնսդրական իշխանութիւն : Ըստ նոցին իսկ վկայելոյ՝ յարևմուտս ընդ երկար ժամանակ ունէին զզօրութիւն կանոնք առաջնոյ նիկիական ժողովոյն և եթ. և յարևելս զօրէին միայն կանոնք արեւելեան ժողովոց : — Իսկ կարգադրութիւնք պապից ոչ համա-

րէին ի շարս Եկեղեցական կանոնաց. քանզի ոմանց յեպիսկոպոսաց և յԵկեղեցեաց ծանօթք էին: — Ի վեցերորդ դարէ և այսր, յորժամ հրատարակեցաւ Միոնեսեան հաւաքումն, սկըսաւ ունել զտեղի և այս կարծիք՝ որպէս թէ ոմանց ի պապական թղթոց շնորհեալ իցէ իշխանութիւն օրէնսդրական. այլ զայսպիսի իշխանութիւն ընծայէին այնոցիկ և եթ ի պապական թղթոց՝ որք հրատարակեալ էին յանուն Թողովոյ իրիք, և անկ էին մասնական Եկեղեցեաց: Եթէ պապքն թեւակոխէին պահանջել՝ զի ունիցին իշխանութիւն ղեկավարելոյ զԵկեղեցին ողջոյն, զայդ ոչ երբէք արդեօք կարողանային նոքա ի գործ դնել. քանզի չկարէին ղեկավարել զԹողովս հաւաքեալս ըստ պահանջելոյ պատահական դիպաց, և այլ ինչ գործի կամ եղանակ ղեկավարութեան ոչ գոյր ի միջի. և ոչ իսկ յիշատակ լինէր զՏոգևորական դատարանաց, զԺողովական ատենից ըզպալատանէ և զայլոց այնպիսեաց: — Աղերն Հռովմայ նոյնպէս կարգաւորեալ էր որպէս և այլքն ամենեկին. վանորոյ պաշտամունքն այնորիկ և պարտաւորութիւնք՝ որք այժմ յանձնեալ են գործունէութեան պալատանն՝ յոչինչ պէտս էին յայնժամ, և ոչ հարկաւորք ինչ:

Զ. Ընդ այն ժամանակս և ոչ իսկ ընդ միտս անցանէր ումք ինդրել յեպիսկոպոսացն Հռովմայ զլուծումն կամ զարտօնութիւն յԵկեղեցական օրինաց, և չգոյին յայնժամ ոչ սակք սահմանեալք և ոչ հաւաքմունք գրոց ի պէտս աթոռոյն Հռովմայ: Օրէնս սահմանել, յորոց պահպանութենէն ազատել կարող իցէ ամենայն որ հատուցմամբ դրամոց, ոչ միայն գործ նախատական համարեալ լինէր արդեօք, այլ և յիմարական. իսկ կապելն և արձակել՝ ըստ կարծեաց հասարակաց այնր ժամանակի՝ հաւասարապէս անկ էր եպիսկոպոսին Հռովմայ և այլոց եպիսկոպոսաց միանդամայն:

Ե. Պապք ոչ ունէին յայնժամ իրաւունս ի բաց հատանելոյ զբ ի հաղորդակցութենէ Եկեղեցւոյ: Կարող էին արգարե մերժել զոմանս յեպիսկոպոսաց և յԵկեղեցեաց ի հաղորդակցութենէ ընդ իւրեանս (զոր և ստեպ իսկ առնէին). սա-

կայն ոչ ինչ վնաս էր անտի նոցա ի յարաբերութեանն առ այլ յեպիսկոպոսաց և յԵկեղեցեաց, զորորինակ պատահեցաւ այս և առ բաժանմամբն Անտիոքայ Եկեղեցւոյն յամին 364 զամն 413: Եւ նմին հակառակ՝ կարող էին պապք ընդունել ի հաղորդակցութիւն ընդ Եկեղեցւոյն Հռոմայ զայնոսիկ՝ որք մերժեալ էին յեկեղեցական հաղորդակցութեանէ այլոյ իրիք Եկեղեցւոյ: Բայց ոչ կարէին շնորհել այնոցիկ՝ զորս ընկալեալ էին յԵրեանցն հաղորդակցութիւն՝ և զհաղորդակցութիւն ընդ այլ յԵկեղեցեաց:

Ը. Ընդ երկար ժամանակ ոչ ինչ զիտէին ի Հռոմ յանուանէ զիրաւանցն զորս աւանդեալ էր Պետրոսի յաջորդացն իւրոց Հռոմայեցւոց: Լինէին բանք միայն զայսմանէ՝ թէ որպէս պարտին պապքն փոյթ ունել օգտից Եկեղեցւոյ, պահապանս լինել նմին և զգուշանալ սահմանադրութեանցն Թողովոց: — Յետ Թողովոյն Սարդիկեայ սկսան արդարեւ ասել՝ թէ պապից է անկ իրաւունք գերագոյն դատաստանի: սակայն ինքն իսկ Իննովկենտիոս Ա (402 — 417) որ ջանայր ընծայել կանոնի Սարդիկեան Թողովոյն զընդարձակագոյն յոյժ նշանակութիւն, և ըստ այնմ՝ սնայհականել անձին իւրում զդատաստան յամենայն խնդիրս ծանունս Եկեղեցւոյ՝ ի մէջ բիրէր միայն զպապ և զԹողովն: — Յաջորդն Իննովկենտիոսի Չոսիմոս հաստատէր նոյնպէս թէ Հռոմ պարգեւեալ են ամբողջն Հռոմայ զայն արտօնութիւն, ըստ որում դատաստան պապին պարտի համարիլ վերջին և վճռողական (34): Բայց վաղվաղակի յետ այնորիկ նուիրակքն պապին յայտ արարին ի Թողովին Եփեսոսի (451) թէ առաքեալն Պետրոս, որում ետ Քրիստոս զիրաւունս կապելոյ և արձակելոյ, կենդանի է ցանգ և դատէ ի ձեռն յաջորդաց իւրոց (35): Ոչ որ ազդողագոյնս պաշտպան և ջատագով եկաց այսմ կարծեաց քան զպապն Լեոն Ա. այլ յորժամ Թողովն Քաղկեդոնի (ի 28 կանոնին) յայտ արար՝ թէ զայն Հարքն այնպէս սահմանեցին, որք ի պատճառս քաղաքական նշանակութեան քաղաքին ընծայեցին Եկեղեցւոյն Հռոմայ զարտօնութիւն նախապատուութեան, յայնժամ Լե-

ուն ոչ իշխեաց ընդդէմ կալ, թէպէտ և ուժգին հակառակէր բարձրանալոյ աթոռոյն Կ. Պօլսոյ, և ընդունելոյ նորին իրաւունս հաւասարազօրս իրաւանց հռովմեական աթոռոյն: Աչ կթէ վասն այնորիկ չկամեցաւ Լևոն Ա հաստատել զասհմանս Թողովոյն Քաղկեդոնի՝ զի նուաստացուցանէին ի նմա զպատու պապական աթոռոյն, այլ զի արեւելեան պատրիարքունք ճոխանային ի պահանջմունս իւրեանց. և եղձանէին զվեցերորդ կանոն նիկիական Թողովոյն 56)։ — Ամօք ինչ յառաջ քան զայն՝ նոյն ինքն Լևոն պապ զրդեաց զկայսրն Վաղինտինոս հանել զհրովարտակ, որով զամենայն եպիսկոպոսունս արեւմտեան կայսերութեան այնր ժամանակի (և յանուանէ Կոստանոյ և Քաղզիոյ) ներքոյ արկանէր իշխանութեան պապական աթոռոյն. և եթէ հրովարտակն այն առնոյր զկատարումն, վեր ի վայր յեղաշրջէր կարգաւորութիւն արեւմտեան Եկեղեցւոյ այնր ժամանակի: Ի կայսերական հրովարտակի անդ հանդերձ կանոնի Սարգիսկեան Թողովոյն և մեծութեամբն Հռովմայ յիշատակին և արգիւնք սրբոյն Պետրոսի՝ իրբև պիտաւոր հիմն այնր ընդարձակ իշխանութեան պապից՝ որում պարտին ներքոյ անկանել եպիսկոպոսունք ամենայն, և սակայն ի թղթակցութիւնս իւր ընդ Քիւզանդիոյ և ընդ արեւելից ոչ իշխէր Լևոն յիշատակել զհիմն զայն, որ միայն կարող էր եղձանել իսպառ զատելին ինքեան 28րդ կանոն Թողովոյն Քաղկեդոնի, և լաւ համարէր ի մէջ բերել զվեցերորդ կանոն նիկիական Թողովոյն: Սահման Թողովոյն Քաղկեդոնի զընցաւ զլիակատար զօրութիւն, և որոշեաց յայնմհետէ և այսր զգրութիւն արեւելեան Եկեղեցւոյ և զհայեցուած նորին ի նախապատուութիւն Հռովմայ:

Թ. Զգրութիւն զոր կոչեցին ապա ուրբ-նիւն պապական \*). բաց է ի բաց մերժեաց մեծն Գրիգոր պապ, արդարև լաւազոյնն

(\*) Այսպէս «ուրբ-նիւն պապական», (իւրբ-նիւն «սիսիւնի ք. քաղ») իսկեցաւ պապականութիւնն, այնինքն է իւրձիւն անբարեխոնման իսկուիկաց զքիւրբոյն իշխանութիւնէ և զիւրաւանութիւնէ պապին Գանդիքի անսխալութեանս Գրիգորի նորա:

և վեհագոյն ի պապս : — Ըստ այնմ գրութեան պապն ունի ըզլիուլի իշխանութիւն, և այլ ամենայն եպիսկոպոսունքն են միայն ծառայք նորա և օգնականք. ամենայն իշխանութիւն յառաջ գայ ի պապէն. — և ամենայն եպիսկոպոս օգնէ միայն նմա յառաջնորդութեան վիճակին, այսպէս իմանայր մեծն Քրիզոր զտիտղոսն «*Եւէրէւմ*» պատրիարքի, և վասն այնորիկ ոչ բնաւ հանդուրժէր՝ զի այնպիսի հայհոյական տիտղոս տացի ինքեան կամ ում և իցէ 37) :

Թ. Են են տեղական Եկեղեցիք՝ որք ոչ երբէք գտան ընդ իշխանութեամբ Հոռովմայ, և ոչ երբէք թղթակցութիւնս արարին ընդ նմա, և սակայն այս ոչ համարեցաւ նոցա ի պակասութիւն, և ոչ խափան ինչ եկեղեցական հաղորդակցութեան նոցա : — Ե, յսպիսի էր Եկեղեցին Հայաստանեայց, յորում աստիճանն դերագահութեան ընդ երկար պահեցաւ ի սերունդս առաքելաշնորհ առն աշխարհին Քրիզորի Լուսաւորչի : — Եղատ էր յամենայն ազգեցութենէ ի կողմանէ Հոռովմայ իսկզբանէ հետէ և առ յապա մեծն և փառաւորեալ հաղարաւոր վկայիք՝ Եկեղեցին Ասորոց և Պարսից ի միջազետս և յարևմտեան աշխարհս թագաւորութեանն Սասանեանց : Ի յիշատակարանս նորին և ի հարուստ մատենադրութեանն և ոչ իսկ հետս անգամ գտանեմք յիշատակութեան՝ թէ ձեռն պապական հասեալ իցէ երբէք մինչև ի նա : Զնոյն է ասել և զԵկեղեցւոյն Եւթովպագւոց կամ Հապելից, որ ի միարանութեան էր ընդ Եկեղեցւոյն Աղէքսանդրիոյ, և յորում ոչ երբէք լսելի եղև և ոչ զոյն ինչ շշունջ պապական պահանջանաց : Յարևմուտս յընթացս դարուց բազմաց պահպանեցին զինքնակաց գրութիւն իւրեանց Եկեղեցիքն Իռլանտիոյ և նախնոյն Քրիտանիոյ : — Երդ եթէ այժմ՝ զբացասական եղանակ զբութեանն նախնի պապիցն առնիցեմք ի ձև ստորասական, զհետ գայ առաջիկայդ կերպ կարգաւորութեան Եկեղեցւոյ ի հնումն :

Եմենայն տեղական Եկեղեցի՝ ոչ քակտելով զմիաբանութիւն իւր և զհամաձայնութիւն ընդ տիեզերական Եկեղեցւոյ, յառանձնական գործս իւր ղեկավարեալ լինէր ինքնին անձնիշ-

խանութեամբ, պահպանէր զտոշորութիւնս իւր և զկարգաւորութիւնս, և լուծանէր զեկեղեցական խնդիրս և զվէճս՝ որք ոչ էին անկ համօրէն Եկեղեցւոյ, առանին ի տեղեղ իւրում: Եկեղեցին բաժանիւր ի վիճակս, ի գաւառս, ի պատրիարքութիւնս (որ յետ ժամանակաց ձեացան յարեմուտս տեղական Եկեղեցիք), և եպիսկոպոսն Հռովմայ ոչ խառնէր երբեք ի զործողութիւնս պատրիարքաց, մետրապօլտաց և եպիսկոպոսաց: — Օրէնք և դաւանութիւնք հաւատոյ պարտաւորիչք հասարակաց՝ առնուին զճազումն ի տիեզերական Եկեղեցւոյ, զոր առաջի առնէին տիեզերական ժողովքն:

Յաւուրց անտի Թովմայի Ազուինացւոյ (1274) մինչև ցմեր ժամանակս կանոն իմն լեալ է յամենայն վարդապետական զրուածս հաւատոյ կամ՝ ի տեսական անուանեալ աստուածաբանութիւնս սահմանել պապին և լայնատարած իշխանութեան նորա առանձինն ճառ կամ զլուխ բանի: Յայնմ հետէ և այսր ս'ր և իցէ խորհրդածութիւն զհաւատոյ իրաց՝ ունի զիւրն առանձին բաժին զգերագահութենէ (և սկսեալ ի Յեղբիորէ Վանոսէ յամին իրր 1330) զբացատրութիւն պապական իշխանութեան ի խնդիրս հաւատոյ: Յաստուածաբանութիւնս Եզուէիթաց (որպիսի են օրինակի աղագաւ՝ Փասսայլիս, Շաատերի, Ալէնիկէր) միապետական իշխանութիւն և զերագոյն հեղինակութիւն պապին է զլիսաւորն ի նիւթս, զորոց կախեալ կայ այլն ամենայն, իրր զի այն իւրովն կարեորութեամբ և նշանակութեամբ յառաջ է քան զայլն զամենեւին: Եւ այսպէս իսկ ապարէն պարտի լինել՝ եթէ պապն անսխալ իցէ ի վճիռս իւրս, քանզի յայնժամ ս'ր և իցէ եկեղեցական իշխանութիւն, և ս և իշխանութիւն նոցին իսկ ժողովոց, ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ պատկեր հեղինակութեան պապին. ի նմա և յաստուածային իրաւունս նորա իրբ և ի վերայ խարսխի՝ յորոյ վերայ միշտ կացեալ կայցէ շող լուսոյ, հաստատեալ կայ ամենայն ամբութիւն հաւատոյ: Ըստ այսմ ամենայն այր քրիստոնեայ պարտական լինի ստել. հաւատամ ես այսմ կամ այնմ վարդապետութեան վասն այնորիկ՝ զի խոստովանիմ զանսխալութիւն

պապին, — վասն այնորիկ զի պապն այսպէս վճռեաց կամ հաստատեաց զվճիւն այլոց :

## 2.

Վկայութիւն Հարց զգերադատութենէ: պապին : — Լը-  
նուութիւն Հարց Յունաց եւ Լատինաց: ոց զայնմանէ: —  
Աստիճանք դասակարգութեան ի նախնի Եկեղեց-  
ւոց: Բանքն Տեառն առ Պետրոս, եւ մակնութիւն  
նոցին տուեալ ի Հարց Եկեղեցւոյ. — Էրդումն կղերին  
Հոռովմայեցոց: Խոստովանութիւն պապին Լեւոնի Գ.

Թող ընդ այսմ ի համեմատութիւն զիցի լուծիւնն նախ-  
նի Եկեղեցւոյ, Յառաջին երիս դարս՝ միայն Երանոս է որ զնա-  
խապատուութիւն Եկեղեցւոյն Հոռովմայ կապակցէ ընդ վարդա-  
պետութեան Եկեղեցւոյ. բայց այս նախապատուութիւն ընդ  
ուղիղ իմացուածոյ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ հնութիւն Եկեղեց-  
ւոյն Հոռովմայ, եւ ծագումն նորին ի քարոզութենէ երկոցունց  
առաքելոց սրբոց, եւ այն՝ զի աւանդութիւնն անխառն պա-  
հի ի Հոռովմ ի ձեռն հաւատացելոց եկելոց անդր յայլ եւ այլ  
կողմանց աշխարհի: Տերտուղիանոս, Վիպրիանոս 38), Լակ-  
տանտիոս ոչ ինչ ոչ զիտեն զառանձինն իրաւանց պապին, եւ  
ոչ զնորա գերագոյն իրաւանցն ի զատել եւ լուծանել զինզիրս  
հաւատոյ եւ վարդապետութեան: Ի գրուածս յոյն վարդապե-  
տաց Եկեղեցւոյ, այսինքն է Եւսեբիոսի, Աթանասի, Մեծին  
Բարսղի 39), երկոցուն Գրիգորեանցն՝ Նազիանզանցւոյն եւ  
Նիւսացւոյն, Եպիփանու, շէք եւ ոչ մի բառ զնախապատուու-  
թեանց եպիսկոպոսին Հոռովմայ. — Բեղնաւորագոյնն ի Հարս  
Յունաց Ոսկերերան լուռ եւ եթ կայ զայնմանէ. լռեն երկզքին  
Վիւրեղանքն, եւ Հաբքն Լատինացւոց՝ Հիլարիոս, Տատիանոս,  
Լուկիփերոս, Յուլիփոս, Ամբրոսիոս եւ այլք: Այլ եւ գրուածն  
Հոռովմայեցւոյն Ուրսինոսի յաղագս անկրկնելի գոլոյ մկրր-  
տութեան (յաթին 440) 60) թէպէտ ջատագովէ զհոռովմեական

կարծիսն զայսմ խնդրոյ, բայց զգուշանայ կամ ոչ համարձակի ի մէջ բերել զհեղինակութիւն Եկեղեցւոյն Հոռովայ՝ իբրև զվճռողական ինչ կամ յոյժ կարևոր:

Ի բազմութիւ մատենագրութեանցն Օգոստինոսի (ի տասնեակ հատորս միածալս) որ յաղագս միութեան Եկեղեցւոյ և յաղագս վարդապետութեան նորին և իշխանութեան գրեալ է աւելի քան զայլ ամենայն Հարս միանգամայն, մարթ է ի մէջ բերել զմի միայն բան (ի միումն ի թղթոց նորին), թէ ի Հըռոովմ արժանաւորութիւն կամ պատիւ առաքելական աթոռոյն ցանգ յուժի եկաց 61). բայց զաս կարելի էր յայնժամ ասել և զԵնտիոքայ, զՆդէքսանդրիոյ և զՆրուսաղեմ: — Արդ ընթեռնուցու զգրուածն Օգոստինոսի յաղագս միութեան Եկեղեցւոյ, և զհոլուական թուղթ նորա առ հերձեալսն Դոնատեանս, ոչ կարէ բնաւ ի միտ առնուլ (եթէ հայիցի ի խընդիրն՝ եղուիթական կարծեօք զանսխալութենէ պայսին) թէ զիւրդ է զի յեթեանասուն և հինգ զուխս մատենին չիք և ոչ մի բան յաղագս կարևոր գոյոյ հաղորդակցութեան ընդ Հոռովմայ իբրև ընդ կեդրոնի միութեան: Բազմութիւ պատճառս ի մէջ բերէ Օգոստինոս առ այն՝ զի Դոնատեանքն պարտական են դարձեալ միաբանել ընդ Եկեղեցւոյ, բայց անգիտանայ զայն պատճառս՝ զոր հաստատուն ունի աթոռն պապական: Չնոյն է ասել և զՎինկենտիոսէ Կիրենացւոյ և զհռչակաւոր Ազգաբարութենէ նորա հրատարակելոյ յամին 454: — Եթէ յայնժամ գտանէր Եկեղեցւոջ վարկածն կամ հայեցուած անսխալութեան պայսին, մատենագիրն անտարակոյս յիշատակառնէր զայնմանէ ի մատենի՝ որոյ մի միայն նիւթ խնդրոյն էր ցուցանել՝ թէ որպիսի հնարիւք մարթ իցէ ճանաչել զճշմարիտ վարդապետութիւնն Քրիստոսի. և հնարս ճանաչելոյ զվարդապետութիւնն Քրիստոսի զճշմարիտ՝ համարէր զընդհանրականութիւն, զյարատեութիւն, զհամաձայն խոստովանութիւն յամենեցուն և զսահմանադրութիւնս տիեզերական ժողովոց: — Պայն Պեղագիոս Ա գովէ զՕգոստինոս վասն այնորիկ՝ զի նա յիշելով զաստուածային վարդապետութիւնն, որ հիմունս Ե-

կեղեցւոյ զնէ զԱռեւելան Արար, վարդապետէր այսպէս. «Նորա նն Հերձուածողքն՝ որք բաժանին յառաքելական ամբողջ անտի», 62) : — Պապս այս նշնպէս ոչ ինչ գիտէ զնախապատուութենէ Եկեղեցւոյն Հոռովմայ ի վարչապետութեան. բայց կարևոր ճանաչէ՝ զի յորժամ երկբայութիւն ինչ ծնանիցի ի խնդիրս հաւատոյ, դիմեցեն խնդրողքն ի վարդապետութիւնս առաքելական Եկեղեցեաց, այսինքն Եկեղեցեացն Աղէքսանդրիոյ, Անտիոքայ, Երուսաղեմի և Հոռովմայ 63) :

Անիմք յետ այնորիկ գրուածս կամ վկայութիւնս յաղագս աստիճանաց դասակարգութեան ի նախնի Եկեղեցւոջ : — Պապական իշխանութիւնն ոչ ուրեք կոչի առանկէն առիճան դասակարգութեան, ոչ ուրեք լինի զայնմանէ յիշատակութիւն իբրև զինքնակաց իշխանութենէ իմեքէ յԵկեղեցւոջ : — Ի զիրս Արիսպագացւոյն (շարագրելոյ ի վախճան Հինգերորդի դարուն) «Յաղագս եկեղեցական դասակարգութեան կամ քահանայապետութեան, յիշատակին միայն եղիսկոստանէ և երէցոնէ և սուրբաւոր : Իսիդորոս Սեիլիացի (յամին 634) հռչակաւոր աստուածաբան Սպանիացի՝ ի զրի հարեալ նշանակէ զամենայն աստիճանս եկեղեցական պաշտամանց, և ի շորս կարգս բաժանէ զեպիսկոպոսունանս. այսինքն է պարբերութիւն, յարեղիսկոստան, ի Բերդարտիսիս և յեղիսկոստան \*): — Գրատիանոս առեալ եմոյժ ի կոնդակն իւր զերկարածից հատուած մի բանից յԻսիդորոս, թէպէտ և պարտ էր նմա զարմանալ յոյժ՝ զի Իսիդորոս ոչինչ յիշատակէր զառաջնոյ և զգերագոյն իշխանութենէ Եկեղեցւոյ : — Ըստ սմին օրինակի առաջի առնէ զեկեղեցական դասակարգութիւն և Սպանիացի քահանայն Բէատոս

(\*) Աստի էս յայտ է սորայոյն լինել այնք բանի՝ զոր իսիդորոս ասնէ՛ր անձեալ էն ասնիկոստան է զարաստանաբերս Միլիթարոյ Կոշէ, ին «Իննէրորդս դաս նմանեալ Բերդարտից՝ «Պապական», որ է քրանի պարտ», զոր զամենն ասնէ է հոյսալիկ իմեղիկաց արանէլ է քրայոնիւն բերբարանիւն պարտի :

(յամին իբր 789), որ բարձրագոյն քան զամենայն աստիճանս Նկեղեցւոջ ճանաչէ զպատրիարքս, յորոց միջի առաջինն է, ասէ, հռովմեականն .

Երկրորդ խնդիրն, զոր դաւանողն անսխալութեան պապին չկարէ բնաւ ամենեւին բացատրել, այս է : Բազումս զիրս ունիմք մէք յօրինեալս յաղագս ամենայն քրիստոնէական աղանգոց և հերետիկոսութեանց՝ որք ելին յառաջին վեցեսին դարս Նկեղեցւոյ . բայց և ոչ ի միումն յայնցանէ գտանի ասացեալ՝ թէ այս որ կամ այն ուրանայր զիշխանութիւն պապին ի խընդիրս հաւատոյ 64), մինչդեռ օրինակ իմն զԱյերիոսէ լինի յիշատակութիւն՝ թէ նա ուրանայր զեպիսկոպոսութիւնն, ասելով թէ ոչ է այն առանձինն աստիճան դասակարգութեան : Թերևս հաստատութեամբ եղեալ էին նորա ի մտի յընթաց դարուց բազմաց՝ լսել զայսմ խնդրոյ Նկեղեցւոյ :

Չայս ամենայն զիւրին է ի միս առնուլ՝ եթէ որ ուշի ուշով ակնարկիցէ ի մեկնութիւնսն զորս Հարք Նկեղեցւոյ տրուեալ են բացայայտ բանից Տեսոն ասացելոց ցառաբեալն Պետրոս : — Յամենայն Հարք Նկեղեցւոյ որք բացատրեցին զբանս աւետարանին իշխանութեան տուելոյ Պետրոսի ի Տեսունէ (Մատթ. ԺԶ, 18. և Յովհ ԻԱ, 18), չկր և ոչ մի որ ըզբանսն զայնոսիկ պատշաճեցուցանիցէ եպիսկոպոսաց Հռովմայ՝ իբրև յաջորդաց Պետրոսի : — Առ ձեան պատրաստ ունիմք մէք զմեկնութիւնս Որոզինի, Ասկեբերանի, Հիլարիոսի, Օգոստինոսի, Կիրիլի, Թէոդորեոսեայ և այլոց, և ահա և ոչ մի որ ի նոցանէ, և ոչ իսկ հարևանցի ակնարկութեամբ խօսի զնախագահութենէ Հռովմայ՝ իբրև զհոռեանաց յանձնարարութեանցըն և խոստմանց տուելոց Պետրոսի : Եւ ոչ մի որ ի նոցանէ բառիւս քի կամ հիշ, յորոյ վերայ կամի Տէր շինել զՆկեղեցի, ոչ իմացաւ զիշխանութիւնն ժառանգական՝ որ ի Պետրոսէ ունէր անցանել ի յաջորդս նորա, այլ բառիւքն այնօքիւք իմանային կամ զնա ինքն շքեհոսս, կամ զբաւանեալն ի Պետրոսէ քիս ի նա, յաճախ ևս զերկոսին միանգամայն . Հաւարեկին նորա՝ թէ Պետրոս ևս ի նոյն միսս հիմն է Նկեղեց-

ցւոյ՝ յորում և այլք յառաքելոց կոչին ի Յայտնութեան երկոտասան հիմնական քարինք (Յայտն. ԻԷ, 14) : — Ի տայն Փրկչին առ Պետրոս զփականս արքայութեան և զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ՝ Հարքն սուրբք բնաւ իսկ չկարէին տեսանել զնախապատուութիւն և զտիրապետութիւն տուեալ եպիսկոպոսաց Հռովմայ . քանզի իշխանութիւնն տուեալ ի Տեառնէ, առաքելոյն Պետրոսի տուաւ ի նմանէ, և այն նովին բանիւք և այլոցն առաքելոց : Սմին իրի զբանս Տեառն ոչ ի մանային նորա իբրև առանձինն իմն ասացեալ Պետրոսի միայնոյ և յաջորդաց նորա, այլ զայլարանական ասացուածն քննելու արդարեւ չեան հաւասարազօր համարէին ասելոյն ձեւաոր բանիւ կողմէ և արդիւնէ (65) :

Բանք Փրկչին առ Պետրոս, « Ես աղաչեցի զՀայր վասն քո, զի մի պականեսցին հաւատք քո, և զու երբնմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո », (Ղուկ. ԻԲ, 52 — 57), են զկառուարացոյնքն ի վկայութեանց՝ յորոց վերայ հիմնեն զանսխալութիւնն պապական : Բայց չիք երկրայութիւն՝ զի այդ բանք վերաբերին առ անձն եւեթ Պետրոսի, և առ որ յետ այնորիկ ուրացո. թիւն նորա և դարձն : Պահանջէ Փրկչին ի Պետրոսէ, որոյ տկարութիւն հաւատոյն փութով անցանկոց էր, զի նա հաստատեսցէ ի հաւատս զայլ առաքելայն՝ որք նոյնպէս զրդուելոց էին ի հաւատոց : Միայն զայսմանէ է բանն, զի Պետրոս իսկզբան տկարանալոց էր ի հաւատս, և ապա վերջստին հաստատեալ ի նմին՝ հաստատելոց էր և զայլս : — Սմին իրի հակառակ լինէր ուղիղ մտաց՝ գտանել ի բանսդ յայդոսիկ զխոստումն ապագայ անսխալութեան պապից յաջորդաբար յայն սակս միայն զինստելոց են նորա յաթոն Պետրոսի : Ոչ որ ի վարդապետաց Եկեղեցւոյ մինչև ցլախճան եօթներորդի դարուն շատ բանիցդ պարզիկ զարդպիսի մեկնութիւն . այլ ամենեքեան նորա (արք իբրև 18) տեսանէին ի բանիդ միայն զաղօթս Փրկչին՝ զի առաքելայն իւր յառաջիկայ ծանր փորձութեանն մի յաղթեսցի ի փորձողէն, և մի՛ կորուսցէ բոլորովին զհաւատս : Աստիճանն յայնցանէ՝ որք հեռացան ի մեկնութենէ աստի, և

կամեցան տեսանել յաղօթս Փրկչին զՊետրոսէ զխոստումն նախապատուութեան Եկեղեցւոյն Հռովմայ՝ եղև պապն Աղաթոն յամին 680. քանզի սա ջանայր ի բաց դարձուցանել զմտաւրևս դատապարտութիւն նախորդին իւրոյ Մնորիոսի, կասկածելով՝ թէ մի՛ գուցէ կորուսանիցէ այնու Եկեղեցին Հռովմայ զզարմանալի նախապատուութիւն իւր ի մասին ուղղութեան վարդապետութեան իւրոյ :

Յաւուրց անտի Պիոսի Գ, սկսաւ կղերն ի մտանել իւրում ի պաշտօն ինչ՝ տալ զերդումն դաւանութեան : Եւ քանզի յերգման անդ բովանդակի խոստումն ոչ այլ ազգ բացատրելոյ զուրբ զիրս՝ բայց եթէ համաձայն մեկնութեան Հարց Եկեղեցւոյ, այսինքն Հարց առաջին դարուցն վեցից, ամենայն եպիսկոպոսք և աստուածաբանք երգմնազանց գոանին՝ յորժամ ի վերոյիշեալ վկայութենէ անտի (Ղուկ. ԻԲ, 52) յառաջ բերեն զայսպիսի եզրակացութիւն, որպէս թէ տուեալ իցէ Քրիստոս պապից զարտօնութիւն վարդապետական անսխալութեան :

Մինչև ցկիզքն իններորդի դարուն չեղև ինչ փոփոխութիւն ի հեղինակութեան Եկեղեցւոյ ի ինդիրս հաւատոյ : Լեւոն Գ յայտարար եպիսկոպոսացն Գաղղիացւոց առաքելոց առ նա՝ թէ ինքն հեռի է բոլորովին ի համարելոյ զանձն իւր հաւասար Հարց երկրորդի տիեզերական Ժողովոյն, կամ ի նախապատուելոյ զինքն քան զնոսա 66) . վասն որոյ և մերժեաց զառաջարկութիւն եպիսկոպոսացն այնոցիկ մուծանելոյ ի հանգանակն հաւատոյ զյաւելուածդ և յնշոյն 67) :

## Է.

Այս անունն Իսիդորոս եւ կոնդակագիրք նորա : —  
Նպատակ յօրինուածոյ նոցին : — Ազդեցութիւնք նա-  
ցին յիրս հոռովական Եկեղեցւոյ : — Կարծիք հին եւ  
նոր կանոնադիտաց զայնցանէ : — Թէ որպէս ի կիր արկ  
զնոսին Նիկողայոս Ա : — Աղէտք աթոռոյն Հռոյմայ  
յիտ մահուան Նիկողայոսի մինչեւ ցաւուրս Լեւոնի Թ :

Ի կէս իններորդի դարուն ի վեր երեւցան Իսիդորեան կանո-  
նադիտակ կամ կոնդակագիրք, որ բողոքովին կերպարանափոխ ա-  
րարին զհազմութիւն և զղեկավարութիւն Եկեղեցւոյ :

Յամենայն պատմութիւնս աշխարհի ոչ որ արդեօք կարող է  
գտանել զայլ իմն օրինակ այնքանոյ թանձր ստութեան, թէ-  
պէտ և գոնից զաջողութիւն, որպիսի է հնարք յօրինուածոյ  
կանոնացն այնոցիկ և կոնդակաց : Երեք հարիւր ամբ են յոր-  
մէ հետէ խայտառակեալ է ստութիւնն այն, և սակայն սկզբ-  
բունքն տարածեալք անտի այնպէս ի խոր արմատացեալք են  
յԵկեղեցւոջ, և այնքան առեալ զաճումն, զի ի հռչակել  
խարէութեանն բազում ի սասանութիւն մեծ արկեալ է զայժ-  
մու տիրապետող ոգին հռովմեական :

Յարեմտեան նահանգի ուրիք Գաղղիոյ հնարեցան հարիւ-  
րիւ չափ կոնդակք կամ թուղթք \*) նախնի պապից՝ հան-

(\*) Լաթին յայնս «Տէրութեամ», առ մեզ «ժէն» : Թարգմանի,  
ևս և «սահուն», և «խանոն» : Իսկ յայտ թանկ նշանակի զայնսոցիկ  
ի թղթոց պապիցն՝ յորս առաջի գնին որպէս թէ ժէնոս և խանոն  
զհասարոյ իբոց և զթարեկարբութեանց Եկեղեցւոյ. ժան որոյ և  
«Կոնդակոս», ևս իպէտ մեզ զնոսին, թէպէտ և թնկի անուն պապա-  
կան կոնդակոց առ Լաթինացիսն է Պոլլա : Իսիդորեանն հաստատեն  
այնպիսի թղթոց և ժճոց պապից՝ ի ոչ լաթիներէն րէրութեանցն,  
և հաւակեալ է առ Եւրոպացիսն Գաղղիարէն յայնչա «Յոս րէրութե-  
թալ, այն է «որոյցոր կոնդակագիրք», կամ առոր՝ թէպէ կոնդակագիրք :

զերձ քանի մի թղթովք այլոց զլիտց Եկեղեցւոյ, և սահմանադրութեամբք ժողովոց բազմաց, Պապն Նիկողայոս Ա ուրախութեամբ արտի ընդգրկեաց զգրուածան զայնտսիկ իբրև սոցոգրս և հաւաստիս, և ի վերայ նոցին հիմնեաց զպահանջմունս իւր և զձեռննրիցութիւնս: — Մերձաւորազոյն նպատակն հարկոյ զկեղծ կոնդակսն և զկանոնսն զայնտսիկ այս էր անտարակոյս՝ զի եպիսկոպոսունք անպատիժ մնացնին և յապահովի յերեսաց մետրապոլտացն իւրեանց, և ամենայն աշխարհական տէրութիւն հեռի լինի յիշխելոյ իւրք ի վերայ նոցա, և պսա՛ նպատակի հասանելոց էին բարձրացուցանելով զիշխանութիւնն պապական, որպէս զի որչափ առաւել տարածանէին կանոնագիրքն այնորիկ, այնչափ և Եկեղեցին առցէ զկերպարանս միապետութեան ենթարկելոյ ինքնահաճոյ կամաց և տիրապետութեան միոյ և եթ անձին. որով և արկաւ հիմն պապական անսխալութեան:

Իսիդորեան կոնդակագիրքն հաստատեն նախ զայսպիսի ենթադրութիւն՝ թէ ամենայն ժողով պարտի ընդունել ի պապէն զհաստատութիւն կանոնագրութեանց իւրոց. և երկրորդ՝ զի պապն ունի զլիակատար իշխանութիւն ի գործս հաւատոյ, և է եպիսկոպոս տիեզերական Եկեղեցւոյ, մինչդեռ այլք յեպիսկոպոսաց են միայն օգնականք նորա:

Սակայն եթէ պապն ընդհանրական եպիսկոպոս իցէ, և այլ ամենայն եպիսկոպոսունք՝ միայն օգնականք նորա և փոխանորդք, ի հարկէ ոչ է մարթ զլանալ նմա զձիրս անսխալութեան: Եթէ սահմանք հաւատոյ կանոնեալք ի ժողովս ոչ ինչ զօրիցեն առանց հաստատութեան պապին, ոչ է մարթ ուրանալ՝ թէ վճիռ նորա աստուածային կնիք է զրոշմեալ ի վերայ վարդապետութեան հաւատոյ, և առաջարկութիւնն յաղաղս անսահման իշխանութեանց պապից ի վերայ բովանդակ Եկեղեցւոյ՝ շուրջ պատեանն ունի յինքեան զսերմն: — Եւ ահա վասն այսորիկ սուտ անունն Իսիդորոս \*) զնէ ի բերանս նախ-

(\*) Քանզի ոչ է յայդ անաթանից՝ ինչ ո՛ր կա՞ որպէսի՞ ոչ էնք իսիդորոսն այն ի-թեթոյ. և իւրեք ունեւ ունեւ զիւր իւրեւրոյս:

նի պապից զառաքելից բանսդ. « Հոռովմեակն Եկեղեցին կառցէ մնասցէ մինչև ի կառարած աշխարհի անարատ յամենայն մալրութենէ. (68) Ի նախնումն արք Հսուտք եկեղեցական Տրնութեան և կանոնական իրաւանց, որպիսիք են՝ օրինակ իմն՝ Տէ — Մարքա, Բալուզիոս, Կոստանդ, Գուլբերտոս, Պերարտի, Յալվան և այլք, հաւանեալ էին թէ Իսիդորեան կոնդակքն ահա ինն փոփոխութիւնս գործեցին ի կազմութեան և ի կարգս Եկեղեցւոյ, և նորք զտեղի նախնի եկեղեցական իրաւանց կալան նոր իրաւունք: Բայց նոր կանոնադէտք (69) Հաստատուն բողոքովին զհակառակն, թէ կեղծ Իսիդորն այն եղ ի կարգի, և արկ զգրաւոր հիմն եկեղեցական կազմութեան՝ որ արդէն կար ի ժամանակին, և թէ առանց նորա խարեութեանն ևս կազմութիւն Եկեղեցւոյ մտանելոց էր ի նոյն կերպարանս: — Բայց իրացն ճշմարտութիւն այս է աւասիկ.

Ա. Յառաջ քան զերևել Իսիդորեան կոնդակագրոցն ի ըսկըզքան վեցերորդ դարուն կային արդէն հնարագործութիւնք ինչ ի հիմնել կանոն մի այսպիսի՝ թէ պապն ըստ որում գերագոյն դատաւոր՝ ոչ կարէ անկանել ընդ դատաստանաւ ուրուք:

Բ. Իսիդորեանն վարդապետութիւն ի հակառակութեան բանից յտանէր ընդ իւրում իսկ անձին, նպատակ ունելով երկուս ինչ իրս իսկապէս ընդդիմակս իրերաց այսինքն է զկատարեալ անկախութիւն եպիսկոպոսաց ի միոյ կողմանէ, և զընդարձակութիւն պապական ամենակարողութեան ի միւսմէն: Սահմանագրութիւնքն յաղագս անվթար պահպանութեան իշխանութեան եպիսկոպոսաց այնպէս անգործադրելիք էին և անընականք, զի ոչ երբէք կարող էին առնուլ զկենդանութիւն. ընդհակառակն՝ սահմանքն որ յաղագս իշխանութեան հռով-

լիալ Պապայոզ Ժազէի Սպանիոյ յաֆն 750, Բայց չէ այն հաստատի: Ա՛յլ է և « Ինքորոս » Եղեկոպոս Սեփիւիոյ Սպանիացոց, ոյք սրբախիբն և Բազմահմար, որ Եղեկոպոսացեալ յաֆն 604, և վախճանեալ է ի 636:

մէական աթոռոյն՝ կարող էին ի դէպ ժամանակի առնուլ զկատարումն և տիրապետել . բայց յայնժամ՝ հակառակ զխառնութեանն Իսիդորի կարող էին յաջողել ի ներհական միտս, և արկանէին զեպիսկոպոսն բոլորովին ընդ իշխանութեամբ Հռոմովնայ . զոր չկամէր, և ոչ զմտաւ ամէր յօրինողն սուտ կողմակացն այնոցիկ : Իսկ թէ ի ձեռն Իսիդոր՝ան կոնդակազրոց ի մեր իսկ ժամանակս կերպարանափոխ եղև բովանդակ կազմութիւնն եկեղեցական, և հին իրաւունք եկեղեցւոյ տեղի ետուն նորոց իրաւանց, զայսմանէ չկարէ լինել վէճ ինչ կամ հակառակութիւն ի մէջ պատմաբանից :

Ի ժամանակին յորում հնարագործութիւնն Իսիդորի հռչակեալ լինէր ընդ ամենայն տեղիս, զամօռն Հռոմովնայ ունէր պապն Նիկողայոս Ա (838—867), որ ըստ համարձակութեանն զերազանցեաց քան զամենայն նախորդս իւր . — Յօգուտ անձին վարելով զքաղաքական բաժանումն համաշխարհական միապետութեան մեծին Կարողոսի, սկսաւ նա առաջի արևելից և արևմտից հաստատել՝ թէ որ և իցէ պահանջումն և ձեռնհրիցութիւն նախորդաց իւրոց սեպհական է և ինքեան առաւելագոյն ևս եղանակաւ, և թէ ինքն ոչ միայն զիրաւունս զերազանսութեան ունի, այլ և զմիապետական իշխանութիւն ի վերայ եկեղեցւոյ \*), — Թիւր մեկնութեամբ միոյ ևեթ բառի՝ ետ նա միում ի կանոնաց Ժողովոյն Քաղկեդոնի (որ ընդհակառակն ի բաց մերժէր զամենայն բողոք ի Հռոմովն) 70) զայնպիսի ինչ

(\*) Այս էն է առաջիկ և պարտն այն պէտքը աշտարակտ «Թշնայն Դաշնայն» (արաբեօտ լի էն ինքուստիմութիւն իտիպարի), զոր 1-որին միմիումբտ և իմ իւր հեթեհողտ նորին և ունիկտուացն իաբեիւայնից և ոգիւրոց հնարեալ պարաթեցին յազգիս մերում, բանաւնճանին գնելով ի բերան պապին Սեղբեարբոսէ Ա, և պարտաթեանն այլամբ-ին ինչեւիտ՝ ի ժաման սճով և ի ժողովոյն ևս միմբան... ինեմբտ . և պարտին ևս բարանին որպեօտ յաղթին, ոչ միայն ի ինքնայնիցն միմի՝ այլ և ի լուսաւորութեանս, որտ իմին իճ զուե-

դարձուած, որպէս թէ ինքն արդեամբք կարգեալ իցէ գերագոյն դատաւոր եպիսկոպոսաց և կղերիկոսաց ամենայն աշխարհի, և թէ ի Հռովմ դտանի արդարև գերագոյն ատենն բողոքոյ վասն կղերաց արևելեան և արևմտեան Եկեղեցւոյ : Եւ զայս պայտեւ գրեաց նա առ Վայսրն Յունաց, առ Վարդոս արքայ Փաղղիոյ և առ ամենայն եպիսկոպոսունս Փաղղիացւոց 71) : Ի թուղթան իւր առ զհանական և սրամիտ պրն Փոտ՝ ի վկայութիւն կու շէր նա զկեղծութատիր և զտայօղ բաննն եղեալս ի բերանս պապիցն Սեղբեստրոսի և Սեքստոսի, թէպէտ և յետ ժամանակաց ոչ սակաւ մեղադրութիւնն և կշտամբանս արարին Յոյնք Եկեղեցւոյն Հռովմայ ի պատճառս խարէութեանցն այնոցիկ՝ և պնդէին՝ թէ ի Հռովմ սովորական իմն է կամաւոր խարգախումն թղթոց և յիշատակարանաց : — Յորժամ ստայօղ կոնգակագիրքն Բսիզորի տուան ի ձեռս Նիկողայոսի (յամին իրր 865 կամ 864), նա իսկոյն Հերքեաց զկասկածանս եպիսկոպոսացն Փաղղիացւոց զվաւերականութենէ նոցին, և Հաստատուն բանիւ յայտ արար՝ թէ Եկեղեցին Հռովմայ ի դիւանս իւր և ի վաղնջուց յիշատակարանս անդատին ի վաղ ժամանակաց ունել ունի զայն ամենայն զրուածս, և թէ մէն մի ի թղթոց պապին ըստ ինքեան, թէպէտ և ոչ գտանդիք ի Քիոնիսեան Հաւաքման կոնգակաց \*) ունի զլիակատար զօրութիւն օրէնսդրական վասն Եկեղեցւոյ 72) :

բախան ինչ համարել . . զԴաշակոյ Թոպիւն . . թէն ըստ ինքնութեան իմաստիցն, և ի որժառոց կամ ի շարժարաց սմանց ի անբարեալ և ելին և իւրբարեալ, մնչբար յայտ յանբարեանութեամբ երեւի սրայօղն լինել նորին և ժրացածին յօրինաւած պապոսու լաթնեացոյ ուրուստ կամ լաթնեանու և ուղեարաց Հայոյ որժեպի և շարժարի :

(\*) Այս անսան ինչ Նախկին հաստատան կանոնաց յուղտլոց և կանգախոց պապիցն առ լաթնա, զոր արար յամին իբր 850 Պիտեւսիս սմն իբժնաւոր՝ ճախնաւանեան «Պոթր», կամ «Վարժագատու» սախ հաստին ժաթիւնութեան :

Ըստ այսմ ի Ժողովին Հռովմայ (863 ամի) նզովս կարգաց նա ամենեցուն նոցա՝ որք ոչ յարգեսցեն զվարդապետութիւն ինչ կամ զպատուէր հրատարակեալ ի պապէն 75)։ — Արդ եթէ ամենայն վճիռք պապից կանոնք էին վասն բովանդակ Եկեղեցւոյ, և սահմանք Ժողովոց կարէին հերքիլ կամ հաստատիլ ի պապից (որպէս պահանջէր զայն Նիկողայոս՝ հիմնեալ ի վերայ ստութեանցն Գսիղորի), ապաբէն մի միայն քայլափոխ մնայր այնուհետև ի հրատարակումն անսխալութեան պապին, և սակայն քայլափոխն այն ընդ երկար ժամանակ ոչ արարաւ։ Միայն շատ համարէին ընդ ժամանակս ժամանակս կրկնել զայս բան՝ թէ հռովմեականն Եկեղեցի սուրբ և անարատ պահեալ է զհաւատս։

Անցին գրեթէ ամբ երեք հարիւր՝ մինչև սերմանեալն սերմին երեք զպտուղ ատոր ի հասկին։ Յընթացս երկերիւր ամաց, ի մահուանէն Նիկողայոսի Ա. ցաւուրս պապին Լևոնի Թ, աթոռն Հռովմայ դտանէր յայնպիսում գրութեան, զի և ոչ խորհելոյ մնայր ժամանակ՝ թէ որպէս պարտ իցէ պահպանել և ընդարձակել զպապական իրաւունս։ Ստրկութիւն և ճնշումն հռովմեական աթոռոյն տեւեաց աւելի քան զամս 70 (885 — 958), և եղև այն ընդ երկար ժամանակ որս և խաղաղիկ պէս պէս կուսակցութեանց, մանաւանդ փառամոլ և անառակ կանանց։ — Առ փոքր մի ժամանակ ի ձեռն միջնորդութեան կայսերն Սաքսոնիոյ վերստին բարձրացեալ էր առ Գրիգորիս Ն և առ Սեղընսարոսիս Բ (997 — 1005)։ Բայց յետ այնորիկ վերստին անկուս աթոռն պապական յատջին յուզմունքս շփոթից և յանջօրութիւն բարոյական։ Գրսունք Թոսկանացւոց ժառանգական արարին զպապական աթոռն յազգատոհմի իւրեանց, և բազմեցաւ յայն ի նախատինս նորին՝ որպէս երբեմն չարախառափտան Յովհաննէս ԺԲ, գարշելի և ամութապարտ պատանին Բենեդիկտոս Թ (1053 — 1044), և պապական թագն դնեալ լինէր և վաճառեալ, այնպէս զի երեք պապք միանգամայն մարտ եղեալ կուռէին ընդ միմեանս վասն նորին, մինչև յաջողեցաւ կայսերն Հենրիկոսի Գ չափ և սահ-

ման զնեջ այնպիսուամն անկարգութեան՝ ամբառնալով յաթոռն  
 Հռովմայ եպիսկոպոսունս Գերմանացիս :

Ը.

Գրիգորեան խարդախանք : — Անսելմոս եւ Աստուածատուր : — Գրիգոր Է : — Հիմունք խարդախանացն Գրիգորեանց : — Թուղթ Գրիգորի Է առ Գերմանոս : — Իշխանութիւն կապելոյ եւ արժակելոյ : — Անձնական սրբութիւն պապից : — Իշխանութիւն Ժողովոց եւ պապին : — Կանոնն Սարգիկեան Ժողովայն : — Էկեղեցական բանադրանք :

Առ ԼԷՆՏԻԷ Թ (1048—1054) սկսաւ նոր իմն թուական վասն պապական իշխանութեան : Երնթացս եօթանասուն ամաց՝ ի պատճառս Հակառակութեանցն եղելոց վասն Սիմոնականութեան, վասն ամուսնութեան քահանայից, վասն տրւչութեան իշխանութեանց՝ ընդդէմ թագաւորաց, եպիսկոպոսաց եւ կղերիկոսաց, ւթոռն պապական ամբարձաւ յայն աստիճան իշխանութեան՝ յոր ե ոչ մտաբերեալ էր Նիկողայոսի Ա. Պուսակցութիւն մի բազմութիւ յոյժ եւ ամենազօր, Հզօրագոյն քան զայն որ երկերիւր ամօք յառաջ ձեռն արկեալ էր ի հրատարակումն Իսիդորեան խաբէութեանց, անդստին ի կիսոյ մետասաներորդի դարուն աշխատ լինէր ամենայն զօրութեամբ՝ զի տէրութիւնք Եւրոպայի Համօրէն միաւորեցին ի մի միայն աստուածապետական թագաւորութիւն քահանայից՝ զուի զպապն ունելով : Այն կուսակցութիւն ամենակարեւոր ճանաչէր զվերանորոգութիւն Եկեղեցւոց, բայց այսու ժողով զի դիւրացի այնու հոգեւորական նոր միապետութեան պապին Հասանել իւրումն նպատակի. հարկ համարէր մարբել եւ յստակել զԵկեղեցին, բայց այնու օրինակաւ՝ զի ամենայն իշխանութիւնք միաւորեցին ի ձեռս պապին, եւ բարձրացի եւ ևս նորայն իշխանութիւն : Ի Գաղղիա նեցուկ ապաւինի այնր կու-

սակցութեան էր հզօր միաբանութիւնն կրօնաւորաց արքայա-  
րանին Քլիւնիայ \*) . իսկ յԽտալիա Պետրոս Դամիանոս \*\*),  
Անսելմոս Եպիսկոպոս \*\*\*). Հոււմբերտոս, Տէուստէտիթ (կամ  
ըստ մերումս՝ Աստուածատուր), Հիլդերբրանտ (ոգի ձեռնարկու-  
թեանն) \*\*\*\*) վաստակէին ի հաստատել զնորն զայն զրութիւն,  
թէպէտ և ոմանք, զօրօրինակ Դամիանոս և Հիլդերբրանտ ստէպ  
ներհակէին իրերաց՝ թէ ի խորհուրդս և թէ ի զնացս վարուց:

Այս ինչ զեռ ևս ոչ բոլորովին քաջածանօթ է ամենե-  
ցուն, զի ի շարս անդ պապից բազմաց՝ միայն Քրիզօր է զտաւ,  
որ իշխեաց նոր իմն սահմանազրութիւն ընծայել Եկեղեցւոյ ի  
ձեռն նորահար միջոցաց: Քանզի նա համարէր զանձն իւր  
ոչ միայն վերանորոգիչ Եկեղեցւոյ, այլ և հիմնադիր յաս-  
տուածակոյս կողմանէ նորոյ կարգի իրաց՝ որ ոչ զոյր մինչև  
ցայնժամ, թէպէտ և ստէպ ստէպ յիշատակէր նա զնախորդս

(\*) Քլիւնիէ քաղաք գտար է Գաղղիոյ մեր) է Մոսկով, և հաւանելու  
էր յոյժ է Ժ և է ԺԱ դարս արքայաբանան, այսինքն մեծադանա-  
բեկեղեցիքեան իբնասարաց, որոց շանահայրն իսկեր «արքայ արքայից»:

(\*\*) Վարդապետ լարին Եկեղեցւոյ ծնեալ է Հոստելնա յամն  
988, և շախմանեալ է Յայկեցա յամն 1072: Այր հոգեւեր՝ աննա-  
որոր պապից, պարտեալ է նոցանէ Եպիսկոպոսութեամբ, բայց է  
ժերտութեան հրաժարեալ յամնայիէ և յրեալ վերստին է շան:

(\*\*\*) Նախանյաւոր պապական և զարստի իբնանց Եկեղեցւո-  
յանցն և պապից, շախմանեալ յամն 1109:

(\*\*\*\*) Մի անչն Բեկեղեցիքեան արքայաբանին Քլիւնիայ, որ յա-  
մն 1073 պապ Եղեալ՝ իսկեցաւ Գրիգոր է, և է պարտաւ իւրոյ  
նախանյաւորութեանն շան իւրձեցեալ իբնանց պապից և իրեւոր  
յաւառութեանն և իւրապարտութեան է իւրձիւ և է բան իւր, ևս և  
յաղաքս իստախրձն շարանցն՝ որպէս ասեն՝ արժանաւոր բարս-  
տեւոյ ընդ սարքս Եկեղեցւոյն Լարիւնացոց:

խր. Միայն նիկողայոս Ա, նման էր նմա յայսմ մասին. այլ ամենայն պատք որ եկին զՀետ նորա, ևս և համարձակագրոնքն ի նոսա, յառաջ ևս տարեալ ձգեցին զընթացսն արդէն գծագրեալս ի Գրիգորէ Է :

Յառաջագոյն իսկ ի միտ առեալ էր Գրիգոր, զի ի ձեռն ժողովոց կանոնաւորապէս գումարելոց ի հրամանէ պապին և ի ձեռն նորոյ եկեղեցական սահմանադրութեան հարկ է ստեղծել և կերպարանել զնոր իմն կարգ իրաց : Առաջնորդութեամբ Հիլղերրանտի ժողովքն այնոքիկ, կամ որպէս յայնժամ կոչէին՝ Անսելմոսն՝ արդէն սկսեալ էին ներգործել առ Անսելմոս և առ յաջորդօր նորա և ինքն Հիլղերրանտ պապ եղեալ՝ ընդ անուամբ Գրիգոր Է, յառաջ տարաւ զգործն ի ձեռն եկեղեցական ժողովոց որ եղին յամն 1073 և այսր : Գրիգոր առ ի յօրինել ըստ իւրոց հաճոյից զեկեղեցական իրաւունքս՝ առ սակաւ սակաւ եղիտ շուրջ զԷւրե արս ճարտարս և բանիմացս : Ըստ նորա հրամանին շարագրեաց մատենն մի եւրեկի և ընդարձակ Անսելմոս եպիսկոպոս Լուկկայի՝ եղբօրորդի Աղէքսանդրի Բ պապին (յամն 1080 — 1086), — Մարթ է ասել՝ թէ Անսելմոս եկաց հիմնադիր նորոյ եկեղեցական իրաւագիրտութեան, որովհետև նա հաւաքեաց յՊօղոթեան կոնդակագրոցն զայն ամենայն որ ինչ ձեռնառու կարէր լինել յաճումն պապական իշխանութեան, և վերածեաց զայնոսիկ ի կարգ իմն բացայայտ : Յետ այնորիկ ըստ պահանջելոյ պիտոյից կուսակցութեան իւրոյ և ըստ հաճոյից Գրիգորի Է կերպարանափոխ արար զիրաւագիրտութիւնն եկեղեցական՝ բազմութեամբ նորանոր կեղծեաց և խարդախանաց 74) : Զհետ նորա եկն և օգնական ելն նմին յայս գործ նորանոր հնարագործութեամբք Աստուածատուր ոմն, զոր և ամբարձ Գրիգոր յաստիճան կարգինալութեան : Ի նմին ժամանակի և Բոնիկիոս յօրինեաց զԷւրն գրուած, որոյնիւթն ևս էր յաղագս արտօնութեանց պապին : Առաջարկութիւնք քառասուն բովանդակեալք յայսմ մասին նորա 75), ըստ ամենայնի համեմատեն գրոցն Գրիգորի և նիւթոց հաւաքելոց առ Անսելմոսի և Աստուածատրոյ : Աեր-

զին զխաւոր շարագրած Գրիգորեանցն (յառաջ քան զՌա-տիանոս) եղև Պօղոսի-բարսի կարգինային Գրիգորի Փառաքելոյ (յամին 1118), որ գրեթէ միշտ, մանաւանդ ի կեղծեալ և ի խարդախեալ տեղիսն, համաձայն էր ընդ Անսելմոսի 76) :

Աստուածատուր արարեալ է իւրումն գրուածոյ այնպիսի իմն յառաջարան 77) որ նախագիծ է ամբողջ զպրոցի, և ջանք նորա վերջապէս պսակեցան լիուլի յաջողութեամբ: Հոռով-մէականն Եկեղեցի, ասէ Կարգինայն, մայր է ամենայն Եկեղեցեաց. վասն զի Աւարոս հիմնեաց իսկզբան զպատրիարքական Եկեղեցի արևելից, և ապա կարգեաց եպիսկոպոսունս յամենայն քաղաքս արևմտից. Ժողովս ոչ է մարթ կոչել առանց հրամանի պապին (այսպիսի է, ասէ. վճիռ 518 Հարց Ժողովոյն Նիկիոյ): Ի պարապել պապական ամօռոցն ղեկավարէ զԵկեղեցին կղերն Հոռովմայ. և վասն այնորիկ Կիպրիանոս և Ափրիկեցիքն հնազանդեցան վճռոց նորա նաև յառաջ քան զընտրութիւն Աուսելմոսի (ըստ սիրելի կարծեաց կարգինային, զոր Անսելմոս՝ քանզի ոչ էր կարգինալ՝ ոչ ընդունէր երբէք): — Ասէ նա դարձեալ՝ թէ յայն սակօ շարագրեալ է ըզմատեան իւր, զի հաստատեցէ զզօրութիւն իշխանութեան Հոռովմայ և զազատութիւն Եկեղեցւոյ, զոր բառնալ խնդրէին ոմանք. ապա պնդէ՝ զի հակասութիւնքն որ գտանին ի վկայութիւնս և ի կանոնս հաւաքեալս յիւրմէ՝ ի բաց մերժելի են այսու սրբոզ կանոնիւ, զի փոքրագոյն իշխանութիւնն պարտի տեղի տալ մեծագունին (զորօրինակ հեղինակութիւն Ժողովոյն և վարդապետութիւն Եկեղեցւոյ պարտի տեղի տալ վճռոյ պապին): — Սովիմբ այսու միակ կանոնիւս, որ ոչ միայն բանայր առաջի Իսիդորեան Կոնդակացն ճանապարհ լայն և ընդարձակ, այլ և միանգամայն խորտակէր զամենայն ջան և զաշխատութիւն չափաւորելոյ զգրութիւն նոցին ի ձեռն նախնի կանոնաց, — կատարեցաւ յԵկեղեցւոջ յեղափոխութիւն մեծ՝ ամենադիրին և ամենապարզ եղանակաւ :

Թէպէտ և մեծաւ խոհեմութեամբ և ճարտարութեամբ ձեռքն արկին ի գործն յայն կուսակիցքն Գրիգորեանց, այսու ա-

մենայնիւ երազատեալք իմն էին նորա, և ի կեղծիս ստուծեան ըմբռնեալք (1) ոչ կարացին նորա զերծանել յանհրաժեշտ հարկէն ապացուցանելոյ՝ թէ նոյն այն գրութիւն արդէն զոյր յԵկեղեցւոջ և հաստատեալ լինէր պատմութեամբ Եկեղեցւոյ. բայց աստանօր զժուարին, կամ թէ անհնարին իսկ էր զանազանել՝ թէ ո՛ր արդեօք սպրդեալ իցէ առ Գրիգորեանսն ակամայ ստատութիւն, և ո՛ր սկսանիցի կամաւորն խարէութիւն։ Աճապարանօր իմն և առանց շրջահայեաց զգուշութեան ընտրեալ և առեալ էին նորա ի կեղծ և յինքնահնար գրուածոց ամբարեից առ իւրեանս զայն ամենայն՝ որ ինչ պիտոյ էր ի լընուլ զկարօտութիւնս նոցա։ Յաւելին յայնտիկ և զիտս նորանորս, և յայնժամ երեւցաւ՝ զի զոր և իցէ հռովմեական ձեռներիցութիւն մարթ է ցուցանել օրինաւոր մկայութեամբք և պատրաստական կոնդակօք։

Յօիցէ որ. եթէ չէին կոնդակաղիքն Իսիգորի, չլինէր և Գրիգոր Ե. այլ այդ այնքան միայն ճշմարիտ է՝ որքան Իսիգորեան կեղծիքն ընդարձակ հիմն եղին Գրիգորեանցն շինուածոց։ Բայց կէտ նպատակին Իսիգորի զխաւորապէս էր ազատութիւն և անպատիժ մնալ եպիսկոպոսաց. նմին հակառակ՝ հռովմեական կուսակցութիւնն, որ ընդ երկար ժամանակ սակաւութիւնունէր հետեւողս և զմեծ մասն եպիսկոպոսաց ընդդէմ իւր, բռնորովին ներհական արդիւնս շահեցաւ. քանզի պապքն և նրուիրակք նոցա կարողացան այնուհետև յաճախադոյնս և առանց քննութեան բանադրել զեպիսկոպոսունս, ահ արկանել նոցա, և նուաձել զնոսին ի կատարեալ հնազանդութիւն ամենայն կարգազրութեանց պապին։ Ընդ նմին միացան և նորահնար մարդագետութիւնքն յաղագս աշխարհական իշխանութեան, և կարելոյ պապիցն փոփոխել զթագաւորս։ Համառօտ ասել, պէտք եղին նորոյ պատմութեան և նորոյ եկեղեցական և թագաւորական իրաւագիտութեան. և զերկոսին ևս հարկ էր ի ձեռս բերել ընդարձակելով հետզհետէ զԻսիգորեան սահմանս, և նորանոր ստութիւնս հնարելով. — Ի սրբազրել զպատմութիւնն ի Գերմանիա ձեռն էարկ ըստ ի միք կրօնաւորն

Պետնդտ. իսկ յԽտալիա Գրիգորեանն Բոնիկիոս եպիսկոպոս Փիաչննցայի, որ և անձամբ ևս գուն գործեաց խախանել զԹագաւորութիւն մեծին Վարդուսի 78): Սոյնպէս և այլքն յօգնականաց նորա գիտացին Հնարել դէպս պատմականս, և յարմարել զնոսին դիտաւորութեան կուսակցացն իւրեանց: Քանզի նորանոր գրուածք նոցա զեկեղեցական իրաւանց՝ բազում ինչ նորաձեւութիւնս ի ներքս մուծին զնախնի պատմութենէ Եկեղեցւոյ: Ինքն իսկ Գրիգոր ունէր զիւր սեպչական մթերս կեղծ և ինքնահնար և կամ՝ այլափոխեալ պատահարաց, զորս բերէր ի Հաստատութիւն իւրոցն ձեռնորիցութեանց, թէպէտ և այլանդակ իմն և անիրաւ թուէր այն ժամանակցաց նորա: Օրինակ իմն, ստոյգ Համարէր նա՝ թէ պապն Իննովկենտիոս Ա բանադրեալ իցէ զկայսրն Արկաղիոս, թէ պապն Ջաբարիա մերժեալ իցէ յաթոռոյն Գաղղիոյ զարքայն Քիլղերիկոս, և թէ մեծն Գրիգոր զնոյն սպառնալիս արարեալ իցէ թագաւորաց՝ որք Համարձակիցին կողոպտել զկապելյան Օթէօն քաղաքի 79): Պարբերական Վարդանանէն էր յաչս նորա կարեւոր իմն և թանկազին գրուած վաւերական 80), որ տպր նմա իրաւունս ի վերայ Վորսիկա և Սարղինիա կղզեաց: Սան Գրիգորի Լևոն Թ, զայն գրուած առաջի առնէր Յունաց, իսկ բարեկամ նորին Պետրոս Գամիանոս զնէր առաջի Գերմանացւոց զմեծ նշանակութիւն նորին. Աստուածատուր և Անսելմոս շնորհեցին այնմ գրուածոց տեղի պատուաւոր ի զիրս իւրեանց՝ որ յազարս կանոնական իրաւանց:

Գրիգոր պապ յօրէնսդրական աշխատութիւնս իւր և ի պէսպէս պահանջմունս և ի ձեռնորիցութիւնս՝ չկամէր բնաւ ունել զկերպարանս նորոց ուրուք ամբարհաւած բռնաւորի. որոյ վասն և ասէր բազում անգամ՝ թէ մի միայն ցանկութիւն իւր է նորոզել զնախնի օրէնս Եկեղեցւոյ, և ի բաց մերժել զայն ամենայն անկարգութիւնս որ յետ ժամանակաց ի ներքս մբտին: — Ի գրուածին իւրում մակագրելոյ «Թեյաղբութիւն \*

(\*) Լ. Գրիգ. յ. 2. 2. 2. (Գրիգ. Թեյաղբութիւն):

ամիտփեաց զնա զողջոյն իսկ զնորահնար դրութիւնն իւր յազագս պապական իշխանութեան ի 27 առաջարկութիւնս, բայց առաջարկութիւնքն այնոքիկ ըստ մասին էին կրկնութիւնք և բնական հետևութիւնք քաղեալք յԽնդորեան կոնդակաց, և ըստ մասին պտուղք կամ արգասիք ջանից նորա, որով՝ օգնականութեամբ բարեկամացն իւրոց նորանոր ստութիւնս յօգելով՝ հնարէր տալ առաջարկութեանցն այնոցիկ զկերպարանս հնութեան և աւանդութեան 81) :

Գլխաւոր գրուածն Գրիգորի է թուղթ նորա առ Գերմանոս եպիսկոպոս Մէջ քաղաքի \*), յորում ցուցանէ նա թէ քանի՜ ամրապինդ ունի հաստատութիւն տիրապետութիւնն պապից ի վերայ կայսերաց և թագաւորաց, և իրաւունք նոցա ի փոփոխել զարքայս ի պահանջել հարկին : Ի նմին թղթի ցուցանէր նա արբանեկացն իւրոց՝ թէ որպէս պարսին ի կիրարկանել զվէպս անցից իրաց և զընագիրս. քանզի էառ ըզվկայութիւն մի ի թղթոյ Գելասիոսի պապին առ կայսրն Անաստաս, և ի բաց թողեալ անտի ինչ ինչ, և զտարանջատ առաջարկութիւնս ի մի վայր բերեալ՝ եղ ի բերան Գելասիոսի այնպիսի բանս որ դէմ ընդդէմ հակառակ ելանէին զրելոցն ի նմանէ իրօք. այսինքն թէ թագաւորք և կայսերք անպատճառ և ամենայն ուրիք զտանին ընդ իշխանութեամբ պապին : Հաւաստին այս ինչ է՝ զի Գելասիոս զրեաց՝ թէ առաջնորդք Եկեղեցւոյ հարկաւ ի ներքոյ կան օրինաց կայսրն, և միայն ի ինդիրս հաւատոյ և խորհրդոց չպարտի խառնիլ աշխարհականն իշխանութիւն 82) :

Երկրորդ կանոնն քսաներորդի հինգերորդի պատճառին որ առ Գրատիանոսի՝ յայտ առնէ և զայն ևս՝ թէ նա և ի կեղծ և ի սուտ առաջարկութիւնս անդ գործեալ լինէին խարդա-

(\*) Այն է կոչեցեալն ի հնոսոմն «Գէնարչարան», կամ «Մեդոթիս», հաւախաւորք տալով Գաղղիոյ, զոր և յայսմ ուժ պաշտօրեալ և դատող կամ սովորաւորն իրասխանիչէ :

խնք: Քանզի ժողովն Տոլեդոյ (յամին 648) բանադրեալ էր զայնոսիկ ի քահանայիցն Սպանիացւոց՝ որք մտարերեցին կրօնորդ իննել վտարանջութեան ամբոխին յարքայէ, և միանգամայն յաւելոյր՝ թէև ինքնարքայն և սանկցի ընդ նզովիւք՝ էթէ լուծանիցէ զայն բանադրանս: Աստի յայսմանէ կազմեաց սուտանուն Իսիդոր զառաջիկայդ կանոն, եղեալ զայն ի բերան Ադրիանոսի 85): «Ընդ նզովիւք պարտ է արկանել զայնոսիկ թաղաւորս՝ որք լուծանիցեն երբէք զոր և իցէ կանոն ժողովական, և կամ թող տայցեն այլոց լուծանել զայն», Իսկ այժմ ի գիրս Անսելմոսի, Աստուածատրոյ և Գրիգորի Փաւլիացւոյ՝ ի տեղի բառիցս յաւելան իննն եղեալ կայ արդէն կանոնս՝ պարտ է: Այսու եղանակաւ առ ձեռն ունէին զայն ինչ որում կարօտէինն, այսինքն է վաղնջուց իմն օրէն եկեղեցական՝ որ արդարացուցանէր զզնացս Գրիգորի և Աւրբանոսի Բ, ընդդէմ իշխանաց ժամանակին, և այնուհետև ոչ պակասէին պապին պատճառանք, բանադրանս զնկոյ ի վերայ նոցա Հանդերձ ամենայն հետևանօք բանադրանացն 84):

Գրիգոր Է առեալ է ի դրոց սուտանուն Իսիդորի զվէժ անկեան և զխարխախ հաստատութեան զրութեանն իւրոյ: Իբր զի Իսիդորոս զնէ ի բերան Յուլիոսի պապին (յամին 538) զառաջիկայ բանսդ՝ իբրու գրեալս առ եպիսկոպոսունս արևելից. «Առանձինն արտօնութեամբ հռովմէական Եկեղեցի ունի իշխանութիւն բանալոյ և փակելոյ զդրունս արքայութեան ում և կամիցի», \*) 85): Ի վերայ այս բանի հիմնէ Գրիգոր ըզկարծիսն իւր զտիրապետութենէ 86): Եւ զիմրդ իսկ կարող էր չի ննել դատաւոր ամենայն աշխարհի նա՝ զորոյ զկամանն կախեալ կայ երանութիւն և դատապարտութիւն մարդկան:

(\*) Տե՛ս ————— շարքիւր և շարք պարտախոս սասցուածոյ շարքիւր «Թարգմանց», զնէ ի բերան Սեպտեմբրուսի Ա, յառեմ «Յի երկուսուր և երկուսուր բանալիս ունիմ իշխանութիւն իսկել: Եւ արժիել յերկինս և յերկրի» և որ այն և —

Այս բանն ի նոր մատենան կերպարանափոխ լեալ, և ձեացեալ է առանձինն կոնդակ 87) : Այս բանական ասացուածն էպիտէլ և արդիւնէլ եղև ի ձեռս պապիցն անսպառ աղբիւր իրուանց և ձեռներիցութեան, և Գրիգորեանք ի կիրարկանէին զբառոց զայդոսիկ իբրև զձև իմն մոգական առ ի հասանել նպատակի հաճոյից իւրեանց : Եթէ կամէր յանկարծ Գրիգոր զրկել զարքայն Գերմանիոյ յաթոսոյ նորա 1), ասէր. «Ինձ տուեալ է իշխանութիւն կապելոյ և արձակելոյ յերկինս և յերկրի», : Եթէ կամէր արձակել զհայտակա յերգմանէ հաւատարմութեան առ թագաւորն իւրեանց, ասէր. «Ինձ անկ է իշխանութիւնս արդիւնէլ», 88) : Եթէ հարկ ինչ լինէր կարգադրութիւն իմն առնելոյ զշտարին ստացուածոց, յայտ առնէր Գրիգոր (զոր շրինակ արարն ի Թողովին Հոռովմոյ 1080 ամի), թէ «Վամիմք», մէք ցուցանել աշխարհի՝ թէ զթագաւորութիւնս, զգրուութիւնս, զկոմսութիւնս, միով բանիւ զտացուածս ամենայն մարդկան կարող ենք առնուլ յուսմէ՛ և կամիցիմք, և տալ ու՛մ և կամիցիմք. քանզի ի ձեռս մեր էլկապել և արձակել 89), : Պատմէ Հոռովինոս զկեղծիս իմն՝ որպէս թէ կայսրն Վաստանդիանոս ասացեալ իցէ ի Թողովին Նիկիոյ յեպիսկոպոսունան՝ որք տուեալ էին ամբաստանութիւնս զերբրաց, թէ «Նպիսկոպոսունքն աստուածք են. իսկ ես մարդ գոյով՝ չկարեմ զաստուածս զասել», և ի հօր պրեալ իցէ զամբաստանութիւնսն որ զեպիսկոպոսացն : — Նիկողայոս Ա զոյս առասպելս յուշ արար Միքայելի կայսեր 90) : Անսելմոս ընկալաւ զայն ի հաւաքումն իւր. նմին հետևող գտաւ Գրատիանոս. և ինքն Գրիգոր գտանէր ի բանին զյայտնի սպացոց՝ թէ ինքն պապ գոյով և եպիսկոպոս եպիսկոպոսաց, կայ և մնայ ի վերայ երկրի անմատոց մեծութեամբ բարձրացոյն քան զամենայն թագաւորս : Եւ Անսելմոսի և Գրատիանոսի՝ Հոռովինեան վէպ այլ ազգ իմն պատմի. որպէս թէ Վաստանդիանոս զպապն միայն անուանեալ իցէ Ապոստոլ 91) : Այսպէս մեկնեցին և իմացան զառասպելս Հոռովինոսի և յապա ժամանակս . . .

Այր որ իրրև զԳրիգորիոսն էր, թէպէտ և սակաւ յոյժ պարապէր յաստուածաբանական խնդիրս, անտարակոյս գիտէր զյարգ առանձինն շնորհի անսխալութեան իրրև զթանկագին ազամանդի ի վերայ թագին իւրոյ: Չեռներիցոյթիւնը նորա ի տիրապետել ամենայն աշխարհի, իրաւունքն փոփոխելոյ զթագաւորս, իշխանութիւն արձակելոյ զհպատակս յերզմանէ հաւատարմութեան առ նոսա, այս ամենայն հաստատեալ կայր ի սեպհական իշխանութեան նորա. և քանզի ինքն պապ գոլով անսխալ՝ պոսպէս ասէ, ամենայն ոք պարտական էր հաւատալ բանից նորա. և սակայն առ ի հաստատել և ևս զանսխալութիւն նորա՝ հարկ էր հզօրագոյն ևս վկայութիւնս և փաստս ի մէջ բերել քան զԽիզորեան ստութիւնսն . . .

Պայն Աղաթոն ի ժողովին Հռովմայ (680 ամի) յայտարար թէ ամենայն եպիսկոպոսունք Անգղիացւոց պարտական են կատարել զպատուէրս և զսահմանադրութիւնս եղեալս յառաջնոցն Հռովմեական ժողովոց վասն Անկրտաբսոնեան Եկեղեցոյ (92): — Եստի յայսմանէ յառաջ երբեր Աստուածատուր, որպէս թէ Աղաթոն հրատարակեալ իցէ զկոնզակ առ եպիսկոպոսունս «Բնայն շէտքն», և որպէս թէ ասացեալ իցէ ի կոնզակի անդ՝ թէ «, Ամենայն պատու էրք հրամանի պապից պարտին ընդունելի լինել այնպէս՝ որպէս թէ հաստատեալ իցեն ձայնիւ նորին իսկ Պետրոսի (ուստի և անսխալք են 93)», :

Մին ի յանդգնագոյն խարդսխութեանց՝ զորս Գրիգորեանքն իշխեցին առնել՝ դտանի առ Անսելմոսի 94), ապա և առ կարգինալին Գրիգորի, յորոց էանց առ Գրասիանոս: Օգոստինոս գրեալ էր այսպէս. « Այնորիկ ի հանձնակն զբոց (Աստուածաշնչին) առաւելապէս արժանի են հաւատարմութեան, որք յառաջ քան զայլն ընդունելի եղեն և պահեցան յաստուածական իմն իմն իմն: »: Այսպէս կոչէր նա զԵկեղեցիս Կորնթոսի, Եփեսոսի և զայլս: Արդ այժմ՝ այս բան Օգոստինոսի այնպէս փոխեալ է՝ զի ընթեռնուովք « ընդ հանձնակն զբոց՝ համարելին թուղթքն զորս «Իմն պապական հրատարակէր առ այլ Եկեղեցիս և ամոռս », : Եւ այսպէս աստուածաբանք և կանոնա-

գետք միջին դարուց, որք սովորաբար զտեղեկութիւնս իւրեանց ի մասին մատենագրութեան Հարցն սրբոց քաղէին ի գրոցն Պետրոսի Լուսարդոսի և Գրատիանոսի, արդարև իսկ կարծէին՝ թէ Օգոստինոս համեմատե զպապական կոնդակն ընդ սուրբ գրոց կանոնի աստուածաշնչին 93), Յորժամ յամեն 1450 և 1516 կարդինայքն Թուրք, քրէմսթա և Վայետանոս վերածեցին զվարդապետութիւնն յաղագս անսխալութեան պապին յոճ և ի ձև դպրոցական 96), զբանս իւրեանց հաստատէին նորա բացայայտ վկայութեամբն Օգոստինոսի, որ իբր թէ չթողոյր բնաւ տեղի կասկածանաց՝ թէ գերահոչակ աստուածաբանն այն նախնի եկեղեցւոյ համարէր զոր և իցէ բան պապական նոյնպէս անսխալ՝ որպէս և զթուղթմն առաքելականս 97)։

Որպէս զի առաւել ևս հաւատք ընծայեսցին անսխալութեան պապին, ասացաւ թէ մէն մի ի պապից ունելով ունի շնորհքն որքն զայս իմաստ հնարեաց նախ քան զամենեսեան Եննոզիոս սարկաւազ և քարտուղար պապին Սիւմմաքոսի, որ պաշտպան էր պապին ընդդէմ ամբաստանութեան յանցաւորութեանն եղիցոյ զնմանէ 98)։ — Զսուտն իմաստ կամ զգաղափար Եննոզիոսի ազահարար ընդգրկեաց սուտ առնուն Իսիդորոս, և կեղծեաց զգոյութիւն երկուց ժողովոց 98), որք որպէս թէ միաձայն վկայութեամբ հաւանեցան և ստորագրեցին զգրուածն Եննոզիոսի։ — Սրբութիւն պապից առ հասարակ, զոր Գրիգոր է՝ ըստ նորա բանիցն՝ փորձիւ ետես ի վերայ անձին իւրոյ 99), եղաւ ի նմանէ հիմն հաստատութեան ձեռնբրիցութեան իւրոյ ի տիրապետել ամենայն աշխարհի՝ Քանզի ասէ նա. « Ամենայն թագաւոր կամ իշխան՝ որ յառաջն հեղահամբոյր էր և բարեմիտ, ընդ առնուն զիշխանսն ու թիւնսն վատթարանայ. ընդ հակառակն՝ պապ որ ըստ կանոնի հաստատեալ 100) իսկոյն սուրբ լինի շնորհիւ արդեանց « սրբոյն Պետրոսի։ Երդմենցուցիչն ի կղերին բարձրագոյն է և « հզօրագոյն քան զամենայն թագաւորս աշխարհի. Վասնզի « երդմենցուցիչն ի բաց հալածէ զդևս, որոց պաշտօնեայք են « իշխանքն անպիտանք ։ »

Այս վարդապետութիւն անձնական սրբութեան պապից, զոր Գրիգոր է եհան իրրև զկարծիս Սիւմնաբոսի, ընկալեալ է ի կարգս սահմանաց հոռվմեական Եկեղեցւոյ, Այլ քանզի կարի իմն յայտնապէս ընդդէմ ելանէին այս վարդապետութեան անտաղութիւնը և անժխտելի շարագործութիւնը ու մանց ի պապից անտի. մտարերեցին հնարել և զայլ իմն վարդապետութիւն, զոր կարդինալն Ըստուածատուր եհան ընդ անուամբ Վոնիփակիոսի՝ առաքելոյն Գերմանացւոց. քանզի այս էր իմաստ նորին. « Եթէ պապն այնքան անպիտան իցէ՝ մինչև զանհաւար Բաղդադն ազգաց և ազանց ձկիցէ ընդ իւր « ի դժոխս, սակայն և այնպէս ոչ որ համարձակեսցի պատահալ « րակիլ զնա վասն այնորիկ. իրր զի նա որ դատի զամենեւ « սեան՝ ոչ կարէ դատիլ յումերէ, Միմիայն բացառութիւն « յայսմ կանոնէ իցէ ուրանալն պապին զհաւատս, : Եայտ իսկ է զի այս վարդապետութիւն ոչ է Վոնիփակիոսի, այլ անդէն ի Հոռվմ հնարեալ. քանզի առ Վոնիփակիոսի ոչ գոյր անհաւար Բաղդադն ազգաց և ազանց՝ զորս պապն կարողանայր արդեօք ձգել ընդ իւր ի դժոխս : Աւստի և ի միտ առնուլ է ի բանից այտի՝ թէ ծանօթ իսկ էին բազում պապք շարագործք, և թէ յայնպիսում ժամանակի գրեալ են իրքդ՝ յորում արդէն մեծատարած և հզոր էր իշխանութիւն պապից ի վերայ ազգաց. ուստի հաւանական է զի հնարեալ են զինի աւուրց Բենեդիկտոսի Թ :

Գրիգորեանքն յամին 1080 և յետ այնորիկ տարածեցին զայս վարդապետութիւն՝ թէ ամենայն պապ ըստ կանոնաց ձեռնադրեալ, և որ ոչ բռնութեամբ տիրեալ իցէ սթոռոյն, սուրբ է և անսխալական 99) : 2իք երկրայութիւն՝ զի այս սրբութիւն յատկական իմն է (և ոչ ժառանգական), վասնորոյ և ասի. « Եթէ պապն ոչ ունիցի ինչ արգիւնս անձնակաշքս, նմա գրին արգիւնը նախորդի նորա՝ սրբոյն Պետրոսի, : Սակայն ոչինչ հայելով ի սրբութիւն այսպիսի, կարելի է դէպ լինել՝ զի նա ձգեսցէ ի դժոխս զանհամար բազմութիւն մարդկան, յորոց և ոչ մի որ ի նոցանէ իշխէ ասել ինչ հա-

կառակ նմին, կամ զգուշացուցանել զնա, և անսխալութիւնը նորա ոչ արգելու զնա անկանել ի հաւատոց. և յայնժամ մարթ է յառնել ընդդէմ նմին: — Հաւանելի է թէ ի վերայ պար բանի հիմնեալ է զանազանութիւնն ընկալեալ յաստուածարանից յետին ժամանակաց՝ ընդ մէջ անսխալականութեան պաշտաման կամ աթողոյ, և ընդ մէջ հնարաւորութեան անձնական ուրացութեան հաւատոյ:

Թուի թէ Գրիգոր Ե՛ հաստատութեամբ եղեալ էր ի մտի՝ թէ անսխալութիւն իւր արդէն ընդունելի լեալ է համօրէն ամենայն քրիստոնէից, ևս և յարեկա: Քանզի գրէր նա առ կայսրն Հենրիկոս՝ թէ յունականն Եկեղեցի անկաւ ի հաւատոց, և Հայք կորուսին իսպառ զհաւատս. բայց ի վերայ բերէ՝ թէ *բէւէւայ* սպասեն ի սրբոյն Պետրոսէ (այսինքն յինէն) զլուծումն պէս պէս կարծեաց իւրեանց, և ահա յայնժամ կատարեցի խոստումն եղեալ առ Պետրոս՝ հաստատելոյ զեղբարս իւր. Վամէր նա յայնժամ (յամին 1074) ինքն իսկ անցեալ ի գլուխ մեծի բանակի զօրաց, — զի թուի թէ ոչ յուսայր ի կամակար հնազանդութիւն Յունաց, — զնալ ի Վ. Պոլիս, և անդ կազմել ատեան մեծ զատաստանի հաւատոյ: Սակայն գոհ եղև այնու՝ զի վառեաց ի Կերմանիա և յԽտալիա զքաղաքական և զկրօնական պատերազմ, և մինչև զազարեալ էր այն՝ ինքն զբաւեցաւ ի կենաց:

Ըստ բանիցն Գրիգորի՝ պատմութիւնն ողջոյն ուսուցանէ թէ որպէս յանձինս պապիցն ընդ անսխալութեան միարանեալ կայր միշտ և սրբութիւն: — Մինչդեռ ի թիւս կայսերացն և թագաւորաց կարի իմն սակաւաթիւ էին սուրբքն, ի հարիւր յիսուն և երկից պապիցն հարիւրիքեան ոչ միայն սուրբք էին, ասէ, այլև հասին ի բարձրագոյն աստիճան սրբութեան: Գրիգորեանքն հրատարակեցին և զայս առասպել, որպէս թէ պապքըն երեսուն որք կացին մինչև ցաւուրս մեծին Պոստանդիանոսի, ամենիքին առհասարակ՝ բաց ի միոյն՝ նահատակեալ մարտիրոսացան (1), — Առհասարակ Գրիգորեանքն պարապէին յուղղագրել զվաղեմի պատմութիւնս պապից. և յորժամ

ուրացութիւնն Լիբերիոսի, որ ի ժամանակագրութենէն Հերոնիմոսի էանց ի բազում գրուածս պատմականս, ոչ կարաց միարանել ընդ պապական սրբութեան և անսխալութեան, յայնժամ Անսելմոս ընկալաւ յւրն կանոնական սահմանադրութիւն զառաջիկայդ առասպել, որ և հնարեալ էր յառաջքան զնա, այսինքն թէ յորժամ կայսրն արսորեաց զԼիբերիոս, նա ըստ խորհրդոյ երիցանց Հռովմայ ինքնին ձեռնադրեաց զՓելիքս յաջորդ իւր, և այնպէս ապա հրաժարեաց յաթոռոյն: Եւ այսպէս յետին ուրացութիւն նորին անվնաս համարեցաւ 100):

Արդ եթէ ամենայն պապ սուրբ իցէ և անսխալ, ապա բովանդակ քրիստոնէութիւնն՝ ըստ Գրիգորեանցն կարծեաց՝ պարտի զողալ առաջի նորա իբրև առաջի ասիական բռնակալի, որոյ զժկամակութիւնն իսկ մահաբեր է մարդկան: Սմին իրի Անսելմոս և կարդնալն Գրիգոր ի վաղմի խարդախանաց և ի բանից ճառի միոյ ստուժեամբ ընծայելոյ սրբոյն Պետրոսի քաղեցին զայս իմաստ՝ թէ ոչ որ յանդգնի կենցաղավարել ընդ առն՝ զոր պապն ատեայ, կամ ընդ որում պապն չխօսի 101):

Հանդոյն խաւ ի խաւոյ կարգաց երկրադնդիս ձևացելոց հետ զհետէ բաժանմամբ, Եկեղեցւոջ ևս կարգ մի խարդախանաց և կեղծեաց անկեալ դնէր ի վերայ այլոյ կարգի: Եւ այս յայանապէս երևեցաւ ի մեծ խնդիրն Եկեղեցւոյ ծագեալ ի ժողովի՝ յորում հանդէպ միմեանց յարուցեալ կային կրկին սկզբունք հակառակք իրերաց. սկիզբն արդարաբառութեան և ինքնազրութի կառավարութեան Եկեղեցւոյ ի ձեռն ժողովոց, և սկիզբն անսահման միապետական տիրապետութեան ի վերայ ամենայն Եկեղեցեաց ի ձեռն պապին և պալատան նորա: Յամին 342 պապն Յուլիոս զրէր առ եպիսկոպոսունս արևելից՝ որք ի ժողովին Անտիոքայ հաստատեալ էին զընկեցումն Աթանասի յաթոռոյն, թէ « Ի գործ և ի խնդիր վերաբերեալ առ համբռն Եկեղեցին պարտ էր ձեռք՝ ըստ Եկեղեցական սովորութեան՝ ոչ ինքնին ինչ գործել, այլ հա-

Ճաճայնութեամբ եպիսկոպոսաց արևմտից (իմն մեր ամենեցուն՝ ըստ նորա մտացն) : ,, — Ստերատ (\*) որում աստորժական էին դէպք իրացն 102) առ ի նշաւալիկոյ զհնոյմեականն փառամոլութիւն, ալլափոխեաց զբանսն Յուլիոսի այսպէս .

« Առանց հաւանութեան եպիսկոպոսին Հոովմայ ոչ է օրէն վճռել ինչ յեկեղեցոջ ,, : Լատին իմարզմանին Սոկրատայ՝ բտաւցին Եպիսկոպոս (յամին իրր 500) . քալ մի ևս յառաջ խաղացեալ 103) ել ի բերան պտպին զառաջիկայ բանսրդ .

« Առանց հաճութեան պապին ոչ է մարթ առնել և ոչ զլի ինչ ժողով : ,, Սուտ անունն Իսիդորոս և զայս ևս նիւթ էսոն իւր ի պէտս, և յերկուս ինքնահնար գրուածս իւր արար խօսել պապին այսպէս .

« Արդէն առաքեալքն, և « ապա Հարք ժողովոյն՝ նիկիոյ հրամայեցին, զի առանց հաւանութեան պապին մի՛ կոչեսցի և ոչ մի ինչ ժողով ,, : (\*\*)

Եւ այսպէս Անսկմոս և այլ Գրիգորիան կանոնագէտք կարողացան ի մէջ բերել կարգ ըստ կարգէ բազմամիւ կոնդակս վաղնիս, յորս ժողովք հանգերձ ամենայն սահմանադրութեամբ իւրեանց գրանէին կախեալ բոլորովին զհաճոյից պապին, և Գրատիանոս զամբողջ զուխն ժե յիւրում մատենին առեալ է յԱնսկմոսէ :

Սակայն և այս ոչ էր շատ : Այս կամք էին նոցա՝ զի ոչ միայն ժողովքն կախէին զկամաց պապին, այլ զի ջնջեսցի և

(\*) Ստերատ յոյն պատմագիր Եփեսոցոյ՝ մանուսանէան Ստերատին, յարմար է զլատարմանն Եփեսոցոյն պատմագրանն Եստիքեայ ցատորս իւր, այս է ցամ 459 :

(\*\*) Անն ինչ զարմանե՛ զի և մտմոք իւրբաննին Տեոփոլասոսոյն արմաննինն փեռանէի, Գեր. Երոսոսոյք սքեպիսկոպոս Հիւրմեղեան, ընդ այս է սրայոյք և է իւրբոսի վիւյոսնեանց է միջ բերէ և զայս վիւյոսնեանն իբր զհաջողար ինչ և և զվաւերմանն : Տեօ է հար. Ա, էջ 240, սպ. է վեկտրի :

Նոյն իսկ սովորութիւնն ժողովս կոչելոյ, որ հաստատուն կացեալ էր զամս իրր ինն հարիւր: — Զորօրինակ թագաւորքն ժՁ և ժԷ զարուց իրրև ելին բացարձակ և ինչնազուխ տիրապետողք՝ ոչ ևս կարելին տանել ժողովոց ազդային երեսփոխանաց կամ նուիրակաց, ըստ նմին օրինակի և պապքն թեակոխելով ի բացարձակ իշխանապետութիւն՝ համարեցան թէ լաւ է բառնալ ի միջոյ իսպառ զտեղական ժողովս. իրր զի միւսն ի ձեռն ժողովոց և ընդ ժողովոց առանձին վիճակաց, գաւառաց և տեղական նկեղեցեաց, կարելի էր պահպանել զոչ ջափս հաւատս, և ըստ իմիք զինքնազուխ կենդանութիւն նշխարացուոյ, Ա. ասնորոյ հասկ էր ժողովոցն անհնարինս լինել՝ կամ գէթ դժուարինս ի կոչել, և այնչափ տկարացեալս՝ զի միայն ըստ ակնարկութեանցն Հոռովմայ կարող լիւիցին ներգործել: — Եւ հասին նոքա յայտ կէտ նպատակի առաջիկայ խարդախանօք:

Հակառակորդքն Սիւմմաքոսի (յամին 303) կամելով ցուցանել՝ թէ ինքեանք և առանց պապին կարող են հաւաքիլ ի ժողով ի Հոռովմ, յայտ արարին. թէ « Գաւառական ժողովք տարեկանք պատուիրեալք յԵկեղեցեոյ չկարեն կորուսանել զզօրութիւն իւրեանց այնր աղագաւ՝ զի պապն չգտանի ի նոսա առաջիկայ », և « Աս այս Եննողիոս տայր պատասխանի. « ըստ կանոնի Սարգիկեան ժողովոյն՝ խնդիրք մեծամեծք յԵկեղեցեոջ պահեալ են դատաւճոյ պապին », — Զիք երկբարութիւն, զի վաղեմի իմն խարդախանք էին ի բանիդ, քանզի Սարգիկեան կանոնն թողոյր պապին միայն զվերազննութիւն ինզրոյ եպիսկոպոսացն դատապարտելոց և բողոքողաց, Բայց Անսելմոս, և ըստ նմանէ Գրիգոր և Գրատիանոս, յօղեցին յայսմանէ զխնդակ Սիւմմաքոսի, յորում՝ բառ առ բառ ասացեալ լինէր. « Եպիսկոպոսական ժողովք, որք ըստ պատուիրիլ ի գաւառս, կորուսանեն զզօրութիւն իւրեանց՝ եթէ ոչ իցէ ի նոսին պապն առաջիկայ », Խորագիր կանչակին այսպիսի ինչ էր. « Գաւառական ժողովք՝ առանց առաջիկայ լի-

նկոյ ի նոսա պապին՝ զուրկ են ի նշանակութենէ, և ապապէս ի լինել հարկի՝ երևա տողովք բանից յիշաշրջէին զամենայն կարգս կազմութեան Եկեղեցւոյ:

Կամէին և ևս ի ձեռս բերել զհնարս բացէ ի բաց խափանկոյ զամենայն գաւառական ժողովս. և այսմ զամադիս եղին այնու՝ զի Անսերմոս, Գրիգոր և Գրատիանոս ընծայեցին Գրիգորի մեծի զհետագայ բանսդ. «Ոչ երբէք տուեալ է, և ոչ երբէք տացի հրաման ում և իցէ առնել զմասնական ինչ ժողով,» — Խարգախանք բանիդ յայսմ էին, զոր ինչ Պեղազիոս ըստ առանձինն զխալաց ինչ՝ որում պատճառս տուեալ էր հերձուածն Աքուիլեան՝ ծանուցեալ էր Քրիստոսի խաչման ժողովոյ, որ գործեալ էր հակառակ սահմանադրութեանց հինգերորդի տինգերական ժողովոյն, զայն զոքս դարձուցին ընդդէմ՝ աճնոյն խաչման ժողովոյ. իսկ զիշատակութիւն առաքելական Եկեղեցեաց (Աղեքսանդրիոյ, Անտիոքոյ), փոփոխմամբ բազմաւորական թուոյն յեղական (104) դարձուցին ի բարձրացուցանել զիշխանութիւնն պապական: Եւ այսպէս կարողացան հասանել երկուց նպատակաց. յորոց մին էր ի բաց բառնալ զոր և իցէ ժողով կախկոպոսաց՝ իրրե զպօրինաւոր իմն ձեռներիցութիւն, և միւսն՝ առաջի առնել զիշխանութիւնն պապական, որ իբր թէ ըստ կարծեաց բովանդակ քրիստոնէութեան կարող էր բառնալ նաև ի ժողովոց զառաքելական կարգաւորութիւն նոցին՝ զպայծառազոյնն բան զլոյս:

Մեծապէս օրնեաց սուտ անունն Իսիդորոս դիտաւորութեանցն Գրիգորի նաև յայսմ: Զօրաւորազոյն զէնք պատեւրազմի ի ջատագովութիւն պապական տիրապետութեան էին բանադրանքն եկեղեցականք: — Ըստ բանիցն Իսիդորի՝ պապականք նախնի դարուց սահմանեալ էին զի մի՛ ոք իշխեսցէ խօսել ընդ բանադրելոց: Գրիգորեանքն զհետ բերին այսմ՝ թէ սահմանադրութիւնդ այդ ունի զլիակատար զօրութիւն նաև ի վերայ կայսերաց և թագաւորաց: Ըստ այսմ՝ եթէ պապն բանադրէր զոք ի նոցանէ, ոչ ևս իշխէր ոք խօսել ընդ

նոսա զգործոց տէրութեան. ուստի հարկաւ պարտ էր նոցա անկանել յաթոռոցն, իբր զի անկարողք էին ի ղեկավարել: Այսպիսի տարածմամբ եկեղեցական բանադրանաց, որ անծանօթ էր նախնի եկեղեցւոյ և վեր ի վայր շրջէր զըտլանդակ կարգս նախնական եկեղեցւոյն, — ստեղծագործեցաւ անսահման իմն իշխանութիւն: Եւ զայս իշխանութիւն ոչ միայն ի մասնական ինչ զէպս մարթ էր ի չարն ի կիր արկանել, այլև ինքն ըստ ինքեան զեղծումն էր հաստատուն և անընդհատ, որ քակաէր զամենայն կարգ աստուածային և մարդկային, և անսպառ աղբիւր լինէր քաղաքական խռովութեանց և հերձուածոց: Խոստովանի Պոսիւէ՝ զի թիւր վարդապետութիւն էր այն զոր ջանայրն Գրիգոր մուծանել յեկեղեցի (103) ինքն իսկ Գրիգոր զիտէր անշուշտ՝ զի նա առաջին սկիզբն արար այնպիսի ձեռնբրիցութեանց, և թէ նաև ի կոնդակագիրս սուտ անուան Բսիգորի ոչ զոյ այնպիսի ինչ, թէպէտ և ինքն ի Ժողովի ուրէք (1078 ամին) ասաց, որպէս թէ հետևող էր յայտրմ սահմանադրութեանց նախորդացն իւրոց (106): Առ անվանելի գործելոյ զայստօիկ զէնս հողևորականս, Գրիգորեանքն առին ի սուտանուն Բսիգորէ զայսպիսի իմն կանոն, որպէս թէ Աւրբանուս Ա զրեալ իցէ առ ամենայն եպիսկոպոսունս. «Եթէ եպիսկոպոս որ բանադրեալ իցէ զոք յանիրաւի, յայնժամ ևս պարտ է երկնչել յայնպիսի բանադրանաց, և մի՛ որ իշխեսցէ ընդունել զբանադրեալն ի հաղորդակցութիւն», (107)

Արդ եթէ ակնարկիցէ որ այժմ ի շինուած համաշխարհական միապետութեան պապից՝ որ յընթացս եօթն հարիւր ամաց կառուցաւ, և արագ արագ զիմեալ գնայ յաւարտումն, ոչ կարէ չտեսանել զքարինսն զայնտօիկ՝ յորոց կազմեալն էւ Ընդ երկար ժամանակս հետամուտ եղին բազումք մեկնաբանութեան իրաւանցն տուելոց պապին ի Սարգիկեան Ժողովոյն \*):

(\*) Զորոյ զվայնսնննն է մեջ բերել և շինուելունն է Տեախան Աստուածաբանութեան: արու. հաս. Ա. էջ 240:

Անդատին ի յետին ամաց հինգերորդի դարուն, յորժամ ի պատճառս պահանջանաց Լեոնի և Գելասիոսի ձեռներիցու-  
թիւնք պապիցն սկսան աճել, սկիզբն եղև յաղմութեան սոս-  
յոզ վարդապետութեանց, յորոց ոմանք հնարեցան ի Հռովմ  
և այլք յայլ տեղիս, ռաց ընկալեալ եղևն ի Հռովմէ և ի  
գործ եզան յօգուտ նորին:

Թ.

Քննութիւն խարդախանացն Հռովմայեցոց: — Դի-  
տաւորութիւն պապիցն առաջնոց: — Սկիզբն ստա-  
յոզ պատմութեանց եւ կոնդակաց: — Գործք Լի-  
բերի-սի եւ Սերստոսի Գ.,: — Փելիքս Բ եւ ծեռնե-  
րիցաւթիւնք նորա. — Կանոնադիրք արեւելեացն եւ  
արեւմտեաց: — Խարդախանք վկայութեան Կիպրի-  
անոսի:

Ոչ է մարմ ուղղակի կամաւոր խարեութիւն կոչել զայս՝  
զի պապքն յաւուրց անտի Իննովկենտիոսի Ա, և Զոսիմասի,  
համարէին զկանոն ժողովոյն Սարդիկեայ սահմանեալ յառաջ-  
նումն Նիկիական ժողովին. խարեալ էին նորա ի կանոնական  
սահմանադրութեանց նոցին, Բայց զիտաւորութիւն նոցա  
յայտնապէս յիրեան ելանէ՝ յորժամ վեցերորդ կանոն Նի-  
կիական ժողովոյն, յորոյ ի բնագրին ոչ զջր և ոչ մի բառ  
զցերագահութենէն Հռովմայ, ի Հռովմէական գրչագրին ըն-  
կալաւ զյաւելուած այսպիսի. «Նկեղեցին Հռովմայ ունէր  
միշտ զնախագահութիւն, և յս նենգագործութիւն՝ յամօթ  
նախակացն Հռովմայ՝ ի վեր հանաւ ի ժողովին Քաղկեդոնի  
(յամին 431) ընթերցմամբ բնագրին 108):

Ի վախճան հինգերորդի դարուն և ի սկիզբն վեցերորդին  
սկսան շարք խարդախանաց և ստայոզ պատմութեանց: Յըն-  
թացս դարուց բազմաց պատրաստեցան անհիմն պատմութիւնք  
վկայից կամ մարտիրոսացն հռովմայեցոց, Առասպելախա-

որն պատմութիւն դարձին և մկրտութեանն Կոստանդիանոսի \*) Հնարեցաւ առ ի մեծացուցանելոյ այնու զնկիղեցին Հոովմայ, և զպապն Սեղբեստրոս փառաւորելոյ իրբև զայր սքսնօ շելագործ, Յետ սակաւուց սկիզբն եղաւ պսամ կարծեաց՝ թէ ոչ որ ի պապից անկանի ընդ երկրաւոր դատաստանաւ, և թէ նա անձամբ զանձն դատի: Յառաջ քան զամն 314 յընթացքս շորից ամաց տեսարան եղև Հոովմ՝ արինոուշտ հակառակութեանց յաղագս պապական արժանապատուութեան, արբանակքն Յիւմմայրոսի և հակառակորդին նորա Լաւրինտիոսի սպանանէին զմիմեանս ի փողոցս քաղաքին: Աջ կամին կացուցանել դատաւոր վիճմանցն ոչ զարիտական արքայն Գովմացուց զԲէռոզորիկոս, և ոչ զատելին Հոովմայ լողկայսն Բիւզանդիոյ: Եւ այսպէս Հնարեցան սահմանք ժողովոյն Սինուէսաց \*\*): Հանդերձ առասպելեալ պատմութեան Մարկեղոսի պապին, որպէս և վճիռք կարծեցեալ ժողովոյն Հոովմայ (յափն 321) գումարելոյ յերկերիւր ութսուն և չորրս եպիսկոպոսաց և վճիռքն պնդելի յայտնապէս յօրինեալ են ընդ ազգեցութեամբ արևնահեղ տեսարանաց. յորս զկղերիկոսն ի մահ մատնէին կամ պատուհասակոծ առնէին պատճառանօք պէսպէս, յանցաւորութեանց: — Յայնմ իսկ ժողովի հաստատեցաւ՝ թէ ոչ որ իշխե դատել զպապն (109):

Յայնմ ժամանակի երևեցան ի Հոովմ՝ առաջիկայ սուայօղ զրուածքք. Ա, «Գործք Լիրերիոսի պապին», որոյ նպատակն էր հաստատել զառասպելն մկրտութեան Կոստանդիանոսի ի Հոովմ, և ցուցանել՝ որպէս թէ Լիրերիոս ապաշաւեալ իցէ ընդ հերետիկոսութիւն իւր, և սրբեալ յայնմանէ աստուածային սքանչելեօք: Բ, «Գործք պապին Սեոստուի Գ.», և կըցեալն ընդ նմին «Պատմութիւն Պողկրրոնիոսի»:

(\*) Այնու շանքմանօք զորս անի և զիւն ինչոյն Գուշանց:

(\*\*) Սինուէսուս Կոստանդիոսի Կաթողիկոսի Կաթողիկոսի և ի ժ Գործքն իբրևանեցաւ յարչաանանցն քարքարոսաց:

Վային և այլ ևս ստայօղ գրուածք ինչ յաղագս գրութեան  
 Հոռովայ՝ համեմատութեամբ Եկեղեցւոյն Կ. Պօլսոյ, Եւ էր  
 այն ի ժամանակի անջատման արևելից և արևմտից յեկեղեցա-  
 կան հաղորդակցութենէ իրերաց \*) (յամին 484—519), յոր-  
 ժամ Փելիքս Բ հրաւիրեաց ևս զպատրիարքն Ակակիոս ի Հը-  
 ոռովմ, իսկ Գելասիոս (յամին 495) սկսաւ պնդել ընդդէմ  
 Յունաց, խօսելով զքսաներորդ ութերորդ կանոնէ ժողովոյն  
 Քաղկեդոնի՝ թէ «Հոռովմ հաստատէ զամենայն ժողովս, և  
 դատի զոր և է Եկեղեցի, իսկ զՀոռովմ չկարէ դատել և ոչ մի  
 ի նոցանէ. զնախագահութիւնն ընկալեալ են պապք ոչ եթէ  
 ի ժողովական ինչ վճռոյ, այլ զօրութեամբ բանին Քրիստոսի»,  
 (410)։ Այսու ձեռնորդութեամբ գերազանցեաց նա քան  
 զամենայն նախորդս իւր, և աստի յայսմանէ առին զծագումն  
 առաջիկայ ստայօղ գրուածքդ հոռովմականք. Ա, «Թուղթ  
 ժողովոյն Նիկիոյ», յորում հայցէ ժողովն ի Սեղբեստրոսէ  
 հաստատել զսահմանս իւր. ընդ նմին պատմութիւն ժողովոյն,  
 զոր արարեալ ասի Սեղբեստրոս ի Հոռովմ, և տուեալ զհաս-  
 տատութիւն նորին. Բ, «Յայտարարութիւն Սեքստոսի Գ», թէ  
 կայսրն զումարէ ժողովս զօրութեամբ իշխանութեանն տուելոյ  
 նմա ի պապէն. Գ, «Պատմութիւն Պողիքրոնիոսի», որ արդէն  
 յամին 455 համարէր զպապն դատաւոր արևելեան պատրիար-  
 քաց. և Դ, «Պատմութիւն՝ թէ որպէս ժողովն զումարեալ  
 ի Սեղբեստրոսէ՝ ընկալաւ զվարդապետութիւն Գելասիոսի՝ թէ  
 հոռովմական գերագահութիւնն ունի զծագումն աստուածային,  
 և կարգեաց զդաստարութիւն եկեղեցեացն Աղեքսանդրիոյ և Ան-  
 տիոքայ (զկնի հոռովմականին), լուութեամբ անցանելով զեկե-

(\*) Պարճառ անշարման էր «Ենոքեթնն, այն էսէ է հրովար-  
 րապն Չեմեթի իայտեր հրարարաթեալ յամին 482 յորդորանո՛ւ Ալեքնի-  
 սի պարթեարաթին կասարանքնուպօլսոյ, յորո՛ւ հրամայեալ լինէր տա-  
 րանելոյ ուղղաթարաց ընդ եւրոպայեանն. և իբրեւեաց հրովարարաթն  
 այն յարեւելս անհնարին հոխարաթաթեան և հալածանս ստարեթն յոյժ :

ղեցեալն Կ. Պօլսոյ, Ապա ուրեմն կանոնք 581 ամին յաղագս նախապատուութեան այնր Եկեղեցւոյ պարտին ի բաց մերժիլ (111), Արժան է զիտել զայս ինչ, զի թէպէտ զօրացեալ էր յոյժ ի Հոռովմ սովորութիւն կեղծելոյ և հնարելոյ պէս պէս գրուածս, սակայն յընթացս հազար ամաց ոչ զք մտարերեաց առաջի առնել զիւր սեպհական հաւաքումն կանոնաց հանգոյն կանոնագրոցն՝ որք անգատին ի հինգերորդ դարէ և այսր գտանին յարեւելեան Եկեղեցւոջ: Այսմ պատճառս պարտ է անշուշտ զայն գնել, զի Հոռովմ սակաւ յոյժ և աննշան մասն ունէր յեկեղեցական օրէնսգրութեան: — Թէպէտ և պապք անգաղար ի վկայութիւն կոչէին զկանոնս ժողովոյ, խոստանալով պահել զնոսին և անձամբ տալ զօրինակ հնազանդելոյնոցին, բայց մերձաւորադոյնն ի սիրտս նոցա էր կանոնն Սարգիկեան, որ չէ ընկալեալ ի կանոնագիրս արեւելայց (112): Յորժամ Դիոնիսիոս առաջի արար Եկեղեցւոյն Հոռովմայ զառաջին զչափաւոր հաւաքումն կանոնաց, այսինքն է զիւր թարգմանութիւն կանոնացն Յունաց, Ափրիկեաց և Սարգիկեայց, — ի Հոռովմ՝ սկսեալ յամէն 513՝ զումարեալ էին արդէն առաւել քան զքսան սիւնհոգոսս, բայց ամենեցուն նոցա կամ ոչ ինչ ոչ մնաց, և կամ չէր ինչ որ կարէր լինել ընդունելի:

Ի վախճան վեցերորդի դարուն ձեռն արկին ի Հոռովմ ի յօրինումն ստայօդ իմն գրուածոյ, որոյ ամբողջ արգասիքն երևեցան միւոյն ի յետնագոյն ժամանակս. Ի հռչակաւոր վկայութիւնն որ ի գրոց Ալպրիանոսի յաղագս միութեան Եկեղեցւոյ յաւելաւ (ի թղթին Պեղագիտոսի պապին առ եպիսկոպոսունս Իստրիոյ) ասացուած ինչ ողբով հոռովմական ձեռնն ըրիցութեանց: Բանն Ալպրիանոսի, «Սոաքեալքն ամենեքին ընկալան ի Քրիստոսէ զնոյն իշխանութիւն և զնոյն հեղինակութիւն՝ զոր և Պետրոս», յայտնապէս ընդդէմ՝ ելանէր խորհրդոցն Գեղասիոսի, ուստի և արարին զայս յաւելուած. «Աւաքելոյն Պետրոսի տուաւ նախագահութիւն՝ առ ի ցուցանել զմիութիւն Եկեղեցւոյ և աթոռոյ: Զիւրդ կարող իցէ համա-

րել զանձն իւր անդամ Եկեղեցւոյ նա՝ որ թողուցու զամռոն  
Պետրոսի՝ յորոյ վերայ հիմնեաւ և Եկեղեցին, ( 113 ) :

Ազդեցութիւն այսր յաւելուածոյ պատճառս եռ պէս պէս  
դատող. թեանց եկեղեցականացն Հոռովմայ զՍիւրբիանոսէ :  
Քանզի Սիւրբիանոս էր գրեթէ միմիայն օտառական մարտիրոս,  
զորոյ զտօնն ամ ըստ ամէ կատարէին ի Հոռովմ. Գեղասիոս  
դասեաց զգրուածս Սիւրբիանոսի ի շարս անյայտից կամ անհա-  
րազատից, Հարկ իսկ էր առնել ի՛չ առ ի բառնալոյ զհակա-  
ռակութիւնն որ կայր ի մէջ մեծարանացն՝ զոր տայր ինչն իսկ  
Հոռովմ՝ առնն այնմիկ, և ի մէջ դատապարտութեան գրուա-  
ծոց նորա : Եւ ահա այսու ճանապարհաւ մարթ է բացատրել  
զխորհուրդ յաւելուածին այնորիկ : Ի ցուցակի հեղինակացն  
ստուգելոյ ի Գեղասիոսէ՝ Սիւրբիանոս զտաջին տղին ունի ի  
Հարս Եկեղեցւոյ, և ասի անդ զնմանէ. « Մարթ է զհետ եր-  
թալ բանից նորա յամենայնի, : Հաւաստի իմն է՝ զի հակառու-  
թիւն գոյ յայսմ. քանզի ի նմին իսկ ի կոնդակին Գեղասիոսի  
ի բաց թողեալ է այն բան՝ որով Սիւրբիանոս դասեալ է ի շա-  
րքս անյայտ հեղինակաց ( 114 ) : Բաց որովհետև շարադրածքն  
Սիւրբիանոսի հրատարակեալ ինչին ոչ ի Հոռովմէ, և արդէն  
ի վաղ ժամանակաց ընթերցեալ լինէին յԵկեղեցիս Գաղղիոյ  
և հիւսիսային Իտալիոյ, յաւելուածքն այնորիկ ոչ կարէին ըս-  
պրդել մտանել ի ձեռագիրս :

Ժ.

Պապական Գատեանն կամ Գառազանազիրք պա-  
պից : — Ան ևս դիտումս գրուածոյդ : — Պատմական  
արժէք նոցին : — Ազդեցութիւն նորին յարեւմտ : աս :

Արդէն ի վաղուց հետէ ձեռն արկեալ էր պապականացն՝  
առ հասանելոյ նպատակաց իւրեանց՝ յաւելուել նորանոր բանս  
ի նախնի ցուցակս եպիսկոպոսաց Հոռովմայ, և այն եղև հիմ-  
նարկութիւն հրատարակելոյն յետոյ Մատենի ընդ անուամբս

Գաւազանագիրք պապից 113) : Ջայս գործ ի բնիկ նախնի կերպարանս իւր, որպիսի էր յամին 330, 116) ունիմք աւաթիկ առաջի աչաց մերոց՝ տպագրեալ ի Շէլսթրաթէ : Երկրորդնորոգութիւն այնր աշխատութեան և շարայարութիւնն մինչև ցր-Վոնոն (687) գրեալ է յամին 730. ապա նովին ձեռամբ Հասուցեալ է ցամն 744 : — Վասն վեցերորդ և եօթներորդ դարուց հիմնեալ են բանքն ի վերայ վկայութեանց ժամանակին 117) : Ապա ուրեմն զառաջին յօրինուածն 330 ամի հարկ է համարել կամուորապէս յօգեալ ստութիւն. քանզի է իսկ այն ի կարգի շղթայաշար կեղծեաց և յաւելուածոց Հռովմայիցւոցն իրրու օղակ ինչ կարևոր :

Ըստ օրինակի հռովմեական ստայօղութեանց վեցերորդ և եօթներորդ դարուց ընդհանրապէս՝ և այս ևս մատնան գրեալ է իսթական և անքերական լատինարանութեամբ : Իսկ նպատակ ստայօղ յաւելուածոցն էր նախ հաւատարիմ առնել ըզբազմաթիւ մտացածին վկայարանութիւնս մարտիրոսացն հռովմայիցւոց. յորմէ յառաջ եկին ասացուածքն՝ թէ պապք առաջնոց ժամանակաց կարգեալ էին արագադիր դպիրս բազումն ի շարագրել զվկայարանութիւնսն, և եօթն ևս կիսասարկաւազունս՝ վերակացուս դպրացն այնոցիկ : Երկրորդ, հաստատել զառասպելն որք արդէն կային ի միջի, որպիսի էին Սըկրտութիւնն Վոստանդիանոսի ի Հռովմ, մտացածին բանք ըզԼիբերիոսէ, զՍեղբեստրոսէ Գ, և այլն : Երրորդ, առաջի առնել զարարողութիւնս ինչ Եկեղեցւոյ զձեկայեայս միայն յետ ժամանակաց՝ իրբև զվաղեմի սովորութիւնս : Չորրորդ, ցուցանել զպապն օրէնսդիր համօրէն Եկեղեցւոյ, թէպէտ և չկարացին ի մէջ բերել և ոչ զմի ինչ ի կարգադրութեանց եղելոց ի նոցանէ, և զո՛հ եղն հանրական ասացուածովք՝ թէ, օրինակ իմն ահա այս անուն որ պապ՝ Գելասիոս կամ Գելարիոս՝ հրատարակեաց սահմանս վասն համօրէն Եկեղեցւոյ 118) :

Ի յետնագոյն մասին Գաւազանագրոցն որ առաւել պատմական ոճով է գրեալ, յատկապէս իմն նշանաւոր է փոթն և ջանք ցուցանելոյ՝ թէ պապք ի ինդիրս արևելեայց երևին որ-

պէս թէ ուսուցիչք հաւատոյ և գերագոյն դաւաւորք: Յառաջ նուաճն աշխատութեան, ի բաց առեալ զծանօթութիւնս որ ըզշինուածոց, զնուիրատութեանց և զտապանաց, այլն ամենայն որ պատմական ունէր լինել՝ սուտ է: Բանք հեղինակին զվիճակէ և զգործոց առանձինն պապից՝ ոչ յարմարին երբէք գրելոցն զնոցանէ ի պատմութեան, այլ հակառակին նոցա, և մերթ ամենաթանձր եղանակաւ: Սակս այտորիկ և այնորիկ ի բանիցն՝ զորոց ստուգութիւնն չկարեմք մեք հաւաստել յազբերաց անտի առ ձեռն եղելոց՝ պարտին նոյնպէս ընդ անհարազատս համարել, մանաւանդ զի գրեթէ յամենեսին ի նոսաակն յայտնի երևի կամաւոր ստութիւն 119):

Մտացածին բանք պապական Գաւաղանագրոցն ազդեցութիւն մեծ գործեցին յորմէ հետէ յայտնեցան յարեմուտս. քանզի բազումք սկսան ի կիր առնուլ զնոսին, յորս առաջին գտաւ Բեդա յամին 710: Այն զիրք մարթ է ասել՝ թէ պատճառս ետուն ի վեր երևելոյ ապա կեղծ գրուածոց սուտ անուն Իսիդորի, որ ընկալաւ զնշանակեալսն ի Գաւաղանագիրս անդ զիշխանութենէ պապից ի մտացածին կոնդակագիրս իւր, որք և այնր աղագաւ առին ապա զկերպարանս վաւերականութեան: Այս իսկ նմանութիւն Գաւաղանագրոց պապիցն ընդ կոնդակացն այնոցիկ եղև զլիւաւոր պատճառ հաստատուն մնալու ընդ երկար ժամանակ ստութեանցն Իսիդորի:

## ԺԱ.

Պարզեատրուծիւն կոստանդիանոսի:— Եմաստն քովանդակեալ ի նմա:— Պարզեք Պիպինոսի եւ ժեծին կարոլոսի:— Թուղթ Աղրիանոսի առ կարոլոս:— Թուղթ սրբոյն Պետրոսի առ արքայս Գաղղիոյ:— Պարզեք կարոլոսի:— Գաշն Լուղովիկոսի:— Պարզեւագիրք Ռթոնի եւ Հենրիկոսի Բ:— Պարզեք Մամիլտեայ:

Ի կէս ութերորդի դարուն յօրինեցաւ ի Հռոմէ՛ հռչակեալն Պաբէ կատարանէն: Այս առասպել Հիմնեալ է ի վերայ մտացածին բժշկութեան կոստանդիանոսի ի բորոտութենէն և մկրտութեան նորա ի Սեղբեստրոսէ, որք հնարեալ են ի հինգերորդ դարու \*): Պատմի անդանօր բազում շաղակրատ բանիք՝ թէ զիւրդ կայսրն շնորհապարտ զանձն ճանաչելով Հռոմումայ պարզէէ որպէս թէ պապին զՆտալիա և զարեմտեան զաւառս (120), և առանձինն իոյթ մեծ ունի զեկեղեցականացն Հռոմումայ, տալով նոցա արտօնութիւնս պատուաւորս և մեծագին պատմութեանս: Բաց յայնմանէ, ըստ մտացածին բանիցն այնոցիկ՝ պապն պարտի լինել տէր և հրամանատար ի վերայ ամենայն եպիսկոպոսաց, և աթոռն Պետրոսի պարտի ունել իշ-

(\*) Նոյն առասպելի իբնէն և ի վերոյն ոմանց պատմութեանս, ևս և առ Խորենացոյն, որ ի նոյն ի հինգերորդ դարու պատմութիւն իտիւալ անշաշտ յայտմանն ի սրապապիւր առանբութենէ Հռոմումայոցոցն որարածելայ և յարեւելս: Ջայանանէ բոցին ինքրորդ շրեգիւթութեան ի Ժ հարարի վարաց արքոց (էջ 385—395), որ ծանօթաբանէ բարեմիտ հեղինակն պապական՝ ոչ առաւ որարախոսանօք, և հայտարար պարեցութեան իւզնի իւրայ և իբրցն ճշմարտութեան զանհնար լինի որդարացոցանելի գիւլի «չիւթութեան», անհարազատ պատմութեանցն, որպէս և «չիւթոյն դաւանց»:

խանութիւն ի վերայ չորիցն գլխաւոր աթոռոց, Անտիոքայ, Աղեքսանդրիոյ, Վ. Պոլսոյ և Երուսաղէմի :

Մէն մի ի տողից բովանդակ գրուածոյն յայտ առնէ՝ զի Հռովմէական է ծագումն նորին. և ամենայն ոք իսկոյն ի միտ առնու՝ զի Հեղինակ այնմ լեալ է մի ի կղերիկոսաց Լուտերանեան Եկեղեցւոյն : Յայտնի իմն է զի գրուածս այս վասն այնորիկ պատրաստեալ էր՝ զի առաջի արասցի արքային Քրանկաց Պիպինոսի, ուստի և յօրինեալ է յամին իբր 754 : Գրեալ էր ի նմին՝ թէ Աոստանդիանոս արար ի պատիւ պապին զթափօր Հեծեղութեան, յորում ինքնին ունէր զանձից երկփարի պապին : Յայնմանէ Հարկադրեցաւ և Պիպինոս նոյնպիսի մեծարանս առնել պապին, թէպէտ և ոչ զջոր բնաւ առ Քրանկս սովորութիւն այնպիսի. այլ պապն ասաց ցարբայն յառաջ քան զսկսանել թափօրին՝ թէ ընդունի զայդ ի Քրանկաց ոչ իբրև զպարգև, այլ իբրև զնորոգութիւն իրաւանց 121) :

Առաջին յիշատակութիւն պարգևին Աոստանդիանոսի գտանի ի թղթին Ադրիանոսի առ Վարդուս (յամին 777), յորում յայտ առնէ պապն կայսեր, զի թէպէտ նա ըստ օրինակին Աոստանդիանոսի պարգևատրեաց զԵկեղեցի, բայց ոչ դարձոյց ի նա բնաւ զայն ամենայն որ պարգևեալ էր նմին արդէն յառաջնոցն կայսերաց : Բայց և քանի մի ամօք յառաջ իսկ քան զայն, այսինքն յամէն 752 պապքն սկսեալ էին խօսել ի թուղթըս իւրեանց ոչ ևս շարժանց, այլ զնորոգմանց. քանզի պնդէին թէ իտալական գաւառքն և քաղաքք պարտին յետս դառնալ մերթ առ սուրբն Պետրոս և մերթ առ Հռովմէականն Հասարակապետութիւն 122) : Պահանջմունքն այնորիկ յայնժամ միայն առին զօրութիւն՝ յորժամ սկսան ի մեջ բերիլ առ այս պարգևատրութիւնքն Աոստանդիանոսի, յորս պապն անուանէր զանձն իւր օրինաւոր տէր և ժառանգորդ Հռովմէական կայսերութեան և Դսաղիոց, որովհետև ինքն էր միանգամայն յաջորդ և ժառանգորդ և սրբոյն Պետրոսի և Աոստանդիանոսի. որ ինչ տուեալ լինէր Հռովմէական Հասարակապետութեանն՝ տուեալ լինէր և Պետրոսի, և անդրադարձեալ :

Սույն օրինակաւ պատճառս կալաւ Պիպինոս չդարձուցանելոյ կայսերութեան Յունաց զնահանգս նմին սեպհականս՝ զորս և պահանջէր, ասկով թէ պահանջմունք Յունաց ոչ ունին ըզհիմն :

Եւ յիրաւի. ապա թէ ոչ, չէր հնար ի միտ առնուլ՝ թէ որով իրաւամբք Պիպինոս պարգևեաց պապին վան ի-րոյ հո-մ-Քալան էլեւէցեաց 123) զկուսակալութիւն (Հուստանայի) և զքսան քաղաքս, որոց ոչ երբէք տիրեալ էր նա, և այնպէս ի թշնամութիւն գրգռէր ընդդէմ՝ անձին զկայսերութիւն մի՝ որ տակաւին ևս ունէր զօրութիւն մեծ : Եւ այս բացատրի այնու միայն՝ զի ետես նա ի պարգևատրութենէն Վոստանդիանոսի՝ թէ իրաւունք տիրապետելոյ քաղաքացն այնոցիկ անկ են պապին, և թէ ահ արկին նմա վրէժխնդրութեամբ ցասման յաջորդացն Պետրոսի : Աչ գոյր վտանգ կասկածելոյ՝ թէ ի պատերազմասէր պալատանն Պիպինոսի քննարանեալ ստուգեսցի վաւերականութիւն այնպիսի յիշատակարանաց, որպիսիք էին թուղթն Պետրոսի և պարգևատրութիւն Վոստանդիանոսի : Արք՝ առ որս մարթ էր գրել՝ զի եթէ ոչ ելանիցեն նոքա ընդդէմ թշնամեաց Եկեղեցոյ, հոգիք նոցին և մարմինքն չարաչար տանջանօք խոշտանգեսցին ի դժոխս, - արք այնպիսիք ասեմ՝ զիւրաւ կարող էին և այնմ հաւատալ՝ թէ Վոստանդիանոս պարգևեաց պապին Սեղբեստրոսի զԻտալիա : Ի ժամանակին յայնմիկ տիրապետեալ էր ի Քաղղիա անկրթութիւն և տգիտութիւն յոյժ, որով ոչ գտանէր առ Պիպինոսի և ոչ մի որ այր սրամիտ՝ յորմէ կասկած երկիւղի ունիցին գործակալքն Հոստանայեցոց 124) :

Քանահնար եղեն ասել՝ թէ մի և նոյն ձեռին գործ իցէ թուղթ սրբոյն Պետրոսի առ թագաւորս Քաղղիացոց, առ նորա հոմ-Քալան էլեւէ-րոյ, որ երևեցաւ յայնժամ (յամին 754), յորժամ պապքն ի մեծի վտանգի և ի մեծ տառապանս կային, և սակայն ոչ ի բաց թողուին զգոռոզ պահանջմունս և զամբարհաւած ակնկալութիւնս : Բանիւք աղերսանաց, խոստմամբք յաղթութեան, և զարձեալ սպառնալով զահ և զեր-

կիւղ դժոխոց, Երզնէնցուցանէր ի թղթի անդ զուին առաքելոց զարքայն Քրանկաց՝ փրկել զՀռովմ՝ և զՆկեղեցին Տոմաճական: Թուղթն այն արդարև իսկ առաքեցաւ ի Հռովմէ, և թուի թէ եցոյց անդանօր զոյժ ազդեցութեան իւրոյ (125):

Յետ ամաց քսանից վերստին կարօտացան ի Հռովմ՝ այլ ևս անհարազատ զրուածոց, և Պիպինոս պարգևեաց պապին զառեալն ի Լոնգորարոց զկուսակալութիւն Հաւաննայի Տանգերձ գլխաւոր քաղաքաւ նորին Հաւաննայիւ, և այլ ևս քրսան քաղաքս Եմիլիոյ, Փլամինիոյ և Պնտապօլիայ, կամ զժովեղերեայ եռանկիւնին որ ի մէջ Պոլոնիա, Քոմարիոյ և Անգոնա քաղաքաց (126): Աւելի ինչ տալ չկարաց նա, քանզի զայն միայն նահանգ սեպհականեալ էին անձանց Լոնգորարոքն սակաւութիւն յառաջագոյն, և յայնժամ հարկադրեցան յետրս դարձուցանել:

Յամին 774 որդին Պիպինոսի մեծն Վարդոս առեալ ըզՓաւիա քաղաք՝ տիրապետեաց և թագաւորութեանն Լոնգորարացոց, որ հեռագոյն տարածանէր ընդ հարաւ: Ի Հռովմ՝ ևս կարօտութիւն էր մեծազօր թագաւորի Իտալիոյ՝ որ ընդ ձեռամբ նուաճեալ ունելով զնահանգս թերակողբոյն՝ ի հնազանդութեան կայցէ և զբաժինս պապին. բայց և միանգամայն Տոմաճականն ազահութիւն ի ձեռս բերելոյ նահանգս, հպատակս և եկամուտս՝ ոչ բաւականանայր տակաւին կուսակալութեամբն, և միացելովն ընդ նմին աշխարհաւ: Սմին իրի ի Հռովմ՝ մատուցաւ թագաւորին թուղթ վաւերական՝ յորում բովանդակէին պարգևքն կամ խոստմունք հօրն նորա: Նորոգեաց Վարդոս զցուցակն զայն այնպէս՝ որպէս և յանդիման արաբեալ էին ինքեան, և բաց յայնմանէ պարգևեաց ըզմեծ մասն Իտալիոյ, և ընդ նմին բազում ինչ՝ որ ոչ էր բնաւ ընդ իշխանութեամբ նորա. քանզի թուղթն զոր ի մէջ բերէ զանազան հատուածովք կենսադրողն Արիանոսի՝ ի համար արկանէ զառաջիկայ գաւառօք պարգևեալս պապին. զամենայն զԱրսիկա, զԱննտիկ և զԻստրիա, Չունի, զՄոնտելիչէ, ըզ-

Փառմա, զՌէճՃիոյ, զՄանդուա, զՏուքաթոյ, և զԲենեւենա՝  
 Հանդերձ հուսակալութեամբ (Հոսաւեննայի) 127) :

Մինչև ցայժմ վարանական իմն և անյայտ թուէր՝ թէ էր  
 վասն արարեալ իցէ Կարոյոս այնպիսի պարզևս ահագինս, մին-  
 չև սակաւ ինչ յոյժ մնալ նմա յիտալական թագաւորութե-  
 նէն : Ասան այսորիկ Մուրաթորի, ՍուկէնՏէյմ, Հէկէլ, Կը-  
 րէկորովիւս, և Նիհուէս ցուցին ըստ մասին՝ թէ այն հա-  
 տուած բանի ոչ է վաւերական, և ըստ մասին ամբաստան ե-  
 ղնն զկենսագրէ պատին՝ թէ սուտ խօսի. ապա թէ ոչ՝ որպէս  
 ազգ առնէ, օրինակ իմն, Նիհուէս, հարկ լինէր մեղադիր լի-  
 նել Կարոյոսի, որպէս թէ յառաջ վարեալ էր զգործ երգմա-  
 զանցութեան, և Աղրիանոսի յանցանս զնէ զերկչոտութիւն և  
 զանհոգութիւն 128) : Ապէլ ի կարծիս լինի՝ զի թէպէտ  
 կասկածն զստուգութենէ այնր բանի մեծ յոյժ պարտի լինել,  
 այսու ամենայնիւ ոչ է այն բաւական. և հուսկ ուրեմն շատ  
 համարի յայն կարծիս հակամիտել, զի թէպէտ պարզևքն այ-  
 նորիկ արդարև հաւասար էին Պիպինեան պարզևացն, բայց և  
 պայմանաւորք էին 129) : Յետ այնորիկ Մոր հաւանի՝ թէ  
 գումար պարզևացն ստոյգ է, բայց ոչ ընդունի զհաւասարու-  
 թիւն նոցին Պիպինեան պարզևաց. որով դարձեալ ժխտէ նա  
 զհաւասարմութիւն բանից կենսագրին Աղրիանոսի : Իսկ մա-  
 տենագիրն մերոց ժամանակաց Պաքսման թողու դարձեալ զա-  
 մենայն ինչ ըստ առաջնոյն յանստուգութեան 130) : Համա-  
 ոտ ասել, յայտ ուրեմն է՝ զի չև ևս կարողացեալ է որ լու-  
 ծանել զառեղծուածս զայս :

Սակայն գործն ինքնին գայ ի բացայայտութիւն՝ և թէ հա-  
 մեմատիցեմք զթուղթան կրկին անգամ տարգրեալս և անա-  
 բաղոյս ստայօղս 131) : որք համարին հրովարտակք լինել Պի-  
 պինոսի, և յորս արդարև աշխարհագրական գումար պարզե-  
 ւացն այնպէս նշանակեալ է՝ որպէս և ի կենսագրութեան Աղ-  
 րիանոսի, միայն երկարացոյն ևս ցուցակաւ անուանց քաղա-  
 քաց : Այս զրուած ի մերձաւոր ազգակցութեան գտանի ընդ  
 պարզևատրութեանց Աստանդիանոսի. որպէս անդ Աստան-

դին, նոյնպէս և աստ Պիպինոս ընդ երկար կանխաբանէ զիրոցն յարաբերութեանց առ պապն, առ Յոյնս և առ Լոնգոբարդացիս. զայն զնէ պատճառս պարգևատրութեան իւրոյ, և հաւատարիմ՝ առնէ՝ զի ոչ ինքն և ոչ յաջորդքն իւր ոչ կայցին բնաւ իշխանութիւն ինչ ի վերայ նահանգացն տուելոց, այլ միայն հայցէ զաղօթս ի հանգիստ հոգւոյ իւրոյ, և պահէ վասն անձին զանուանակոչութիւն Պատրիկ Լոնովսպեցւոյ. իսկ նահանգքն, ասէ, յետ այնքանեաց բազմապատիկ պարգևատրութեանց կայսերաց, ըստ օրինի սեպհական ստացուածք են պապին: Այս գրուած հնարագիտութեամբ շարագրեալ այնու ոճով՝ որով գրեալ էին հրովարտակն Աոստանդիանոսի և կենսագրութիւնք հռովմէական պապից այնր ժամանակի, դժուարին յոյժ գործէ իմանալ զնպատակ նորին և զծագումն, եթէ ոչ համարիցիմք թէ յօրինեալ է վասն առաջարկելոյ Աարդոսի արքայի (132), և այնպէս Աարդոս յորդորեալ է տալ զնոստումն՝ զոր ապա ինքն իսկ տեսեալ է՝ թէ չէ հնար կատարել. յոյր սակս ի կրկնել պապից զպահանջանս իւրեանց՝ նա ուժդին զօրութեամբ ընդդէմ եկաց, և պահանջեաց զի Լոնովմանրապատում հանգամանօք ցուցցէ զիրաւունսն զորս ունի ի վերայ մասնաւոր նահանգաց:

Անհակառակելի է դարձեալ, զի ի պարգևագիրսն տուեալս Լոնովմայ ի կայսերաց յետ մեծին Աարդոսի՝ գտանին նոյնպէս խարդախանք ինչ, թէպէտ և փոփոխութիւնքն այնորիկ չիցեն այնքան մեծամեծք՝ որպէս յառաջն կարծեցեալ լինէր: Այսպէս ահա Դաշն Լուդովիկոսի բարեպաշտի (յամին 847) ունի զամենայն զներքին նշանակս վաւերականութեան, բայց և ի նմա գտանին յայտնապէս ստացօղ յաւելուածք (155): Այսորն պարգևէ պապին Պապարեայ դկզգինս Աորսիկա, Սարդինիա և Սիկիլիա հանդերձ մերձակայ ծովեղբորօքն, միանգամայն և ըզՏուսկիա և զՍիփոլէթոյ: Չեն ինչ պէտք այլում իմիք ապացուցի ի հաստատել. զի եթէ կայսրն Լուդովիկոս յիրաւի պարգևեաց պապին զմեծ մասն Իտալիոյ, և այն կարի իմն անորիչ և առաձգական բանիւք, ըստ մասին հաստատելով և ըստ մա-

սին վերստին պարգևելով, — ապա բովանդակ հետագայ պատմութիւն պապից մինչև ցԳրիգոր Է լինի առեղծուած ինչ անլուծանելի, որովհետև այն նահանգք ոչ երբէք լեալ են ընդ իշխանութեամբ պապից, և ամենեքեան ի միասին հաւասարին մեծի թագաւորութեան. այլ և պապքն ևս ոչ երբէք պահանջեալ են զնոսա: Միայն Իննովկենտիոս Գ պնդէր՝ թէ բովանդակ Տուսկիա պարտի լինել նահանգ պապական. իսկ յառաջ քան զնա և ոչ զք: Զգրքութիւնն Սիդղէթոյի յինքն պահանջէ Գրիգոր Է միայն: Ստոյգ թուի՝ զի յօրինուած թըղթոյն լեալ է ի վախճան մետասաներորդի դարուն, յորժամ ի Հռովմ մեծաւ փութով և զգուշաւորութեամբ պարապէին յայսպիսիս: Գրիգոր Է առաջին եղև ի պահանջել զՍարդինիա, թէպէտ և ակնարկեաց և զայն՝ թէ մինչև ցայնժամ ոչ իւրք պատկանէր կղզին աթոռոյն Հռովմայ. ընդ հակառակն՝ առ անհոգութեան նախորդացն իւրոց՝ առաւել ևս օտարացեալ հեռացաւ ի նմանէ՝ քան որչափ օտար էին ժողովուրդք վերջին սահմանաց երկրի 154): Արդարև Աբրահանոս Բ հաւաստէր յամին 1094, թէ Կորսիկա սեպհականութիւն է պապին՝ ոչ զօրութեամբ արտօնութեանցն շնորհելոց ի Կարողոսէ կամ ի Լուչովիկոսէ, այլ զօրութեամբ պարգևատրութեանն Կոստանդինոսի. որ ետ Սեղընստրոսի պապին զամենայն կրղզիս արևմտից, ևս և զԲալէարեանս, և զԻոլանդիա զխտովին: Զնոյն է ստել և զպարգևագրոց Աթոնի Ա յամին 962 և Հենրիկոսի Բ յամին 1020. քանզի թուղթքն այնորիկ մեծաւ մասամբ ընազիրք են կամ ի ընազրաց անտի զաղափարեալք, բայց պարգևքն Կարողոսի երևին յերկոսն ևս հատուածս Գաւազանաճրոց պապիցն իբրև թանձր և ընդ եղանակաւ յօրինեալ յաւելուածք 153):

Յայտ իսկ է զի Կոմնուհին Մաթիլտէ՝ սազրանօք Գրիգորի Է և Անսելմոսի եպիսկոպոսին Լուքքայի պարգևեաց յամին 1077 աթոռոյն Հռովմայ զգաւառն Լիգուրիոյ և Տուկիոյ կամ Թոպրանայի 156): Յուշ լիցի զի յամին 1084 Գրիգոր Է երգումն պահանջէր յարքայէն Հոգուլփոսէ, զի զարձուցէ ի

նա զկալուածս և զեկամուտս նուիրեալս սրբոյն Պետրոսի ի Վոստանդիանոսէ և ի Կարողոսէ (157)։ Եւ քանզի պապն Լեոն Թաներկրայ բանիւք ի մէջ բերէր զպարգևագիրն Վոստանդիանոսի, և խորհրդականն Մաթիլտեայ Անսելմոս անցոյց զայն պարգևագիր ի կանոնագիրս իւր, աստի յայտմանէ զիւրին է ի միտ առնուլ՝ թէ զորպիսի թուղթ հարկ եղեալ էր առաջի առնել Վոմուհւոյն, որպէս զի ընծայարերութիւնն կամ հատուցումն այն թուեսցին յաչս նորա պարտք խղճի մտաց։

Ոչ է հարկ կարծել՝ թէ այր որ որպիսի Գրիգորն էր, ինքնին գիտութեամբ գործակից լինէր ի յօղել զկեղծ և զմտացածին գրուած. այլ քանզի ոչ գոյր չափ զիւրահաւանութեան նորա և ազահութեանն առ ի ձեռս բերելոյ զնահանգս և զտիրապետութիւն, մտազիւր սիրով ի ձեռս առնոյր զստայօզ գրուածան զայնոսիկ իբրև հաւաստի ապացոյցս։ Այսպէս յամին 1081 պնդէր նա՝ թէ յիշատակարանքն պահեալք ի զիւանի Եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի յայտ առնեն՝ զի մեծն Կարողոս զԳաղղիա ողջոյն հարկատու արար Եկեղեցւոյն Հռովմայ, այլ և զըովանդակ Սաքսոնիա պարգևեաց նմին (158)։ Ի շարս թղթոցն այնոցիկ է անշուշտ և այն գրուած յօղեալ ի Թ կամ ի ԹԱ դարու, զոր ի մէջ բերէ Թորրիճիոյ (159)։ Կարողոս անդէն իսկ յամին 797 կայսր անուանէ զանձն իւր, և թագաւորութիւն նորա կազմի ի Փրանկոնիոյ, յԱլուիտանիոյ և ի Գաղղիոյ։ Ալուիոնոս է ատենադպիր նորա, և ի միոյ ի թագաւորութեանցն հատուցանէ նա Հռովմայ տուրս հարկաց լիւրայս 400։

Յայն սակս յիշատակեցաք մէք աստանօր զանցս թղթոցն որ յաղագս պարգևական ընծայարերութեանց, զի նորքք քաջ քաջ յերևան ելաննն ամենայն գնացք Հռովմայ ի վեցերորդ դարէ մինչև ցերկոտասաներորդն. այլ և յայն սակս՝ զի յօրինողք թղթոցն նորք էին՝ յորոց վերայ անկեալ կործանեցաւ ըովանդակ ծանրութիւն ստայօզ գրուածոցն յորս ձեռն արկեալ էին առ ի հաստատել զպիսաւորութիւն Եկեղեցւոյ։

Այժմ առաջի կայ մեզ ի թիւ արկանել և ի քննին առնուլ զայնոսիկ ի հնարից՝ որովք հետզհետէ այլայլեցաւ բովանդակ կազմութիւն Եկեղեցւոյ :

Արդէն յիշատակեցաք զանհարազատ գրուածս սուտ առնուն Իսիդորի, որք երևեցան ի կէս իններորդի դարուն : Հըռովմ, որպէս տեսանեմք, ոչ ունի բնաւ ի յօրինուածի նոցին զմասն բաժնի, թէպէտ և յետոյ քաղեաց ի նոցանէ զամենայն հնարս վասն մեծացուցանելոյ զիշխանութիւն իւր, մանաւանդ յայնժամ՝ յորժամ էական մասն հնարագործութեանցն այնոցիկ էանց յիրաւարանական զիրս Գրիգորեան կուսակցութեանն :

ԺԲ.

Կանոնադիրքն Գրատիանոսի : — Ոգի եւ ոճ մատենին : — Աղղիցութիւն նորին յարեւմտեայս : — Խարզախանք ժողովական կանոնաց . — Իրաւունք պատրիարքաց : — Կանոնք Ժողովոյն Ափրիկիայ : — Բռնադատութիւն ի կրօնական խնդիրս : — Նշանակութիւն եւ պատիժ հերետիկոսութեան . — Թրէնտդրական իշխանութիւն պապից :

Կանոնադիրքն Գրատիանոսի, որ հզօրագոյնն է ի զէնս Իսրոյ պապական գրութեան, ի վեր երևեցաւ ի միջի անդ ԺԱ դարուն յառաջնոյ իրաւագիտական դպրոցէն Նւրոպայ, որ համարեալ էր վեհագոյն ուսուցիչ համօրէն արեւմտեան քրիստոնէից, այսինքն է ի Պոլոնիոյ : Յայնմ երկասիրութեան Իսիդորեան մոլորութիւնքն և խարզախութիւնք միացան ընդ այնոսիկ ի ստայօգ գրուածոց՝ զորս յաւելեալ էին Գրիգորեանքն, Աստուածատուր, Անսելմոս, Գրիգոր Փաւիացի և ինքն Գրատիանոս \*) : Յերևել գրուածոց նորա խափանեցան բարձան ի

(\*) Գրատիանոս հաւաքաւոր իւնոնաբէր ծնեալ է Քիւսղէ Կաթիկոսութեան, և իրենաւորեալ է Պոլոնիա. անդ և իւրեանեալ

միջոց այլ ամենայն հաւաքմունք եկեղեցական կանոնաց, և այն միայն մնաց առաջնորդ ոչ միայն կանոնագիտաց, այլ և զըպրոցական աստուածաբանից, որք միայն ի նմանէ զիտէին զՀարրս Եկեղեցոյ և զԹողովս : Չև ևս լեալ էր երբէք յԵկեղեցւոջ մատեան ինչ հաւասարազօր նմին, թէպէտ և լի էր այն թանձր և ծանր ծանր կամաւոր և ակամայ վրիպակօք՝ որպիսիս ոչ ունէր և ոչ մի մատեան : Նախորդ վաստակակիցք Գրատիանոսի եղին ոչ միայն Անսելմոս, Աստուածասուր և Կարդինալն Գրիգոր, որոց զրուածքն ոչ յոյժ տարածեալ էին, — այլ և Գերմանացին Պուրքարտ կամ՝ օգնական նորա արքայն Օլպերթ : Պուրքարտ ի հաւաքման իւրում՝ կազմելոյ ի միջոցի 1012 և 1022 ամացն՝ զետեղեաց ոչ միայն զմեծ մասն Իսղորեան մտացածին կոնդակաց, այլ և քաղեաց կանոնս եկեղեցականս ի ժողովական թղթոց զանազան պապից : Յաղագս այսորիկ անդէն իսկ ի վախճան ԺԱ զարուն ի վեր երևեցաւ խարէական առաջարկութիւնս այս, որպէս թէ պապն ինքնիշխանաբար հրամայեալ է զայն ամենայն՝ որ նաև յիննբորդի զառուն սահմանեալ էր առանց նորա ի սիւնհոգոսիցն Հռովմայ :

Եւ ահա զայն ամենայն խարդախանս, որ հունձք առաջք էին երեքհարիւրոց ամաց, ընկալաւ կամակար մտօք Գրատիանոս ի հաւաքումն իւր . բայց յաւել ի նոսին և բազում ինչ նոր յիւրմէն, որք առ հասարակ էին գրեալք ողւով պապական զրութեան՝ ի շահ օգտից նորին, և յայտնապէս մտացածինք :

Ե ի՞ք է ի՞նչ թի գարսան : Համբուեալ է յոյժ « Կանոնագիրն », նորա՝ լադին յայնիւ — « Տէտուէրում Կրոցիանն », անուանեալ, որ է հաստատուն վայրութեանց սորբէ գրոց, առաւելումն կանոնաց, կանոնաց ժողովոց Եկեղեցոյ, կանոնաց և ժեոոց պապից, վայրութեանց է Բանից Հուրց սրբոց, ասանայապետական մարտից՝ այսինքն է Բասպանագրոց պապիցն Լայն : Յօրինուած մարտիկն աւարտեալ յափն 1431, որպէսբեցաւ զառաջինն է Սիբասթոբէլ Բազալէ յափն 1474 : և ապա է Հուսմէ է 1572 ընկեալ պապին Գրեգորէ ԺԳ :

Յօրինակաց ինչ մարթ է տեսանել թէ զիարդ Իտալացին Քրատիանոս ցանկայր զաշխարհ ամենայն հարկատու առնել կղերին Իտալիոյ, Եպիսկոպոսունք Գերմանացւոց վաղազոյն ևս քան զարևմտեան Քրանկան խոնարհեցան առաջի Իսիդորեան կոնդակագրոց, Ազդեցութիւն սոցա յայտնի է ի վճռոց Տրիրուրեան ազգային սիւնհոդոսին Գերմանացւոց յամին 895, յորս նշմարի և այն՝ թէ քանի՜ խորագոյնս մտեալ էր սուտ առնուն Իսիդորոս ի մարմին և յարիւն եկեղեցականացն Գերմանիոյ, Առ այս յաւելան անտարակոյս և այն ևս հանգամանք՝ զի ի ժամանակին յայնմիկ եպիսկոպոսունք ի ձեռն սիւնհոդոսին իւրեանց ազդեցութիւն մեծ գործէին ի վերայ արքային իւրեանց Առնուլփոսի. իսկ նա հետամուտ գոլով կայսերական թագին, յոր հրապուրէրն յԻտալիա, կարէր հասանել այնմ միայն հաճութեամբ Փորմոզոսի պապին, Եւ այսպէս արարին նոքա զվճիռ, զի եթէ լուծն եղեալ ի վերայ նոցա ի Հռովմէ անտանելի ևս թուիցի, այնու ամենայնիւ բարձցեն նոքա զայն բարեպաշտիկ խոնարհամտութեամբ:

Եւ այս վճիռ զիարդ ստեպ ստեպ լսելի լինէր յետ այնորիկ: Չնոյն դնէին ի բերան մեծին Վարդուսի նոյնպէս՝ որպէս և զՎոստանդիանոսէ ասէին, իբր թէ նա Աստուծոյ անուանեալ իցէ զպապն: Յաղագս այսորիկ Քրատիանոս ընկալաւ զայն ասացուած իբրև զգաշնագիր Վարդուսի (140), և ետ իբրև զկանոն, և կանոնն այն եկաց յուժի մինչև ցՎոստանդեան ժողովն, թէպէտ և արդեամբք հերքեալ լինէր բազում անգամ, Հաւանեալ էին ընդ այս՝ թէ հարկէ տանել նաև անտանելի իրաց՝ յորժամ Հռովմէ որ դնէ զայն ի վերայ ուրուք:

Եւ որպիսեանք ԼՁ կանոնին տիեզերական ժողովոյ 692 ամի գործ է նորին ինքեան Քրատիանոսի (2): Յայնմ կանոնի կրկնեալ էր կանոն ժողովոյն Քաղկեդոնի, որոյ զօրութեամբն պատրիարքունք Կարգոյն Հռովմայ պարտին ունել իրաւունս համազօրս իրաւանց պապիցն Հռովմայեցւոց: Քրատիանոս փոփոխելովն լաոս երկուս՝ բոլորովին յեղաշրջեաց զկանոնն ողջոյն, և ծածկեաց զյիշատակութիւն նոյնպիսի կանոնի ժողովոյն Քաղկե-

դոնի : Ի նմին ժամանակի նուազեցոյց նա զլծիւ պատրիարքաց . և ի հնգիցն արար չորս միայն . իբր զի յայնմհետէ հարկ էր անհետ առնել զնախնի հաւասարութիւն եպիսկոպոսին Հռոմովմայ ընդ չորից պլոցն զիսոց արևելեան Եկեղեցւոյ, թէպէտ և նորին իսկ Գրիգորեանքն, զորօրինակ և Անսելմոս, համարէին տակաւին զպապն իբրև զմի ի պատրիարքաց (141) : Պատրիարքական պատիւ աթոռոյն Հռոմովմայ ոչ ևս ունէր այնուհետև զտեղի . իբր զի այն որ բովանդակէր յինքեան զամենայն իրաւունս Եկեղեցւոյ առ հասարակ (142)՝ ոչ ևս կարէր վաւրել և զառանձինն իշխանութիւն զուղնաբեայ, որպիսի էր իշխանութիւն պատրիարքի : Հզօր զօրութիւն պապին եղև այնուհետև Ծով Բձ (145), յորում ոչ ևս էր հնար թէ լինիցի ծովակ ինչ կամ ճահիճ առանձին իրաւամբ : Եւ զայս յայտնագոյնս մարթ է տեսանել ի յարարերութիւնս պապին ընդ գաւառաց արևմտեան Լիւրիկէի, պոսինքն Մակեդոնիոյ, Թեսսաղիոյ, Եպիռոսի և Բարդանիոյ, որք յառաջն էին ընդ պատրիարքական իշխանութեամբ եպիսկոպոսին Հռոմովմայ . այնպէս զի մետրապօլիտն Թեսաղոնիկեայ կոչէր ի թուղթս պապին Էթուրոյ նորա : Այսոն Լևոն Իտարացի էառ ի ձեռաց Հռոմովմայ յամին 750 զգաւառան զայնոսիկ, և յայնմհետէ մտին նորա ընդ իշխանութեամբ պատրիարքին Վ. Պօլսոյ : Ընդ երկար ժամանակ վէճք եղեն զայսմանէ . անդադար պահանջմունք պապից՝ զի դարձուցին գաւառքն առ նոսա՝ ոչ գտանէին յաջողութիւն, մինչև յանկարծ ի ձեռնալ Լատին կայսերութեան յամին 1204 վերստին անկան ընդ իշխանութեամբ պապից : Ի դէպս անդ իրացն նշանաւոր իմն է այս ինչ, զի Իննովկենտիոս Գ չկամէր ընաւ ամենեին նորոգել ի վերայ գաւառացն այնոցիկ զիւրն վաղեմի պատրիարքական իրաւունս . ընդ հակառակն՝ կարգեաց անդ պատրիարք զեպիսկոպոսն Տուռնովայ : Սակայն այն պատրիարքութիւն առ օրեայ իմն եղև, և փոյթ ընդ փոյթ դադարեաց բոլորովին (144) :

Վանոնք սիւնհոգոսին Ափրիկեցւոց (անվանելի քարինք գայթակղութեան ամենայն պապական խորամանկութեանց) որք

արգելուին չբողոքել երբէք ի Հռովմ՝, ի գործ եղան ի Գրատիանոսէ յօգուտ անձին նորա, այնու զի յաւելուած իմն արարեալ ի կանոնս անդ, եղ ի բերան սիւնհոգոսին ասել ստորասական ռճով զայն ինչ՝ զոր ժողովականքն բացէ ի բաց հերքեալ էին արդեամբք։ Գարձեալ, սուտանունն Իսիդորոս ձեռն էարկ իւրովք խարդախանօքն սպառսպուռ բառնալ ի միջոյ զնախնի եկեղեցական իրաւունսն որք արգելուին չիոխադրել եպիսկոպոսաց ի միողէ աթոռոյ յայլ. իսկ Գրատիանոս, և յառաջ քան զնա խարդախիչքն հին գրուածոց՝ Անսելմոս և Գրիգոր Արարինալ, յաւելին ի վերայ առաջնոցն և զայս մտացածին վարդապետութիւն նոր՝ թէ պապին՝ միայնոյ անկ են իրաւունքն փոխադրութեան եպիսկոպոսաց (143)։

Ճոխագոյն յոյժ քան զայլս պէս պէս հետեւանացն է այն մասն երկասիրութեան Գրատիանոսի, յորում բացատրէ նա զգրութիւն բոնադատութեան ի կրօնական խնդիրս (146)։ Զայս աշխատութիւն Գրատիանոսի մարթ է առնուլ յապացոյց՝ թէ որքան հեռացեալ էր նոյն այն եկեղեցական իրաւագիտութիւն ի հնոյն։ Նա հիմնելով զբանս իւր ի վերայ ստայօղ կանոնին՝ զոր ի մէջ բերին Պուրքարտ և Իւոն, ընծայէ Գրիգորի մեծին զայսպիսի իմն կարգադրութիւն՝ թէ Եկեղեցին պարտի պաշտպան կալ մարդասպանաց (147)։ մինչդեռ յայլմէ կողմանէ գուն գործէ ցուցանել ի ձեռն բազմաթիւ կանոնաց՝ թէ ներեալ է, մանաւանդ թէ պարտ իսկ է, բոնադատել զմարդիկ ի գործել զբարիս ամենայն հնարիք, նոյնպէս և ի դառնալ ի հաւատս և յայն ամենայն՝ որ յայնժամ համարեալ լինէր մասն հաւատոյ. և ս առ աւել պարտ է, ասէր, տանջել զհերետիկոսս, յախշտակել զստացուածս նոցին և պատժել զնոսա. և այսու գերազանցեաց նաև քան զԳրիգորեան կանոնագէտոն։ Յուշ արասցուք և զայն ևս, զի Ուրբանոս Բ յայտ արար ասելով. «Եթէ որ նախանձելով զնախանձ Եկեղեցոյ՝ սպանանիցէ զմերժեալն ի նմանէ (կամ զբանադրեալն), զայնպիսին ոչ երբէք և ոչ իւրք պարտ է ընդ մարդասպանս համարել, ։ Գրատիանոս յառաջ բերէ աստի զայս կանոն հանրական. Յայտ իսկ է

զի զչարս (զլիսաւորապէս զայնոսիկ զորս Եկեղեցին չարս հրատարակէ) արժան է ոչ միայն զանակոծ առնել, այլ և ի մահ մատնել ։ ։

Ատաթարագոյն ևս ինչ քան զայս գտանի ի գիրս կրօնաւորի ուրումն Պոլոնիացւոյ, որ ըստ ձախող բաղդի հաւատոց և Եկեղեցւոյ՝ ընդունելի լեալ էր իբրև զգասատետր և զմատեան օրինաց ընդ ամենայն աշխարհն արևմտից, Բաղմակընճիոն և բաղմաթիւ բանքն այնորիկ ստայօդք և մտացածիւք առաւել ևս ընդ հարկանէին յաչս ամենեցուն յայն նիւթս և ի խնդիրս, որք յետ ժամանակաց արմատացան և աճեցին, և խորագոյնս տարածեալ միեցան ոչ միայն ի քաղաքական կենցաղաւարութիւն արևմտեայց, այլ և յեկեղեցական իրս ։ Այսպիսի ինչ էր, օրինակ իմն, կարծիքն զբառէս հերետիկոսութեան, որ յայնմ ժամանակի լեալ էր իբրև զուր երկսայրի, և հնարք զօրաւորք ի ձեռս բերելոյ զտիրապետութիւն եկեղեցական ։ Պայն նիկողայոս ի թղթին իւրում առ կայսրն Միքայէլ պնդէր՝ թէ ըստ վեցերորդ կանոնի տիեզերական Ժողովոյ 584 ամին հարկ է հերետիկոս համարել զամենայն հերձուածողս և բանագրեալս յԵկեղեցւոյ ։ Չայս բան ընկալան ի նորն մատեան օրինաց Գրատիանոս և Անսելմոս, այնպէս զի յայնմ հետէ նշանակութիւն հերետիկոսն ահագնագոյն յոյժ եղև և անսահման ինչ 148) ։ Ի ձեռն ստայօդ և խորդախեալ հնարագործութեանց զամենայն ջան ի գործ եղին՝ զի որ միանգամ անխող գտանիցի պապական հրամանի, կամ համարձակիցի ասել ինչ հակառակ պապական դաւանութեան, իսկոյն հրատարակեսցի հերետիկոս զոլ ։

Նախնի Գրիգորեանքն տակաւին ևս չէին ընաւ երբէք այնքան յայտնապէս ասացեալ զայն ինչ՝ զոր Գրատիանոս բացայայտեաց՝ զանպայման իշխանութենէ պապին ի վերայ օրինաց, կացուցեալ զպապն հաւասար Աստուծոյ ։ Չոր օրինակ Քրիստոս, ասէ Գրատիանոս, մինչդեռ յերկրի աստ էր, թէպէտ և հնազանդ էր օրինաց, սակայն ըստ իսկութեան՝ վերագոյն էր քան զօրէնս, սոյնպէս և պապն դեր ի վերոյ կայ ամենայն

եկեղեցական կանոնաց, և կարէ առնել ընդ նոսա զոր ինչ և կամիցի (149)։ Ընդ ազգեցութեամբ այսր վարդապետութեան Գրատիանոսի՝ պապն Եւգինէոս Գ, յետ մեծամեծ ժողովոց բարեկարգութեան յամին 1489, պատասխանի արար արքային Աարդուսի Է, որ ի մէջ բերէր զկանոնս Եկեղեցւոյ, թէ ծաղրական իմն է յուշ առնել օրէնս ինչ պապին, որ ինքն իսկ ըստ իւրոց հաճոյց օրէնս զնէ եկեղեցականս, լուծանէ զնոսին և փոփոխէ, և բոլորովին ի բաց բառնայ (150)։

ԺԳ.

Հեղինակութիւն Գրատիանոսի։ — Թէ զիս'ից յիշատակին պապը զրանս կանոնադրոց նորա։

Յամս յիսուն որք անցին ի ժամանակէ անտի հրատարակման Գրատիանոսեան մատենին կանոնաց մինչև ց. քահանայապետութիւն հզօրագունին ի պապս Կննտիկենտիոսի Գ, պապական իշխանութիւնն ընդ ազգեցութեամբ երկոց զօրութեանցս, այսինքն Իսիդորեան կոնդակաց, Գրիգորեան զպրոցին և զբուսածոց Գրատիանոսի, վերացաւ բարձրացաւ մինչև յանսահման տիրապետութիւն։ Գատարանք Հռովմայ դատէին զխրնդիրս ըստ Գրատիանոսեան իրաւագիտութեան, ի Պոլսնիա քաղաքի ի վերայ այնր դասախօսութիւնս առնէին, և ինքն իսկ կայսրն Փրեզերիկոս Ա հրամայեաց որդւոյն իւրում Հենրիկոսի Զ ուսանել զկոնդակս պապից և զհռովմեական իրաւագիտութիւն (151)։ Բովանդակ օրէնսդրութիւնն կաղմեալ ի կոնդակաց և ի պապական վճռոց յամէն 1459 յամն 1520, շինեալ է ի վերայ հիմանն արկելոյ ի Գրատիանոսէ, և անտի գայ յառաջ։ Զնոյն է ասել և զտեսական աստուածաբանութենէն Թովմայի Ազովնացւոյ։ — Ընդհանրապէս բովանդակ զպրոցականն աստուածաբանութիւն, մանաւանդ սիրելին եկեղեցականաց այնր ժամանակի ուսումն իրաւագիտութեան, հիմնեալ էին

ի վերայ բանից Գրատիանոսի, Հուպիմունդոսի \*) և այլոց հաւաքողացն կանոնաց, և յիրաւարանական մատենիցն այնպիսեաց քաղէին աստուածարանք ժամանակին զառաջարկութիւննս, և ս և զընագիրս հանգերձ պարզարանութեամբս:

Արդէն յերկոտասաներորդ դարուն սովորութիւն լնալ էր պապից ի յիշատակել անդ զվկայութիւն ինչ ի Գրատիանոսէ ասել, թէ այսպէս գրեալ է ի սրբաղան կանոնս կամ ի լէնուս 132): Ս յսբան մեծարոյ էր աւասիկ երկասիրութիւնն այն՝ լին և խճողեալ խարէութեամբս, մոլորութեամբ և խարզախանօք, որ և առ սակաւ սակաւ խախտեաց զնախնի բարեկարգութիւն Եկեղեցւոյ, և ի վերջէ իսպառ իսկ քանդեաց: Տակաւին ևս յամին 1370 ուղղագրիչքն երեքին կարգեալք ի պապէն ի սրբազրել զկանոնս ասէին՝ թէ յայն սակս յանձնեալ է ինքեանց պս աշխատութիւն, զի մի՛ դրդուեսցի զօրութիւն և հեղինակութիւն այնր ամենակարևոր և ամնօգտակար մատենի օրինաց:

---

\*) Հուպիմունդոս կամ Ռույմնոս՝ սպանեացի վանահայր Գոմբիլիէանց վարժմանեալ հարկարէմեան յամին 1273, իսկ մ ի նախան. յայտոյզ հասարակսց իրենամենաթիւն յԱրարաթնէա և ի հարասային Գաղլէա. որսոքն և ընք սարքս գտանալ է ի լատին Եկեղեցւոց: Յարիմեալ է զՀասարակսց Կանոնաց. որպ. ի Միլանապիս յամին 1475:

## ԺԳ.

Անունն պապական իշխանութեանն ի ՅԻ եւ ՅԳ դարերս : — Պապն փոխանորդ Աստուծոյ : — Իշխանութիւն թագաւորաց՝ զիւս սատանայի : — Խաչակիրք եւ սպանոր, համալսարանքն Պոլոնիոյ եւ Փարիզու : — Նորանոր կարգը կրօնաւորաց : — Հակառակութիւնք նոցա ընդդէմ քահանայից եւ եպիսկոպոսաց : — Ազատութիւն եկեղեցականաց յաշխարհական դատաստանաց : — Կարծեցեալ անժնական սրբութիւն պապից : — Իննովկենտիոս Գ, եւ Էրկրորդ օրէնք : — Պապն աւերէ թագաւորաց եւ ազգաց երկրի, եւս եւ տէր ամենայն իրաւանց : — « Փոխանորդ Քրիստոսի », կոչել պապից զանձինս : — Ամենայն մարդ ընդ իշխանութեամբ պապին կայ : — Զանք պապից ընդդէմ կայսերութեան Գերմանիոյ :

Աղէքսանդր Գ (1159 — 1181) և Իննովկենտիոս Գ (1198 — 1216) կացին յետ այնորիկ ստեղծագործողք նորոյ եկեղեցական իրաւագիտութեան. քանզի ի ձեռն բաղմամբիւ հրովարտակաց Հնարեցին նոքա զվճռողական իրաւունս քաղեալս ի կոնգակաց, որք զմի և նոյն ունէին խորհուրդ հիմնական : Առ Իննովկենտիոսի առաւել ևս քան թէ առ Գրիգորի Է, յաճախագոյնս տեւանի իմաստս այս՝ թէ պապն փոխանորդ է Աստուծոյ ի վերայ երկրի, և թէ նա հանգոյն աստուածային նախախնամութեան՝ ամենայն արթնութեամբ և զգուշութեամբ, իբրև զգերագոյն վերադիտող և իշխանապետ ազգի մարդկան ի կրօնական, յընկերական և ի քաղաքական յարաբերութիւնս նոցին՝ պարտի ջնջել և կործանել զամենայն ընդդիմակացութիւն : Հիմն կարծեաց նորա և Գրիգորի այս իմաստ է՝ թէ ամենայն աշխարհական պաշտամունք և իշխանութիւնք, որք չիցեն ի ձեռս եկեղեցականաց, ոչ յարմարին սահմանաց աստուածային անտեսութեան. թէ աղբիւր նոցին է անմտութիւն և մե-

դապարտութիւն մարդկան, և թէ միայն հողերականն վիճակ ցանկալի է Աստուծոյ և հիմնեալ ի նմանէ 135) :

Գրիգոր՝ զէմ՝ ընդզէմ՝ հակառակելով անշուշտ աւետարանական վարդապետութեան յաղազս յաստուածուատ կարգեալ լինելոյ իշխանութեանց, յայտ արար՝ թէ արքայականն իշխանութիւն հաստատեալ է ի մէջ հաւասար մարդկան ըստ ազգեցութեան ստանայի՝ ի ձեռն արանց որք ոչինչ գիտէին զԱստուծոյ, լի էին ամենայն ակախիք, և հարեալք կուրութեամբ իշխանսիրութեան 136) :

Գարձեալ, նորանոր հնարս նիւթեցին հզօրանալոյ հոովմեականն աթոռոյն արշաւանք Խաչակրաց \*), և կապակցեալ ընդ նոսին պղտորութիւն խկութեան ապաշխարանաց և թողութեան մեղաց, արածութիւնք տուեալք Խաչակրացն ի պապից, և կառավարութիւն սրբազան պատերազմայն այնոցիկ : Յաւելան ի նոսին և կարգք ասպետաց \*\*), որք միայն զպապն ճանաչէին իւրեանց առաջնորդ, ապա հաստատուն զաշնակցութիւնն ընդ Պաղղիոյ, ընդ կղերի նորին և ընդ արքայական իշխանութեանն (յամին 1500) : Ընդ նիւթական նպատին միացաւ և մտաւորականն, որ հաստատեալ էր յերկուս համալսա-

(\*) Յայտ իմ է զի «Խաչակրք» : զնոսորոմէնէանէն արեւմտեայց կազմեալէ հրամանատար յորդորանէ՛տ պապից, որ է քնային յաղտորել է յեւոաց ուղազգեացն զՊաղղոսիին՝ յամին 1096 ցամա 1291 : և կապեցան այսպէս՝ զի «կրէին», է հանդերձս իւրեանց ընշան կարգաբնոյն «խաչին» : Հմարքն ընդ ամենայն ում իտալայնորոմէնէանէ :

(\*\*) «Ասպետք», կուլին է միջին դարս, հմաւանք առ Խաչակրքն, որ է նշանատար պնոս-տիանոմէնեմք և Ժաղոմէնեմք, երբոտեալ է պահպանութեան պարտաւոյ անյանց և հայրենեաց, և է պաշտպանութեան արքարոմէնեան և հասարայ : Ի կարգս կարգս բաժանեալ էին, և պէս պէս արարողութեմք է մասս գործելին է նասս, կրելով հանդերձ և նշանս յարկուցեալս կարգացն իւրեանց :

բանս . ի համալսարանին Պոլոնիա քաղաքի , որ էր դպրոց պապական իրաւագիտութեան , և ի Փարիզուն՝ որ զամ քան ըզգամ առաւել ներքոյ արկանէր զդպրոցական ուսումն պապական իշխանութեան : Բայց առաւել քան զամենայն ինչ օգնեցին պապական միապետութեան հիմնաւորեալքն ի սկզբան ժԳ դարուն կարգք Մուրացիկ կրօնաւորաց , Փրանկիսկեանց , Իտալիսկեանց , Օգոստինեանց և Նարմեզականաց . մանաւանդ առաջին երկոքին կարգքն եղն հզօրագոյն նեցուկք ամրութեան միապետութեանն այնօրիկ :

Յետ Իսիդորեան կոնդակագրոցն , և յետ Գրատիանոսի , ծագումն կարգացոյ պրոքիլ հանդերձ միապետական խտտակրօն կանոնադրութեամբքն՝ եղև երրորդ հզօրագոյն գործի քանդիչ և կործանիչ նախնի կազմութեան Եկեղեցւոյ : Քանզի միանձուքն այնօրիկ կալով մնալով բոլորովին ընդ զեկալարութեամբ Հռոմայ , զոլով կիսադեսպանք ոմանք պապին՝ բոլորովին անկախ յեպիսկոպոսաց , ճոխացեալ առաւելագոյն իշխանութեամբ քան զաշխարհիկ եկեղեցականս և քահանայս , յամենայն գործս և ամենայն ուրիք միջամուխ լինէին իբրև գործակատարք , ի ներքս անդ յեկեղեցւոջ կազմէին զիւրեանց սեպհական Եկեղեցի , վաստակելով ի վառս և ի պայծառութիւն միարանութեանցն իւրեանց , և ի մեծացուցանել զկարողութիւն պապից , որ հիմն էր ազատական դրութեան իւրեանց : Մարթ է ասել՝ թէ ի ձեռն հաստատութեան նորանոր կարգացն՝ պապական իշխանութիւնն աճեաց մինչև ի կրկին մեծութիւն . քանզի նորա տիրացան մատենադրութեան , նուաճեցին ընդ ձեռամբ իւրեանց զբնն Եկեղեցեաց և զամոռս համալսարանաց . աշխարհաշրջիկք եղն իբրև ժողովարարք զրամոց և քարոզիչք պապական ներօղութեանց , սպառազինեալք նաև պապական բացարձակ հրամանաւ բանադրանս զնկոյ :

Նւ պապէս կարդեցաւ կազմեցաւ ի Հռոմ՝ մարտ պատերազմի ամենեցուն ընդդէմ ամենայնի , պատերազմ՝ յորում արկանէին սօլորարար զասք քահանայիցն , ոչ կարելով զդէմ ունել Մուրացկացն սպառազինեղոյ յոտից մինչև յզուխ պա-

պական արտօնութեամբք : Եպիսկոպոսունք և քահանայք ըստիպեցան խոստովանել զտկարութիւն իւրեանց ընդդէմ նորոյ զօրութեանն, որ առաւել ևս ամրացաւ կրօնաքննութեամբ, և հնազանդել ըծոյն եգեղոյ ի վերայ նոցա միաբանութեամբ երկուցն այնոցիկ անպարտելի իշխանութեանց :

Եթէ Գրիգոր է զնորանոր ձեռներիցութիւնս իւր ի վերայ քաղաքական իշխանութեան և ի նուաճել զմիապետութիւնն հիմնէր ի վերայ մտադածին անցից անցելոց, Իննովկենտիոս առաւել ևս յառաջեաց ընդ նոյն ճանապարհ, Քանզի նա հընարեաց զանցանել կայսերութեանն ի Յունաց անտի առ Փրոսանկս 1335), և այն փոխադրութիւն եղև որպէս թէ զօրութեամբ պապական հրամանի յորմէ ի վերայ երեք Իննովկենտիոս՝ թէ թագաւորք Գերմանիոյ ունին իրաւունս ընտրելոյ զկայսրն միայն հրամանաւ պապին, և պապն միշտ կարէ զլաւնալ զիրաւունս ընտրելոյն : Պապական մատենագիրք յետնագոյն ժամանակաց դասաւորեցին և զբանս զայստօիկ ի թիւս պատմական անցիցն հնարելոց յինքեանց :

Սակայն մին միայն յառաջարկութեանց Գրիգորի է, այն իսկ է՝ թէ ամենայն պապ ըստ կանոնի ընտրեալ՝ սուրբ է անձամբ, ի մոռացօնս անկեալ էր : Եւ քանզի ի պակասել անձնական սրբութեան զիւրին էր ի միտ առնուլ զանվաւերութիւն ընտրութեանն, սմին իրի Գրատիանոսեան իրաւագիտութիւնն ոչ ինչ ոչ ասէ զսրբութենէ պապից, Յաւելան ի սոյն և այս հանգամանք, զի սիմոնականութիւնն՝ զոր ամենեքեան հերետիկոսութիւն համարեին՝ տիրապետեալ էր ի հռովմէական պալատանն յայտ յանդիման ամենեցուն. կաշառք վան հասից ի ձեռս բերելոց և կաշառակերութիւն ի դատս՝ հանապազօրոյ երեւոյթք էին ի Հոռովմ : Անկարելի եղև ի սուտ հանել զամբաստանութիւնն՝ թէ յանդիման աչաց պապին, և նորա ուղղակի կամ անուղղակի հաւանութեանն՝ հաստատուն կայ հերետիկոսութիւնն այն. ուստի կանոնագէտքն հնարեցին զայսպիսի ինչ պատրանս. ասէին նոքա. «Որ ինչ վասն ամենայն մարդկան սիմոնականութիւն է, վասն պապին ոչ է, վասն զի

նա տէր է օրինաց, և ամենայն որ ինչ գտանի յեկեղեցւոջ՝ սեպհական ատացուած է նորա, զոր մատակարարէ ըստ հաճոսից իւրոց, (136) :

Գրիգորեան գրութիւնն պահանջէր՝ զի ամենայն կղերականքն ունեցին առաւելագոյն ևս ընդարձակութիւն ազատութեան յաշխարհական իշխանութեանց և ի դատաստանաց կրդերն լինելոց էր մարմին ինչ մեծ՝ անպատճառ անձնատուր ի ծառայութիւն պապին, և ի պատճառս օգտի կրօնաւորական միարանութեանցն բոլորովին զատուցեալ յաշխարհականաց առ որ ի հարկ է նախ քան զամենայն պահանջեալ լինէր ազատութիւն յամենայն աշխարհական դատաստանաց, և բացառութիւն կղերին ի պարտուց հպատակութեան : Ամենայն այր եկեղեցական պարտական էր ճանաչել Գրիգորեան տէր և հրամանատար զպապն, որ կառավարէ զնա կամ ի ձեռն եպիսկոպոսաց հպատակելոց նմա, կամ անմիջապէս՝ ի դէպս ազատ լինելոյ այնպիսոյն յիշխանութենէ եպիսկոպոսաց : և ինքն գործի և եթէ էր կատարման հրամանաց նորա : Գրատիանոս յօրինեաց զիւրն Եկեղեցական էրպէս ըստ այսոցիկ հայեցուածոց (137) : Ի պապական օրինագիրս կոնդակաց գտանի առ այս յօդուած մի՝ թէ այր եկեղեցական ոչ անկանի ընդ աշխարհական դատաստանաւ, և թէ այսպէս սահմանեալ է ատուածային կարգադրութեամբ : Ի նմին ժամանակի և պապքն յայտ արարին՝ թէ ոչ ղք յեպիսկոպոսաց ոչ իշխէ (ստորել յիրաւանց աստի, որ սեպհական են ողջոյն իսկ եկեղեցւոյն 138) :

Իննովկենտիոս Գ կամեր իմն առնել շերտեր օրէնն դատաստանագիրս քրիստոնէից : իբր զի այնու գտանէր ի ձեռին իւրում վկայութիւն ի սուրբ գրոց՝ ի հաստատել զվարդապետութիւն իւր զիշխանութենէ պապից ի վերայ կենաց և մահու : Յաղագս այսորիկ հարկ էր փոփոխել զբանս աստուածաշնչին : քանզի ասի ի նմա, օրինակ իմն, թէ վասն առն երբայեցոյ գերագոյն ատեան դատաստանի է քահանայապետն և դատաւորն մեծ : և եթէ յանցաւորն ոչ հնազանդեսցի վճռոյ նոցա, մահու մեռցի : Իննովկենտիոս զոյզն ինչ յաւելուած

արարեալ ի ընտել ի Լատին թարգմանութեան Աուգլաթա-  
 յին՝ ձևացոյց այսպէս. «Եթէ որ ոչ հնազանդեցի վճռոյ  
 քահանայապետին (զորոյ զտեղին ի նոր օրէնս կալաւ պատն)  
 159), դատաւորն պարտի զնա մահու սպանանել, (160)։ Յետ  
 ժամանակաց զնոյն խարդախեալ բան ի մէջ երեք զարձեալ  
 պատն Լեոն Ժ. ի կոնդակին իւրում, (4) և զվիպութիւնդ  
 զայդ ոչ թէ յերկրորդ օրինաց էառ, այլ ի զորոց թագաւորու-  
 թեանցն, — կամ լոյլ ցուցանել՝ թէ որ ոչ լսիցէ պատն՝ մա-  
 հապարտ է ։

Ի սահմանել անդ զյարարեութիւնն առ տէրութիւնն և  
 առ աշխարհական թագաւորս՝ Իննովկենտիոս անցոյց զանցոյց  
 և քան զՎրաստանոս ։ Ասէր նա՝ թէ պապական իշխանու-  
 թիւնն այնպէս համեմատի կայսերականին և թագաւորականին,  
 որպէս արեգակն համեմատի լուսնի, որ զլոյս իւր առնէ յարե-  
 դականէ. որպէս հողի համեմատի ընդ մարմնոյ՝ կարգելոյ միայն  
 ի ծառայութիւն ուրոյն 162)։ քորքն երկօրին՝ Մարիամ և  
 Մարթա (Պուլ. ԻԲ, 58) օրինակ են, ասէր, եկեղեցական և  
 աշխարհական իշխանութեանց, յորոց առաջինն անկ է անձին  
 պատն, իսկ երկրորդն թագաւորաց. միայն թէ սոքա պարտին  
 ի վեր արկանել զիշխանութիւն իւրեանց յօգուտ եկեղեցոյ  
 և եկթ, և այն՝ ըստ հրամանաց պատն 165) ։

Ասէ Իննովկենտիոս Գ ի հռչակաւոր կոնդակին իւրում ու-  
 ռոյ սկիզբն է «Գեթէ», թէ եպիսկոպոսն Հռովմայ իրաւունս  
 ունի դատաւոր լինել ամենայն ուրեք՝ ուր մեծ ինչ գտանիցի  
 յանցաւորութիւն, կամ ամբաստանութիւն. և թէ նորա զործ  
 է պատժել և եղծանել զգատաստանս քաղաքական ատենից  
 (5) ։ Զայս իրաւունս պարտ էր արդեօք ունել և ամենայն քա-  
 հանայից և եպիսկոպոսաց. որով եկեղեցականքն տիրապետէին  
 ի վերայ ամենայն աշխարհականաց, և լինէր կարգ իմն իրաց՝  
 նմանեալ երկրին Թիպէթի. բայց պապքն անձանց և եկթ սեպ-  
 հականցին զայն իրաւունս ։

Յայսպիսեանց աստի առաջարկութեանց ծագեցան նորանոր  
 իրաւունք, որովք պապքն որպէս թէ առնուին իշխանութիւն

ի վերայ թագաւորաց և ազգաց և ժողովրդոց. և զայս ստեղծելի իշխանութիւն տայր պապին՝ ըստ նոցա ասելոյն՝ անուանեալն «աւետարանական ամբաստանութիւն», որ այս իսկ էր՝ զի եթէ ամբաստանեալն չկամիցի ճանաչել զիրաւունս ամբաստանողին, մեղանչէ, և վասն այնորիկ պարտ է վերաբերել ըզգատն առ պապն իբրև առ այնպիսի դատաւոր՝ որ միայն առաջի Աստուծոյ ճանաչիցէ զանձն իւր պատասխանատու (1) :

Ետեանց է, օրինակի աղագաւ, և այս ինչ. «Իրաւունքն Եկեղեցւոյ ըստ որում աստուածային, ի վեր են քան զայլ ամենայն իրաւունս. իսկ պապն ըստ որում զլուս Եկեղեցւոյ՝ է ազդիւր և տէր ամենայն իրաւանց. Հետևարար ամենայն զքանպատճառ գտանի ընդ իշխանութեամբ պապին», «Գարձեալ՝ թէ՛ Պապն է Հրամանատար Հոգւոց. և քանզի մարմինն գործի և եթէ է Հոգւոյն, ապա ուրեմն պապն տէր է և մարմնոյն, և ունի իրաւունս ի վերայ կենաց և մահու», «Եւ գարձեալ, «Որ զք ոչ լսիցէ պապական Հրամանաց, այնպիսին ոչ ունի Հաւատի ծանօթութիւն զմեծութենէ պապական իշխանութեան և զանպարտելի զօրութենէ արգելանաց նորա. յայտ ուրեմն է՝ թէ՛ այր այնպիսի Հերետիկոս է, և պարտի ապացուցանել յատենի զիւրն ուղղափառութիւն», :

Մինչև ցվախճան ԺԲ դարուն պապքն (ոչէին զանձինս և կոչեցեալ լինէին յայլոց Փփփփփփփփ Պփփփփփփ 164), իսկ յիննովկենտիոսէ Գ և այսր՝ սկսան իռչիլ փփփփփփփ Գրփփփփփփ : Եւ արդարև իսկ Հեռաւորութիւնն որ կայ ընդ մեջ զրութեան և իրաւանց Գրիգորի Ա, և ընդ մեջ ձեռնբրիցութեանց և Հզօր զօրութեան Գրիգորի Թ, յամեն 600 ցամն 1230, նոյնչափ մեծ է որչափ և Հեռաւորութիւնն ընդ Պետրոս և ընդ Տէրն մեր : Տիտղոսն այն նոր՝ տուեալ պապին նշանակէր. Ես փոխանորդ եմ ի վերայ երկրի՝ ամենակալին Աստուծոյ, և իշխանութիւն իմ ի վեր է քան զամենայն իշխանութիւն երկրաւոր և քան զառնայն սահմանս. յիս և ինև միայն ազատ է Եկեղեցի : Այսպիսի իմն էր աւասիկ կարծիք և Հայեցուած միջնադարեան եկեղեցականաց. ըստ որում յայնժամ միայն ազատ է Եկեղե-

ցի՝ յորժամ ամենեքեան և ամենայն ինչ հնազանդին նմա, բայց հուսկ ի վերջէ Եկեղեցի ինքն իսկ պապն է :

Գրիգոր Թ Տիմնեալ ի վերայ մտացածին պարգևացն Վոստանդիանոսի՝ ասէր. «Պապն է տէր և հրամանատար ամենայն աշխարհի, եթէ իրաց և եթէ անձանց», 163). այնպէս զի նախորդք նորա յայտ առնէին զիշխանութիւն իւրեանց ի ձեռն կարգելոցն յինքեանց կայսերաց և թագաւորաց՝ ոչ ի բաց դնելով և ոչ զղղզն ինչ մասն յիսկութենէ իրաւասութեան իւրեանց : Իննովկենտիոս Գ սասակագոյնս ևս արար յիշատակութիւն զբացարձակ համաշխարհական տիրապետութենէ պապին, և զվիւտորութենէ երկոցուն բարձրագոյն իշխանութեանց ի միում ձեռին : Սուտ են կարծիք այնոցիկ, ասէնա, թէ Վոստանդիանոս տուեալ իցէ աթոռոյ պապին զաշխարհական իշխանութիւն. քանզի բնական իմն է այն, և համեմատ նպատակի իւրում, և առանց ինչ պայմանաց պարգևեալ ի Քրիստոսէ, որ եւն Պետրոսի զբանալիս երկնաւոր և երկրաւոր թագաւորութեանց : Աշխարհական իշխանութիւնն օրինաւոր է յայնժամ և եթ՝ յորժամ թագաւորք համարեցին զայն իբրև պարգև ինչ պապին : Զստոյզն ասելով, ըստ նորա բանիցն, Վոստանդիանոս դարձոյց առ Եկեղեցին զմասն ինչ և եթ այնր՝ որ անկ էր նմա անդատին ի սկզբանէ, և ինքն տիրեալ էր այնմ ոչ ըստ իրաւանց : Իննովկենտիոս Գ, ի խօսելն զծագմանէ աշխարհական տէրութեանց և թագաւորաց՝ առաւելագոյն ևս համարձակութիւն ցուցանէր քան զԳրիգոր Է :

Իննովկենտիոս Գ սահմանեաց և զայս ինչ. «Ամենայն կրօնըրիկոս (կամ եկեղեցական) պարտի անտալ պապին նաև յայնժամ՝ յորժամ հրամայիցէ զանիրաւ ինչ. քանզի ոչ որ իշխէ դատել զգնացս պապին : Յայսմ կանոնէ յայնժամ և եթ ներկի է առնել զբացառութիւն, յորժամ ի հրամանի անդ գտանիցի հերետիկոսութիւն, կամ նպատակ նորին իցէ կործանումն Եկեղեցւոյ», 166) : - Անիսիակիոս Ը զվարդապետութիւնն որ յաղագս համաշխարհական տիրապետութեան պապին՝ փոյթ կալաւ հիմնել ի վերայ բանից սուրբ զրոց : Դա-

տապարտեաց նա իբրև զմոլորութիւն Մանիքեցւոց զայս առաջարկութիւն՝ թէ աշխարհական իշխանութիւնն անկախ է յեկեղեցականէն : Պայն ըստ Վսնիփակիտսի դատաւոր է ամենայն աշխարհականաց, յորժամ գործ նոցա ունիցի կցորդութիւն ընդ մեղաց . ունի նա ի ձեռին իւրում սուսերս երկուս (զհոգևոր և զմարմնաւոր), յորոց զառաջինն վարէ ինքն իսկ պապըն, իսկ զերկրորդն թագաւորը և զօրականք, բայց դարձեալ ըստ նորին ակնարկութեան և հրամանի . պայն դատի զամենայն, և ոչ կարէ դատիլ յումեքէ, զի Աստուծոյ միայնոյ է նա պատասխանատու : Որ որ ոչ հաւատայցէ՝ թէ ամենայն մարդ գտանի ընդ իշխանութեանք պապին՝ զրկի ի յախտնական երանութենէ : Վսնիփակիտս առ ի տալոյ այսմ՝ առաջարկութեան հաստատութիւն ինչ յաստուածաշունչ գրոց՝ հարկ համարեցաւ սաստկապէս յեղաշրջել զկարի իսկ բացայայտ վրկայութիւնս սուրբ գրոց . ընդ որ զարմացան և ի ծաղը շարժեցան յայնժամ ամենեքեան առհասարակ 167) :

Յորմէ հետէ պապական ամթոռն փոխադրեցաւ ի Քաղղիա, և քաղաքականութիւն պալատան նորա դարձաւ ի զաղղիական, իրաւաբանական վարդապետութիւն պապից ուղղեցաւ առաւելապէս ընդդէմ կայսերութեան : Յընթացս ամաց հարիւրոց անցելի նպատակ պապական ձեռնբրիցութեանց էր խորտակել զգորութիւն կայսերութեան ի Գերմանիա և յԻտալիա, և ջնջել աւերել զմիութիւն նորին : Աղեմէս Ե հրատարակեաց, թէ ամենայն կայսր պարտական է երդնուլ զառանձինն երզումըն հնազանդութեան առ պապն, և թէ ընդ թագաւորի որ կասկածելի իցէ պապին՝ ոչ է պարտ մտանել ի զաշնակցութիւն 168) :

Զկայսերացն Յունաց և դպատրիարքաց արևելից խօսելով՝ պնդէին պապըն, որպէս թէ ամթոռոյն Հռոմմայ տուեալ է ընդ հոգևորականին և աշխարհական իշխանութիւն ի վերայ ամենայն բրիտաննէից : Գրիգոր Թ և Գրիգոր Ժ հաստատէին՝ թէ «Միք զիտեմք զայս յընթերցմանէ աւետարանին», — Իննովկեննտիոս Գ զրէր առ պատրիարքն Վ. Պոլսոյ . Բրիտոս աւան

զեաց պապիցն ի կառավարութիւն զամենայն զկարգս իրաց աշխարհի. հզօրագոյնն ի փաստս այսմ ճշմարտութեան է զնալն Պետրոսի ի վերայ ծովուն, իսկ ծովն նշանակէ զբազմութիւն ժողովրդոց: Աստի յայսմանէ յայտնապէս զհետ կայ (ըստ կարծեաց պապին)՝ թէ յաջորդն Պետրոսի առեալ է զլիակատար իշխանութիւն զեկավարելոյ զազգս և զազինս, 169):

Մին ի սկզբանց Գրիգորեան զրութեան էր առաջիկայգ. «Ամենայն որ որ մկրտեալ իցէ՝ հպատակ է պապին, և պարտի նոյնպէս մնալ յամենայն ի կեանս իւր: Ամենայն քրիստոնեայ, թէպէտ և մկրտեալ իցէ արտաքոյ հռովմեական Եկեղեցւոյ՝ նոյնպէս գտանի ընդ պապական օրինոք, և պապն կարող է պատժել զնա, և ի կենացն ևս արկանել: Արդէն չսեղն իսկ հրամանի պապին՝ հերետիկոսութիւն է: Ասան որ և իցէ յանցանաց կարող է պապն բանադրել կամ արտաքսել զոր յԵկեղեցւոյ. և եթէ բանադրեալն ընդ ամ մի ողջոյն ոչ հպատակեցի հրամանաց պապին, հրատարակի իրրև հերետիկոս, ինչք նորա գրաւին, և ինքն լինի մահապարտ»:

## ԺԶ.

Կարգումն նուիրակաց:— Պապն օրէնսդիր Եկեղեցւոյ:— Կոնգակր եւ արդիւնք նոցին:— Ազատութիւն իշխանութենէ եպիսկոպոսաց:—

Առ ի բողոքովն քանդելոյ զնախնի յօրինուածութիւն Եկեղեցւոյ և զկառավարութիւն վիճակացն ի ձեռս եպիսկոպոսաց, յաւուրց անտի Հելլոնպրանտի սահմանեցաւ հաստատուն կարգ առաքման և նորոգման: Նուիրակքն այնորիկ (լատին բառիւ Անիմա) առեալ ընդ իւրեանս Խոսպացիս ընչաբաղոս՝ յածեալ շրջինն ընդ ամենայն տեղիս, սիւն հողոսս կազմէին և կարգադրութիւնս առնէին ի նոսա: Նպատակ շրջագայութեանց նոցին էր ըստ մասին վերադնութիւն Եկեղեցեաց և ըստ մասին հաւարումն զբաժոց վասն առաքելոյ ի Հռովմ: Յորժամ

նուիրակ որ երև էր ուրիշ, մարդիկ ժամանակին նմանեցուցանէին զնա բնական արկածից կարկտի կամ ժամտախտի (170) . այլ և ոչ գանգատակնքն և բողբոմունք ի Հոռովմ՝ օգուտ ինչ գործէին՝ քանզի պապքն եղեալ էին անձանց իւրեանց զկանոն պաշտպան կալոյ նուիրակաց իւրեանց յամենայնի :

Զօրութեամբ նորոյ իրաւագիտութեանն՝ պապն եղանէր ոչ միայն գերագոյն, այլ և միակ օրէնսդիր համօրէն Եկեղեցւոյ : Աննիփակիոս ասէր՝ թէ պապն ունի ի լանջս իւր իբրև յարկեղ ուրիշ զամենայն իրաւունս, և հանէ անտի ընդ ժամանակս ժամանակս զոր ինչ համեմատ գտանէ պիտոյից աշխարհի և Եկեղեցւոյ : Աստի յառաջ եկն այն՝ զի մի որ ի պապից ԺՊ կամ ԺԳ դարու (171) հրատարակեաց բազմագոյն ևս օրէնս քան զնախնի ժամանակացն յիսուն պապս միանգամայն առեալ : Պապք ընծայէին հրամանազրոց իւրեանց զնոյն անուանս՝ որովք կոչին հրամանք կայսերացն Հոռովմայեցւոց, այսինքն հրապարակ և լէն : Իբրև տէր օրինաց՝ կարող է, ասէին, պապքն յեղափոխել զնոսին . նա ազատ է յեկեղեցական կապանաց, ևս և ի կատարմանէ աստուածային օրինաց (172) : Յորժամ պապն հրատարակէր զկոնդակ ինչ, պալատն իսկոյն ի հաշիւ արկանէր՝ որչափ ինչ եկամուտս բերելոց են արձակմունքն տուեալք ի նոյն : Եւ արդարև յոմանս ի պապական վճռոց յայտնապէս տեսանի՝ զի այսու և եթ նպատակաւ հրատարակեալ են նորին : Զնոյն է տեսանել և ի բացառութիւնսն, այսինքն յազատութիւնս շնորհեալս յիշխանութենէ եպիսկոպոսաց : Ամենայն մենաստան կամ այլ ինչ միաբանութիւն՝ որ առնոյր զայսպիսի ազատութիւն, պարտական էր հատուցանել ընդ այնր պապական աթոռոյն զհարկ տարեկան : Եւ այսպէս եթ եպիսկոպոս որ ցանկանայր խնամով միտ զընել կառավարութեան վիճակին իւրոյ, յամենայն քայլափոխս իւր կրէր զնեղութիւն և լսէր սաստ սպառնալեաց : Անդադար ի վտանգի էր անկանելոյ ընդ արգելանօք պապի կամ ընդ բանադրանօք սակս լուծանելոյն զհոռովմեական իրաւունսն կամ նաև կոչելոյ յատեան դատաստանի ի Հոռովմ :

ԺԿ.

Բացառութիւնք եւ արձակումնք — ջանք անսխալ համարելոյ հոռովէական պալատանն :

Ամենայն մենաստան եւ ամենայն միաբանութիւն մեծաւ նախանձաւորութեամբ պահպանէր զարածութիւնս իւր եւ զազատութիւնս զեպիսկոպոսունսն համարէր իրրեւ ի բնէ թշնամիս անձին իւրոյ . եւ որպէս եպիսկոպոսունքն եւ միաբանութիւնք թշնամարար կային ընդդէմ իրերաց, ըստ նմին օրինակի եւ քահանայք զՊուրացիկ կրօնաւորսն համարէին վտանգաւոր թշնամիս անձանց, իրր զի անյագարար հետամուտ լինէին նոքա սեպհականեւ անձանց զհարստագոյն բաժինս քահանայական գասուն : Յովհաննէս Սալիսպուրեցի (175) վաղ իսկ նկատեալ էր զայս հանրական յատկութիւն յամենայն անգամս պալատանն՝ թէ ամենայն որ որ ոչ համաձայնէր ընդ վարդապետութեան նորա, կամ հերետիկոս էր եւ կամ հերձուածող : Պալատն հոռովէական կամեր անսխալ զոլ յառաջագոյն իսկ քան զհամարել պապին զանձն իւր անսխալ . եւ այս վահան անսխալութեան կարեւոր էր յոյժ վասն շահագործութեանց պալատանն :

ԺԸ.

Պալիուն : — Նշանակութիւն տուեալ նմին ի պապից : —

Գին եւ վաճառ պալիունից : —

Փորձն Պալիունի \*) եցոյց պապին՝ թէ նշանք վարձատրութեան, եւ զարդք եւ տիտղոսք, մանաւանդ ի զոյնս եւ ի ձևս

(\*) «Պալիւնան», (լատին յայնի «Փալլիոն»,) ազգ ինչ վերաբերուի համապատասխան էր սուրբինի Հոմոլոյեցիս, զոր կայսերէ Յոանայ սովորեցին պարգևել պարբերաբար եւ ինչուսոր եպիսկոպոսաց՝ էբբև

Հանդերձից, առանձինն իմն հրապուրիչ զօրութիւն ունին վասն կղերիկոսաց և ամենայն եկեղեցականաց, և վասն այնորիկ մարթէ ի վար արկանել զնոսին իբրև հնարս ի ձեռս բերեղջ զախրապետութիւն: Ի Ե դարուն պապք պարզեւէին զպալիունն արքեպիսկոպոսաց, իսկ յութերորդին սկսան տալ մետրապօլտաց, թէպէտ և սորա չառնուին յանձն ընդունել զնոսին ըստ պայմանացն նշանակելոց ի Հոովմէ: Եւ այս յայտնի է ի գնացից արքեպիսկոպոսացն Փռանկաց ընդդէմ Աննիփակիոսի, որ բոլորովին անձնատուր էր հոովմեական շահուց 174): Նիկողայոս Ա, Յովհաննէս Ը, Գրիգոր Կ, եղին պատուէր հրամանի՝ զի մի՛ դր ի մետրապօլտաց իշխեսցէ ձեռն արկանել ի կատարումն պաշտաման իւրոյ՝ մինչչև ընկալեալ զպալիունն: Յետ այնորիկ ապա սովորութիւն եղև ընծայել Պալիունին զխորհրդական իմն զօրութիւն: Քանզի Պապագիս Բ և յաջորդք նորա, և ընդ նոսին իրաւադատութիւնն պապական քարոզեցին՝

զնշանակ պարտոյ և իշխանութեան: Եւր ժամանակոց պարբերութեան և սխան շնորհել զայն վերաբոյս եպիսկոպոսացն զինի նշանաբերութեան նոցա. և պայն նոզին սովորութեամբ վարեցաւ յարևանորա: Իբ երբեք զի և առ ոմանս ի պարբերութեան և յարեպիսկոպոսացն արևելից արտաբեր ի պարիս, որպէս արտաբերացն և առ մերս Գրեգոր Գ Ասիեպիսկոպ Պահլաւասանի յամին 1484, իսկելով զպալիունն «արտազին ամենայն պարտոյ»: Եւ է պալիունն այժմ որպէս իսմ եպիսկոպոս իսմ ասանոց աստեղին՝ արեպոսի՝ իտալապարք՝ երկնայանալով է լայնութեան, իսկմեալ յաստեկ երկոց արեպոսի քառանց՝ որք օրմեկին է Հոովմ յեկեղեցոսով որքոյն Արմենի, և քառանին է ժման արեպիսկոպոսաց օրմեկ յժամանակ իբրոցն. և յաստեկ անոր իտալելոյ յերմեկալ զպալիունան քանին է վերայ արապոսի որքոյն Պերսոսի յաստաբ օրմեկ նորա և օրմեկն, և ապա արտաբեր արա արա արժանաորա այնմ արտեպիսկոպ: Եւայր իսկ է զի այս ամենայն արաբաբերութեան յայն ասիս իարեպեալ են՝ զի մեծութեամբ պարտոյն արտաբեր ևս մեծացն պարիս պարբերացին:

զի ի Պալիունի անդ է լրումն ծայրագոյն աստիճանի քահանայութեան, և անտի զհետ դայ՝ թէ այդ աստիճան ծագէ ի լիակատար իշխանութենէ պապին : Այս առաջարկութիւն թէ իշխանութիւն Մետրապօլիտաց պարտի տուեալ լինել ի պապէն՝ հակառակ էր արդեանց իրացն . քանզի պապքն սեպհականեցին անձանց զգլխաւոր իրաւունս Մետրապօլիտաց, և ի ԺԳ դարէ և այսր յաճախագոյն և սկսան զնոյն առնել, և բաշխել Պալիունըս եպիսկոպոսաց ոմանց, յորոց վերայ ի զարդ իմն և եթ համարեալ էին նորին՝ ոչ բերելով ընդ իւրեանս և իրաւունս ինչ . և սակայն ըստ որում՝ հնարք ինչ արկանելոյ զմետրապօլիտս բողոքովին ընդ իշխանութեամբ պապին՝ Պալիունն կատարեաց զգործ իւր : Քանզի Մետրապօլիտն կախեալ գոյով զպապէն՝ պարտական էր երզնուլ զերզումն, և Գրիգոր Է՛ ետ երզմանն այնմիկ զձե երզման հպատակի . այնպէս զի յարաբերութիւն պապին առ մետրապօլիտս եղև զլիտովին կախումն սոցին ըզնմանէ :

Ընդ նմին զլիաւոր փոյթ և ջանք պալատանն էին առնել և զեպիսկոպոսունս՝ գործիս հռովմէական իշխանութեան : Ընդ երկար ժամանակ դրութիւն եպիսկոպոսաց լաւագոյն ևս էր քան զմետրապօլիտացն . քանզի նորա անդէն իսկ ի ԺԳ դարուն ի մետրապօլիտաց անտի ընդունէին զհաստատութիւն իւրեանց՝ որ ի նախնումն Եկեղեցւոջ անբաժան էր ի ձեռնադրութենէ, մինչդեռ մետրապօլիտքն պարտական էին գնել զՊալիունան ընդ մեծագումար դրամոց (175) :

### ԺԹ.

Լիազօր իշխանութիւն պապից : — Տիտղոս “ տիեզերական եպիսկոպոսի . . : — Արժակուրդ եւ տեղափոխութիւն եպիսկոպոսաց : — Խափանումն կարգաց նախնի Եկեղեցւոյ :

Իննովկենտիոս Գ ասէ . “ Պապն միայն ունի յԵկեղեցւոջ զլիակատար իշխանութիւն . այլ ամենայն եպիսկոպոսունք կո-

են ի նմանէ յօգնականութիւն վասն այնր մասին զործոց միայն՝ զոր նա յանձն առնիցէ նոցա, (2) : Մարթ է ասել՝ թէ սօվիմը պապական դրութիւնն եհաս ի ծագ կատարելութեան իւրոյ . քանզի եպիսկոպոսունք իջին խոնարհեցան յաստիճան հասարակ օգնականաց, և պապն սեպհականեաց ինքեան ի նախնի իրաւանց եպիսկոպոսացն որչափ ինչ հաճոյ էր ինքեան : Այնուհետև ասացուածն զոր ի կիր առնուին պապք, « Եղիշէրուիւն եպիսկոպոսունք », ընկալաւ զիւրն նշանակութիւն անթերի, թէ պէտ և Լեւոն Թ՛ հրաժարէր տակաւին ի տիտղոսէ այտի . և ըստ հռովմէական տեսութեան՝ ոչ ևս գոյին եպիսկոպոսք, այլ միայն նուիրակք և փոխանորդք պապին :

Այնուհետև խուռն բազմութիւն պէս պէս ներգործութեանց իշխանութեան, զորս և ոչ ընդ միտ ածեալ էր ուրուք ի պապիցն առաջնոց, ինքնին յաճակէին : Յիրս իրս և ոչ իսկ սպասէին հրամանաց պապին . քանզի բաւական էր հանել եզրակացութիւն ինչ ի ստայօղ բանիցն Իսիդորի կամ ի յաւելուածոց Գրատիանոսի : Յայնժամ ինքնին ի յայտ գայր՝ զի պապն ինքնին միայնակ կարող է արձակել և տեղափոխել զեպիսկոպոսունս, և նա միայն կարող է խառնիլ ի գործս վիճակաց նոցա, կատարել զպաշտօն նոցին, և ձգել զնոսա յատեան դատաստանի իւրոյ . — Իննովկենտիոս Գ, որպէս և ի վեր անգրասացաք, յայտ արար՝ զի իրաւունքն արձակելոյ զեպիսկոպոսունս տուեալ են պապին յաստուածային յայտնութենէ, Թէ պէտ և յազագս այտորիկ մեղադիր լինէին նմա, զի չարաչար մղորեալ է, և բողբոլլին ըստ հաճոյից կամաց իւրոց հնարեալ է զայն, բայց Իննովկենտիոս հաւանեցուցեալ զանձն և զայրս՝ թէ ամենայն պապ է ինքնիշխան հրամանատար համօրէն Եկեղեցոյ, և ունի զիշխանութիւն լիակատար զօրութեամբ աստուածային կարգադրութեան, կարաց նոյնպէս համարել՝ թէ իրաւունքն արձակելոյ զեպիսկոպոսունս տուեալ են պապին Ղևտուծոյ : Եւ յիրաւի, յետ սակաւուց գտան եպիսկոպոսունք որք սկսան գրել զանձանց իւրեանց, « Շնորհիւ պապականութեան », :

Այնուհետև բողոքովին ի բաց մերժեցան և բարձան ի միջոյ մնացորդք ազատութեան նախնի Եկեղեցւոյ՝ որչափ և կայինն : Յառաջագոյն ի միտս անգամ ուրուք շանկանէր՝ թէ եպիսկոպոս որ իշխոյցէ ի բաց զննել յանձնէ զիշխանութիւն իւր՝ եթէ տեսանէր զայն ի վեր լինել քան զկար զօրութեան իւրոյ : և այսպիսի հրաժարումն լինէր ի նախնու մն առաւելապէս ի գաւառական սիւնհոյսս : Բայց յաւուրցն Գրատիանոսի և Կննովկենտիոսի նորն այն կանոն՝ թէ պապն միայն կարող է արձակել զկապն որով կապեալ է եպիսկոպոս որ ընդ վիճակին իւրում, տարածեալ ձգեալ էր և ի վերայ հրաժարման յիշխանութիւնէ (176) : Յետ այնորիկ ի կարգ անկաւ և այլ իմն պահանջումն, զոր Յովհաննէս ԻԲ ամբարձ ի կանոն հաստատուն, թէ տեղին այսու օրինակաւ դատարկացեալ՝ պարտի տուեալ լինել առն զոր պապն որոշեցէ :

Ի .

Բողոքմունք : — Իրաւունք բողոքելոյ առ պապն յաճախեալք : — Շահր պալատականաց Հռովմայ ի յաճախելոյ դատից : — Վնասք ի յամելոյ եպիսկոպոսաց ի Հռովմ : — Պատճառք յուզմանց կայսերութեան ի ժԳ դարուն :

Մեծագոյն ևս իրաւունք վասն պապից էին նշանակելն զեպիսկոպոսունս . և առ այս ևս զիւրեցին նոցա զճանապարհն ստէպ ստէպ բողոքանք եպիսկոպոսաց, զորս նորին իսկ պապքըն ի նոյն յորդորէին : — Սուտանունն Իսիդորոս անլուր ընդարձակութիւն ետ այնպիսի բողոքանաց ի Հռովմ, և նոր կանոնադիրքն Աղիքսանդրի Պ առաւել ևս ընդարձակեցին զայն : Ըստ կարծեաց այնք պապի՝ բողոքմունք կախեալք զգլխով եպիսկոպոսաց հանդոյն սուսերին (Գամակղի \*) կազմէին զգլխա-

(\*) Քանզի Գամակղիս շողոմարար Գիտնեպետի Բաւաւարին Սերգիսապոսոյ՝ զանի երանի պայք նա . և Գիտնեպետ առ ի ստելոյ

ւոր մասն իշխանութեան նորա : Աւելի քան զերեքսասան նորանոր սահմանադրութիւնս յաւելեալս ի հաւաքումն կանոնացին և վճռոց յայն ունեին զգիտումն՝ զի պալատն ունիցի ի ձեռին հազարաւոր դատս զանազան 177), և դատքն այնորիկ յերկարացեալ ընդ ամ մի և աւելի՝ պատրաստէին հունձս առատս պալատականաց, ընուն և զփողոցս և զգերնզմանատունքս Հոռովմայ . քանզի եպիսկոպոսունքն և սարկաւագապետք անկեալք ընդ դատաստանօք՝ արգելեալ մնային ի Հոռովմ ընդ երկար ժամանակ . որով և անիշխանութիւն ի վիճակս և անկարգութիւն և վայրագութիւն կղերին եհաս յայն աստիճան, զի չէ հնար ընթեռնուլ զնոսին ի պատմութիւնս ժամանակին առանց սարսափելոյ . Եթէ երկուք ոմանք վիճէին վասն միոյ ժողովրդապետութեան, կամ վասն ընտրութեան յեպիսկոպոսութիւն, և ի Հոռովմ բողոքէին, պապքն բազում անգամ զայն պատեհ կախեալ՝ մերժէին ի բաց զերկոսին ևս զվիճողսն՝ և զերրորդ ոմն ընտրէին :

« 2 մնաց այլ ևս և ոչ մի եպիսկոպոսութիւն, և ոչ մի քահանայական տեղի, ասէ արքայն Վներադոս, որ ոչ ունիցի դատ ի Հոռովմ, և վայ այնմիկ է որ դատարկաձեռն զնայցէ անդր : Ուրախ լիւր, մայր Հոռովմ, ընդ յանցանս որդւոցն քոց, զի նոյին տան քեզ առատ եկամուտս, և առ քեզ ընթանայ ամենայն արծաթ և ոսկի : Բէ բարեպաշտութիւն, այլ ամբ բողոքութիւն մարդկան արար զքեզ իշխան աշխարհի, (178) : Բողոքանքն այնորիկ և դատաստանք առաւել քան ի վերայ այլոցն ազգաց՝ ի վերայ Կերմանացոց ծանրացան : Չհետ դաշինն համաձայնութեան Վորմս քաղաքի (յամին 1122)\*) պապք

զքան նորին՝ հրախրեաց զնա ի ծաշ . և գրեւով նորին եւ իտեղ զմզե միայ յիւս --- սեր մի մերի : Յայնժամ է միւր եւս դատելիս զլուր երանութեան առ բանաստեղ :

(\*) Ձի է վորմս Կերմանիւս իտեցա յայնժամ անտունեան ի դաշն համայնութեան (որ է իմնիւրդաս) . ընդ պապն Վալտեր

բարձին ի կայսերացն Գերմանացւոց զիշխանութիւն խառնելոյ ի փոփոխութիւնս եպիսկոպոսաց, և եղծին զգօրութիւն Համաձայնութեանն այնորիկ: Յորժամ միումն ի վիճաբանող կողմանց տուեալ լինէին իրաւունք փոխադրելոյ զդատն ի Հռովմ, անդէն արդելուին իսկոյն զամբաստանողն, և քաղէին ի նմանէ որչափ ինչ կարող էին շորթել: Յերկարածգէին դատաստանքն ընդ ամս ողջոյն, և բազում անգամ ամբաստանողքն և կամ գործակալք նոցա մեռանէին ի Հռովմ: Եթէ և դառնային ումանք ի Հայրենիս, բերէին անդր ընդ իւրեանս միայն զպարտս, զՏիւանդութիւն և զգայթակղութիւն ընդ անառակութիւնս Հռովմայեցւոց: Յայնմ ժամանակէ Հետէ կարողացան պապքն ըստ Հաճոյից իւրեանց առնել զոր ինչ և կամէին ընդ եպիսկոպոսունս Գերմանիոյ, և ընդ կարծիս նոցին յընտրութեան թագաւորաց: Ապիսկոպոսունքն այնորիկ ամենեքեան ծանրաբեռնեալ էին ընդ պարտօք, և յորժամ ոչ ունէին Հատուցանել, մնային նոցա սպառնալիք պատուհասի, մինչ զի պատրաստ էին նոքա տալ զոր և իցէ խոստումն զոր պահանջէր Հռովմ, և կատարել զամենայն հրամանս պապից ի խնդիրս կայսերութեան, միայն թէ մի անկանիցին ընդ պատժօք ի պատճառս չհատուցանելոյ զպարտսն զորս ունէին ի Հռովմ: Միայն այսպիսի հանգամանօք բացատրին այն ամենայն անցք որք անցին ի Գերմանիա յամէն 1243 ցամն 1273, այսինքն են ընտրութիւնք Հենրիկոսի Ռասփօ (1246), Գուլիելմոսի Հոլանտացւոյ (1247), Հալքարտոսի և Ալփոնսոսի (1257), և բազմարկածեան միջոցն պարապոյ թագաւորութեան յամէն 1256 ցամն 1273: Այսու եղանակաւ միայն ել ի զուլս կործանումն Շթաուֆէնեան տոհմին, և Գերմանիա մնաց յերկպագակութեան և ի տկարութեան՝ զոր պահանջէին շահք օգտի տե-

բոս և և ընդ խոյսն Հենրիկոս և, որով վախճան եղև վիճաբանութեանց յապառս որբւնութեան եպիսկոպոսոսունս վիճակի իւր ի ինքանութեան այն է ինձխորհորարս:

բուժեանն Գաղղիոյ և պապից Աւենիոնի, և քաղաքականութիւն պապիցն Գաղղիացւոց Ուրբանոսի Գ, Կղեմայ Դ և Մարտինոսի Դ :

ԻԱ.

Բաշխումն շահարեր վիճակաց եւ ժողովրդապետութեանց : — Իրաւունք կարգելոյ եպիսկոպոսունս վիճակաց : — Թէ ում բաշխէին պապը զվիճակս : — Վը-  
ճիռ Կղեմայ Դ :

Ի ԺԳ և Ի ԺԴ գարս պապքն Հսկայաքայլ յառաջադիմութեամբ ի ձեռս բերին նորանոր իրաւունս, և եղծեալ ջնջեցին զիրաւունս այլոց : Մինչև ցաւուրս Իննովկենտիոսի Գ իրաւունք էին արքեպիսկոպոսաց հաստատել և ձեռնադրել զեպիսկոպոսունս զաւտի իւրեանց (179) : Բայց ապա Նիկողայոս Ա յայտ արար՝ թէ « Իրաւունք կարգելոյ զեպիսկոպոսունս սեպհական են պապին » : Ի նախնի Եկեղեցւոջ յանկանոնութիւն համարեալ լինէր պապին կամ պատրիարքի՝ եթէ մտարերէին բաշխել զտեղիս և զվիճակս. սակայն պապն սկրսու խառնել և յայն գործ : Զառաջինն առաջարկէր նա ի տեղիսն զարբանեակս իւր և զսիրելիս. բայց յետ սակաւուց առաջարկութիւնքն այնորիկ ընկալան զկիրպարանս հրամանաց : Իտալացիք՝ եղբորորդիք պապից և մտերիմք նոցա, որք զկողմն պապից ունէին, և յայնմ ասպարիզի երևելի ինչ քաջութիւննս գործէին, առաքեալ լինէին ի տար աշխարհս՝ զի ճոխացին հարստութեամբ. և իրաւունքն պաշտպանականք որ հակառակ էին գնացից նոցա՝ ոչ իմիք ազգէին այնուհետև : Ի մտանել մտերմաց պապին ամենայն ուրեք, շփոթք և տփգոհութիւնք ազգային Եկեղեցեաց օր ըստ օրէ յաճախէին, և ի Ժողովին Լուգդոնի (յամին 1243) բողոքեցին ևս զայսմանէ : Ի նմին ժամանակի հնարեցին պապքն և այլ իմն հնարս՝ որով ի ձեռս բերին զանսահման իրաւունս ի գործ բաշխման պաշտամանց և փոփոխութեան տեղեաց : Բազում եպիսկոպո-

սունք և աւագորիցունք կոչեցան ի Հռովմ վասն դատից սկսելոց, և անդ արգելան ընդ երկար ժամանակ: Խուռն բազմութեամբ մեռանէին նորա ի վատառողջ քաղաքի անդ, զոր բոյն ջերմանց կոչէ Գամիանոս. և սակայն անդանօր Հնարեալ էին և զայս նոր իրաւունս՝ զի ամենայն վիճակք դատարկացեալք պարտին անցանել ի ձեռս Հռովմեական պալատանն: Աղեմէս Գ (յամին 1266) հրատարակեաց ընդ ամենայն աշխարհ՝ թէ պապն ունի զիրաւունս բաշխելոյ անխտիր զամենայն եկեղեցական պաշտամունս, և այն ըստ ամենայն ընդարձակութեան (180):

Յաւելան ի սոյն և իրաւունքն տուեալք պապից յԱւենիոն, որով նորա ըստ կարգադրութեան արքային Գաղղիոյ կարող էին բաշխել որոց և կամէին այսչափ ինչ եպիսկոպոսարանս: Միանգամայն մուծաւ և սուլորութիւնն բաշխելոյ զԵրբայարանս աշխարհիկ եկեղեցականաց, և զմանս յեկեղեցական պաշտամանցն՝ նաև սոսկ աշխարհականաց:

ԻՌ.

Երդումն հնազանդութեան առ պապն: — Կարծիք

Պիոսի Բ:

Զերդումն Հնազանդութեան, մանաւանդ թէ սարկական Հպատակութեան եպիսկոպոսաց առ պապն իմանայր նա այնպէս՝ զի եպիսկոպոսունք երդնուն կալ մնալ ի Հպատակութեան նորա ոչ միայն յեկեղեցականսն, այլ և ի քաղաքական գործս անպայման Հնազանդութեամբ: Վասն որոյ Բննովկենտիոս Գ երդմնազանցս անուանէր զայն ամենայն եպիսկոպոսունքս Գերմանիոյ՝ որք թագաւոր ճանաչիցեն ոչ զԱթոն զընտրեալն յստաջազոյն ի պապէն, այլ զայլ որ (181), և ի ձեռն երդմանց եպիսկոպոսացն և եթ յաջողեցաւ պապին մերժել յաթոռոյն Գերմանիոյ զտոհմն Շթալֆէնեանց (182): Պիոս Բ Համարէր՝ թէ երդմնազանց է եպիսկոպոսն՝ եթէ ասիցէ յանկարծ զՃշմարտութիւն ինչ՝ յորմէ վնաս Հասանիցէ պապին.

և զօրութեամբ այն իսկ երգման պահանջէր պատն յեպիսկոպոսէն Մոգունտիոյ մի՛ առնել զԺողով վասն ընտրութեան կայսեր 185) :

ԻԳ.

Խառնումն ի կառավարութիւնս վիճակաց . — Թուրանալ եպիսկոպոսաց եւ քահանայից , եւ զօրանալ վանականացն : — Լեւոն Ժ եւ ատեանն կարգեալ ի նրմանէ : — Հակատութիւնք տեսական սկզբանց եւ զորոնց : — Սեղանաւորք եւ վաշխառութիւնք :

Այսու եղանակաւ պալատն հռովմեական ժառանգորդ եղև ամենայն նախնի իշխանութեանց եւ կարգաց Եկեղեցւոյ : Սեպհականաց ինքեան զիրաւունս մետրապոլտաց , սինհոդոսից , եպիսկոպոսաց եւ ազգային Եկեղեցեաց , — եւ բաց յայնմանէ տիրացաւ եւ իշխանութեանն զոր ունէին յեկեղեցական խնդիրս կայսրն եւ թագաւորն Փրանկաց . եւ այնուհետեւ զօրութիւն եւ կենդանական ներգործութիւն Եկեղեցւոյ ըստ վաղեմի կարգաց հովուական տեսութեան վիճակացն եպիսկոպոսաց եւ քահանայից՝ տկարացաւ բոլորովին : Թայնմ՝ հետէ ի կարգաւորութիւնս անդ սահմանեալս անմիջապէս յօգուտ ժողովրդոց ի վեր երևեցաւ ատաւորութիւն եւ հանրական իմն թուլութիւն կրօնական : Եպիսկոպոսունք եւ քահանայք եւս քան զէս ի բաց թողին զիւրթ խնամոց հօտիցն հաւատացելոց ինքեանց . որով միանձունք փութապէս ի ձեռս բերին զանսովոր իմն յոժ ազդեցութեան : Մենաստանք եւ միարանութիւնք վանօրէից եղին տեղիք՝ յորս առաւելապէս ամփոփեցաւ կենդանութիւն Եկեղեցւոյ . քանզի միանձունքն կապակցեալ էին ընդ պապական ամբողջն ի ձեռն բացառութեանց եւ արոժնութեանց՝ զորս ընդունէին ի Հռովմէ , եւ պապքն զիտէին՝ թէ քանի՛ զօրաւոր զէնք էին նոքա ի ձեռս իւրեանց ընդդէմ՝ եպիսկոպոսաց : Այլ եւ Լեւոն Ժ սահմանեաց ի Հռովմ առանձինն ատեան ժո-

ղովոյ յանդամոց ամենայն կրօնաւորական կարգաց, զի խորհրդակցեցեցի ընդ նոսա՝ թէ զխնորհ պարտ իցէ ընդդիմանալ եպիսկոպոսացն, որք հասարակաց թշնամիք էին շահուց օգտի կրօնաւորաց և պապից 184)։ Քանզի ասէ Փալլավիչինի թէ «Ամենայն միապետական կառավարութիւնն պարտի ունել յամենայն գաւառս իւր այսչափ ինչ հպատակ՝ որ գտանիցին յարտաքոյ տեղական իշխանութեան. և յայսմ առաջարկութեանէ հարկաւ զհետ գային բացառութիւնք, 185)։ Եպիսկոպոսունքն հայէին ի միանձունս եղեպաւ արտաքոյ իշխանութեան իւրեանց իրրե և ընական թշնամիս իւրեանց. իսկ միանձունքն էին հաւատարիմ ծառայք և մտերիմ պաշտօնեայք արքունեացն Հռովմայ 186)։

Ոչ երբէք և ոչ ուրիշք այնքան սաստիկ էին հակասութիւնք ի մէջ տեսականին և գործնականի, ի մէջ սկզբանց և գնացից, որքան ի դարսն յայնօրիկ ի Հռովմ և յԱւենիոն։ Գատապարտ առնէին պապքն զսեղանաւորս. և սակայն առաջի աչաց նոցա գտանէին դրամատունք՝ որք տոկոսիս ահագինս առնուլ մատակարարէին դրամս եկեղեցականացն որք դատ վարէին ի Հռովմ։ Մինչդեռ սպառնալիք բանադրանաց հրատարակէին ընդդէմ ամենայն սեղանաւորաց, պապական վաշխառութքն վայելէին յազատութեան, և ոչ ոք չէր սպառնալիք՝ անխափան առնուին զպարտս իւրեանց տոկոսեցքն հանդերձ 187)։

Ի Գ.

Պարտք Եպիսկոպոսաց՝ աղբիւր շահու հռովմէական պալատան։ — Վկայութիւնք Թուտէշի եւ Գերսոնի։

Ի ԺԲ դարուն պալատան հռովմէական եպիսկոպոսացն, և ի ԺԳ արդէն քաղեաց զպտուղս հնարիցն, որ այս ինչ էին՝ զի պալատականքն շահաւէտ անձանց տեսանէին ունել ընդ ամենայն Եւրոպա որքան հնար իցէ բազմաթիւ եպիսկոպոսունս

պարտապանս ինքեանց։ Եպիսկոպոսունքն այնորիկ ամենախոնարհ հպատակք էին նոցա՝ յորժամ զիրին էր ստիպել զնոսին սպառնալեօք մանադրանաց ի հատուցումն պարտուց, և առնուլ ի նոցանէ տոկոսիս մեծամեծս։ Գերազանց կանոնագետն իւրոյ ժամանակին՝ Նիկողայոս Թուտէպի ասէ. «Պաշտօնեայք Եկեղեցւոյ այնպէս ծանրաբեռնեալք էն անչպիսի տրովք և զրկանօք, զի ցանգ ընդ պարտեօք ունին մնալ, և ոչ ևս կարող են ի կիր արկանել զեկամուտս իւրեանց ի բարեպաշտական ինչ պէտս» (188)։ Արդիւնայն Մապարէլլա ակն յայտնի տեսանէր՝ զի արմատն ապականութեան Եկեղեցւոյ էր վարդապետութիւն շողոմարար իրաւագիտաց զամենակարող զօրութենէ պապից. զի շողոմարութքն այնորիկ հաւատարիմ առնէին պապին՝ թէ կարող է նա առնել զամենայն զոր ինչ և կամիցի։ «Եւ այսպէս, ասէ նա, պապն սեպհականեալ է ինքեան զիրաւունս ամենայն եկեղեցեաց փոքունց, և իշխանաւորք նոցին գրեա թէ չկան իսկ ի միջի» (189)։ Ատեննազպիրն Գերսոն \*) յայտնագոյնս ևս ասէր. «Ի պատճառքս ընչաքաղցութեան, սիմոնականութեան, ժլատութեան և փառասիրութեան կղերիկոսացն և պապից՝ իշխանութիւն եպիսկոպոսաց և ստորնագոյն պաշտօնէից Եկեղեցւոյ նուազեալ և եղծեալ է իսպառ, որպէս թէ ոչ ևս իցնն նորա պիտոյ, և մարթ է ի բաց հանել զնոսա իրրև զպատկերս ինչ յորմոց եկեղեցեաց» (190)։

(\*) Գերսոն արեւաբայեր համալսարանին փարէլոս (յաֆն 1395) հռչակեալ է սակո իւրոյ ասորոսածաբանական հոգեւորական և արեւելեան ջարտութեան նշանակեանց եկեղեցւոյն Գաղղէոյ։ Գրութիւնքն ի կոստանթնական ժողովին յաֆն 1445։ Վերհանելոցս յաֆն 1429։

ԻՆ՝

Սասանոթիւն Եկեղեցւոյ : — Բազմութիւն բանազրի-  
ւոց եւ նըզովիւոց ի ՃՍ եւ ՃԲ դարս : — Արգելումներ  
եղեալք ի պապից :

Յետ ժամանակաց Եպիսկոպոսն Աիգլէ՛՛՛ քաղաքի ասէր՝  
Թէ : Ի պատճառս պապիցն Համօրէն Եկեղեցին գտանի ի վի-  
ճակի փտութեան, և ի վաղուց հետէ լցեալ է թշնամութեամբ  
և հերձուածութք, : Յայնմ հանրական խոսվութեան և հա-  
կառակութեան ժամանակին Եկեղեցին երևէր յաշտ արանց խո-  
հականաց (որպիսիք էին Գերսոն, Փէլյոյ, Տ'Այլի \*) և այլք) խստապահանջ դատարան իմն պատժողական, յորմէ շնչէր  
հոտ ապականեալ օդոյ բանտից . քանզի օր ըստ օրէ յաւե-  
լեալ էր բրտանալ, ուստի և լցեալ էր սուտ ջերմնուանդու-  
թեամբ և կեղծաւորութեամբ : Յամին 1527, ըստ հաշուելոյ  
Սանուտոսի պատմագրին Աննեակեցւոյ, քրիստոնեայքն զոգ-  
ցես կիսով չափ բանազրեալք էին յԵկեղեցւոյ, և ի թիւս նո-  
ցա գտանէին և հաւատարմագոյնքն ի պաշտօնէից նորա : Այս-  
պէս ահա շտայութեամբ վարէին պապքն զբանազրանս և ըզ-  
նդոյս անդատին յամին 1075 : Օրինակի պապին զհետ երթա-  
լին պաշտօնեայքն եպիսկոպոսաց, սարկաւազապետք և այլքն  
ամենեքեան որ ունէին զիրաւունս բանազրանաց : Ասէին նո-  
քա՝ Թէ Եկեղեցին Հռովմայ ուսուցիչ մեր է, և յօրինակէ  
նորին ի միտ առնուիք՝ Թէ չիք ինչ հարկ խնայութեամբ ի  
վար արկանելոյ զբանազրանս : Եթէ եպիսկոպոսուիք անգամ  
ստեպ ստեպ բանազրին և ի բաց մերժին վասն այնորիկ միայն՝  
զի չկամեցան կամ չկարացին հատուցանել նուիրակաց զժախտ  
ճանապարհի նոցա, միթէ պարտ իցէ մեղմագոյնս գնալ ընդ  
աշխարհականն քան թէ ընդ հովիւս նոցա : Ընթեոնուիք ի

(\*) Պետրոս Տ'Այլի՛՛՛ ժողանտանեալն «Արձանէ Գաղղիոյ», 422ր  
գաղղիոսի իրաւունց արկեղեցեական խորժաց, վեճանեալ յամին 1420 :

յիշատակարանն Տիւղուայի \*) յամին 1500, թէ «Յաւուր յորում պաշտօնեայք նպիակոսաց բազմին յատեան, ի Գաղղիա և եթ աւելի քան զողիս տան հազար արտաքս ընկեցեալ լինին ի ճանապարհէ փրկութեան, և զորեալ անկանին ի ձեռքս սատանայի, 191) : Յայտ ուրեմն է՝ զի ի միում միում վիճակի կամ ժողովրդապետութեան բանադրին ողիք երեսուն կամ քառասուն : — Բայց ի ձեռն արծաթոյ մարթ էր զնել զարձակումն ի բանադրանաց, թէպէտ և զումարքն պահանջեալք առ այս ահազինք էին յոյժ մեծութեամբ 192) :

Հնարքն և միջոցք զորս ի գործ զնէին պապք առ ի նուաճելոյ զայս ընդ իւրեանց իշխանութեամբ, և առ ի խորտակելոյ զամենայն հակառակութիւն ի կողմանէ ժողովրդեան, թագաւորաց և կղերին, և ս քան զևս լինէին ուժգինք և բռնաւորականք : Ոչ և ս բաւական էին արգելմունքն՝ որովք միլիոնաւոր մարդիկ զրկեալ լինէին յիրաւանց ընդունելոյ վտորհուրդս և կատարելոյ զաստուածային պաշտամունս . պապքն սկսան այնուհետև հրատարակել ողջոյն իսկ ազգատոհմն, քաղաքս և թագաւորութիւնս իբրև զրկեալս ի պաշտպանութենէ օրինաց, և արկանել զնոսին ի ստրկութիւն և ի յաիշտակութիւն : Այսպէս վարեցաւ, օրինակ իմն, Աղեմէս Ե \*\*) ընդ Անեակեցիսն 195) : Էր երբէք՝ զի պապք բանադրէին զմարդիկ մինչև ցեթմն ազգ 194), որպէս արար Գրիգոր ԺԱ. կամ կործանէին զամբողջ քաղաքս, և զընակիչն տարազիր առնէին : Ընդ այսպիսի պատժով փակեաց, օրինակ իմն, Աոնիփակիոս զՊաղեստին :

(\*) Արքեպիսկոպոս Տիւղուայի հուշակէտ է ի պարսեթեան դազդեացոց իւրովն բազմաբնակեամբ և խորագեր իւր խորհման զնոսնէ՝ ի «Կիլիկի» ժր. գործն :

(\*\*) Աղեմէս Ե : որ ժողովրդեաց զաթեան պապայեան ի Հռովմէ յԱնեակեան ի «Կիլիկի» ժր. գործն՝ հուշակէտ է անբարեբնակեամբ ժրգոցն և զընթացութեամբ և անբնեթեամբ :

ԻԶ .

Անճնական զրուծիւն պապից : — Կեղծաւորական խոնարհութիւնը նոցա : — Պապն տէր եւ իշխան օրինոց եւ ժողովոց : — Պապն հրամանահան աշխարհի, եւ միանգամայն զերի իւրոցն պաշտօնէից : — Խոստովանութիւն Ազրիանոսի Գ. : — Գանդատանք Նիկիդայոսի Ե, եւ Մարկեղոսի Ր. : — Սոսկալի զեղծումն պապական իշխանութեան : — Կարծիք անսահման զոյոյ իշխանութեան պապից :

Ըստ կանոնաց Հոգեբանական իմաստասիրութեան նկատեալ՝ այլանդակ եւ անձոռնի իմն թուի այսպիսի գաղափար Հոգեւորական տիրապետութեան պապից. քանզի իշխանութիւն այսպիսի, եւ ե ի թիրակատար չափու, կարօտանայր արդեօք ո՛չ եթէ մարդկային զօրութեան, այլ աստուածային իմն յատկութեանց, եւ պարտականութիւնքն քարոզեալք ի նմանէ՝ զարհուրեցուցանէին արդեօք զարս բարեմիտս եւ արդարեւ բարեպաշտս՝ յայտնապէս բռնանալով ի վերայ նոցին. Եւ Հարկ է ոչ սակաւ առատութիւն էր խոնարհական բանից. մէն մի ի պապից ի սուրբական բանսն իւր Հաստատէր՝ թէ արժանաւորութիւն իւր եւ կարողութիւն կարի իմն տկարք են եւ նուազք առ ի յանձն առնուլ զայնպիսի աստիճան եւ ստանձնել զբեռնն այնպիսի. եւ սակայն անդադար Հետամուտ լինէր յընդարձակել եւ եւս զահագին իշխանութիւն իւր, եւ բնաւ ընդ միտ անգամ ոչ ածէր չափաւորել զայն. Եին էին թագաւորք ումանք որք ասացին զանձանց՝ թէ եթէ Հնար եւս լինէր նոցա առնուլ ի ձեռս զբացարձակ տիրապետութիւն, սակայն չհաւանէին առնուլ. Հանդոյն այնմ՝ եւ պապք առաջնոյ զարուն կարողացան ասել՝ թէ «Մեր ոչ կամիմք տիրապետել ի վերայ կանոնացն Ժողովոց, այլ նորա պարտին տիրապետել ի վերայ մեր», սակայն յաւուրցն Նիկիդայոսի Ա, եւ մանաւանդ Գրիգորի Է, կարծիք պապից այս իսկ էին՝ թէ «Պապն տէր է

Թողուլոց և կանոնաց. ոչ կանոն կառավարէ զկամս նորա, այլ օրէնք՝ կամքն են նորին, ։ Եւ սակայն յանհամար դէպս կամքն այն երեւցաւ բան լոկ՝ զուրկ յիմաստից, և ամենազօր հրամանահասն տիեզերաց (այսինքն է պապն) ինքն իսկ կապեալ և կաշկանդեալ գտաւ ի պալատականաց իւրոց, և որ և իցէ հաստատուն կամաց հարկ ի վերայ կայր խորտակիլ առաջի անդորրաւէտ, կրաւորական, յամառ հակառակութեան մարդկանն որք կապեալ էին մի օրինակ շահասիրութեամբ, վաստակէին ըստ մի և նշյն կանոնաց, և ի նշյն կէտ նպատակի դիմեալ գնային ։ Եւս առաւել հարկ է ասել զայս զբարի բարի դիտաւորութեանց սակաւուց ոմանց ի պապից անտի, որքանազան ուրեմն ի հասակի ծերութեան հասեալք յայն աստիճան՝ տեսանէին առաջի իւրեանց սակաւ և եթ ամս երկրաւոր վաստակոց, գիտէին բազմամեայ փորձիւ զպնդութիւն փաղանդին այնորիկ պաշտօնէից՝ որք առաջնորդէին ինքեանց. և եթէ հակառակէին նոցա, իսկոյն հասանէր ինքեանց լինել իբրև զմարմին ինչ՝ որոյ հատեալ իցին ձեռքն և ոտք ։ Յաղաքս այսորիկ իսկ մինչդեռ նոքա որք արտաքոյ կային այնր ամենայնի՝ ասէին թէ կարճակեացն լինել պապից տուրք և շնորհք են Աստուծոյ, զի փրկեացի Եկեղեցին ի կործանմանէ (որ յառակս եղեալ էր) 193), — պապքն ինքեանք ոչ ինչ խղճէին խոստովանել՝ թէ թշուառագոյնքն ի վերայ երկրի մարդիկ ինքեանք են ։ — Այսպէս Ադրիանոս Դ ստիպեալ էր ասել զառնացեալ սրտիւ. Ոչ ։ զոյ ի վերայ երկրի վիճակ թշուառագոյն քան զպապին. գահ ։ նորա ամենայն ուստիք պաշարեալ է խայթոցիւք, բովանդակ ։ հրջանկութիւն կենաց նորա է ի դառնութիւնս սրտի, և ի ։ վերայ թիկանց նորա ծանրացեալ դնի բեռն անտանելի ։ ։

Տեսականապէս պապութիւնն էր գերագոյն և գերակատար իշխանութիւն, իսկ ըստ գործնականին՝ եղիելի ստրկութիւն և կախումն զպալատականաց, որք միայն զշահ անձանց ինդրէին, ստրկութիւն միացեալ ընդ նախազգացման զանիծիցն որ կայ և մնայ ի վերայ այնպիսումն մեքենայի կառավարութեան կազմելոյ յեկեղեցական հացկատակաց և ի տգրկաց ։ Ընդ այս ստի-

պեցաւ զանգատ ունել նաև այր պնպիսի՝ որպիսի էր նիկո-  
ղայոս Ե, որ ասացեալն էր ցերկուս կարթուսեան միանձուռնս՝  
[Թէ ինքն թշուառագոյնն է ի մարդիկ յաշխարհի, թէ ոչ դր յե-  
կեղոցն առ նա խօսի զճշմարտութիւն, թէ Իտալացիքն անյա-  
գուրդք են և այլն 196) :

Մարկեղոս Բ ըմբռնեալ ի նոյնպիսի արհաւիրս՝ գուեաց  
յաւուր միում՝ [Թէ «Ոչ գիտեմ որով օրինակաւ պապ դր կա-  
րող իցէ լինել երանելի,» 197) :

Մարթ է ասել առանց չափազանցութեան՝ [Թէ ոմանք ի  
պապից ինքեանք իսկ անգիտանային զբովանդակ ընդարձակու-  
թիւն իշխանութեան իւրեանց, զի անհուն և անսահման իմն  
էր : Հռովմէականն օրէնսդրութիւն, սկսեալ ի վճռոց Գրիգո-  
րի ց յետին յօդուածն անձոռնի հաւաքման կանոնաց, նախա-  
տես լեալ էր ամենայն պատահարաց, այնպէս զի պապն առանց  
զժուարութեան կարող էր միշտ գտանել օրինաւոր իմն պատ-  
ճառանս խառնելոյ յամենայն ի գործս որքան և օտարոտի իցնն  
այնորիկ Եկեղեցւոյ : Ի ձեռն այսր նորահնար ձևոյ բանից,  
Կնն Օպալմէնէ, որ է ոչ հաւատարմութիւն, յայն աստիճան հասին,  
զի յամենայն դէպս յորս շահ օգտի պալատականացն զայն պա-  
հանջեր, պապն չկարէր զանց առնել զարդէն եղեպն կանոնիւ,  
և անվաւեր առնել զայն : Զբովանդակ օրէնսդրութիւն նախ-  
նական Եկեղեցւոյ տակաւ ի բաց եղեալ և ի հակառակ կողմն  
շրջեալ էին : Ըստ օրինակի եօթանց վտիտ և նիհար կովուցն  
Փարաոնի՝ պապական կոնդակքն կլանէին զսահմանադրու-  
թիւնս Թողովոց : Աւր մնացին կանոնք Թողովոցն՝ նիկիոյ,  
Գաղկեղոնի և Վիերիկոյ : Հանգոյն կիսաւեր շիրմաց յանապա-  
տացեալ գերեզմանատեղիս՝ հազիւ երևէին աստ և անդ աւե-  
րակք ինչ կարգացն անցելոց : «Յայտնի է իբրև զլոյս տուրն-  
», ջնան, ասէ ատենադպիրն Գերսոն՝ զիտնագոյնն յաստուա-  
», ծարանս իւրոյ ժամանակին և սիրող Եկեղեցւոյն, թէ կար-  
», գադրութիւնք չորիցն առաջնոց և որոց զհետ նոցին տիեզե-  
», րական Թողովոց՝ յեղափոխեցան և մատնեցան ի ծաղը և ի  
», մոռացութիւն՝ ի պատճառս զօշաբաղութեան պապից, կար-

,, զինպայց և աւարերիցանց, ի պատճառս անիրաւ վճռոց պա-  
 ,, պական պալատանն, զիւանական կանոնաց, արձակմանց, թշլ-  
 տուութեանց, ներողութեանց, (198) :

Պապիցն, և ոչ թէ կայսերաց Գերմանիոյ՝ որպէս յառաջն  
 կարծէին՝ անկ էր պատուանունս Քէր Թէոֆոս : Իրրու պարզ-  
 մրտութեամբ իմն հաւատացեալ եղեալ էին նորա ի մտի՝ թէ  
 ի վերայ մեծութեան և անպարտելի գոյոյ պապական իշխանու-  
 թեան հաստատեալ կայ օգուտն Եկեղեցւոյ, և թէ միայն նո-  
 ցայն իրաւունք և իշխանութիւն են արդարև աստուածականք,  
 ուստի և անսահմանք : Քանզի իշխանութիւնն տուեալ յԱս-  
 տուծոյ չկարէ փակիլ ընդ սահմանօք ի ձեռն որոց և իցէ երկ-  
 բաւոր իրաւանց : Եւ զայսպիսի հաստատուն կարծիս ունէին  
 պապքն լրջմտութեամբ և յայտնապէս նաև յայնժամ՝ յոր-  
 ժամ ձեռն արկանէին յանարժան հնարագործութիւնս, այս-  
 ինքն ի խարդախանս, ի ստայօք բանս և ի չարաչար խանգար-  
 մունս վկայութեանց սուրբ գրոց :

## Ի՛է.

Ամփոփումն իշխանութեան ի մեռս պտպական պա-  
 լատանն : — Անձեռնհասութիւն պապից ի կառավա-  
 րել զամենայն Եկեղեցիս : — Օրինակք ի պատմութե-  
 նէ : — Նիկիական կանոնին լուծումն : — Շնորհումն  
 արտօնութեանց՝ ազրիւր շահաստացութեան պալա-  
 տականաց Հռովմայ : — Խնդիրք սնոտիք :

Այնուհետև սկսան պապքն ազահարար յօգուտ անձանց  
 վարել զայն ամենայն՝ յորոց երբեմն ամաչէին և խորշէին : Այս-  
 պէս մեծն Գրիգոր զանգատէր՝ զի ողի նորա ընկձեալ ընդ խուռն  
 բազմութեամբ զբաղանաց և գործոց՝ ոչ կարէ խորհել զբարձ-  
 րագոյն իրաց (199) : Ինքն իսկ Աղիքսանդր Բ, յորժամ սկիզբն  
 եղև մեծի շարժմանն՝ ի Հռովմ ձգելոյ զամենայն ինչ իբրև ի  
 կեղրոն ուրիք, ասաց թէ «Յընթացս հնչից ամաց հազիւ թէ

«կարողացայ պարզել զնկերին գործս իմոյ սեպհական ժողովուր-  
 «, գեանս՝ հռովմէական Եկեղեցւոյ. իսկ ի կարգ և ի կանոն բե-  
 «, րել զգործս այլոցն եկեղեցեաց և ոչ իսկ այնչափ կարացի»  
 (200) : Պատմութիւն նախնական Եկեղեցւոյն զգուշացուցանէր  
 զսրապս շխտանիլ ի գործս այլոց Եկեղեցեաց, և ոչ մտաբերել  
 ի լուծանել զնոսին ի հեռուստ, հիմնելով զբանս իւրեանց ի  
 վերայ միակողմանի և աննառու ամբաստանութեանց : Ի նախ-  
 նի Եկեղեցւոջ ամենայն որ զիտէր՝ թէ ի գործս եկեղեցականս  
 չիք ինչ փնասակարագոյն քան զվճիռս տուեալս ի հեռուստ՝  
 առանց գիտութեան տեղական հանգամանաց : Պապք ըստ մե-  
 ծի մասին ի պատրութիւն անկանէին, և այնու ձգէին յան-  
 ձինս իւրեանց զպարսաւանս և զբացասութիւնս : Այսպէս զէպ  
 եղև ընդ Բասիլիդէս ի Սպանիա, ընդ Հիլարիոս Արեղատացի ի  
 Գաղղիա, ընդ Մարկելոս Անկիւրացի, ընդ Եւստորատիոս Սե-  
 բաստացի, ընդ Մելիտոս Անտիոքացի, և ս և ընդ Երոս, ընդ  
 Ղազար և ընդ Ապիարիոս յԱփրիկէ : Պապքն շտապ տագնա-  
 պաւ անդադար անկանէին ի սիսպանս և ի վրիսպանս, ի պատ-  
 րանս և ի մոլորութիւնս : Եկեղեցին միշտ գովէր զինաստու-  
 թիւն նիկիական կանոնացն, ըստ որոց պարտ էր զամենայն  
 խնդիր յիւրում տեղւոջն քննել, և թէպէտ պապք և Գրի-  
 գորեանք յայնժամ և ս մտադիր ի մէջ բերէին զնիկիական կա-  
 նոնս, բայց ոչ զստոյգան, այլ զմտացածինս : Եթէ ի Գ և ի  
 Ե դարս պապք (և այն միայն ի միասին ընդ այլս յեպիսկոպո-  
 սաց պապական աթոռոյն) կցորդ լինէին գործոց օտար Եկեղե-  
 ցեաց, այլ յայնժամ զէպք այնպիսիք հազաւաւորք պատա-  
 չէին յընթացս միոյ ամի, և ամենայն նոր Քրիստոսոստոս (այս  
 ինքն է անձին իւրում պահելն զայս կամ զայն իրաւունս) շա-  
 հաւէտ իմն աղբիւր էր եկամտից : Այսպէս ահա եպիսկոպոսն  
 Ալուարոյ Փէլայոյ պատմէ՝ թէ ինքն ի սննեակս պապին գողով՝  
 տեսանէր զի եկեղեցականք պալատանն միշտ զբաղեալ էին ի  
 հաշուել զգրամանս ոսկին՝ որ ի կոյտս կոյտս կային անդանօր 204) :

Մեծաւ ուրախութեամբ ընդունէին նորա զօր և իցէ առ իժ  
 ընդարձակելոյ զգործս պալատանն, և ոչ երբէք արհամարհէին

նաև զփոքումք ինչ իրօք : Այնպէս ի կարգի եղեալ էին զարտօնութիւնս և զառանձնաշնորհութիւնս, զի միշտ հարկ լինէր ի նորոյ պատրաստել զնոսին և բաշխել Անսպառ աղբիւրք եկամտից էին պաշտաման՝ պահպանողական հրովարտակէքն որք տուեալ լինէին սոսկականաց և ամբողջ միաբանութեանց՝ ընդդէմ քննութեանց եպիսկոպոսացն : Եպիսկոպոսունքն ևս յիւրեանց կողմանէն տեսին՝ զի հարկ է ինքեանց ի ձեռս բերել զպապական արտօնութիւնս՝ որովք կարողանայցեն զէթ պաշտպան կալ ընչից իւրեանց ընդդէմ ճոխացելոցն հռովմէական արտօնութեամբք : և զայսպիսի արտօնութիւն խնդրեաց և ընկալաւ յՈւրբանոսէ Գ. Եպիսկոպոսն Լաոնի 202) : Հռովմ մինչև ցայն աստիճան հետևող էր առածին, « Բաժանեա և տիրապետեա », զի և Թողով կանոնիկոսացն, որք էին մերձաւորագոյն օգնականք և խորհրդականք եպիսկոպոսին, ունէր արտօնութիւնս և ազատութիւնս յանդիման եպիսկոպոսին, և եպիսկոպոսն դարձեալ ընդդէմ Թողովոյն, Հայեցեալ յահագին խուռն բազմութիւն պապական արտօնութեանց պատրաստելոց ի Թ. Գ. դարու վասն Եկեղեցւոյն Գաղղիոյ միայն, զարմանամք ընդ սարկական վատութիւն եպիսկոպոսացն որք ոչ իշխէին առնել և ոչ զքայլափոխ մի առանց հաւանութեան Հռովմայ, նոյնպէս և ընդ փոքրկութիւն խնդրոցն որոց վասն հարկ համարէին առնուլ հրաման ի Հռովմէ : Եթէ մենաստան ինչ կամեր տալ զմիս հիւանդին իւրում, կամ եթէ միանձուկքն (Լաակացք) կամէին խօսել ընդ միմեանս ի սեղանի, հարկ էր առ այս առնուլ հրաման ի պապէն : Բայց ի վեր քան զամենայն՝ եպիսկոպոսունք, վանօրայք և սոսկական անձինք ցանկային պաշտպանել անձանց արտօնութեամբք ընդդէմ նուիրակաց, որք առատօրէն կապէին պատիժս, և զրամս քաղէին 203) :

Ի ձեռս Եկեղեցւոյ էր միմիայն հնարք բժշկութեան ապականութեանն տարածելոյ, և էր այն զուամբումն Թողովոց. բայց և այնորիկ եղեալ էին զէնք պապական տիրապետութեան, և անկեալք յանփառունակ սարկութիւն, որով լեալ էին ստուերք իմն և եթ բարեկարգութեանց նախնի Եկեղեցւոյ :

## ՄԱՍԻՆ ԵՐԲՈՐԳ

ՊԱՊԳ ԵՒ ԺՈՂՈՎՔ Ի ՄԻՋԻՆ ԳԱՐՍ

Ա.

Տիեզերական ժողովք առաջինը : — Կալլիստոս Բ եւ  
Իննուկենտիսս Բ եւ Ժողովք նոցա : — Ժողովքն Աղեք-  
սանդրի Գ : — Չորրորդ ժողով լատերանեան : — Ժո-  
ղովն Լուզղոնի : — Ժողով Վեննայի : — Կղեմէս Ե եւ  
բարձումն կարգին Տաճարականաց : — Ժողով Փլորեն-  
տիոյ : — Ժողովն Լատերանու հինգերորդ :

Ամենայն ժողովք, զորս եկեղեցին ~~արեւելեան~~ կամ ~~ընդ-~~  
~~հարկան~~ անուանէր, և որոց սահմանադրութիւնքն համա-  
րէին վարդապետութիւնք կաթուղիկէ եկեղեցւոյ, յառաջին  
ինն դարսն զուճարեալ էին յարեւելս, զորօրինակ ժողովքն  
Նիկիոյ, Եփեսոսի, Քաղկեդոնի, Կ. Պօլսոյ, Ընդ ամենայն ժա-  
մանական ընդ այնոսիկ պապք ոչ երբէք մտարերեալ էին զու-  
ճարել առ իւրեանս ժողով մեծ յեպիսկոպոսաց զանազան աշ-  
խարհաց, ժ և ժԱ դարքն ևս անցին գնացին առանց ժողո-  
վոց :

Յամին 1123, ի դադարել վիճմանց որ յաղաքս տուչու-  
թեան իշխանութեան, և գրեա թէ առ այն՝ զի զորոմեացի  
կնիք հաստատութեան ի վերայ մեծի յաղթութեանն Գրիգո-  
րեան նորահնար սկզբանց, Կալլիստոս Բ զուճարեաց զսինհո-  
ղոս բազմութիւն՝ յորում (որ առանձին մտադրութեան է ար-  
ժանի) կրկնակի առաւել էր թիւ արքայիցն կամ վանահարց՝

քան զեպիսկոպոսացն. զի առաջինքն վեց հարիւր էին, և այլքըն՝ այսինքն եպիսկոպոսք՝ 500. Ոչ որ ի ժամանակացն ասէ ինչ զայնմ ժողովոյ՝ տիեզերական կոչեցելոյ, և էանց գնաց այն առանց թողլոյ զկնի իւր զհետս ինչ: Պապն հրատարակեաց ի նմին օրէնս քանի մի զերկրորդական խնդրոց, ընդդէմ սիմոնականութեան, ընդդէմ ամուսնութեան քահանայից, և յաղաքս հաշտութեան ընդ Աստուծոյ. զխորհրդածութեանց եպիսկոպոսացն չիք բնաւ յիշատակութիւն: Եւ այս առաջին օրինակ էր ժողովոյ տիեզերական կոչեցելոյ, յորում ոչ եթէ Հարբ ժողովոյն, որպէս էրն սովորութիւն յառաջագոյն քան զհազար ամ, այլ պապն յիւր անուն օրէնսդիր լինէր 204):

Յետ վեշտասան ամաց (յամին 1139) Իննովկենտիոս Բ կոչեաց զերկրորդ ժողով նոյնպէս ի Հոռովմ. բայց և ի նմին եպիսկոպոսունքն հարկեցան լսել միայն զհրամանս պապին, և լինել վկայք անխօսունք՝ թէ սրպէս պապն բանիւք նախատանաց կորզէր ի ձեռաց զգաւազանս, և ի բաց առնոյր զպալիուներս յուսոց այնոցիկ՝ յեպիսկոպոսաց և յարբայից՝ որ ձեռնադրեալ էին յոսոխէ նորա Փիէռլէոնէ 205):

Նշանաւորագոյն ևս գտաւ իւրովքն հետեանօք երրորդն (արևմտեան) տիեզերական ժողով, զոր կոչեաց ի Հոռովմ Աղեքսանդր Գ յամին 1179: Յայնմ ժողովի երեք գումարմունք եղին, և պապ՝ որպէս թէ համայնաբար ժողովոյն՝ հրատարակեաց կանոնս 27. Նշխարհ ամենայն հայեր ի սիւնհոդոսն յայնոսիկ իբրև ի պատրաստութիւն և եթ հանդիսաւոր հրատարակման պապական հրամանաց, որպէս յայտ է ի բանից կայսեր, որ զերրորդ ժողովն Լատերանեան ուղղակի իսկ անուանեաց ժողով բերդոյն անսպառնալի 206):

Ընդ միտ անգամ անեալ ոչ էր հնար՝ թէ եպիսկոպոսունք ազատօրէն ի քննութիւն առնուցուն զխնդիրս առաջի Իննովկենտիոսի Գ, որ կոչեաց զչորրորդն Լատերանեան ժողով գումարեալ յամին 1215 ի 133 Հարց: Ըստ հաստատուն կարծեաց պապիցս, զործ և պաշտօն եպիսկոպոսացն ի ժողով գու-

մարեկոց այս էր միայն, զի տացնն պապին տեղեկութիւնս ըզհանգամանաց միճակացն իւրեանց, առաջի արասցնն խորհուրդքս, և առաջիկայ լիցին հրատարակման հրամանաց պապին, ժողովն Իննովկենտիոսի Գ, հայեցեալ ի թիւ եպիսկոպոսացն հաւաքելոց ի նմին, ևս և զեսպանաց թագաւորաց ոմանց, էր բազմութիւ քան զամենայն ժողովս գումարեալս երբ և իցէ յարևմուտս: Պապն պատուիրեաց ընթեռնուլ եպիսկոպոսաց զմճիոս իւր 207), զորս և լուան նորա լուութեամբ, և ապա ետուն զհաւանութիւն 208): Ի կամել նոցա դարձ առնել ի տեղիս իւրեանց, պապն հրամայեաց հատուցանել ինքեան զահագին գումար դրամոց, զոր նորա հարկադրեցան ի փոխ առնուլ ծանր ծանր տոկոսեօք ի գործակալաց պապական պալատանն 209):

Մի միայն արժանայիշատակ գործ առաջնոյ ժողովոյն Լուգոնի (յամին 1243) եղև արկումն յաթոոոյ Փրեդերիկոսի Բ կայսեր, զոր արարն Իննովկենտիոո Գ հանդերձ 144 եպիսկոպոսօք եկելովք ըստ մեծիմասին ի Սպանիոյ և ի Գաղղիոյ 210):

Յայնպիսի ծանր ծանր հանգամանս Գերմանիոյ և Իտալիոյ երեսպիտխանք երկոցունց աշխարհացն այնոցիկ ամենեկն իսկ չգտին մուտ ի ժողովն, և կամ սակաւք յոյժ ի նոցանէ գտին: Ժողովքն կազմէին առաւելապէս յեկեղեցականաց այլոց ազգաց, և նորա պաշտպան կային պապին և զնացից նորա, և համարձակէին ձեռնամուխ լինել ի գործս Իտալիոյ և Գերմանիոյ: Զիրաւունս գահընկէց առնելոյ զկայսերս ցուցանէին նորա առաջիկայ առասպելեօք (զորս ի մէջ բերէր և Գրիգոր Է), իբր թէ պապն Իննովկենտիոո բանադրեալ իցէ ըզկայսրն՝ Բրկադիոս, իսկ պապն Անաստաս ոչ միայն բանադրեալ իցէ զԱնաստաս կայսր, այլ և զաթոո թագաւորութեանն առեալ ի նմանէ 211): Երդ եթէ այնպէս վարեցան պապքն ընդ կայսերացն Յունաց, ընդէր չկարէին զնոյն առնել ընդ կայսերս Գերմանիոյ և ընդ այլս ի թագաւորաց, Եպիսկոպոսունք և արքայք պարտական էին առաքել առ պապն, զի

մարտնչիցի ընդ կայսեր՝ ահագին գումարս գրամոց, և այնպէս ծանրաբեռնել պարտեօք զեկեղեցիս իւրեանց և վանօրայս 242) :

Ժողովն Լուգզոնի Բ (կամ վեցերորդն տիեզերական յարեմուտս, որ եղև յամին 1274) կազմեալ էր ի 300 եպիսկոպոսաց և ի կրկին թուով բազմութենէ արբայից : Զայն ժողով գումարեալ էր Գրիգոր Թ, լուազոյնն ի պապից ժասնակին . որ և մտադիր ուղղէր արգեօք զայն ամենայն զոր ինչ ապականեալ էր քաղաքականութիւն նախորդաց Նորա . բայց ոչ համարձակեցաւ նորոգել զնախնի եղանակ գումարման ժողովոց, թէպէտ և կարևոր էր այն յոյժ և փրկաւէտ ի բարեկարգել զեկեղեցի զանապատացեալն և զպականեալ : Միաբանութիւնն ընդ Եկեղեցւոյն Յունաց վճռեցաւ արտաքին ձևով և եթ՝ առանց ամենեկին խորհրդակցութեան, ուստի և լուծաւ վաղվաղակի : Այլ և ոչ յայտնի է՝ թէ զորպիսի վճիռս հրատարակեաց պապն յայնմ ժողովի . քանզի կանոնքն որ գտանին ի պապական մատենին 243) ընդ խորագրովս . « Գրիգոր Թ ի ժողովն Լուգզոնի », հրատարակեալ էին մասամբ յայնմ ժամանակի, և մասամբ յետ սիւնհոդոսին 244) :

Մի միայն պտուղ կամ արգիւնք ժողովոյն Անենայի եղև (յամին 1311) բարձուամն ասպետական կարգին Տաճարականաց \*) : Բանզի իրբև ետես պապն՝ թէ մեծազոյն մասն եպիսկոպոսաց, ունի զկողմն կարգին այնորիկ, իսկ և իսկ յերրորդ

(\*) Տաճարական (Գաղղ. Թափլիկ) իբր ի՞նչ իւղեղին ասպետական և իբրեւասարական՝ հասարակեալ ի կալուածաց ասանց յերեսուզիմ յամին 1118, ի պաշտպանութեան սխարասորաց . և շէ եկեղեցիէ նոցա մերջ էր ի սեղիէ « տաճարին » : Աղբամանի յայն ասին « Տաճարական », իւղեցան . Զիսի առմանն երեսուզիմ յայլազգեաց՝ սխարեցան Տաճարական ընդ ասնայն կարգի, ճոխացան և բաղանցան յոյժ յոյժ, մինչև՝ ունել նոցա վանքայս ինն հազար, և իսպիճեցի լինել ի շխանաց և ի սխարաց . ասնզի ընդ բազմութեան իսրեանց և ընդ պետ պետ բարեխանութեանց ունելին և պախասութեան և արտ-

և ի վերջին գումարմանն յայտ արար ամենեցուն, զի եթէ ոք յեպիսկոպոսաց առանց իւրոյ հրաւիրելոյն ասիցէ բան մի և եթէ, անկցի ընդ մեծաւ բանադրանօք. և ապա հրատարակեաց թէ «Թէպէտ և ըստ իրաւանց ոչ կարէր բառնալ զկարգն, բայց զօրութեամբ իշխանութեան իւրոյ բառնայ զայն. . . . Աղեմէս յայս գործ էր միայն գործի արքային Քաղղիոյ, և ըստ հաճոյից նորա առաքեալ էր ընդ ամենայն տեղիս զկրօնաբննիչս իւր, որպէս զի պէս պէս տանջանօք ստիպեցեն զեղկելի Տաճարականն խոստովանել զյանցանս իւրեանց, Եւ այսու գործով այնմ միայն եհաս Աղեմէս, զի արքայն հրաման ետ նմա կարծելոյ զգառն բացեալ ընդդէմ նախորդին նորա Անիփակիոսի Ը, որովհետև գառն այն աղբիւր էր տազնապի տարակուսանաց՝ ամօթոյ և նուաստութեան վանս Աղեմայ, և վանս պապութեան առ հասարակ: Զի եթէ դատապարտ լինէր Անիփակիոս՝ ամբաստանեալն ի Փիլիպպոսէ արքայէն Քաղղիոյ իրրև հերետիկոս և անհաւատ, նովին իսկ չքանային գործողութիւնք պապին այնորիկ, և յառնէր խոսովութիւն մեծ յեկեղեցոցը:

«ՉԺողովն Աննայի ժողով անուանել անգամ ոչ է մարթ, «ասէ ժամանակակից պատմագիրն Ալթէր Լեմինկպուրկ, «քանզի պապն ըստ հաճոյից իւրոց արար զամենայն, իսկ ժողովն ոչ զպատասխանի ետ և ոչ զհաւանութիւն, (213): Զիք ստղկութիւն եպիսկոպոսաց և անարգութիւն պատուոյ ժողովոց առաւել քան զայս:

Իրրև վերջինն ի կայսերաց Գերմանիոյ ընկեցաւ յաթոռոյն իւրմէ (1243), պապութիւնն դարձաւ և եղև որս մի՝ յորոյ

Ինչնա Բաղարա, Բաղար և Բաղարման Ինչ վարդապետութիւնն՝ որ ճեպնն է Բաղարն: Բայց այս Ինչ յայտն է զի ամբաստանելն նոսա և ի իբր անհնազանդութ հրամանացն պապիցն, և ասուք՝ ինչ Բաղարն է վեր է Բաղար: Փելեպպոս Գեղեցիկն յամին 1307 ետ իբրքովառանել է միւսմ ասուք զԲաղարն Տաճարման Գաղղիոյ, յորոց Բաղար վարդապետ անիփակիոսմ է հոսք այնեցաւ հրամանաւ Բաղարաբնն, և պապն Աղեմէս Ե եթար) իպարտ զԲաղարն 1312 զայն յամին:

վերայ վիճէին Իտալացիք և Գաղղիացիք: Նախնի զէնն նոցա, որոյ օգնականութեամբն պապութիւնն յաղթանակութիւնս առնէր, ըթացաւ յերկար պատերազմի պապիցն և զերպապից. և ի Փորթնտեան ժողովին (1459) թող տուաւ ի գործ արկանել զնախնականն ձև եկեղեցական ժողովոց, որ էր ազատ և համարձակ խորհրդակցութիւն եպիսկոպոսաց. և հարկ եղև ի բաց զնել զսովորութիւն հրատարակելոյ և եթ զվճիռն պապից յորինեալս ի պալատականաց նոցա.

Սակայն արագ արագ եկին հասին զարձեալ լաւագոյն աւուրք վասն հոռովեական պատանն: Եւրոս Բ սկսաւ, և Լեոն Ժ աւարտեաց զհինգերորդ ժողովն Լատերանու (1512—1517), յորում էին 83 Իտալացի եպիսկոպոսք և քանի մի կարդինալք. Ամթալի իմն էր դասել զհաւաքումն զայն սակաւուց ոմանց ի մի կարգ ընդ ժողովոցն Նիկիոյ, Քաղկեդոնի, Վ. Պոլսոյ. մանաւանդ զի ըստ վկայելոյ միոյ ուրումն յեպիսկոպոսաց ժամանակին, յերկերիւր եպիսկոպոսաց Իտալիոյ անկարելի էր գտանել արտ չորս պիտանացոս իմիք: Ինքն իսկ Եուրոս եցոյց թէ զինչ համարինա զժողովն զայն, յորժամ յերրորդ գումարման նորին հրամայեաց ընթեռնուլ զվճիռն իւր, որով տօնավաճառն որ լինէր յառաջագոյն ի Լուզզոն՝ յայնմ հետէ փոխադրեալ լինէր ի Գննեւա 216), — Անահայրն Վիլիանոս Լէյ Ռեպպորթեցի զարմանայ ի տարեգիրս իւր՝ թէ զիւրոգ կարողացան ժողով անուանել զխումբն զայն մարդկան, յորում քացի պապական որերոյն գրեթ չգոյր և ոչ դք. և գործ ինչ կարևոր ոչ սահմանեցաւ 217), և սակայն վճիռքն հրատարակեալք ի պապէն ոչ անշաճք ինչ էին. և հարկ է տեսլ զայս մանաւանդ զմիոյ ի վճոց պապին, որ ըստ իւրում կարևորութեանն և նշանակութեան գերազանցեաց քան զամենայն զնախնի օրէնսդրութիւնս սիւնհոգոսից Հոռովմոյ, այսինքն թէ «Պապն ունի լիակատար իշխանութիւն ի վերայ ժողովոց, և կարող է ըստ իւրում դատողութեանն կոչել զնոսին և տելափոխել և արձակել»: Եսպացոյց յայսմ զայնպիսի վկայութիւնս ի մէջ բերե կոնդակն պապական, որք առ հասարակ

կամ մտացածինք են կամ խարդախեալք, և ոչ ունին բնաւ նշանակութիւն ինչ : Աւաղեմի և յետնադոյն վճիռք ստայօղք ի փոխ առեալք ըստ մասին ի սուտանունն Իսիդորէ, ասն իմն՝ թէ նախնի ժողովքն կախեալ կային բոլորովին զպապից, և թէ արդէն առաջին ժողովն տիեզերական խնդրեալ էր ի պապէն հաստատել զվճիռս իւր և այլն :

Բ.

Ուսումն աստուածաբանութեան արհամարհեալ ի Հռովմ : — Եստովանութիւնք պապիցն Ազաթոնի եւ Գրիգորի Բ : — Ուսումն իրաւագիտութեան : — Գանգատն Տանթէի : — Դոմինիկեանք եւ Փրանկիսկեանք :

Թիբեւս զարմանալի իմն թուեսցի, զի յորմէհետէ ձեացաւ ի Հռովմ՝ նոր իմն եղանակ կառավարութեան, և ժողովքն մեծաւ մասամբ կորուսին զնշանակութիւն իւրեանց, պապքն ոչ ևս խորհէին բանալ ի Հռովմ զզարոց աստուածաբանութեան. և թանձր տգիտութիւն կղերին Հռովմայ և անկարողութիւն նորին ի դատել զաստուածաբանական խնդրոց՝ յառակս լիալ էին : Արդէն ի վախճան Ն դարուն պապն Աղաթոն խոնարհութեամբ խոստովանէր առաջի Յունաց, թէ «Մժուաւ յիւրն է գտանել զուղիղ իմացուած սուրբ զրոց ի հռովմէական կղերին. քանզի նա հարկադրեալ է վաստակօք ձեռաց իւրոց պատրաստել իւր սնունդ. ուստի և պարզապէս պահպանէ զայն միայն՝ որ ինչ աւանդեալ է նմա ի ժողովոց և ի պապից», 218) : Նոյնպիսի խոնարհութեամբ խօսեցաւ ըզկղերէն Հռովմայ յետ յիսուն ամացնաւ Գրիգոր Բ, Ի ժ դարու Օթոն Աւերջելիացի և Գերբերտոս 219), և ԺԱ Բոնիկիոս սաստկութեամբ յարձակէին ընդդէմ աստուածաբանական տգիտութեան եկեղեցականացն Հռովմայ 220) : Յաւուրցն Գրատիանոսի սկիզբն արարին ուսանելոյ զօրէնստգիտութիւն :

բայց այն ոչ էր բացատրութիւն սուրբ գրոց, և ոչ քննութիւն աւանդութեան և վարդապետութեան Հարց, որք կարէին Հետեւանս ծանունս յառաջ բերել, և վտանգաւոր զիստս յերեւան հանել, և ցուցանել զհակառակութիւն որ կայր ի մէջ հին և նոր իրաւանց եկեղեցւոյ. այլ պարապէին յուսումն Գրատիանոսի, և կոնդակագրոց և հռովմէական իրաւագիտութեան: Ըստ այսմ Իննովկննտիոս Գ երաց ի Հռովմ զգլխոց իրաւագիտութեան, իսկ զուսումն աստուածաբանութեան եւ թող ի հեռաւորն Փարիզ: Ի դասս կարգինալաց գրեթէ միշտ գտանէին քսան իրաւագէտք առ մի աստուածաբան. միանգամայն հռովմէական պալատն Իտալացի էր ամենեկին, և Իտալիայն՝ հռովմէական բոլորովին: Թէպէտ և ի սկզբան ժԳ դարուն ընդ ամենայն Իտալիա երևեցաւ եռանդն իմն ի բանալ համալսարանս, սակայն վախճան նոցին էր ուսանել զբժշկութիւն և զօրէնսգիտութիւն, և ոչ զաստուածաբանութիւն: Իտալացիք թողուին զուսումն աստուածաբանութեան Գաղղիացւոցն, Գերմանացւոց և Անգղիացւոց, այնպէս զի զորդիս իւրեանց եթէ կամէին տալ յուսումն ինչ՝ առաքէին յօտար աշխարհս 221): Ծանթէ ասէր զհայրենակցայն իւրոց՝ թէ նոքա ուսանին զկոնդակագիրս, և ոչ ինչ միտ գնեն աւետարանին և զրուածոց Հարցն սրբոց: Աղերն Հռովմայ սակաւ յոյժ փոյթ ունէր տարածելոյ Իտալացիս զուսումն աստուածաբանութեան 222), և դառալք այնր աղագաւ զիւրազոյնս հրաժարէին ի տարածելոյ զագղեցութիւն իւրեանց ի ձեռն ուսումնական կրթութեան, զի առ ձեռն պատրաստ ունէին զայլ հնարս գործունէութեան: Նորահնար կրօնաւորական կարգս ունէին Գոմինիկեանց և կրօսեր եղբարց (Փրանկիսկեանց), որք գոլով ընդ արթուն հսկողութեամբ ընդհանրապէս թշուորաց (այսինքն է վանահարց) իւրեանց բնակելոց ի Հռովմ, և միանգամայն սովորեալք միարանել զշահս օգտի կարգին իւրեանց ընդ շահուց հռովմէական պալատանն, ոչ թողուին տեղի երկրայութեան՝ թէ նոքա պատրաստ են հեռի առնել զայն ամենայն որ ինչ կասկածելի երևիցի ի հնարս հաստատութեան նորոց

զրուածան Հոռովմայեցոց : Ի միջոյ կարգացն այնոցիկ, մանաւանդ ի միջոյ Գոմինիկեանցն \*) առնոյր պալատն զպաշտօնական աստուածարանս իւր (քանզի հարկ իսկ էր զէթ մի միայն ունել աստուածարան), զորօրինակ և զվարժապետն անուանեալ պալատանն սրբոյ \*\*):

Գ.

Նախապատուութիւն իրաւագիտութեան քան դատուածարանական զիտութիւնս : — Վնասք որ անտի : — Կարծիք Պարոնի : — Յոյս նորա և նմանեաց նորին :

Ռոճէր Պարոն \*\*\*) և ժամանակակիցք նորա հաստատուն՝ թէ ոչ աստուածարանութիւնն, այլ օրէնսդիտութիւնն համարեալ էր անքոյթ ճանապարհ հասանելոյ յեկեղեցական պաշտամունս և ի շահակէտ տեղիս : Քանզի աստուածարանութիւն

(\*) Գոմինիկոս աղանձացի հիմնեաց է Տոււճա (Թոււոս) Գոսչ զնոցոց յամին 1215 զհարի իրօնաւորաց, որ է նորա անուն ինչեցան «Գոմինիկեան», և էր նպատակ նոցա բարոյն հերիքիկոսոց, որոյ վասն անստանեցան և «Բարոյնի նշքոր» : Ի նոցանէ սիկզբն առին և իանգարելն ազգին Վերոյ է սիկզբն Ժ.Գ. դարսն «անէլեոս» :

(\*\*) Լարնեբերն «Տոբեոպեր սախրէ պալատի» :

(\*\*\*) Ռոճէր Պարոն (իւր «Պեմ») մանչն անգլիացի ներհան ասիայն գիրսութեանց, ճանաչանք քննգիրսութեան, վախճանեալ յամին 1294, անստան է ոչ միայն հնարագիրսութեամբն և հանճարով, որով հնարեաց զվաստք, զքրիտոն և զայն ինչ քաղսմ, այլ և հալածանօքն և քաղսմեաց քանդարելսութեամբ զորս իրեաց է արգիւտցն զարդարսութեան է իբրև իսխարք ս :

ի ձեռս զպրոցին Անսելմոսի Քանթերպուրեցւոյ, Արայելարդոսի, Բեռնարդոսի, Հոգրերտոսի, Պուլլոսի և այլոցն զպրոցականաց, որք յառաջ էին քան զԹովմաս Ազուխնացի, ոչ ինչ նպաստ եղև ի Հիմնել զԳրիգորեան զրութիւնն, և ի հաստատել զհամաշխարհական տիրապետութիւն պապից, Ի զրուածս աստուածաբանիցն այնոցիկ ոչ ուրեք գտանի բացատրութիւն վարդապետութեանն զեկեղեցական իշխանութենէ հիմնելոյ ի վերայ պապական զրութեան : Միայն բանազնացութիւնքն ընդ Յոյնս յառաջ և զինի ժողովոյն Լուզզոնի (1274), և այն ինչ ի լոյս եկեալ կարծեցեալ վկայութիւնք յունական Հարցն և ժողովոց, որպէս և հաւաքումն կոնզակաց և վճռոց Գրիգորի Թ., մուծին զայս ոճ զրութեան յաստուածաբանութիւն անդր : Իրաւագէտքն առաջինք եղին ի նուաստացուցանել զուսումն իւրեանց և ի փոխել զայն ի գործի շողորթութեան . և միայն ի վախճան Թ.Պ. զարուն հետեւեցան նոցա յայսմ մասին և աստուածաբանքն ևս : Այնպիսի աստուածաբանք մեծաւ մասամբ էին ի կարգէ մութացիկ կրօնաւորաց, և ի պատճառս արտօնութեանց շնորհելոց նոցա՝ հարկաւ պարտ էին փոյթ մեծ ունել բարձրացուցանելոյ՝ քան թէ նուազելոյ զիշխանութիւնն պապական . բայց թէ և յօժարէին նոքա այլ ազգ ինչ զրել, անտարակոյս գտանէին զանձինս իւրեանց բանտարկեալս ի բանտի վանացն իւրեանց : Միայն արք որք ունէին վիճակ ինչ ազատ, և արտաքոյ սովորական կարգաց, որպիսի էին Օքքամ \*) և այլք յԱնուանականաց կարողացան խոտորել յայնմ ուղղութենէ. այլ և նոքա (զորօրինակ Մար-

(\*) Գրուել է իմաստ 0' + + + մ աչախերք Տոման Սիւղբի, մեանն Փրանկիսիտան. ուր հզոր է քաղաքացիական աստուածաբանութեան, և ժամայնորդի ճանաչողութեալ «Անյաղի վարդապետ» արիւթաբ ընդդէմ էրեցաւ աշխարհութեան իշխանութեան պապից, և բանաբերեալ է նոցանէ՝ յապն 1350, քաղաքաւ յապարանս արային Պատարեոյ, և անդ է Մանսոյ քաղաքի վախճանեցաւ յապն 1545 իմ 1547 :

սկիտոս Պատաւացի) չկարացին ի խուռն բազմութեան ստացօղ և մտացածին գրուածոց գտանել զհետս ինչ ուղղութեան :

Հանրական աղէտքն յառաջ եկեալք յապականեալ իրաւագիտութենէ Եկեղեցւոյ՝ զարձկոյ ի զէն հոգևորական բռնակալութեան, ևս և ի պապութենէ, էր սոսկալի կործանումն բարոյական և կրօնական զգացմանց արևմտեան քրիստոնէից, և յերկուց աստի զուգապէս զետահետեալ աղբերաց, որք կրկոյրին ևս ցամն 1505 յիտալական ականէ բղխելով օգնէին իրերաց, թունաւորեցաւ աշխարհ ամենայն :

« Իրաւագէտք, ասէ Ռոճէր Պաքոն 225), կառավարեն », զԵկեղեցի, և չարհարեն և յուղեալ շիտթեն զքրիստոնեայս », երկարատե գատաստանօք », : Եւ արգարե հզօրագոյնքն ի պապս, որպիսիք էին Իննովկենտիոս Գ և Գ, Աղեմէս Գ և Առնիփակիոս Ը, որք ձեռնհաս գտան տիրապետել ի վերայ ամենայն աշխարհի, իրաւագէտք էին : Ըստ ասելոյն Պաքոնի պարտ էր եկեղեցական իրաւագիտութեանն վերստին գառնալ յաստուածաբանական (այսինքն համաձայն գրոց սրբոց), ապա թէ ոչ, ոչ ևս զոյր հնար փրկութեան : Եւ նա ևս ըստ օրինակին Տանթէի տեսանէր՝ զի աղբիւր խանդարման և ապականութեան էին պապական կոնգակաղիւրքն, և նախապատուութիւնն որ տուեալ լինէր նոցին առաւել քան թէ գրոց սրբոց 224) :

Երևի թէ Պաքոն խորագոյնս նկատեալ տեսանէր զպատճառս ապականութեանն՝ որ ծածկեալ էին ի բազմաց. սակայն և այրն այն գերահռչակ ունէր միայն զազգումն ինչ բնական, և ոչ զբացայայտ գիտութիւն, որ ի ժամանակին յայնմիկ ի պատճառս սակաւութեան պատմական տեղեկութեանց և քրննարանական դատողութեանց՝ անհնարին իմն էր : Բայց հաւատարմ Պաքոն, և բնոյ նմա բազումք ակն ունէին, թէ մօտալուտ առաջի կայ մաքրութիւն Եկեղեցւոյ, զոր կատարեսցէ, ասէին, պապ որ երկիւղած յԱստուծոյ, և թերևս կայսր որ բարերարոյ, և թէ մաքրութիւնս այս Եկեղեցւոյ եղիցի զիսաւորապէս փոխակերպութեամբ եկեղեցական իրաւագիտութեան (1) :

## Գ.

Ժողով կարգինալաց: — Նախապատուութիւն նոցա: — Անկումն յեպիսկոպոսութենէ յերիցութիւն: — Հակառակութիւնը ընդ կարգինալան եւ ընդ պապս: — Երդմունք եւ երդմնագանցութիւնը պապից: — Վնասակարութիւն իշխանութեան եւ Տոխութեան կարգինալաց: — Միջոցը ընտրութեան պապից: — Իտալացիք եւ Գաղղիացիք:

Պապ կարգինալաց և Պալատն Հոռովմայ էին զխաւոր գործիք նորոյ պապութեանն, որք շղթայակապ առնէին և զպապս զխտովին, և հարկ առնէին նոցա ծառայել շահոց օգտի իւրեանց: Իբրև բացէ ի բաց հեռացաւ պապն ի բարեկարգութեանէ և ի կանոնաց նախնի Եկեղեցւոյ, իսկոյն երևեցաւ Ժողովն կամ՝ ձերակոյտ կարգինալաց\*), որոց աւանդեցաւ յամին 1059 առ յապա ընտրութիւն նորոյ պապին: Վարդինալքն ի ձեռն նուիրակաց և ի ձեռն կցորդութեան իւրեանց պապական իշխանութեան, որ այնուհետև ոչ ևս ունէր զչափ և զսահման, հասին յայն աստիճան, զի սկսան ի բարձանց հայել նաև ի վերայ եպիսկոպոսաց՝ որք ի ԺՄ դարուն տակաւին ևս նախապատիւք քան զնոսա էին ի Ժողովս: Անդէն իսկ ի սկզբան (1054), յորժամ նոր դրութիւնն պապական այն ինչ սկսանէր բողբոջել, կարգինալքն ձեռն արկին պահանջել վասն անձանց զնախապատուութիւն քան զբարեպիսկոպոսունս. բայց

(\*) Զայն «կարգինալ», (լատիներէն «տորքնալէ») նշանակէ «բիւտոր», որպէս կոչելն է հնումն և սճան է պատրաստեաց կոյտերացն բիւզանդիոյ: Ի ԺՄ դարուն սեպտեմբերի 10-ին պապն զայն կոչումն իորհրդախանց իւրեանց, զբոց զիման սահմանեցին 70 լէնել: Ատորքինալքն գործ է բիւտորապէս ընտրութեան պապին. և ունին բիւտորի կորսրիոյն և վերաբեր ծիբանի, որոց վասն և սճանց է Հայոց կոմսիոնաց հոռոյ թաւեցաւ «ծիբանաորս», կոչել զնոսա:

սորա նաև յամին 1196 համարէին բարձրագոյնք քան զնոսա : Միայն ի ժողովին Լուսազոնի ( յամին 1245) սահմանեցաւ, և այնուհետև ոչ ևս կրեաց ինչ հակառակութիւն, նախապատուութիւն կարգինալաց, ևս և կարգինալ երիցանց և սարկաւազաց՝ քան զեպիսկոպոսունս ամենայն ազգաց քրիստոնէից : Առ սակաւ սակաւ մինչև յայն հասին՝ զի եպիսկոպոսացն ոչ էր հնար այլ ազգ խօսել ընդ կարգինալս՝ եթէ ոչ ի ծունկս գողով, և կարգինալքն վարէին ընդ նոսա իրրև ընդ ծառայս իւրեանց 223) :

Ոչ յանխորհուրդս ընկալան Անսելմոս, Գրիգոր և Գրատիանոս ի կանոնադրութիւնս իւրեանց զայայնի վկայութիւնս ինչ ի բանից Հերոնիմոսի, յորս հաստատի նախնականն հաւասարութիւն եպիսկոպոսաց և երիցանց, և նախապատուութիւն եպիսկոպոսացն սահմանեալ լինէր միով և եթ սոյորական իրաւամբ : Վարձատես յորինիչքն պապական զրութեանն ոչ միտ եղին՝ զի այսու արկանէին զտապարն առ արմին հրառովմեական նախազահութեան. մի միայն փոյթ նոցա այն էր՝ զի բարձրացի աստիճան կարգինալաց, ճանապարհ հորդեցի տիրապետութեան պալատանն, և վերայ աւերակաց եպիսկոպոսական զրութեան հիմնեցի պապականն : Արովհետև իբրաւազիտութիւնն Գրատիանոսի համարեալ լինէր մի միայն աղբիւր՝ յորմէ քաղէին զկանոնս զԷկեղեցոց և զեկեղեցական դասակարգութենէ, վասն այնորիկ ի վախճան ԺԳ զարուն եպիսկոպոսունքն յայն հասեալ էին՝ զի թեակոյսէին առնուլ զպատիւ կարգինալ երիցանց, և զայս անկումն յեպիսկոպոսութենէն յերիցութիւն, որ ի նախնի Եկեղեցոջ անձոռնի իմն արդեօք երևէր, համարէին նոքա իրրև զամբարձումն ի բարձրագոյն աստիճան : Ի ժամանակի բարգաւաճանաց պէս պէս արասնութեանց, և կործանման համօրէն նախնի եկեղեցական օրինաց, յորժամ սահմանադրեալն անտեսութիւն եկեղեցական վիճակաց իսխտեալ էր բողոքովին ի ձեռն մուրացիկ և թափառական միանձանց, այսպիսի անկումն յեպիսկոպոսութենէ յերիցութիւն մասն էր նորոյ զրութեանն :

Ի հռոմէական Եկեղեցւոյ ընդ երկար ժամանակ վեր ի վայր շարժումն գործէին կշիռքն ընդ մէջ տիրապետական իշխանութեան կարգինալաց և ընդ մէջ բացարձակ իշխանութեան պապից : — Կացին պապք այնպիսիք՝ որ ոչ ինչ փոյժ կալեալ հակառակութեան կարգինալացն Իտալացւոց, զհետ երթային քաղաքականութեան Պաղղիացւոց, որպիսիք եղին Մարտինոս Գ և Աղեմէս Ե. կացին և այնպիսիք՝ ընդ որս կարգինալքն հաղիւ համարձակէին խօսել, կամ զաչս ի նոսա ամբառնալ, որպիսիք Վանիփակիոս Ը և Պօղոս Գ. իսկ ոմանք ի պապիցն նաև ի մահ մատնէին զկարգինալս, որպէս արարինն Աբրահամոս Զ, Եղեքսանդր Զ և Լևոն Ժ : Բայց սովորաբար ժողով կարգինալացն, յորոյ ի ձեռս էր ընտրութիւն պապին, և յորում պահեալ լինէին շահք և աւանդութիւնք պապականք, ունէր զկառավարութիւն ամենայնի : Նա էր որ հսկէր արժնութեամբ, զի պապն մի հանցէ երբէք ի ձեռաց զիրաւունան ստացեալս և զընկալեալ սկզբունս, և գործակից լինէր յամենայնի ղեկավարութեան Եկեղեցւոյ. մեծապէս փոյժ ունէր՝ զի պապն ի բաղմնապատիկ գէպս կատարող միայն իցէ կամացն իւրոց և վճռոց : Հնարքն զոր հնարեցին յետնագոյնքն ժամանակաւ և այժմու պապք առ ի ղեկավարելոյ զամենայն զգործս՝ յինքնանս յանկուցանելով զերկուս կամ զերիս կարգինալս համախոհս ինքեանց, առ ի խափանելոյ զզումարմունս ժողովոյ կարգինալացն, յաջողեցան միայն առ Մարտինոսի Գ : Բայց Վանիփակիոս Ը, Աղեմէս Ե, Յովհաննէս ԻԲ, որք կացին ի կիսոյ Ժ-Ե դարուն և այսր, ամենեքեան յօգուտ վարեցին զայս հնարագործութիւն, և այնու մանաւանդ առաւելապէս օգտեցան, զի ի ձեռս իւրեանց ունէին զահագին բաղմնութիւն կարգինալաց, բաշխելով ի նոսա զշահաւետ տեղիս և զպաշտամունս :

Մրցումն հակառակութեան ի մէջ սակաւապետութեան և բացարձակ միապետութեան պապիցն տեսաց զամս երկերիւր և աւելի, Կարգինալքն թէպէտ և տային հրաման պապին վարել զիշխանութիւն անսահման ի վերայ տիեզերական եկեղեցեաց :

սակայն գուն գործէին նեղել զնա յընտրութեան անդ պէս պէս բանասնացութեամբք, և պահանջմամբ՝ զի ինքն ի միասին ընդ իւրեանս արասցէ զկառավարութիւն ընդ անուամբ հռոմէական պաշտոնս: Իննովկենտիոս Ձ արդէն յամին 4535 ի բաց մերժեաց զայնպիսի պայմանադրութիւնս. իբր զի պապական իշխանութիւնն յԱտուծոյ տուեալ զողով՝ չկարէ, ասէր, փակել ընդ սահմանաւ. սակայն փորձ պայմանադրութեանցն այնոցիկ վերստին կրկնեցաւ: Նորընտիր պապին՝ յառաջ քան զձեռնադրութիւն նորա՝ առաջի առնէին ի փակարանի անդ զբազմութիւն յօդուածոց, և նա պարտական էր երգնուլ ի պահել զնոսին: Նպատակ յօդուածոցն այնոցիկ էր չափ դնել վասնողութեան և բռնաւորութեան պապին. ապա և Հաստատել զանփոփոխութիւն կարգինալացն և զմասնակցութիւն նոցա ի բաժանման եկամտից: Եւզինէոս Գ Հաստատեալ էր զյօդուածն զայնոսիկ՝ առանց բնաւ ունելոյ ի մտի պարտաւորել զանձն իւր ի պահպանութիւն նոցին 226): Չնոյնպիսի երգումն երգուաւ և Պիոս Բ. քանզի երգուաւ նա կերպարանափոխ առնել զպալատն հռովմէական (որ կարևոր էր յոյժ ի ժամանակին), և ի ծածուկ պահել զայնոսիկ զաշնակցութիւնս՝ որ արդէն առաջի առնէին զխաւարային իմն պատկեր անկարգ կառավարութեան Եկեղեցւոյ. սակայն և Պիոս Բ նոյնպէս ինքնահաճութեամբ ստեաց երգմանն իւրում որպէս և նախորդքն իւր, այնպէս զի ի թիւս ծանր ծանր ամբաստանութեանցն եղելոց ընդդէմ՝ պապից ժամանակին՝ յաւելաւ և ամբաստանութիւնն զերդմնազանցութեան նոցա: Եւ յսու ամենայնիւ երգումն զոր Պօղոս Բ (յամին 4464) երգուաւ ի փակարանին՝ տարածեցաւ և ի վերայ այլոց բազմապատիկ իրաց, Խոստանայր նա այնու երգմամբն պատուիրել ըմբռնուլ առաջի իւր Հրապարակաւ ըստ ամենայն ամսոց զյօդուածն զորս երդնորըն կատարել, և հրաման տալ կարգինալաց՝ երկիցս ի տարւոջ ժողովել և դատել, կատարեալ իցէ պապն ըստ արժանոյն զերգմունս իւր: Յետ սակաւուց ետես Պօղոս, — և Շողոմարարքն զնոյն ասէին ցնա, — թէ պապական իշխանութիւն իւր

կարի իմն նեղեալ է. վասն որոյ ստիպեաց կամ համոզեաց ըզ-  
կարդինալն ստորագրել առանց ընթեռնելոյ զնոր խոստամագիր  
բոլորովին այլափոխեալ : Այն ինչ Բեսարիոն ի փախուստ ա-  
ճապարէր ի սենեկէ անտի, պապն դարձոյց զնա յետս, և ըս-  
պառնայեօք բանադրանաց ստիպեաց և զնա ի ստորագրել : Յա-  
ղագս այսորիկ ետ նա կարդինալացն զնոր իմն զարդ զլիսոյ, այս-  
ինքն է զգրակ մետաքսեայ՝ հանդերձ կարմրագոյն վեղարաւ  
զոր յառաջ պապքն միայն գնէին : Սակայն և այսու ոչ խա-  
փանեցան կարդինալքն ի գծագրելոյ յետ մահուն Սեքստոսի Գ  
զնոր խոստամագիր 227), զորոյ զկատարումն պարտական էր  
երգնուլ նորընտիր պապն : Բննովկենտիոս Ը երդուաւ զայն,  
բայց ապա և զանց արար 228). զնոյն արար և Յուլիոս Բ  
(1505) : Երգնուին պապքն դումարել ի սուղ ժամանակի ծո-  
ղով տիեզերական, և ոչ կատարելին զխոստումն իւրեանց, Եւ  
այսպէս ընդ ամս իբր հարիւր յերկարաձգեցաւ հակառակու-  
թիւնն ի մէջ կարդինալաց՝ խնդրողացն զշահ անձանց և զա-  
ռաւել մասնակցութիւն ի կառավարութեան Եկեղեցւոյ, և ի  
մէջ պապից՝ որք ոչ կամէին սահման գնել բացարձակ միա-  
պետական իշխանութեան իւրեանց : Աերջպպէս յաղթու թիւնն  
մնաց ի կողմն պապից : Յընթացս ժԶ զարուն կարդինալքն  
դարձեալ կորուսին զնախնի իրաւունս իւրեանց, և եղն սոսկ  
խորհրդականք պապին. այնուհետև ի կամս պապին էր հար-  
ցանել կամ ոչ զխորհուրդ ի նոցանէ, բայց ոչ ևս պարտա-  
կան էր անսալ կարծեաց նոցա :

Պապքն որ յաւուրց անտի Գրիգորի Է հնարագէտք էին  
յոյժ ի յօրինել պէս պէս ձևս երգմանց, որովք յուզեալ շը-  
փութէին զիւրիշ մտաց մարդկան, և զամենայն ինչ նուաճէին  
ընդ իշխանութեամբ, այնուհետև ինքեանք անդադար առ ոսն  
հարկանէին զերգմունս իւրեանց : Յայլմէ կողմանէ անիմանալի  
իմն է թէ զխորդ կարդինալք այնպիսիք՝ որք ընտրէին մի զկնի  
միոյ զՍեքստոս Գ, զԲննովկենտիոս Ը, զԱղեքսանդր Գ, կարող  
էին կարծել՝ թէ պապն զորութեամբ խոստամագրոյն իւրոյ յետս  
կացցէ ի հրապուրիչ վայելմանէ անսահման իշխանութեան իւ-

րոյ : Եւ սակայն մնալն յաղթութեան ի կողմն պապից թերևս նուազագոյնն էր ի չարիս . քանզի բռնակալութիւն սակաւակետութեան չարագոյն է քան զտիրապետութիւն միոյ անձին :

Ընդ այս չի՞ք երկրայութիւն՝ զի ազդեցութիւն ժողովոյն կարդինալաց ի վերայ գործոց Եկեղեցւոյ մնասակար եղև յոյժ յոյժ : Արկումն ժողովոյն այնորիկ եղև Հազար ամօք զինի հիմնարկութեան Եկեղեցւոյ, և սպրդեցաւ եմուտ յեկեղեցական դասակարգութիւնն հիմնեալ ի Քրիստոսէ և յառաքելոց՝ իբրև զօտարտի ինչ և զանձոռնի անդամ : Ամէին կարդինալքն անցանել զանցանել զեղիսութեամբ իւրեանց և ճոխութեամբ և թուով ծառայից քան զհարստագոյնս յպիսկոպոսաց, մինչդեռ Հռոմ և շրջակայք նորին ոչ էին այնմ ձեռնտու : Ամէին հարստացունել զազգատոհմն իւրեանց, և ընձեռնել ազգակցացն իւրեանց և բարեկամաց պաշտամունս փարթամացուցիչս : Հարկ ի վերայ կայր յեղաշրջել զկարգս Եկեղեցւոյ առ ի ընուզ զպէտս նոցա, և յաւելուլ զշահս օգտիցն . ուստի հարկ եղև զբազում եկեղեցական պաշտամունս անյարմարս իրերաց յանձն առնել միում ումբ 229) . և եկամուտքն ի ձեռս բերեալք սխմնականութեամբ՝ հետզհետէ յաճումն և յառաւելութիւն գային . միով բանիս՝ կարդինալքն միայն էին որք յանկարգանալ Եկեղեցւոյ բարեկեցիկ լինէին և հարստանային 230) : Հազիւ երբէք դէպ լինէր մինչև ցկկողքն ԺԳ դարուն՝ միաւորել կարդինալական իշխանութեան ընդ եպիսկոպոսութեանց արտաքին տէրութեանց, բայց առ Կննուկենտիոսի Գ (1230) սովորական ինչ եղև այն . այնպէս զի հռոմէական Եկեղեցի ինքնին ետ զօրինակ արհամարհանաց և զանցառութեան պարտուց իշխանութեան . արդէն Յակոբ Տը Վիթրի \*) ասէր՝ թէ եկամուտք համօրէն Գաղղիոյ հազիւ թէ բաւական էին ի ընուզ զպէտս ծախուց կարդինալացն 234) :

(\*) Պատմութիւն ԺԳ դարոս, Եղիսիոցս և Կարդինալ Լուիզանէու յարկն 1244 :

Ի ԺԳ և ի ԺԴ դարս յընտրութեան անդ պապից կարդինալքն երբէք երբէք զանցանէին քան զսահման իշխանութեան իւրեանց, թէպէտ և այն ոչ ևս պատահեաց ի կիսոյ ԺԵ դարուն և այսր : Ի ԺԲ դարու, և յառաջին ամս ԺԳ դարուն, ընտրութիւն նորոյ պապին լինէր իսկոյն յետ մահու նախորդի նորա : Բայց յորժամ պապութիւնն եհաս ի ծայրագոյն աստիճան իշխանութեան իւրոյ, պապական աթոռն դատարկ մնայր ամ մի և երկուս, և կարդինալքն այնորիկ այլանդակ ծաղրածութեամբ կամէին իմն ցուցանել աշխարհի՝ թէ զիւրագոյն ևս է լինել առանց պապի, յորմէ յառաջ գայցէ յԵկեղեցւոջ ամենայն իշխանութիւն :

Այսպէս, օրինակ իմն, Աելեստինոս Դ ընտրեցաւ յետ երկուց ամաց, Գրիգոր Ժ յետ երկից, և Նիկողայոս Դ զրեթէ յետ միոյ ամի : Ի մահուանէն Նիկողայոսի ցընտրութիւն Աելեստինոսի Ե անցին ամբ երկու և ամիսք երկք. և զլինի մահուն Բենեդիկտոսի ԺԱ աթոռն պապական մնաց դատարկ զամիսս մետասան. իսկ յետ մահուն Աղեմայ Ե զամս երկուս և զամիսս չորս : Հանդերձ այսու մէն մի փակարան տեսարան լինէր նենգութեանց և երկպառակութեանց կամ կռուոյ ի մէջ ազգացն Վաղղիացւոց և Խալաքւոց, որք վիճէին թէ ո՛ւմ անկ իցէ յիւր կողմն ձգել զպապականն իշխանութիւն, մինչև հուսկ ուրեմն յաջողեցան Վաղղիացիք ի ձեռս բերել զյաղթութիւն :

Ե.

Պալատն պապական : — Խտիրն ընդ Եկեղեցի եւ ընդ պալատն : — Գործողութիւնը հռովմէական պալատանըն : — Յակոբ Տը Վիթրի : — Հոռոբրտոս Կրոսմէթ : — Նիկողայոս Գ եւ Յովհաննէս Փարմացի : — Բանք սրբութեանցն Հիլտեկարտի եւ Բրիգիտտայ : — Անյազ ընչաքաղցութիւն պալատականաց պապին :

Փոփոխութիւնն այն մեծ որ գործեցաւ յամս իրք քառասուն, — ի վերջոյ ԺԱ դարուն մինչև ցամա 1150, — նշանակի

սակաւ բառիւքս, «Հոռովմեական Եկեղեցի դարձաւ յայնժամ ի պալատ Հոռովմեական», : Սակայն արդեամբք կարի յոյժ մեծ է խորին ընդ եկեղեցին և ընդ պալատն : Քանզի յառաջն յորժամ բան լինէր զԵկեղեցւոյն Երուսաղէմի, Աղեքսանդրիոյ, Եփեսոսի, Վարժագինեայ, Հոռովմայ, ընդ այսու անուամբ խմացեալ լինէր ողջոյն իսկ ազգ քրիստոնէից, Հանգերձ եպիսկոպոսոք և քահանայիւք, ժառանգաւորոք և աշխարհականոք, որք առ Հասարակ եղբարս միմեանց ճանաչէին զանձինս 252) : Գործք Հանապոպոզիւք վճռեալ լինէին յեպիսկոպոսէն և ի քահանայից նորա . իսկ կարևորագոյն և անսովոր խնդիրք՝ ի ժողովի զումարելոյ յեպիսկոպոսաց մերձաւորաց : Յեկեղեցւոջ կային Հաւատացեալք, և ընդ նոսին եպիսկոպոսունք երիցունք, որք կարողք էին և մատակարարէին զխորհուրդս, բայց ոչ գոյին պաշտօնական իրաւագէտք : Եկեղեցի պսպիսի ոչ երբէք կարէր պալատ լինել, ցորչափ տիրէին ի նմին եկեղեցական սովորութիւնք և հոգի Եկեղեցւոյ : Բայց Հոռովմեականն Եկեղեցի դարձաւ և եղև պալատ ինչ, այսինքն զիւան գրագրոց, նօտարաց, սակարկողաց, որոց գործ էր վաճառել արտօնութիւնն, վճիռս, կոնդակս պաշտպանութեան, և որ այն ևս : Ժողովարան էր այն կղերաց եկեղոց յամենայն կողմանց Եւրոպայ ի խնդիր ճոխ և փարթամ վիճակաց : Յառաջին ժամանակս անգ զամենայն գործս ի զլուխ բերէին արք կարգեալք ի Հոռովմ ի կատարումն աստուածային պաշտամանց . և կարևորագոյն խնդիրք լուծեալ լինէին ի ժողովս՝ յորս կոչէին եպիսկոպոսունք զաւառաց . և զի չափաւոր էին պարապմունք այնօքիկ և գործողութիւնք, չէին ինչ պէտք առաւելագոյն թուոյ անձանց : Այլ զիւրդ յեղափոխեցաւ այս ամենայն յետ Համաձայնութեանն եղելոյ ի Վորմս քաղաքի (յամին 1122), մանաւանդ յաւուրց անտի Գրատիանոսի : Ի յաճախել խուռն բազմութեան գործոց դատաստանաց, շնորհարարչութեանց, ներողութեանց, թողութեան մեղաց, հրամանագրոց և կանոնագրութեանց սահմանելոց վասն հեռաւոր աշխարհաց Եւրոպայ, ևս և Ասիոյ, անհետացաւ կատարումն տեղական եկեղեց-

ցական պաշտաման, և պէտք եղին ամբոխի հարիւրաւոր անձանց, ամբոխ՝ որոյ հայրենիք պարսան էր, որոյ պատուասիրութիւն էր բարձրագոյն տեղին ի նմա, և ամենայն փոյթ ջանիցն զօշարազուծիւն, յաւելուած տրոց, և աճումն շահուց յօգուտ նորին և պապական դանձարանին: Պաշտօնեայք պալատանն վստահացեալք ի պաշտպանութիւն իշխանութեան որում ծառայելին՝ ոչ ինչ բնաւ փոյթ ունէին զնախանձուէ և զարհամարհանաց աշխարհի, որ հարկատու էր նոցա: Ասէին իմն առակաւոր բանիւ. «Թող ատեսցեն, շատ է զի երկնշիջին», 255):

Ի զուր էին ամենայն իրատք զգուշութեան տուեալք նոցա յարանց իմաստնոց: Անդէն իսկ ի ԺԻ դարուն կանխատես լինէին ոմանք մեծի վտանգին յոր արկանելոց էր զաշխարհ փոփոխելն հռովմեական Եկեղեցւոյ ի պալատ, և զայս գուշակեցին արք նմանեալք Հեռահօբի, Բեռնարգոսի, Յովհաննու Սալիսպուրեցւոյ, Պետրոսի Պլուացւոյ, և գրեթէ ամենայն արք ժամանակին որ ծանօթք են մեզ (254):

Յակոբ Տը Ալիթրի, — որ ապա կարգինալ եղև, — առ ժամանակ մի կացեալ զողով ի պալատան, խոստովանէր (յամին 4246) թէ ո՞ր և իցէ եկեղեցական հոգի հետի է յատնէն յայնմանէ. գործք նորին են քաղաքական խնդիրք, վէճք և գատատանք. իսկ զհոգևորական իրաց և ոչ իսկ բանս ի մէջ առնուն երբէք (255):

Ոչ որ յեպիսկոպոսաց ժամանակին Աննովկենտիոսի Պ, այնչափ անձնանուէր հաւատարիմ էր պապին, որպէս Հոսթերտոս Մեծազրուխն\*) եպիսկոպոս Ալինքոլնի, պատուաւոյն քան զամենեկն և զարմանալի ամենեցուն: Սա ևս Պրիգորեան ոգւով ասէր. «Իբրև եպիսկոպոս՝ զիշխանութիւնս իմ զամենայն ի

(\*) Գրչւիւրէն կրօնիէն, անգղիւրէն կրիթիէս, և լատիներէն Ռոպէրթուս Քոլիէս, աստուածաբան բաւժանօրոյ՝ Ժամանակին և բարեիմ Պատմի, Վիեննեալ յամին 4255:

պապէն ունիմ,», Բայց ապականութիւնն որ հանգոյն մահաբեր ախտահաւակ հոտոյ ելանէր տարածանէր ի պալատանէ անտի ընդ ամենայն մասունս Եկեղեցւոյ, թանձր կեղծաւորութիւնն որ զժողովումն հարկաց ընդ մահու չափ մեղս գրէր, մինչդեռ սեղանաւորք պապին և գործակալք քանդէին զկեղեցիս և զվանորայս չարաչար զօշաքաղութեամբ, և սկսեալ ի Լոնտոնէ՝ հարկս ծանունս դնէին ի վերայ ամենայն եպիսկոպոսացն Անգղիացւոց, — այս ամենայն ասեմ և այլ ինչ բաղում ստիպեաց զնա մերձ ի մահ իւր գրել առ պապն նամակ բանիւք սաստկութեան, յորում յորդորէր զնա յապաշխարութիւն: Անկեալ ի մահի՞ծս մահու՝ զուշակեաց Հոռորտոս՝ թէ ծառայութիւնն երկպտական յորում գտանի Եկեղեցի ի ձեռս պալատանն՝ և ս քան զևս պարտի խտանալ 256):

Փոքր մի անադան քան զայն՝ պապն Նիկողայոս Գ կամեցաւ ամբռնալ ի կարգինալութիւն զընդհանրական մեծաւորն Արտսեր եղբարց զՅովհաննէս Փարմացի, զոր Պիոս Զ յամին 1777 դասեաց ի կարգս երանելեաց: Հրաժարեաց Յովհաննէս ի կատարելոյ զկամս պապին և ասէ. «Հոռովմեական պալատն յայլ գործս պարապի, ի պատերազմունս և ի վաճառաշահութիւնս, իսկ զվերկութենէ հոգւոց փոյթ ինչ ոչ ունի,» Պապն հոգւոց եհան և ասէ. «Մէք այնպէս սովորեալ եմք իւրացդ, զի համարիմք՝ թէ ամենայն զոր ինչ ասեմք և գործեմք՝ արգարև իսկ օգտակար է,» 257):

Ի կիսոյ ժԲ գարուն և այսր բովանդակ աշխարհական և հոգևորական մատենագիրք Եւրոպայ սկսան ևս քան զևս թրչնամութեամբ բերիլ ընդդէմ պապին և պալատանորա: Պատմաբանք, բանաստեղծք և աստուածաբանք յարձակէին սովորաբար ոչ ի վերայ իրաւանց և իշխանութեան պապին, այլ ի վերայ անկման Եկեղեցւոյ, ապականութեան կղերին և սիմոնականութեան հոգևոր արքունեացն, ուր մէն մի շարժումն գրչի, մէն մի աշխատութիւն՝ ոսկւով առնոյր զհատուցումն, ուր գնոց գնէին զշահաւետ պաշտամունս, զթողութիւնս, զվկայականս, զժողովութիւնս մեղաց, զներողութիւնս և զար-

տօնութիւնս, որպէս զնէ որ վաճառս ինչ ի կրպակաւորաց ։  
 Սրբուհին Հիլտեկարա \*) մեծարոյ յոյժ յաչս պապից և կայ-  
 սերաց, անդէն իսկ յամին 1170 մարգարէանայր վասն պապից  
 ասելով . « Հանգոյն կատարի գաղանաց որսան նորա զմեզ իշ-  
 11 խանութեամբն իւրեանց կապելոյ և արձակելոյ . ի ձեռս նո-  
 11 ցա թառամեալ գօսանայ Եկեղեցին ողջոյն ։ Նոցա կամքն են  
 11 նուաճել ընդ ձեռամբ իւրեանց զթագաւորութիւնս աշխար-  
 11 հի, այլ ժողովուրդք յարիցեն ընդդէմ նոցա, և ընդդէմ  
 11 կղերին հարստացելոյ և ազականելոյ, և տարցին զնա յետս  
 11 ի ճանապարհ օրինաւոր իշխանութեան ։ Յածուցեն մար-  
 11 դիկ զմեծութիւն պապից, որք ոչ ունին բնաւ և ոչ զմի ինչ  
 11 հաւատոս ։ Միայն Հոռով և գաւառն աննշան որ շուրջ զՀոռով-  
 11 մաւ՝ թողցի պապիցն, է զի ի պատճառս պատերազմաց, և  
 11 է զի միարան հաւանութեամբ թագաւորութեանց, » (258) ։

Սաստկազոյնս ևս և հազանազոյնս խօսեր զպապէն սրբու-  
 հին Բրիգիտոսա (\*\*), որ եկեաց ի Հոռով՝ երկերիւր ամօք զինի  
 սրբուհոյն Հիլտեկարտի . քանզի ասէր . « Նա, այսինքն է  
 11 պապն, չար քան զարուսեակն է, և դահիճ է ողւոյց հաւա-  
 11 տացելոյ . նա դատապարտ ատնէ զանմեզս, և վաճառ է ըզ-  
 11 հաւատացեալս զարչելի շահավաճառութեամբ, » (259) ։

Սակայն հանգամանք իրացն ի նմին պայմանի մնացին ։  
 Եպիսկոպոսունք և արքայք հարկադրեալ էին քանզի զեկե-  
 ղեցիս և զմենաստանս իւրեանց, որպէս զի կարողացին յա-

(\*) Աբբաուսնի իոստատանի միոյ առ Հոննուսիւս, վախճանեալ  
 յամին 1178, հուլիսիւն է որեւէամբէն իւրով և իւրհրդովան զը-  
 սանքով ։

(\*\*) Իշխանուհի Շուեթաց, որ յետ մահոս ատն իւրոյ զիճեաց  
 վառ իոստանոց, և յետ սակարանացութեանն յերոստատով՝ եկեալ  
 է Հոռով՝ վախճանեցաւ անքին յամին 1175 ։ Համբաւեալ էն յոյժ  
 առ իսկուիկս « Յոյրնութեանն իրեկիցարայի » շար և իսկն սովոր-  
 քոր « սրբուհի Պրիճիկոս » ։

զեցուցանել զղօշարաղութիւն պաշտականացն, և ի զուխ հանել զգառս իւրեանց 240) . և աստի յառաջ եկն կաշառակերութիւն հասարակաց: Հարկ էր այնուհետև ամենեցուն հաստուցանել արծաթ, սկսեալ ի դոնապանէն մինչև ցապան, և ամենեցուն պարգևս ընծայել. ապա թէ ոչ՝ ի կորուստ գնայր դատն. որպէս յայտ է այս ի հաշուոց երեսփոխանաց հասարակութեան Պրիւժ քաղաքի 241) : Եւ չէր ինչ բաւական որ ինչ տուեալ լինէր միանգամ. հարկ էր վճարել և ի բովանդակ ընթացս դատին: Առաւելապէս անյազուրդք էին կարգիտեալքն և ազգականք պապին:

Իրաւագէտն Պետրոս Տիւպուա ասէր. «Իժրաղղութիւն իմն է քրիստոնէութեան ողջոյն, զի կարգինալքն, որոց յպաշտամունք ոչ յոյժ շահարեքք են, ձեռն արկանն զոգցես ի յափշտակութիւնս. և յաղագս այսորիկ չքաւորքն չկարէին ոչ ի ձեռս բերել զպաշտօն ինչ, և ոչ հաստատուն կալ ի նմին: Եպիսկոպոսունք ամբանային ի պաշտօն՝ արգէն ծանրաբեռնեալք պարտեօք. և այս վիճակ ի Թ՛Մ զարու՝ ի մտանել սովորութեան որդեկանաց՝ ևս քան զևս ծանրացաւ:

## 2.

Դատողութիւնք ժամանակակից մարդկանն: — Տիւռան Մենտացի: — Ուրբանոս Է: — Նիկողայոս Թռէժ: — Տա՛նթէ եւ Բոնաւենտուրա: — Անլուարոյ Փէլա՛յոյ: — Թոստինոս Թրիոնֆոյ: — Պետրարբա եւ Մարսիլի: — Պարթոլոյ:

Ի ԹԼ զարուն փոյթ և ջան սաստիկ եղև ի հռովմէական Եկեղեցւոջ ի զերծանել ի վաճառմանէ պաշտամանց, որ լինէր յապարանս իշխանաւորաց. բայց յայնմհետէ սիմոնականութիւնն տիրապետեաց ի վերայ բովանդակ Եկեղեցւոյն: Ճկոյթ մի հռովմէական պալատան առաւել ծանրանայր ի վերայ Եկեղեցւոյ՝ քան զամբողջ ձեռն իշխանին: Աչ որ էր որ գտանէր

զՏնարս փրկութեան: Աչ զք միտ զնէր տրտնջանաց և կշտամբութեանց: Ժողովք առանց պապին կամ նախարկաց նորսանցօրք էին, և Հարկադրեալ էին ի լռել. ամենայն այր եկեղեցական ծածկէր զտգեղութիւն զնացից իւրոց օրինակաւ Եկեղեցւոյն Հոռովայ, Ամենայն ուրեք լսելի լինէին բանք այսպիսիք՝ թէ «Մէք ի մանկութենէ ուսեալ եմք և խրատեալք՝ զի հոռովականն Եկեղեցի է ուսուցիչ և օրինակ ամենայն եկեղեցեաց. զոր ինչ գովէ նա և առնէ՝ զնոյն և մէք պարտմք գովել, և հետևողք նմին լինել: Եւ ընդէր իսկ ոչ ունիցիմք առնել զհօգևորական իրան և զխորհուրդս Եկեղեցւոյ աղբիւրս հարստութեան, մինչդեռ մէք ինքնին թանկագնոց ստացեալ եմք առ այս ի Հոռով իրաւունս. մանաւանդ զի այսու ճանապարհաւ և եմ կարող եմք հատուցանել զպարտս մեր զորս ունիմք անդանօր», :

Յայտնուողուն Տիւսան Գնտացի յակն արկանէ զԵկեղեցի իւրոց ժամանակին, որպիսի էրն յՊատլիս և ի հարաւային Գաղղիս (յամին իրբ 1510) բստ ամենայն մասանցն. և գտանէ զի զիսաւոր պատճառք չարեացն և ապականութեան է պալատն պապին: «Նա զամենայն ինչ յինքն գրաւեալ է,»,  
 «ասէ, և ի վտանգի կայ կորուսանելոյ զամենայն: Անգաղար»,  
 «առաքէ ի վիճակս վիճակս զեկեղեցականս ապականեալս բարութ, զճոխացեալս յիւրմէ շահաւետ արտօնութեամբք, և»,  
 «հչու եպիսկոպոսունք՝ առ ի չգոյէ արանց արժանաւորաց կա»,  
 «ոռովարութեան Եկեղեցւոյ՝ պարտին ընդունել զնոսա: Ան»,  
 «ղեքեալ առնու նա յեպիսկոպոսացն ահազին գումարս զրա»,  
 «մոց, զորս ապա պապն և կարգինալք բաժաննն յիւրեանս»,  
 «այսու սիմնականութեամբ կորնչի Եկեղեցին համօրէն, և»,  
 «ցորչափ կացցէ մնացէ ի պալատան այս պայման իրաց, ըն»,  
 «դունայն են ամենայն հնարք փրկելոյ զԵկեղեցիս», 242):  
 Յետ այսորիկ ի մէջ բերէ նա զկարևոր բարեկարգութիւնս ինչ, առանց որոց հարկ է Եկեղեցւոյ ևս քան զևս ընկղմել յապականութիւն. բայց քանզի ամենայն բարեկարգութիւնքն այնօրիկ հակառակք են պապական դրութեանն, ուստի և մատեան

նորա, որ ըստ ցանկութեան պապին լինելոց էր յիշատակարան իմն ի ժողովին Վեննայի, ոչ արար ինչ օգուտ երևելի:

Մի ոմն ի պապիցն Գաղղիացւոց, այն է Ուրբանոս Ե, որ տակաւին ևս ունէր ինչ ինչ գովելի տենչանս, խոստովանէր զաղէտս և զխանգարումն կարդաց Եկեղեցւոյ, և կարծէր՝ թէ պատճառք իրացն էին զաղարեկն ժողովոց 245): Բայց ոչ տեսանէր նա, կամ զէթ ոչ ասէր, զի նախորդքն իւր արարին զգումարումն ժողովոց մասամբ անկարելի, և մասամբ՝ անպտուղ: Աստուած արանք ժամանակին կամելով ի վար արկանել զեղանակ խօսից նախնի մարգարէիցն նկարագրողաց զպականութիւն ազդին Երրայեցւոց, — նմանեցուցանէին զԵկեղեցին Հռովմայ պոռնկի, զոր խոյտառակեցէ Տէր առաջի ամենայն աշխարհի: Աստ պսամ բարբառէր Նիկողայոս Օռէմ եպիսկոպոս Լիլիէօ քաղաքի ի ճառին զոր խօսեցաւ յԱւենիոն (յամին 1565) յանգիման Ուրբանոսի Ե և կարդինալացրն 244): Ապա ուրեմն մեծ էին արդարև չարիքն, եթէ նորին իսկ եպիսկոպոսունքն և կարդինալք ոչինչ ընդհատ յաղանդաւորաց ժամանակին համարձակէին պղպէս նկարագրել զԵկեղեցի և զպապական աթոռն, և յայն յանգուցանէին զբանքս իւրեանց՝ թէ իրաւունս ունին բաժանելոյ զանձինս յայնպիսոյ ապականեալ ընկերութենէ, և ոչ միայն եպիսկոպոսացն էր այս կարծիք, այլ և ամենայն դասուց մարդկան: Փոխադրութեամբ պապական պալատանն յԱւենիոն, և անցանելով պապական իշխանութեան ի ձեռս Գաղղիացւոց, որք և զմեծագոյն մասն կարդինալաց ի Գաղղիացւոց անտի նշանակէին, չեղև ինչ էական փոխոխութիւն ի գործս Եկեղեցւոյ: Բտալացիքն եղնն այնուհետև նոյնպէս սրամիտք՝ որպէս և այլքն՝ ի խանգարել զԵկեղեցին. քանզի պապութիւնն հանդերձ առատահոս աղբերօքն հարստութեան զերծանէր կրանէր ի ձեռաց իւրեանց. քաջ ի միտ առնուին նօքա՝ թի քանի՞ զրկանք էին այն Բտալիոյ, կամ լաւ ևս ասել՝ Լատինական տօճմին. քանզի Բտալական ազգային զբացումն չև ևս զարթուցեալ էր ի ժամանակին: Բնակիչքն Տուսկիոյ և եկեղեցական նահանգին

Համարէին զանձինս իւրեանց հարազատ սերունդս նախնի Հոովմայեցւոց, ուստի և կոչեցեալս ի տիրապետել աշխարհի ձեռնն պապութեան, որ որպէս թէ սեպհական իմն էր նոցա: Եւ ահա վասն այսորիկ յորդոր լինէր Տանթէ ի թուղթս իւր՝ մի՛ ևս հանդուրժել զի ամօթն և նախատինք շահատէր Քասկոնեանց (Սղեմայ Ե և Յովհաննու ԻԲ) սեպհականեցէ ինքեան զվառս և զպատիւ Լատինացւոց 245): Այլ և այր այնպիսի որպիսի որ էր Բոնաւենտուրա \*) մեծարեալն ի պապից անբան պատուով, որ և իրբև կարգինալ և ընդհանրական մեծաւոր կարգին իւրոյ կապեալ էր ընդ Հոովմայ իրբու ամբապինդ կապանօք, — նա ևս յիւրումն մեկնութեան գրոցն Յայտնութեան ցոցցանէր՝ թէ Հոովմ է պոռնիկն այն որ զինուով պոռնկութեան իւրոյ արեցոյց զիշխանս և զժողովուրդս.

« Քանզի ի Հոովմ, ասէր նա, զնին և վաճառին պաշտամունք  
 ,, Եկեղեցւոյ. անդր հասարին իշխանք և պետք Եկեղեցւոյ,  
 ,, անարգելով զաւրն, ծառայելով լըբութեան, յարելով ի  
 ,, սատանայ և յափշտակելով զգանձն Քրիստոսի, ,, Եւ յառաջ տարեալ զբանս իւր ասէ. « Եշխանաւորք Եկեղեցւոյ  
 ,, ապականեալք՝ ապականեցին և զկղերն ակտիք իւրեանց,  
 ,, և կղերն իւրովն չար օրինակաւ, ընչարդցութեամբ և ան-  
 ,, հոգութեամբ թունաւորեաց և թշուառացոյց զամենայն ազ-  
 ,, զրս քրիստոնէից, ,, 246) :

Եթէ զայս օրինակ խօսէր զհոովմեական պալատանէն ընդհանրական զլուխ կարգին, յայտ իսկ է զի արք առաւել խրատակրօնք (զոր օրինակ հոգեորականքն) սաստկազոյն ևս բանիք խօսէին, անուանելով զպալատն Եկեղեցի Տարձաւոր՝ իսպառ ապականեալ. բայց միանգամայն ակն ունէին յուսով՝

---

(\*) Արժանաւոր Փրանկիսիան. անուանեալ է Լապնացւոց « Սքովթեւան շարաղետ » սակս իւրոյ հոգեւոր քրիստոնէացն, ամբողջութեւն է իւրբնաւուրիւն յովն 1253, և շինեալութեւն է Լապրան յառաջ Ժողովոյն քրիստոնէոյ անդ յովն 1274 :

Թէ մերձ է նորագոյթիւն և բարեկարգութիւն Ակեղեցւոյ ի ձեռն Անգղիկոսի պապին, որում սպասեալ մնային անհամբարութեամբ, Թէ Հանդերձեալ է գալ անպատճառ:

Եստի ևս յայտ է՝ Թէ ոչ էր այն կուրուցիւն իմն Արպելանցն կուսակցութեան \*): Ինքն իսկ Տանթէ տեսներ ի պապն գկատարումն մարգարէութեան գրոցն Յայտնութեան զպօսնկէն բազմելոյ ի վերայ եօթն բլրոց, որոց արբեալ մարգկային արեամբ՝ Հրապուրէ զԹագաւորս և զԺողովուրդս: Ընթեոնցր Տանթէ զՔօնաւենտուրա, և վասն այնորիկ զներ ի բերան նորա Արտայսթեան \*\*): Իւրում զճառ ամբաստանական ընդդէմ ընչասիրութեան Հուլմէական պալատանն 247): Բաց յայնմանէ տեսներ նա, որպէս և այլքն, զայս ևս Հանդամանս՝ զի պապութիւնն էր թշնամական զօրութիւնն այն՝ որ տկարացոյց զիշխանութիւն կայսերաց, սասանեցոյց գայն և տարաւ ի կորուստ. ապա ուրեմն, ասէր, պապութիւնն պատրաստեաց և փութացոյց զերևումն նեոինն, զոր մինչև ցայնժամ արգելեալ ունէր կայսերացն իշխանութիւն:

Ըստ իմաստիցն Տանթէի խօսէր զպապութենէ և Ալուանոյ Փէլայոյ (կամ Պեղաղիոս) եպիսկոպոս և պաշտօնեաց պապական պալատանն, որ բաղմամեայ փորձառութեամբն և ման-

(\*) Աստուցութեան Աստուցութեան և Ալեքսանդրի ի ԺԲ, ԺԳ և ԺԴ որոս յերկուս պատմութեալ զիտուլեան՝ անհնարին զնա բարձեցն ուղեարհին այնիկ: Աստուցութեան և աստուլ զիտուցերցն Գերմանիոյ աստեին զիտուլ, և Ալեքսանդրի զպապից:

(\*\*) Յայտ էսկ է զի բերանուլ բանաստեղծն Իրաւաբան Տանթէ Ալեքսանդրի (ձեռեալ է Փլորենտին յարին 1263, և զբեմանեալ է շատեմնա յարին 1321) Գէ էր է զերմաներս՝ Իստուցաց Աստուցութեանցն: Ալեքսանդրու բերնուած նորա՝ «Աստուածային Իտալիերսութեան», անասնեալ՝ Բաժանի յերկու բերս, որ են Գեղեթ, Բարսան և Արտայսթեան:

բազատում բանիւք ցուցանէ՝ թէ ի վերայ պապութեան կատարեալ է մարգարէութիւնն Յայտնութեան զգոտնկէն (248)։ Եւ սակայն մատեան նորա ողջոյն յայն բերի, զի ցուցցէ թէ պապութիւնն իշխանութիւն է յաստուածուստ կարգեալ, և կառավարէ զաշխարհ և զԵկեղեցի անասման ինքնիշխանութեամբ։ Մեծապէս արժանի է խելամտութեան, զի այրս այս որ ըստ ամենայն մասանցն ի քննին առնու զԵկեղեցի, և նկարագրէ զայն ամենայն ճշգրտութեամբ, այնու ամենայնիւ ստիպի խոստովանել՝ թէ ինքն իսկ աթոռն պապական, և միայն աթոռն այն է որ ապականեաց զողջոյն իսկ զԵկեղեցի թոռնիւ ամբարտաւանութեան, իշխանսիրութեան և շահասիրութեան։ Թէ կղերն ի պատճառս արտաւորութեանց իւրոց ատելի ըսալ է ամենայն աշխարհականաց, և թէ պատճառ ապականութեան նորին ըստ մեծի մասին է պապական պաշտոն։ Եւ այս ամենայն յայտնապէս տեսանի յամենայն իսկ էջս զրոց նորա։ Ըսէ նաև զայս ևս՝ թէ չար օրինակն տուեալ ի պապից գտանէ Հետևողս իւր ամենայն ուրեք. և եկեղեցական իշխանաւորքն ասէին. պապն այսպէս առնէ. էր չկարիցեմք և մեր զնոյն առնել. և այսպէս Եկեղեցին համօրէն յարիւն համակեալ էր, և առհասարակ զամենեսեան՝ զզուխն և զանդամս՝ պատեալ էր խաւար աղջամղջին (249)։ Երդ եթէ սպասիցէ ընթերցողն՝ թէ Փէլյայոյ յայն յանգուսցէ զըսնս իւր՝ թէ հարկ է վերանորոգել յԵկեղեցւոջ զվաղեմին բարեկարգութիւն և չափ զնել անասման ինքնիշխանութեան պապից, մեծապէս սխալ է. քանզի Փէլյայոյ կայ և մնայ յայն կարծիս՝ թէ պապն փոխանորդ է Աստուծոյ ի վերայ երկրի. ուստի որպէս ոչ որ յանգնեսցի երբէք սահման զնել ամենակարող զօրութեանն Աստուծոյ, նոյնպէս ևս ոչ որ իշխէ զմտաւ անգամ՝ ածել՝ զնել սահման ինչ իշխանութեան պապին։

Ժամանակակիցն Փէլյայոյի Օգոստինոս Թրիոնֆոյ անքոնացի միանձն Օգոստինեան, որ հրամանաւն Յովհաննու ԻԲ շարադրեաց զմատեան իւր Բեռնարդինոս անուանեալ, հնարեաց զնոր իմն թագաւորութիւն, որոյ տէրութիւնն ևս անկ է

պապին: Իբր զի յառաջն ասէին՝ թէ պապն ունի իշխանութիւն յերկինս և յերկրի, յերկինս վասն այնորիկ՝ զի ըստ իւրում դատողութեանն կարող է բանալ և փակել զգրունս արքայութեան. իսկ ի վախճան ԹՊ դարուն աստուածարանք պալատանն ընծայեցին իշխանապետին Հռովմայ զտէրութիւն ի վերայ նորոյ թագաւորութեան, այսինքն է ի վերայ Գրգուսի: Թրիոնֆոյ ապացուցանէր՝ զի պապն իբրև բաշխող արդեանցն Քրիստոսի ի ձեռն ներողութեանց՝ կարող է, թէ կամիցի, միով ակնարկութեամբ ազատել ի քաւարանէ զամենայն Հոգիս միանգամայն առհասարակ՝ որք անդ իցնն, միայն այսու պայմանաւ՝ զի գտանիցին անձինք որք կատարիցն զամենայն զպատուէրս տուեալս առ այս ի պապէն. և սակայն ինքըն չտայր խորհուրդ պապին առնել զայն 250): Միայն նոքա՝ զորս Աստուած առանձինն զթութեամբ իւրով զետեղեաց ի քաւարանի ի խուռն բազմութենէ անտի անկունք մեաւոց, ոչ անկանին ընդ դատաստանաւ պապին: Ըստ կարծեացն Թրիոնֆոյի՝ իշխանութիւն պապին այնպիսի իմն ունի անսահման մեծութիւն, զի և ոչ որ ի պապից կարող է զիտել՝ թէ զինչ ինչ կարէ առնել կարողութեամբն իւրով 251):

Ըստ օրինակին Բոնաւենտուրայի, Տանթէի, Փէլայցիի, զրէր և Պետրաքքա փոքր ինչ զկնի (յամին 1550). որ ոչ սակաւ ժամանակս ի մօտոյ տեսեալ էր զպալատն պապական: Նորա ևս կարծիք այս են՝ թէ պալատն է կինն այն Յայանութեան՝ արբեալ յարենէ մարդկան, մոլորեցուցիչ քրիստոնէից և ժանտախտ ազգի մարդկան: Այնպէս սակալի են նկարագրութիւնքն 252) զորս առնէ նա զպալատանէն, զի մարթ էր առաւելազանցս անուանել զնոսին՝ եթէ ոչ զնոյն Հաստատէին և ամենայն ժամանակակիցք նորա: Բարեկամն և աշակերտ Պետրաքքայի Լուիճի Մարտիլի՝ Օգոստինեան կրօնաւոր Փլորենտացի 253), նոյնպէս ուժգնագոյնս յարձակի ի վերայ արքունեացն Հռովմայ՝ որպէս և վարժապետն իւր. և ի մէջ այլոցն բանից ասէ. «Հռովմ տիրապետէ այժմ ոչ եթէ ի ձեռն կեղծաւորութեան, որովհետև պարծանս անձին Համարի զախ-

տաւորութիւնս իւր, — այլ սպառնալեօք բանադրանաց և նդո-  
վից ։ ։

Ընդ դարս չորս ամբարձան բարձրացան յամենայն կողմանց  
և յամենայն լեզուս բիւրաւոր ամբաստանութիւնք ընդդէմ  
պապական տիրապետութեան, բռնակալութեան, ընչաբաղցու-  
թեան և ապականելոյ զօրրութիւնան . և այն է զարմանալի՝  
զի ոչ որ իշխեաց ջրիկ զամբաստանութիւնան զայնտօրիկ, կամ  
ասել՝ թէ չարախօսութիւնք իցեն և չափազանցութիւնք : Ար-  
բանեակք պալատանն շատ համարէին տալ զբացատրութիւն  
այսպիսի, թէ առջինն յամոռս չկարէ անկանել ընդ զա-  
տաստանաւ ուրուք . ոչ որ իշխէ ասել ցպապ որ անկեալ յա-  
թոռոյ և ի վառաց՝ թէ ընդէր քանդեա զՆիկիոյցի : Հարկ է  
տանել ամենայնի լուութեամբ և համբերութեամբ, խոնարհու-  
թեամբ և հնազանդութեամբ 235) :

Եւելի ինչ քան զայս չասէին նորա բնաւ : Միայն երբեմն  
ի բերանոյ աշխարհական իրաւագիտաց ամուսնացելոց, որոց  
արգասաւոր պաշտամունքն ոչ թուէին ըստ բաւականին շա-  
հաւտք, լսելի լինէր բան մի զժգոհութեան զկղերէն՝ որ սեպ-  
հականէր անձին իւրում զամենայն բարիս աշխարհիս այտօրիկ :  
Էր երբէք զի զպատճառս կեղծելոյն իւրեանց և լուութեանն  
յայտ առնէին այսու բանիւք Պարթոլոլի \*). « Եթէ կեամք  
մեք ի սահմանի հռոմէական Եկեղեցւոյ, հաստատեմք այսու  
զվաւերականութիւն պարզատրութեան Կոստանդիանոսի ։ ։

Զօրութիւն պապական իշխանութեան բոլորովին հանգու-  
ցեալ էր ի վերայ կարծեաց մարդկան : Յորչափ ժամանակա-  
կիցքն եղեալ իցին ի մտի՝ թէ օրինաւոր է այն, և այլ ինչ  
ոչ գիտեն՝ եթէ ոչ զայս՝ թէ կիրաւութիւն նորին արդարեւ  
հաստատի վերագոյն կամօքն Աստուծոյ, — մինչև ցայնժամ հաս-  
տատուն կացցէ մնացէ իշխանութիւնն պապական : Ի ԹՊ և  
ի ԹՎ դարս ոչ որ յՆւրոպա ունէր զպարտուպատշաճն տն-

(\*) Հրատարակուած էր ի Երուսաղէմ Վերահանու յօրին 1536 :

զեկուծիւն, այլ ոչ զզգացումն ստոյգ զրուծեան գործոյն. ոչ որ զիտէր զանազանել զնախնի վարդապետութիւնն յազագս նախազաշուծեան՝ ի սոսկալիծխար միապետութենէ անտի՝ որ յայնժամ յանդիման լինէր կուրացեալ աչաց մարդկան իրրև զաստուածային ինչ կարգաորութիւն: Զմտաւ ածելն անգամ՝ թէ այս ամենայն պտուղ էր և զանազան հանգամանաց, ևս և ստայօղ զրուածոց և խարդախանաց, խորշելի իմն թուէր իրրև զհայհոյութիւն: Ատելով ատէին մարդիկն զյեղանակն կիրառութեան այնր իշխանութեան, բայց ոչ մերձենային և ոչ յարձակէին ի վիճակ իշխանութեանն յորում գտանէին պապք, վասն որոյ և հնազանդութիւն նոցա յօժարակամ էր մանաւանդ՝ քան թէ բռնազբօսեալ ինչ:

Միայն ի սկզբանէ ժեզարուն, և յետ բաժանման Եկեղեցւոյն, համեմատութիւն զրուծեան և իրաւանց ժամանակին ընդ նախնի ժողովական սահմանադրութեանց սկսաւ տակաւ բանալ զաչս ոմանց, որպիսիք էին Տ'Այլի, Գերսան, Ծապարէլլա \*) և այլք: Նորա և եթ տեսանէին՝ զի յայնժամ ամի կայր ահագին փոփոխութիւն և խանգարումն. բայց թէ զիւրոյ՝ անյայտ մնայր ի նոցանէ:

(\*) Փրանկեթոս Ծապարէլլա՝ Եղեկոցոս և կարգինաւ Իրաւացի վարժանեալ յաթին 1417, հարկեալ է իւրաքն «Մեկնութեամբ խանապոս», և ժրանելիքն է կոտորանքեան ժողովն:

Է.

Կրօնարձնութիւն : — Հերետիկոսութեան յանցանք ,  
 և պատիժ . — Կարծիր գաղաղականաց զկրօնարձնու-  
 թենէ : — Յրէնք կրօնարձնութեան : — Բողոքմունք :  
 — Իննովկենտիս Գ , և խտտութիւնք նորա : — Կրօ-  
 նարձնութիւնն ի Գաղղիա և ի Գերմանիա : — Նկա-  
 րագիր կրօնարձնութեան ի Ժ.Գ և Ժ.Գ դարս : —  
 Պաշտօն քաղաքական իշխանաւորաց : — Գէպք կրտ-  
 սեր եղբարց : — Իննովկենտիս Գ և Էծծէլինոյ :

Յաւելաւ ի սոյն և մեծաղօր կարգաւորութիւն մի, որոյ  
 կէտ նպատակին էր անպարտելի առնել զպապականն զրու-  
 թիւն, զժուարացուցանել զիմացուած փտութեանն Հիմանց  
 նորին, և զննթաղութիւնն զանօխալութենէ պապին տարա-  
 ծել յընդհանուր, — և այն էր կրօնարձնութիւնն \*) :

(\*) Ատեանն կրօնարձնութեան, լատին բառիւ « ինտանդիցից », և  
 Գաղղիաբն « էնտիդիցից », որ և կոչեցաւ յետոյ ի կաթոլիկաց « Ատեան  
 սրբոյ Պաշտաման ( Ինտիդիցից սա՛նտիկ շփփի՛լիկ ) », թարգմանեալ է  
 հաստատեման Հայոց անյարժօր բառիւ « սրբաբնութեան », հատարէ  
 հնարեալ յիննովկենտիստի Գ յարին 1198 է իտալեան զարարածաւծն  
 հելլոսաթոյն Աղբիբեանց է Գաղղիա : Ատաղին ընդհանրութեան կրօն-  
 անիւն կարգեցաւ յարին 1203 Սպանիացի կրօնաւորն Գաթիկէսոս կոսա-  
 ւան, և է 1255 Գրիգոր Թ պապ յանդեանց զկրօնարձնութեանն թ-  
 լորդին է յեւս Գաթիկէսան կրօնաւորաց, որ և հասարակեցին զայն  
 նախ է Գաղղիա, և ապա յիտալիա և յայլ կողման Եւրոպոյ, թաց  
 յԱնգլիոյ : Քան յայլ ասեալն արեւելս՝ խորագոյն եղև կրօնարձնու-  
 թիւնն է Սպանիա, սոր սկսաւ յարին 1252, միայն յայնմ աշխարհէ  
 ո՛րէն սա՛նտիկ Իտն զնիկի միլիան պարտահանեցան է կրօնարձնութեանն  
 ստարանեց, անստանալութեամբ, կորսաւսմբ ընկեց և այրեցաւսմբ է  
 հար, անստանալ հրատանաւ անգորոյն առնն թարգմարոյն : Ա-

Աշխատութեամբն Գրատիանտի, որ յայսմ մասին Հետևող էր Իւսնի Շարթրեցւոյ \*), որպէս և օրէնսդրութեամբ և անխոնջ զործունէութեամբ պապից և նուիրակաց նոցա (սկըսեալ յամէն 1183) բոլորովն և ընդ երկար ժամանակ ի բաց թողաւ Հայեցուածն նախնի Եկեղեցւոյ ի վերայ պլակրօնից .

(\*) Որ և Գաղղիաբէն «Սէնթ — Իշ... եղեւոյցս Շարթրէ, ժողովածուէալ յամէն 1143 : Գրուած է նորա պատմական և իրատարեւրական և ոչ սոխաւ հեղուրդական և էմադնոց :

ժողովական էր քահանայ հարցմանս առեւել ամբաստանելոցն յանդէման քաղաքացոց, և պէս պէս քանջարանէր, որոց ճշեալորէն էին շատն և ըստ և հասր, չարչարէին զնոսս զի խոստովանեացին զհալորութիւն իւրեանց : Նախնիս Ա. էքար) է Սպանիոյ իբրծնութենութիւն յամէն 1808 . արեւոյն փերդնանք է քարշիւալ հասարակաց շայն . քոյց յամէն 1820 քաղաքով էն էքար) խորհրդարանն Սպանիացոց : Ահաքին իտարածաւ արար իբրծնութենանն նաև յԱմերիկոյ, է Մանիլան ի զղէս, է Կոս և է Լնդիլո, և արդ արհաւիրս է վերայ սօնայն քրիստոնէից, մնալ քարշիւալ յամէնայն րեւելաց, և հոսով սորեմն է ճառագաց րեւորութեան պապին, և է վերջէ յայսմ էսի 1870 սօն է Լոսով քաղաքէ՝ անխոնջ Պիսսէ Թ. յաշխարհական լազաւորութենէն, և մեծալովն Լոսովոյ ընդ րեւորութեան Իրաւիոյ : — Ոչ իտրեւիտ ասարարել զայս համառօտ յիշարտականութեան սարափելի քահանութեան պապիցն Լոսովոյ առանց է մեջ բերելոյ զքանն միոյ սորոստ է մեխիլոն և է մելրաւիտ ասարածաբանիցն պապականաց, նա ինքն է Լոյրն Մալիօոյ իբրծնասր փարլիսնալոյն, որ յամէն 1676 հրատարակէր է Պատրաստ քաղաքէ Իրաւիոյ զներքոյ ասարածընդրութիւտ արեւելն այնորիկ անիլիտութեան և անիլիտութեան . քանզի սակ . « Կրծնութենութեանն ըստ ինքնան հիմնեցաւ յերկինս : Ասարած է որ իտարակաց զպաշտմն առաջին իբրծնութենէն յորժամ շանլահարեաց զպատմութեալ հրեւրական . զնայն պաշտմն է ճարձ էր և է պատրաստ

յայնմ՝ չնոտէ ամենայն ուրեք տիրապետեաց այս կանոն՝ թէ որ և իցէ խոտորումն ի վարդապետութենէ Նկեղեցւոյ, որ և իցէ բողոք ընդդէմ՝ եկեղեցական սահմանադրութեան՝ պարտի կրեղ զպատիժ մահու, և այն խոտորոյն եղանակաւ, այս ինքն այրեցմամբ ի հուր :

Օրէնք կայսերացն Հռովմայեցւոց զանազանութիւն անեկին ի մէջ հերետիկոսութեանց, և զայնոսիկ միայն ի նոցանէ արկանեկին ընդ չարաչար պատժովք՝ որ թուեկին վնասակարք յոյժ բարուց մտրկան. բայց յայնմ ժամանակի, յաւուրցն Լուկիոսի Գ (1484) կանոնն այն ի բաց թողաւ : Նթէ ուրանայր որ ի հաւատոց, կամ թէ միայն մեղանչէր ի խնդիր ինչ մասնաւոր կամ երկրորդական, ընդ մի համարեկին երկոքեան. զերկոսին ևս հերետիկոսութեան կոչեկին, և համարեկին յանցանս արժանի մահապարտութեան : Նդկիկի Վալտէացիքն Պաղլիոյ, որք ոչ կամեկին թող տալ՝ զի բարձցին ի նոցանէ իրաւունք քարոզութեան, որք և եթէ հեղութեամբ որ զնայր ընդ նոսա՝ ոչ արդեօք թշնամանային ընդ Նկեղեցւոյ, եզան ընդ մի համար ընդ Վաթարոսացն, որք ահագին վհաւ անջատեալ էին յազգապիսոսաց : Իննովկենտիս Գ յայտ արար՝ թէ հերետիկոս է՝ մահու արժանի՝ որ որ չառնուցու յանձն երզնու, և համարիցի թէ երզումն արգելեալ ինչ է 255) : Նոյն պապ պատուիրեաց

հասելն զԱբամ և զԿային, և զմարդիկ զբնիկեալս, և խոտանելու զլեզուս առ աշտարակս Բաբելոնի : Մովսէս խորարեաց զնոյն պաշտոնն ի դեմաց Ասորսածոյ յորժամ էր պատիժս չբեկց յանապատի մեք զմահ : Ղնոր յերկնից, զյն ինչն և զանորսոսոյ խորոսոր : Յեօ այնորիկ յանկեաց Ասորսած զպաշտոն զայն արեոյն Պեդրոսի գոխանորդի իբրոս ի միջ ի մերոս, և նա ի գործ էարկ զայն՝ մահոս մեռացանելու զԱնանիա և զՍաղիբա : և պապն յաջորդոտ արեոյն Պեդրոսի գոխարեցին զնոյն պաշտոն առ ստարքն Ղոմեկնիս և առ իբնասարս իարքի նորս : Աբարաւն իսկ արեոյն Կան թաղոս արժանի բան, և նախարդին և մեղակոսութեան :

Հերետիկոս համարել զամենայն որ որ ի կենցաղոյս իրս խոտորիցի իւր ի սովորական գնացից այլոց ի մարդկանէ :

Ասնն թէ միայն պապքն էին որ սկիզբն արարին նորոցս այսոցիկ կանոնաց, և յառաջ վարեցին զգործադրութիւն նոցին, և մատենագիրք ժամանակին ևս ոչ սակաւ ձեռնառ և ղնն իրացն : Անազան ուրեմն յորժամ յիղանակ գործողութեան կրօնաքննութեանն սահմանեցաւ, և ընդ ամենայն տեղիս սկըտաւ ղնիլ ի գործ, զպրոցական մատենագիրք սկսան քննել ըզհիմունն նորին, և զուն գործեցին արդարացուցանել զայն 256) : Ի նախնումն Եկեղեցւոջ զայր եպիսկոպոս որ ամբաստանեալ լինէր՝ թէ մահացուցեալ իցէ զոր ի պատճառս Հերետիկոսութեան նորա, ի բաց վարէին ի ժողովոյ հաւատացեղոց. որպէս ղէպ եղև այս ընդ եպիսկոպոսունն Բղատիոս և Իտատիոս, զորս արկին ընդ բանադրանօք սուրբքն Մարտինոս և Ամբրոսիոս : Իսկ յայնժամ ինքեանք իսկ պապքն նեղէին և ստիպէին զեպիսկոպոսունս և զքահանայս դատապարտել զայլակրօնն ի տանջանս փորձոյ, զբաւել զտաացուածն, արկանել ի բանտ և սպանանել զնոսա, և ապա սպանալօք բանադրանաց բրտնագատել զքաղաքական դատաւորս տալ կատարումն վճռոյ իւրեանց : Յամէն 1200 ցամն 1500 շարայարեալ ձկն պապական հրովարտակք մի քանի զմի սաստկապահանջք և կատաղիք ի քննել զկրօնս Հերետիկոսաց, և զամենայն որ ինչանկ իցէ Հերետիկոսութեան : Եւ այն ամենայն է իբրու օրէնսդրութիւն միոյ և եթ առն. ղի իւրաքանչիւր որ ի պապից հաստատէր զհրամանս նախորդացն իւրոց, և ի վերայ հիման նոցին նորանորս հնարէր : Յայնժամ ամենայն ինչ առիթ և միջոց էր հասանելոյ ի մի նպատակ, այս ինքն է ի ջնջել զոր և իցէ ուրացութիւն կամ խոտորումն ի հաւատոց : Յետ սակաւուց յայն աստիճան հասին՝ զի եղաւ և այսպիսի իմն կանոն, զի առաջի նորոյ այնր ատենի նաև խորհուրդ մտաց ոչ բնաւ արտայայտեալ արտաքին նշանաւ՝ անկանէր ընդ պատժով պատուհասի : Մեծազօր զօրութիւն պապից, և մոլարն կարծիք՝ թէ նորա յամենայն խնդիրս աւետարանական բարոյաւ

կանին անխալք իցեն՝ զայն արար, զի աշխարհ ամենայն լը-  
 ութեցաւ և առանց բնաւ հակառակելոյ թոյլ ետ զնել ի վն-  
 րայ իւր զամբողջ մատեան օրինաց կրօնաբնութեան, որ ընդ-  
 զէմ՝ կանէր պարզազունիցն անգամ ի կանոնաց արդարութեան  
 և մարդասիրութեան, և ի նախնի Եկեղեցւոջ անշուշտ ոչ էր  
 հնար նմին մուտ գտանել՝ եթէ ոչ զարշիլի և զզուելի երևելով  
 յաչս ամենեցուն։ Անդէն իսկ ի ԺՆ դարու և ի սկզբան երկո-  
 տասաներորդին բազումք բողոքեցին ընդդէմ սպանութեան հերե-  
 տիկոսաց 257)։ Ապիսկոպոսն Լիէժի Բատոս, Գլղերտոս, Հու-  
 պերտոս և Բուներդոս յուշ առնէին՝ թէ Քրիստոս բացուստ  
 ի բաց արգելեալ է զգործ այնպիսի զոր պապքն հրամայէին,  
 և թէ այնու եղանակաւ կեղծաւորս և եթ գործէին զմարդիկ,  
 և հաստատէին և զրգոէին զնոսա յատկութիւն և ի զզուումն  
 ընդդէմ արիւննուշտ և կատաղի հալածանաց՝ զոր առնէր Ե-  
 կեղեցի և եկեղեցականքն։

Արդապետութիւն անխալութեան պապին, զոր ջանա-  
 յին որպէս զխարդ և իցէ անուցանել և բարձրացուցանել, քաջ  
 իսկ յայտ առնէ՝ թէ ի բազմութիւ շարս պապիցն, սխեալ ի  
 Լուկիոսէ Գ, ոչ որ երբէք փոյթ կալաւ զարման առնել ի-  
 բացն։ Արք հեղաբարոյք և հանդարտք, որպիսիք ոմանք էին  
 Ռնորիոս Գ, Գրիգոր Ժ, Կելեստինոս Ե, չափաւորէին զխստու-  
 թիւն կանոնաց նախորդացն իւրեանց, կարճէին զչափազանց  
 հաճոյս ինքնիշխանութեանն՝ զոր պապքն տային ի ձեռս մո-  
 լելիքուն և ընչաքողց կրօնաբնէաց։ Յաճախէին գանդատանք և  
 բողոքմունք ընդդէմ կրօնաբնէացն, որք բազում անգամ ի  
 գործ գնէին զսաշտոն իւրեանց վասն զրամս և եթ շորթիցոյ,  
 և զատեան իւրեանց ի գանձատուն զարձուցանէին. վասն որոյ  
 և գանդատագիրք և հայցուածք օգնութեան խուռն աեղային  
 ի վերայ պապիցն։ Զայսմանէ յիշատակ առնէ Կղեմէս Ե 258)։  
 Բայց ոչ նա, և ոչ այլ որ ի պապից յառաջ և յետոյ քան  
 զնա ոչ եղ չափ իշխանութեան կրօնաբնութեան, և ոչ մեղ-  
 մացոց իւր զՄրականեան օրէնսն։ Ընդհակառակն՝ անգաղար  
 ելանէին ի պապական պաշտանէն նորանոր յորդորմունք յա-

ուսելու զխտութիւն նոցա և զարիութիւն, և պապքն առանց ինչ ընդդիմութեան թոյլ տային՝ զի կրօնաքննիչքն առուեստ իմն ստութեան և դաւաճանութեան արացնն զճարտարութիւնն զոր ունէին՝ ի մատնել զմարդիկ յայրումն խարուկաց, որպէս է տեսնել ի գիրս Գոմինիկեան կրօնաւորին Նիկողայոսի Եմերիկեայ՝ Հաստատելոյ Հաւանութեամբ Հռովմեական պալատանն 259) :

Նուիրակք պապին յամին 1229 յորգոր եղն չորեքտասանամեայ արքային Գաղղիացոց Լուդովիկոսի Թ, Հրատարակել զայն անողորմ օրէնս, որով Հրամայեալ լինէր այրել ի հօր զայլակրօնս զամենեան 260) : Վայսին Փրեղերիկոս Բ, որ զբաղեալ էր ի կոտորել զՍուելֆեանս յԽտալիա, մինչդեռ ամենայն ինչ հնազանդ էր կամաց նորին, և ամենայն ինչ յաջողէր նմա ի նուաճել զպապս՝ որք անդադար հասուցանէին նմա զնեղութիւն և զսպառնալիս, Հրատարակեաց յամն 1224, 1258 և 1259 ընդդէմ հերետիկոսաց զխժոժական օրէնսն, որք թոյլ տային զբաւել զինչս նոցին յարքունիս, և հրով տոջօրել ըզնոսա : Աչ զոյր հրաման հերետիկոսացն արդարացուցանել զանձինս որով և իցէ օրինաւոր ճանապարհաւ. այլ և պաշտպանաց նոցա և բարեկամաց սպառնային պատիժք չարաչարք : Զնոցն զայն օրէնս վերստին հաստատեաց բազում անգամ Կննովկենտիոս Գ, և նմին հետեողք եղն յայսմ յաջորդք նորա, որք անդադար ի մէջ բերէին զօրէնսն, և խրախուսէին ի կատարումն նոցին, սակով թէ Փրեղերիկոս Բ՝ սխերիմ թշնամին Եկեղեցոյ՝ ի ժամանակին յորում ետ զօրէնսն զայնտիկ՝ հնազանդէր Եկեղեցոյ :

Փոխանորդ նուիրակի պապին Պետրոս Քուլէմէտիոյ եղև առաջին որ հրատարակեաց ի Լանկտոք զօրէնսն Լուդովիկոսի. սակայն զարձեալ մի ի նուիրակաց պապին կարդինալ Տ՝ Անձեղոյ եկեալ յայնմ ամի ի Տոլուսա (որ է Թուլուզ) հանդերձ զօրօք՝ ժողովով սահմանեաց անդանօր զկրօնաքննութիւն 261) :

Յորժամ յամին 1251 և յամն որ զինի կրօնաքննիչքն առաքեալք ի պապէն, և յանուանէ Վոնրադոս Մարպուրկե-

ցի և Գոմինիկեանն Տօսոյ սոսկալի կատաղութեամբ կատարէին զգործ պաշտաման իւրեանց ի Գերմանիա, Հոտերատո ոմն զնոյն կատաղութիւնս գործէր ի Գաղլիա: Պապն Գրիգոր Թ՛ զպաշտօն կրօնաքննութեան յանձն արար Գոմինիկեանց, որպէս զի նորա կատարեսցեն զայն միշտ յանուն պապին և իշխանութեամբն զոր ի նմանէ կին առեալ 262):

Պարտաւորիչ զօրութիւն օրինացն եղևոց ընդդէմ Հերետիկոսաց՝ ոչ եթէ իշխանութեան աշխարհական իշխանացն էր, այլ ի գերազոյն յիրապետութեան զոր պապն իրրև փոխանորդ Աստուծոյ ի վերայ երկրի սեպհականէր անձին իւրում ի վերայ կենաց և մահու ամենայն քրիստոնէից 263): Ամենայն իշխան, ամենայն ատեան քաղաքական դատաստանի ըստ վարդապետութեան Հոովմեական պալատանն պարտական էր կատարել զվճիռս կրօնաքննչացն ըստ առաջիկայ կարգադրութեան: Նախ անկանէին ընդ բանադրանօք զիսաւոր անձինք, ապա այնոքիկ որք ունէին ընդ նոսա յարարելութիւնս ինչ. եթէ այն չէր բաւական, արգելք եղեալ լինէին ի վերայ քաղաքին ողջոյն. եթէ այլ ևս չյաջողէր, պաշտօնեայքն ընկեցիկ լինէին ի պաշտամանց իւրեանց: Հուսկ ուրեմն յորժամ ամենայն Հնարք ապարդիւն մնային, քաղաքն զրկեալ լինէր յեպիսկոպոսական աթոռոյն, և արգելք ի վերայ գնէին նմա՝ ունելոյ ինչ յարարելութիւն ընդ այլ ի քաղաքաց: Այսպէս նկարագրեն Եմբրիքոս ի Թ՛Գ դարուն և կարդինալն Ալպիցցի ի Թ՛Է դարուն զգնացս կրօնաքննչաց ըստ հրամանաց պապին: Միայն թէ վերջինն ի հնարիցդ, այս ինքն բառնալն ի քաղաքէն զաթոռն եպիսկոպոսական և արգելուն քաղաքին ունել զյարարելութիւն ընդ այլ քաղաքս՝ վերապահեալ էր պապին 264):

Կրօնաքննութիւնն ընդ ամենայն ժամանակս բարգաւաճելոյ իւրոյ ևս քան զևս խոտորնակի ընթանայր՝ արտաքոյ ամենայն օրինաց արդարութեան և իրաւանց: Կննովկենտիոս Գ (1245 — 1254) առաւել իմն քան զայսն օգնական եղև զօրանալոյ հրնարից և բռնութեան կրօնաքննութեանն. նա պատուիրեաց

ի զործ զնել տանջանարանս, և զնոյն պատուեր հաստատեցին զովելով Աղէքսանդրի, Վղեմէս Պ, և Վարլիստրոս Պ, Բաղում՝ անգամ՝ բաւական էր կասկած մի և եթ մասն ի տանջանս արկանելոյ ղկասկածաւորն . բանտարկութիւնն մինչև ցմահ ի մէջ չորից անցկազոյն որմնց, հաց և ջուր միայն ապրով բանտարկելոյն՝ ի զթասիրութիւն համարեալ էր : Արդին ի խղճէ մտաց պարտական էր մատնել զհայրն իւր ի տանջանս անտանելիս, ի բանտարկութիւն մշտնջենաւոր կամ յայրումն ի վերայ խարուկի :

Չանուանս ամբաստանողացն չասէին ամբաստանելոյն, որով և նա ոչ ևս գտանէր հնարս առ ի զանձն արդարացուցանելոյ : Աչ էր մարթ բողոքել յայլ դատաստան կամ ի բարձրագոյն տեղի, և ոչ յուսալի ինչ էր՝ թէ տացի նմա հրաման ընտրելոյ զոր իւր ի փաստարան . և եթէ որ ի փաստարանից իշխեր պաշտպան կալ ամբաստանելոյն, անկանէր ընդ բանադրանօք : Երկուց վկայից բանք բաւական համարէին ի դատապարտել ամբաստանեալն, և ընդունելի էին այնպիսի վկայք ևս՝ զորս մերժէին օրէնք յայլոց դատարանաց, զոր օրինակ երգմնազանցք, կնաթողք, չարագործք, և առ հասարակ արքանպատիւք կամ որք թշնամութեամբ էին ընդ ամբաստանելոյն : Արօնաքննիչն ոչ ունէր բնաւ հրաման ցուցանելոյ զղիշտութիւն և ղխնայութիւն : Տանջանք սարսափելիք համարեալ էին սովորական հնարք սախելոյ ի խոստովանութիւն յանցուածոց : Աչ մի ինչ ուրացութիւն, ոչ մի ինչ բան հաստատողական՝ թէ համաձայն է ամբաստանեալն հաւատոց՝ ոչ փրկէին զնա : Աչ զլանային նմա զհրաման խորհրդական խոստովանութեան, արձակման և հաղորդութեան, ապա ուրեմն հաւատային ի զօրութիւն խորհրդոյն, հաւատային և տելոյ նորա թէ զղջացեալ է և փոխեալ զմիտս իւր, բայց միանգամայն՝ եթէ նա երկրորդ անգամ՝ ևս անկաներ ի ձեռս կրօնաքննութեան, յայտ առնէին նմա՝ թէ ըստ օրինաց դատաստանի ոչ ևս հաւատան բանից նորա, և պարտի մեռանել : Հուսկ յետոյ առ ի ընուլ զչափ ամենայն խոստութեան՝ անմեղ ընտանիք

դատապարտւոյն զրկէին ի ստացուածոցն, կէս մասն ընչից նոցա գնայր ի գանձն պապական, և միւսն ի ձեռս կրօնաքննչաց 263) : Առէ Իննովկենախոս Գ, [թէ որդւոց դատապարտւոյն պարտի մնալ կեանք նոցա և եթ, և այն ևս իրբև շնորհ և ողորմութիւն. և այնպէս հրատարակեալ լինէին նորա իբրու անկարողք ընդունելոյ զքաղաքական պաշտամունս և դարտօնութիւնս :

Քաղաքական իշխանաւորացն պարտք էին շինել և պահպանել զլեւնսս, պատրաստել փայտ ի խարոյկս, և կատարել զվճիռս մահու տուեալս ի սրբազան տունէն : Եթէ նորա չբոժարէին ի գործ զնել զվճիռսն, կամ ցուցանէին զցանկութիւն զխտելոյ զպատճառս նոցին, անկանէին իսկոյն ընդ բանադրանօք. և եթէ այնպէս մնային՝ ոչ ցուցանելով զպաշտամունս և զհնազանդութիւն առ պապն, ինքեանք իսկ մասնեալ լինէին կրօնաքննութեան իբրև յոյժ կասկածելիք ի հերետիկոսութեան : Կրօնաքննիչքն ընդունէին զիշխանութիւն իւրեանց ի պապէն, և էին նուիրակք նորա. և ոչ որ երբէք արկեալ լինէր ի տանջանս կամ ի խարոյկ՝ եթէ ոչ յանուն պապին, և նորին սեպհական հրամանաւն : Եւ այս սկսաւ ի ժամանակէ անտի, յորում Լուկիոս Գ հրաման ետ եպիսկոպոսին Հրոնանի պրել ի Փլանդրիա հերետիկոսս բազումս 266), և յայնմ հետէ ընդ դարս ողջոյն տեւալ ձգեցաւ այն ստորութիւն սարսափելի հետեանօք. այնպէս զի յանուն և հրամանաւ պապից ժամանակին սպանան յոլովպոյն մարդիկ՝ քան թէ յանուն որոյ և իցէ աշխարհական թաղաւորի :

Ի ԺԳ և ի ԺԳ դարս, համեմատելով ընդ ժամանակին որ յետ Տրիդենտեան Ժողովոյն, սահմանադրութիւնք զհաւատոյ իրաց ընկալեալք յեկեղեցոյ սակաւութիւ յոյժ էին : Սմին իրի կրօնաքննիչքն ունէին զընդարձակ աղատութիւն սահմանելոյ զայն ինչ՝ զոր մարթ էր հերետիկոսութիւն անուանել, և ըստ իւրեանց դատողութեանն վարէին զիշխանութիւն իւրեանց ի վերայ կենաց և մահու : Եւ քանզի կրօնաքննիչքն զրեթէ մշտ ընարեալ լինէին ի միտքէ յերկոցունց կարգացնան-

ինչ կրօնաւորաց, որոց զլեաւոր պարագումն էր հաստատուն պահել զիշխանութիւնն պապական, վասն որոյ համարէին նորա թէ թէ պարզագոյն և ստուգագոյն կանոն հաւատոյ է վարդապետութիւն պապին, և այն՝ որչափ յայտնի էր ինքեանց, նթէ որ ասէր ինչ բան ընդդէմ պապական վարդապետութեանն, համարէր զհտութեամբ և կամաւորապէս լուծեալ ըզհրաման պապին. հերետիկոս էր նա այնուհետեւ և պարտ էր մատնել զնա աշխարհական իշխանաց, որոց պարտք էին կատարել ի վերայ նորա զվճիռ մահու. Մեքեանք իսկ պապքն արդէն ի վաղուց յաւելեալ էին ի սոյն՝ թէ որ որ ոչ համաձայնի ընդ առաքելական աթոռոյն, այնպիսին անտարակոյս հերետիկոս է 267). և յորժամ արքեպիսկոպոսն Մոզուսիոյ զանդատէր ընդ լուծանել պապին զգաշինս համաձայնութեան, Պալլիստոս Գ յամին 437 պատասխանի արար նմա. «Պարտ է քեզ զիտել՝ զի ի զանգատանս քո բովանդակի ձեռնբրիցութիւն իշխանութիւն պապին, և թէ այդու անկանխ դու ի յանցանս հերետիկոսութեան անտանելի եղանակաւ. որոյ վասն ըստ աստուածային և մարդկային իրաւանց դատնիս ընդ սահմանեալ պատժովք պատուհասի,» (268):

Գէպքն պատահեալք ընդ Կրտսեր անուանեալ կրօնաւորսն՝ յայանագոյնս ևս ցուցին՝ թէ որ որ հակառակ խօսէր պապին, ընդ հերետիկոսս համարէր. Ի յանցանս գրեցաւ նոցա այս միայն, զի նոքա իբրև ճշմարիտ աշակերտք Փրանկիսկոսի՝ կամէին ի գործ զնել զանընչութիւն ըստ կանոնաց վարդապետին իւրեանց: Կրօնաքննիչն Յովհաննէս Պելլագի երեք զվկայութիւն զերահռչակ կանոնագրոսի ժամանակին կարգինալ Հենրիկոսի, որ ասացեալ էր թէ «Որ որ ոչ ընդունիցի զհրամանս պապին՝ հերետիկոս է, և որ չկամիցի որ հնազանդել պապական աթոռոյն, անկանի ի հեթանոսութիւն,» (269): Անուանեալ Հոգևորականքն, որպէս կանխեցաք ասացաք, համարձակեցան ասել, թէ պապն Յովհաննէս ԻԲ ոչ ունի իրաւունս եղձանելոյ զկոնդակ նախորդին իւրոյ՝ Նիկոլայոսի Գ, ուստի և ոչ զկանոնս հիմնադրի կարգին իւրեանց: Վասն այսր

բանի բազումք ի նոցանէ տուժեցան կենօք իւրեանց : Չկարծիս Հոգևորականացն ոչ արար դատապարտ և ոչ մի ժողովմիայն պապական հրամանաւ՝ զոր ի մէջ բերէին կրօնաքննիչքն՝ այրեցին զնոսա ի հուր : Հակառակ իմն էր բնական ըզգացման այնպէս համարել՝ թէ կարող իցէ անկանել ի մոլորութիւն անձն այնպիսի՝ զորոյ զիշխանութիւնն եթէ ոչ ճանաչիցէ որ, իսկոյն մահապարտ գտանի : Բայց իրաւագէտքն և աստուածարանք՝ որք յօրինեցին զկանոնադիրս կրօնաքննութեան, աւելի ևս յառաջ վարեցին զբանն : Քանզի Ամբրոսիոս Ախոնատեան (որ մասննազրէր յամին իբր 4460) ասէ, թէ « Հերետիկոս է ամենայն որ՝ որ այլ ազգ ինչ կարծիս ունիցի ըզխորհրոց Եկեղեցւոյ քան զորս ունի հոռովմեական Եկեղեցի », 270) : Մինչ զի եթէ աստուածաբան որ բարձրացուցանիցէ զբարբառ իւր ընդդէմ վճռոյն Եւզղինէոսի Գ՝ զեռ ևս հրատարակելոյ, և ընդդէմ մոլորութեանցն որ ի նմա, անտարակոյս ընդունի զվճիռ մահու :

Այս ամենայն որպէս էրն ի ԹՊ դարուն՝ նոյնպէս մնաց և ի վեջտասաներորդին : Աուռնելիոս Ազրիպպաս նկարագրէ զզրնացս կրօնաքննութեան յամին իբր 4550 ըստ այսմ՝ օրինակի . « Կրօնաքննիչքն ի գործ զնեն զգատաւորական իշխանութիւնն ըստ կանոնական իրաւանց և պապական հրամանաց, որպէս թէ անհնարին իմն իցէ՝ զի պապն կարող լինիցի սխալել : Ոչ ինչ մեծ նշանակութիւն տային նոքա ոչ Սուրբ Գրոց և ոչ աստուութեան Հարցն սրբոց : Հարքն այնորիկ՝ ասէին կրօնաքննիչքն, կարող են ինքեանք սխալել և զայլս ի մոլորութիւն արկանել . բայց եկեղեցին հոռովմեական՝ որոյ զլուխ պապն է, սխալել ոչ կարէ » :

Կրօնաքննիչքն սովորաբար առնէին ամբաստանելոյն զայս հարցումն . « Հաւատաս յԵկեղեցին հոռովմեական », եթէ պատասխանէր նա թէ «յո՛», ի վերայ բերէին . « Եկեղեցին դատապարտ առնէ զայս ինչ կանոն . հրաժարեալի յայնմանէ », եւ եթէ չառնոյր յանձն հրաժարել, մասնէին զնա աշխարհական իշխանութեան յայրումն 271) : Ի բազմաժամանա-

կեայ մրցմունս Աուէլֆեանց և Վիպելեանց յԽտալիա, պապքն բաղում անգամ ի ձեան կրօնաքննութեան և դատապարտութեան հերետիկոսաց զուն զորձէին նկուն ասնել զհակառակորդս իւրեանց: Իրաւագէտն Քաղտերինի ասէ. «Որ որ ոչ յարգեսցէ զսահմանադրութիւնս պապին՝ հերետիկոս է. քսնդէ արհամարհէ այնու զկապանս արքայութեան», 272): Եւ զայս կանոն կարող էին յարմարել ուժ և իցէ ի Վիպելեանց. ուստի պապն Բննովկենտիոս Գ (յամին 1248) հրատարակեաց հերետիկոս լինել զմեծադոր թշնամին Աուէլֆեանց զԷժձէլինոյ\*): Հաստատէր պնդէր Էժձէլինոյ ի ձեռն զեսպանին իւրոյ՝ թէ սուրբ և յատակ է հաւատն իւր, և երգնոյր ևս ընդ այն, բայց ի զուր: Բննովկենտիոս յամառեալ մնաց ի բանի իւրում՝ թէ Էժձէլինոյ ունի զնոր աղանդն Գնոստիկեանց, թէպէտ և ոչ կարէր առ այս բերել և ոչ զստուեր անգամ ապացուցի (275): Զայն զայս հնարս հերետիկոս համարելոյ ըզհակառակորդս իւր՝ լաւ ևս ի զորձ եղ Յովհաննէս ԽԳ, մի՛ զի մեծացուսցէ և ընդարձակեսցէ զկալուածս իւր, և զմիւս ևս զի ամբասնդեսցէ զիշխանութիւն արքային Հառերտոսի յԽտալիա: Սմին իրի Մարքիզքն (կամ Մազգանք) Հոնիաղոս և Օպիցցոյ Եստեցի, նախանձայրոյղ կաթողիկէք, բայց ոչ Վիպելեանք, այլ Աուէլֆեանք, յանկարծակի իմն (յամին 1520) հրատարակեցան ի պապէն հերետիկոս զոյ, և արկան ընդ կրօնաքննութեամբ (274): Յետ երկուցամաց նոյնպիսի անցք անցին ընդ Վիպելեան տոհմին Վիպրոնթեանց ի Միլան: Պապն հրատարակեաց կոնդակաւ՝ թէ իշխանքն այնորիկ հերետիկոսք են, և միանդամայն զամենայն արբանեակս նոցին և զհպատակս դատապարտեաց ի սարկութիւն (275): Գեպք այսպիսիք պատահելցին և յայլ նուազս:

(\*) Էժձէլինոյ, որ և Էլլէլինոս Գ, հոննոսանեան «կաթողիկէ», յամին 1245 անցեալ է իւրաքի Վիպելեանց, և պիտապիտեալ վերանա, վիշինցա, Պարտոս և Պրէշիտ՝ արար անբնութիւնս բաղանս:

Եթէ ինքեանք իսկ պապքն այսպէս առնէին դատաստան զերաց հաւատոյ, եթէ Նիկողայոս Գ, որպէս պարտաւն զնա ժամանակակիցքն, ճոխացոյց զպղծատոհմն իւր առատ հասիր ք կաշառաց եկեղոց ի կրօնաքննութենէ, — զի՞նչ զարմանք իցնն եթէ կրօնաքննիչքն, որպէս ամբաստան լինի զնոցանէ Ալուարոյ Փէլայոյ, վարէին զիշխանութիւն իւրեանց ի շորթել և ի քաղել բառ կարի զբազմութիւն դրամոց : — Թող զայս. այլ և Աղեմէս և յայտ արար, թէ «Այր կրօնաքննիչ զհետ երթալով միայն իւրումն խղճի՞ ունի զլիով իշխանութիւն զո՞րք և իցէ արկանելոյ ի բանտ, ի կապանս շղթայից ևս», 276) :

## Ը.

Գատաստանք ընդդէմ կախարդութեանց : — Հաւատ եւ կարծիք նախնական Եկեղեցոյ : — Կիստերոտականք եւ Թէսփիլիան առասպելն : — Կրօնաքննութիւն եւ կախարդութիւնք : — Իննուիկնետիոս Գ, եւ Յովնաննէս ԻԲ : — Պատուհասք կախարդաց . — Ճիւղաք կամ «մղձաւանջք», : — Տարածայնութիւնք եւ շփոթք զկախարդութենէ : — Հեղինակութիւն Պապին յայսպիսիս : — Կուռնելիոս քահանայ : — Հրահանգ առ կրօնաքննիչս : — Կանոն մաշտոցին Լատինացոց :

Յիրաւի է մեզ արգեօք ասել թէ ամենայն պատմութիւնք յաղագս զոյութեան կախարդաց (որպիսիք յաճախեալ էին ի ԺԳ դարէ մինչև ցարն ԺԷ) ազրիւր ունէին զհաւատաւն բազմաց իշխանութիւն և յանհակառակելի հեղինակութիւն Պապից . այս բան մեր որչափ և անկարծելի թուիցի, սակայն ճշմարտ է և հաւաստի՝ յարդեանց իրացն հաստատեալ :

Յընթացս դարուց բազմաց անմտութիւն համարէին մարդիկ, և հակառակ իսկ քրիստոնէական հաւատոց, զկարծիան տարածեալս ամբոխին յաղագս սնական ոգեաց, ուրուականաց, խօլական ցնորից, զիշերային երևութից զիւացն և այլոց

այսպիսեաց : Ի քանի մի ժողովս հրաման էր ապաշխարանս եկեղեցականս զնեղոյ ի վերայ կանանց ախտացելոց այսպիսի աւելորդապաշտութեամբ, և կանոնն զոր Հռեղինոս, Պուրբհարտ, Իւոն և Գրատիանոս ընկալան ի սահմանադրութիւնս իւրեանց, և յետ այնորիկ ցանգ ի վկայութիւն բերէին զայն, պատուիրէր ծանուցանել ամբոխին և ուսուցանել՝ թէ քանի ունայն են կարծիքն զգոյութենէ ուրուականաց, և թէ որչափ հակառակ է այն քրիստոնէական հաւատոյ : Ընծայելն զիւաց զգերբնական զօրութիւն և զներգործութիւն՝ համարեալ լինէր մեղրութիւն չար և ազգ ինչ հերետիկոսութեան 277) : Հաւատալն ի հմայս և ի կախարգութիւնս անգէն իսկ ի ԹԱ զարուն էր ի համարի ծանր ծանր մեղաց, որպէս յայտ է ի գրոցն Պուրբհարտի և ի գրուածոց որ յաղագս ապաշխարութեան : Յայնժամ չածէր որ զմասւ թէ եկեցեցէ ժամանակ յորժամ ինքեանք իսկ պապքն ի կոնդակս իւրեանց հաւատացեն յայնպիսիս, և զօրութեամբ այնր հաւատոյ ի մահ մատնեսցեն ըզհաղարաւոր մարդիկ :

Ի բովանդակ նախնի մատենադրութեան հոռովեական եկեղեցոյ ոչ ուրիք և ոչ մի ինչ գտանի յիշատակութիւն հաւատալոյ ի հմայս և ի կախարգութիւնս . և ի ԹԲ զարուն Յովհաննէս Սալիսպուրեցի զպէս զպէս ազգս կախարգութեան ընդ առասպելս և ընդ ցնորս գրէր : Բայց յայնմհետէ տարածեցան յեկեղեցոջ զրուածք ինչ, զոր օրինակ հաւաքմունք Անսարոսի Ալյսթերպարի, Թովմայի Վանդիպերացոյ, Ստեփանոսի Պուրպոնեան, Ախտերսականացն \*) և Գոմինիկեանց, որք լի էին առասպելեօք, առ աչօք տեսեամբք և ստայօդ սրանչելեօք : Ի նմին ժամանակի սկսան ասել՝ թէ ի մէջ բազմութիւ աղան-

(\*) Ախտերսականութիւնն իարբ իմն են ծափեալ ի Դաբանա-Պեկե Ռե-նկոմիտանց յամն 1098, հասարակեալ ձախ ի «Սիլե», անոտանեալ արեւոյ մեր) ի Տիշոն Բաղատ, և ապա որբածեալ ի զանազան իւզմանս Եւրոպոյ :

դոց հերետիկոսացն գործին զանազան հրաշարի գործողութիւնք՝ զորս հարկ է ընծայել սատանայի : Ի տարածել՝ յարևմուտս Թեօփիլեան առասպելին՝ սկսան երևակայել՝ թէ կարող է մարդ ի դաշն մտանել ընդ սատանայի և այնու ի ձեռս բերել զգերբնական զօրութիւն և պէս պէս զուարճութիւնս (278) : Անսարխոս և Վինկենտիոս Պովեցին առաջինք եղին ի տարածել զհամբաւ այսպիսի դաշնադրութեանց եղելոց ընդ զիւաց, և յետ սակաւուց նորին խկ պաշտօնական պատմարանք պապից (Մարտինոս Ահագի և այլք) յաւելին թէ պապն Սեղբեստրոս Բ Եհաս ի գերագոյն աստիճան Նկեղեցւոյ ի ձեռն դաշնակցութեան ընդ սատանայի :

Ընդ հիմնաւորել պապիցն զատեան կրօնաքննութեան և ընդ սկսանել կրօնաքննչաց կատարել զպաշտօն իւրեանց ի Գերմանիա և ի Քաղղիա, հերետիկոսութիւն՝ և կախարդութիւն խառնեցան ընդ միմեանս : Աստուածարանք կարգին Գոմինիկեանց կոյր զիւրահաւանութեամբ բուռն հարին զմիոյ ի բանիցն Օգոստինոսի (279), որպէս զի հնարեցցին զմտացածին վարդապետութիւն իւրեանց յաղագս տարփողական զուգաւորութեան ի մէջ մարդկան և զիւաց, և յաղագս անհարազատ զաւակաց նոցին : Թովմաս Ազովնացի պատգամախօս ոմն համարեցաւ յայս խնդիր (280), և յետ սակաւուց վտանգաւոր իմն թուեցաւ մտաբերելն անգամ հերքել զայնպիսի թանձր մտորութիւն : Յամին 1254 Գրիգոր Թ առանձինն կոնգակաւ հրախրէր զիշխանս աշխարհի մերկանալ զուր ընդդէմ քրիստոսի՝ զոր ի վեր հանեալ էին կրօնաքննիչքն իւր (281), և ի վերայ բերէր անհնարին զիւրահաւանութեամբ զպատմութիւն զիշերային ժողովոց՝ յորս առաջիկայ գտանէր զևս ի կերպարանս կրիայի, մեռելատիպ ուրուականի և սևազոյն կատուի, և անդ գործեալ լինէին գարշ աղտեղութիւնք :

Զայս ամենայն տեղեկութիւնս ընդունել պապն շնորհակալութեամբ՝ զխաւորապէս ի Աոնրադոս Գարպուրկեցւոյ, որ զամենայն զք որ միանգամ խոստովանէր՝ թէ հուպ եղև ի կրօնիայն, և համբուրեաց զայն նիհար մեռելատիպ և զկատուն,

Հրամայէր ի հօր պրել 282) : Ի հարապինն Գաղղիա յետ սակաւ ժամանակի ի լոյս հանին Եզուիթքն զնմանօրինակ գաղտնիս . անդ պրեցին զկին զամն վաթսնամեայ վասն դաշնակցութեան նորա ընդ սատանայի :

Ի ձեռն պէս պէս տանջանարանաց, զորս կարգեաց Իննովկենտիոս Պ ի հարցարանութիւնս կրօնաքննութեան, նախապաշարումն այն զկապակցութենէ մարդկան ընդ զիւաց մեծապէս զօրացեալ հաստատեցաւ . քանզի տանջանս չարաչարս տալով մարդկան՝ քաղէին ի բերանոց նոցա զիրացն զխոստովանութիւն : Յորժամ Կղեմէս Ե արկ ընդ դատաստանաւ ըզՏաճարականն, կրօնաքննիչք նովին հնարիք, այս ինքն պէս պէս տանջանօք, ստիպեցին զնոսա խոստովանել, որպէս թէ զեն ի կերպարանս սեաւ կատուի երևէր ի զիշերային ժողովս ի բանոց, և որպէս թէ ինքեանք շիջուցմամբ ճրագաց պէս պէս գարշութիւնս կատարէին ընդ կնոջակերպ զիւաց 283) :

Յովհաննէս ԻԲ հրատարակեաց կոնդակաւ՝ թէ ամենեքեան որք պարապեն ի գործս զիւականս՝ անկանին ընդ պատժովք սահմանելովք սակա հերետիկոսաց, բաց ի գրաւելոյ յարբունիս զինչս նոցա 284) :

Յորմէ հետէ Իննովկենտիոս Ը ( ի կէս ժՆ դարուն ) և հան զկոնդակ իւր ընդգէմ՝ կախարդաց, բազմացան յոյժ յոյժ դատաստանք ի վերայ հմայից և զիւթութեանց և՛ կախարդութեանց :

Նախ քան զամենայն կրօնաքննիչքն ընկալան զիրաւարանական գովասանութիւն եղանակին զոր կալեալ էին ի դատել զիրս կախարդաց : Հռչակաւոր իրաւագէտն ժամանակին Պարթոլոյ ( յամին 1530 ) ետ զկարծիս իւր՝ թէ պարտ է պրել զվհուկս 285) : Այն կարծիք՝ յորմէ սկսանի կանոնաւոր պրումն կախարդաց՝ նշանաւոր է յոյժ . քանզի ի նմա տեսանին յայտնապէս թշուառութիւնքն և աղէտք յորս պապք և հացկատակք նոցին կարծեցեալ աստուածաբանքն արկանէին ըզմարդիկ ի ձեռն նիւթական և կոշտ մեկնարանութեան բանից սուրբ գրոց : Զբան առարկոյն Պօղոսի՝ թէ « Հոգևորն քննէ

զամենայն, , իմանային այնպէս՝ որպէս թէ պապն է գերագոյն գատաւոր թագաւորաց և ժողովրդոց : Եթէ մարգարէն Երեմիա զմարգարէական պաշտօն իւր հրատարակելոյ զգատաստանն Աստուծոյ յայտ առնէ ըստ արևելեան սոյրբութեան՝ պատուիրելով ջնջել և կորուսանել, ըստ հռովմէական մեկնաբանութեան նշանակէր այն՝ թէ պապին տուեալ է իշխանութիւն կորուսանելոյ և ջնջելոյ զոր ինչ և զո՛վ որ և կամիցի : Եթէ ասի ի Սաղմոսն զՄեսիայէն՝ թէ նա « Լոյսուեցէ զհեթանոսս դաւազանաւ երկաթեաւ. , , ապացոյց հաւաստի համարէին զայն իրաւանցն՝ զոր իբր թէ ունէին պապք առնելոյ զկրօնաքննութիւն հանդերձ փճաւհատութեամբ մահապարտութեան : Այսպէս ահա ապականեցին իրաւագէտքն պապականք զաստուածաբանութիւն, և աստուածաբանքն զօրէնսդիտութիւն. և ի սոյն միտս ասնն իրաւաբանքն, որպէս և Պարթոյոյ, թէ զկին փհուկ պարտ է ի հուր այրել, իբր զի ըստ Տեառն բանի՝ որ որ ոչ մնայցէ առ նմա՝ ընկեցեալ լինի արտաքս և այրի իբրև զորթն ցամաքեալ :

Ի գիրս Եմերիքեայ 286) ասի՝ թէ կախարչութիւն և դիւթութիւն են իրական գործողութիւնք՝ որք անկ են կրօնաքննութեան. իսկ թէ որ էր սահման և չափ ի մէջ թոյլատրեալ գործածութեան կարծեցեալ մողական զօրութեանց, և ի մէջ մողութեան որ արգելեալ էր ընդ սպառնալեօք մահապարտութեան, ընդ երկար ժամանակ մնաց իբրև խնդիր իմն անորիչ և անյայտ : Ի կոնդակին հրատարակելոյ յամին 1471 Սկքստոս Դ փրապահէ անձին իւրում միայնոյ զիրաւուն շինելոյ և թաղելոյ շրտն Աստուծոյ անուանեալ մոմակերտ պատկերս \*), որք որպէս թէ լուծանեն զամենայն կախարչութիւն :

(\*) Պատիւքն իւր Բեպալ՝ անտանեալ « Գառն Աստուծոյ », և լուրն յայնի « Անիտո Տէի », է Բարբալէ մոմ գոգարալ, յորոյ վերայ իտեալ է պատիւք զպատիւն բառն հանդերձ իւրաքոյ լուրն Սեփանա Միտիլէ, շորջանալի անելով բրեալ զարքն և զանոնս

և եթէ հուպ լինիցի ի նոսա (յետ ընդունելոյ զԹողութիւն մեղաց), կարող է ունել ազգեցութիւն ի վերայ հրկիզութեան, նաւարելութեան, խառնակութեան օրոց և կարկափ 287) : Վարդապետի յետ տարոյ պատկին ինքնին ժողովրդեան իբրև զԹանձր և զբիրան զայն օրինակ սնապաշտութեան, Կննովկենտիս Ը. (յամին 1484) եհան զկոնդակ իւր ընդդէմ կախարչութեան. և պատճառք հրատարակութեանն այն էին՝ զի ի վիճակս ինչ Կերմանիոյ աշխարհականքն և եկեղեցականք ընդ դէմ կային կրօնաբննչաց, և ոչ տային նոցա հալածել զկախարչութիւն և զղլութիւն : Պատն յայտնապէս առաջի առնէ ի նմին զհաւատս իւր՝ թէ կարելի է լրբարար մեղանչել ընդ դեմն, յորոց ոմանք խօլական ճիւղքք \*) լինին կանանց, այլք ի կերպարանս կանանց մտանեն՝ զի ճիւղք արանց լինիցին, և կարելի է ի ձեռն կախարչութեան վնաս գործել յղի կանանց և յղի անանոց, պողոց, բանջարոց, այգեաց և անգաստանաց. և թէ մարթ է չարչարել զմարդիկ և զանասունս, և առ-

պառլէ ժամանակին : Պատն օրհնէ զպարթեւբան զայնոսիկ և բաշխէ բաշխաց : Ի հնաւն մտեղնս բաշխելին յեկեղեցին Հոսովոյ ի ճրագալացի զարկին. և հասարակեալն զճարս մտեղնացն ուրեւ ի որան վաւելին ի պեպս արխածից և պարահարոց, հանքայն ի՞նչ այնմ որ բործի բաշխմ որբեք յազգին մերոս մտեղնեքն լսացելովք յերեկոյն Տեոանընդառաջին : Իսկ իբրև բազմացան ինքորոշան այնպէս իճարից իսմ մտեղնաց, հարկ համարեցան յօրինել զպարթեւբան մամբն, և զայնոսիկ բաշխել ինքորոշաց :

(\*) Այն է հոյեցեալն ի լարին լեզուս «Ինտուպս», իսմ «Ինտուպս», և որճիւրէն «Ազբարպատն», զոր ոմանք ի մերոցն լարագանեցին «Գև մախաբեթ», և այլք սրեղծագրածեցին զայնանորմ բառոյ «Մըլլառանջ», իբր ի «Մըլլառն», իսմ «Մըլլիել յայնն», : Այլ է «Գան», և այլ որար]եալ հոյեցեալն ուսմեցեան «Ըստոս», իսմ «Խայելիկ», որ է որճիւրէն «Գմնճօլլ», իսմ «Գարա Գմնճօլլ» :

նել զայր և զկին անընդունակս որդեծնութեան : Յաղագս այսորիկ մեղադիր լինի հետաքրքիր եկեղեցականաց և աշխարհականաց, որք ցանկան առաւել ինչ զիտել քան զոր հարկն է, և արգելուն զկրօնաքննիչս մի իպէլ արմատաքի զշարութիւն այնպիսի . . . . և ապա տայ կրօնաքննչացն որպէս և անարդ յօրինողի գրօցն կօչեցելոյ «Պաան կախարդութեան», զնորօրինակ իմն ինքնիշխանութիւն :

Ի հալածել զմնզութիւն հետևողք գտան Կննովկենտիոսի Ք և պապքն Ադէքսանդր Զ, Լևոն Ժ, Յուլիոս Բ և Ադրիանոս Զ, — և այնու հաստատեցին իմն զժիւրն զայն հաւատ իրրև զման հաւատայեաց :

Աստուածարանք զհետ երթալով վարժապետին իւրեանց Թովմայի Ազուինացւոյ՝ հարկ անձանց համարէին այնուհետև պաշտպան կալ ահագին անմտութեանն, այս ինքն է վարդապետութեան զհմայից և զկախարդութեանց : Գլխաւոր զժուարութիւնն յայնմ էր, զի կարողացին ի բաց կալ և զերձանել ի կանոնէն Քրատիանոսի, զոր համարէին սոլորարար սահման ժողովոյն Անկիւրիոյ : Եկեղեցին այնու կանոնիւ յամին 544 յայտ արար՝ թէ նորահնար վարդապետութիւնն յաղագս ներգործութեան սատանայի և պաշտօնէրց նորա արանց և կանանց՝ անհաւատութիւն է և ուրացութիւն ի քրիստոնէական ճշմարտութենէ, — այնպէս զի պապքն և կրօնաքննիչք նոցա յառաջագոյն իսկ դասապարտեալ գտանէին այնուհետև իրրև հերետիկոսք : Բազումք յաստուածարանից այսու անգորդէին ըզխիղճ իւրեանց՝ զի հեղինակութիւն պապին ի վեր է քան զամենայն հեղինակութիւնս, և զի գուցէ ի Քրատիանոսեան կանոնին նկարագրեալ էր այլ իմն աղանդ կախարդասարաց : Որքան մարդիկ կոտորեցան, ասէ կրօնաքննիչն Բեռնարդոս Ռաթէնեոյ, և պապքն հանդուրժէին այնմ ամենայնի 288) : Սակայն կրօնաւորքն Կրտսեր եղբարք, որպիսիք էին Սամուէլ Պասօինի և Ալփոնսոս Սփինա, համարէին զհաւատալն յոյժ և յազդեցութիւն կախարդաց ոչ միայն յիմարութիւն, այլ և հերետիկասութիւն, և յիսինն ասէր՝ թէ կրօնաքննիչքն պրէկն

զկատարդան վասն այնր իսկ հաւատոյ 289) : Բայց պապք և Պոմինիկեանք հաստատէին զերականութիւն զիւական երևութից. այնպէս զի կարելի է ի մի և ի նոյն ժամանակի յիպոստանական ընդ դատապարտութեամբ իբրև զհերետիկոս՝ եթէ ուրանայր որ զերականութիւն զիշերային շրջագայութեան զիւլացն, իսկ ի Սոլոնիա՝ եթէ ընդունէր որ զայն : Առ սակաւ սակաւ հեղինակութիւն պապից և Թովմայի և Պոմինիկեանց կալաւ զյաղթութիւն, և լռեաց ամենայն հակառակութիւն : Վարդապետութիւն Պոմինիկեանցն՝ նիտէրի Տոտոյ և Թաքիէի, և պապական աստուածաբանիցն Բարթուղիմէոսի Սփիննա և Սեղբեստրոսի Մոցցոլինի զիրականութենէ և զազգեցութենէ կատարութեան և հմայից՝ համարեալ լինէր հաստատեալ ի պապէն : Սփիննա յայտնապէս իսկ ասաց, թէ ճշմարտութիւն և իրական գոյութիւն կատարաց՝ հանգերձ ամենայն զարշուծեամբք նոցին և հրաշագործութեամբք՝ հաստատեալ կայ ի վերայ հեղինակութեան պապին, և կրօնաքննիչքն յանուննորա գործեն զոր ինչ գործենն : Աւ յորժամ ոմանք յիրսուազիտաց առ ի փրկելոյ զհուռն բազմութիւն եղկելի մարդկան՝ որք ի զոհ գնային այնմ կարծեաց յԽաղիա՝ ի մէջ բերէին զկանոն Ժողովոյն Անկիւրիոյ, որպէս զրեալ է այն առ Գրատիանոսի, Սփիննա յայտ արար՝ թէ « Հեղինակութիւն Ժողովոյն որ հրատարակեաց զմոլորութիւնն զայն՝ պարտի չքանալ առաջի հեղինակութեան պապին, : Ազուիթն Տէլոնիոյ \*) ի մէջ բերէր զվճիռս պապիցն առաջնոց, որք զկատարութիւնս և զհմայս ոչ առ աչօք երևոյլծս ինչ համարէին, այլ իրական 290) . և յաւելու՝ թէ « Ամենայն եկեղեցիական ատեանք յԽաղիա, ի Սպանիա, ի Գերմանիա և ի Գաղղիա ի նոյն կարծիս են, և ամենայն կրօնաքննիչք ըստ այնմ առնէին զգործս իւրեանց : Աստի սկիզբն կալաւ

(\*) Այդ Բազմակնոյնք, Բոյոյ Դիւրակոսան, Էնիճանէալ յապրի 4608 :

« կարծիքն և վճիռ հռոյմեական Եկեղեցւոյ, թէ անհամա-  
 « ձայնութիւնն ընդ պապին՝ նշան է ոչ պարզամիտ գոյոյ  
 « կաթողիկոսի, այլ ունեւոյ զհոտ հերետիկոսութեան, » 294) :

Հռոյմեականն գրաքննութիւն ընդ ամենայն տեղիս յորս  
 ձգի իշխանութիւն իւր՝ ջնջէր բառնայր ի միջոյ զամենայն գրա-  
 ւորական վաստակս բժշկաց, իրաւագիտաց, բնագիտաց և աս-  
 տուածաբանից, որք միանգամ փորձէին նշոյլ ինչ լուսոյ ծա-  
 գել ի թանձրամած խաւարն այն և պարզել զբասկան պատ-  
 ճառս երևութիցն դիւական կարծեցելոց : Ամենայն գրուածք  
 այնպիսիք ընդ ամն հարիւր և աւելի անկանէին ընդ արգելա-  
 նօք, որպէս դէպ եղև այս գրուածոցն Աւէյէտի, Ատեղմանի,  
 Առլփարթի, Ագրիպպայ, Սերվինոսի, Տելլաիոս թայի և այլոց,  
 Բնդ հակառակն անպտուղ մնացին ամենայն ջանք և հնարք  
 եղևալք վասն արկանելոյ ընդ նոյնպիսի արգելանօք զմնասակա-  
 րազոյնն ի գրուածոց յաղազս իրականութեան հմայից և կա-  
 խարդութեան, զգարձեալն ի կանոն յամենայն դատարանս,  
 այն իսկ էր մատեանն Եզուիթին Տէլլիոյ :

Եթէ որ ցուցանէր զերկրայութիւն ընդ իրականութիւն հը-  
 մայից և կախարդութեան, կամ համարձակէր խայտառակել  
 զխարէութիւնս նոցին, իսկոյն ասէին զնմանէ՝ թէ գտանի ընդ  
 ազդեցութեամբ այսոյն չարի, և արժանի է կամ բանտարկելոյ  
 մինչև ցմահ, և կամ մահուամբ զբաւելոյ ի կենաց : Աստուա-  
 ծարանն Տըլլիոս վկայեաց՝ թէ ինքն ընդ ազդեցութեամբ զի-  
 ւին էր յուրանալն իւրում զիրականութիւն կախարդութեան  
 և հմայից, բայց այնու ճողոպրեցաւ ի մահուանէ :

Ձկնի ամաց հարիւրոց Աուռնելիոս Լոս — Քալլիստիոս քա-  
 հանայ ասէր՝ թէ կանայք եղկելիք արկեալք ի տանջանս՝ ստի-  
 պեալ լինէին յանձն առնուլ զխոստովանութիւն այնպիսի ի-  
 րաց՝ զորս ոչ երբէք արարեալ էին, և թէ կարելի է ի ձեռն  
 ալքիմիայի (կամ քիմիագործութեան) հանել զսկի և զար-  
 ծաթ ի մարդկային արեանէ. վասն այսորիկ զեսպանն պապին  
 արկ զԱուռնելիոս ի բանա : Վամեցաւ իմն քահանայն ի բաց  
 դնել զկարծիս իւր, բայց ապա դարձեալ պնդեցաւ ի նմին :

Յետ բազմամեայ բանտարկելութեան մեռաւ Վուսնկիոս, և այնու զիրծաւ ի դժբաղդութենէ Քլատէ անուն խորհրդակաշին Տրեւիրեայ. որոյ համարձակեալ խօսել ընդդէմ հալածողացն զկախարգս՝ ի մէջ բերելով զբան ժողովոյն Անկիւրիոյ, այրեցաւ ի հուր 292)։ Վեռ ևս յամին 1625 Գրիգոր Ժեյստ արար՝ զի «Եթէ որ զաշնադիր լինիցի ընդ սատանայի, և յայնմանէ զհետ գայցէ խեղութիւն կամ վնաս կենդանեաց և կամ բերոց արտորէից, զայնպիսին պարտ է արկանել ի բանտ ի ձեռն կրօնաքննութեան, և անդէն արգելուլ զամենայն աւուրս կենաց նորա։ Ուր ուրեմն յետ այլոց ևս 170 ամաց, յորս կրօնաքննութիւնն ի գործ դնէր զանգժութիւնս իւր և զանիրաւութիւնս, և կոտորէր զանժիւ բազմութիւն մարդկան, հրատարակեցաւ հրահանգ մի առ կրօնաքննիչս հրոսովմայեցոց, յորում եղեալ կայր այսպիսի ինչ ամօթալի խոստովանութիւն՝ թէ արդէն բազում ժամանակք են՝ յորմէ հետէ չիք արարեալ կրօնաքննչացն ըստ կանոնի և ոչ զմի դատաստան, և թէ նորա չափազանց գործածութեամբ տանջանաց դառնապէս սխալեցան. թէ նորա և թէ այլք ի հոգեւորական դատարանաց առնէին զոր ամենայն սարսափելի սխալմունս, և այնպէս ի մահ դատապարտէին անիրաւութեամբ զամեղս 295)։ Ընդ նմին պատուէր տուեալ լինէր նոցա պահել զչափ զգուշաւորութեան և զխնդրութեան։ Մինչև ցայժմ ևս ի հռովմեական մաշտոցին դտանի կանոն մի, ըստ որում եթէ որ առեալ իցէ առ իւր կախարդական ինչ նշանակս կամ գործիս, պարտի դարձեալ ի բաց վարել յինքննէ զսատանայ՝ որ տիրեալ գտանի ի վերայ նորա 294)։

Թ.

Նորանոր խարդախութիւնք Գոմինիկեանց : — Իւսնի տրամաբանութիւնն անտեղի : — Խանգարումն զպրոցական աստուածաբանութեան : — Կարծիք նախնի Յունաց զիշխանութենէ պապին : — Ստայօզ գրուածք յանուն Հարցն Յունաց : — Ուրբանոս Գ. եւ թովմաս Ագուլնացի : — Գրուած նորա ընդդէմ Յունաց :

Թէ որպիսի ընդարձակ աստարէղ բացին առաջի հռովմէական ձեռնբրիցութեանց անհարազատ և ստայօզ գրուածք անդատին ի սկզբանէ ԹԲ դարուն՝ տեսանեմք յօրինակէն Իւսնի եպիսկոպոսի գաղղիացւոյ, որ և ինքն ընկալաւ յիւրն Հռոմէոս ինչէ զհաստատութիւն ստայօզ շարագրութեանց : Այսպիսի ինչէ տրամաբանութիւն նորա. « Պապքն ասէին՝ թէ երկորին արտօնութիւնքն և ս սեպհականք են ինքեանց. ապա ուրեմն պարտ է հաւատալ՝ թէ իրօք ևս ունին նոքա զարտօնութիւնան զայնտօխի : « Հռովմէականն եկեղեցի, ասէ նա միա՝ մտարար, ուսոյց մեզ՝ թէ ոչ որ իշխէ երկմտել ընդ վճիռ նորա. ապա ուրեմն հարկ է պարզմտութեամբ հպատակել նմին, » Եւս Իւսնի բացայայտ իմն է, զի ասելն ինչ ընդդէմ հրամանի պապին՝ հերետիկոսութիւն է : Ըստ այսմ՝ եպիսկոպոս որ, թէպէտ և հաւանեալ իցէ՝ թէ կարգադրութիւն պապին ի վնաս է վիճակին իւրում, և սակայն հնազանդի պապին, ուղղափառ է նա. իսկ եթէ հակառակ խօսիցի զեղծմանց պապին, հերետիկոս է : Այս հայեցուած կամ կարծիք, որոյ հետեանքն մեծամեծք են և անհամարք, զինաթմախ արար զԵկեղեցի, և պատճառք եղև ի մոռացօնս անկանելոյ ի նմա առաջնոյ իսկ կանոնին բարոյականութեան և քաղաքական խօհեմութեան, որ է հակառակ կալ շարեաց ի սկզբան, և ապականութիւնն տարածեալ է արդ ի հռովմէական Եկեղեցւոյ անպարտելի զօրութեամբ, այնպէս զի բարեկարգութիւնքն՝ յորս ուր ուրեմն ձեռն արկաւ՝ անաղանջին յոյժ :

Ի մէջ ԺՊ դարուն սկիզբն եղև նորոյ ահագին խարդախութեան, որ ըստ իւրոց հետեւանացն ոչ ինչ ընդհատ գտաւ յԻսիդորեան սուտ կոնդակաց: Եթէ նորա աւերեցին եղծին զբարեկարգութիւն և զիրաւունս Եկեղեցւոյ, նորն այն խարդախանք մեծապէս խանգարեցին զտեսականն աստուածարանութիւն և զգպրոցս: Ի ԺԻ դարու և յառաջին ամս ԺՊ դարուն աստուածարանք ոչ պարապէին յուսումն եկեղեցական իշխանութեան, և զարմանալի իմն ահիւ խորշէին յասեղոյ ըզկարծիս իւրեանց զգրութենէ պապին յԵկեղեցւոջ: Հուգոն և Հոնիքարտոս, Հոռքերտոս Փուլէյն, Պետրոս Փուլմիէցի և Պետրոս Լոմգարտացի, Հոուպերտոս Տիեղացի, Գուլիէմոս Փարիզացի, Վինկենտիոս Պուլէցի, և ս հարբն զպրոցական ոճոյ Աղէքսանդր Հալեցի, Ալանոս, և ս և Մեծն Ալբերտ՝ բեղաւորագոյնն քան զամենայն աստուածարանս ժամանակին\*), – ոչ ինչ բնաւ խօսեցան զայնմանէ: Մի անգամ և եթ ի մեկնութեան աղօթական բանիցն տեառն այս ինքն վասն Պետրոսի ասէ Ալբերտ. «Աստանօր իմացեալ լինի, զի յաջորդն սրբոյն Պետրոսի ոչ կորուսանէ զհաւատսն մինչև իսպառ և բոլորովին»: Պատճառ նորոց խարդախանացն եղև հակաճառութիւնն ընդ Յոյնս: Իսիդորեան և Գրիգորեան պապութիւնն՝ զոր քարոզէին Գոմինիկեանք իբրև զճշմարիտ և զմիակ փրկաւէտ եղանակ կառավարութեան Եկեղեցւոյ, անձանօթ էր Յունաց: Արդարև նիկողայոս Ա, Լեոն Թ, և յետ ոչ սակաւուց Գրիգոր Թ, ի թուղթն իւրեանց առ կայսրն և առ պատրիարքն յայտ

(\*) Ալբերտ՝ սակաւ իւրոց քաղաքացիաց քննութեանս լինան «Եթ», իւրեցեալ, բերանացի էր յաղթել, սակաւ է Փարիզ, և Տարեալ է իւրեց Գոմինիկեանց յամս 1224, հուլիսիցաւ իւրովի դասախօսութեան զքննութեանս լինել և զաստուածութեանս լինել, և քաղաքութեամբ բերանացի, ճանաչողութեանց բրեւոյն Արխարտիէլ: Ի թիւս աշակերտոց նորա անձան է թովմաս Ալեքսանդր: Վախճանեալ է Ալբերտ է կողմէս յամս 1280:

առնէին զայնպիսի պահանջմունս և զձեռներիցութիւնս. բայց ի Պոստանդնուպօլիս ոչ միտ զնէին այնմ, և ոչ իսկ պատասխանի առնէին: Յաչս Յունաց եպիսկոպոսն Հովովայ էր միայն առաջին ի մէջ պատրիարքաց, և նմա անկ էր նախագահութիւնն, բայց այսու պայմանաւ՝ զի մի՛ առնիցէ նա զանձն իւր անարժան այնմ արտօնութեան՝ ուրանալով ի Հաւատոց: Իսկ զինչիրն զբացարձակ միապետութենէ, զոր յայնժամ քարոզէին Յունաց Վովինիկեանքն, բողոքովն այլ ինչ էր: Յամենայն կարևոր խնդիրս վերաբերեալս Համօրէն Եկեղեցւոյ, գործողութիւն պապին՝ ըստ Յունացն կարծեաց՝ պարտ էր լինել Համաձայնութեամբ այլոց պատրիարքացն, քանզի երևակայել անգամ չկարէին նոքա՝ թէ մարթիցէ լինել յԵկեղեցւոյ իշխանութիւն ինչ ինքնիշխան, ինքնագօր և ամենագօր: Հարկ ուրեմն էր բուռն Հարկանել զնորանոր Հնարից վասն մատչելոյ առ Յոյնս:

Լատին ոմն աստուածաբան, և որպէս թուի՝ Վովինիկեան, կեցեալ զօրով ի միջի Յունաց՝ առաջի արար զիսուռն բազմութիւն յունական ժողովոց և զրուածոց Հարց Եկեղեցւոյ (Ոսկեբերանի, Վիւրղի Աղեքսանդրացւոյ, Վիւրղի Երուսաղեմացւոյ, կարծեցեալ Վաքսիմոսի), յորոց որպէս թէ նորանոր պահանջմունք պապիցն առնուին զվարդապետական Հիմն իւրեանց: Մտտեան աստուածաբանին այնորիկ առաջի արարաւ (յամին 1264) պապին Ուրբանոսի Վ, որ իսկոյն ի թղթին իւրում առ կայսրն Միքայէլ Բալէղոյոց յօգուտ ի կիր կարկ ըզմտացածին զրուածն զայն՝ զգուշացեալ ի յիշատակելոյ զանուանս վկայիցն: Կամէր պապն այնպիսի նորահնար վկայութեամբք, որք որպէս թէ գրեալ էին 800 ամօք յառաջ, ցուցանել՝ թէ առաջինն առնու է մի միայն Հեղինակութիւն ի վարդապետութիւնս Եկեղեցւոյ 295): Այս այն զժբաղդութիւն է յոր ըմբռնեալ էին պապքն, և զոր կրկնէին անգաղար ի թղթակցութիւնս իւրեանց ընդ Բիւզանդացւոց, սկսեալ ի Նիկողայոսէ Ա. քանզի ստէպ ստէպ ի մէջ բերէին վկայութիւնս սոսյօթս և մտացածինս. և այս անպատմելի վնաս գործեաց միարանութեան Եկեղեցեացն երկոցունց:

Ուրբանոս ինքնին խարեալ, որպէս երևի յայտնապէս, ետ զմտացածին մատեանն ցԹովմաս Ազուինացի. և նա ոչ ինչ կասկածելով՝ էառ անտի զամբողջ մասն մի զգերագահութենէ պապին, և յաւել ի գրուածն իւր ընդդէմ Յունաց: Ի նմին ժամանակի և Դոմինիկեանն Պոնաքքուրսիոյ, որ կացեալ էր յերկրի կայսերութեանն Յունաց, թարգմանեաց զվկայութիւնսն զայնոսիկ ի յոյն լեզու 296):

Թովմայի անգէտ գորով յոյն դպրութեան, և վարժեալ ի Գրիգորեան դպրութեան, և զտեղեկութիւնս իւր զիրաց նախնական Նկեղեցւոյ ի Գրատիանոսէ և եթ քաղեալ, այն առաջին անգամ տեսներ առաջի իւր վկայութիւնս կարևորս և նշանաւորս յառաջնոցն դարուց. և այն վկայութիւնք ոչ ևս թողուին ընաւ յաչս նորա տեղի երկրայութեան, զի մեծամեծ Ժողովք և Հռչակաւոր եպիսկոպոսունք և աստուածաբանք Դ և Ե դարուց Համարէին զպապն միապետ որ անխալ ի վարդապետութեան, որ կառավարէր զՆկեղեցին ողջոյն անսահման իշխանութեամբ: Այնուհետև զայն ինչ արար Թովմաս՝ զոր դպրոցականացն չէր արարեալ մինչև ցայնժամ, զի եմոյծ ի տեսականն աստուածաբանութիւն զուսումն անխալութեան պապին՝ ըստ մասին նովին իսկ բանիւք՝ որովք վարդապետութիւնն այն բացատրեալ էր ի վերոյիշեալ ստայօզ մատենին. և թէ այս գործ զորպիսի՝ ունէր կարևորութիւն և ըզլիակատար յաջողութիւն՝ ոչ է մարթ բանիւ պատմել: Յոյնք Հարկադրեցան յայնժամ ի բանից անտի ստայօզ մատենին Դոմինիկեան աստուածաբանի Լատինացւոյ ուսանել զառաջիկայ առաջարկութիւնսդ:

Քրիստոս աւանդեաց Պետրոսի զլրումն իշխանութեան իւրոյ այնպէս՝ զի պապն միայն ունի իշխանութիւն Հրամայելոյ, կապելոյ և արձակելոյ: Նմա պարտի լսել և անսալ ամենայն ոք իբրև Քրիստոսի, և ամենայն վճռոց նորա պարտի կատարող լինել. քանզի Քրիստոս լիապէս և կատարելապէս բնակէ ի պապն խորհրդաբար և Տեղինակօրէն 297): Միայն առաքելական աթոռն է որ անփոփոխ կայ և մնայ ի հաւատս,

մինչդեռ այլ Եկեղեցիք արատաւորեալ են մոլորութեամբք : Եկեղեցին Հռովմայ արեգակն է, յորմէ այլ ամենայն Եկեղեցիք առնուն զլոյս իւրեանց : Ժողովք ունի զՀեղինակութիւն ի պապէն միայն, որում անկ են իրաւունք յօրինելոյ զնոր դաւանութիւն Հաւատոյ. որ որ ոչ Հնազանդիցի Հեղինակութեան պապին՝ Հերետիկոս է. զի պապն միայն ունի իրաւունս վճռելոյ և լուծանելոյ զամենայն խնդիր վարդապետական :

Հիմնեալ ի վերայ մտացածին բանից կարգակցին իւրոյ, յորոց միջի գտանէր և կանոն ժողովոյն Քաղկեդոնի, որ տայր ամենայն եպիսկոպոսաց զանսահման իրաւունս բողոքելոյ առ պապն, — Հիմնեալ միանգամայն ի վերայ Գրատիանոսեան սրտութեանցն, յօրինեաց Քովմաս զգրութիւն իւր յերկոցունց աստի առաջարկութեանց. նախ՝ թէ պապն է անսխալ ուսուցիչ աշխարհի, և երկրորդ՝ թէ նա բացարձակ միապետ է Եկեղեցւոյ : Մտացածին Վիւրեղն Աղեքսանդրացի սիրելի լեալ է յոյժ Քովմայի յայս գործ, ուստի զողցես անդադար զնա կոչէ ի վելպյութիւն 298) :

Ժ.

Հետեւանք խարդախութեանց Գոմինիկեանցն. — Յովհաննէս ԻԲ եւ Թովմաս Աղուինացի : — Հրաման Իննովկենտիոսի Գ. յազազս տարեկան խոստովանութեան : — Տիտղոսն «տիեզերական», եպիսկոպոս : — Տկարանալ աշխարհիկ բահանայիցն կրօնաւորական կարգաց :

Ի պարտան պապին իսկոյն նշմարեցին զկարեւորութիւն զիւտին այնորիկ. իրր զի զայն ինչ զոր ուսուցանէին ցայնժամ իրաւաբանքն և օրէնսդէտք՝ տեսանէին լեալ տեսական վարդապետութիւն, և մտեալ ի յօրինուածս աստուածաբանութեան. Յովհաննէս ԻԲ, զմայլեալ ընդ իրսն՝ ասաց զնշանաւոր բանս զայս. «Քովմաս զրելովք զյօդուած իւր, այնպիսի և

այնչափ չհանալիս գործեաց, զի մարթ էր սրբացուցանել ըզնա՝ առանց պահանջելոյ ի նմանէ զկատարումն հրաշից, ։ Եւ ի կնդակին իւրում՝ առէ պապն՝ թէ ։ «Թոյմաս գրեալ է զմատեան իւր ոչ առանց յատկապէս իջանելոյ ի վերայ նորա Հոգւոյն Աստուծոյ, ։ Իննոյ. Ասացեալ է Իննոյկենտիայ և զայս ինչ ևս՝ թէ ։ «Որ որ հակառակ կայ վարդապետութեանն Թոյմայի, նոյին իսկ անկանի ընդ կասկածանօք, ։ 299) ։

Արդարև իսկ նորահասարն այն աւանդութիւն յունական՝ ի ժամանակին յորում ի վեր երևեցաւ՝ առաւել ևս կարևոր և ցանկալի էր յարեմուտս քան թէ յարեւելս ։ Քանզի յայնժամ լցեալ էին զարեմտեանն Եկեղեցի, զի այսպէս ասացից, յորդահասան ուղիք նորանոր կրօնաւորական կարգաց, որք ապրէին ողորմութեամբ և զրամօք հաւաքելովք ի խոստովանութեան, և յօգուտ անձանց վարէին զպապական արտօնութիւնն, այս ինքն է զարձակումն ի մեղաց վերապահելոց պապին ։ Իննոյկենտիոս Գ (յամին 1215) ի մեծի ուրիք եղելոյ ի Հրոսով՝ պատուէր ետ՝ զի ամենայն քրիստոնեայ մի անգամ ի տարւոջ խոստովանեցի իւրում քահանային, առանց որոյ հրամանն ոչ որ ոչ կարէ թողուլ զմեղս նորա ։ Յետ սակաւ ժամանակի պապական աթոռն կարգադրեաց առաքել յամենայն վիճակս և ի ծուխս յօգնականութիւն եպիսկոպոսաց և քահանայից նորանոր միանձուես, որ լիազօր պաշտօնեայք և անձնանուէր գործիք էին պապից . այնպէս զի պատուէրն Իննոյկենտիոսի (1215) յաղագս խոստովանելոյ ամենայն ուրուք էրում ։ «Իննոյն»՝ կորոյս այնուհետև զզօրութիւն իւր, և զարձաւ յօգուտ թափառական կրօնաւորաց, որք զթողութիւնն մեղաց արարեալ էին ինքեանց աղբիւր եկամտից ։ Ընդ այնմ միացաւ և տեսութիւնն յաղագս «Իննոյն»՝ իննոյն, որում որպէս թէ միայնոյ էր զեկամարել զԵկեղեցի . իսկ այլ ամենայն եպիսկոպոսունք էին միայն օգնականք նորա ։ Տիտղոսն «Իննոյն»՝ զոր մեծն Գրիգոր ի բաց մերժեալ էր զզուանօք, այնուհետև ընկալաւ զընդարձակագոյն մեկնութիւն, և Թոյմաս չիմենալ ի վերայ նորահասար զրուածոցն այնոցիկ՝ պնդեր

Թէ զայս տիտղոս տուեալ է պապին Ժողովն Քաղկեդոնի : Վէ-  
 ճրն որ յաղագս արտօնութեանց շնորհելոց նորանոր կարգացն  
 կրօնաւորաց՝ սաստկացեալ բորբոքեցաւ ի բազում տեղիս :

Իննովկենտիոս Գ. (յամին 1254) զուն գործէր պաշտպան  
 կալ եպիսկոպոսաց և քահանայից ընդդէմ խուռն բազմու-  
 թեան թափառական միանձանց : Ասացին նմա թէ ի պատճա-  
 որս կրօնական պատերազմացն այնոցիկ, և ի պատճառս ներո-  
 ղութեանց և թողութեան մեղաց խապառ կորնչի ամենայն բա-  
 րեկարգութիւն խոստովանութեան, որ արդէն խախտեալ է յոյժ :  
 Ասէ պապն, թէ աշխատութիւն քահանայից և փոյթ և ջանք  
 նոցին ի փրկութիւն հոգւոց՝ դրդուեալ է և խանգարեալ . Ժո-  
 ղովուրդն սովորեալ է արհամարհել զնոսա, և կորուսեալ զա-  
 մօթ և զպատկառանս . քանզի զիւրին իմն էր զերծանել ի մե-  
 ղաց՝ յորժամ միանձն ոք էր որ տայրն զարձակումն . զի նա  
 առ ժամանակ մի երևեալ և վաղվաղակի աներևոյթ լինէր, և  
 գուցէ ոչ և սպասուէր երբէք ի տեղոջն յայնմիկ 300) : Սակայն  
 զկարգադրութիւնն Իննովկենտիոսի՝ զի միանձուկն մի ևս իշ-  
 խեսցեն լսել զխոստովանութիւն առանց հրամանի քահանա-  
 յից՝ զարձեալ մերժեաց Աղեքսանդր Գ 504) : Ատուածա-  
 բանքն Փարիզու կալան զկողմն քահանայից, և պահանջէին զի  
 հաստատուն կացցէ նախնի կարգն բաժանման իշխանութեան  
 յեկեղեցւոջ . բայց Թովմաս զրեաց ընդդէմ նոցա, և յեցեալ  
 ի բանս իւրոյ կարծեցեալ Վիւրզին՝ ասէր . « Իսկ յաղագս հը-  
 նազանդութեան ոչ է մարթ առնել և ոչ մի ինչ զանազա-  
 նութիւն ընդ Քրիստոս և ընդ պապն . առաջաւորքն աշխարհի  
 այնպէս հնազանդին պապին՝ որպէս թէ Քրիստոս իցէ նա ,,  
 502) : Ըստ որում կարող էր պապն ի բաց մերժել զնախնի  
 բարեկարգութիւն Եկեղեցւոյ զսահմանեալն ի Ժողովոց . իբր  
 զի ժողովք ի պապէն միայնոյ ի փոխ առնուն զիշխանութիւն  
 իւրեանց : Թովմաս աներկմիտ վտարհութիւն ունելով ի ստա-  
 յօդ պատմութիւնն, առ ի հաստատել զվարդապետութիւն  
 իւր զբացարձակ իշխանութենէ պապին՝ ի վկայութիւն կոչէր  
 զԺողովն Քաղկեդոնի :

Յաղթութիւն երկոցունցն կրօնաւորական կարգաց լի և անժիրի եղև, և պապական կարծիք, թէ քահանայապետն Հռոմայ է միմիայն եպիսկոպոս յամենայն վիճակս, յաղթական գոտւ ամենեցուն : Քահանայքն ամենեքին զգային զտկարութիւն իւրեանց առաջի մուրացիկ կրօնաւորացն, և չկարէին խափան դնել մնասուն՝ զոր լիակատար իշխանութիւն պապին գործէր հովուական վաստակոց նոցա : Եպիսկոպոսունք որք արդէն նեղեալք էին յերեսաց կրօնաւորացն ի անտեսութեան վիճակաց իւրեանց, այնուհետև հարկադրեցան թոյլ տալ յորդեղոյ առ իւրեանս բազմութեան միանձանց ճօխացելոց պապական արտօնութեամբք : Յայնպիսի հանդամանս գտանէր Եկեղեցի, զի Պաղղլիացի կարգինալն Սիմօն Տը Պօլիէօ (յամին 1285) ասէր . « Ի պատճառս արտօնութեանց շնորհելոց անինչ կարգաց կրօնաւորաց՝ սասանեալ է բովանդակ կառավարութիւն Եկեղեցւոյ, և մարթ է հրէշ իմն անուանել զԵկեղեցի, 505) : Քան զամենայն կղերիկոսունս տկարացոյն գտան քահանայքն և տարակուսեալք, զի և հնար իսկ չէր նոցա յայտ առնել զգանդատանս իւրեանց : Եպիսկոպոսունք ստէպ ստէպ բողոք հարկանէին, և փարիզեան համալսարանն ընդդէմ եկաց զամբազումս, բայց առաջի զուգրնթաց զորութեան պապիցն և միանձանց՝ հարկ էր խոնարհել ամենայնի : Եւ յամիայն եղին արդիւնք գանգատանացն և բողոքանաց, զի միանձունք յայտնաբոյնս զիփացին՝ թէ պապական զրութիւնն հանդերձ վարդապետութեամբ անխաղութեան նոյնպէս կարևոր և թանկազին էր վասն ինքեանց՝ որպէս և վասն նորին իսկ հռովմեական պալատանն :



ԺԱ.

Գիմակալութիւն անսխալութեան պապին : — Սխալական լինել պապից : — Կարծիք Թրիոնֆոյի եւ այլոց : — Խոստովանութիւն Իննովկենտիոսի Գ : — Կարծիք համալսարանին Փարիզու եւ Թովմայի :

Այնուհետեւ ամենայն առաջարկութիւնքն յորոց կազմեալ լինէր անսխալութիւնն պապական՝ շնորհիւ նախնի հոգովեական հնարագործութեանց, սուտանուն Եսիղորի, Գրիգորեանցըն, Գրատիանոսի և հեղինակութիւնն Թովմայի, առանց հակառակութեան ընկալեալ եղնն յաստուածարանութիւնս : Եւ սակայն չեւ ևս խոստովանեալ էր յամենեցուն՝ թէ պապն ի վճիռս իւր զինչորոց հաւատոյ անսխալ իցէ : Յաշխարհս՝ յորս տակաւին կրօնաբննութիւնն ոչ էր ընկալեալ զհաստատութիւն՝ կարելի էր զհակառակն ուսուցանել . և ընդհանրապէս անհնարին իմն էր զերծանել ի հակասութեանց զայսմ խնդրոյ յընթացս հարիւրաւոր ամաց : Գուիրերտոս եպիսկոպոս Թուրնէի յամին իրր 4250՝ 504) և Նիկողայոս Լիւրացի (505) ասէին՝ թէ Եկեղեցին Հռովմայ շնորհիւ առանձին խնամոցն Աստուծոյ ոչ կարէ անկանել ի հաւատոց . բայց միանգամայն այս էին կարծիք հասարակաց՝ թէ պապն կարող է անկանել ի մոլորութիւն և սխալել ի ծանր ծանր խնդիրս հաւատոյ, և թէ անկանի նա ընդ զատաստանաւ Եկեղեցւոյ, և մարթ է յաթողոյ անգամ ընկնուլ զնա : Եւ զայս հաստատէին պատմութեամբն Լիբերիոսի և կանոնին Գրատիանոսի, որոյ հեղինակ համարէր Առնիփակիոս 506) : Այլ և համարձակագոյնքն ի պաշտպանողաց պապական իշխանութեան, Օգոստինոս Թրիոնֆոյ և Ալուաոնոյ Փելլայոյ հաւանեալ էին թէ պապ կարեն սխալել, և վճիռք նոցա չին ինչ զերծք ի վտանգէ վճիռանաց :

Բայց միանգամայն և յայս կարծիս էին նոքա՝ թէ պապ որ անկեալ ի հերետիկոսութիւն՝ ոչ ևս մնայր պապ, և յայնժամ ատենանն Եկեղեցւոյ, այս ինքն է Թողովն, տայր միայն վկայու-

Թիւն զիրացն վճռելոց և զգատարկանալոյ պապական աթոռոյն : «Յայնժամ, ասէ Թրիոնֆոյ, պապական իշխանութիւնն գտանի յայնմ՝ վիճակի՝ յորում լինի ի մեռանել պապին», 307) : Այսպէս կարծէր և կարգինալն Յակոբ Քուռնիէ, որ ասպ եղև պապ . քանզի ասէր՝ թէ վճիռք պապից չեն ինչ նուիրականք և անմատչելիք, այլ կարեն հերբիլ ի ձեռն պղոյ ուրուք պապի : Սմին իրի բարուք արար Յովհաննէս ԻԲ, զի մերժեաց և ջնջեաց զգայթակղական և զպարականոն վճիռն Նիկողայոսի Գ զաղքատութենէն Քրիստոսի, և զզանազանութենէն որ ի մէջ կիրառութեան ընչից և ի մէջ իրաւանց սեպհականութեան 308) :

Իննովկենտիոս Գ արդէն ասացեալ էր . «Յամենայն ի մեզս իմ դատաւոր ձանաչեմ միայն զտէրն . իսկ ի մեզս ընդդէմ հաւատոց կարեմ դատիլ յեկեղեցւոյ», 309) : Նոյնպէս և Իննովկենտիանոս Գ համաձայնէր՝ թէ «Ոչ է պարտ հնազանդել այնմ կարգադրութեան պապին՝ յորում գտանիցի ինչ հերետիկոսական, կամ որ սպառնայցէ խախտել զամենայն բարեկարգութիւն եկեղեցական, որովհետև կարող է պապն սխալել ի հաւատոյս», 310) : Պապն Յովհաննէս ԻԲ ծանեաւ հանդերձ ցաւով սրտի՝ թէ հեղինակութիւն իւր ոչ ունի մե՞ծ ինչ կարևորութիւն՝ յորժամ հակառակ ելանիցէ վարդապետութեան հասարակաց, և թէ անկեղծ հրաժարումն ի խորհրդոց իւրոց՝ է միմիայն հնարք ելից : Վասն որոյ մինչդեռ նա յԱւենիոն գոյով սկսաւ քարոզել՝ թէ նախ քան զհասարակաց յարութիւնն զուրկ են արգաթք ի դէմ յանդիման տեսութենէն Աստուծոյ, յարեաւ հակառակութիւն մեծ յասուածաբանից Փարիզու առ հասարակ, և ամենեքեան հրատարակեցին՝ թէ հերետիկոսական է այն կարծիք պապին : Թագաւորն հրամայեաց ի ձայն փողոյ յայտ առնել ամենեցուն զգատապարտութիւն վարդապետութեան պապին, և պատուիրեաց նմա յանձն առնուլ զվճիռ իմաստնոցն Փարիզու, որք լաւ ևս գիտեն՝ թէ զինչ ինչ հարկ իցէ պինդ ունել ի խնդիրս հաւատոյ, քան թէ եկեղեցականքն իրաւագէտք, որք սակաւ ինչ

էրամ՝ բնաւ իսկ ոչինչ խմանան յայտմ մասին 311) : Ահա  
 զպատիւն ի կարծիս ունին զգապական պաշտօնանէն անգատին ի  
 վտլ ժամանակաց, և ի ինկիրս վարդապետութեան և աստուած-  
 արանական աստրկոյցից ոչ ունին բնաւ վատահաւթիւն ի կար-  
 ծիս նորա :

Յայտնի է ի վերջոյն զիճարանութենէ Համալսարանին  
 Փարիզու ընդ կարգին Գովմնիկեանց՝ թէ քանի՜ անիղկի զու-  
 ղիւք կաղէպէ կին ընդ միմեանս Թովմաս Ագուինացի և անխա-  
 շու թիւնն պատական : Ասէին Գովմնիկեանքն՝ թէ « Աւարպա-  
 պետութիւնն Թովմայի ըստ ամենայն մասանց ի բոց ընկալեալ  
 է զհաւանութիւն պատից, և բաց յաղոցն հաստատեալ է կոն-  
 դակաւ : Արքանոսի ն առ համալսարանն Թուլուզի. և այսպէս  
 պատք վկայութիւն տան բանիցն Թովմայի և Թովմաս բանից  
 պատիցն », : Թովմաս ի վկայութիւն կոչելով զկիրքին իւր՝  
 « սուցանէ թէ՛ », « Միայն պատքն յայտ առնեն՝ թէ յինչ  
 պարտ է հաւատալ. նորա միայն հաստատեն կամ դատապար-  
 տեն զվարդապետութիւնս », : — Ընդ հակառակն՝ համալսարանն  
 գտանէր ի բանս Թովմայի գիտուն բազմութիւն մուրուսութեանց,  
 ի թիւս որոց գնէր և զվարդապետութիւնն զանխաղութենէ  
 պատին 312) : Համալսարանն հերետիկոսութիւն կոչէր զայն,  
 մանաւանդ վասն այնորիկ՝ զի ըստ յայտնի կանոնաց Եկեղե-  
 ցոյ՝ պատն պարտի բողոքել յասնան տիեզերական Թողովոյ,  
 և զի ամենայն եպիսկոպոս ըստ աստուածային և մարդկային  
 իրաւանց ունի իշխանութիւն դատաստան աննկոյ զինորոց  
 հաւատոյ : Եւ այսպէս յամին 1588 վարդապետական անխա-  
 լութիւնն պատին հերքեալ լինէր յառաջնոյ անտի և ի հզո-  
 րապունեն ի գիտնական միարանութեանց, և նախապատու-  
 թիւն Թողովոյն ի ինկիրս հաւատոյ բացայայտակի քարոզէր, —  
 թէ կետեւ անշուշտ ոչ որ յաստուածարանիցն Փարիզացոց  
 երկններ ընդ ստուգութիւն վկայութեանցն կարեորացն՝ զորս  
 ի մէջ բերէր Թովմաս :

ԺԲ.

Մտորութիւն կրկին ձեռնադրութեանց : — Պատճառ բարբութեանն , սիմոնականութիւն : — Շփոթը յուղեալ այնք աղապաւ : — Ուրբանոս Բ եւ Իննովկինսիոս Բ :

Պապքն ինքեանք իսկ փոյթ ունէին՝ զի վարդապետական Տեղինակութիւն իւրեանց ընդ երկրայութեանի կացցէ : Նորին իսկ կուրորէն մեծարողքն հոռովեական տիրապետութեան պարտական էին անկանել ի վարանս տարակուսի , յորժամ տեսանէին՝ զի չէք ի հոռովեական Եկեղեցւոջ բացայայտ ինչ կանոն կամ սահմանադրութիւն յաղագս միոյ ի կարևորագոյն վարդապետութեանց , զորմէ կախեալ կայր բովանդակ հաստատութիւն կրօնական խղճի եւ եկեղեցական կենդանութեան քահանայից : Քանզի պալատն ի ինդիրս յայտ անդագար վարանէր . ըստ նմին եւ զպրօցականքն յերկնութեանն ծփէին , որպէս է տեսանել զայս յօրինակէն Պետրոսի Լոմբարտացւոյ :

Անգոստին յովերորդ դարէ բազմաթիւ օրինաւոր ձեռնադրութիւնք ընդ ապօրինաւորս դասէին ի Հռոմ , եւ առաջարկեալ լինէին ի կրկին ձեռնադրութիւն . այնպէս զի մերձ ի վախճան Թ՛ դարուն Բտալականն Եկեղեցի անկաւ ի շիտթս ահագինս : Տարածումն սիմոնականութեան պատճառս ետ պապից ոմանց , զոր օրինակ Լեոնի Թ՛ անվաւերս հրատարակեց բազում՝ ձեռնադրութիւնս , եւ բուսն հարկանելոյ զկրկին ձեռնադրութենէ 315) : Եւ պատճառք իրացս էր թիւր եղբակացութիւնս այս թէ սիմոնականութիւնն (այսինքն է գնումն եւ վաճառումն սրբազան իրաց ընդ արծաթոյ) հերետիկոսութիւն է . իսկ հերետիկոսութիւնն անվաւեր գործէ զձեռնադրութիւն : Աչ զօր չափ վնասուն զոր գործէին այսու պապքն . քանզի յայնժամ ընդ ամենայն Բտալիա սակաւ յոյժ էին քահանայք եւ եպիսկոպոսունք զերծք ի սիմոնականութենէ . մինչ զի միւլիոնաւոր աշխարհականք տարակուսեալք էին ի միտս իւրեանց

յաղագս վաւերականութեան խորհրդոցն զորս ընդունէին ի ձեռաց եկեղեցականաց ոչ ունողաց զվաւերական ձեռնադրութիւն. Ալիճարանութիւնքն և թշնամութիւնք ի մէջ ժողովրդեանն և քահանայից մօտն ի գիւղորէս անգամ, և կրօնական կասկածանքն դարձեալ էին ի Լարիւրինթոս իմն անկանկի, և եկեղեցական յաջորդութիւնն ընդհատեալ և կամ խալատ իսկ եղձեալ էր: Սակայն և այն ևս ոչ էր բաւական. յուղմունք շիտթութեանցն այնոցիկ փոխադրեցան և ի Քերմանիա, և անվաւեր հրատարակեցան ձեռնադրութիւնք եպիսկոպոսացն այնոցիկ՝ զորս պապքն բանադրեալ էին ի պատճառս հաւատարմութեան նոցա առ Հենրիկոս Գ: Եւ այս զէպ եղև ի ժողովին Քուէտլինպուրկի յամին 1085՝ 514) յորում նուիրակրն պապին Աթոն յոչինչ գրեաց զձեռնադրութիւնս եպիսկոպոսացն Մոզունտիոյ՝ Աւեսպուրկի և Քոյերայ, թէպէտ և Պետրոս Վամիանոս վաղ ուրեմն ամբարձեալ էր զձայն իւր ընդդէմ այնպիսում կամայական եղձման ձեռնադրութեանց և ընդդէմ կրկնելոյ զձեռնադրութիւնն: Աթոն, որ և այս պապ եղև ընդ անուամբ Աւրբանուսի Բ, յայտ արար, զի «Եթէ ի ձեռնադրութեան իմիք չիցէ ևս լեալ սիմոնականութիւն ինչ, այնուամենայնիւ անվաւեր է ձեռնադրութիւնն՝ իրրև եղեալ յեպիսկոպոսէ ակտացելոյ զսիմոնականութիւն, 515): Ի ժողովն Փիաշենցայի ոչնչացոյց նա զձեռնադրութիւնս ոստիսն իւրոյ Պուիրերտոսի եպիսկոպոսին Հուաւենայի, բայց զայնուսիկ ձեռնադրութիւնս միայն՝ զորս արարեալ էր Պուիրերտոս յեարանադրելոցն իւրոյ ի Քրիզոբէ Այսու գործով սխալեցաւ պապն սխալումն մեծ յոյժ, որովհետև կարծիս ետ ասելոյ՝ թէ վաւերականութիւն խորհրդոց կախեալ իցէ զեկեղեցական ինչ պատժոյ: Իննսովկենտիս Բ մեղսակից իւր արար զերկրորդ ժողովն Լատերանու, հրատարակելով ի նմին զթիւր կարծիան, որով առ ոչինչ զրէ զձեռնադրութիւնս եպիսկոպոսացն ունողաց զկողմն պապին Անակղետոսի ընտրելոյ ի մեծագոյն մասնէ կարգինաւոց և վաղամեռիկ եղելոյ: Այս այնպիսի իմն գործ էր եկեղեցական ինքնօրինութեան, և միանգամայն հերետիկոսա-

կամ կարծիր, որ չկարէ արդարանալ և ոչ իսկ այնու պատճառ  
 ւակաւ՝ որով ծածկեալ լինէին առաջինքն կրկնեալ ձեռնա-  
 դրու թիւնք, այսինքն է որպէս թէ զզուանքն ի սխմանահատու թե-  
 նէ, և կեղեցին Հռափնայ ոչ ինչ միտ դնելով յանդիմանու թեանց  
 իւրոցն իսկ անդամաց՝ անդադար անկանէր ի նոյն մզուրտ թիւն և  
 և շիտթէր գետից՝ հաստապելոց մինչև զայն աստիճան՝ զի ի  
 հնումն և կեղեցւոյ անշուշտ անասնելի իմն համարելի լինէր  
 այն և արժանի վազընդգիտից զարմանոց ։

## ԺԳ

Խարդախանք պատմութեան : — Մարտինոս Լեհա-  
 ցի : — Պապական (Թոլմայ) 1.ուր քոյի ։

Իբրև էանց սակաւ թնչ ժամանակ զլինք Թարխանի, մերձ ի  
 վախճան ՓՊ դարուն հարկաւ որ թուեցան նորանոր գրաստեք  
 ի կարգի պատմական աւանդից՝ ի ջատագորտութիւն պապական  
 գրութեան ։

Արափհան հակասութիւնքն երևեալք իմէջ վաղեմի պատ-  
 մական աղբիւրաց և նորոյ հասարման օրինաց Պրատիանոսի և  
 կոնկակաց և վճոց պապիցն ակնյայտի էին ամենայն սրա-  
 տեհից, արժան զատեցան առաջի առնել զպատմութիւնս պա-  
 պիցն և կարեւրաց այնու եղանակաւ՝ զի հակասութիւնքն այ-  
 նորիկ անհետացին, յովանդակութիւն օրէնսդրութեանցն առ-  
 ցէ զպատմական հաստատութիւն ։ Զպարտաւորութիւն յան-  
 ձին կալաւ, ըստ հրամանին Աղեմայ և, Պամինիկեան կրօնա ու-  
 րին Մարտինոս ի Թրոփիա քաղաքէ, ապա Լեհացի հա-  
 մարեալ՝ սակա կարգեալ գորոյն յամին 1278 ի Նիկիոյոյսէ  
 Գ. արքեպիսկոպոս Անեմա քաղաքին Լեհաստանի \*) ։ էր նա

(\*) Նա թե՛ն է յեղօգտեան և առ ժող է յեանոց ամեն «Յրա  
 Մարթին փոստ պարտի» ։ զորոյ զարտադրութեան զարտադրութեան պա-  
 պից և իտալերոց (չորիս և այլոց ի Թարխան լինին Բանս) իւրիս

ապաշխարողահայր և մատրանայեա պապին, և ամենայն իրաւարանից և կանոնադիտաց պարտք ի վերայ եղեալ էին ի պապէն՝ յարեւ զղերս նորա ընդ պուածոցն Պրատիանտի և ընդ կոնգակագրոց, իսկ աստուածարանք պարտական էին կցել զայն ի պատմութիւնն Բատուածաշունչ զրոց յօրինեալ ի Պետրոսէ Վոմեստորէ \*): Քան զամենայն պատմական գրուածս միջին դարուց առաւել տարածեցաւ մատենան այն, և միանգամայն առաւել քան զայլն զամենեկին լի էր առասպելոցք և սրտովեամբք: Յօղովք ի մտացածին բանիցն եղեցոց ի նմին, արդիւնք են պակասութեան պատմական իմաստից և զերահաւան հետամտութեան հրաշալի զիպաց՝ որ յաւուրցն անտի երեւելոց մուրացիկ կրօնաւորացն տիրապետէր յԱրուպա: Ի մատենին յայնմիկ նկարագիր պապիցն ճշգրտութիւնայնիս ինչ էր՝ որպիսի և ի հոսովեական մատենին պապից, բայց ի սաստկացոյն աստիճանի, ցուցանելով զնոսին լինել հրամանատարս և օրէնսդիրս համօրէն Ակեղեցոց, ստացոյ բանք Իսիդորի և Պրատիանտի դասնէին ի նմին զհաստատութիւն, և ի պատմութիւնս նորա պապքն զեր ի վերայ կոչին կայսերաց: Յայտնապէս երևի ի մատենին յայնմիկ՝ թէ ո՛րքան յետամնաց էր ի ժամանակի անդ արուեստն պատմագրութեան: Քանզի ընդ

մանեալ է ի վերս ոչոքսորացն հերետիկ Պապանդ իմ Պալիէնց. ի երևա ե յերետն յառելիս: յանձնունի առասպելան Սարգիստի ոչ ինչ նառաչ պլանդուի շքեհասութիւնս:

(\*) Իսկուն է Պետրոս «կերտն»: Գաղղիտրէն «Լք—Մանթէր» ի պարճառս Բազիլուսայ ընթերցասիրտութեանն՝ որով իբրև կերտու այսինն վերծանելու էր զկերս Բազիլուս: Վերադեռանչ լինու առաջածրանախան դղերոյնի վարելու, և ապա միայնացել է լինու առերեւ՝ լինեմանի յամն 4178 իմ 4185: Գրեալ է սորա զՊարտիս ինն իրոց որքոց հանդերձ Բազադրութեմիս յերկուս մեծահարոյ մտքեմս:

ազդեցութեամբ անինչ կրօնաւորաց, մանաւանդ Վոսինիկեանցրն, որք անսահմանորար հաւատային հրաշից, և զամենայն ջան ի գործ արկանէին առ ի ցուցանել՝ թէ պապական զրութիւնն զոյր և ի նախնի ժամանակս և ի վաղնի հանգամանս, — պատմական տեղեկութիւնք ի ՃԿ դարէ մինչև ց ՃԵ. մթաղնեալ էին յոյժ, և խանարհեալ ի ցածազոյն ևս աստիճան՝ քան թէ յորում կայինն արդէն ի ՃԿ դարու : Այս իսկ միայն՝ զի գործ մի այնպիսի անպէտ ամենին և ծայր ի ծայր լցեալ ստութեամբք, որպիսի էր աշխատութիւն Մարտինոսի, կարաց ունել զյարգ առաջի հասարակաց և զայն քան ազդեցութիւն, անժխտելի վկայութիւն է սպառսպուռ կործանելոյ արուեստին պատմադրութեան :

Զնոյնպիսի կէտ նպատակի առաջի իւր եղեալ էր և Վոսինիկեանն Պողոտէոս կամ Թորոմէոյ Լուքբացի՝ գրագէտ պապական աթոռոյն, ձեռն արկեալ դրոյվ ի դրել զպատմութիւն կայսերաց և Ակեղեցւոյ, համեմատ Գրիգորեանն դրութեան պապից. զոր և Յովհաննէս ԻԲ կարգեաց յամին 1518 եպիսկոպոս Թորշկլոյի : Ակեղեցական պատմութիւն նորա, որ հասանէ ցամն 1515. հարստագոյն է բովանդակութեամբ և ճշտագոյն քան զվտիտ գծագիրս Մարտինոսի, և շարագրեալ է առաւելագոյն հանճարով և ճարտարութեամբ : Զնոյն է ասել և զշարայարութեանէն զոր արար նա սկսելոյն ի Թովմայէ գրուածոյ յայազրս քաղաքական տեղութեան 317), և զտարեգրութեանցն՝ որք սկսանին յամէն 1062 : Կլիսաւոր աշխատասիրութիւն Թուլմէի նման է մեկնութեան կանոնագրոցն Գրատիանոսի կամ թէ սուտանուն Իսիդորի՝ որում տեղեակ է նա միայն ի Գրատիանոսէ : Յառաջին երկոտասան դարս աշխատութիւն նորա ողջոյն առաւելապէս յայն ձգի՝ զի ի պատմական ինչ կազակցութիւն զբնեցին մտայածին և ստացոյ ասացուածքն Իսիդորի և Գրատիանոսի, և հաւարումն կանգակապրոց : Օրինակ իմն, ի ցուցանել թէ օրպէս վարի նա ընդ եկեղեցական պատմութեան՝ շատ լիցի յիշատակել, զի ըստ նորա նկարագրութեանն 518) պապն Վիկտիւս անվկանդ և անխերի մեծ վա-

յիչու թեամբ արար ի Վ. Պօլիս զՏնեցերորդ ժողովն տիեզե-  
րական, յորում կայսրն Յուստիանոս անապիւս պատուախ-  
րութեամբ և մեծարանօք ներգործէր ընդ նմին Համաժողո-  
թեամբ իբրև զմի այր : Այսպէս ահա շարագրեալ լինէր պատ-  
մութիւն ի պապական պաշտօնան անդ : Աւստանձինն կրեւին  
ի նմա սկզբունք և ձեռնկրիցու թիւնք Հոսիւնց ի Բերապետեալ ի  
վերայ Քերմանտեան կայսերութեան, և ի վերայ ընտրութեան  
թագաւորաց և կայսերաց այնպէս՝ որպէս թէ Հիմնեալ իցին ի-  
վերայ պատմական աւանդից :

Յայնժամ ապա առ սահաւ սահաւ էանց պապութիւնն ի  
ձեռս Քաղղիացւոց : Նուիրակութիւնն պապական՝ անձանօթն  
նախնական եկեղեցւոյ, որ ի ձեռն խորգախեալ կանոնին Պրա-  
տիանոսին գտեալ էր ի թիւս եկեղեցական բարեկարգութեանց,  
և որով կարողացան պապքն Բերապետեալ ի վերայ տեղական  
եկեղեցեաց և Հարկս ի վերայ գնել նոցին, ի մեծ բարգաւաճա-  
նրս կայր 519) : Իբրև ընաջինջ բարձին պապքն ի թագաւո-  
րութենէն Ստորին Իտալիոյ զտահմն Շլավաֆենեանց, փոխա-  
դրեցին յԻտալիա զՔաղղիական ցեղապետութիւն և զազգեցու-  
թիւն Քաղղիացւոց : Քաշնակցութեամբքն եղելովք ընդ Նոր-  
մանտացիս չկարէր արդարանալ ըստ իրաւանց կարգադրու թիւ-  
նըն այն : Հարկ ուրեմն էր հնարել այլ իմն պատճառս : Սմին  
իրի Թոլոմոյ աւանդէ մեզ՝ թէ պապք զթագաւորութիւնն  
զայն ընկալան ի Վոստանդիանոսէ, և կարող են անտեսել զայն  
ամենայն ազատութեամբ 520) : Այսու օրինակաւ բովանդակ  
եկեղեցական պատմութիւն նորին այնպէս յօրինեալ է՝ որպէս  
և Հարկաւոր էր պաշտօնան և Պոմինիկեանց յամին 1515 :  
Սկիզբն արարեալ այսու բանիւք, «Յիսուս Քրիստոս եղև ա-  
ռաջին պապ», այնուհետև ոչ ևս խոտորի նա ի ծրագրէն  
իւրմէ, իբր զև երկրորդ պապ եղև Պետրոս, և նորա աշակերտ-  
քն հիմնեցին զամենայն զիսաւոր եկեղեցիս յԻտալիա և ի  
Քաղղիա :

Նա ինքն Թոլոմոյ գտաւ առաջին 521) ի տարածանել վա-  
սըն օգտի պապականութեան զառասպելն յաղագօ կարգելոյ

Պրիգորի պապին և զկայսրնտիրս յամին 995 : և և կր գործն այն յաւելուած ի հնարսն նիւթեայս արպէն յԼոյէքսանդրէ Գ, և յԻննովկենտիսսէ Կ, յազապս փոխարեութեան իրաւանց յանդի Իննովկենտիսս յայտ արար՝ թէ պապքն առին ի Յունաց զկայսերականն իշխանութիւն, և ետուն Փրանկաց, որպէս զի ունկցին այնու զատաւելագոյն ազգեցութիւն ի վերայ նորին 522) : Ըսէ Թոլոմէոս՝ թէ իձեռն Վարդապի ըստ հրաւանի Եկեղեցոյ վախճան ևզաւ Յունական թագաւորութեան 525) : Վսնիպիակիսս Է հասոյց զարքայն Վերմանացոց Ելբերոսս յայն աստիճան, զի նա հոնոյիսաւ որ եղանակաւ խոստովանեցաւ՝ որպէս թէ կայսերութիւնն յիրաւի փոխադրեալ է ի ձեռս իւր հրամանաւ պապից, և թէ նորա են որ տան թագաւորաց զիրաւունս ընտրութեան, և պարպեն արքայից և կայսերաց իշխանութիւն «աշխարհական սուսերի», 526) : Յաւելան ի նոյն և այլ ևս նորանոր պահանջմունք և ձեռներիցութիւնք, որք ի գործ եզան նախ ի Վղանոյ և, պոյնք որպէս թէ պապն ժառանգորդ է կայսերական կշխանութեան՝ յորժամ աթոռն զատարկանայ, և թէ ամենայն կայսր պարտի երգնուլ պապին զերգումն հաւատարմութեան և հպատակութեան : Չայսպիսի ձեռներիցութիւնս անքէն և անդ սկսաւ ի կիր արկանել Յովհաննէս ԻԲ ի հակառակութեան իւրում՝ ընդ կայսերն Լուդովիկոսի, և յառաջ ևս տարեալ զերան՝ վաղ ընդ փոյթ արար և զգործադրութիւն նոցին, յայտ արարեալ զի ի պատճառս դատարկանայ կայսերական գահուն՝ ինքն իբրև պապ պարտի ունել զսանձ տերութեանն 525) : ՉԳրատիանոս և զկոնդակագիրն ոչ ևս շատ համարէր այնուհետև պապական պալատն վասն հասանելոյ այնպիսի նպատակաց իւրոց. ուստի ի բաղմամբիւ դասս իրաւագիտացն և աստուածաբանից պալատականաց պապին, որպիսիք էին Թրիանթոյ և Եգիպտոս Սուլումնա, հարկ եղև յաւելուլ և զլոյտատական պատմագիրն զՄարտինոս և զԹոլոմէոս :

ԺԳ.

Խարդախանք պատմութեան Սպանիոյ: — Նախնական Եկեղեցին Սպանիոյ: — Գրիգոր Է, եւ բարձումն Մոզարարեան արարողութեան: — Փելալոյ Ովիլտացի եւ Ղուկաս Թուլեցի:

Պորմանց ինչ Եւրոպայ և տեղական եկեղեցեաց կարևոր թուեցան և այլ ևս առանձինն նորահնար ստայօղ գրուածք, որովք պատմութիւն նոցա փոփոխեցաւ ի շահ օգտի պապական դրութեան, և այս կատարեցաւ ի վերայ Սպանիոյ, և պատմական ստայօղութիւնք յայնմ մասին առաւել ևս գտին յաջողութիւն: Նախնի Եկեղեցին Սպանիոյ թէպէտ և ոչ մերժէր զնախապատուութիւն Հռովմէական աթոռոյն 526), սակայն ինքնիշխան էր և անկախ ի նմանէ: Ժողովքն կանոնաւորապէս գումարեալք յայնմ Եկեղեցւոյ՝ դատ առնէին եպիսկոպոսաց և մեթարապօլտաց, և ի լինել պիտոյից՝ ընդդէմ կային պապիցն ի խնդիրս վարդապետութեան Հաւատոյ, որպէս արար, օրինակ իմն, Ժողովն Տոլեդոյ յամին 688 ընդդէմ Բենեդիկտոսի պապին, արկեալ զթուղթ նորա ընդ խիստ քննութեամբ, և զնա ինքն պատարակեալ՝ փոխանակ զի անամութարար ընդդիմաբանէր Հարց Եկեղեցւոյ: Յաւուրց անտի արչաւանացն Արարացւոց մինչև ցերս ԺՆ դարուն՝ Եկեղեցին Սպանիոյ ինքնազլուխ էր 527): Դուն ուրեք ազդէր ի նա Հռովմ, և այն ընդ ժամանակս ժամանակս և եթ: Արքեպիսկոպոսն Տիէկոյ Վելփրէս՝ նախանձայոյղ փաստարան Գրիգորեան դրութեանն, անդէն իսկ իսկզբան ԺԲ դարուն վկայէ և ստէ, «Յայնժամ (ի ԺՆ դարուն) և ոչ մի որ յեպիսկոպոսացն Սպանիոյ ոչ հպատակէր և ոչ հարկս հարկանէր Եկեղեցւոյն Հռովմայ: Եկեղեցին սպանիական զհետ երթայր օրինացն Տոլեդոնի և ոչ թէ Հռովմայ», 528):

Այս հանգամանք իրաց յեղափոխեցան յօգուտ Հռովմայ ի ձեռն միանձանց արքայարանին Քլիւնեայ, որք տիրեցին մե-

նաստանաց և եպիսկոպոսական աթոռոց, ևս և ի ձեռն արքայիցն Գաղղիոյ և քաղաքականութեան պլոց ոմանց լատաւորաց, որ կարօտէին օգնականութեան Հռովմայ: Գրիգոր է՝ ասէր՝ թէ Սպանիա ի վաղնջուց ժամանակաց հետէ սեպհական էր պապին. զնոյն կարծէր թէ կարող իցէ ասել և վասն աշխարհին Մաճասաց և Ռուսաստանի և վասն Փրովանսի և Սաքսոնիոյ: Եւ թէպէտ այնու ոչինչ աւելի եղիտ յաջողութիւն, սակայն կարողացաւ յամին 1083 բառնալ զՄոզարաբեան արարողութիւնս \*) աստուածպաշտութեան և մեծանել զՏոմէականս: Ջեպիսկոպոսութիւնն Տոլեդոնի կալա Քաղղիացի ոմն կրօնաւոր Քլինեան, և ընդ ամն հարիւր և յիսուն մինչև ցմջն ժԹ դարուն մեծաւ ջանիւ աշխատ եղն ի նուաճիլ զԵկեղեցին Սպանիոյ: Եւ այս ի գործ եղան մտացածին պատմութիւնք՝ զորս հնարեաց նախ եպիսկոպոսն Փէլայոյ Ովիէտացի, և ապա եպիսկոպոսն Ղուկաս Թուլեցի: Եւ աջինն խարդախեաց զժամանակագրութիւն Սամիրրոյի (329), հնարեաց զդեսպանութիւն Եկեղեցւոյն Սպանիացւոց առ պապն Յովհաննէս Ը, ևս և զկոնդակս այնր պապին, և զժողով մի գումարեալ ըստ նորա հրամանին յՈվիէտոյ և այլն: Ստայօղ պատմութիւնքն Ղուկայ ընդարձակագոյնք են և առաւել հնաստեսութեամբ զրեպք, և նա չարաչար խարդախեաց զվաղնջուց պատմութիւնն Սպանիոյ: Որպէս զի ցուցցէ թէ սպանիական Եկեղեցի արդէն ի նախնի ժամանակս բոլորովն կախեալ կայր

(\*) «Մոզարաբս», իս՛ «Մոզարաբացեա», ի ոչինն Մառբիդանացինն գրքեստորնեոյ» բնութեալս ի Սպանիա. սաստի՛ և արարողութիւնն է զըրեստանիցն այնոցն ի խորհեալ է Ջ դարուն է Լեոնդրէ արտեպիսկոպոսն և լրացողեալս յիսերորէ Սեփիւնացոյ՝ անասանցան «Մոզարաբեան», և էին յարգարեալս յարեւելեան և ի Ղաղղիական արարողութեանց, և սիբելէ՛ Սպանիացոց ի բրև ազգայնն ստանդարտութեան: Բայց պապն Հռովմայ բռնացեալ՝ զիստանիցնն զնոնն ընդ Հռովմական դարս արարողութեանց:

զէնովմէ, մտարերեաց ասել ՚ թէ արքայիսկոպոսն Լէանգրոս էր նուիրակ ոմն պապին, և խարզախեաց զողջոյն իսկ զպատմութիւն Իսիդորի, որ ի զիրս նորա նշանակի իրրև կարգեալ ի պապէն Քրիզորէ ի պաշտօն պապական փոխանորդի 540) : Պատճառս աղետիցն Սպանիոյ և կործանման թագաւորութեանն Պոթացւոց դնէ Ղուկաս զստայօզ պատմութիւն թագաւորի ուրումն Ղիթազա կոչեցելոյ զՏնարեալն յիւրմէ, որ իրր թէ արգելեալ իցէ ազգին Սպանիացւոց չՏնազանդել պապին՝ ընդ սպառնալիօք մահապարտութեան 551) :

ԺԵ.

## ՍՈՒՏԱՆՈՒՆՆ ԿԻՒՐԵՂ

Առաջարկութիւնք Թորքէմատայի : — Մեկուն կանոս, Բելլարմինոս ևւ այլք :

Անգաթին իսկզբաննէ ԺՊ դարուն յաստուածարանութիւնս պատուով ի մէջ բերէին վկայութիւնս ի սուտանուն Վիւրդէ, և ջանային ազատել յամենայն կասկածանաց զմտացածին կանոսն ժողովականս՝ երաշխաւորութեամբ բանից Թովմայի Ազուինացւոյ : Արժանի է զիտողութեան՝ զի յաւուրցն երևելոյ մատենին Թրիոնֆոյի (4320) մինչև ցամն 4450 ոչ երևեցաւ և ոչ մի մատեան՝ յորում գտանէրնկարագրութիւն պապական դրութեանն . բայց յորժամ հրատարակեցաւ հակառակութիւն ընդ մէջ Բասիլեան ժողովոյն և պապին Եւզինէոսի, կարգինալն Թորքէմատա և այլք ոմանք սկսան մատենագրել : Վրուածն Թորքէմատայի, որ մինչև ցաւուրս Բելլարմինոսի համարեալ էր հիմնական ջատագովութիւն պապական դրութեան, հաստատեալ կայ բոլորովին ի վերայ կեղծ հնարից սուտանունն Իսիդորի, և մանաւանդ սուտանունն Վիւրդէ : « 2Ճանաչել զՏեղինակութիւնն Թովմայի, ասէր կարգինայն, տակաւին ևս կարելի է . բայց ոչ հաւատալ ի վկայութիւնն

Վիւրղի՝ անտանելի է : Պապն անտալ է . իսկ եպիսկոպոսական իշխանութիւնն կամ ի պապէն տուեալ լինի և կամ ինմանէ յառաջ գայ : Աճխոք ժողովոց առանց նորա հաւանութեանն անվաւերք են ,, 552) :

Թորքէմատա զայտոսիկ զգլխաւոր առաջարկութիւնս իւր ապացուցանէր մտացածին վկայութեամբք Վղեմայ, Թողովոյն Քաղկեդոնի, Վիւրղի, և այլովք մտացածին կամ խարդախեալ վկայութեամբք : Չնոյն շաւիղս կալան յաւուրնն Լեոնի Թ և Վղեմայ Է կարդինալն Թովմաս Տէվլոյ կամ Վայետանոս և Եաքոպացի 555) : Մելքոն Սանոս աներկմիտ հաստատէր զըմանս իւր՝ երաշխաւորութեամբն Թովմայի՝ ի վերայ վկայութեանց Վիւրղի, որպէս և Բելլարմինոս և որք զկնի նորա եկին Եզուիթքըն : Միայն թէ Գոմինիկեանքն՝ Նիկոլայի, Լըփիէն, Քէթիֆ և Էքարտ յայտնապէս խոստովանեցան՝ զի վարժապետն իւրեանց Թովմաս խաբեալ է, և թէ նորա ձեռամբն ի պատիրս ըմբռնեալք են և հետևողք նորին աստուածարանք և կանոնադէտք . բայց Եզուիթքըն, ևս և այրն զիտնական Լապպէ \*), նմին հակառակ՝ պատրաստ էին մանաւանդ ի բաց թողուլ զԻսիդորեան կոնդակագիրսն, սակայն հաստատութեամբ եղեալ էին ի մտի պինդ ունել զՎիւրղէ 554) : Յետալիս տակաւին ևս յամին 1715 Անտրուցցի վարժապետ Պոլոնիա քաղաքի ի վիճարանական զիրս իւր ընդդէմ Գոսիթէոսի պատրիարքին ի մէջ բերէ զստայօզ վկայութիւնսն Վիւրղի իբրև զանհերքելի ապացոյցս 555) :

(\*) Որև « Հայրն Լապպէ,՝ եղս-ելն Գաղղիացի՝ վախճանեալ յամին 1667 է Փարէլ : Սորտ շարափրեալ է 75 հարտա ճարտնէց, յորտ անուանի է « Հաւատաւն ժողովոց ,, 118 հարտա :

## ԺԶ .

Արդևումներ: — Վնասք արդևանաց: — Պատճառք ատելութեան մարդկան ընդդէմ պապից: — Պետրոս Կանտոր:

Ի վերայ այս ամենայն Հնարից՝ յորոց վերայ յենոյր աշխարհական իշխանութիւն պապին և երևակայեալ անսխալութիւն նորա՝ յաւելան և արգելանք \*), զորս բազում անգամ դնէին պապքն ի վերայ ամբողջ աշխարհաց:

Ասէին՝ թէ փոխանորդն Աստուծոյ ի վերայ երկրի կարող է նոյնպէս գնալ՝ որպէս ինքն Աստուած, որ ի պատճառս սակաւ մեղաւորաց պատուհասէ ընդ նոսին և զանմեղս, և ո՞ կարիցէ ընդդէմ՝ կալ նմա: Աստուած է որ առաջնորդէ պապին. ուստի և զգործան պապական ոչ է Հնար չափել սովորական չափով մարդկային արդարութեան: Եւ այսպէս եղեալ միանգամ՝ թէ պապն երկնային ազդեցութեամբ վարի յամենայնի, եղբակացուցանէին՝ թէ անսխալ է նա. և զնորին հակառակն՝ թէ քանզի անսխալ է՝ յերկնից առնու զազգումն: Այսու ամենայնիւ պապքն յայտ արարին ի նոր կանոնադրութեան (ի վնցերորդ գիրս վճռոց՝) թէ արդևանքն վնասակար հետեանս ունին վասն բարեպաշտութեան ժողովրդոց. քանզի նորօք տարածանի ամբարշտութիւն, ի վեր երևին հերետիկոսութիւնք, և պատրաստին անթիւ վտանգք հոգւոց, և Եկեղեցին կորուսանէ շնորհքն որք անկ են նմա 556): Եւ սակայն յետ այս-

(\*) Պարէ՛՛ ի վնցումն՝ որով ի վերջինս իմ ժառանգաւորս՝ որքն յնշխանութեան իտարբելոյ զպարտա պաշտաման իւրոյ, և աշխարհականս՝ արգելանին ի հաշտարբելոյ իտարբոց մարտիրոսբելոց է նմանէ: Լարինահայս՝ սմանս միւրոյ ժամանակն յայս միտա ևս վարին զվնցումն յնշխանոց արգելութեանն զբառ «խախտումն», որով և զանկումն ընդ արգելանս՝ անտանեն «խախտումն»:

պիսի խոստովանութեանց ևս պապքն յաճախազոյնս ի գործ գնէին զարդեանս, և արգելանքն եղեալք ի վերայ Գերմանիոյ ի ժամանակս բազմամեայ հակառակութեանց նորին ընդդէմ կայսեր Լուդովիկոսի Պաւարիացոյ առաւել ևս յերկարածից եղն քան զառաջինն: Թուէր իմն այնպէս՝ թէ կամիցին արմատաքի խլել ի սրտից մարդկան զգաղափար իրաւանց քրիստոնէի, և ուսուցանել նոցա՝ զի հայեացին յինքեանս իբրև ի հօտ ոչխարաց պապին, զուրկ և թափուր ի կամեցողութենէ. կամ թէ, որպէս ասէր Ալուարոյ Փէլայոյ, «Գիմել յոխակալութեանէ պապին առ զթութիւն նորա, թէպէտ և զթութիւնն այն բազում անգամ զյացեալ լինէր», : Այսպիսի գնացք պապից պէս պէս ազդեցութիւնս առնէին ըստ պէսպիսութեան ազգաց՝ մինչդեռ ոմանք ևս քան զևս գայթակղէին ընդ այնպիսի խրատութիւնս պապից, և այնպէս արկեալ լինէր սերմն որ ետ զպտուղ իւր յետ հարիւր և յիսուն ամաց, այլ առաւել ևս հաստատէին յայն կարծիս՝ թէ պապութիւնն ըստ օրինակի աստուածութեան զօրութիւն իմն է լի խորհրդականութեամբ, զորմէ չէ արժան խելամտութիւնս առնել թէ ճանապարհք նորա անքննելի են, բայց նա զլոյս իւր ընդունի ի վերուստ, և զործէ ըստ աստուածային ազդեցութեան. ուստի և միք պարտիմք կուրօրէն վտասհել ի նա :

Որչափ և անտեղի և այլանդակ իմն թութիցի այս, սակայն ստուգութիւն իմն է պատմական՝ թէ որքան առաւել կասկածելի և ատելի սկսան լինել գնացք պապիցն բացառութեամբք, արտօնութեամբք, ներողութեամբք և սլոյվք այնպիսեօք, և որքան առաւել տատանեալ շարժէր Եկեղեցի, նոյնքան ևս առաւել տեսնէին արք բարեպարիշտք զկարօտութիւն խորշկոյ յերկրայութեանց իրեանց, և ապաւինելոյ ընդ յարկաւ անսխալութեան պապին: Ըստ քրիստոնէական պարզամիտ բնկգրանց՝ պարտ էր նոցա մերժել զայն և այլ ինչ բազում յեկեղեցւոջ՝ իբրև զանկարգութիւնս. բայց յայնժամ ընդդէմ ելանէր բանից նոցա երևակայութիւնն պինդ կալեալ ի մանկութենէ՝ թէ պապն է տէր և հրամանատար Եկեղեցւոյ, որում

ոչ որ իշխէ հակառակ կալ, և յորմէ ոչ որ կարող է պահանջել զհամար, Այս երևակայութիւն յայտնապէս երևի արդէն ի վախճան ԹԲ գարուն ի բանն Պետրոսի Կանտորի, որ ասէ՝ թէ արդարև չիք կասկած երկկողի թէ պապական բազաութիւնքն մի պատճառեցն զբաժանումն հասարակաց ի հոգևորական թագաւորութենէն Հռովմայ. քանզի անհնար է արգարացուցանել զայդպիսի գնացս Հռովմայ բանիք սուրբ զրոցասակայն ցանկալն իսկ պախարակել զգործս պապին՝ սեղանակապտութիւն լինի: Աստուած ոչ թողու հռովմական Եկեղեցւոյն անկանել ի մտրութիւն. ապա ուրեմն պարտ է խոտովանել՝ թէ պապն առնէ զայդոսիկ ըստ ազդեցութեան Հոգւոյն սրբոյ, որպէս զի ի հեռանալ ամենայն իշխանաւորաց Եկեղեցւոյ՝ մին միայն յետ ամենեցուն թագաւորեացէ 357):

ԺԷ.

Հերձուածն հռովմէական Եկեղեցւոյ: — Գաղղիացիք և Իտալիացիք: — Եկեղեցին Գերմանիոյ: — Հակառակութիւնք կուսակցութեանց: — Շփոթք և անըստուգութիւնք: — Կարնորութիւն տիեզերական Ժողովոյ: — Ժողովն Փիլզայի: — Թերութիւն նորին:

Բայց ի ԺԵ գարուն Եհաս Եկեղեցին յայնպիսի վիճակ՝ զի հարկաւ սկսան անկանել ի վարանս տարակուսի նորին իսկ նախանձաւորացոյն պաշտօնեացք պապական զրութեան:

Ի պատճառս բազմամեայ բաժանման Եկեղեցեաց, որ ընդ ամն քառասուն և աւելի ընծայէ աշխարհի գնոր տեսարան երկուց պապից և երկուց պապատանց, որք թշնամացեալ ընդ միմեանս՝ նզովս արձակէին ընդդէմ իրերաց, Գաղղիացիքն որ յԱւենիոն և Իտալիացիք, — սասանեցաւ հեղինակութիւնն որ անյաղթելի իմն համարեալ էր զեռ և ս յաւուրս վերջին պապից յամին իբր 1576. քանզի պարտութիւնն Անխիականի Ը ի սկզբան այնր գարու գրեթէ բոլորովին անհետացաւ ի

խշողութենէ մարդկան ի պատճառս յաղթութեանն զոր կալաւ յետոյ ուրեմն պապութիւնն ի վերայ Գերմանիոյ և ի վերայ Լուզովիկոսի կայսեր : Այլ և պարտութիւնն այն առաջին առաւել ծանօթ էր ի դպրոցս և ի զրուածս իրաւաբանիցն Գաղղիացւոց՝ քան թէ յԽտալական կենցաղաւարութեան : Ընդ երկար ժամանակ հոսեալ ընթանայր արիւն և սպաժոյժ ի վերաց անտի կայսերութեան և Գերմանական ազգային միութեան՝ զոր բացեալ էր ի նմա հարուածն անողորմելի քաղաքականութեան պապին : Եկեղեցին Գերմանիոյ բոլորովին եհան ի մտաց զսովորութիւնն համարելոյ զանձն իւր ամբողջական ինչ մարմին, բոլորովին մտացաւ՝ թէ լեալ իցեն երբէք Գերմանական Ժողովք ազգայինք : Փորձն առածին այնորիկ՝ թէ «Բաժանեա՛ զի տիրեսցես», նախ քան զամենայն կատարեցաւ ի վերայ Գերմանական Եկեղեցւոյ, և յաջողեաց :

Բաժանումն և հերձուած եղև պտուղն հակառակութեան երկուց ազգութեանց՝ առ ի ձեռս բերելոյ զպապութիւն : Իտալացիք դարձեալ կամէին առնուլ զայն, և Գաղղիացիք չըսային թոյլ լիլիոյ զայն ի ձեռաց իւրեանց :

Եւ այսպէս արեւմտեան աշխարհն յամեն 1578 մինչև ցամբն 1409 բաժանեցաւ յերկուս, և յամեն 1409 մինչև ցամբն 1415 յերիս հօտս : Ընդ անուամբ Աւրբանոսի Զ ընտրեցաւ Նեապոլսեցի ոմն 559) . և առաջին զուգնաբեայ փորձն վերանորոգութեան զոր արար նա՝ պատճառս ետ ծագելոյ հերձուածոցն : Իրբև ամբարձաւ նա յաստիճան պապական իշխանութեան, փութացաւ արկանել ընդ բանագրանք զայնոսիկ ի կարդինալաց՝ որք ամբաստանեալ էին ի սիմոնականութիւն . բայց սիմոնականութիւնն ի վաղուց հետէ եղեալ էր վասն հռովմեական պալատանն հաց հանապազորդ, և առանց այնր մեքենայն եկեղեցական կառավարութեան անշուշտ դազարէր, ապա և ջախջախէր իսպառ : Վարդինալքն և ս ըստ իւրեանց մտացն տեսութեան՝ լիովին ունէին իրաւունս յասելն՝ թէ անհնար է ինքեանց չառնել զսիմոնականութիւն : Այսորիկ ազգաւ անջատեցան նորա յԱւրբանոսէ, և ընտրեցին ինքեանց

պատշաճ զայր ոմն ըստ սրտի իւրեանց, այս ինքն է զԱղեմէս է : Թէ արդեօք Աւրբանոս էր ընտրեալն ըստ օրինաց, եթէ Աղեմէս, զայսմանէ ոչ որ զիտէր ինչ . այլ այս էր հաւատարին՝ զի յընտրութեան երկոցունցն ևս այնպիսի դէպք պատահեցին՝ որք անվաւեր գործէին զընտրութիւն նոցա : Փաստաբանք կողմանցըն երկոցուն ցուցանէին անհերքելի բանիք՝ թէ պայն ներհական կողման ոչ ունի իրաւունս վաւերական համարելոյ զընտրութիւնն իւր : Ի թիւս կուսակցութեանցն երկոցուն կային այնպիսի անձինք՝ որ յետ ժամանակաց դասեցան ի հոռովմէական Եկեղեցւոյ ի դաս սրբոց, իսկ յայնմ՝ ժամանակի նըզովս արձակէին ընդդէմ՝ իրերաց : Ի Գաղղիացւոց կողմն՝ էին Պետրոս Լիւքսեմպուրկեցի և Վինկենտիոս Ֆէրիէրեան\*), իսկ յԻտալացւոցն՝ Վատարինէ Սենացի \*\*) և Վատարինէ իշխանուհի Շուեաաց : Եւ էին ի ժամանակին յայնմիկ կրկին պալատք պապականք, և կրկին ժողովք կարդինալաց, և երկաբանչիւր պալատքն թերի առնուին զեկամուտս, և վասն այնորիկ եղեալ էր ի մտի մէն մի ի նոցանէ նպաստ լինել անդադար զօշարտութեան պապիցն, և անխոնջ աշխատութեամբ նարանոր հրնարս հնարէր ինչս ժողովելոյ, և զօրացուցանել զհնարսն և զմիջոցս որք արդէն եղեալ էին ի գործ :

Այն ամենայն պատժողական կարգադրութիւնք և ձեք բանադրանաց և նզովից հնարեալք ի պալատանէն յընթացս դարուց բազմաց, զորս ի գործ դնէին ի հակառակութիւնն ընդդէմ աշխարհական թագաւորաց, յայնժամ սկսան ի գործ դնել ի միջոց ի պապից անտի ընդդէմ՝ ոսոխին իւրոյ : Պայն

(\*) Վինկենտիոս Ֆերիէրեան իմ Ֆերիէր Վեհապետ տարւոյն Գաղղիէան Սպանիացի, ժամանեալ է Գաղղիս յամիս 4419, և դասեալ ընդ ««-ըն» Լապին եկեղեցւոյ յամիս 4455 :

(\*\*) Վատարինէ Սենացի իստան Գաղղիէան ճիւղաւոր և ուսումնաւոր, ժամանեալ յամիս 4580 :

միայն ի կուսակցութեանց անտի՝ զովարաննալ յիւրցն արբանեկաց իբրև փեսայ և տէր համօրէն Եկեղեցւոյ, իբրև փոխանորդ Աստուծոյ ի վերայ երկրի, իբրև անօխալ ուսուցիչ քրիստոնէութեան ի զիրս և ի քարոզութիւնս, ի միւսոյ կուսակցութենէն անուանեալ լինէր տարամերժեալ ուրացող, հերետիքապետ, զերաքրիստոս և կուռք արժանի յախտննական դատապարտութեան :

Անտանելի էին վասն ամենայն արբանեկաց պապական անսխալութեանն այն հանգամանք իրաց, և ամենեքեան իբրև յանել ուրիք Լարիւրինթոսի մոլորեալ շրջէին : Յնորք անսրխալութեան պապին հարկ առնէին նոցա ընդունել՝ թէ այս որ անձն՝ ինքն միայն իշխելով ի վերայ ամենայն ճշմարտութեանց, և որ տայցէ Եկեղեցւոյ անքոյթ մտաահութիւն ի հաւատս իւր, պարտի անշուշտ յայտնի լինել ամենեցուն : Եւ առ այս հարկ էր՝ զի զանձնէ ճշմարիտ պապին նոյնպէս սակաւ մնայցէ անստուգութիւն, որպէս և զգրոց սրբոց : Իսկ յայնմ ժամանակի ամենայն որ խմանայր ի խորս սրտի իւրոյ՝ թէ միայն պատահական իմն պարագայ, որպիսի էր բնակիչն լինել այսմ կամ այնմ աշխարհի, կացուցանէ զնա արբանեակ միում ի պապիցն՝ զորոյ զօրինաւորութենէն զայս և եթ զիտէր, զի միւս կէսն քրիստոնէից ի բաց մերժէ զնա : Սպանիացիք և Պաղղիացիք ճանաչէին զՊղեմէս Ե՛ կամ զԲենեդիկտոս ԺԳ՝ իսկ Անգղիացիք և Իտալացիք հաւատային յԱւրբանոս Զ՝ կամ ի Վոնիփակիոս Թ՛ :

Առաւել ևս ի վատթարութիւն գնայր գործն այսու՝ զի վաղեմի կարծիքն ստեպ ստեպ յեղյեղեալք ի պապից յաղագս անվաւերութեան խորհրդոց և ձեռնադրութեանցն կատարելոց արտաքոյ հազորդակցութեան ընդ պապին՝ կային մնային տակաւին առ բազումս ի մարդկանէ, մանաւանդ յԻտալիա . Ատենադպիր պապին Պօլուկկիոս Սալուտատոս 559) քաջ նկարողրէ զընդհանրականն զայն անստուգութիւն և զարհաւիրս խղճի յառաջ եկեալս ի բաժանմանէ անտի Եկեղեցւոյ : Եւ քանզի ինքն պապական էր, ի վերայ բերէ զայսպիսի ինչ՝ թէ

որովհետև ամենայն եկեղեցական իշխանութիւն յառաջ գայ ի պապէն, իսկ պապն ընտրեալ անկանոն եղանակաւ՝ ինքն իսկ ոչ ունի իշխանութիւն, ուստի և բաշխել զայն ոչ կարէ, վասն այնորիկ ամենեքեան որք ձեռնադրեալ են ի ժամանակէ մահուն Գրիգորի ԺԱ, եպիսկոպոսունք և քահանայք՝ ոչ կարեն կատարել զխորհուրդս : Սմին իրի, ասէ Աղուկկիոս, յորժամ հաւատացեալ որ ընդունի զհարորդութիւն սրբազործեալ ի քահանայէ ձեռնադրելոյ ի հերձուածի անդ, երկրպագու է կոոց : Եւ ահա յայս հանգամանս գտանէր յայնժամ արեմըտեան Եկեղեցի : Բայց ըստ յաջողակ իմն բաղդի՝ ի Գաղղիա, յԱնզղիա, ի Գերմանիա և ի Սպանիա այլազգ հայէին ի վաւերականութիւն ձեռնադրութեանց և խորհրդոց, և ոչ որպէս յԻտալիա և ի պապական պալատանն :

Արք միանգամ ստացեալ էին զառանձին տեղեկութիւն և զհմտութիւն կարգաց նախնի Եկեղեցւոյ՝ ի միտ առին զի պատճառք բովանդակ շիտթիցն և տարակուսանաց, որք յամս երեսուն չգտանէին հնարս ելից, է Գրիգորեան դրութիւնն : Սկսան ուժգին յարձակմամբ դիմել առ եպիսկոպոսականն զըրութիւն՝ որչափ մարմէրն տակաւին ճանաչել զայն ի ներքոյ ահագին աւերակաց խորդախութեանցն և մթութեանց տարածելոց յայնժամ յեկեղեցական պատմութեան : Ի միտ առնուին՝ թէ ի նախնումն դրութեան Եկեղեցւոյ անհնարին իմն էր նմա յայնքան անարգութիւն և ի կործանումն անկանել : Գամ քան զգամ առաւել ևս ամրապնդեալ լինէր այս հաւանութիւն մտաց՝ թէ տիեզերական Ժողովն կարող է լինել միմիայն հնարք ոչ միայն վերականգնելոյ զմիութիւն Եկեղեցւոյ, այլ և սահման դնելոյ պապական բռնակալութեան : Գերմանացիքն Հենրիկոս Լանկենշթէյն և Նիկողայոս Աուսա, Գաղղիացիքն Տ'Ա յի, Գերսոն և Քլէմանթ, Իտալացիքն Ծապարէլա, Սպանիացիքն Էպրոպար և Յովհաննէս Սեզովիացի ի վախճան ԺԻ դարուն և ի սկիզբն հնգետասաներորդին միաբանեցին զրեթէ ամենեքեան յայս բան՝ թէ Եկեղեցին պարտի յոտն կալ, շղթայքն եղեալք ի վերայ նորին ի ձեռն կառա-

վարութեան պաշտականաց պարտին խորտակել, և հարկ ի վերայ կայ վերանորոգել ղՆկեղեցի թէ ըստ մասանցն և թէ բոլորովին : Ոչ սակաւ ժամանակ էր յորմէ հետէ ամենայն արք երևելիք յՆկեղեցւոյ իմաստութեամբ և զիտութեամբ՝ բողոք կալան զի հաստատուն պահեսցին իրաւունք Նկեղեցւոյ և ազատ ժողովոց ընդդէմ պապական իշխանութեան : Այլ և ձայնք բարբառոյ այնոցիկ՝ որք ի սարսաղելի անշքութիւնս և յանկարգութիւնս հռովմեական աթոռոյն հայէին իրրև յանհրաժեշտ ինչ, նաև այն ձայնք ասեմ՝ սկսան բարձրանալ, թէ և յանօգուտս . զի հասարակացն կարծիք միշտ կարևոր ձանաչէին զգոյտութիւն պապական աթոռոյն, թէպէտ և խոստովանէին՝ թէ հարկ ի վերայ կայ վաղ ընդ փոյթ մարբաղարգել զայն և չափաւորել :

Առաջին փորձն զուճարելոյ ըստ արժանւոյն ժողով մի ազատական եղիտ զյաջողութիւն : Փոխանակ զուճարելոցն յընթացս երկոց դարուց առ երևոյթ ժողովոց, յորս եպիսկոպոսունքն զային միայն առ ի լսել զվճիռս պապից, և ապա տանել զնոսին ի տունս իւրեանց, յամին 1409 զուճարեցաւ ի Փիզա քաղաքի ժողով յՆկեղեցեաց համօրէն Եւրոպայ, յորում կարելի եղև յայտնապէս խօսել, և առանց բռնազօսութեան քուէարկութեան : Երգէն նշանաւոր իմն թուեցաւ յաչս մարդկան ժամանակին՝ զի ժողովն այն փոխեաց երկուս պապս, զԳրիգոր ԺԲ և զԲենեդիկտոս ԺԳ, և ընտրեաց զԱղեքսանդր Ե, բայց այնու և սպառեցաւ զօրութիւն ժողովոյն . քանզի միայն առաջնիկայութիւն պապին, որ ի ժողովոյ անտի իսկ ընտրեալ էր, — և անձնանուէր կարգինալաց նորա՝ ոչ ևս թողլ ետ մտարերել ի բարեկարգել ղՆկեղեցի, իսկ վերանորոգութիւնքն խոստացեալք յԱղեքսանդրէ իրք էին աննշանք : Եւ քանզի միւս երկոքին պապքն ոչ հնազանդեցան վճոց ժողովոյն, եղևն այնուհետև երկք զլուխք յՆկեղեցւոյ, որպէս երբեմն յամին 1403 . միայն թէ Հօսան պապին ընտրելոյ ի ժողովոյ անտի կարի առաւել բազմաթիւ էր քան զայլոցն :

ԺԸ.

## ԺՈՂՈՎՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ. —

Բազմութիւն ժողովելոցն : — Քուէարկութիւն : — Յոյս  
Գերմանացւոց : — Նշանաւոր վճիռ ժողովոյն : —  
Հանդամանք հռովմէական Եկեղեցւոյ : — Մարտինոս  
Է, և Սիդիսմուճղ արքայ : — Ազգ Գերմանացւոց : —  
Հնարք Մարտինոսի :

Առ ի խորտակելոյ զպապական դուժմունն հարկ համարեցան, որպէս ասէ ոմն ի պատմադրաց ժամանակին, ընտրել պապ զայր բոլորովին աննշան և վատանուն 540). և էր այրն այն Բազղասար Աոսա (Յովհաննէս ԻԳ.), զոր և ընկալան ի պապ արեմտեան ըրիստոնեայքն յօրէ անտի ընտրութեանն որա՛ ըստ մեծագունի մասին իւրեանց : Հարկ էր անտարակոյս ժողով առնել այնպիսի՝ որպիսի եղև Աոստանդեանն (1444—1448), առ ի տանելոյ զկատարեալ յաղթութիւն ոչ միայն ի վերայ այսր կամ այնր պապի, այլ և ի վերայ պապութեանն առ հասարակ : Ժողովեալք ինմին բազմաթիւ յոյժ էին քան յամենայն ժողովս եղեալս մինչև ցայնժամ յարեմուտս : Բաց 7500 եպիսկոպոսաց՝ էին ի նմա երեսփոխանք 13 համալսարանաց, և 500 վարդապետք աստուածարանութեան. ուստի և գտանէին ի նմա արք որ ոչ ունէին զգծուարութիւն բառնալոյ զայն ամենայն անկարգութիւնս՝ որովք ինքեանք իսկ հասեալ էին յիշխանութիւն և ի վիճակս իւրեանց : Յայնմ ժողովի սահմանեցաւ, զի քուէարկութիւնն մի լիցի ըստ զրուի, այլ ըստ ազգս ազգս. ապա թէ ոչ՝ յաղթող լինէր անշուշտ խուռն բազմութիւն եպիսկոպոսացն Խոալացւոց, որք բնական պարտս անձանց համարեալ էին պաշտպան կալ պապական զբութեան և պալատան, և աղբերաց եկամտից նորին : ՅԽոալիս խանդարումն Եկեղեցւոյ և բարոյական պղբրգութիւնն առաւել զօրացեալ էին՝ քան թէ յայլս յազգաց, և վասն այ-

Նորիկ, որպէս յետոյ զիտեալ եղև, եպիսկոպոսունք Իտալացւոց պնդագոյնս հակառակ կային ամենայն դարմանոց բժշկութեան Եկեղեցւոյ և ամենայն բարեկարգութեան :

Ընդ Աոստանդեան ժողովոյն ծագեցաւ վասն ազգին Գերմանացւոց աստղ յուսադրական : Երանի՛ էր ազգին՝ եթէ էին ի ժամանակի անդ արք ձեռնհասք յօգուտ վարելոյ զհանգամանս զրութեան իւրեանց և պահելոյ զայն : Նորընտիր արքայն Սիգիսմունդ, որ յաննենդ սրտէ ցանկայր ձեռն օգնականութեան մատուցանել ախտացեալ Եկեղեցւոյն՝ զիտաց այնպէս խմատութեամբ զնալ ընդ պապին Յովհաննու, որում սպառնայրն Իտալիա, զի հարկադրեաց զնա ընտրել տեղի ժողովոյն զգերմանական քաղաքն Աոստանդիա \*), ուր եկն թէպէտ և յակամայս՝ և ինքն իսկ պապն : Ընդ ամս 500 Գաղղիացիք և Իտալացիք ի բաց մերժեալ էին զՎերմանացիս ի մասնակցութենէ հասարակաց գործոց Եկեղեցւոյ . իսկ յայնժամ՝ նորին իսկ Վերմանացիքն հանգոյն Անդղիացւոց զրեթէ անպարտք էին յաղտոց հերձուածոյն . քանզի պալատն կազմեալ լինէր զօգցես միշտ յԻտալացւոց և ի Գաղղիացւոց, իսկ ի Վերմանացւոց ոչ ոք ոչ երբէք գտեալ էր ի նմին : Առաւել այլք անիրաւեալ էին ընդդէմ կղերին Վերմանացւոց, քան զոր կըղերն այն գործեալ էր զանիրաւութիւն : Ի Վերմանիա խանգարումն եկեղեցական կարգաց աշխարհաքարող իմն էր և անտանելի, բայց ոչ էր տեղական արդիւնք գերմանական ազգին, այլ հանգոյն ժանտախտի փոխադրեալ ի հարաւոյ, և ապա ի քակտել կազմութեան Եկեղեցւոյ առեալ զհաստատութիւն :

Ժողովն Աոստանդեան ի նշանաւոր վճիռս իւր չորրորդ և հինգերորդ զուամարմանց սահմանեաց՝ թէ «Ամենայն ժողով

(\*) Այն է իտալացիներն Գաղղիացիքն «Քոնստանս», և Գերմանիկներն «Քոնստանց», իսկ «Քոնստանց», իսկ «Քոնստանց», իսկ «Քոնստանց», իսկ «Քոնստանց» : ի վերջին դարս երեւելի, այժմ իսկ և անշատ :

11 ըստ օրինի հաւարեալ՝ ընդունի զիշխանութիւն անմիջապէս  
 11 ի Քրիստոսէ Յիսուսէ, եթէ ի խնդիրս հաւատոյ և ի բար-  
 11 ձումն հերձուածոց, և եթէ ի նորոգութիւն համօրէն Եկե-  
 11 ղեցոյ և մասանց նորին. ամենայն ոք, ընդ ամենեօին և պա-  
 11 պըն, գտանին ընդ իշխանութեամբ նորա, 11 Ընդդէմ՝ այսմ  
 վճռոյ չեղև լսելի և ոչ մի ձայն բարբառոյ:

Սահմանս այս, որ լի էր մեծամեծ հետեանօք, թէպէտ և  
 ոչ էր տակաւին եղեալ և ոչ ի միում ժողովի, վաղեմի էր  
 յոյժ ըստ իմաստիցն. քանզի յայս կարծիս էր Եկեղեցի մինչև  
 ցտուտանունն Իսիդորոս: Սակայն մարդկան ժամանակին թուե-  
 ցաւ այն յանդուգն իմն նորաձեւութիւն. ահա այնքան հզօ-  
 րացեալ էր ժամանակաւ ընթացքն հակառակութեան, այն-  
 քան վերամբարձ գտանէր դրութիւն պապիցն ի վերայ վատ-  
 թարեալ՝ անխօսուն և հլու ժողովոց եղելոց յամն 1179 ցա-  
 մին 1515:

Ժողովն այն կարողացաւ իրաւամբ (ըստ արևմտեայց) Գլե-  
 ղէքիւն անուանել զանձն իւր, իրր զի կոտորակքն երկոցունց  
 այլոց հօտից չև ևս միացելոց չկարէին ընդդէմ կալ այսմ նա-  
 խապատուութեան նորին: Գրիգոր ԺԲ և Բենեդիկտոս ԺԳ մը-  
 նացին միայն կարդինալովք իւրեանց արտաքոյ, և ամենեքեան  
 որք գաւանէին զհռովմէական Եկեղեցի՝ կցորդ եղին ժողովոյն:

Եթէ պապն ի խնդիրս հաւատոյ գտանի ընդ իշխանութեամբ  
 ժողովոյն, ապա ուրեմն ոչ է անսխալ, ապա ուրեմն ժողովն  
 է ներկայացուցիչ Եկեղեցոյ, և աւանդապահ խոստմանցն Քրի-  
 ստոսի, և ոչ թէ պապն. պապն առանց ժողովոյ կարող է  
 սխալել և անկանել ընդ գատաստանաւ ժողովոյն՝ սակս իւ-  
 րոցն մոլորութեանց: Այս հետևութիւն բացայայտ է և ան-  
 հերքելի. բաց կարդինալացն երկրայական թուէր՝ ոչ եթէ  
 սահմանադրութիւնն զխնդրոց հաւատոյ, այլ վերանորոգու-  
 թիւն վճռոց: Անդառին ի ժամանակէն յորում ընկալեալ եղև  
 կանոն Առնիփակիոսի ի կանոնադիրս՝ առանց հակառակու-  
 թեան ընդունելի գտաւ և այս վարդապետութիւն՝ թէ պապն  
 եթէ անկանիցի ի հերետիկոսութիւն, անկանի ընդ գատաստա-

նաւ Եկեղեցւոյ, ուստի և տիեզերական ժողովոյ : Եւ զայս վարդապետութիւն ի հարկէ անկարելի էր միտարանել ընդ միսսուսն նախակարգելոյ ի նոյն կանոնագիրս զանսխալութենէ պապին : Սակայն և կարգինալքն ոչ իշխեցին չտալ զհաւանութիւն իւրեանց վճռոյն այնմիկ՝ որ այնքան հակառակ էր պալատանն :

Ի բովանդակ աստուածարանական պատմութեան Եկեղեցւոյն Քրիստոսի չի՛ք ինչ դէպք այնպէս անսովոր՝ որպէս վրձիւքն Աոստանդեան ժողովոյն . և ոչ որ կարող է բնաւ երկմտել՝ ըստ հաւաստի իմաստից բառիցն՝ թէ զվճիռն զայնտսիկ հարկ է իմանալ իրրե զմասունս դաւանութեան, և իրրե վարդապետական օրէնս զեկեղեցական իշխանութենէ : Այս վճիռ ի հիմանց քանդէր զպապական դրութիւնն, զոր թէպէտ և լուսութեամբ՝ բայց միանգամայն մեծաւ պերճախօսութեամբ զատապարտ առնէր իրրե զմոլորութիւն և զանկարգութիւն : Սակայն դրութիւնն այն տիրապետեալ էր ընդ դարս բազումս . զնոյն ուսուցանէին ի զիրս օրինաց, և ի զպրօցս վանական աստուածարանից, մանաւանդ Թովմայականաց, և զնոյն էր տեսանել յայտնապէս յամենայն կոնդակս և ի վճիռս պապից, որք նորամուտ աղբիւրք էին եկեղեցական կանոնաց : Եւ յնուամենայնիւ շեղե լսելի և ոչ մի ինչ բարբառ ի նպատտ նօրին . ոչ որ հակառակ խօսեցաւ Աոստանդեան վարդապետութեանն, և ոչ որ բողոք կալաւ զայնմանէ :

Հանգամանք Եկեղեցւոյ այնպէս անբնական և այլանդակ իմն եղեալ էին, այնքան անցեալ զանցեալ էին քան զսահմանս մարդկային սխալանաց և տկարութեան, այնքան յայտնի և հանրական իմն ընալ էր անդադար լուծումն աստուածային և մարդկային օրինաց, զի ամենայն որ տեսնէր՝ թէ յոյր յանցանաց յառաջ եկեալ էին իրքն : Յայտ իսկ էր՝ զի յանցաւորն ոչ այս որ էր կամ՝ թէ այն որ, այլ բովանդակ դրութիւնն և եղանակն տեսչութեան, որ զարձուցեալ էր զամենայն եկեղեցական կառավարութիւն ի մեքենայ ինչ զրամաժողովոց, և յրնդարձակ վաճառաշահութիւն, և ազատականն

Եկեղեցի եղեալ էր իշխանութիւն քոնութեան՝ բացարձակ ինքնակամութեամբ կառավարեալ, և ի սակաւագետաց ոմանց վատնեալ և սպառեալ: Յորժամ կարդինալքն ի թղթին իւրեանց առ պապն Պրիզոր յամին 1408 ասէին՝ թէ «Յոտից մինչև ցղլուխ Եկեղեցւոյ չիք ի նմա մասն ինչ առողջութեան», 341), եթէ կամէին յայտնազոյնս ինչ խօսել՝ պարտէին յաւելուլ՝ թէ ահա մեք եմք և ընկերակիցք մեր և նախորդն քո, ահա պալատդ այդ է՝ որ արրուցանեն Եկեղեցւոյ անդադար զղեղ մահու բարոյական, և վասն այնորիկ այդպէս ակտացեալ կայ ծանր հիւանդութեամբ:

Երգարև սակաւք ոմանք և եթ յայտնապէս տեսանէին զմեծութիւն չարեացն և զստոյգ պատճառս նոցին. բայց սակաւքն այնորիկ աներկբայապէս ասէին զայն ինչ՝ զոր շփոթ եղանակաւ իմանայր ամենայն որ: Եւրոպա ողջոյն անպատճառ կարևոր համարէր զվերանորոգութիւն ամենայնի ըստ ամենայն մասանց, և ամենայն որ արժան համարէր բարեկարգել նախ զաթոռն պապական, և յայնմհետեւ և եթ կարելի համարէր զբարեկարգութիւն մասանցն: Ամենեքեան խոստովանէին՝ թէ առ այս չէր բաւական բարի դիտաւորութիւն պապից ոմանց, քանզի անզոր ինչ էր այն. այլ յայս նուազ վերանորոգութեամբ հարկ էր իմանալ զբոլորական փոփոխութիւն զրութեան: Առ այսու հաւաստի ճշմարտութեամբ հարկ էր զի լռեցէ իմաստութիւն երկոցունցն ևս զպրոցաց (կանոնադրտացն և կրօնաւոր աստուածաբանից) շինեալ ի վերայ պաւսասական հիմանց: Պարտ էր նոցա կամ լռել, և կամ ըստ օրինակին Թուսեպրեայ և Ղոմինիկեանց ոմանց համաձայնել ընդ Առստանեան վճիռս: Հասարակացն կարծիք ամենայն քրիստոնէից՝ որ քառասնամեայ խեղամտութեամբք ի Փարիզ, յԱւենիոն, ի Հոռովմ, ի Փիլա և ի համալսարանս Գերմանիոյ հասունացեալք էին, զօրացեալ էին յոյժ յոյժ:

Պապն ընտրեալ ի Թողոլոյ անտի՝ հարկաւ համաձայն էր ընդ նմին: Եւ թէպէտ հաւատարիմ արբանեակ էր նա Յովհաննու ԻԳ, և միայն ի յեանումն վայրկնի եթող զնա և միա-

բանեցաւ ընդ ժողովոյն, բայց յայնժամ պապ եղև հրաժարմամբ նախորդին իւրոյ. իսկ հրաժարումն այն կատարեցաւ զօրութեամբ նորոյ վճռոյն, որ էր ասել՝ զօրութեամբ եպիսկոպոսական զրութեան: Յովհաննէս ընկեցաւ յաթոյ (յետ օրինաւոր քննութեան եղելոյ ի վերայ նորա) ոչ վասն այնորիկ՝ զի հակառակ ընդդէմ կայր միաբանելոյ Եկեղեցեաց, այլ զի նենգութեամբ անհնազանդ գտաւ ժողովոյն, և զի ունէր յանցանս բազումս: Առանձինն հաստատութիւն այնր վճռոյ ձեռամբ Մարտինոսի Ե, թուեցաւ յայնժամ զործ բորբոքիւն աւելորդ և անկարգ ևս: Քանզի նման իմն էր այս այնմ՝ եթէ որ որդի գորով հաստատեցէ զբանս հօրն իւրոյ, որովհետև միայն զօրութեամբ վճռոյն այնորիկ կարգեցաւ նա պապ: Եթէ կամեր նա եղծանել իւր զվճիռն զայն, պարտէր անդէն և անդ հրաժարել ի պապութենէն, և տալ զտեղի իւր պապին զահարկեց եղելոյ: Քաջ գիտէր նա՝ թէ չկարէր հանդոյն նախորդացն իւրոց ձեռներեց լինել, զի հրամանատար կացցէ համօրէն Եկեղեցոյ միաբանելոյ ի ժողովի՝ որ առաջի առնէր զԵկեղեցին. և զայս յայտնապէս ասէր ի կոնգակին իւրում ընդդէմ վարդապետութեանն Աիկլեֆի: Քանզի խօսելով զառաջարկութենէն զայնմանէ՝ թէ «Գլխաւորութիւն Եկեղեցոյն Հռոմայ ի վերայ այլոցն Եկեղեցեաց ոչ է անկ իսկութեան վարդապետութեան զիրկութենէ մարդկան», ասէր պապն, եթէ Աիկլեֆ ընդ անուամբս «Եկեղեցի Հռոմայ», իմանայցէ զտիւրեւրական Եկեղեցի կամ զԺողովն, և կամ եթէ ուրանայ զնախագահութիւն պապին ի վերայ այլոց մասնաւոր Եկեղեցեաց, մոլորութիւն է այն 542):

Մերձ ի վախճան ժողովոյն յայտ արար Մարտինոս Ե, թէ հաստատէ զամենայն սահմանազրութիւնս Աոստանդեան ժողովոյն. և այնու չկամեր տալ զիւրն հաւանութիւն երկուց վրձնոց սահմանելոց ոչ յամբողջ գումարման ժողովոյն, այլ ի ժողովակս ազգաց ազգաց առանձինն: Առաջինն ի սահմանաց անտի էր յաղագս Գրեգորաց, այս ինքն է տարևորական տրոց յօգուտ պապական գանձուն՝ յանձանց ամբարձելոց ի բարձ-

բազոյն իշխանութիւնս Եկեղեցւոյ. իսկ երկրորդն յաղագս տըրոցն Փայլեմպերկ անուն Գոմինիկեան կրօնաւորի 545) :

Երկու ևս այլ Հօսք կամ վիճակք միարանալք ապա ընդ Ժողովոյն՝ նովին իսկ յանձն առին զասՀմանս նորին և զվըճիոս, որպէս յայտ է ի Գաշանցն Համաձայնութեան Նարբոնի Հրատարակեցոց ի քսաներորդի գումարմանն :

Իբրև յաջողեաց Հրաժարումն Յովհաննու, և Գրիգոր ԺԲ ևս Հրաժարեաց ի պապութենէ, ևՀաս ժամանակ բաժանման Գերմանացւոցն և Հռովմայեցւոց, Քանզի Գերմանացիք և Անգղիացիք ցանկային՝ զի մինչև մատուցեալ յընտրութիւն նորոյ պապի՝ վճռեսցի զխաւորագոյնն և զժուարակնճիոն ի խնդիրս Ժողովոյն, որ էր բարեկարգութիւն կամ վերանորոգութիւն Եկեղեցւոյ : Երդէն օրինակաւ Ժողովոյն եղելոյ ի Փիլապոս տեսանէին՝ զի ընտրութիւն նորոյ պապի իսկոյն եղձանէ զ՛ր և իցէ նախագիծս վերանորոգութեան : Բայց կարգինալքն, և ընդ նոսին Բաալացիք և Գաղղիացիք, — վերջինս իբրու նախանձ բերելով ընդ Հզօր զօրութիւն Սիդիսմունզի արքային Գերմանիոյ, — պնդէին՝ զի ընտրութիւն պապին եղցի յառաջ քան զվերանորոգութիւնն : Սիդիսմունզ իմաստութեամբ և արիական քաջութեամբ վիճեցաւ վասն օգտի Եկեղեցւոյ, տէրութեան և ազգին Գերմանացւոց, զի յայնժամ իրաւամբ կոչէր զանձն իւր «Երկիւղած, Համբերող, խոնարհ, բայց ոչ անզօր ազգ», 544) : Ա՛յժէ ազգն այն նուազ ունէր Համբերութիւն և խոնարհութիւն, և փոխանակ ընդ այնորիկ առաւելագոյն զօրութիւն՝ որ յառաջ գայ ի միարանութենէ, ոչ արգեօք ի պարտութիւն մատնեալ լինէր ըստ եկեղեցական և ազգային իրաւանցն յամին 1447. ոչ Հատուածէր ազգն ի զանազան խումբս կրօնականս, և ոչ ծագէր երեսնամեայ պատերազմն այլովքն Հանդերձ :

Կարգինալքն, և ընդ նոսա Հռովմայեցիք տարան զյաղութութիւն, Հարկադրեալ իմն զԱնգղիացիսն ի պառակտումն, և կաշառեալ զոմանս յեկեղեցականացն Գերմանացւոց, զորօրինակ զարքեպիսկոպոսն Ռիկայի և զեպիսկոպոսունս Քոյի-

րայի և Լեւթոմիշլի 543) : Բայց յառաջին իսկ եօթնեակն յետ ընտրութեան նորոյ պապին Մարտինոսի Ե, պալատն պապական և դրութիւն նորին վերստին զօրացեալ ճոխացան . կանոնքն նորանորք՝ զորս անդէն հրատարակեաց Մարտինոս, բացին զաչս կարճատես Գաղղիացւոց, և ցուցին նոցա՝ զի ի իրնդիրն թոշակաց (այս ինքն հասից կամ կալուածոց վերապահելոց յօգուտ եկեղեցականացն Հռովմայ) հաստատուն մնասցեն խուռն բազմութեամբ անկարգութիւնք և փնասակար յափրջտակութիւնք 546) :

Միայն քանի մի կարգադրութիւնք բարեկարգութեան առին զկատարումն . իսկ կարեւէր խոցք և սպիք մարմնոյ Եկեղեցոյ կացին մնացին խղիւսայթեալք որպէս և էին : Գիտաց Մարտինոս ի ձեռն բանադնացութեանց ոմանց՝ առանձինն զաշնադրութեամբք արկանել զբաժանումն ի մէջ զանազան ազգաց : Կրկին դաշինքն համաձայնութեան՝ զորս եղնա ի միոյ կողմանէ ընդ գերմանական տէրութեանց, և ի միւսմէն ընդ հռովմայեցի ազգաց, առաւելապէս խօսէին զտրչութենէ իշխանութեանց, և ի կամս պապին թողութիւն զայնպիսի իրս՝ որք ի վաղուց հետէ և յաչս ամենեցուն համարեալ էին զեղծմունք չարաչարք և վարչիւն անկարգութիւնք, զոր օրինակ փնասակարքն այնոքիկ ըստ իւրեանց բարոյական նշանակութեանն՝ տարեկանք, յորոց ստիպեալ լինէր կղերն անկանել ընդ պարտեօք : Յօգուածքն մեծաւ մասամբ այնպէս զրեալ էին՝ զի միշտ մնայր տեղի փախստի վասն հնացեալ անկարգութեանց . և պապական դրութիւնն վերստին կենդանացաւ ամենայն իրօք և ամենայն պարագայիւք :

ԺԹ.

Ժողովն Բասիլեան : — Մարտինոս Ե, և ժողովը նորա : — Եւզինէոս Գ, և ջանք նորա ի խափանել ըզգումարումն ժողովոյ : — Վճիռ ժողովոյն զգերագոյն իշխանութենէ : — Գնացք և բանք Եւզինէոսի : — Կանոնք բարեկարգութեան : — Զայրոյթ պապին : — Տկարանալ ժողովոյն : — Սկիզբն բանադնացութեան ընդ Յոյնս : — Փեղիբս Ե :

Սակայն գաղափարն վերանորոգութեան, — որ է զրուծիւն եպիսկոպոսական, — կենդանի էր տակաւին ի վճիռս անդ չորրորդ և հինգերորդ գումարմանցն, և ընդ երկար ժամանակ ոչ իշխէր որ հակառակել նմին : Միմիայն յոյս մնայր տակաւին, այն իսկ է՝ զի ըստ վճռոյ Աստանդեան ժողովոյն՝ յետ հնդկաց ամաց գումարելոց էր նոր սիւնհոգոս, և ապա ի տասն տասն ամս միանգամ՝ Ժողով տիեզերական : Մարտինոս Ե այնպէս կարծեցոյց՝ թէ ինքն պարտ անձին համարի հպատակել այնմ վճռոյ, և արդարեւ իսկ յամին 1425 ժողով կռեաց նախ ի Փառիա և ապա ի Սենա. ըսցց ընդ երեւելն անդանօր ջանկց վերանորոգութեան՝ իսկոյն արձակեաց զԺողովն, որպէս թէ ի պատճառս սակաւաթիւ յոյժ և աննշան գոլոյ ժողովկոցն. և սակայն ոչ բազմօր ինչ յառաջ քան զմահ իւր պատուէր ետ ժողով գումարել ի Բասիլիա \*): Եւզինէոս Գ, որ արդէն ի փակարանին երդուեալ էր զայն, ոչ կարաց հրաժարել ի կատարմանէ կամաց նախորդին իւրոյ : Յորժամ ի սահմանեալ ժամանակին եկին ժողովեցան ի Բասիլիա առաջին անգամք ժողովոյն, Բասիլիացիքն զծաղու եկին զնորօք իբրև զցնորեւրովք ոմամիք : Քանզի հայեցեալ յընթացս իրաց՝ անդասին

(\*) Որ է «Բասիլիա», գերեմներէն «Պաղէլ», գաղղիներէն «Պալ» + ազու + աշխարհէն Զուրիցերաց առ Հուենոս գերեւով :

յամեն 1447՝ 547) սակաւ յոյժ էր ակնկալութիւն՝ զի պապն կամիցի առնել ժողովոյն այնուիկ կարևոր ինչ սահմանադրութիւն: Եւ յիրաւի, յետ առաջին բանադնացութեանց ի պատճառս սակաւամիտ գոյոյ ժողովելոցն յ18 զեկտեմբերի 1451 ամի փութացաւ Եւզինէոս փակել զայն ամենամեծեւ պատճառանօք: Հարկ եղև ժողովոյն գումարել դարձեալ յետ միոյ ամի և կիսոյ ի Պոլոնիա քաղաքի՝ նախագահութեամբ նորին Եւզինէոսի, և թուէր իմն այնպէս՝ թէ յայնմ ժամանակի կարևորագոյն էր գումարումն ժողովոյ քան յայլ ամենայն ժամանակս, իբր զի աղանդն Հուսեանց \*) յաղթական եղանակաւ բազում ուրիշ տարածանէր: Թողովն հիմնեալ ի վերայ կրկին հրատարակեալ վճռոյ Աոստանզեան ժողովոյն, ոչ և սցրուեցաւ. և խրատեալ ի չարաչար հետեանաց բաժանման ըստ ազգս ազգս ի Աոստանզիա, ըստ ևս կանոնաւորեաց զգործս իւր, կարգելով պատգամաւորս չորս ի զանազան ազգաց և յաստիճանաց: Ըստ այսմ օրինակի սկիզբն արար ժողովն մարտ դնելոյ ընդ պապին. և զառաջինն յաջողեաց նմա. քանզի հասարակացն կարծիք ամենայն Եւրոպայ ի կողմն ժողովոյն էին. այլ և արքայն Սիզիամունդ նեցուկ ամբութեան էր նորա. իսկ Եւզինէոս նեղեալ էր ի ժամուն յԻտալիա, այնպէս զի պաշտօնեայք պալատան նորա անգամ հեռացեալ ի նմանէ՝ փախչէին հարկւրաւորք: Ի զուր սպառնայր բանագրել զկեղեցականն երթեալս ի Բասիլիա: Ի Բասիլիա զային հասանէին թուղթք զովասանութեան ի թագաւորաց և յիշխանաց,

(\*) Յովնանէն Հոսս՝ հեթևոզ իւրժեացն Վիլիէթի, գաղապարեալ յԱղեփաստաբէ Ե: ևս և ի ժողովն Աոստանզիոյ՝ յոր բողոքեալն էր. և զի շիտեցաւ յարտար իւր ի մարտնիւնաց իւրոց՝ մարտեցաւ յարտամ յամն 1445: Հեթևոզն նորա բազմաթիւս ոչ սուրս աղտոյն յարուցին ի Պահեփա և ի Գերմանիա, մնչև անհնարին խորոնիւմթ ի շիտեաւորաց նստեցան իսպառ յամն իբր 1455:

յևպիսիպոսաց և ի համարարանաց. թուէր իմն թէ յուսու-  
թուլունքն՝ որովք պատական գրութիւնն հմայելով հմայեր և  
կաշկանդէր զմիտս բազմաց՝ կորուսեալ էին զգորութիւն իւ-  
րեանց: Եւզինէոս էառ ի միտ զի հարկ է նմա տեղի տալ-  
ուստի ի կոնդակի իւրում, որ ի 4 փետրուարի 1455 ամի յայտ-  
նեաց զիւրն համաձայնութիւն ընդ յառաջանալ Թողովոյն, և  
կարգեաց նմին նախագահս կարգինալս չորս:

Բայց Թողովն ոչ շատացաւ կոնդական այնուիկ, թէպէտ  
Եւզինէոս ասէր ի նմին՝ թէ ինքն ոչ երբէք արձակեալ հա-  
մարեալ է զԹողովն. ուստի և յետս կոչէր զվճիռն իւր որ յա-  
ղագս արձակման Թողովոյն: Այն ինչ կամէին արձակել զնա  
ի պապութենէն, և ահա եհաս յանկարծակի ի Բասիլիա Սի-  
զիսմունդ կայսերացեալ, և նորա ջանիւքն եղև հաշտութիւն  
խաղաղութեան ընդ պապն և ընդ Թողովն: Եւզինէոս արդարև  
իսկ զաղափարեաց բառ առ բառ զառաջարկեալն ինքեան ի  
Թողովոյ անտի զձև համաձայնութեան ի կոնդակին իւրում որ  
ի 15 դեկտեմբերի 1455 ամի, և ի բաց մերժեաց զերիս նա-  
խընթաց կոնդակս իւր: Ընդ երրորդն ի նոցանէ՝ յորում սաստ-  
կագոյնս յարձակեալ էր ընդդէմ զգրութեան Թողովոյն՝ զա-  
մօթի հարկանէր յոյժ, վասն որոյ և ասէր՝ որպէս թէ հրա-  
տարակեալ իցէ այն առանց իւրոյ հաւանութեան 548): Խոս-  
տովանեցաւ նա՝ թէ Թողովն ունէր լիով իրաւունս չլուծանե-  
լոյ՝ ոչ ինչ միտ զնկով կոնդակի նորա զարձակմանէն, և  
հաստատել զվճիռս իւր, որոց խոստանայր զհետ երթալ հն-  
գանդոսէմք և պոպէսոսնէ 549): « Հրաժարիմք մեք, ա-  
սէր նա, յերիցն կոնդակաց, որպէս զի յայտնագոյնս ցուց-  
ցուք աշխարհի զյատակութիւն մերոցս զիտաւորութեանց, և  
թէ որպէս սրբութեամբ սրտի անձնատուր եմք ընդհանրա-  
կան Եկեղեցւոյ և սրբոյ տիեզերական Բասիլեան Թողովոյն, »  
Լի կատարեալ էր խոնարհութիւն պապին, և պարտութիւն  
պապական գրութեան. քանզի ոչ էր այն գործ զիջողութեան  
առ սէր հաշտութեան, այլ աներկմիտ և յատակ խոստովա-  
նութիւն՝ թէ Թողովն է իշխանութիւն գերագոյն, և պապն են-

Թարկեալ է նմա : Սիւնհոդոսն այն անգատին իսկզբանէ պինդ կալաւ զվճիռ Աստանդեան Թողովոյն յաղագս գերագոյն իշխանութեան Թողովոց, և վերստին յայտ արար՝ թէ վճիռն այն իբր մասն է հաւատոյ : Պասն և Թողովն հրամայեցին արևմտեան քրիստոնէից, հաւատս ընծայել այնմ վճռոյ, և անհնարին իմն թուէր յայնժամ ամենեցուն՝ թէ եկեղեցի ժամանակ յորում գուն գործեցեն հերքել զայն 550) :

Այլ և յայնոսիկ ի կոնգակաց իւրոց, յորս գատապարտ առնէր և անվաւերս համարէր զառաջին եղբակացութիւնս Բասիլեան Թողովոյն, ոչ իշխէր Եւզինէոս հուլ լինել ի վճիռ Աստանդեան Թողովոյն, որ հիմն էր նոցին : Թող զայս. հաւանեալ էր նա և ընդ երկրորդ գումարումն Թողովոյն, յորում նորոգեցաւ վճիռն այն, և պատարակէր միայն զգործսն կատարեալս ի Բասիլիա յետ հրատարակման վճռոյն զարձակմանէ Թողովոյն : Ըստ այսմ ամենայնի հարկ էր անշուշտ զմտաւ ածել՝ թէ պապական աթոռն համարի զանձն իւր անպատճառ կապեալ ընդ սահմանօք Աստանդեան Թողովոյն ի ինզիրն եկեղեցական հեղինակութեան կամ գերագոյն իշխանութեան . վասն զի եթէ Եւզինէոս հաստատելովն զնոսին անկեալ իցէ ի մտորութիւն, ապա ուրեմն սխալական էր նա, և անսխալութիւնն մնայր ի կողմն սիւնհոդոսին . իսկ եթէ նա ասացեալ էր զճշմարտութիւն, յայսմանէ զարձեալ զհետ զայ՝ թէ ի ինզիրս հաւատոյ ենթարկեալ է պասն Թողովոյն, ապա ուրեմն ինքն ըստ ինքեան սխալական է :

Բաց յայնմանէ ասէր Եւզինէոս, թէ պասն ըստ իւրումն գատողութեան կարող է արձակել և փոխադրել զոր և իցէ Թողով : Իսկ յայնժամ յետս կոչեաց զբան իւր, և խոստովանեցաւ զի Թողովն տիեզերական կարող է յառաջ վարել զգումարմունս իւր առանց միտ զնկոյ պապական վճռոյն զարձակմանէ նորա :

Յընթացս երից ամաց և կիսոյ, ի չորեքտասաներորդ գումարմանէն որ յ7 նոյեմբերի 1455 ամի մինչև ցքսան և հինգերորդ գումարումն որ յ7 մայիսի 1457 ամի, ի մէջ Թողովոյն,

Նուիրակաց պապին և փոխանորդի Նորա 2էզառինի կարգինալին կայր՝ գոնեա արտաբուստ՝ կատարեալ համաձայնութիւն։ Աճխոքն Թողովոյն որ զբարեկարգութեանց՝ զայնպիսի իրաց և եթէ էին, զորս արդէն ի վաղուց ամենեքեան ամենակարևորս ճանաչէին. զայն ինչ և եթէ արգելուին՝ որ յանարգութիւն գրէր Եկեղեցւոյ։ Նորոգեցաւ սահմանն կանոնաւոր բաշխման հողևորական պաշտամանց, բարձան իրաւունքն ժառանգութեամբ ունելոյ զպաշտամունս, և արգելաւ սիմոնականութիւն. սահմանեցան կարգաւորութիւնք ինչ վասն եղանակի բողոքմանց, և գործադրութիւն արգելանաց չափաւորեցաւ և մեղմեցաւ։ Այս ամենայն այնպէս իմաստութեամբ էր, այնքան զովելով և այնչափ համաձայն ոգւոյ Եկեղեցւոյ, զի ամենայն ուրիշ ընդունելի եղև մեծաւ հաճութեամբ։ Այնքան զգուշաւորութեամբ վարէր սիւնհոգոսն, զի ոչ երարձ և ոչ զմի ինչ ի բազմութիւ իրաւանց անտի՝ զորս պապքն սեպհականեալ էին անձանց ի կանոնադիրսն և ի սահմանադրութիւնս։ Բազում ինչ ինքնահաճոյ գնացք մնային տակաւին ի ձեռս պապին, ընդ որ եղնն ոչ սակաւ պարսաւանք ի կողմանէ Փարիզեան համալսարանին 531)։ Եւզինէոս յայտ արար յետ քրտաներորդի զուժարմանն որ ի 25 Յունուարի 1453 ամի, թէ ինքն բողոքովին համաձայն է ընդ վճռոյն՝ որ յաղագս բարեկարգութեան 532)։ Զնոյն ասաց զարձեալ ի 18 Յունիսի 1453 ամի ցղեսպան Թողովոյն ցՅովհաննէս Պաքէնշթէյն 533)։ Բայց Եւզինէոս զայրացեալ էր ընդդէմ սիւնհոգոսին վասըն այնորիկ՝ զի զրկեալ էր զնա ի կարևոր աղբերաց եկամտից, բարձեալ էր զտարեկանն, և հակառակ էր իրաւանցն զոր վարեալ էին պապքն առաջինք ի բաշխել զվիճակս։ Սակայն մինչև յայտնապէս ներգործեալ՝ սկսաւ ամբաստան լինել զփիւնհոգոսէն յարբունիս թագաւորաց ի ձեռն գործակալաց առաքելոց յիւրմէ հանդերձ գաղանի հրահանգօք։ Ամաստան լինէր զԹողովոյն՝ զի ընտրեալ է ինքնին իւր նախալահ զօք, և ընծայէր Աոստանդեան վճռոցն զնշանակութիւն կարի իմն ընդարձակ, թէպէտ և ինքն իսկ երեք ամօք յառաջագոյն

ձջմարիտ համարեալ էր զայն : Պնդէր նա՝ [Թէ տարեկանացն սովորութիւնն ի ներքս մտեալ է յանյիշատակ ժամանակաց, մինչդեռ իրօք պապքն էին որք մուծին զայն քառասուն ամօք և եթ յառաջ ի ժամանակի հերձուածոյն 554) :

Ասէր պապն ի հրահանգս անդ՝ [Թէ որովհետև հռովմեական պալատն անգաղար պարսաւի վասն անկարգութեանցն, և այնու գայթակղութիւնն մեծ գործի, նմին իրի նուիրակացն պարտք են ունել ընդ խրեանս զառաջարկութիւնն ի ձև կոնգակի՝ յորում կայցեն ինչ ինչ յաղագս ապագայ վերանորոգութեանց, որպէս զի այնու խցցին բերանք պարտաւաղիտաց, և [Թագաւորքն յօգուտ Հռովմայ հակամտեցն 555) : Միանգամայն ի ձեռս նուիրակացն տուեալ լինէին հրամանք ազատութեանց և արձակմանց, զորս բաշխէին [Թագաւորաց, և այնպէս շահէին զսիրտս նոցա ի կողմն պապից 556) :

Թողովն ևս յիւրմէ կողմանէ եցոյց զտեղարութիւն : Թեպէտ և հասարակացն վտահոտութիւն քաջալերէր զնա, բայց նա ոչ կարաց ընդդէմ կալ փորձութեան խտունից ի մանունս, ի բազմակնձիռն դարս, ի տեղական հանգամանս, մանաւանդ Քաղղիոյ և Քերմանիոյ, խտունէր ի գործս քաղաքականս՝ կամելով լուծանել զնոսին, և այնու գրգռեաց ի տեղիս տեղիս զ[Թագաւորս ի թշնամութիւն : Ապա իրրև յետ սակաւուց անկաւ հակառակութիւն ի մէջ նորա և պապիցն, շիք երկրաշուտութիւն՝ զի եւք պատերազմին կախեալ կային զվճուոյ [Թագաւորաց :

Բանադնացութիւնքն ընդ կայսեր Յունաց յաղագս միաբանութեան Եկեղեցեաց՝ ետուն պապին պատճառս, որպէս ցանկայրն, հանելոյ ընդդէմ Բասիլեան Թողովոյն զայլ Թողով խտալական. և յառաջ իսկ քան զփոխադրել Թողովոյն յԵտալիա եղև վճիռ արբանեկաց նորա, որք զփոքրագոյն մասն կազմէին Բասիլեան Թողովոյն, յօգուտ ցանկութեան պապին : Ի վերջ 1457 ամին հրատարակեցաւ փոխադրութիւն Թողովոյն ի Քերրարա քաղաք, կամ լու ևս ասել՝ բացումն նոր Թողովոյ : Եւ քանզի Յոյնք ևս յայնմ ցանկային, և կայսրն

և պատրիարքն և եպիսկոպոսունք արևելեան Եկեղեցւոյ եկին ժողովեցան ի Ֆերրարա, վասն որոյ և ձեռնարկութիւնն պապին եզիտ զյաջողութիւն :

Քաջ զիտեին ի Բասիլիա՝ թէ ժողովն բացեալ յիտալական երկրի լցցի իսկոյն Բոսայցի եպիսկոպոսօք, պապատականօք և այլովք վիճակախնդիր եկեղեցականօք, և զործն բարեկարգութեան Եկեղեցւոյ բողոքովն խանդարեսցի : Եւ արդարև յերկուս ամս անդ մնալոյ ժողովոյն ի Ֆերրարա և ի Փլորենտիա, — քանզի յետ մեկնելոյն Յունաց տեւեաց ժողովն այլ ևս աստ երկուս՝ ցամն 1442, — ոչ կամեցաւ և ոչ հրատարակեցաւ և ոչ մի ինչ վճիռ բարեկարգութեան :

Իսկզբան անդ ոչ յոյժ յաչս հարկանէր տարաձայնութիւնն ի մէջ անդամոց Բասիլեան ժողովոյն և պապին . քանզի Եւզինէոս յառաջնում կոնդակին իւրում այնպէս իմն ցուցանէր՝ թէ հիմն ժողովոյն նորոյ արկանէ նա զվճիռս առաջնոյն, մինչդեռ արդեամբք վճիռ էր այն վերոյիշեալ փոքրագունի մասին, և այնպէս ժողովն Ֆերրարայի համարէր որպէս թէ շարայարութիւն Բասիլեան ժողովոյն, և սահմանադրութիւնք նորա յառաւելութիւն ի սահմանադրութիւնս երկրորդին : Յետ սակաւուց երկոքին իսկ կողմանքն ծայրայեղս խոտորեցան : Ըստ կանոնի Աոստանդեան ժողովոյն՝ Բասիլեանն յայտ արար իբրև զմասն հաւատոյ՝ թէ իշխանութիւն եկեղեցական ժողովոյ ի վեր է քան զպապին, և թէ ոչ որ կարէ ոչ արձակել զայն և ոչ տեղափոխել, և որ ուրանայ զայս՝ հերետիկոս է : Յետ որոյ ոչ ինչ միտ դնելով զզուշացուցիչ բանի կայսերն՝ Եւզինէոս փոխեցաւ, և ի տեղի նորա ընտրեցաւ պապ զուրբն Ամեդէոս Սաւոյացի, որ կոչեցաւ Փելլքս Ե : Եւ այս եղև վրիպակ մեծ ի կողմանէ ժողովոյն . քանզի կասկած երկուզին ունելոյ երկուս կամ երիս զուիս կամ պապս, և բաժանման անկանելոյ յԵւրոպա, տակաւին ևս կայր ի յուշի ամենեցուն : Ելլ և ինքն իսկ ժողովն յորժամ թոյլ ետ առնել զայս ըստ խրատուց կարգինալին Աբմանի Արեկատացւոյ, պակասեաց յոյժ թիւ անդամոցն, որով և իշխանութիւն նորին անկաւ ի նուս-

զուձն, և մնացին ի նմա աղաղակողք ունելք, որք ըստ մեծի մասին և ոչ իսկ իրաւունս ունէին բաղմելոյ ի Ժողովի անդ : Եւ սակայն առաջնորդութեամբ խոհական կարգինայլին, որում անսայրն յամենայնի, եկաց մնաց ի բարեկարգութեան և ի պնդութեան 557) :

Ի.

Եկեղեցական միաբանութիւն ընդ Յոյն : — Խնդիր գերազահութեան պապին : — Բան Գերմանոսի պատրիարքին : — Հումբերտոս : — Յովհաննէս Մանտվիլ : — Վճիռ Փլորենտեան ժողովոյն : — Խարդախումն վճռոյն : — Եւզինէոսի յառնելն ընդդէմ Բասիլեան ժողովոյն :

Հարկ եղև Եւզինէոսի հրաժարել յակնկալութենէն իւրմէ տեսանելոյ յիտալական Ժողովին եպիսկոպոսունս ոչ Խտալացիս . զի ոչ որ ի նոցանէ չկամեցաւ զալ . միայն դուքսն Պուրկցնի ստիպեաց զերկուս եպիսկոպոսունս տէրութեան իւրոյ գնալ անդր : Սակայն պապն յետ երկար դիմակալութեան Յունաց՝ յայն հասցոց զնոսա, զի ընկալան ի Ֆերրարա և ի Փլորենտիա, — ի հարկէ առ ժամանակ մի և եթմ, — զպայմանս նորա որ վասն միաբանութեան Եկեղեցեաց, և ստորագրեցին ըզվճիռ գործոյն միաբանութեան : Քանզի կայրն որ տեսանէր զմտալուտ անկումն մայրաքաղաքին իւրոյ և զաւերումն թագաւորութեանն, ուր ուրեմն ետ զհաւանութիւն իւր : Գլխաւոր զժուարութիւնն էր ի վերայ խնդրոյ գերազահութեան, և յայնմ ժամանակի խնդիրն այն ամենակարևոր ինչ էր յաչս Եւզինէոսի . զի թէ յաջողէր նա ի դիտաւորութեան իւրում, կարող էր ընդդէմ գնել ջանից Բասիլեան Ժողովոյն զհաճոյականն անձին իւրում վկայութիւնս արևելեան Եկեղեցւոյ այն ինչ ընդ իւր միաբանելոյ, և այնպէս յինքն յանկուցանել ըզհասարակաց կարծիս արևմտից : Յոյնք ևս յիւրեանց կողմա-

նէն հարկադրեալ էին ճանաչել զգերագահութիւն ամթոռոյն Հոռովնոյ, համեմատ իւրեանցն աւանդութեանց, յետ դազարեկոյ հոռովնական ամթոռոյն ի լինելոյ հերետիկոսական կամ հերժուածողական: Երեւեանն Եկեղեցի արդէն յամաց իբր հազարաց հետէ ընդունէր զայս կարծիս՝ թէ ի զուխ Եկեղեցւոյ պարտին կալ հինգ պատրիարքունք, և առանց նոցա հաւանութեանն չէ հնար վճուել ինչ Եկեղեցւոյ զվարդապետութեանց և զբարեկարգութեանց Եկեղեցւոյ: Ասան որոյ առաջարկութիւնն զգերագահութենէ պապին Հոռովնոյ, — մինչդեռ զանունն պապ ունէր և պատրիարքն Աղեքսանդրու, — իբրև ըզբացարձակ տիրապետողի ի վերայ համօրէն Եկեղեցւոյ, հնարեալ յարևմուտս յամէն 845 և 1075 և այսր, նոյնպէս զբժուարատանելի էր Յունաց՝ որպէս առաջարկութիւն ինչ կամ համեմատութիւն զրութեան դքսին Աննետիոյ՝ ընդ զրութեան Շահին Պարսից: Պատրիարքունքն ասենեքին ի նեղ անկեալ էին յոյժ, և անձուկ սահմանօր պատեալ էր իշխանութիւն նոցա: Պապական ներողութիւնքն ամենեկն իսկ անձանօթ էին ինքեանց. իսկ ձեռներիցութիւնք և պահանջունք պապական զրութեան էին զխաւոր պատճառքն, որոց վասն ի բաց կային նորա ի միարանելոյ ընդ Եկեղեցւոյն Լատինացւոց: Յամին 1255 պատրիարքն Գերմանոս զրէր առ կարդինալն. «Բռնաւորութիւն կառավարութեան ձերոյ և ընչաբաղցութիւն հոռովնական Եկեղեցւոյ պատճառք են մերոյ բաժանմանս 538):

Ձևոյն հաստատէր և ընդհանրական մեծաւորն Գոմինիկեանց Հումբերտոս ի թղթին իւրում առ Ժողովն Լուզդոնի յամին 1274. «Հոռովնականն Եկեղեցի զիտաց ծանրացուցանել զլուծն զոյն՝ զոր դնէ ի վերայ մարդկան. բռնութիւնք նորա և ընչաբաղցութիւն, նուիրակքն նորին և դեսպանք և անհամար սահմանքն և պատուհաք ահ արկանեն Յունաց, և խափան լինին միարանութեան Եկեղեցւոյ,» (559):

Այս կարծիք էին հասարակաց ամենեցուն յարևմուտս 560): Աղերն Գաղղիոյ զոյն ակնարկէր Աղեմայ Գ. յամին 1266՝ 561), և եպիսկոպոսն Տիւռան Մենտացի՝ Աղեմայ Ե 562):

Անգղիացին Յովհաննէս Մանտլիլ ի դարձին իւրում՝ յարեւելից գրէր. «Առ Հրաւերն Յովհաննու ԻԲ՝ Հպատակելոյ պապական աթոռոյն՝ Յոյնք ետուն պատասխանի լակոնական. «Քումդ իշխանութեան ի վերայ քոց Հպատակաց մէք Հաստատութեամբ Հաւատամք. քումդ անչափ Հպարտութեան տանել մեր ոչ կարեմք. զքոյդ ընչաքաղցութիւն յաղեցուցանել ոչ ունիմք. ընդ քեզ սատանայ, ընդ մեզ Տէր, (265)» Յամին 1559 Փրանկիական կրօնաւորն Յովհաննէս Փլորենտացի, որ առաքեցաւ ի պապէն ի խորհրդակցել ընդ պատրիարքին Աստանդուպոլսոյ և ընդ սինհոդոսի նորա՝ աւեր. «Անտանելի Հպարտութիւն պապից պատճառ եղև բաժանման Եկեղեցեաց, (564)» Առանձին իմն եղանակաւ գայթակղական երևէր Յունաց ձեռներիցութիւն պապին և խորխտանքն՝ որպէս թէ ինքն միայն ունիցի զիշխանութիւն Եկեղեցւոյ, և այլ ամենայն եպիսկոպոսունք իցին միայն ծառայք նորա և օրնակամք (565)» Եթէ Յոյնք Հակառակս քրիստոնէութեան Համարէին զերզմունսն ի կիր առեալս ի Աստիճացոց, զերզումն Հնազանդութեան առ պապն կրկին ևս ատելի և զարշի ճանաչին :

Յուսահատ դրութիւն Յունաց, որք ի բովանդակ ժամանակս Թողովոյն կերակրէին ողորմութեամբ պապին, և չկամէին դառնալ ի տուն մինչև կարգաւորեալ զգործն, Հարկադրեաց զնոսա ի զիջողութիւն : Եւզինէոս ցանկայր՝ զի Յոյնք ծանիցին զմիապետական իշխանութիւն իւր ի վերայ բովանդակ Եկեղեցւոյ այնպէս՝ որպէս իմանան զիշխանութիւնն զայն յարեւմուտ : Յորժամ աստուածարանք պապին առաջի արարին Յունաց զբազմութիւն ստայօղ և մտացածին վկայութեանց ի Գրատիանոսէ և ի սուտանուն Իսիդորէ, Յոյնք արարին պատասխանի կարճաբօտ և ցուրտ բանիւ. «Այդ ամենայն վկայութիւնք և կանոնք յանյայտից սակի են (566)» :

Այսրն յայտ արար, զի եթէ պապն յամառեալ կացցէ ի բանս իւր, ինքն իւրովքն Հանգերձ դարձ արասցէ ի Յունաստան. բայց Հուսկ ի վերջէ եկին ի Համաձայնութիւն. և պապն

Հրաժարեաց ի պահանջանաց իւրոց և յասկոյ՝ թէ ինքեան անկ է գերազոյն իշխանութիւն յեկեղեցւոջ ըստ բանից զրոց սրբոց և ըստ վկայութեանց Հարց Եկեղեցւոյ 567)։ Կանոնն սահմանեալ՝ այսպէս ասէր. «Պապն էր փոխանորդ Քրիստոսի, զլուխ համարէն Եկեղեցւոյ, հայր և ուսուցիչ ամենայն քրիստոնէից. ունի նա լիովին իշխանութիւն հովուելոյ զհօտն Քրիստոսի, և կառավարելոյ զԵկեղեցին այնպէս որպէս զբնակարանն ի իւրեանս որպէս զբնակարանն ի իւրեանս»։

Այսու բանիւ սահմանը պապական իշխանութեան ապաքէն այնպէս ամփոփեալ էին, և իրաւունք իշխանութեան նորա այնպէս չափաւորեալք, զի պապն և աստուածաբանք նորին ոչ երբէք հաւանէին ստորագրել այնմ կանոնի. եթէ նոքա — ընդ ազգեցութեամբ հին և նոր ստացօղ բանից, — ոչ ունէին բողոքովին խեղաթիւր կարծիս զնախնի ծողովոց և զյարարելութեանց պապիցն առ նոսա։ Քանզի ընդ անուամբ Տէրաբարձի ծողովոց Յոյնք իմանային միայն զայնօրիկ՝ որք ի նախնի ութ դարս՝ յառաջ քան զբաժանումն Եկեղեցեաց զուստիւրեալ էին յարեկելս։ Նոյնպէս իմանային զայն և ի Հռոմմ. և վասն այնորիկ ծողովն Փլորենտեան յառաջնումն տպագիր օրինակի դործոց նորին, ապա և ի պարզեազրին Աղեմայ Ե, և ս և ի հրոսովմէական տպագրութեան 1626 ամի կոչի որպէս զբնակարանն ի իւրեանս։

Ի դործոց եօթմանց առաջնոցն տիեզերական ծողովոց այս ինչ միայն տեսանի՝ զի ծողովն Քաղկեդոնի յայտ իմն արար զառաջնութիւն պապին առ այլովք պատրիարքօք. իսկ իրաւունք բողոքելոյ ի Հռոմմ, զոր Եւզիմէոս հնարէր ի ձեռս բերել, արդէն արգելեալ էին ի նախնի ծողովոց։ Սակայն Լատինացիք ի յիշատակել անդ զնախնի ծողովս՝ յուշ առնէին միայն զմտացածին կանոնս և զառասպելս զՍեղբեստրոսէ, ըզՅուլիոսէ, զՎիգիլիոսէ, և զայլոց, և կարծէին՝ թէ շատ ինչ արարին ստորագրելով ի վճռի անդ Փլորենտեան ծողովոյն։

Իսկզբան անդ լատին թարգմանութիւնն ճշդիւ ի մէջ բերէր զխնաստ յոյն բնագրին։ Արովհետև Յոյնք վիճեալ հա-

կառակէին լման ամենայն բանի. վերոյիշեալ սահման Փլորենտեան ժողովոյն զրեալ էր զառաջինն յունարէն, և Փլաւիոս Պիոնոսոյ ատենադպիրն Եւզինէոսի ճշգրտիւ ի մէջ բերէր զբառական իմաստ նորին 368)։ Ի հռովմեական տպագրութեան Երրասամու Կրետացւոյ ի ձեռն աննշան փոփոխութեան զոյն բառի միոյ 369) անհետացաւ իմաստն այն՝ զոր կամին Յոյնքն բացատրել, այսինքն թէ «նախապատուութիւնքն ընծայեալք պապին պարտին ի գործ զնել և իմացեալ լինել ըստ բանից նախնի ժողովոց», ։ Իսկ ըստ խարդախեալ ձեռնն այսպէս ընթերցեալ լինի. «Պապին անկ են նախապատուութիւնքն այնորիկ, և բովանդակէին նորին արդէն ի գործս նախնի ժողովոց», ։ — Յայտ խարդախեալ ձե տպագրեցաւ ապա ի հաւաքմունս ժողովոց լճիոն որ յաղագս միարանութեան Եկեղեցւոյն Յունաց \*):

Յետ մեկնելոյն Յունաց՝ Եւզինէոս պապ ի կոնդակին իւրում յարեաւ ընդդէմ Բասիլեան ժողովոյն, և դատապարտ առնէր զմեկնութիւնն զոր տայր ժողովն այն Կոստանդեան սահմանադրութեանց։ Եւ թէպէտ չհամարձակէր նա ի կոնդակի անդ յայտնապէս պատարակել զսահմանադրութիւնն զայնոսիկ 370), — որովհետեւ մեծարոյ յոյժ էին նորին յաչս համբէն քրիստոնէից, — սակայն ջանայր ընդ կասկածանօք արկանել զնոսին, իբր զի յօրինեալ էին ի ժամանակի հերձուածոց, և յետ հրաժարման պապին Յովհաննու։ ԶԵւզինէոս ոչ այնինչ տազնապէր՝ զի Կոստանդեան ժողովն մերժեալ էր զվարդապետութիւնն զանստալութենէ պապին. քանզի նա եղիտ այնմ հնարս։ Արդէն յառաջնումն իսկ կոնդակի իւրում ասացեալ էր բանին Թորքէմատայի. «Յամենայն խնդիրս լճիո պապին պարտի ունել զնախապատուութիւն առ ժողովական լճաով, ի բաց առեալ զայնոսիկ դէպս՝ յորս խնդիրն իցէ ըզ-

(\*) Ըստ Ինտերից Ինտր-Իեալ լճոսոյր է Դեբ Բեբե և Հի-բո-զեան զմիայնութեան Ժողովոյն Փլորենտիոյ է Հոտ։ Ա։ Էջ 242։

Հաւատոց կամ զկարևոր կանոնադրութեանց վասն բարեկարգութեան համօրէն Եկեղեցւոյ. քանզի յայսմ մասին վճիռ ժողովոյն ի վեր է քան զսահմանադրութիւնն պապական, ( 574 ) :

ԻԱ.

Գործնական վաւերադրութիւն եղեալ ի Պուրժ քաղաքի : — Գաղղիական Եկեղեցի : — Գաշն համաձայնութեան 1517 ամի : — Անդղիա : — Գերմանիա :

Աստանօր մեծապէս արժանի է դիտողութեան ճանապարհն զոր կալաւ յայնժամ ազգն Գաղղիացւոց : Թագաւորն կազմեաց ժողով ի Պուրժ քաղաքի յամին 1458 յեկեղեցականաց և յաշխարհականաց, յորում խօսեցան պատգամաւորք ի դիմաց պապին և ժողովոյն, սահմանեցաւ ընդունել զվճիռս Բասիլեան ժողովոյն հանդերձ փոփոխութեամբք ինչ զորս պահանջէր գրութիւն ազգին Գաղղիացւոց : Եւ այսպէս կատարեցաւ անուանեալն զորքն ինչն զաւերութեանն Պուրժի, որով սահմանեալ լինէր ազատութիւն եկեղեցական ընտրութեանց և նախապատուութիւն իշխանութեան տիեզերական ժողովոց. հերքէին և իրաւունքն բողոքեցոյ ի Հռոմ, և ս և պէս պէս զօշարագութիւնքն պալատականաց պապին. և այնու վաւերագրութեամբ արկաւ հիմն ազատութեան գաղղիական Եկեղեցւոյ : Ատիկի եղև ամենեցուն ի Հռոմ վաւերագրութիւնն այն, և ամենայն պապք Հռոմայ՝ սկսեալ յԵւզինէոսէ Գ, զայն արարին իւրեանց նպատակ և նիւթ հակառակութեան : Աւր ուրեմն յազօղեցաւ Լևոն ժ եղծանել իսպառ զգործնական վաւերագրութիւն ի ձեռն գաշինն համաձայնութեան որ եղաւ յամին 1517 : Քանզի ըստ այնմ համաձայնութեան՝ պապն և թագաւորն բաժանեցին յիւրեանս զիրաւունսն ի վերայ Եկեղեցւոյն Գաղղիոյ, և թագաւորն գուն զործեաց սեպհականել անձին իւրում զմասն բաժնի առիւծուն :

Անդղիացիք ի պատճառս քաղաքական շփոթից իւրեանց ոչ մասն ի վէճս պապիցն ընդ ժողովոյն, ոչ սակաւք ոմանք

Լեւթ յօժարէին ունել զկողմն Սաւոյացոյ պապին՝ նաև ի կամել իւրեանց ի բաց գնալ ի Ժողովոյ անախ: Արիմաստ արքայ Արագոնի և Նէպօլոյոյ, որ յառաջն զլիաւոր սպաւն էր Բասիլեան Ժողովոյն, ի լուր զանազան խոստմանց պապին հրապուրեալ՝ յետ կոչեաց զեպիսկոպոսունս իւր և եղև զլիաւոր պաշտպան նորա յԽտալիա ընդ Ալենեակեցիսն: Ազգն Գերմանացոց չէզոք կայր ընդ Բասիլեան Ժողովն և ընդ պապն՝ ըստ օրինակի կայսրընտրացն. բայց այնպէս զի արդեամբ չէզոքութիւնն այն առաւել հակամեա էր ի Ժողովն. քանզի զվճիռս բարե արգութեան կամ՝ վերանտրոգութեան՝ զօրս հանեալ էր Ժողովոյն՝ ընկալաւ ի խորհրդարանին Մոգունախոյ յամին 1459, որով և Գերմանիա, օրպէս և Գաղղիա, խոստանային զաւանել զեղեան կանոն ի Աոստանդեան Ժողովին զեկեղեցական իշխանութենէ 572): Յայնմ ժամանակի ի համօրէն Գերմանիա ոչ զոյր և ոչ մի որ՝ որ բարւոյ իմբ ակն ունէր ի հռովմեական սպառտանէն: Աղերն ըստ մեծագունի մասին, համալսարանք Ալենայի, Էրֆուրթի, Աոզոնիոյ, Լուվէնի, Քրաքովի 575), ևս առաւել Փարիզոյ, ևս և թագաւորք և խորհրդականք նոցա, և առ հասարակ ամենայն Ժողովուրդք, էին ի կողմն Ժողովոյն և Ժողովական կառավարութեան, և հակառակք պապին:

ԻՅ.

Յոջողութիւնք պապին: — Երուուներ տուեալք զըրսին Քրիվի: — Փրեղերիմոս եւ Էնէաս Սիրուխոս: — Խոստմունք եւ պարգևք Եզմէտոի:

Սակայն Եւզինէոս զիտաց յանկուցանել ձգել ի կողմն իւր զբաղումս ի ձեռն պարգևաց և շնորհարաշխութեանց, և յայտըմ մասին զրութիւն նորա յաջողագոյն ևս էր քան զԺողովոյն, որոյ կապեալ գոյով իւրովքն կանոնօք և արգէն հրատարակեալ վճռովքն՝ ոչ կարէր կամ զժուարաւ յոյժ կարո-

զանայր բաշխել ազատութիւնս, արտօնութիւնս և բացառութիւնս. մինչդեռ Եւզինէոս պինդ ունեւոր զաւանգութիւնս պալատան իւրոյ՝ ոչ ինչ նեղեալ լինէր յեկեղեցական կանոնաց: Այնքան մեծամեծ իրաւունս եկեղեցականս ետ նա դ. քսին Քլեւի՝ առեալ զնոսին յեպիսկոպոսաց, զի կացոյց զնա տէր Եկեղեցւոյ և եկեղեցականաց այնր աշխարհի, ուստի և յառակս եղև ասել. «Բուքսն Քլեւի է պապ իւրոյ տէրութեանն», 574): Արգէն յամին 1458 պապն բանադրեաց ոչ միայն զանդամն Ժողովոյն, այլ զՔասիլիա կարկ ընդ արգելանօք. բանադրեաց ըզքաղաքական ատեան նորին, և հրամանս ետ ամենեցուն կողպտել զվաճառականս՝ որք բերէին ի Քասիլիա զվաճառս. իրր զի դրեալ է թէ «Արգարն առնու ի վարձ զորս ամբարշտաց», 575):

Զիք երկրայութիւն թէ այն ամենայն ընդ երկար ժամանակ ոչ ինչ ոչ ազդէր. քանզի մեծ էր յարգութիւն Ժողովոյն որ այնքան եռանդեամբ զուն գործեալ էր բարի առնել Եկեղեցւոյ: Անցին ամբ քանի մի, և քաղաքականութիւն կայսրընտրացն տատանէր ընդ մէջ Հռովմայ և Քասիլիոյ, մինչև ամն 1446 որոշեաց զիրան: Քանզի արքայն Փրեյզերիկոս խորհրդով Ատենադպրին իւրոյ ճարտար Հռետորին Անէասայ Սիլուիոսի Փիլքքոյնիսի\*) անձնատուր եղև պապին Եւզինէոսի, որ խոստացաւ նմա աւելի ինչ քան զոր կարէրն տալ կապեալն ժողովական վճռով Փիլքքս: Առատաձեռնն Եւզինէոս խոստացաւ վճարել արքայի՝ հանդերձ մատուցմամբ կայսերական թագին՝ այլ ևս Ֆլորինս հարիւր հազար ի ծախս ճանապարհի. ետ նմա իրաւունս ժողովից տասանորդն յամենայն վիճակաց Գերմանիոյ, բաշխելոյ ի տէրութեան իւրում՝ ըստ հաճոյս իւր հարիւրաւոր վիճակս, կարգելոյ ի վերայ վեցից վիճակաց եպիսկոպո-

(\*) Հռետորն էր Կասիլիոյ, ասորոսածաքան, ինքնածաքն, պարսկերէն, աշխարհագիր և գերմառ ևս, որ և պապ էրեւալ յամն 1458, ինչեցաւ Պիոս Բ, և մինչ անցեալ է իւրեք խաւարաց Կիւրէր յարեւելս՝ վերջանելոցս յԱնտոն յամն 1464:

սունս, և հուսկ յետոյ իշխանութիւն ետ դրան երիցու նորա տալ նմին երիցս անգամ լիուլի արձակումն յամենայն մեղաց 576):

ԻԳ.

Գիմակայութիւն պապից : — Պարտութիւն կայսերացն  
Գերմանիոյ : — Ապաշաւ Եւզինէտսի :

Եւ այսպէս զորժ ժողովոյն և եկեղեցական բարեկարգութեան ի դերև ել ի Գերմանիա, և եկեղեցին Գերմանիոյ տակաւ ընկղղեցաւ ի նախնին իւր ստրկութեան . իսկ Սիլուիոս մտեալ ի նմին ժամանակի ի պաշտօն ծառայութեան պապին, կաշառեաց զերկուս պաշտօնեայս կայսրնորին Մոզունտիոյ, որք և դարձուցին զարքայն իւրեանց ի կողմն պապին : Այնուօրինակաւ դաշնակցութիւն թագաւորացն Գերմանացւոց քակտեցաւ, և թագաւորքն այնորիկ զնախնի պահանջմունս իւրեանց գումարեոյ ժողով նոր՝ իջուցին յաստիճան պարզ ազանաց, զորմէ ոչ ևս որ փոյթ կալաւ ի Հռովմ, և այնուհետև յաղթութիւնն Եւզինէտսի կատարեալ եղև, և ի մահիճս անգամ մահուն ընկալաւ նա մեծարանս ի կայսրնորաց Գերմանիոյ : Այս դէպք (յ7 Փետրուարի 1447 ամի) ասնեցաւ ի Հռովմ հնչամբ զանգակաց և լուծմամբ կրակաց : Այլ և զիւրութիւնքն անգամ զուզնաբեայք զորս արարեալ էր պապն Գերմանացւոցն՝ իսկոյն առան յետս՝ գաղտնի կոնդակաւ նորին, ընդ յայտնելն թէ էր ինչ փնասակար ակտոոյ պապին : Զկնի երկուց եօթնեկաց անցանելոյ մեռաւ պապն իբրև տարեալ զյաղթութիւն ի վերայ ժողովոյն և Գերմանիոյ . բայց հնարքն զորս ի զորժ եղեալ էր առ այն նպատակ՝ տանջեցին զխիղճ նորա . զոր և յայտ արար նա բանիքս այսորիկ . «Ո՛հ  
« Գարբիէլ, — զի այս էր առաջի անուն նորա, — քանի՛ լաւ  
« լինէր վասն փրկութեան հոգւոյ քոյ՝ եթէ ոչ երբէք լեալ էիր  
« ոչ կարգինալ և ոչ պապ, » : — Եւ սակայն հաւանեցաւ նա

Տրատարակել կոնդակաւ զՊոստանդեան վճիռն զղլխաւորութենէ ժողովոց, և զկանոնաւորութիւն զուժարմանց նոցին 577):

Յորժամ յամին 1542 Փրեղերիկոս Գ, ընկալաւ զթագն կայսերական ի ձեռաց պապին, Ենէաս Սլլուրիոս իշխեաց ասել ի զիմաց նորա և զառաջնաւ նորին. «Այլ որ կայսր պահանջէր արդեօք ժողով առնել. բայց լաւազոյն ժողով պապն է՝ հանդերձ իւրովքն կարգինալօք», 578):

## Ի Գ.

Հռովմ ևւ դաշինք համամայնութեան :— Յայտարարութիւն Կալլիստոսի Գ. :— Պապն ազատ ի կատարմանէ դաշանց :— Վճիռ ատենին Ռոմայի :— Ատելութիւն ընդդէմ պապից :— Բանք Փրեղերիկոսի զՀռովմայ :— Փելլոնս պապ ևւ Կղեմէս Է :

Նորընտիր պապն Նիկողայոս Ե կը Թովմաս Պոյոնիացի, որ արդէն այնքան յաջողութեամբ կատարեալ էր զբանաջնացութիւնն ընդ Փրեղերիկոսի : Նա յաւել զնոր յաղթութիւն ի հինն տարեալ ի նախորդէն իւրմէ, այն իսկ էր դաշն համաձայնութեան եղեալ ի Վեննա ի 14 Փետրուարի 1448 ամի ըստ որում վերստին տուան պապին իրաւունք կարգելոյ զեկեղեցականս ի վերայ ահագին բաղմնութեան ժողովրդապետութեանց : Այս դաշնադրութիւն կնքեցաւ յարքայէն Փրեղերիկոսէ իրրև ի գործակատարէ Գերմանիոյ, և հիմնեալ էր ի վերայ բաժանման օգտից և ազդեցութեան ի միջի թագաւորաց և պապին : Գիւրին էր այնուհետև պապին ի կողմն իւր ձգել զթագաւորս ի ձեռն արտօնութեանց ոմանց՝ զորս ինքն շնորհէր. մանաւանդ զի պահպանութիւն Բասիլեան վճռոցն բարեկարգութեան մեծապէս նուազեալ էր զիշխանութիւնն զոր ունէին ի վերայ Եկեղեցեաց աշխարհացն իւրեանց : Չև ևս անցեալ էր բազում ժամանակ յետ հաստատելոյ դաշինն՝ յորժամ յամին 1457 պապն Կալլիստոս Գ յայտ արար կայսր՝ թէ « Ենքնին իսկ բացայայտ է՝ զի դաշման համաձայնութեան

,, պապն ոչ առնու յանձն զպարտականութիւն ինչ . քանզի  
 ,, և ոչ մի ինչ դաշնադրութիւն չէ կարող և չպարտի չափա-  
 ,, ւորել և նեղել զազատ իշխանութիւն պապական ամօրոյն,  
 ,, և եթէ պապն մտադրութիւն ինչ առնէ այնմ՝ դաշնադրու-  
 ,, թեան, միայն առ զթութեան է և առ խաղաղասիրութեան,  
 ,, ևս և ի բարեմտութենէ առ կայսրն և առ ազգն Գերմանա-  
 ,, ցոց, (579) . Յայնմ ժամանակէ Հետէ եկաց մնաց այն կա-  
 ,, նոն առ Հռովմայեցիսն . զի ասեին՝ թէ իշխանութիւն այնպիսի  
 որպիսի է պապականն՝ ոչ կարէ բնաւ կրել զնեղութիւն, ապա  
 թէ ոչ՝ հակառակ լինէր այն ինքնիշխանութեան պապին, ևս  
 առաւել չկարեն պապքն զնել որպիսի և իցէ պարտաորու-  
 թիւն ի վերայ յաջորդաց իւրեանց . քանզի ամենայն պապ հա-  
 ւասար է իշխանութեամբ այլոցն պապից անցիլոց և ապաղա-  
 յից . իսկ արդ հաւասարն ոչ կարէ ունել իշխանութիւն ի վե-  
 րայ հաւասարին . Եպա ուրեմն ազգն է որ կապի դաշամն հա-  
 մաձայնութեան, և ոչ թէ պապն (580) :

Իրաւագէտն Պոլոնիա քաղաքի Քամալտինոյ Պոմբոմփա-  
 նելի, որ գրեալ էր արդէն զջատագովութիւն պապին ընդդէմ  
 Բասիլեան Ժողովոյն, այսպէս բացայատէր զիրան . Եթէ պապն  
 խոստանայցէ ևս ինչ, սակայն զօրութեամբ լի կատարեալ իշ-  
 խանութեան իւրոյ ոչ է պարտական կատարել զխոստումն իւր .  
 որովհետև ամենայն որ հպատակ է նորա, ուստի և ամենայն  
 դաշնադրութիւն և ամենայն խոստումն կարեն ունել զկերպա-  
 րանս զթասէր բարեհաճութեան և եթ, որ յամենայն վայրկե-  
 նի կարէ առեալ լինել յետս . սմին իրի պապն թէպէտ և խոս-  
 տանայցէ կատարել զհասանադրութիւնս Ժողովոյն, այսու ա-  
 մենայնիւ ոչ կարէ կատարել զնոսին (581) :

Յաղագս Գերմանական դաշինն համաձայնութեան յայտ-  
 նապէս հրատարակեալ էր հռովմեական ատեանն Ռոմա \*) ա-

(\*) Արեւոյն սահմանէալ է Հռովմ ինկլիշեան յ. Գ. Գարուան է Յով-  
 հաննէ Ի. Ե. է Գարուել զինքին բնուցաց : — Անուան « Ռոմա » է զեղ

նուանեալ՝ թէ «Ի կողմանէ պապին և ի կողմանէ պալատանն զաշն այն համաձայնութեան է արտօնութիւն ինչ և եթ տուեալ ի նոցանէ առ զթատիրութեան, և ոչ ունի բնաւ վասն նոցա և ոչ մի ինչ զօրութիւն պարտաւորիչ,» 582) :

Արբ առեւութեան և արհամարհանաց ընդդէմ պապիցն որ խորագոյնս արմատացեալ էին ի միտս Գերմանացւոց, ի վեր երևեցան ի խորհրդարանին Փրանքֆորթի 445½ ամի և յապայտն՝ յորժամ բանք լինէին զպատրաստութեանց պատերազմի ընդդէմ Տաճկաց : Ոչ ոք կամեր հաւատալ՝ ոչ պապին բանից, և ոչ դեսպանաց նորա, որովհետև միմիայն կէտ նպատակի նոցին զօչաքաղութիւն էր 585) : «Ամենեքեան,», «ասէ Անէաս Սլուրիոս, — որ յետ սակաւուց պապ եղեալ՝ ըզնոյն փորձ փորձեաց, — ամենեքեան նղովին զկայսրն և պապն,», «և արհամարհեն զնուիրակս նորա,», «էր երբէք զի ի խորհրդարանն յայնոսիկ բանք լինէին զԹողովոյ, որ խրատիլակ իմն եղեալ էր վասն պապից . այնպէս զի ի բանազնացութիւնս ընդ արքայից սմանց Գերմանիոյ, զոր օրինակ Տիթերի Իսեմպուրկեցւոյ, պապքն պահանջէին իբրև զպայտան զխաւոր զայս ինչ, զի թագաւորքն մի՛ երբէք յարուսցնն զխնդիր գումարման Խեղերական Թողովոյ : Բաց յայնմանէ վասն որոյ և իցէ բողոքման ի Խեղերական Թողով՝ իսկոյն բանադրանս ի վերայ զնէին . և առաւելապէս զայս ասնէր Պիոս Բ :

Թուէր իմն այնպէս՝ թէ կայսրն Փրեզերիկոս մերձ ի վախճան կենաց իւրոց ուր ուրեմն ապաշաւեաց ընդ կցորդելն իւր ի գործն յայն կործանիչ : Ի հրահանգն զորս ետ նա դեսպանին իւրում առաքելոյ ի խորհրդարանն Փրանքֆորթի յամին 4486, ասէր՝ թէ ինչն զիտէ որպիսի «ահագին գումարք զբամոց ամ ըստ ամէ զնան ի հարկմ վասն տարեկանաց, ներո-

«Անի-», իւրդմանէ, իբր զի անոսոյն իմն ըրջանս գարին ինքնորտ յարեւել անդ իւրդ ըստ իւրդի, իմ զի ըրջաբար իմն յետմ իւրդ մին ի նաւ արեւելուցն, որոց ինչ 14 է :

,, զուժեանց և այլոց հարկաց, և թէ որպիսի՛ հնազանդութիւն  
 ,, և հաւաասարիմ հպատակութիւն ցուցանէր աթոռոյն Հոռոյ-  
 ,, մայ ազգն Գերմանացւոց՝ զեր ի վերոյ քան զայլ ամենայն  
 ,, ազինս. թէ պապն և կարդինալք և պաշտօնեայք պալատանն  
 ,, բնդունէին զայն ամենայն նշանակս մեծարանաց ապերախ-  
 ,, տութեամբ և ամբարտաւան ոգւով, և ազգն Գերմանացւոց  
 ,, յամենայն վիճարանութիւնս՝ եթէ ի մեծամեծան և եթէ ի  
 ,, զուգնաբեայս՝ արհամարհեալ լինէր չարաչար. այնպէս զի  
 ,, հակառակ իմն է մարդկեղէն բնութեան և մտաց՝ այլ ևս  
 ,, հանդուրժել այնմ ամենայնի: Սմին իրի պարտի զեսպանն  
 ,, ազդ առնել թագաւորաց, զի մի՛ ևս ցուցցեն նորա պապին  
 ,, և ոչ զղղղն անգամ հնազանդութիւն, և ոչ մի՛ այնուհե-  
 ,, տև ազգն Գերմանացւոց այնպէս արհամարհեցի և անար-  
 ,, զեսցի ի մեջ այլոց ազգաց, 584):

Միջնորդութեամբ արքային Վաղղիացւոց՝ Փելլըս պապ  
 հրաժարեցաւ յաթոռոյն, և կարգեցաւ զուխ կարդինալաց ըն-  
 դարձակ իշխանութեամբ ի վերայ բազում վիճակաց: Յետ  
 այնորիկ մնացորդքն յանդամոց Բասիլեան ժողովոյն ցրուե-  
 ցան, զի նեղեալ էին ի Լողաննա քաղաքի, և կարդինալն Ա-  
 բրիայ, «Օ՛նունդն այն չարութեան և որդին կորստեան», որ-  
 պէս կոչէ զնա Եւզինէոս, զարձեալ ի ձեռս երեք զիրաւունս  
 իւր, թէպէտ և ոչ բնաւ շրջեցաւ ի խորհրդոց մտաց իւրոց,  
 Եւ սակայն Սղեմէս Կ հրատարակեաց զնա յետ մահու նորին  
 այր «—:» գոլ. քանզի ասէր՝ թէ «Սրբութիւն նորա հաս-  
 տատեալ է հրաշագործութեամբք, և կենցաղալարութիւն նո-  
 րա լեալ է միշտ երկնահասնդէտ, ողջախոհ և անարատ», :

ԻԵ.

Կարծիր հասարակաց եւ զրուծիւն Եկեղեցւոյ ի Ժե դարու : — Կարեւորութիւն զուժարման տիեզերական ժողովոյ : — Պիոս Բ եւ ծեռներիցութիւն նորա : — Մատենադրութիւնք Ժե դարու : — Բանք կատարիննայ Սենացւոյ : — Ռիբէլ : — Ինստիտորիս : — Գերմանացիք ժամանակին : — Ապականութիւն հռովմէական կղերին :

Սակայն յետ չարաբաստիկ ամին 1446 Հարկ էր անցանել այլ ևս բազում ժամանակի՝ մինչև ի միտ առին Գերմանացիք թէ ի զուր է յուսալ ի Թողովս և ի բարեկարգութիւնս Եկեղեցւոյ լինելիս ի ձեռն նոցա, և թէ ժամանակն նոցա վաղու ևս անցեալ է :

Տակաւին ևս յամին 1439 չկարէին և չկամէին իսկ Հաւատալ ձախողից պնդէս բողոքովին ամենայն առաջարկութեանց բարեկարգութեան : Արքայն Վարթուսեանց Վինկենտիոս ԱքսփաՏ յայս կարծիս էր, զի «եթէ գոնեա միմիայն թագաւոր թոյլ տացէ պաշտպանողական հրովարտակաւ զուժարման Թողովոյ յիւրում տէրութեանն, և եթէ զէթ միմիայն եղիսկոպոս հրատարակեսցէ զնոյն, Թողովն անշուշտ զուժարեսցի, ոչ ինչ միտ զնկող պահանջանաց և անաթեմանից պապական պալատանն, և այս իսկ է վերջին և միակ յոյս ակնկալութեան, իսկ ի հռովմէական աթոռոյն ոչ ևս է հնար ակն ունել և ոչ միում իմիք փրկաւէտ կարգադրութեան, որպէս և ցուցեալ է արդէն փորձն յիննամեայ ժամանակի : Բառնալն յԵկեղեցւոյ զթանկազինն ի բարեաց նորա, որ են Թողովքն տիեզերականք, է մոլորութիւն կարի յոյժ չարագոյն քան զհերետիկոսութիւն Հուսեանց, : Եւ ապա յաւելու Վինկենտիոս նկարագրել՝ թէ որպէս յաջողեցաւ Եւզինէոսի պապին հրատարանօք թոշակացն Թողովքապետութեանց յիւր կողմն ձգել զրեթէ զամենայն արս զիտնականս 585) :

Ընդ այս ուրացութիւն արանց ուսումնականաց, որպիսիք էին Նիկողայոս Աուսա և արքեպիսկոպոսն Թուտեպի, գանդասի արդէն յամին 1445 այլ ոմն Գերմանացի, որոյ անձանօթ է մեզ անունն. առէ. «Պոռնիկն հոգովեական այնպէս արբեցցց զինուով ամբարշտութեան իւրոյ զՀոմանիս իւր, մանաւանդ զայնոսիկ որ ի Գերմանացոց անտի էին, մինչ զի հարսն Գրիստոսի Եկեղեցի և Թողովն ներկայացուցիչ նորին ոչ ևս կարեն ի միջի հազարաւորաց գտանել զէթ զմի որ տարփածու: Եւ սակայն ապաքէն Գերմանիայն էր որ ի դէմն կայսերն իւրոյ առաւել նախատեցաւ և անարդեցաւ ի պատից՝ քան թէ այլ ամենայն թագաւորութիւնք. միայն կայսրն Գերմանիոյ էր որ ստիպեցաւ զօրութեամբ առասպելեալ և մտացածին կոնդակագրոց երգնուլ պապին զերդումն հաւատարմութեան» 386):

Հուսկ ուրեմն Բասիլեանն Թողով, անկեալն ընդ այնչափ և պնդպիսի մեղադրանօք, ի պահու անդ սպառսպուռ քակտելոյն իւրոյ յաղթանակեաց իմն փառաւորապէս. քանզի գազափաբքն տիեզերական Թողովոյ այնքան հզօր զօրութիւն ունէին տակաւին յետ մահուն Եւզինէօսի և ի բունն իսկ ի Հրոսովմ, զի նորընտիր պապն Նիկողայոս Ե խորհրդով կարդինալացն Եհան զկոնդակ 387), յորում յայտ առնէր՝ զի ամենայն գրուածք, դատաստանք, վճիռք և քննադատութիւնք Եւզինէօսի ընդդէմ Բասիլեան եկեղեցական Թողովոյն ջնջին և եզմանին, և բոլորովին անվաւերք լինին՝ և թէ հրատարակեալ ևս իցեն հաստատութեամբ և հաւանութեամբ Թողովոյն Պերրարայի և Փլորենտիոյ կամ այլոց որպիսի և իցէ սիւնհոգոսաց. թէ պարտ է հայել ի նոսա այնպէս՝ որպէս թէ ոչ բնաւ լիալ իցեն երբէք. և ի շարագրածոցն Եւզինէօսի պարտին նոքա այնպէս պատառոտիլ և չքանալ՝ որպէս երբեմն պատառեցան և ոչնչացան ըստ հրամանին Աղեմայ Ե կոնդակքն Անիփակիտոսի Գ ընդդէմ Գաղղիոյ և արքայի նորին: Եւ ահա ըստ այսմ՝ օրինակի սկզբունք երկոցունց ևս վերանորոգիչ Թողովոցն զգերագոյն իշխանութենէ տիեզերական Թո-

ղովոց գեր ի վերոյ քան զպապլեցն՝ լի կատարեալ, յաղժանակ կանգնեցին, և կասկածանքն զորս Եւզինէոս ի սաղրելոյն Քորքեմատայի ջանացեալ էր սերմանել զՎոստանդեան Թողովոյն՝ անհետացան, և ինքն իսկ պալատն պապական խոնարհեցաւ առաջի գերագոյն իրաւանց համօրէն Եկեղեցւոյ ի մի վայր ժողովելոյ: Ի գործ եզան ազդի ազդի ջանք և հնարագործութիւնք առ ի ջնջելոյ զամանս ի վերանորոգիչ վճռոց Բասիլեան Թողովոյն, որք միանգամ վնասակարք էին հռովմէական տիրապետութեան և զբամական շահուց պալատանն, բայց հիմնական սկիզբն և վարդապետական սահմանք զստորագրութենէ պապին կացին մնացին անեղծք և անվճարք:

Պիոս Բ, որ երբեմն հոկտոր էր և այր բանասէր թափառական, և պաշտպան կացեալ էր Բասիլեան Թողովոյն, — սաստկագոյնս քան զամենեւեան ջանահնար եղև զատապարտել ըզսահմանագրութիւնս Վոստանդեան Թողովոյն, որովհետև այն սահմանք հանգոյն սուսերին Վամեղի կախեալ կային զգլխովք պալատականացն, և դառնացուցանէին զվայելս պապական ամենակարողութեան: Սակայն հասարակացն կարծիք էին բոլորովին ի կողմն Թողովոց, և Պիոս ոչ իշխեսաց ոչ միայն զայն առնել, այլ և յիւրումն հրաժարական կոնգակին 1463 ամի յայտնապէս յաւել՝ թէ ինքն ճանաչէ և ընդունի զհեղինակութիւն և զիշխանութիւն տիեզերական Թողովոյ յայն ձև և ի նոյն միտս՝ յորում սահմանեաց զնոյն մեծարեալն յիւրմէ Վոստանդեան սինհոդոս 588):

Սակայն արք նմանեալք Քորքեմատայի չև ևս պակասէին: Առ սակաւ սակաւ սկսան երևել զբուածք միանձանց և կարգինալաց, կամ ցանկացողացն կարգինալութեան, որք զամենայն փոյթ ի մէջ առնուին առ ի վերականգնելոյ զպապական զրութիւն յետ պարտութեան նորին յերեսաց Թողովոյն, և ոչ դժուարին ինչ էին իրքն. շատ իսկ էր զհարուստ մթերս ստացող բանիցն Եսիզորի, Գրատիանոսի, և Թովմայի ի մի վայր կուտել և բաշխել յառաջարկութիւնս և ի հետեանս այնպիսի կղանակաւ, զի քաղեցի ի նոցանէ ապացոյց անհիմն գոլոյ

երկոցունցն ևս վարդապետութեանց կապակցելոց ընդ միմեանս, այս ինքն է եպիսկոպոսական և ժողովական դրութեանց: Այսու ճանապարհաւ յառաջ եկին շարագրածքն Վապիտորանի, Հերոնիմոսի Ալբանոսի, Թովմայի Քամիլեճճի, Թովմայի Եղիսիոսի, Քրիստափորի Մարկեղոսի, Լելիոսի Յորդանոսի և այլոց, որք առ հասարակ մատենագրեցին յամէն 1160 ցամն 1325: Շատ իսկ է ճանաչել զմին ի նոցանէ առ ի դատելոյ և զայլոցն. զի ամենեքեան նորա ի միմեանց զաղափարեալ են, և առ ամենեսեան կրկնին մի և նոյն անհարազատ վկայութիւնք և կանոնք և պատմութիւնք:

Յորժամ սրբուհին Վատարինէ Սենացի, յստակամիտն այն և շնորհալից ոգի, եկն առ Գրիգոր Թ, ասաց ցնա. «Ի հռովմեական պալատանէն առնում ես զշարահոտութիւն զժոխային ախտաւորութեանց», և առ որ պապն ետ պատասխանի. «Գուտակաւին զաւուրս ինչ և եթ կացեր ի Հռովմ», և Յայնժամ հեղահոգի կուտանն վեհանձնաբար կրկնեաց անդրէն և ասէ. «Համարձակիմ ասել՝ թէ յիմումս քաղաքի ծննդեան զշարահոտութիւն մեղացն գործելոց ի պալատականաց այտի սաստկազոյնս առնուի ես՝ քան թէ նորա որք գործեն զնոսին զոր ամենայն», 589):

Չնոյն զգացումն զգային ամենեքեան և ամենայն ուրեք. քանզի ի պատճառս կնձուկոյ տակաւ հանգամանաց իրացն և սակս տիրապետելոյ հռովմեական դրութեանն, հնարեցաւ նոր իմն արուեստ՝ որ անձանօթ էր մարդկան մինչև ցայնժամ. այն իսկ է ամենուրեք տարածանելն զախտ և զպականութիւն, և ի միոյ և եթ արուեստանոցէ հանել զնոսին, հանդոյն իմն սուր և նրբին թունոյ որ թափ անցանիցէ ընդ ամենայն մինչև ի հեռագոյն իսկ անօթս եկեղեցական մարմնոյն: Ամենայն որ հայեցեալ յազգ քրիստոնէից, և ինդրեալ ի նմա զխորհուրդ և զօգնականութիւն ընդդէմ խանգարման և ապականութեան, ջանայր առնել զոնեա գոյն ինչ բարի յիւրումն անձուկսահմանի, տեսանէր զանձն իւր իսկոյն ձնչեալ ի պապական հրամանաց, և ի բաց թողոյր զանօգուտն զայն աշխատութիւն:

Պապական կոնդակք, բանադրանք, մուրացիկ կրօնաւորք, թափառական զրամաժողովք, և կրօնաբննիչք կալեալ էին զամենայն տեղիս: Երամսո \* ) ինքնին ի թղթին իւրում առ Ֆիշեր եպիսկոպոս Ռոչեսթերի Համարձակեցաւ ասել, «Եթէ  
 ,, Բրիտտոս ոչ փրկեսցէ զժողովուրդ իւր ի բազմազխի եկեղեցական բռնաւորութենէ աստի, զիւրազոյն իցէ արդեօք Հանդուրժել Տաճկացն բռնակալութեան,, 590):

Եւ այսպէս ի կիսոյ ժեզարուն և այսր իսպառ անհետանայ յեկեղեցական մատնագրութենէ ստուեր անգամ այնր ակնկալութեան՝ որ նշմարեալ լինէր տակաւին ի զրուածս և ի բանս առաջնոց ամաց այնր դարու, ևս և ի ժամանակի Պոստանդեան և Բասիլեան ժողովոցն, և ամենայն մտածութիւնք և կարծիք յածէին յայսմ՝ յոռի շրջանի՝ թէ բարեկարգութիւն Եկեղեցւոյ անկարելի իմն է՝ ցորչափ Հռովմէական պալատն այնպէս կայ մնայ որպէս և է, զի նա է աղբիւր ամենայն չարի, նովաւ մանկն և պաշպանին չարիք պմենայն, և Հրաշից պէտք են առ ունկոյ ի նմանէ զակնկալութիւն վերանորոգութեան: Աստի և արբայն Յակոբ Եունթէրպուրկեցի ասէր.  
 ,,Պոզցես անհաւատալի իմն է զի Եկեղեցին զայցէ ի լաւութիւն. քանզի առ այս Հարկ լինի կերպարանափոխ առնել  
 ,, նախ զպալատն Հռովմայ. իսկ այս ղժուարութիւն ակն յայտ  
 ,, նի է յայժմու ընթացից զործոց: Առաւելապէս Հակառակի  
 ,, վերանորոգութեան ազգն Իտալացւոց, յոր գնացեալ յարին  
 ,, ամենեքեան որք երկնչին ի նմանէ,, 594):

Պատուականագոյնս յաստուածարանս Ստորին նահանգաց, քերտեալ քերտեալն, որպէս կոչէին զնա, արբայն ասեմ Վար-

(\*) Գերանուալ Տարեմագիւր Յնեալ է Ռոմիէիբրամ յամն 1467, պարտեալ է Բարսաբուրոց և յիմաստնոց ժամանակն վառն իւրոյ Բուժմանար իմաստութեանն, և զերբ ցանկացող Բարեկարգութեան հետովեական եկեղեցւոյ: Բարեկամ գուով զառաջինն Լոմիէրէ՝ առ է Բուր եկաց է նմանէ ասելով՝ թէ լսիբեմ ես զիմովարոք ճշմարտութեան: Վերջանեցաւ է Բարեկալ յամն 1456:

Թուսանց Գիտնէսիտո Ռիբէլ ծանուցանէ, զի ի տեւական ուրիշ՝ զոր պատմաց նմին իսկ պատին՝ ետես նա երևոյթ այսպիսի, զի յերկինս մեծ բազմութիւն դասուց սրբոց բարեխօսէր վասն երկրաւորս Եկեղեցւոյ, որում սպառնալիք ի վերայ կային սարսափելի պատժոց, բայց առ այս ընկալաւ պատասխանի. «Եթէ ինքն իսկ պատն և կարգինալք և երիցունք և այլքն ամենեքին երգնուցուն յանուն Աստուծոյ՝ թէ կամին, ուղղել զանձինս իւրեանց, ստերգմունք լինէին. քանզի յԵկեղեցւոջ վերուստ մինչ ի վայր ոչ զոյ և ոչ մի տեղի առողջ, 592) :

Գրեթէ ամենեքեան տեսանէին՝ զի Եկեղեցին այնու աջօք Հայէր ի բարեկարգութիւնս՝ որպէս երբեմն արքայն Հռովմայ Հայեցաւ ի Սիբիլիան գրեանն \*): Իբրև սերմանեալն ի Հռովմէական պալատանէն սերմն ապականութեան յընթացս 50 ամաց աճեաց և զարգացաւ, և Եկեղեցին ոչինչ փոյթ կալաւ ի փրկել զանձն իւր, հարկ եղև գնոց առնուլ զվերանորոգութիւնն, բայց առաւել թանկագնոյ և նուազագոյն յուսով յաջողութեան : Բազումք զնոյն խորհէին՝ զոր և Գոմինիկեանն Ինստիտորիս յամին իբր 4484. «Աշխարհ գժողով պահանջէ. բայց զհարգ հնար իցէ զումարել ժողովոյ յայժմու վիճակի զլսոց Եկեղեցւոյ : 2իք և ոչ մի ինչ զօրութիւն մարդկային որ կարող իցէ բարեկարգել զԵկեղեցի ի ձեռն ժողովոյ : Հարկ ի վերայ կայ սպասել՝ զի որով և իցէ անյայտ ձանապարհաւ օգնական լինիցի ինքն իսկ Աստուած, 595) :

Գերմանացիքն յայնմ ժամանակի սաստիկ յաջազանօք Հայէրն ի Գաղղիացիս, յԱնգղիացիս, ի Սկովտիացիս և յայլ ազլինս,

(\*) Նախնի Հեւրէնք և Հռովմայեցիք «Սիբիլայոս», խօսին զհարգութեանն ոմանս, և յարգելն զպարգումն նոցա : Մի ի որոտնցն Սիբիլայոյ եր Սիբիլայոն կոմայի, որ եթեր առ Տարիւնիննու երեցարտայ Հռովմայ գիրս ինն բնականութիւնս բնաւաւնութեանց զարտաւազակն, և ի բնագործել արտայի զգրեանն նուազ քան զարժեւ նոցն՝ Սիբիլայոն արի ընտին ի հար :

ընդ որս և հռովմէական պալատն վարէր ոչ այնքան արհամարհանօք, և զորս կեղեքէր ոչ այնքան անխիղճ անգթութեամբ որպէս զմատնեալն յիւրեանց իշխանաւորաց ի զննումն զբարբարոսն՝ բայց զխոնարհ և զհամբերող Գերմանացիս : Արդէն վաղու ևս Ենէաս Սիլուիոս, որ և Պիոս Բ, ասէր զԳերմանացւոց՝ թէ ի պատճառս բարբարոսութեան իւրեանց պարտին նոքա պատիւ անձանց համարել և շնորհ ևս ունել, զի արքունիքն Հռոմովնայ զօրութեամբ հրահանգիչ կողման և պաշտաման իւրոյ վաղու ևս փորձեցելոյ, մանաւանդ ի վերայ Գերմանիոյ, խառնի ի գործս Գերմանացւոց, և հրամայէ առատապէս առնել ինքեան հատուցումն վասն այնպիսի (սնամոց 594) :

Յորժամ կայորրնտիրն Յակոբ Տրեւիրացի խորհուրդ տայր Փրեղերիկոսի արքայի թեթեացունել զժանրութիւնս ժողովրդեան՝ առ ի շահելոյ զսիրտ ազգին Գերմանացւոց, նեղելով զնորրնտիր պապն Վալլիստոս Գ, Ենէաս Սիլուիոս համոզեաց զթագաւորն ունել զճանապարհ բոլորովին այնմ հակառակ : Թագաւորն պարտի, ասէր այրն Իտալագի, վասն օգտի իւրաքանչիւր կողմանց՝ դաշնակցել ոչ ընդ ազգին Գերմանացւոց, այլ ընդ պապին. որովհետև ի մէջ թագաւորին և ազգին կայ և մնայ տակաւին անհաշտ իմն թշնամութիւն. վասն որոյ գործ է առաւել խոհեմական՝ ջանալ առ ի շահել զսիրտ նորրնտիր պապին (595) :

Եւ այսպէս մնայր Հռովմ՝ որպէս և էր՝ ընդարձակ զսրոց ատաւորութեանց, յորում Գերմանացի և Իտալացի քահանայք պարտական էին անցուցանել ոչ սակաւ ժամանակ ուսումնական՝ իրրև պաշտօնեայք պալատան պապին. և անտի դառնային ի տուն ծանրաբռնեայք մեղօք, բայց և ճոխացեալք թոյլտուութեամբք, ներողութեամբք և շահաւետ եկամտիք :

Ընդհանրապէս անժուժկալութիւն այնր ժամանակի անհաս իմն էր ի մտաց. Եկեղեցականացն համարնակութիւն ընդ հարձից այնպէս հասարակաց իմն սովորութիւն էր ի վիճակս և յամենայն կողմանս քրիստոնէից Եւրոպայ, զի և ոչ ևս միտ զներ դք այնմ : Ի զաւառս զաւառս մարթ էր համարձակ ա-

սել՝ թէ յերեսուն եկեղեցականաց հաղիւ կարելի էր գտանել զվի որ որ ի սգաստութեան պահէր զանձն իւր, մինչդեռ այժմ ոչ սակաւ տեղիք են՝ յորս եկեղեցականք մեծաւ մասամբ ազատ են ի կասկածանաց անժուժկայութեան : Պատճառք զանազանութեանս այսորիկ էին ընդհանուր ապականութիւն եկեղեցական կառավարութեան ժամանակին : Զընտրութենէ, ըզփութաջան պատրաստութենէ ի ծառայութիւն Եկեղեցւոյ խորհել անգամ չլինէր յայնժամ, յորժամ ընդ արծաթոյ վաճառէին զամենայն, յորժամ ձեռնադրութիւնք և ծուկք զընեալ և շնորհեալ լինէին ի Հոռովմ, յորժամ արք երկիւղածք՝ որք չկամէին արատաւորել զանձինս սիմանականութեամբ՝ պարտական էին կալ մեկուսի, իսկ աներկիւղքն և անխիղճք նախապատիւ էին և արագ արագ հասանէին ի բարձր բարձր պաշտամունս : յորժամ դասք եկեղեցականաց այնու և եթ զանազանէին յայլոցն կոչմանց, զի կարող էին վարել զանգործ և զանդորրագոյն կեանս, տային զբազմութիւն արտօնութեանց, և չնչին պարտականութիւնս հնարեալս ի կրօնաւորական կարգաց : Փոյթ մեծ ունէր պալատն՝ զի ի կղերին տիրեցէ լիուլի աղատութիւն ի պատժոց և ի պատասխանատուութենէ : Անդ ուր զուելքն ինքնին տային զօրինակ արհամարհութեան աստուածային և մարդկային օրինաց, ոչ էր մարթ ակն ունել՝ զի հպատակքն առնուցուն անձամբ ի վերայ իւրեանց զծանր լուծժուժկայութեան, և այնպէս ախտն անխափան տարածանէր շուրջանակի մինչև ի հեռաստան : Ամենայն որ որ գայր ի Հոռովմէ՝ պատմեր յիւրում տանն՝ թէ ի մայրաքաղաքի անդ քրիստոնէութեան, ի ծոցի մօրն մեծի և դաստիարակի ամենայն Եկեղեցեաց զրեթէ ըովանդակ կղերն՝ առանց բացառութեան՝ հարձս պահէ առ իւր կամ բողարած լինի 596) :

ԻԶ.

## ԺՈՂՈՎՆ ԼԱՏԵՐԱՆՈՒ : —

Յուլիոս Բ եւ Լեոն Ժ : — Վճիռ ժողովոյն : — Տղի-  
տուծիւն աստուածարանից ժամանակին :

Իսկզբան ժԶ դարուն առ Յուլիոսի Բ յարեան շիտիճք յարեմուտս, և դէպ ժամանակ թուեցաւ այն պալատանն ի ձեռս բերեղջ վերստին զկորուսեալ իրաւունսն : Լուզովիկոս ԺԲ արքայ Գաղղիոյ և Մաքսիմիանոս արքայ Գերմանիոյ բաժանեալք ի պապէն ըստ քաղաքականին՝ Հրաման ետուն եկեղեցական ժողով լինելոյ իրրև ի Հնարս օգնականութեան : Զառաջինն ի Թուռ քաղաքի կազմեցաւ գաղղիական սինհոդոս ազգային, և ապա ի Փիզա կոչեցաւ ժողով տիեզերական, որ զբեթէ միայն ի Գաղղիացւոցն եկեղեցականաց կազմեալ գորով, ի գնացս իւր ընդ պապին հետևող եղև Բասիլեան ժողովոյն : Եւ քանզի վէճն էր պարզապէս քաղաքական, որպէս յայտ է ամենեցուն, և զտիրապետութենէ յՄտալիա, վասն որոյ և զործն ոչ եղիտ զյաջողութիւն : Յուլիոս, և յետ նորա Լեոն Ժ, արարին հակառակ այնր ժողովոյ զիւրեանցն ժողով Լատերանեան, յորում էին նախկոպոսունք իրր վաթսուն և հինգ :

Զախողելն ժողովոյն Փիզայի իրախուսեաց զպապական պալատան կշռել և յիւրմէ կողմանէ ժողովոց հարուած ինչ վերջին. զի և անուանքս Սոստանդիա և Բասիլիա՝ ի ժամանակի անդ յառաջանալոյ վայրագութեան և եկեղեցական տգիտութեան յամէն 1460 ցամն 1545 միժագնեցան յոյժ : Փրանկիսկոս Ա զոհեաց զգործնական վաւերագրութիւն իրաւանցն շրնորհելոց նմա ի պաշտպանութիւն Եկեղեցւոյ. որով ընտրութիւնքն ոչընչացան, և միճակ կղերին որ զհետ էր միշտ պատուոյ և շահաւէտ հասից ժողովրդապետութեանց, բոլորովին յանձնեցան ի ձեռս թագաւորի : Այսու օրինակաւ ի Գաղղիա

Լս զյիսաւոր նեցուկն ամբուժեան Հեղինակութեան Բասիլեան ժողովոյն անկաւ . իսկ ի Գերմանիա զնոյն անկումն պատրաստեաց զաշնն համաձայնութեան հաստատեալ ի Աննա :

Ոչ բազմօք ինչ յառաջ քան զայն՝ Մարսիմիանոս արքայ, յայսմ մասին արժանաւոր որդի հօրն իւրոյ, եթող ըզժողովն Փիղայի, և միացաւ ընդ Յուլիոսի Բ և ընդ Լատերանեան ժողովոյ նորա : Բայց ի Հռովմ՝ այնպէս համարէր պալատն՝ թէ հասեալ է ժամանակ ազատելոյ զկղերն, որ ի Պաղղիա բոլորովն կախեալ կայր զգլխութենէ արքունեաց և զկապանաց տէրութեան և զպարտուց հպատակութեան, և ըստ այսմ յիններորդի զումարման Լատերանեան ժողովոյն պապն և եպիսկոպոսունք արարին վճիռ այսպիսի . «Չօրութեամբ  
 ,,աստուածային և մարդկային իրաւանց ոչ վայելէ առն աշ-  
 ,,խարհականի ունել զոր և իցէ իշխանութիւն ի վերայ եկե-  
 ,,ղեցականաց» : Սովիմբ միանգամայն հաստատէին զնախկին սահմանն եղեալ յԻննովկենտիոսէ Պ ի ժողովի 1245 ամի, թէ ոչ որ յեկեղեցականաց ոչ կարէ երգնուլ թագաւորի զերզումն հաւատարիմ հպատակութեան . և ապա հրատարակեցաւ իբրև ճշմարտութիւն ինչ բացայայտ և քաջածանօթ ամենեցուն, որպէս թէ հաստատեալ ի սուրբ Գրոց, ի Հարց Եկեղեցւոյ, ի պապից և ի ժողովոց, թէ պապն ունի լիութի իշխանութիւն ի վերայ ժողովոց, և ըստ իւրոց հաճոյից կարող է կոչել զնոսա, և տեղափոխել և արձակել :

Հաւանական իմն է՝ զի յայնմ ժամանակի՝ յորում տիրեալ էին ի Հռովմ կատարեալ բարբարոսութիւն աստուածաբանական, և զպրոցական ոճ աստուածաբանութեան, որոց պարազուելք էին Պովինիկեանք օմանք, զոր օրինակ Պրիէրոյ և Պայետանոս, և կարգինալքն և եպիսկոպոսունք և ոչ իսկ զայն զիտէին՝ զոր ինչ բազում անգամ հրատարակեալ էին պապքն Մարսիմոս Ե, Եւղինէոս Պ, Նիկողայոս Ե և Պիոս Բ, ապա թէ ոչ՝ թերևս բնաւ իսկ չկարէին յուսալ՝ թէ հեղինակութիւն Աննի ուրուք և կամ ծակամուտ ժողովոյ իբիք կազմելոյ ի վաթսուն և հինգ Բտալացւոց կարող իցէ ի կշիռս

Հասարակացն կարծեաց Եւրոպայ առաւել ինչ ծանրանալ՝ քան թէ Կոստանդեան և Բասիլեան ժողովք զումարեալք ի պապից անտի ի վեր այսր յիշատակելոց :

ԻԷ.

Անհոգութիւն հռովմէական պալատանն : — Անկարգութիւն պապից ժամանակին : — Գին եւ վաճառ եկեղեցական պաշտամանց :

Աս այս արհամարհութիւն ճշմարտութեան և պատմութեան կարևոր պիտոյ էր և այլ ինչ, այս ինքն կատարեալ յապահովութիւն՝ յորում գտանէր յայնժամ պապական պալատն, այս ինքն թէ նա կարող է բուռն հարկանել զամենայն իրաց հնարաւորաց, և թէ որչափ և վտանգաւոր և բազմակնճիռն իցէ քաղաքական գրութիւն իւր յԽաղիա, սակայն յեկեղեցական աշխարհի չկայ նմա վտանգ երկիւղի : Մեղադրութիւնքն և ամբաստանութիւնք որ աստ և անդ լսելի լինէին բարձրաձայն աղաղակաւ՝ ոչ զօրէին խախտել զվստահութիւն նոցին՝ ցորչափ անխափան յառաջէին այնպիսի հանգամանք իրացն : Թէպէտ և ստեպ ստեպ բարձրանային ձայնք վասն գումարելոյ զժողով, որ միշտ և ի վեր քան զամենայն յայտ առնէր զցանկութիւն չափաւորելոյ զպապականն իշխանութիւն, ի պալատան անդ դարձեալ կային մնային յանդորրու : Կապանքն որովք զօղեալ էր կղերն ընդ Հռովմայ, յընթացս ամաց հարիւրոց՝ այնքան առին պնդութիւն, զի ամենայն որ եկեղեցական որ զըւեւ ամբառնայր՝ դատապարտեալ լինէր անպատճառ ի կորուստ, իսկ աշխարհականք չկարէին զերծաննել ի բանադրանաց և յամենայն հետեանաց նոցին : Այլ և արիասիրտն Գրիգորիոս Հէյմպուրկեցի հազիւ եզիտ իւր տեղի ապաստանի առ Հուսեան արքայի ի Պոհեմիա, և անդ հիւանդացեալ և ծերացեալ յոյժ յամին 1472, հարկեցաւ խնդրել ի Հռովմէ զարձակումն 596) :

Սակայն քրիստոնեացքն ոչինչ ցուցանելով հակառակութիւն արժանի յիշատակի, այլ և ոչ ամբառնալով զձայն դատապարտ վասն խնդրելոյ զժողով, հանգուրժեցին կառավարութեան այնպիսի պապից՝ որպիսիք ոմանք էին Պօղոս Բ, Սեքրստոս Գ, Իննովկենտիոս Ը, Աղեքսանդր Զ, որք առ հասարակ թեակոխէին իմն անցանել զանցանել ախտաւորութեամբքան զնախորդս իւրեանց։ Պօղոս Բ, ապականեաց իւրովք անառակութեամբքն զաթոռն Պետրոսի, և յաղբ ևս դարձոյց զայն, որպէս ասէ ոմն ի պատմագրաց ժամանակին 596)։ Նոյն վկայ ականատես յաւելու՝ թէ զիտմամբ գնաց ինքն ի Հռոմ, և հնարեցաւ մուտ գտանել ի պէտպէս խումբս եկեղեցականաց, բայց ոչ ուրիք եղիտ զայր ճշմարտապէս բարեկրօն։ Իսկ զոր ինչ ասէ նա զվարուց պապից, կարդինալաց և այլոց աւագ եկեղեցականացն՝ սաստկագոյն ևս է։

Առ Պօղոսիւ, և մանաւանդ առ Սեքրստոսի Գ և առ Իննովկենտիոսի Ը, ահագին վաճառանոցն եկեղեցական առաւել ևս ընդարձակեցաւ. քանզի ջանային իշխանութիւնս պատրաստել թոռանց իւրեանց, և ճոխացուցանել զկողմնական ուստերս և զգատերս։ Նորանոր պաշտամունս հնարէին առ իսկոյն վաճառելոյ զնոսին, և զկարդինալականն աստիճան սկսան վաճառել ընդ մեծազումար դրամոց։ Լևոն Ժ և Աղեմէս Ը վաճառեցին ոչ սակաւ կարդինալական պաշտամունս. քանզի շրուպլութիւն տոհմին Մետիշեանց \*) գատարկացոյց և զանըսպառ կարծեցեալն զանձարան պապին։ Ծագաց ի ծագս Եւրոպայ ասէին ամենեքեան՝ թէ ի Հռոմ մմենոյն ինչ ընդարձաթոյ վաճառի։ Զնոյն արդարեւ ասէին և զրէին արդէն ի 400 ամաց հետէ՝ ներքոյ և արտաքոյ Իտալիոյ. բայց իսկզբան ԺԶ

(\*) Մեթիշէ էմ Մետիշեանէ մեծահամբաւ ուղեւորուէ էին ի փլորենտիա, հուլիտիւ իշխանաւթեամբ և ճոխաւթեամբ. ի նոցանէ էացին Բաղուս քահանայ յիտալիա, ևս և պապ է Հռոմ, և իտալաորդ է Գաղղիա։

դարուն հասարակաց միտք հաւանեալ էին ընդ այն. իսկ յառաջ քան զայն ոչ երբէք այնպիսի յաճախութեամբ, այնքան յայտնապէս և լրբաբար յանդիման ամենայն աշխարհի գործեալ լինէր վաճառաշահութիւն այնպիսի. ոչ երբէք այնքան կատարելագործեալ էր տակաւին արուեստ ի դրամն փոխելոյ զամենայն որ ինչ կայրն յԵկեղեցւոջ և յաստուածպաշտութեան : — Կոմսն Յովհաննէս Փրանկիսկոս Փիքոյ Միրանտոլացի \*), որ զրեաց առ Լևոն Ժ, զիրս զթշուառութենէն Իտալիոյ և զպատճառաց նորին, ի մէջ բերէ իբրև զմի ի նշանաց յեօին անկարգութեան և անաստուածութեան իտալական ազգի, զայս ինչ՝ զի պաշտօնական և հրապարակական եղանակաւ լինէր վաճառումն եկեղեցական և բարեպաշտական իրաց ամենայնի որ առաւել քան զայլսն վճարէր 597) :

ԻԸ.

Սակարկութիւնք ի պատրական Գիւանին : — Ստուգութիւն իրացն :

Յամին 1342 սկսան տպագրել ի Հոռովմ մատեան մի պաշտօնական՝ յորում հրատարակեալ լինէին սակք կամ տուրք ընկալեալք ի հոռովմեական գիւանէ : Զիք երկրայութիւն՝ զի զլիաւոր հիմն նոցին էր սակն կամ տուրք կարգեալ արգէն առ Յովհաննու ԻԲ. բայց յայնժամ զէթ ի ծածուկ ունէին զայն, իսկ ապա հրապարակաւ վաճառուր 598) : Արագապէս տարածեալն ընդ ամենայն կողմանս սակ տրոց երաց զաչս ամենե-

(\*) Մեթոհոմբաւ Իտալացի է որոմանոսյ հասակէն հուշակեալ ի-բովն ունիմ-նեմբ, պերճախօսութեմբ, բռնասրեղծութեմբ և ազգի ազգի հոգոս-նեմբ : Ո՞րն է բազմակե- առաջարկութեանց նորա դարապարտեցան յինն-զինարիսէ Ը էբրև Տուրանիան : Վրիճանեցաւ յամին 1494 է հասակէ 54 տաց :

ցուն ի վերայ ահազին բազմութեան հռովմեական վերապահութեանց և արգելմանց, և միանգամայն ցուցանէր զչափ գնոյ ամենայն լուծմանց նոցին և արձակման ի ծանր ծանր յանցւածոց, ի սպանութեանց, յազգապղծութեանց և այլն: Յետ ժամանակաց զայս զիւանական սակ պաշտամանց համարեցան ոմանք հնարս լինել թշնամեաց պապութեան. բայց կրկին և կրկին տպագրութիւնքն եղեալք հաւանութեամբ պապին \*) չտան բնաւ տեղի կասկածանաց դատութենէ նոցին 599): Յայտ իսկ է յայնցանէ թէ որպէս յանփոյժս և յապահովի համարէին զանձինս ի Հռովմ, և որպէս կարծէր պալատն թէ կարող է զամենայն ինչ հրաման տալ աշխարհի: Պարի իսկ սխերիմն ի թշնամիս Հռովմայ չկարէր արգելօք չարագոյն ինչ խորհել և հնարել քան զհրատարակումն այսր մեքենայադործութեան, որ յընթացս դարուց բազմաց ի շարժման գողով՝ հետզհետէ զարգացեալ էր, և յորում օրէնքն վասն այնորիկ միայն եղեալ թուէին՝ զի կարելի լինիցի վաճառել զիրաւունս և լուծանել գնախն, և հրաման էր մարդկան վայելել ի բնականագոյնն յիրաւանց յայնժամ և եթ՝ յորժամ զրամս ընդ այնոցիկ վճարիցեն 400):

(\*) «Եւ զայս (լուծումն օրինաց պապին) սահմանեալ և հանունեալ, և նորդ կորած դրամով, ինն սպիւն և ինն զւռուռու, որպէս գրեալ է ի վեջ պապորած Կեթիլերին, որ իսկն «Կեթիլեր նորայն չարացայ ախտոսն», սակ Տէր Գեորգի Միլայիմ՝ օղտս ի գիրսն «Յաղագրութեանն պարծումնեանց Եփեսոսոսն Բրիտանոսն», զոր գրեալ է յաթն 1715:

ԻԹ.

## ԿՈՆԵԿՏՈՍ ԵՒ ՍԱՒՈՆԱՐՈՒԱ: —

Աղեքսանդր Պորճիա: — Բննետիկոսս ԺԳ:

Չէր ինչ բնաւ փոյթ պապական պալատանն՝ եթէ մատենագիրք ամբաստանէին զնա պատճառս զոչ ամենայն միասուց քրիստոնէութեան, թունաւորիչ և զահիճ ազգաց և ազանց, թէպէտ և ստոյգ է զի աստ և անզ չարաչար վրէժխնդիր լինէր, մանաւանդ եթէ ամբաստանողն զպալատանէն էր պերճախօս ոք՝ սիրելի ժողովրդեան: Յորժամ Վարմեղականն Թովմաս Կոննիկոսս, որ զամս բազումս շրջեցաւ քարոզութեամբ ի Գաղղիա, ի Փլանդրիա և յՆտալիա և զանթիւ մարդիկ զարձոյց յուղղութիւն, և իրեւելի էր վարուցն սրբութեամբ, սկսաւ կշտամբել զպալատն Տոմէական, Եւզինէոս Գ Տրամայեաց արկանել զնա ի տանջանս և կենդանւոյն այրել ի Տուր 401):

Չնոյն արար և Աղեքսանդր ընդ Սաւոնարոլա: Առ Տոչալիա որ և պերճախօս աստուածաբան բողոք Տարկաներ՝ Տարկէ բարեկարգել զԵկեղեցի, և խորհուրդ տայր թաղաւորաց ձեռն օգնականութեան կարկառել ի գումարումն տիեզերական ժողովոյ: Աղեքսանդր բանազրեաց զնա վասն այնորիկ, և սպառնացաւ Փլորենտացոցն՝ զնել ի վերայ նոցա զարգելս: Եկին Տասին գործակալք պապին, և Սաւոնարոլա Տանդերձ երկօքումբ կրօնակցօքն իւրովք զատապարտեցաւ, և զիսկն նորա արկաւ ի Տուր. և այսպէս Տասարակ կրօնաւոր ոք քարոզիչ ի պարտութիւն մատնեցաւ յերեսաց թաղապսակ աստուածաբանի. զի այնպիսի իսկ էր Աղեքսանդր, թէպէտ և ունէր որդիս և Տոմանիս 402): Մինչդեռ տակաւին անուանէր նա Հոողերիկոս Պորճիա՝ եցոյց այնպիսի իմն քաջութիւն աստուածաբանական, որով իսկոյն արժանացաւ կարմիր գտակի կարգինալութեան: Բաց ի ծանօթութեանց ի կանոնս զիւանի պապին՝ յօրինեաց զրուած մի լի իմաստութեամբ ի ջատագո-

վուժիւն համաշխարհական միապետութեան պայլին 405) : Բայց Սաւոնարոյա էր, որպէս խոստովանին և թշնամիք նորա, ոչ միայն մի ի յոյժ հանձարեղ մարդկանէ, և ի քաջակորով աստուածաբանից իւրոյ ժամանակին, այլ և անդամ միոյ ի հզօրագոյն կարգացն կրօնաւորաց, յորում ունէր և բազմաթիւ հետևողս : Եւ ահա այսու ճանապարհաւ պատուեցաւ նա իբրև զսուրբ որ և վկայ նահատակեալ վասն ճշմարտութեան. և նա ինքն պայն Բենեդիկտոս ԺՊ յետ ժամանակաց ծանեաւ զնա արժանաւոր դասելոյ ի կանոնս սրբոցն 404) :

## Լ.

## ԻՏԱԼԻԱ ԵՒ ՊԱԼԱՏՆ ՊԱՊԱԿԱՆ :

Կարծիր Մարիաւելլեայ եւ Կուրչչարտինեայ :

Իտալիա առաւել ևս զոչ եղեալ է պալատանն քան զԳերմանիա. սակայն Իտալացիք զիւրագոյնս հանդուրժէին այնմ ամենայնի, քանզի գումարք զրամոցն զորս հատուցանէր Եւրոպայ պապական արքունեաց՝ բաշխէին ապա ի պատճառս ճոխանալոյ ազգակցաց պայլն՝ ընդ ամենայն կողմանս թերակղզոյն. կարգինայքն և եպիսկոպոսունք էին ըստ մեծի մասին մարմինք ի մարմնոց նոցա և ոսկերք յոսկերաց նոցա : Բայց որչափ մերձաւորագոյն էր արեւակցութիւնն այն, այնքան առաւել վնասակարագոյնք էին բարոյական ազդեցութիւնք : Երբ խոհականք յԻտալացոց ժամանակին, որք կարող էին առնել համեմատութիւնս և բաղդատութիւնս, զայս կարծիս պինդ ունէին՝ թէ ողզն իւրեանց իւրովն սպականութեամբ և ամբարշտութեամբ գեր ի վերոյ էր այլ ամենայն ազգաց եղկոց ի կողմն հիւսիսոյ : Մարիաւելլի ասէ յայտնապէս. « Իտալացիքն պարստին շնորհ ունել յաղազս այսորիկ Եկեղեցոյն Հռովմայ և քահանայից նորին. քանզի չար օրինակաւ նոցին կորուսար մէք զամենայն կրօն և զաստուածսաշտութիւն, և եղաք ազգ

\* շար և անհաւատ, 405) : Եւ այլուր սեւ. « Որչափ առաւել  
 ,, մերձաւոր իցէ ժողովուրդ ինչ յարքունիս Հռովմայ, այնչափ  
 ,, նուազ է աստուածպաշտութիւն նորին : Եթէ արքունիքն այն  
 ,, զնտեղեալ էին ի մէջ Զուիցերացւոցն բարեպաշտից, ախտա-  
 ,,ւորութիւնք պալատանն ի սուղ ժամանակի դարձուցանէին և  
 ,, զնահանգն զայնոսիկ յանապատս ամայիս, : Քաղաքա-  
 ,, կիցն Մաքիաւելլեայ Վուիչարտինի, որ զամն բազումն ծառա-  
 ,, յեաց ի մեծամեծ պաշտամունս առ ժամանակօք պապիցն կա-  
 ,, ցելոց ի տոհմէ Մեղիշաննց, կառավարէր զգաւառս, և հրա-  
 ,, մանատար էր զօրաց, յոռեղոյն ևս տայր զպայմանէ վկայու-  
 ,, թիւն. քանզի ի խօսելն զգանգատանաց Մաքիաւելլեայ ստէր.  
 ,, Որչափ և վատարանիցէ որ զհռովմէական արքունեացն, սաւ-  
 ,, կայն արքունիքն այն միշտ արժանի են առաւելագոյն ևս պար-  
 ,, սաւանաց, 406) :

ԼԱ.

ԿԱՐՅԻՔ ԻՏԱԼԱՅԻՈՅՆ :

Աղբիանոս 2, եւ վկայութիւն նորա : — Գիրերտոս  
 Եպիսկոպոս եւ վիճակ նորա : — Կրօնական տգիտու-  
 թիւն ժողովրդոց եւ քահանայից :

Զբանս պաշտօնեիցն այնոցիկ տէրութեան զպականու-  
 թենէն՝ յորում պատճառս տայր յՊապիա պալատն պապին՝  
 հաստատուն և բանք եպիսկոպոսաց : Իսիդորոս Քիւսի եպիսկո-  
 պոս Ֆոլլենիոյի, որ գոլով ի Տրիգենտոն (Թրէնթոյ) քաղա-  
 քի՝ կարէր բարւոք ճանաչել զընկերակիցս իւր, այլ թէ « Յու-  
 ,, տալիա ի միջոյ երկերիւր և յիսուն եպիսկոպոսացն հազիւ է  
 ,, գտանել արս չորս՝ որք արժանի իցնն անուան հովուաց Ե-  
 ,, կեղեցոյ, և ըստ արժանւոյն կատարիցն զպարտս պաշտա-  
 ,, ման իւրեանց : Եթէ Խտալացիքն այսչափ օտարացան ի բը-  
 ,, ռիստոնէական հաւատոց, մինչև յիբրաի է ասել՝ թէ մեռ-  
 ,, նալ է ի նոսա բրիստոնէականն զաւանութիւն, պատճառք

„իրացն են եպիսկոպոսունք և քահանայք, վասն զի և բո-  
 „վանդակ կենցաղս մեր էր անդուլ քարոզութիւն ամբարշտու-  
 „թեան,“ (407) :

Հնորհասպարտ եմք արդարև այսմ հանգամանայ՝ զի յայնմ  
 ժամանակի բազում ինչ ասացաւ յԽաւիա, և ի վեր երևե-  
 ցան խոստովանութիւնք ինչ ճշմարտութեան, ոչ ինչ միտ  
 դնելով կրօնաքննութեան. իսկ յետ այնորիկ յերևել կղզու-  
 թացն՝ լուծեամբք իւրեանց և չպարիւք և ծածկարանու-  
 թեամբք, այնուհետև լուեաց և ճշմարտութիւն : Նորին իսկ  
 պապքն ոչ ինչ զանդադէին խոստովանել բազում ինչ՝ ընդ  
 որ կարգինալքն և եպիսկոպոսունք մեծաւ մասամբ չհաւանէին :  
 Ազրիանոս Զ, յայտ արար ազգին Գերմանացոց ի ձեռն զես-  
 պանին իւրոյ Քիէռէկաթի, զի արդէն ի բազում ամաց հետէ  
 առ հռովմէական աթոռովն գործին բազում գործք նողկալիք,  
 և զի ամենայն ինչ ի չարիս ընթանայ, պապք և եպիսկոպո-  
 սունք տարածեցին զպպականութիւն վերուստ մինչ ի վայր :  
 Եթէ կային ևս յԽաւիա տակաւին ուրեք բարեմիա եպիսկո-  
 պոսունք, նորա ի կամէն առնել ինչ ուղղութիւն ի վիճակս  
 իւրեանց՝ արդէն զգային զանկարողութիւն իւրեանց (408) : Յոր-  
 ժամ Մատթէոս Գիրերտոս գործակալ պապին Աղեմայ Է, յայց  
 ել ուր ուրեմն վիճակին իւրում ի Ա.երոնա, ետև զի բաժա-  
 նեալ էր արդէն քաղաքն այն ի վեց վիճակս եկեղեցականս և  
 փութապէս հարկադրեցաւ յետս կալ ի բարեկարգութեանցն  
 զորս կամք առնել. քանզի նեղեալ էր յոյժ ի բազմութենէ  
 բացառութեանց ի ներքուստ իշխանութեան իւրոյ (409) : Ան-  
 սագիրն Գիրերտոսի ի նկարագրել անդ իւրում զհանգամանս  
 Առնպարտից, ասէ թէ ժողովուրդն անդէտ էր բոլորովին և տե-  
 բունական աղօթիցն և հանգամանակին հաւատոյ : Բազումք, ասէ,  
 չգնան և ոչ միանդամ ի տարուջ ի խոստովանութիւն և ի  
 հաղորդութիւն. իսկ որ լաւագոյնք ի նոսա համարին՝ հաղոր-  
 դին ամ ըստ ամէ առ սոլորութեան և եթ :

Մարթ է տեսանել և ի շարագրածս եպիսկոպոսին Իսիդո-  
 րի Քիւրթի՝ թէ յորում պայմանի կայր կղերն և ժողովուրդն ի

նահանգս պատկին : Յամին իբրև 1330 ետես նա ի վիճակին իւրում, զի ամենայն քահանայք՝ բաց ի միոյ կամ յերկուց՝ ոչ զիտէին զբանս արձակման ի մեղաց (այս ինքն է զՈղորդեցին), և զձև բանից արձակման ի բանադրանաց համարէին ձև արձակման մեղաց ի խոստովանութիւն : Հարկ եղև նմա առաքել առ նոսա ուսուցիչ զգր, զի ուսուցէ նոցա ընթեռնուլ զխորհրդատետր պատարազին : Բայց կղերն նորա արհամարհեալ էր յաչս ժողովրդեան առաւել վասն տխտիցն իւրոց՝ քան թէ վասն տղիտութեանն : Բաղմագոյնք ի ժողովրդապետաց անգէտ էին ընթերցանութեան 410) : Համառօտ ասել եթէ համեմատէր զք զիրան որ գործէին առ պապական պալատամբն՝ ընդ աշխարհս հեռաւորս, սորա ոչ այնքան տխրական ընծայէին տեսարան :

Լայնածաւալ վիճակն Մեղիոնալու, յորում էին 2500 քահանայք, զամս վաթսուն մնացեալ էր առանց եպիսկոպոսի : Ի տունս քահանայից գտանէին միայն զէնք և հարձք և տղայք : Յառակս լեալ էր ի բերանս ամենեցուն՝ թէ «Անբոյթ ճանապարհ ի դժոխս գործն է քահանայից» : Աիրառութիւն խորհրդոց գրեթէ անհետացեալ էր : Եւ ահա այսորիկ են որուազիձք ինչ սարսափելի պատկերին այնորիկ՝ զոր յետ սակաւուց նկարագրեաց զհանգամանաց տեղոյն ճիւսսանոյ քահանայ Միլան քաղաքի 411) :

ԼԲ.

ԼԵՒՈՆ Ժ. — Բանք Գիրիւտոսի և Երասմոսի : — Կուռնելիոս Մուսսոյ :

ԼԵՒՈՆ Ժ ընտրեալ ի պապութիւն յամին 1313, ժառանգեաց ժառանգութիւն սոսկալի, որ ահարկոս պարտ էր լինել արիագունիցն անգամ ի մարդկանէ : Նախորդքն նորա, սկըսեալ ի Պօղոսէ Բ, զամենայն հնարս հնարեցան առ ի ծածկելոյ զպապական աթոռն ամօթով և ամբարշտութեամբ, և

մատնելոյ զԽտալիա յարհաւիրս անվախճան պատերազմաց .  
 և սակայն առաջին շարժումն Լևոնի ժ, եղև սկիզբն առնել  
 զուարճալից կենցաղավարութեան 412) :

Գիտէին կարգինալքն թէ Հռովմ՝ և պալատն պապական  
 ատելի են աշխարհի, և սակայն անդորր սրտիւ անվոյթ լինէին :  
 Գիրերտոս, զոր ի վեր այսր յիշեցաք, յառաջագոյն զուշակէր՝  
 թէ « Ի դէպս պատերազմի Գերմանացիք անշուշտ կամակար  
 մխեսցին խուռն բազում թեամբ յԽտալիա ի պատճառս ատելու-  
 թեանն՝ որով ատեն զմեզ , , Երասմոս ասէր բազում անգամ՝  
 թէ հերձուածն եկեղեցական որ անդադար ածելով աճէ՝ ըն-  
 դունի զսնունդ իւր յատելութենէ աստի : Եւ արդիւնք իրացն  
 յայտնապէս այնմ վկայէին : Նաև անձնանուէր եպիսկոպոսն  
 Պիթոնտի Աուռնելիոս Մոսսոյ, ընտրեալն յատնախօսու-  
 թիւն Տրիդենտեան ժողովոյն, ասէր համարձակ . « Հռովմէա-  
 , , կանդ անուն ատելի է ամենայն ազգաց, և բարեկամքն ան-  
 , , զամ՝ յողոց հասնն՝ հայելով յամօթ և ինախատինս Եկե-  
 , , ղեցւոյն Հռովմայ 415) : Եթէ արդ իսկ (ի 11 ժամու աու-  
 , , րրս) եպիսկոպոսունք ի խորհուրդ բազմէին՝ թէ զի՞նչ պարտ  
 , , իցէ առնել վասն սահման դնելոյ անկարգութեանց և ուրա-  
 , , ցութեանց յեկեղեցւոյ, իսկոյն տեսանէին՝ զի պալատն ջղա-  
 , , կոտոր առնէր զեպիսկոպոսական իշխանութիւն իւրեանց , , :

## ԼԳ.

Եպիսկոպոսունք Գաղղիացւոց ևս Հռովմ :

Ի ժողովին Փարիզոյ զոր արարին Գաղղիացի եպիսկոպո-  
 սունք Սանս դաւառի յամին 1525, եղաւ և կանոն այսպիսի,  
 թէ եպիսկոպոսունք զանալով զձեռնադրութիւն՝ մի հեռացու-  
 ցին յինքեանց զանարժան և զանպիտան կղերիկոսունս . քանզի  
 ամենայն որ իսկոյն ի Հռոմ գնայր, և անդ առնոյր զձեռնա-  
 դրութիւն 414) : — Յետ ամաց քսանից եպիսկոպոսունք Գաղ-  
 ղիոյ ի ժողովին Մրէզօն քաղաքի հարկ համարեցան բողոք ու-

նել ընդդէմ պաղատանն, որ յանկարծակի իմն համարձակեալ էր բաշխել զեկեղեցական պաշտամունս ի Պրեթայն և ի Փրոփանս գաւառս, և հակառակ գաշխնն համաձայնութեան 1517 ամի կամէր մուծանել ի Փարիզ զողջոյն իսկ զանկարգութիւն սիմոնականութեան՝ հանդերձ անսպառ դատաստանօք որ զՏեառ գային յայնմանէ. և այսու, որպէս ասէին եպիսկոպոսունքն դառնացեալ ոգւով ցոյսայն, բարձեալ լինէր ամենայն ակնկալութիւն բարեկարգել զԵկեղեցի 415) :

ԼԳ.

Խոստովանութիւն Կայետանոսի :

Հռովմ՝ որ հաւաքեալ էր առ իւր զանթիւ գումարս զրամոց ի բովանդակ արեմոց, յամին 1527 կողոպտեցաւ ի Գերմանացոց, յԻտալացոց և ի Սպանիացոց, և ճմխալ քամեցաւ իւրեւ զսպունգ ջրալիր. և այն պատահար, որոյ նմանն չիք եղեալ ի պատմութեան, երաց զայս բազմաց. Կայետանոս կամ Տէվիոյ, զրեաց յետ կողոպտելոյն Հռովմայ. «Ըստ  
 ,, ամենայն իրաւանց վարք հովուաց Եկեղեցւոյ գտանին յա-  
 ,, նարդութեան, և բան նոցա անզօր է ամենեկին : Այժմ իմիտ  
 ,, առնումք զայս մէք եպիսկոպոսունքս Հռովմայ, յորժամ ար-  
 ,, դար դատաստանան Աստուծոյ մատնեցաք ի գերութիւն,  
 ,, յաւար և ի յափշտակութիւն ոչ անհաւատից, այլ քրիս-  
 ,, տոնեկց : Մէք յարտաքին արարողութիւնս և եթ եմք պիտա-  
 ,, նացու, և ի վայելս արտաքին բարեաց, և ոչ յայլ ինչ ա-  
 ,, մենեկին, վասն այնորիկ և կործանեցաք ի ստրկութիւն », 416) :  
 Եւ որ զրէքն զայսոսիկ էր աստուածաբան պաղատանն, և խորհրդական գողով Լեոնի Ժ, յորդորեալ էր զնա ի գումարել զամօթալի Ժողովն Լատերանու, խրատ տուեալ էր նմա հանել վճիռս ընդդէմ Աոստանդեան և Բասիլեան Ժողովոց, ստիպեալ էր զնա ի հրատարակել թէ ամենայն քահանայ ունի իրաւունս աստուածայինս չճաղանդելոյ թագաւորին իւրում :

և յամենայն զրուծիւնս պապին նա լեալ էր աջոյ ձեռն նորա . նոյն ինքն և նուիրակ պապին կարգեալ ի Գերմանիա՝ զբողոսաց և զայրացոյց զվէճն Լուծերի իւրով խրոխտանօքն, և լծեալորեաց պապին հերետիկոսս համարել զամենեակն որք չհաւանէին ընդ զատապարտութիւն և ընդ այրումն կախարդաց :

Յայնմ ժամանակի յամենայն զըտցս և ի խորհրդածութիւնս զորս աննէին կաթողիկէքն և բողոքականք զազդեցութեանէ պապին ի վերայ Եկեղեցւոյ և զկառավարութենէ Հռովմայ յիրս հաւատոյ, բազում անգամ դէպ լինէր՝ զի ջատագովքն կաթողիկոսութեան հարկադրեալ էին յայտ առնել՝ թէ « Աստանօր մէք ոչ ևս կարեմք պաշտպանել անձանց . մատնեալ եմք ի պարտութիւն, չկարեմք թարուցանել զգործս և յուրաստկալ ի նոցանէ, կամ արդարացուցանել զնոսին », : Արդէն յամին 1549 եպիսկոպոսն Պերթոլտ Չիմզի այսպէս ասէր, և ընդ նմա կարդինալն Փոնթարինի, հեղինակքն Յիշատակարանին Հռովմայ 1558 ամի, Լուզովիկոս Բլախոս, աստուածաբանք Գաղղիոյ և Պելլիոյ, Կլոզիոս Եսիէնս, Հռուարդ Թանիփէր, Գենտիան Հերվետ, եպիսկոպոսն Լինդանոս, Յովհաննէս Հոֆմէյսթէր :

## ԼԵ.

Կարդինալ Քանթարինի :

Եր երբէք զի պապք զայնպիսի իրս լսէին ի հաւատարմագունիցն անգամ ի ծառայից իւրեանց, որոց վասն ի սուլորական դէպս անկանէին արդեօք ընդ զատաստանաւ կրօնաքննութեան, Գասպար Փոնթարինի, զոր Պօղոս Գ, յաշխարհական իշխանաւորէ ուղղակի կարդինալ արար, համարձակեցաւ ասել ցպպան՝ թէ պապական զրուծիւնն որջոյն հակառակ է քրիստոնէութեան և խանգարեալ : Ասէր նա՝ թէ Լուծեր ունէր լիուլի իրաւունս շարադրելոյ զմատեան իւր զգերութենէ Բաբելացւոց : « Ոչ է մարթ զմտաւ ածել ինչ առաւել հակառակ

« օրինացն Գրիստոսի, որ է օրէնք ազատութեան, որպէս զը-  
 « բուծիւն, ըստ որում քրիստոնեայքն պարտին հպատակել  
 « պապին, և պապն կարօղ է ըստ իւրում զատողութեան օ-  
 « րէնս հրատարակել, և լուծանել զնոսին, կամ ազատել ըզ-  
 « մարդիկ ի պարտաց պահպանութեան նոցին: Չէր հնար ար-  
 « կանել զազգ քրիստոնէից ի ստրկութիւն չարագոյն քան  
 « զայս », 447):

Բայց այս ամենայն աղաղակք ձայնից անխելի և անզօր  
 մնային: Պօղոս Գ և ոչ մաղիւ չափ չկամէր տեղի տալ յիւր-  
 մէ իշխանութենէն, և ընդդէմ միումն Գոնթարինեայ անդա-  
 դար գտանէին ի Հոովմ հարիւրաւոր Թորքեմատեանք, Ապի-  
 տանոսք, Բելլարմինոսք, Նաքոպացցիք և այլք:

ԼԶ.

Խոստովանութիոնք եպիսկոպոսացն Իտալացոց եւ  
 նուիրակաց պապին ի Տրեղնտեան ժողովի: — Ան-  
 տոն Փոլէի: — Մատթիաս Ուկոնի: — Ատենախօ-  
 սութիւն Կորիւլանոսի: — Բանք Անտոնի Փլամինիոսի:

Նրկորին ևս ժողովքն, Լատերանեանն յամին 1516 և  
 Տրեղնտեան յառաջումն շրջանի իւրում, համանմանք էին  
 իրերաց յայնմ մասին, զի արք երևելիք՝ որք ատենախօս եղին  
 ի ժողովսն յայնոսիկ, բողոք բառնային ըստ առաջիկայ բա-  
 նից. « Մեր կարգինալքս և եպիսկոպոսունք Իտալացիք և պա-  
 լատականք Հոովմայ ոչխարք եմք անարժանք, որք մոռանամք  
 զպարտս մեր առ մարդիկ: Տեսանեմք զկորուստ անհամար հոգ-  
 ւոց, և անխելք առնեմք զնոցանէ, առ ոտն հարկանեմք ըզ-  
 պատիւ եպիսկոպոսութեան մերոյ. մեր ոչ եմէ հովիւք եմք,  
 այլ զայլք յախշտակողք. մէք եմք պատճառ անկարգութեանցն  
 տիրելոյ յեկեղեցւոյ, և մանաւանդ կործանելոյ աստուածապաշ-  
 տութեան յԻտալիա »,:

Արդինայն Անտոն Փոլէի յայտնապէս ասաց առաջի ժո-  
 ղովոյն յամին 1516. « Հոովմ և հոովմէական եպիսկոպո-

,, սունք պատճառք են այնքանեաց մոլորութեանց և անկար-  
 ,, գութեանց Եկեղեցւոյ : Եթէ ոչ փութայցեմք վերստին ի ձե-  
 ,, ուրս բերել զանուն մեր բարի, որ գրեթէ ոչ ևս է մնացեալ,  
 ,, ամենայն ինչ կորուսեալ է : ,, Մատթիաս Աւինի եպիսկո-  
 պոս Փամակոստայի, որ լեալ էր անդամ Լատերանեան ժողո-  
 վոյն՝ նկարագրէ ի զիրս իւր զանարգութիւն և զարհամարհանս՝  
 յորում գտանէին եպիսկոպոսունք Բտալացւոց, ոչ զոյր և ոչ  
 մի ինչ գործ անպատիւ՝ զոր ոչ գրէին նոցա. իսկ նոքա յիւ-  
 բեանց կողմանէն ծաղը առնէին զամենայն որ որ մտաբերէր խօ-  
 սել զժողովոյ և զկարևորութենէ բարեկարգութեան Եկեղե-  
 ցւոյ, իբրև զվրդովիչ խաղաղութեան և զկեղծաւոր, և ի բաց  
 վարէին յինքնանց :

Ար ինչ միանգամ չարիք ասացեալ էին զեպիսկոպոսացն  
 Բտալացւոց՝ զայն ամենայն առաւելան Տանդերձ Հաստատե-  
 ցին ի Տրեղենտոն (1546) և նուիրակք պապին : Աերանորո-  
 զիչքն Գերմանիոյ կրկնէին և եթ զբանս նուիրակացն, և զխոս-  
 տովանութիւնս կեղաւ ի բերանոց ժողովրդականացն ի նկա-  
 րագրել զսաստկութիւն չարագործութեանց պապիցն և եպիս-  
 կոպոսաց Բտալացւոց : Եւ չէր իսկ հնար յայանազոյնս քան  
 զայն բացատրել՝ թէ բովանդակ պատճառ ապականութեանն  
 տարածելոյ ի վիճակս վիճակս Բտալիոյ՝ էր անկարգութիւն հը-  
 ոովմէական պալատանն և եպիսկոպոսացն Բտալացւոց : Այն  
 իսկ էր աղբիւր անբարոյականութեանն որ տիրապետեալ էր ա-  
 մենայն ուրիք, և այնր աղազաւ մտաղիւր սիրով ընդունէին  
 ժողովուրդք զնորանոր վարդապետութիւնս և զնորահնար ձևս  
 Եկեղեցւոյ. քանզի ժողովուրդն ամենայն ուրիք բարձի թողի  
 կայր, լքեալ յիւրոց քահանայից և դժգոհ յամենայնի, և  
 երկմտէր ընդ իւրն իսկ Եկեղեցի 448) : Ասէին նոքա թէ այս  
 ամենայն անցք որ անցանեն այժմ ընդ մեզ ի հերետիկոսաց,  
 արգարացի պատիժք են յանցանաց մերոց և չարութեանց, և  
 զի եկեղեցական պաշտամունք բաշխին արանցանարժանից և այն :

Առաջին առենախօսութիւնն զոր արար ի բացման ընդ ժո-  
 ղովոյն եպիսկոպոսն Աորիոլանոս Մարթորանոս՝ ապշեցոյց զա-

մենեօն 419) : Սարսափելի էր նկարագիրն զոր արար նա ըզբարուց կարգինալացն և եպիսկոպոսացն Բտալացուոց, զարեանարու գնացից նոցին և զգոշաքաղութեանցն և զամհարտաւանու թենէն, և զահագին աւերմանց զորս զործէին Կելեղացուոց : Մի ոմն յանձանօթից որ ի թղթին իւրում առ բարեկամ իւր նկարագրեաց զայն առաջին գումարումն, ասէր. « Ինքն իսկ Լուծեր ոչ երբէք սաստկադոյնս ինչ քան զայս խօսեցաւ, : Ձոր ինչ լուայ ես, ասէր, ի Տրիգենտոն՝ էարկ ի միտս իմ զայս խորհուրդ, զի եթէ սիւնհոգոսն չընկալցի ևս զվարդապետութիւնս Լուծերի, սակայն հզօրագոյնս իսկ քան զլուսերականսն յարիցէ ընդդէմ՝ բռնակալութեանց պապից : Բայց զիւրդ խարեցաւ նա չձանաչելովն զեպիսկոպոսունս Բտալացուոց : Այսու ամենայնիւ որ ինչ ասացան յայնժամ ի Տրիգենտոն՝ չթողոր բնաւ տեղի երկբայութեան, զի բացակայութիւն Բտալացուոցն եպիսկոպոսաց ի վիճակաց նոցին (յորոց բազումք տեսալ ևս չէին զհոյիւս իւրեանց), համարէր բարեբաղդութիւն իմն : Նոյնպէս զօրաւոր բանիւք նկարագրէին զանտանելի հանդամանս իրաց ժամանակին և Հոսովմացի յօրինողքն Յիշատակարանին 1558 ամի, զոր պատրաստէին վասն Պօղոսի Գ 420) :

Թուղթ հռչակաւոր ասն Անտոնի Փլամինիոսի յամին 1545, գրեալ է յառաջին ժամանակս Տրիգենտոնի ժողովոյն : Հարցանէր նա՝ թէ զի՞նչ արասցէ ժողովդ այդ կազմեալ յայլանդակ եպիսկոպոսաց. և որպիսի՞ եպիսկոպոսունք, յորս միայն երկայնաձիգ հանդերձքն եպիսկոպոսական ինչք են : Ես զմի միայն գիտեմ, ասէր, արժանաւոր քահանայ յԲտալիս, զԳրբերտոս Աւերոնացի, բայց և նա մեռեալ է արդ. իսկ յայժմու եպիսկոպոսաց որք հասեալ են յայն պաշտօն հետամուծեամբ և կաշառօք, չարմենեց հնարագործութեամբք, պաշտպանութեամբ իշխանաւորաց կամ բազմամեայ շողորթ ծառայութեամբ ի Հոսովմ, ոչ է մարթ բարւոյ իմիք ակն ունել : Լաւ ևս յոյժ լինէր՝ եթէ զամենեսեան զնոսա միանգամայն կարգընկէց առնէին 421) :

## ԼԷ.

Ժողովն Տրիդենտոնի : — Գնացր Իտալացւոց : — Հան-  
գամանք Իտալիոյ :

Շատ իսկ էր եթէ երեւին ի Տրիդենտոն Սպանիացիք և  
Գաղղիացիք ոմանք՝ առ ի դարձուցանելոյ զհամօրէն եպիսկո-  
պոսունս Իտալացւոց ի հօտ անբարբառ ոչխարաց հպատակե-  
լոց հրամանացն Հռովմայ, և անսացողաց ակնարկութեան նը-  
ւիրակոց : Ոչ որ ընդհատէր զբանս ատենախօսին որ հրատա-  
րակէր զեպիսկոպոսունսն զայնոսիկ առաջն աշխարհի իբրև զեղ-  
կելի և զանամօթ վարձկանս և անկիրթ տղեսս, և ոչ մի որ  
տրտունջ բառնայր կամ յընդդիմախօսել մտարերէր : Ամե-  
նայն աղէտք Եկեղեցւոյ, ասէր Իտալացի ոմն, և ամենայն ան-  
կարգութիւն եկեղեցական յառաջ գայ ի Հռովմէ (422) : Իսկ  
յորժամ հարկ լինէր յայտ առնել զհաւատարմութիւն իւր-  
եանց առ պալատն հռովմէական, եպիսկոպոսունքն ելևկս զմի-  
մեամբք առնէին ի ցուցանել զջերմեռանդութիւն իւրեանց առ  
Հռովմ :

«Մի միայն փոյթ եպիսկոպոսացն Իտալացւոց է, ասէ Փալ-  
լապիչինի, ձեռն տալ առաքելական աթոռոյն և մեծանալոյ  
նորա : Այսու ցուցանեն նորա թէ ընտիր Իտալացիք են և  
բարի քրիստոնեայք, (425) : Եթէ որ յօտար եպիսկոպոսաց  
յուշ առնէր զպատմական ինչ հանդամանս՝ որ ոչ յարմա-  
րէին պապական զրութեան, ընդդէմ այնպիսումն բարձրանայր  
ահաղին գոչումն աղաղակի : Այսպէս, օրինակ իմն, եպիսկո-  
պոսն Վադէս (Բատիքս) քաղաքի Վոսմեղիանոս յուշ արար՝  
թէ էր երբեմն զի մետրապօլիտք ձեռնադրէին զեպիսկոպոսունս  
գաւառին իւրեանց. կարդինալն Սիմոնէթթա իսկոյն յարեաւ  
ընդդէմ նորա, և եպիսկոպոսունք Իտալացւոց բարձին զաղա-  
ղակ վայրենի, և հազարով և զոսս ի գետին տրոխելով խա-  
փանէին զՎոսմեղիանոս ի խօսելոյ : Աղաղակէին նորա թէ մի  
յանդգնեցի նդովեարդ այդ յառաջ վարել զբանս իւր. այժմ

իսկ պարտ է արկանել զդա ընդ գատաստանաւ 414) : Այսպիսի էր ահա աղատութիւն խորհրդակցութեանց ի Տրիդնտեան ժողովին :

Յետալիս, ուր բազմութիւն ժողովրդեան առ հասարակ կաթողիկ մնայր, և ոչ ի հերձուած ինչ մտարերէր որպէս Գերմանացիքն, և այլք, արք բարեխորհուրդք, լքեալ և վհատեալ մերձ էին ի յուսահատութիւն : Ի բանս նոցա և ի գրուածս առ ժամանակօք բացման ժողովոյն նշաւակի յայնապէս նրււազուամն աստուածաշտութեան, և թէ ի հոգեվարս գտանին հաւատք, և Եկեղեցին մերձ է ի թաղումն, որում եպիսկոպոսունք պարտին առաջիկայ լինել : Եկեղեցին անուանի ի նոցանէ զիական նեխեալ և տուն ըմբռնեալ ի բոց հրոյ, և արդէն յաճին գործեալ : Այսպէս ասկին Լաւրենտիոս ճիւսթինիանի պատրիարք Վենետոյ, կարգինալքն Եգիպտոս Վիթերպացի և Անտոնիոս Փուչչի և բազումք յեպիսկոպոսաց ժողովոյն : Զայսպիսի տպաւորութիւն գործեալ էին ի միտս նոցա հանգամանք Իտալոյ, յորում անհաւատութիւն և սնապաշտութիւն տարբացեալ էին. ընդ հակառակն՝ յայնկոյս Ալպեան լերանց աղղք և ժողովուրդք ընդհանրապէս հաւատացեալք էին, թէպէտ և մեծապէս խտտեալ և զրգուեալ էր զօր կապակցութեան նոցա ընդ Եկեղեցւոյ յոր ակնարկէին իբրև ի բռնակալ որ հրամանատար խեղաթիւրեալ և այնչափ այլանդակեալ, զի և հրմանատար խեղաթիւրեալ և այնչափ այլանդակեալ, զի և հրմանար իսկ չէր ձանաչել զնա : Սոկինեանն աղանդ էաւ զծագումն յազգին Իտալացւոց, և ոչ ունէր զտեղի ի Գերմանիա կամ յԱնգղիա :

ԼԲ.

Հասարակացն կարծիր ի Գերմանիա : — Յոյս Գերմանացւոց : — Չափ մերանորոգումեանն պամանջիրոյ յամանց ի նոցանէ : — Իտալացւոցն յարումն ի Հռոմ :

Ի Գերմանիա, և առ հասարակ յամենայն աշխարհս որ յայնկոյս Ալպեան լերանց, ընդ երկար ժամանակ չկարէին առ-

նուլ ի միտ՝ թէ վերահաս տարաձայնութիւնք Եկեղեցւոյ փոխեցին ի Հաստատուն իմն հերձուած և ի բաժանումն բոլորական: Հասարակաց միտք այնպէս յարեալ էին Եկեղեցի, զի և ամենեքեան յոյս մեծ ունէին ի Ժողովն՝ ազատ ի հաճոյց պապին, թէ նա մարտեցէ և միարանեցէ զԵկեղեցի: Արդարև իսկ կարծիքն զպայմանաց այնր միարանութեան զանազանէին յիրերաց՝ ըստ պէսպիսութեան այլ և այլ անձանց և ազգաց:

Ի Պերմանիա, ի Աքանտինուիա, ի ստորին նահանգս և Ենդղիա համարէին՝ թէ զմիարանութիւն Եկեղեցւոյ մարթ է պահպանել յամեն որ յառաջ քան զ1560, օրինաւոր վերանորոգութեամբ, ի ձեռն զիջողութեանց ինչ զբաժակէն սրբոյ, զամուսնութենէ քահանայից, և մանաւանդ զազարմամբ պապական դրութեան: Եթէ մեղմագոյնքն ի վերանորոգողաց անտի, զոր օրինակ Մելանթոն, կամէին գնալ միայն մինչև յունդունելութիւն նախագահութեան, իրբև կարգադրութեան իրիք՝ որ մարդկօրէն օրինաւոր իմն թուէր և օգտակար Եկեղեցւոյ, այսմ պատճառք այն էին, որպէս յայտ է ի բանիցն Լուտերի, զի ի միտս այնպիսեացն միարանէր անձոսնի կերպարանն բացարձակ միապետութեան ընդ նախագահութեան Եկեղեցւոյ: Չոր օրինակ ոչ կարէին կամ ոչ կամէին նորա ի միտ անուլ զգաղափարս քահանայութեան նորոյ ուխտիս և զհաղորդութեան, — որովհետև երկորին յաչս նորա ի ժամանակին յայնմիկ այլափոխեալք և անարգեալք, որպէս օրինակ իմն ի վերանալ բարձրանալ եկեղեցականացն քան զաշխարհականս, և ի խորհուրդ պատարագին, որոյ մատուցումն եղեալ էր նիւթ վաճառաշահութեան, նոյնպէս չկարէին անուլ ի միտ և ըզնախագահութիւնն, որ կրկնակի ատելի էր նոցա և անտանելի, եթէ յանձն պապին և եթէ ի պալատան նորա՝ որ աղբիւր էր և սկիզբն կորստեան Եկեղեցւոյ:

Ի տալացւոցն հաստատրմութիւն առ ամոսն Հռոմայ ի յայտ դար ոչ միայն ընդունելութեամբ պապական դրութեան, այլ և դաւանութեամբ անխալութեան պապին. և այս վարդապետութիւն սխաւ ծաղկել յաւուրցն Լևոնի Ժ:

## ԼԻՒ

Աստուածարանք Իտալացոց. և խնդիր անխաղա-  
կանութեան պապին : — Թորքեմատա և Կապիտրա-  
նոս : — Կայխանոս :

Ի բաղամեայ պատերազմին, յամէն 1454 ցամն 1450, ի  
մէջ ժողովոցն և պապից յաղագս գերագոյն Հեղինակութեան,  
խնդիրն զազդեցութենէ պապին ի հաւատոյս ի բաց թողեալ էր :  
Ի ժողովին Փլորենտիոյ, յետ հերքելոյ Յունաց զմտացածին  
բանս Կլարդի, խնդիրն այն ոչ յիշատակեցաւ յաստուածարա-  
նից պապին այնպէս՝ զի ոչ էր բնաւ ակնարկութիւն ձգելոյ ըզ-  
Յոյնս յընդունելութիւն այնպիսոյ ձեռներիցցութեան պապին :  
Ի Բասիլեան ժողովին բան լեալ էր՝ իբրև յայտնի ինչ հասա-  
րակաց, զի պապք՝ ոչ ինչ ընդհատ յուսմէ և իցէ կարեն ան-  
կանել ի մոլորութիւն ի խնդիրս հաւատոյ : Աստուածարանքն  
Թորքեմատա, Փրանկիսկեանն Կապիտրանոս, արքեպիսկոպոսն  
Անտոնինոս, ի միջոցս ամացն 1440 և 1470 պաշտպան կալով  
վարդապետութեանն որ այնքան սիրելին էր պալատան Հռով-  
մայ՝ զտիրապետութենէ պապից ի վերայ ժողովոց, այլ իմն  
ևս հնարեցին՝ առ ի չարկանելոյ զպապն ի վայր քան զԺողովս :  
Յետոյ ուրեմն միարանեցաւ ընդ նոսա և կարգինալն Եւրո-  
պացցի : Սորա, մանաւանդ Թորքեմատա, ասէին՝ թէ չիք երկ-  
բայութիւն զի պապն կարող է անկանել ի հերետիկոսութիւն,  
և ուսուցանել զթիւր վարդապետութիւն. բայց նա յայնժամ  
յառաջ քան զամենայն եկեղեցական դատաստան՝ յԱստուծոյ  
խօս լուծանի յիշխանութենէն, որով ժողովն ոչ ևս դատի ըզ-  
նա, այլ միայն հրատարակէ զաստուածայինն վճիռ դատա-  
պարտութեան. ըստ ինքեան կարելի ևս ոչ է ասել՝ թէ պապն  
կարող է անկանել ի հերետիկոսութիւն. քանզի ի նմին խօս  
պահու յորում անցանիցէ նա յուղղափառութենէ յայլափա-  
ռութիւն՝ զազարէ ի լինելոյն պապ :

Առ այս հարկ է ասել՝ թէ ապա ուրեմն և եպիսկոպոսն և  
քահանայն նոյնպէս չկարեն անկանել ի հերետիկոսութիւն և

ընդ բանադրանօր լինել, իրր զի զնոսս ևս դատապարտէ Աստուած յառաջ քան զեկեղեցականն դատաստան: Եթէ հաւանիցնիք ասել՝ թէ Աստուած լուծանէ զպապն ի կարգէն յառաջ քան զմարդկայն ինչ դատաստան, պարտիմք հաւանել՝ թէ զնոյն առնէ ապարէն ընդ եպիսկոպոսունս և ընդ քահանայս. ոչ է մարթ ասել թէ Աստուած առ պապն խիստ իցէ, իսկ առ եպիսկոպոսունս և առ քահանայս ողորմած:

Այսպիսի հակառակարանութիւն չկարէր հաճոյանալ ումեք. և սակայն Թորքեմատա պնդագոյնս բունն եհար զայսմանէ 425): Ի բաց մերժէր նա զկարծիս այնոցիկ՝ որք համարին թէ Աստուած ոչ թողու երբէք՝ զի պապն սահմանեցէ ըզսուտ ինչ և զմոլորական: Զայսպիսի ենթադրութիւն չթողուն նմա առնել իրքն զորս զիտէր նա ի Գրատիանոսէ. բայց կարծէր կարգինան՝ թէ պապն ընդ սահմանելն զմոլորական ինչ՝ ըստ իրաւանց զազարէ ի լինելոյն պապ, և եղանի որպէս թէ զիակն պապի, յորոյ վերայ Եկեղեցին տայ զվճիռ իւր: Ժամանակակիցքն Թորքեմատայի, Անտոնինոս եպիսկոպոս Փլորենտիոյ, և կանոնադէտն Անտոն Ռոդէլլիս, թէպէտ և բարձրացուցանէին յոյժ յոյժ զեշխանութիւն պապին, բայց զանխաղութիւնն ընծայէին միայն համօրէն Եկեղեցւոյ և ժողովոյ: «Միայն կապակցութեամբ ընդ Եկեղեցւոյ և օգնականութեամբ ժողովական խորհրդակցութեանց չկարէ մոլորել պապն,» ասէ առաջինն յաստուածարանից անտի 426):

Այսպէս ուրեմն ոչ ընդունէին նորա և ոչ զմի ինչ ազդանխաղականութեան պապին, և առջարկութիւնս այս կայր մնայր անթերի՝ թէ պապն կարէ անկանել ի հերետիկոսութիւն. յայնժամ Եկեղեցին կամ ժողովն պարտին ասել ցնա, հրաժարանց յաթոռոյդ: Եթէ նա ոչ հրաժարիցի, ժողովն իրաց մերժէ զնա: Այսպէս բացատրէ զինդիրս զայս կարգինան Նաբոպանցի 427):—Նա ինքն, և նախ քան զնա Թովմաս Նեթթէր կամ Վալտեացի 428), զաղօթս Փրկչին պատշաճեցուցանէին Եկեղեցւոյ 429), և ոչ թէ յարդրին Անտրոսի: Սեղընատոս Պրիերիոս, որ ի ժամանակին յայնմիկ վարդապետ էր պալա-

տան պապին, ասէ. «պապն ոչ սխալէ՝ օգնականութեամբ ժողովական խորհրդակցութեանց», 450) :

Միայն Ապետանոս երեւցաւ արբանեակ լիակատար անսխալականութեան պապին : Սա ի ձեռն Լևոնի Ժ, առաջին համարձակեցաւ յարձակիլ ի վերայ հեղինակութեան Աոստանդեան և Բասիլեան սահմանադրութեանց զժողովական իշխանութենէն, թէպէտ և ի վճռի անդ պապին հրատարակելոյ յիտալական սինհոդոսին և ոչ մի ինչ յիշատակութիւն կայր զԱոստանդեան Ժողովոյն :

Այնուհետև եհաս ժամանակ յաջողութեամբ պսակելոյ զվարդապետութիւն Թովմայի յաղագս անսխալականութեան պապին : Ընդդէմ՝ վճռոց երկոցունց սինհոդոսացն եզան կանխածանօթ վկայութիւնքն ստայօղք, և անհարազատ վկայութիւնք և կանոնք արեւելեան Ժողովոց և Հարց : Հռչակեցին և զստութիւն մի թանձր և բացայայտ, որպէս թէ Օգոստինոս զթուղթս պապին հաւասարազօրս համարէր բնագրի սուրբ զբրոց 451) : Ի բաննն Թովմայի յաւել Ապետանոս և զԼւրն անձնական խարէութիւն՝ խարդախեալ զմի ի սահմանաց Աոստանդեան Ժողովոյն որ յաղագս նախադասութեանց Ալիքլեֆի, որ տաղնապէր յոյժ զնա 452) :

Ապետանոս նախատիպ էր պալատական աստուածարանիցն շողամարարաց, զորս Քարսֆիֆա և այլք ի յօրինողաց Յիշատակարանին 4538 ամի կոչնն մոյրեցուցիչս պապից և պատճառս ապականութեան և քակտելոյ Եկեղեցւոյն : Ապետանոս հնարեաց բառ մի՝ որում կառավարութիւնն Մետիչեան պապից և յաջորդաց նոցա ետ զգործնական բացատրութիւն. իբր զի ըստ նորա բանին՝ կաթուղիկէ (իմա կաթուղիկ) Եկեղեցին է ինչէ նշանէր պապին 455) : — Եւ զայս ասէ այր այնպիսի՝ որ տեսեալ էր զԱեքատոս Գ, զԻննովկենախոս Ը, և զԼղեքսանդր Զ :

և.

Ազրիանոս Զ: — Ուկոնի եպիսկոպոս և բանք նորա:

Ոչ է մարթ ասել՝ թէ նորահնարն այն վարդապետութիւն  
 Կայետանոսի իսկոյն տիրեաց ի Հռոմ: Յերկմիտս եղնն ոմանք՝  
 թէ արդեօք Հնար իցէ ի մի և ի նոյն ժամանակի հաստատել  
 զանխալականութիւն պապին, և միանգամայն ասել՝ թէ սուա  
 են և մոլորական ամենայն կոնդակք պապից որք բացատրէին  
 և յայտնապէս ցուցանէին՝ թէ ուղիղ է վարդապետութիւն  
 սահմանադրութեանց Կոստանդեան ժողովոյն: Իննովկենտիոս  
 Ը յամին 1486 ծանեաւ զուղղափառութիւն Փարիզեան հա-  
 մալսարանին, որ զգերազանցութիւն պապին քան զժողովն հե-  
 րեափկոսութիւն համարէր. և յայտ միտս ուսուցանէին յայն-  
 ժամ ամենեքեան ի Գաղղիա և ի Գերմանիա: Զնոյն ասաց ի  
 Տրեղենտեան ժողովին և կարդինայն Լոթարինցիոյ, և ոչ որ  
 ընդդիմարանեաց նմա: Պապն Ազրիանոս Զ, մինչդեռ տակա-  
 ւին վարժապետ աստուածարանութեան էր ի Լոմանիոն՝ ասէր.  
 «Բազում պապք անկան ի հերեփկոսութիւն, և պապն կա-  
 բող է ի վճիռս իւր և ի կոնդակս սահմանել զհերեփկոսու-  
 թիւն, (454):

Նա ինքն Ազրիանոս հրամայեաց վերստին տպագրել ի Հռ-  
 ոմով իսկ զգրուածն իւր յաղաղս սխալականութեան պապին,  
 որ ի հարկէ ոչ մնաց ասանց ազգեցութիւն ինչ առնելոյ:  
 Յետպիս կարողացան տակաւին ևս պաշտօլան կալ հեղինա-  
 կութեան և վճնոց ժողովոցն երկոցուն, և զպապական դրու-  
 թիւնն խախտաւ ինչ համարել: Եւ այս յայտ է ի գրութենէ  
 անտի Ուկոնի անուն եպիսկոպոսին Փամակոստայի, որ արժա-  
 նացաւ զօլասանութեան և հաւանութեան պապին Պօղոսի Գ:  
 Ուկոնի հերքէր զԹորքեմատա, և ցուցանէր՝ թէ զատաւորա-  
 կան իշխանութիւն ժողովոյն ի վերոյ է քան զպապն (455):

ԽԱ.

Խոստովանումիւն պաշտպանողացն անսխալականու-  
 թեան պապից : — Կայետանոս : — Քափիէր : — Մելլոն  
 Կանոյ : — Տոպատոս : — Ասաուածարանք Գերմանիոյ  
 և Գաղղիոյ :

Բովանդակ իմաստք Հռչակաւ որ Յիշատակարանին 1558 ա-  
 մի, յորում կարդինալքն Քարաֆֆա, Փոլէ, Աստղէթ, Քոն-  
 թարինի և գործակիցք նոցին, Քրէկոզոյ, Գիլբերտոս, Ալէան-  
 արոյ, Պատրիա և Քորթէզէ, նկարագրեն զեկեղեցական Հան-  
 զամանս Հռովմայ և Խապիւոյ, ցուցանեն՝ զի նոքա ունէին ըզ-  
 բացայայտ գաղափար զմոլորութեանց, զսխալանաց և զանհիմն  
 զրութենէ պապից, և ընաւ ամենևին ոչ ունէին կամ ընդու-  
 նելոյ զկարծիս անսխալականութեան պապին : Եթէ ասն կար-  
 զինալքն՝ թէ պատճառ աղետից Եկեղեցոյ և աւերման նորա,  
 ևս և կործանմանն է սուտ վարդապետութիւն ամենակարողու-  
 թեան պապիցն և ինքնօրէն իշխանութեան նոցա, յայտնի իմն  
 է՝ թէ Հետի էին նոքա ի կարծելոյ՝ որպէս թէ Քրիստոս միում  
 միում ի պապից տուեալ իցէ զարտօնութիւն Հոգւոյ զէ-  
 քորս էր, մինչդեռ ինքեանք իսկ պապքն սասանեցուցանէին  
 զեկեղեցին ողջոյն :

Արքն այնքիկ որ առաւելապէս զուն գործէին տարածանել  
 զվարդապետութիւն զանսխալութենէ պապին, պարտէին զիտել՝  
 զի այնու Հիմն արկանէին եկեղեցական անկարգութեան և չա-  
 բաշար զեղծմանց գործեցելոց յանսխալական պապիցն, և թէ  
 այնու Տնարիւք ոչ յաջողէր և ոչ մի ինչ գործ բարեկարգելոյ  
 զիրս : Այնտանոս, որ յայնժամ իբրև ի վարձ վաստակոց  
 իւրոց ի Լատերանեան Ժողովին կարդինալ եղև, եգիտ առ Ադ-  
 րիանոսի Զ, զի զայժակական իմն էր վաճառումն եպիսկո-  
 պոսարանաց, եկեղեցական պաշտամանց, արձակմանց և ներո-  
 ղութեանց, որք այնու կորուսանն, ասէր, զամենայն զօրու-  
 թիւն իւրեանց. և վասն այսորիկ ամենեքեան առ Հասարակ

ընդդէմ կային նմա : Տեսէք, ասէին ի Հոովմ, զաննտութիւն գորա, որ կամի զարձուցանել զքաղաքս յանապատ անմարդի, և զպապութիւնն արկանել ի զօրութենէ. կամի առնուլ ի ձեռաց պապին արդէն ծանրաբեռնելոյ պարտեօք զամենայն զրամական հնարս կառավարութեան. ապաքէն զոր ինչ կարող է պապն ձրի պարզել՝ զնոյն և վաճառել կարող է (456) : Եւ որպէս զի մի ինչ մնաս զիպեցի Ապետանոսի, առաքեցին զնա պաշտամամբ նուիրակութեան յաշխարհն Մաճառաց :

Միւս ևս արբանեակ կարծեաց անսխալականութեան պապին, որ հնարեցաւ հաստատել զայդ վարդապետութիւն ի Բելգիա, էր աստուածարանն Հուարդոս Քափիէրի : Յամին 1352 զարձարար նա ի Տրիդնտոնէ շարաշար խարեալ. քանզի ի մերձուտ ետես նա, որպէս վկայէ բարեկամ նորա եպիսկոպոսն Լինտանոս զբարս Հոովմայեցոցն, զանյազ ընչաքապցութիւն պաղատանն, զկեղծաւորութիւն եպիսկոպոսաց, զվաճառումն եկեղեցական իրաց : Այ ևս պարտ է, ասէր նա պնտահետե, վիճել ընդ բողոքականն զայսպիսոյ համաշխարհական անկարգութենէ և զանարգանաց եկեղեցոյ, հարկ է ողբալ և եթ զնա (457) :

Երրորդն յարբանեակս անսխալականութեան պապին էր ժամանակակիցն Քափիէրի՝ Սպանիացին Մելքիօր Աանոյ : Գլբուածք նորա զաստուածարանական սկզբանց և զպապացոցից էին մինչև ցաւուրս Բելլարմինոսի զխաւոր աղբիւք վասն պաշտպանաց անսխալականութեան : Կոկ յայնժամ յետ զբտաննելոյն ի Փողովի անդ՝ խելամուտ եղև թէ զոր աղղեցութիւն գործեաց վարդապետութիւն իւր ի վերայ պապիցն և պալատան : «Որ դք խորհրցի, ասէ, բժշկել զՀոովմ՝ ոչ ճանաչէ զնա : Անդ ամենայն եկեղեցական կառավարութիւն, փոխեալ է իզին և ի վաճառ նողկալի՝ արդելեալ յաստուած, ծային, ի մարդկային և ի բնական օրինաց,» (458) :

Աարծիբն կամ ենթադրութիւն անսխալականութեան պապին ի Փ.Ձ. դարու — յորում այն ինչ սկսանէր երևել մեծագոր աղղեցութիւն եզուիթաց, — տակաւին ևս սակաւ հետևողս ու-

ներ արտաքոյ Իտալիոյ : — Ի ժեզարուն մեծանունն յաստուածարանս Սպանիացոց Աբիոնոս Մատրիկալ, մականուանեալն Տոսգատոս, ասէր՝ թէ պապն ի խնդիրս Հաւատոյ նմարեալ է ժողովոյն, որպէս սահմանեալ էին և Կոստանդիան և Բասիլեան ժողովքն : Հեռագոյն ևս գնաց յայտմ մասին Սպանիացի եպիսկոպոսն Անդրէաս Լսկոպար : Միայն կրօնաբնութիւնն եմք ի Սպանիա զՀոռովմեական վարդապետութիւնն եղուիթաց, և անհակառակելի իմն արար զայն :

Ի Գերմանիա աստուածարանքն կաթողիկոց, որ վիճէին ընդդէմ վարդապետութեան բողոքականաց, պինդ ունէին ըստ ամենայնի զկողմն ժողովոց : Քանզի տեսանէին՝ զի յընդունել անդ զանսխալութիւն պապին՝ տային ի ձեռս բողոքականաց զէն անպարտելի ընդդէմ կաթողիկ Եկեղեցոյ : Արբէոս, Ալիցլէ, եպիսկոպոսն Աննայի Նազէա և այլք Հերքէին այն ազգաւ զանսխալականութիւնն պապին : Ասէ իսկ յետինն . « Ատանգաւոր իմն լինէր յոյժ արկանել զՀաւատս մեր ընդ », « վճռով միոյ և եթ՛ առն . աշխարհս մեծագոյն ևս է քան ըզք », « քաղաքն », 459) :

Ի Գաղղիա՝ ի պատճառս մեծագոր ազդեցութեան Փարիզեան Համալսարանին՝ ամենայն որ Համոզեալ էր ընդ առաւելութիւն իշխանութեան ժողովոց . վասն որոյ ջերմագոյնս ևս պաշտպան կային անսխալականութեան պապին եկեղեցականքն Իտալացոց առ ժամանակօք Տրիդենտեան ժողովոյն : Եպիսկոպոսն Կուռնելիոս Մուսոյ քարոզէր ի Հոռովմ — խօսելով զթղթոյն Պօղոսի առ Հոռովմայեցիս — թէ « Չոր ինչ ասէ պապըն՝ պարափմք մեր այնպէս ընդունել՝ որպէս թէ ասէր ինքն », իսկ Աստուած : Ի խնդիրս աստուածայինս Աստուած Համարիմք մեր զնա, և ի խորհուրդս Հաւատոյ պատրաստ եմ ես », « Հաւատալ միումն պապի առաւել քան թէ Հաղար Օղոստինոսաց, Հերոնիմոսաց և Գրիգորաց միանգամայն », 440) :

Իբրև ձեռն էարկ Բելլարմինոս յապացուցանել զսիրեցեալն վարդապետութիւն Հոռովմայ, միտք աստուածարանից ուժգինս պէկոծեալ՝ մասն ի նոր իմն ձանապարհ, և սկսան եղանակ ի

գործ արկանել : Պայտան Հռոմէական թեմակոխեր յայնժամ հաստատել զարձեալ զիւրն տիրապետութիւն՝ գոնեայ յարեմուտս . և առ այս քաջալերէին զնա յաջողութիւնք կարգին եզուիթաց, հաւատարմութիւնն արքունեացն Սպանիոյ, և հպատակութիւն Հենրիկոսի Գ : Արգելքն կամ բանադրանք եղեալքն ի պապէն ի վերայ Վենետիոյ՝ ցուցին թէ զի՛նչ կարող է առնել Հռոմի իւրովն յանդգնութեամբ : Կրօնաքննութիւնն ըզգեցեալ զնոր իմն և զընդարձակ կերպարան՝ եղև միւսանգամ սիրելի Հռոմացիաց, և աշխատասիրութիւն առն կրօնաքննչի եղև մեծագոյնն ի գովութիւնս նորա և անփոյթ ճանապարհ ժաման լինելոյ յաստիճան կարգինալութեան, ևս և յաթոռն պապական : և պապն Պօղոս Գ յայտ արար այնուհետև՝ թէ կրօնաքննութիւնն է միակ նեցուկ ամբութեան պապական գահուն յՆապոլիս : Երկու նշանաւոր և կարևոր դրուածք յայտ առնեն՝ թէ յի՛նչ թեմակոխեր յայնժամ Հռոմի, և յորպիսով յարաբերութեան գտանէին Գրիգորեան գաղափարք ընդ դրութեանն Եւրոպայի ի ԺԶ դարուն :

ԽԻ՛ :

Կանգակ Պօղոսի Գ : — Առաջարկութիւնքն որ ի նմա :

— Հետեւներ նոցին :

Մեծահաղէս իմն հռչակաւ՝ որդէս թէ ի բարձուէ անտի աթոռոյն հրատարակեաց Պօղոս Գ զկոնգակն, որոյ սկիզբն է, «Մինչդեռ յառաքելական պաշտամանէ», : Յայնմ կոնգակի ստորագրելոյ ի կարգինալաց՝ պապն ըստ խորհրդոց նոցա սահմանէր զառաջիկայ առաջարկութիւնսն, «զօրութեամբ լրութեան առաքելական իշխանութեան», :

Ա. Պապն իրրև զերագոյն քահանայապետ և փոխանորդ Բառուծոյ ի վերայ երկրի՝ ունի զանսահման տիրապետութիւն ի վերայ ազգաց և թագաւորութեանց 444) . նա դատի զամենեւեան, և ոչ յուսմքէ յայտմ աշխարհի կարող է գատիլ :

Բ. Ամենայն իշխանք և թագաւորք և եպիսկոպոսունք եթէ անկանիցին ի Հերձուած կամ ի Հերետիկոսութիւն, առանց իւրիք դատաստանի և անդարձ եղանակաւ իսկոյն զրկին ի պաշտամանց իւրեանց և յիրաւանց տիրապետութեան, և անկանին ընդ վճռով մահապարտութեան: Եսկ եթէ պաշխարիցեն և դառնայցեն, փակին մինչև ցմահ ի մենաստան ուրիք՝ հացիւ և ջրով շատանալ:

Գ. Ոչ որ ոչ իշխէ ցուցանել զօգնականութիւն կամ ըզկարեկցութիւն իշխանաւորի անկեղջ ի Հերձուած կամ ի Հերետիկոսութիւն: Թագաւոր որ համարձակիցի առնել զայդ՝ իսկոյն զրկի յիւրմէ տէրութենէն, որ և տուեալ լինի իշխանաց՝ որ պապին հպատակք իցեն:

Դ. Եթէ յապայան երևեսցի թէ պապ որ կամ եպիսկոպոս ախտացեալ է Հերետիկոսական կամ Հերձուածողական մտք, պարտ է զամենայն զգործս այնպիսեց եպիսկոպոսի ոչ ինչ և անվաւեր համարել:

Ե. յս եր աւասիկ յամին 1558 դաւանութիւն հաւատոյ պապից ստորագրեալ ի կարդինալաց և հաստատեալ ի Պօղոսէ Ե. իբր զի պապն իւրով ամենակարող զօրութեամբ կարէ զընկննուլ ի գահայից զթագաւորս, և մատնել զազգս ողջոյն արշաւանաց թշնամեաց. կարող է խել առնուլ յումմէ՝ և իցէ զստացուածս նորա, և այն առանց իրիք օրինաւոր դատաստանի, և ոչ թէ միայն սակս խոտորիչոյն ի հրւոսմէական վարդապետութենէ, կամ անջատեցոյն յեկեղեցւոյ, այլ և սակս տալոյն փախտականի ումբ տեղի ապաւինի, այս ինքն է զայնպիսի և զայնչափ ինչ առնել, յորս իւրաւունք թագաւորութեան կամ ազգի ոտնակոխ լինիցին, և ազգք և ժողովուրդք մատնիցին յարհաւիրս պատերազմի և աշխարհակալութեան: — Յաւել յայս տեսարան և զվարդապետութիւնն, որով որպէս թէ ամենայն գործք պաշտաման, և խորհրդակատարութիւնք պապից և եպիսկոպոսաց, ի դերևելանէին եթէ քսան կամ երեսուն ամօք յառաջագոյն եկեղեցականքն այնորիկ զմտաւ անեալ իցեն խորհուրդ ինչ հերե-

տիկոսական : Յետին հատուածն սահմանադրութեանդ այնպիսի սատկութեամբ և բացայայտութեամբ հակառակ երանէ առաջարկութեանց ընդունելի եղելոց յեկեղեցւոջ յաղագս զօրութեան և վաւերականութեան խորհրդոց, զի անխմանայի եղև բնաւ և սատուածարանից ժամանակին :

Հիտմքն և խոսիւթիւնք եկեղեցւոյ յառաջ եկեալք արդէն յարպիսի վարդապետութեանց՝ վերստին արծարծելն անշուշտ՝ եթէ նորին իսկ նախանձայոյղ արբանեակք պապական անխաղաղանութեան ոչ զարհուրէին ի ջատագովելոյ զվարդապետութիւն Պօղոսի Գ և կարդինալաց նորա : Նաև Բեկլարմինոս յետ ամաց քառասնից, և այն ի Հոսով՝ քաղաքի, հաստատէր թէ «Պապ որ կամ նպիսկոպոս եթէ լեալ իցէ կամ լինիցի հերետիկոս ի ծածուկ, ոչ կորուսանէ այնու զիշխանութիւն իւր. ապա թէ ոչ, ամենայն ինչ անկայուն լինէր, և եկեղեցին խախտէր ի հիմանց իւրոց» :

ԵԳ.

Կոնդակն ընթրեաց Տեսուն :

Պարի յոյժ առաւելագոյն և յերկարագոյն ազդեցութիւն արար միւս գրուածն, այն էր կոնդակն ընթրեաց Տեսուն, որոյ վերջին յօրինուածն անկ է ժամանակի պապութեան Աբրահամոսի Ը, յամին 1627 : Առ Գրիգորիւ Թ, յամին 1572, կոնդակն այն երեւցաւ նախ համառօտ ձևով : Գրիգոր ԹԲ յամին 1414 կրկնեաց զայն. իսկ առ Պիոսիւ Ե յամին 1568 յաւելան ի նոյն նորանոր բանք և ձև հաստատուն : Ըստ սահմանելոյ այնր կոնդակի՝ բանք նորին պարտին լինել օրէն յախտեանական ի քրիստոնէութեան, և ի ձևս նպիսկոպոսացն և խոստովանահարց կանոն հաստատուն, զորոյ զգահպանութիւնն պարտին պահանջել ի խոստովանութեան : Եթէ կայցէ զրուած ինչ որպիսի և իցէ՝ որ բերիցէ յանձին զինիք 15-ոյ 17-ոյ, 18-ոյ, այս իսկ կոնդակ է հաստատեալ ի բազմօթիւ պապից :

Այս կոնգակ նդովէ զամենայն զհերետիկոսս և զհերձուածողս, զայնտիկ որք ջատագովեն զնոսս և ընդունին և պաշտպան լինին նոցա, և ս և զամենայն դատաստանարանս և զամենայն թագաւորս՝ որք տան այլադաւանից զհրաման բնակելոյ յերկրի իւրեանց, նդովէ և բանադրէ զամենեւեան որք առանց հրամանի պապին ընթեւնուն, պահեն և տպագրեն զգիրս այլադաւանից, նդովէ զհամալսարանս և զընկերութիւնս՝ որք զպատգական հրովարտակաց բողոք բառնան առ ապագայ ժողով տիեզերական: Խառնի ի գործս ինքնագլուխ թագաւորութեան, և ի զերպոյն իրաւունս նորին զնկոյ հարկս, առնելոյ դատաստան, պատժելոյ զյանցաւոր եկեղեց սկանս, — և յաղաքս այս ամենայն ներգործութեանց՝ եթէ կատարեալ իցեն նորին առանց պապական բարեհաճութեան՝ սպաննայ զբանագրանս և զնդովս: Այս նդովք անկանին ոչ միայն ի վերայ զիսաւոր իշխանաւորաց, այլ և ի վերայ համօրէն պաշտօնէից մինչև ցլետին գրագիրն և ցրահիճ: Միայն պապն — ի բաց առեալ զգէպս մահաւ — կարող է ազատել ի պատժոց ի վերայ եկեղեց:

Չեն ինչ բնաւ զարմանք՝ եթէ տէրութիւնք և իշխանք յարեան ընդդէմ այսպիսում յայտարարութեան պատերազմի, արգելին զհրատարակումն նորս և հերքեցին զգօրութիւն նորս: Խորհրդարանն Պաղղիոյ յամին 1580 յայտ արար՝ թէ ամենայն եպիսկոպոսունք որք յերեւան հանիցեն զայն կոնգակ՝ պատժապարտ եղիցին, ինչք նոցա յարքունիս գրաւեսցին, և ինքեանք գատեսցին իրրե զաւաճանք թագաւորութեան: Եւ չլանցիա նորին իսկ եպիսկոպոսունքն յարեան ընդդէմ կոնգակին: Եւ առաւել խստութեամբ արգել զայն յերկրի իւրում արքայն Սպանիոյ, որ տեսանէր ի նմին ձեռներիցութիւն ի վերայ իւրոցն իւրաւանց. նոյնպէս և արքայն Նեապոլոյ: Հոգովութիս Բ հրապարակաւ բողոքեաց ընդդէմ հրատարակման նորին ի Պերմանիա, և մանաւանդ ի Պոհմիա: Չնոյն արարին արքեպիսկոպոսն Մոզունտիոյ և Վենետիկ, Բայց ատուածարանքն և կանոնապէտք մուծին զկոնգակն զայն ի զիրս իւրեանց, և արարին նմա մեկնութիւնս. իսկ անթիւ բազմու-

Թիւն խօստովանահարց այնչափ հեռագոյնս գնացին՝ զի հիմնեալք ի վերայ բանից կոնգակին այնորիկ՝ չտային զարձակումն ի մեղաց : Աղեմէս ԺՎ ի վկայութիւն բերելով զայն կոնգակ՝ իշխեաց, յամին 1707, բանադրել զՅովսէփ Ա և զամենեսեան որ կցորդք եղին վաճառաշահութեան ընդ Փարմայի և ընդ Փիաշնցայի՝ յորոց վերայ ըստ նորա բանիցն ունէր Հոռով՝ զգերագոյն իրաւունս : Սակայն կայսրն այնպիսի ուժգին զօրութեամբ յարեաւ ընդդէմ նմին, զի պասն հարկադրեցաւ տեղի տալ : Յորժամ Աղեմէս ԺԳ, ի ձեռս առեալ զանաթիմայն իւր, յամին 1768, ձեռնամուխ եղև ի գերագոյն իրաւունս դքսին Փարմայի, յամենայն աշխարհս կաթողիկաց յարեաւ այլեկոծութիւն մեծ : Նաև սերտ կաթողիկն Մարիամ Թերեզիա ի բաց մերժեաց զձոներիցութիւնս պապին ի վերայ աւստրիական Լոմպարտոյ, և արգել զգործադրութիւն կոնգակին, յորում, որպէս ասէ ի հրովարտակի իւրում, գտանին սահմանադրութիւնք անվայելք քահանայական աստիճանի և նախատականք իշխանութեան թագաւորաց : Աւ քանզի յընթացս երկերիւր ամաց կոնգակն այն հրապարակաւ ընթերցեալ լինէր ամ ըստ ամէ յաւագ հինգշարաթու, գեապանք կաթողիկ տէրութեանց ի Հոռով՝ պարտական էին ազդ առնել թագաւորաց իւրեանց և կառավարութեանց զբանադրանացն արձակելոց ընդդէմ նոցա : Թէպէտ և յաւուրցն Աղեմայ ԺԳ և այսր կոնգակն այն ոչ ևս ընթեռնոյր յաւագ հինգշարաթի աւուրն, սակայն յատեանս Հոռովայ և ի ժողովս կարդինալաց համարեալ էր թէ ցանց յուժի և յազդոջ կայ :

ԽԴ

Կարգ Եղու իմաց ևւ անխաղութիւն պապին : — Ակրդրունք ևւ ողի կարգին այնորիկ :

Եղու իմացն կարգ ի խնդիրս յայս անխաղականութեան պապին ոչ կարէր կալ մնալ ի կէս ձանապարհի հանգոյն նախնի

պաշտպանաց այնր կարծեաց ի Թովմայէ մինչև ցՊայետանոս, որք երերեալ տատանէին ընդ այն՝ թէ կարելի՞ իցէ պապին անկանել ի հերետիկոսութիւն, և ընդ այն՝ թէ պարտ իցէ անպատճառ հնազանդել սահմանադրութեանց նորա: Այր եզլիթ տեսանէ զգոյն և զկերպարանս բարեպաշտութեան անդ՝ ուր յուրաստ կայցէ յիւրմէ դատողութենէն, և կրաւորաբար հրպատակիցի դատողութեան և կամաց այցոյ ուրուք՝ զոր ճանաչիցէ հրամանատար իւր լինել: Համարի թէ ենթարկելն զդատողութիւն անձին դատողութեան առն այլոյ՝ է զոհ ազնուագոյն ի զոհս և հաճոյազոյն Աստուծոյ, զոր մարթ իցէ բնամարգոյ մատուցանել Աստուծոյ (442): — Պատանի որ կամ երիտասարդ անդէն իսկ ի մտանել իւրում ի կարգն եզլիթաց իրափի ճնշել և նկուն առնել զդատողութիւն իւր՝ եթէ խափան լինիցի այն կոյր հնազանդութեան իւրում: Ըստ այսմ պարտ է վարժապետին արկանել զնա ի փորձութիւն այնպիսի՝ յոր արկան Արրահամ յաստուածակոյս կողմանէ (445): Ի կանոնս և ի կրթութիւնս եզլիթաց գրեալ կայ. «Եթէ զայն ինչ որ աչաց մերոց սպիտակ երևի՝ Եկեղեցին սեաւ կոչիցէ, մեր ևս պարտիմք ասել թէ սեաւ է, (444): Պարգն այն ըստ կազմութեան իւրում է ճշգրիտ կերպարան եկեղեցական քահանայապետութեան. և ընդհանրական մեծաւորն այն ինչ է վասն կարգին՝ որ ինչ և պապն վասն Եկեղեցոյ (445). որպէս եզլիթն կուրորէն հնազանդի մեծաւորին իւրում, նոյնպէս ամենայն քրիստոնէսայ պարտի հնազանդել պապին.

Ըստ այսմ ամենայն եզլիթ պարտական է պաշտպան կալ լիակատար և բացարձակ միապետութեան Եկեղեցոյ: Քարշելի է յաչս նորա որ և իցէ չափաւորութիւն իշխանութեան պապին. որ և իցէ օրինաւոր կարգ և կանոնադրութիւն ընդդէմ անսահման իշխանապետին՝ է անարգութիւն մեծ վայելչութեան նորա: Եթէ պապն սահմանիցէ զվարդապետութիւն ինչ, պարտի ամենայն որ, — և եպիսկոպոսք նախ քան զայլն՝ իրրև օրինակք հօտիցն իւրեանց, — հնազանդել սահմանադրութեան պապին՝ կուրորէն՝ առանց իրիք դատողութեան: Եւ

այս ևս չէ շատ. այր եզուիթ իրրև էակ իմն գերակատար պարտի հպատակել, զի այսպէս ասացից, երկիցս անգամ, նախ պապին, և ապա ընդհանրական մեծաւորին իւրում: Ըստ երևակայութեան կարգին եզուիթաց՝ Եկեղեցին է մարմին որ ըստ ինքեան առանց պապին անհոգի է. պապն է հոգի այնր մարմնոյ, ասէ կարգինալն Փալլավիչինի 446): Այնմ հոգւոյ, այս ինքն է պապին անկ է տիրապետութիւն ի վերայ ամենայն քրիստոնէից. նա է միապետ և տէր տիեզերաց. իշխանութիւն նորա է հիմն և շողկապ և խորհուրդ կառավարութեան Եկեղեցւոյ: Գրիգոր ԹՄ յամին 4394 ի կոնդակին իւրում վկայեաց գերազանցութեան կարգին եզուիթաց, որ հանդերձ բրոնակալ իշխանութեամբ իւրոյ մեծաւորի կարէ լինել ի ձեռս պապիցն զէն թեթև և զործի յարմարաւոր ի կատարումն պէս պէս պաշտամանց:

Յայսմ աստիճանի երևի մեզ պապական դրութիւնն ի լրբման իւրում և ըստ ամենայն հանգամանացն, որպիսի ոչ իմանային զայն և ոչ իսկ Թրիոնֆոյ և Փէլյոյոյ: Զատագովքն բացարձակ իշխանութեան պապին ի ԹՄ դարու չև ևս հասեալ էին յայն աստիճան երևակայութեան և ցնորից՝ թէ բովանդակ քրիստոնէութիւնն ունի յինքեան զմիմայն հոգի՝ որ խորհի, ճանաչէ և կամի, և թէ հոգին այն է պապն: Մտածութիւն այսպիսի կարող էր կերպարանիլ միայն ի միտս այնոցիկ որք ընկալան զկրթութիւն ի կարգին եզուիթաց:

ԽԵ՛.

Բեկարմինոս: — Աննունի վարդապետութիւնր նորա զպապին: — Կարծիք նորա զԻսիդորեան ստուծեանց.

— Գրարննութիւն Հռովմայ:

Բեկարմինոս, որ ընդհանրապէս համաձայն է ընդ Ապետանոսի, զիմաստ բանից նորա աւելի ևս ընդարձակեաց: Միայն թէ մերժէ նա զայն կարծիս Ապետանոսի, ըստ որում պապ որ

անկեալ ի հերետիկոսութիւն՝ մինչև եկեալ վճռոյ եկեղեցական գատաստանի՝ գատապարտի աստուածային գատաստանաւ : Ըստ կարծեացն Բելլարմինոսի՝ հերետիկոս պապն օրինաւոր պապ համարի մինչև գատապարտեալ իցէ զնա Եկեղեցին : Պայետանոս ասէր . « Եկեղեցին նաժիշտ է պապին », Բելլարմինոս յաւելու . « Եկեղեցին պարտի ընդունել զամենայն վարդապետութիւն՝ զոր ինչ միանգամ հաճոյ իցէ պապին առաջի առնել նմա . իսկ զքննութենէ և ոչ իսկ խօսել արժան է . քանզի Եկեղեցին առանց ընաւ իորհրգածութեան և առանց տարակուսելոյ պարտի հաւատալ յայն ամենայն զոր ինչ պապն ուսուցանէ՝ իբրև ի հաւաստի և ի ճշմարիտ ինչ, և թէ ամենայն ինչ զոր հրամայէ նա՝ բարի է անպատճառ, և զոր ինչ արգելուցու՝ անպատճառ չար է և միասակար : Քանզի պապն ի բարոյական խնդիրս և սնոյնպէս սակաւ կարող է սխալել՝ որպէս և ի վարդապետականն », Բելլարմինոս հետագոյն և ստարեալ զբանս իւր ասէ . « Իսկ եթէ պապն մոլորիցի՝ պատուիրելով զմոլորութիւնս կամ արգելով զառաքինութիւնս, Եկեղեցին պարտական լինի հաւատալ թէ մոլորութիւնն բարի է, և առաքինութիւնն չար, եթէ չկամիցի ընդդէմ՝ խղճի իւրում մեղանշել, ( 448 ) : Եթէ պապն արձակիցէ զհպատակս յերգմանէ հպատակութեան առ թագաւորն, — առ որ ըստ Բելլարմինոսի ունի նա լիութի իրաւունս, — Եկեղեցին պարտի հաւատալ թէ պապն այնու բարի ինչ գործէ, և ամենայն քրիստոնեայ պարտի համարել մեղս զմնայն հաւատարիմ և հնազանդ իւրում թագաւորին : Յաշս Բելլարմինոսի ապօրինաւոր յանդգնութիւն էր զոր ծողովքն արարին՝ արկանելով ընդ քննութեամբ իւրեանց և ընդ հաւանութեամբ զվճիռս պապին ի խնդիրս հաւատոյ :

Ըստ բանից Պայետանոսի և Պանոսի, Բելլարմինոս այնպէս ընդարձակեաց զգաղափար անտիպալականութեան պապին, և յայլմէ կողմանէ այնպէս նուաստացոյց զծողովս կամ զԵկեղեցին ողջոյն առաջի պապից, զի աւելորդ լինի այնուհետև որ և իցէ յարարելութիւն ի միջի նոցա : Ըստուած ոչ ինչ ոչ

առնէ վարապար, և ոչ երկիցս տայ զիշխանութիւն անսխալ, այս ինքն միանգամ ժողովոց, և միւս անգամ պապին առանձինն: Երդ եթէ Հաւաստի է՝ թէ անսխալականութիւնն անկ է պապին, Եկեղեցին ընկալցի զոյս իւր միայն ընդ նորա ձեռն, և ոչ եթէ ինքն ըստ ինքեան: Եւ զի այլովք բանիւք ասացից, պապին անկ է անսխալականութիւն ներքորձման, իսկ Եկեղեցւոյ հրորձման: Ըստ կարծեաց այսր կուսակցութեան՝ որ և իցէ ժողովական սահմանադրութիւն անհաստատ է մինչև առնուցու զՀաստատութիւն պապին. ընդհակառակն՝ վրձիւն պապական չկարէ հաստատել և ոչ միով իւրք երկրաւոր իշխանութեամբ, այլ ինքնին ըստ ինքեան պարտաւորիչ է և աստուածային:

Անհարազատութիւն Իսիդորեան կոնդակացն և վճոց հրատարակեցաւ ի ձեռն քննարանից Մակտեպուրկի: Այնուհետև որ որ ունէրն գէթ զոյգն ինչ տեղեկութիւն քրիստոնէական հնութեանց՝ ոչ ևս կարող էր երկմտել՝ զի խարէութիւնն սուսանուն Իսիդորի է հարբ յետին ժամանակաց. և սակայն զըրութիւնդ այդ այնպէս աճելով աճեաց ընդ պապական զրութեան, զի աստուածաբանք պաշտամն և եղութիք եղին ի մտի պաշտպան կալ նմին, և նովիմբ ապացուցանել և զանսխալականութիւն պապին և զիշխանութիւն նորա միապետական: Եղութիւն Տուռանիոս գրեաց ջատագովութիւն ահագին վասն Իսիդորեան կոնդակագրոց: Բեյլարմինոս խոստովանէր՝ թէ առանց սուսանունն Իսիդորի և մտացածին գրուածոց անանուն Դովինիկեան կրօնաւորին անմարթ է պապոցոյցս ի մէջ բերել վասն պապական զրութեան՝ հիմնեալ ի վերայ աւանդութեան: Երեքին ևս զլիաւոր ջատագովք նորոյ վարդապետութեանն, Թովմաս, Ապետանոս և Պանոս, հիմնէին զբանս իւրեաց ի վերայ ստութեանցն այնոցիկ: Ի Հուլիմ կարգեալ էր ատեան գրաքննութեան, ընդ որոյ ձեռն յուսային դատապարտել կամ ջնջել զամենայն գիրս յորս գրանիցին պապոցոյցք ստայոզ լինելոյ վկայութեանցն այնոցիկ: Ատեանն այն պարս անձին ճանաչէր պինդ ունել զզորութիւն և զազգիցութիւն սր-

տութեանցն Իսիդորի, և Գոմինիկեան կրօնաւորին. զոր և արարն Բելլարմինոս : Ազեալ էր նա ի մօրի զի ամենայն առաջարկութիւնք պապական զրութեան մեծապէս ծագկեալ էին անդէն իսկ յառաջին երկուս դարս քրիստոնէութեան : Քրիստոնէութիւնն առաջի առնէր յայնժամ զմիապետութիւն իմն բացարձակ, և պապք ազատս համարէին զեկեղեցականս յաշխարհական գառաստանէ (449) : Արքեպեպա Ալեքսանդր, — սիրելի վկայն Թովմայի Ազուինացւոյ — թանկագին իմն հեղինակութիւն էր վասն Բելլարմինոսի, որ համարէր թէ յունական բնագիրնորին չէ ևս գտեալ է և ոչ տպագրեալ : Բայց զստոյցն ասելով, զոր վկայութիւն մարթ էր ի մէջ բերել ի յոյն լեզու ի նպաստ միապետութեան պապին և անսխալականութեան նորա յառաջին հազար ամս քրիստոնէութեան, եթէ ի բաց մերժէր որ զամենայն անհարազատ և զխարդախեալ վկայութիւնս :

Այսպիսի կուրութիւն անհասկանալի իմն է յանձին Բելլարմինոսի. քանզի նա, որպէս վկայէ Ռիշթոն ի հրապարակական գասախօսութիւնս իւր ի Հոռովմ, ինքն իսկ ասացեալ էր. « Աչ հայելով ի ջատագովութիւն Տուսիանոսի, ես զկոնդակագիրս Իսիդորի անհարազատս համարիմ », (450) : Մուացութեամբն իւրով և կամ փոփոխամտութեամբն յայտնապէս ասէ նա զնոյն իմաստ բանից և ի մեծահատոր մատենին իւրում գլխապէն (451) : Իսկ յորժամ փոյթ կալաւ ապացուցանել զանսահման իշխանութիւն պապին և զմիապետութիւն, զկարի իսկ ստոյգ բանս կոչեաց ի վկայութիւն : Պաշտպան եկաց նա առասպելին անգամ՝ որ յաղագս իրաւանց պապից կարգելոյ զթագաւորս, և վաւերական ասէր զթուղթն Իննովկենտիոսի, յորում իրր թէ ընդ բանադրանօք արկեալ լինէր կայսրըն Արկադիոս : Անհաւատարմութիւնն Բելլարմինոսի յայն աստիճան եհաս՝ մինչև ուրացաւ և զքաջածանօթն ինքեան հանգամանս՝ թէ համօրէն եկեղեցին և ամենայն համարարանք և աստուածարանք Փե գարուն հերքեցին զանսխալականութիւն պապին և զմիապետական իշխանութիւն նորա : Գիտէր նա ի զրուածոց անտի Պիոսի Բ, զի ի ժամանակին յայնմիկ

ամենայն ուրիշ տիրեալ էր վարդապետութիւնն զգերագոյն իշխանութենէ ժողովոց 452) . և սակայն զամենայն ջան ի գործ արկանէր՝ զի համոզեցէ զընթերցողս իւր՝ թէ միայն աստուածարանք ոմանք հակառակ հասարակացն կարծեաց ջատագով կացին այնք վարդապետութեան :

Թուի թէ ի Հոռով՝ արդարև այնպէս կարծէին՝ թէ պալատն պապական օգնականութեամբ կրօնաքննութեան և գրաքննութեան կարող է ջնջիլ և ի չիք դարձուցանիլ զամենայն քննաբանութիւն և զպատմութիւն եկեղեցական, և ի տգիտութեան պահել զկղերն զայսպիսի խնդրոց : Գրաքննութիւնն այնպիսի բռնութեամբ յառաջ տանէր զգործ իւր, յետ աւուրցն Պողոտի Ե, զի արք իմաստունք անկան ի յուսահատութիւն, և բազումք զագարեցին ի հետամուտ լինելոյ աստուածաբանական տեղեկութեանց : Կ Գերմանիա յամին 1599, ազգեցութեամբ եզուիթացն յայն թշուառութիւն հասին, զի ոչ իշխէր որ ի կիր առնուլ ոչ բառարանս, ոչ զցուցակն արգելեալ գրենոյ և ոչ զհաւաքմունս շարադրածոց :

Այլ և ոչ եպիսկոպոսացն հրաման տային ընթեռնուլ ըզգիրս արգելեալս ի Հոռով՝, մինչ զի հարկ լինէր նոցա անգիտանալ զայն ամենայն որ ի լոյս ընծայեալ լինէր : Հրատարակել զգիրս՝ որք պատմէին զնախնի վիճակ եկեղեցւոյ և ամթոռոյն Հոռովմայ, — որ բոլորովին տարբեր էին քան զայնք ժամանակի իրան, — արգելեալ էր սպառնալեօք ծանր ծանր պատժոց . որպիսի ինչ էր և Ուրաշիք Ժողովն, պատմութիւն եպիսկոպոսացն Հուսեննայի հրատարակեալ յՂնէլլոսէ : Իսկ որ ինչ գրուածք էին այսպիսիք արդէն սպազրեալք՝ ջնջէին և չուքանային իսպառ :



և՛

Բարոնիտս և նորանոր խարդախանք : — Վկայարանս թիւնք պապից ստայօղք : — Պատմութիւնք վարուց պապից սմանց : — Խարդախանք բանից ինչ մաշտոցին — Հնարք Բարոնիտսի և եղախնայ :

Նւ ահա աստի յայսմանէ մարթ է ի միտ առնուլ՝ թէ որպէս ի նոր վկայարանութիւնս Վատինացւոց երեւցաւ ահազին բազմութիւն պապից յերիս առաջին զարան կացելոց, զորոց ոչ որ զիտէր ինչ յրնթացս 4500 ամաց, և որք ոչ գտանէին և ոչ ի միումն ի հին վկայարանութեանց : Ի վաղեմի ժամագիրս Վատինացւոց գտանէին պատմութիւնք միայն զՊղնմայ, զԱբրանտէ, զՄարկոսէ և զՄարկելեայ. իսկ ի նոր ժամագիրան շնորհիւ ջիւմեռանդն ջանից Բեղարմինտսի և Բարոնիտսի մտին պապքն Ջեփիւռինտս, Սոտեր, Պայիտս, Պիտս, Պալլիտտոս, Անակղետոս, Պոնտիանոս, Նւարիտտոս, և այն հանդերձ պատմութեամբք առելովք ի սուտանուն Իսիդորէ : Նւ այսպէս ստիպեցաւ կղերն առ ի շարժելոյ ի ջերմեռանդութիւն ընթեռնուլ զմտացածին պատմութիւնս և զբանս՝ թէ պապն է մի միայն դատաւոր ամենայն եպիսկոպոսաց, և թէ ոչ որ յեկեղեցականաց ոչ անկանի ընդ աշխարհական դատաստանաւ (ըստ պատմութեան Սեղբեստրոսի) և այլն : Նւ այսմ սատար եղև կարգինայն Բարոնիտս՝ հեղինակ Տաբէֆրաշն, յորս նա ինքն զգուանօք իմն խօսեցեալ էր միանգամ զստայօղ լինելոյ գրուածոցն Իսիդորի \*):

Սակայն վերստին մուծան խարդախանք ի նոր ժամագիրս : Ի պատմութեան պապին Լևոնի Բ, անդ ուր յիշատակի դա-

(\*) Կարդինալն Բարոնիտս (Վալենտինուս յոմին 4608) հուշակէտ է Բաղնիկոսոց «Տաբէֆրաշնեմաթն էլիեղեցայնան պատմութեան» : յորում ոչ ստիտա լինելոյնք քրտանին իստան ընդ ստայօղ պատմութեանց :

տապարտութիւն Անորիտի ի վեցերորդ տիեզերական ժողովոյն, անուն պապին եղծեալ ջնջեցաւ. զի որովհետեւ պապքն կամէին անստալական լինել, ի հարկէ արժան էր անհետ առնել զայն պարագայ ի մտաց եկեղեցականացն 453): Նաև առապելն որ զուրացութենէ Մարկեղինոսի պապին և զՍինուէսեան ժողովոյն՝ ընկալեալ եղև ի ժամագիրս, որպէս զի եպիսկոպոսունք և քահանայք հանապազ առաջի աչաց ունիցին զայս՝ թէ զպապն ոչ կարէ դատել և ոչ մի ինչ ժողով:

Ի Հոռովմ՝ զայթակղական իմն համարեալ էր այն՝ զինախնի Եկեղեցին Հոռովայ ամփոփէր զիշխանութիւն Անտրոսի կապելոյ միայն շնորհաւոր, մինչդեռ պապն սեպհականէր ինքեան զիսկատար իրաւունս կապելոյ և շնորհաւոր, և մատնելոյ զնոսին ի մահ: Ըստ այսմ՝ ի ժամագիրս և ի մաշտոցի Լատինացոց յաղօթան որ ի տօնի առաքելոյն Անտրոսի բառդ շնորհաւոր ի բաց ձրեալ է 454): Բանքն սատանայի ասացեալք ի ժամանակի փորձութեանն Քրիստոսի յանապատին, «Տաց քեզ զամենայն թագաւորութիւնս աշխարհի», փոխադրեալ են այժմ ի հոռովական մաշտոցին ի դեմ Քրիստոսի, որ որպէս թէ ասացեալ իցէ զբանն զայն ց'Անտրոս 455):

Այսպիսի խարզախանք և փոփոխմունք ի նպաստ պապական զրութեան այնպէս ընդհարկանէին յաչս ամենեցուն, մինչ զի և Աննտեկեցին Մարտիրոս անկաւ ի վարանս տարակուսի՝ թէ «Գուցէ յետ ժամանակաց ոչ ևս որ հաւատս ընծայեցէ զրոց սրոց, և Եկեղեցին հիմն ի վեր քանդեալ տապալեսցի», 456):

Այսպէս ահաներգործէին Բարոնիոս և Բելլարմինոս ի միասին առ ի տարածելոյ զնորանոր ուղիս մտացածին բանից և պատմական խարզախութեանց ի նպաստ նորահնար իշխանութեան պապին ընդ ամենայն աշխարհս և յամենայն Եկեղեցիս արևմտից: Բարոնիոս բաց ի Տարեգրացն իւրոց՝ յորս ամբարեալ կան ամբաւ մթերք ստացող շարագրածոց և մտացածին վկայութեանց, ձեռն էարկ այնր աղագաւ և ի տպագրութիւն հոռովական վկայարանութեան ըստ հրամանի պապին: Նպա-

տակ նորա յայնմ աշխատութեան է տարածանել զայս կարծիս՝ թէ առաքեալն Պետրոս կարգեաց յամենայն քաղաքս արևմտից եպիսկոպոսունս, և թէ այսու օրինակաւ Հռովմէականն Եկեղեցի իսկապէս մայր է այլ ամենայն Եկեղեցեաց :

Օրինակ իմն, ի Հնագոյն օրինակս վկայարանութեան Հռովմայեցւոց գրեալ էր միայն՝ թէ ի Շալոն քաղաքի առաջին եպիսկոպոս եկաց Մեմմիոս . Բարոնիոս առնէ զնա քաղաքացի Հռովմայ, զոր ինքն իսկ Պետրոս ձեռնադրեալ էր յեպիսկոպոսութիւն Շալոնի . զնոյն առնէ և ի պատմութեան Յուլիանոս եպիսկոպոսին Մանս քաղաքի, ի 27 Յունուարի : Զոր ինչ ոչն զիտէր վաղեմի վկայարանութիւնն Հռովմէական՝ զիտէր զայն Բարոնիոս . զի ասէ՝ թէ Պետրոս էր որ ձեռնադրեացն զՅուլիանոս յեպիսկոպոսութիւն Մանսի : Յանդգնաբոյնս ևս վարեցաւ Բարոնիոս ի պատմութեան Գիոնէսիոսի եպիսկոպոսին Փարիզոյ : Քանզի Հնագոյն վկայարանութիւնք քաջածանօթքն նմա ասէին՝ թէ Գիոնեսիոս քարոզեաց ի Քաղզիա յետ կիսոյ երրորդ դարուն . իսկ Բարոնիոս պատմէ թէ Գիոնեսիոս յառաջագոյն ձեռնադրեցաւ յառաքելոյն Պօղոսէ եպիսկոպոս Սմեւացւոց, և ապա ի Ղղնայ Հռովմայեցւոց առաքեցաւ յեպիսկոպոսութիւն ի Քաղզիա : Այսու պատմութեամբ երկու ինչ ունէր ի մտի . նախ զի ցուցցէ՝ թէ պապն կարողացաւ տեղափոխել նաև զայնպիսի եպիսկոպոս՝ որ կարգեալ էր ի նմին իսկ յառաքելոյն Պօղոսէ, և երկրորդ՝ զի ցուցցէ՝ թէ Փարիզեան Եկեղեցին է անմիջական Հոգևոր զուտոր Հռովմայ, Բարոնիոս և Բեկարմինոս յայտ արարին՝ թէ ստայօդք են և մտացածիւք ամենայն գրուածք և յիշատակարանք վեցերորդի տիեզերական Ժողովոյն, յորս երևէր դատապարտութիւն Մնորիոսի պապին :

Յայտ ուրեմն է զի յաւուրց անտի տարածման կարգին եզուիթաց՝ յընթացս իրր տասն ամաց՝ կարծիք կամ ենթադրութիւն անսխալականութեան պապին եզիտ արդէն յաջողութիւն մեծ յոյժ . Քանզի եզուիթքն եղեալ էին զայն առաջի աչաց իւրեանց իրրև զսեպհական առաջարկութիւն, և արգելուին զոր և է դատաբնութիւն և զեկեղեցական և զպատ-

մական հետազոտութիւն, ելեւելս զմիմեամբք առնելով պարապեցին յընտրութիւն վճռոց սուտանուն Իսիդորի, և հին և նոր խարդախանացն եղելոց ի Հռովմ: Մալտոնաթ, Սուարէզ, Կրէչէր, Փոսսեվինոս, Վալենցիա և այլք՝ փոյնանք էին ի նոսա: Ինքն իսկ Տուրիանոս, որ պաշտպան կայր խարդախանացն այնոցիկ՝ որպէս զի նորանոր մտացածին բռնիւք օգնական լիցի հռովմական գրութեան, ի մէջ բերէր զզոյզազիրս՝ զորս երբէք ուրուք չիք տեսեալ: Ի նմին ժամանակի և եղւիթն Ելիսնոս Փիզացի շարադրեաց զանհարազատ պատմութիւն մի զնիկիական ժողովոյն՝ առ ի բարձրացուցանելոյ զիշխանութիւն պապին, և այլք, զորօրինակ Բելլարմինոս, Տէլուրիոյ և Հալուա պնդէին՝ թէ գրուածքն սուտանուն Իսիդորի վաւերականք իցեն և հարազատք: Պետրոս Աանխիտոս ի մէջ բերէր նաև մտացածին նամակս զրեալս յամենասուրբ կուսէն Մարիամայ:

Բայց առաւել քան զամենայն ջանահնար լինէին նորա հաստատել զկարևորութիւն Իսիդորեան կանոնադրոցն և զստայօզ վկայութիւն յիշատակեալս առ Գրատիանոսի և Թովմայի: Զստութիւն վկայութեանցն այնոցիկ ընդ երկար ժամանակ ոչ որ ի կամօղիկ Եկեղեցւոջ համարձակեցաւ հրատարակել. միայն յամին իբր 1660 զիտունքն Գաղղիացւոց սկսան ասել ըզնոցանէ զճշմարիտն: Մատեանն Գրատիանոսի ի ձեռն վերաքննութեան և ուղղագրութեան պատուիրելոյ ի պապից, — որով անշուշտ յերևան գային խարդախանք բազումք, — էառ զնոր զօրութիւն: Սուտանունն Իսիդորոս ընդ ժամանակս երկարս եկաց մնաց ընդ պաշտպանութեամբ զրաքննութեան: Յորժամ հռչակուոր կանոնագէտն Աոնտիոս ապացուցանէր զստայօզ լինելն նորին, զրաքննութիւնն ջնջեաց զյառաջարանն՝ յորում էին ապացոյցքն այնոցիկ. իսկ իբրև երևեցաւ նշանաւոր մատեանն Պլոնտէլի մակագրեալ, «Լիակատար վերլուծութիւն սուտանունն Իսիդորի», ոչ և ս մնաց տեղի կասկածանաց ընդ մտացածին լինել այնր մատենին, և դասեցաւ այն զարձեալ ի ցուցակն արգելեալ զրոց:

Յամին իբր 1682 Սպանիացի Բենեդիկտեանն Աղուիբրէ վերջին անգամ՝ փորձ փորձեաց ջատագովել զուստանունն Իսիդորոս : Աչ էր մարթ ուրանալ՝ զի որ և իցէ այր Հմուտ պատմութեան ի տեսանել անդ զԽիզորեան ստութիւննն ի միտ առնոյր՝ թէ պապական զրութիւնն ոչ ունի բնաւ ամենին Հաստատութիւն պատմագրական . և սակայն Աղուիբրէ վարձատրեցաւ պաշտամամբ կարգինալութեան : Յընթացս ժԸ գարուն Հաւանեցան ամենեքեան՝ թէ չէ Հնար այլ ևս ջատագովել զՀարազատութիւն Խիզորեան կոնդակագրոցն, և Պիոս Զ ի պատասխանին առ եպիսկոպոսունս Կերմանիոյ յամին 1789 խոստովանեցաւ զանհարազատութիւն նոցին :

Առ մերովս ժամանակօք եզուիթքն Փարիզացիք Հեռագոյն ևս տարան զիրան . Հայրն Ռէնեօն ասէ յայնպէս . «Արդարև ՚՚իսկ եհաս նենդագործն նպատակի իւրում . խարզսխեաց և ՚՚փոխեաց նա զբարեկարգութիւն Եկեղեցւոյ, զոր և կամերն ՚՚առնել, բայց ոչ կարաց զգէմ ունել ընդհանրական կործանմանն . քանզի Աստուած ոչ օրհնէ զխարկանս, և սրտայօզ կոնդակագիրքն չարիս և եթ գործեցին, ՚՚ 437) : Զծանրութիւն այր խոստովանութեան թուի թէ չառին ի միտ ելլիթքն :

Եկ :

Վարդապետութիւն « յաթոսոյ » :— Զանազանութիւն պապական վճռոց :— Պէսպէս կարծիր աստուածարանից զայնպիսի վճռոց :— Բարոնիոս ևս Սէլլոյ, Փերրանէ ևս եզուիթք :

Յորմէ Հետէ ի վեր ել վարդապետութիւնն զանսխալականութենէ պապից, զԺուարութիւն իմն ծագեցաւ, յորոյ ի լուծումն Հնարեցան պէս պէս ենթադրութիւնք . թէպէտ և ոչ ումէք յաջողեաց Հաստատել զկարծիս աստուածարանից և ոչ ի վերայ միոյ ենթադրութեանց անտի : Ի մտառուտ Հայեցեալ՝ ամենայն որ աստուածարան գտանէր այնպիսի պապական վը-

Ճի՛ռս՝ որք հակառակ ելանէին այլոց սահմանադրութեանց պապիցն կամ վարդապետութեանց զորս ընդունէր Եկեղեցի, և չէր հնար համարել զնոսին արդիւնս անսխալ հեղինակութեան միոյ ուրուք։ Հարկ համարէին որոնել և դտանել նշանս այնպիսիս՝ որովք մարթ իցէ ճանաչել թէ ո՞ր իցէ անսխալ վարդապետութիւն պապին, կամ թէ այնպիսի ինչ պայման երեւակայել՝ որոց կատարմամբն վճիռ նորա անսխալ իցէ։ Աստի յայսմանէ ծագեցաւ անդատին ի ԺՁ դարէ հռչակեալն այն զանազանութիւն պապական վճռոց տուելոց յաթուոյ \*)։ որք որպէս թէ ամենեքեան առ հասարակ անսխալք իցեն։

Ձանազանութիւնդ այդ և խտիր ընդ վճիռն տուեալ յաթուոյ, և ընդ կարծիսն ըստ դիպաց իմն ասացեալս ի զրուցատրութեան՝ ունի զհիմն բարի և օգտակար ոչ միայն վասն պապին, այլ և վասն եպիսկոպոսի և վարժապետի։ Համառ օտ ասել, ամենայն որ որ ունիցի զկոչումն քարոզութեան կամ ուսուցանելոյ՝ կարող է խօսել հարևանցի իմն և առանց ճշդութեան զտեսական և զբարոյական խնդրոց. բայց ըստ որում վարժապետ և խրատատու հասարակաց՝ պարտի քաջ կշռել զհետևանս առաջարկութեանց իւրոց։ Ոչ որ ի բանաւոր մարդկանէ ոչ համարեսցի մասունս հաւատոյ զյայտարարութիւնսն զայնոսիկ՝ զորս արարեալ իցէ պապն յառանձին զրուցատրութիւնս։ Սակայն այս խտրութիւն ընդ վճիռն տուեալ յաթուոյ և ընդ կարծիսն ասացեալս ի զրուցատրութեան՝ չկարէ ունել զհաստատութիւն։

Եթէ պապն ինքնաբերաբար և կամ առ հարցմունս այլոց հրապարակաւ ասիցէ ինչ զայսմ կամ զայնմ վարդապետութենէ, ապաքէն ասէ զայն յաթուոյ. զնոյն է իմանալ և զամենայն եպիսկոպոսէ։ Որովհետև դնեն զայնպիսի պայման պատահական և կամայական՝ յորոյ ի կատարմանէն կախեալ կայ վճիռ պապից (եթէ յաթուոյ իցէ և եթէ ոչ), մտանն ի կարգ անձնական աստուածարանական կարծեաց։ Այս այնմ

(\*) Աթուոյ յաթուոյ՝ ex cathedra.

նման է՝ եթէ որ ասիցէ զբժշկէն կոչեցելոյ առ Հիւանդ որ՝ զի ծանիցէ զՀիւանդութիւնն. «Ծանեաւ նա զՀիւանդութիւնն և պատուիրեաց զեղ դարմանոյ ըստ որում մարդ միայն, և ոչ ըստ որում բժիշկ» :

Ընդ բաժանել վարդապետական վճուոց պապիցն յերկու կարգս, յաթոռականս և յանձնականս, նովին իսկ Հիմն դնի ապարէն այսմ կամայական զանազանութեան՝ որով անպատշաճ կամ տարադէպ սահմանադրութիւնք ինչ պապից զրկին յարտօնութենէ անսխալութեան : Այսպէս ահա Օրսի ասէր՝ թէ վարդապետական գրուածք Ոնորիտի դատապարտեալքն ի վիցերորդ տիեզերական Թողովին իբրև Հերետիկոսականք, շարադրեալ էին յՈնորիտէ իբրև ի մասնաւոր գիտնականէ : (Մասնական որ գիտնական ասել զպապն այն իսկ էր՝ որպէս թէ ասիցէ որ «երկաթ փայտեղէն», ) Այլք, զոր օրինակ Անէթ, զբանն Նիկողայոսի առ Եկեղեցին Բուլղարաց՝ թէ մկրտութիւնն որ լինիցի յանուն Քրիստոսի միայն՝ վաւեր է, — Համարէին մասնական կարծիս 458) :

Եթէ պապն պարտի անսխալական լինել, անպատճառ հարկ է նմա, որպէս ասին յովովք յաստուածաբանից, իմանալ ինչ ի ինդիրս՝ զորոց կամիցի դատաստան առնել առանց սխալանաց : Սմին իրի ամենակարևոր պայման անսխալականութեան նորա պարտի այս լինել, զի նախ քան զամենայն ուսանիցի որպէս արժանն է զինդիրն՝ խորհրդակցեալ ընդ եպիսկոպոսունսն և ընդ աստուածաբանս : «Յայտ իսկ է, ասէր Սպանիացին Ալփոնսոս Տէ Քասթրոյ, զի բազում պապք են որք չիմանան ինչ ի քերականութենէ անգամ, և ոչ թէ միայն ի սուրբ գրոց. իսկ արդ առանց գիտութեան սուրբ գրոց անհնար է դատաստան առնել զվարդապետութեանց հաւատոյ,» 459) : Ասէին դարձեալ. պապն անշուշտ անսխալ է՝ եթէ տայցէ ըզվճիւ յԵրոսոյ, բայց այս հարկ է զի ամենայն ինամօլ տեղեկանայցէ ինդրոյն, և ինքնին հետազօտելով և քննելով զայն, և խորհրդով եպիսկոպոսաց և աստուածաբանից խրատեալ և սերտիւ ուսեալ :

Առ այս պատասխանի տպին այլք, և մանաւանդ եզուիթքըն, թէ այդպիսի անսխալութեամբ ոչ ինչ օգուտ գործէին պապք Եկեղեցւոյ: Քանզի յայտք ի պապից Հասին ի բարձրութիւն այնր իշխանութեան իրրև իրաւադէտք, իրրև պաշտօնայք կառավարութեան, և կամ իրրև որդիք գորով մեծանուն ազգատոհմից. վասն որոյ եթէ կամէին ևս՝ չկարէին նորա ի պատճառս ձերութեան Հասակացն անձնատուր լինել աստուածարանական հետազօտութեանց. բազումք և զայն ևս ոչ զիտեն՝ թէ զիւրոյ պարտ իցէ բուռն հարկանել զայդմանէ: Շնորհն անսխալութեան այնպիսի ինչ պարտի լինել, զի ի քթթիւն ական լուսաւորիցէ զտղէտ պապն, և պահեցէ զնա յամենայն մոլորութենէ: Եթէ պապն հրատարակէ զվարդապետութիւն ինչ կամ լուծանէ զիննդիրս տեսականս կամ բարոյականս, վճիռ նորա անհերքելի է, թէպէտ և չիցէ յայտ՝ եթէ ընդ երկար խոկացեալ իցէ նա զայնցանէ՝ թէ յանկարծակի իմն վճռեալ, բազմաց իցէ հարցումն արարեալ զայնցանէ՝ թէ սակաւուց ոմանց, կամ թէ ոչ ումք բնաւ: Միայն ի ներքին էութեան որոյ նորա գտանի անսխալութիւն նորին. առ ի՞նչ իցէ նմա հարցանել ցայս՝ որք ենթարկեալ են մոլորութեան՝ յորժամ ինքն անսխալ իցէ: Առ ի՞նչ պիտոյ իցէ ողորմելի լոյսն կանթեղաց՝ յորժամ պապն լի կատարեալ ունիցի յինքեան զարեգակն հոգևոր:

Բիլլարմինոս ուժգին զօրութեամբ պաշտպան կայր պապական արտօնութեան՝ վարդապետական անսխալութեան, և բնաւ ճանաչել իսկ չկարէր զժողովս, և ոչ խօսել արժան համարէր զիւր հրգակցութենէ ընդ եպիսկոպոսունս: Եթէ պապն վճիռ ինչ տայցէ, ասէր, առ տիեզերական Եկեղեցի, կամ հրատարակիցէ բարոյական ինչ օրէնս, պարտ է զի անսխալ իցէ նա 460): Այս բանք Բիլլարմինոսի առաւել յարմարին ապագայ ժամանակի՝ քան թէ անցելումն. քանզի յառաջին հազար ամս քրիստոնէութեան չիք և ոչ մի ինչ վճիռ զոր տուեալ իցէ պապն առ Եկեղեցին համօրէն. նաև ի ԹԲ և ի ԹԳ զարրս սովորութիւն էր պապիցն ժողովով լուծանել զիննդիրս

Հաւատոյ : Միայն կոնդակն Վանիփակիտի Ը, յամին 1505, որոյ սկիզբն է «Զմի սուրբ», ուղղեալ էր առ Եկեղեցի ողջոյն : Թէ ընդէր պապն պարտիցի լինել սխալական՝ յորժամ ուղղիցէ զբանս իւր առ Բանաստեղծին Եկեղեցի, և անսխալ՝ յորժամ՝ խօսիցի առ Եկեղեցին որչեղեւան, կարդինայն չասէ ինչ ուստի և կարծիք նորա ընդհանրապէս ի բաց մերժեցաւ :

Ոմանք յաստուածարանիցն եղուիժաց, զոր օրինակ Թաննէր և Քոմիիժըն, այսպիսի ինչ խորհեցան և ասեն. «Որպէս զի վճիռ պապին իցէ անսխալ և ամուսական, հարկ է զի յառաջադոյն առ ժամանակ մի մածուցեալ իցէ ի զրունս Եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի», : Սակայն և այս կարծիք ոչ եղև Հաճոյ բազմաց : Վասն որոյ այլք ոմանք, զոր օրինակ Տիւփալ և Սէլոյ, ասացին՝ թէ պապն յայնժամ միայն է անսխալ՝ յորժամ նշուիցէ զամենեսեան որք ուսուցանիցեն այլ ազգ ինչ քան զոր ինքն վարդապետէ (161) :

Բազումք կարծէին՝ թէ այս ամենայն ևս զոյգն ինչ ունի նշանակութիւն, և վասն այնորիկ ոչ իշխեին հաստատել զբացարձակ և զանպայման անսխալականութիւն պապին, նշուիժքըն Փրանկիսկոս Թորրէնտիս և Պակոթմ ասէին. «Լուանց Թողովոյ որ կազմեալ իցէ գէթ յեպիսկոպոսաց, ի կարդինալաց և յաստուածարանից բնակելոց ի Հոռովմ, ոչ է մարթ վստահել յանսխալութիւն պապական վճոյ», : Տրիէտոյ, Լուպոս և Հոսիոս նոյնպէս համարէին՝ թէ վասն անսխալութեանն անպատճառ կարևոր է խորհրդակցութիւն գէթ ընդ միում Թողովոյ : Եւ աստի յառաջ եկն վէճս այս՝ թէ հարկաւոր իցէ արդեօք վասն տալոյ զվճիռ Երեւոյ՝ հաւանութիւն Թողովոյն, թէ բաւական է և այն՝ զի լուիցէ միայն զկարծիս ժողովելոցն, և ապա վճիռ հաստանիցէ ըստ իւրում հաճոյից : Զհաւանութիւն Թողովոյն զնել պայման անսխալութեան պապին, նշանակէ՛ ասէին՝ ուրանալ զործով զանսխալութիւնն զայն : Այլքըն ասէին. առ ի՞նչ հարկ իցէ ժողովել եպիսկոպոսաց. առ այս կան ահա կարդինալք, որք և մասն կազմելով պալատանն՝ աւելի ևս ունին նշանակութիւն քան զամբողջ բազմութիւն

եպիսկոպոսաց ։ Այլ աստէն ծագեցաւ և այլ իմն տարակոյս . հարկաւոր իցէ զի պապն մինչև տուեալ զվճիռ իւր՝ խորհուրդ հարցանիցէ համօրէն ժողովոյն կարգինալաց , թէ բաւական է (որպէս կարծէին Սրաւինա և Քերուպինի) զի նա ընտրեացէ առ այս երկուս կամ երիս կարգինալս , և անփոյթ արացէ զայլովքն ամենեքումիք , որք ըստ նորա կարծեացն այլով ակամբ հայիցին ի խնդիրն ։

Այս խնդիր ջերմագոյնս ի մէջ բերաւ յամին 1715 , յորժամ Սրբաբն Ք.Ա. հրատարակեաց զՏոչակաւոր կոնդակն իւր , որոյ սկիզբն է « Միածին , » , և յորոյ շարագրածն կցորդ եղն միայն երկու կարգինալք համամիտք պապին ։ Եզուիթքն յայտնագոյնս տեսին յայնժամ՝ թէ քանի՜ դժուարին է իմանալ , « Միածին » իցէ վճիռ պապին ըստ հաւատոյ՝ թէ ոչ . և բան եղին ի բաց կալ ի պայմանէ նախընթաց խորհրդակցութեան , և ասել թէ պապն միայնակ է անպայման զործի հոգւոյն Աստուծոյ . միայն թէ առ այս առաջարկեցին երկուս սահմանս կամ ամփոփմունս , ( յորոց զառաջինն հնարեաց Բելլարմինոս և զերկրորդն Սէլոյ . ) այս ինքն . զի պապական վճիռն պարտի ելանել վասն համօրէն եկեղեցւոյ , և ք . զի պապն պարտի նզովել զամենեսեան՝ որք այլազգ ինչ դաւանիցին ։

Ըստ այսմ եզուիթական վարդապետութեան , զոր պինդ ունի և Փերրոնէ 462) , և զուցէ ողջոյն իսկ կարգն եզուիթաց , պապն կարէ անկանել ի մոլորութիւն՝ եթէ հանիցէ վճիռ առ մասնական ինչ եկեղեցի , զոր օրինակ առ Գաղղիականն կամ Գերմանականն , և կամ եթէ ոչ նզովիցէ զայլազգ դաւանողսրն . Եւ որովհետև աստուածարանութիւն Փերրոնէի ոչ ունի յեկեղեցւոջ զայնպիսի զօրութիւն և զՏեղինակութիւն՝ զոր ունի Բովանդակութիւնն Թովմայի Ազուինացւոյ , ուստի և չիք ակնկալութիւն՝ թէ բացատրութիւն նորա ի վերայ վճռոց տուելոց յ« Միածին » ընդունելի լինիցի ամենեցուն ։ Այս զաղափար թէպէտ և տարապայման նշանակութեամբ ճոխացեալ յաչս եզուիթաց՝ է մի ի կարի իմն մթին և անյայտ խնդրոց տեսական աստուածարանութեան . Եւ այսպէս ամենայն ջատագովք

անսխարութեան ազատ են ըստ կամի սահմանել գաղափարս զվճույ զոր պապն տայցէ յաթոսոյ :

ԽԸ.

Եկեղեցին եւ պապն, եւ խնդիրն անսխարութեան :

— Հատատութիւն վարդապետութեանց Եկեղեցոյ :

— Անճնական անսխարութիւն պապից, եւ անտեղութիւնը նորին :

Անճնական անսխարութիւնն պապին ընդարձակազոյն եւ է քան զանսխարութիւն համօրէն Եկեղեցոյ : Եկեղեցին յիւրում ամբողջութեանն՝ յապահովի կայ յերեսաց մնորական վարդապետութեանց . ուստի և ոչ օտարանայ ի Քրիստոսէ և յառաքելոց, և ոչ մերժէ զվարդապետութիւնն զոր միանգամ ընկալեալ և անընդհատ պահեալ իցէ ի ծոցի իւրում, ժողովքն ի քնին առեալ զվարդապետութիւն ինչ՝ տայ զայնմանէ զվկայութիւն : Մէն մի եպիսկոպոս ի դիմաց այնր մասին Եկեղեցոյ որ յայտնի է ինքեան՝ հաւատտի առնէ թէ այս ինչ վարդապետութիւն կայ մնայ ի նմին մինչև ցայժմ, և մասն է հաւատոյ . կամ թէ ճշմարտութիւն այսր կամ այնր վարդապետութեան թէպէտ և չիցէ յայտնապէս բացատրեալ, բայց իբրև տրամարանական հետեանք՝ միշտ և հանապազ լեալ է իբրև ամենակարևոր ինչ : Իսկ թէ արդեօք ճշմարիտ էր վկայութիւն եպիսկոպոսացն, և պահեցաւ արդեօք ի ժողովի անգ կարևոր պատուութիւն խորհրդակցութեանց և անկողմնասէր արգարութիւն ի մէջ եպիսկոպոսաց, զայդմանէ դարձեալ գատատան առնէ Եկեղեցին, որ զվճիոս ժողովոյն ընդունի կամ ի բաց մերժէ :

Ատանոր անբոյժ ստուգութիւնն և անսխարութիւն հաստատեալ կայ ի վերայ տրամ գետնոյ արդեանց իբաց : Քանզի Եկեղեցին չճանէ յերևան նորանոր ուսմունս, շտեղծանէ նորանոր վարդապետութիւնս, այլ պաշտպանէ և պահպանէ ըզ-

զանձն աւանդեալ ի ձեռս իւր : Իմաստ վճռոյ եպիսկոպոսացն հաւարբիոց ի Թողոլ այս ինչ է՝ թէ այսպէս հաւատացին նախորդքն մեր, սոյնպէս հաւատամք մեր, և սոյնպէս հաւատացնն նաև յաջորդքն մեր : Տիեզերականն Եկեղեցի ոչ ունի ըզվտանդ ամբարհաւաճելոյ և թեւակոխելոյ ի տարապայման անափառութիւն զերազոյն պերճապայծառութեան, և ոչ զուս գործէ պնդել զիւրն առանձնական և անհատական կարծիս : Եկեղեցին ազատ մնացեալ յինքեան՝ կայ մնայ ի սահմանս աւանդութեանն յոր միշտ և ամենայն ուրեք հաւատացեալ են :

Այլ ինչ է բողոքովին՝ յորժամ մի որ միայնակ անխալ ասիցէ զանձն իւր : Քանզի այնպիսին անդադար ի վտանգի կայ՝ զի մի՛ արք շողմարարք կամ նենդաւորք ունիցին ազդեցութիւն ի վերայ նորա, և ստիպիցեն զնա ի սահմանել վարդապետութիւնս ինչ հաւատոյ : Նոքա կարող են յօգուտ անձանց վարել զհակամիտութիւն պապին առ այս կամ՝ այն աստուածարանական կարծիս, առ այս ինչ կարգ կրօնաւորաց, և առ ախորժելին նմա վարդապետութիւն. կարող են յօգուտ անձանց վարել և զտգիտութիւն պապին ի պատմութեան վարդապետութեանց, և ս և զնախառութիւն նորա և զցանկութիւնն այսու կամ այնու նշանաւոր վճռով զվարդապետութենէ իմեքէ, որ օգտակար կարծիցի հռովմական աթոռոյն, և կցորդել ընդ անուան իւրում զգործողութիւն ինչ մեծ կամ հոյակապ՝ որ անմոռաց մնայցէ իրրև նոր ինչ ի յիշատակարանս Եկեղեցոյ : Հանդերձ այսու չիք ինչ այնպէս դիւրին վասն պապին՝ որպէս հեռացուցանել յինքենէ զամենայն ընդդիմարանութիւն. վասն զի սովորաբար ոչ որ ոչ համարձակի՝ մինչչև հարցեալ՝ առնել ինչ նմա առաջարկութիւն և կամ յայտ առնել զերկբայութիւն իւր : Ի հոգւոջ առն այնպիսւոյ խկոյն ծնանի ախորժելի իմն հայեցուած՝ որպէս յԱղամն առաջին՝ թէ ցանկութիւնքն իւր և խորհուրդք յառաջ՝ զան յաստուածային իմն ազդեցութենէ, թէ ինքն գտանի ընդ առանձինն դեկալարութեամբ երկնաւոր շնորհաց, և թէ զօրութեամբ այնք առաքելանի տուեալ է նմա ի բաժին ըրումն ամենայն իշխանու-

թեան, որպէս և լրումն ճշմարտութեան և իմաստութեան : Եւ այնչափ դիւրագոյնս հաւատայ նա այսմ, և արագ արագ բուսըն հարկանէ զայսմանէ, որչափ առաւել աննշան իցէ հմտութիւն նորա և իմաստութիւն, և որչափ նուազագոյն ունիցի գաղափար զդժուարութեանցն և զվարանմանց որք արգելուն զգիտուն որ աստուածարան յընդունելոյ զայս կամ զայն կարծիս : Այլ բարեմտագոյնն անգամ ի պապից կարող է զնել ի մտի՝ թէ ինքն քաջ ի բաց հեռի իցէ յամենայն ամբարհատութեանէ, և է միայն խոնարհ գործի Հոգւոյն Աստուծոյ, որ բերանով նորա խօսիցի :

ԽԹ.

Կարծիք պապից զանոխայութենէ իւրեանց, եւ հետեւանք նորին : — Իննովկենտիոս Թ : — Գրիգոր ԺԶ :  
 — Մարկեղոս Բ : — Կղեմէս Է. — Պօղոս Գ :

Մի ոմն ի պապից, որոյ կառավարութիւնն եթող զկնի իւր զյիշատակ դառն յոյժ և տխրական, նա ինքն է Իննովկենտիոս Թ, ինքնին խոստովան լինէր՝ թէ բնաւ իսկ տեղեակ է աստուածարանութեան, և զամենայն աւուրս կենաց իւրոց պարպեալ էր ի ինդիրս իրաւագիտութեան և ի դատաստանս : Եւ սակայն ոչ խափանեցաւ նա — դատապարտելովն զհինգ առաջարկութիւնս յաղագս շնորհաց — սկիզբն առնել վիճարանութեան՝ որ տեւաց զամն հարիւր և աւելի, և ոչ երբէք էառ զլուծումն : Նա ինքն Իննովկենտիոս՝ ըստ իւրումն իսկ ասելոյ առ եպիսկոպոսն Մանիէլիէի՝ ընկալեալ էր յԱստուծոյ զայնպիսի իմն հրաշալի յայտնութիւն Հոգւոյն սրբոյ, զի իմաստասուրբ գրոց բացայայտ ինչ եղև նմա, և ինքն յանկարծակի հասու եղև ամենախորթին նրբութեանց զպրոցական աստուածաբանութեան : Զգայր նա յանձին իւրում՝ յայտնապէս զներկայութիւն Հոգւոյն սրբոյ, որպէս ասէր ց բահանայն Օպինիի, ամին իրի ոչինչ բնաւ ունէր նա պետս ոչ Թողովոյ, ոչ խորհր-

դոյ կարողնալաց և ոչ կարծեաց կրօնաւոր քահանայից ունանց յիւրմէն խակ ընտրելոց: Այս ամենայն կախեալ կայ զնորշնչմանէ Հոգւոյն սրբոյ, ասէր նա ցաստուածաբանն եկեալս ի Փարիզէ (463):

Մատուցեալ առ մի ոմն ի պապից մերոցս ժամանակաց, դեսպան ոմն օտար տէրութեան զնացեալ ի Հռոմ, ասէր, թէ Գրիգոր ԺՁ մեծաւ միամտութեամբ խնդայր և բերկրէր ընդ բարձրութիւն իշխանութեան իւրոյ վասն պնտրիկ, զի այնու՝ ըստ իւրումն կարծելոյ՝ միշտ և յամենայնի խօսէր զճշմարտութիւն, : Քափառչինի մատոյց առ նա յաւուր միում զտեղեկագրութիւն զղրամական իրաց զանձարանին. բայց իբրև չըկարաց համոզել զպապն, և ոչ պապն կարողացաւ համոզել ըզհանձարեղն Քափառչինի իւրովք անհմուտ և կարճատես ձեռնարկութեամբք, այսպէս յայտ արար Գրիգոր զմիտս իւր. : «Ապարէն պապ եմ ես, ասէ. ապա ուրեմն չկարեմ սխալիլ, և պարտիմ զիտիլ զամենայն ինչ ազնուազոյն եղանակաւ քան զայլ ամենայն որ,» (464):

Ար և իցէ իշխանութիւն անասման խանդարէ և ապականէ զայր՝ յորոյ ի ձեռս անցանիցէ: Այսմ վկայն ամենայն պատմութիւնք աշխարհի: Աթէ իշխանութիւնս այս հոգևորական իցէ, և տիրապետիցէ ի վերայ խղճի մարդկան, մեծազոյն և ս է վտանգն ամբարհաւաճութեան. քանզի այս իշխանութիւն հրապուրիչ է և զայթակղեցուցիչ յոյժ յոյժ, և պատճառ լինի մարդոյ խաբկոյ զանձն իւր, որոյ կիրքն իշխանատիրութեան զիւրաւ պատրուակի վարագուրաւ փութոյ և խնամոց այլոցն փրկութեան, Յայնմ պայմանի այր՝ որում հասեալ իցէ անասմանն այն իշխանութիւն ունիցի զայս կարծիս զանձնէ իւրմէ, թէ ինքն է անսխալ գործի Հոգւոյն Աստուծոյ, և զիտիցէ զի հրաման նորա ի խնդիրս հաւատոյ և բարուց ընդունելի լինելոց է ներքին հնազանդութեամբ միլիոնաւոր մարդկան, գրեթէ անհնարին իմնէ պահել նմա հանապազ զզգաստութիւն Հոգւոյն: Յաւել ի սոյն և զերևակայութիւնն տարբացեալ ի Հռոմով՝ թէ ի փակարանի անդ ընտրութեան պապն թէպէտ և

պէսպէս կուսակցութիւնը բազում նենգութիւնս գործեն, սակայն Հոգին սուրբ է որ առաջնորդէ ընտրութեանն, և թէ նորինտիր պապն է գործի շնորհաց ի ընուզ զկամս և զՏրամանս Աստուծոյ ի վերայ Եկեղեցւոյ և ազգի մարդկան: Բովանդակ կեանք պապին, անդտին ի վայրկենէն բազմեցոյ նորա ի վերայ սեղանոյն, և ընդունելոյ զառաջին համբոյր ոտիցն, է անընդհատ իմն շարայարութիւն պատուոյ և մեծարանաց: Ամենայն ինչ այնպէս ի հաշիւ արկեալ է, զի պապն հաստատեսցի յայս կարծիս՝ թէ ընդ մեջ իւր և այլ մահկանացուաց բացաւ վիճ մեծ և անյատակ. այնպէս զի նաև այր ամենահուժեղու բնաւորութեամբ՝ միգապատեալ յայնքան խնկարկութեանց պատուոյ, ի վերջէ ուրեմն կարող է անկանել ի փորձութիւն որ ի վեր է քան զմարդկեղէն զօրութիւն:

ԶՄարկեղտէ Բ ականգեն՝ թէ նա յորժամ պապ եղև, լի էր ահիւ և դողութեամբ, զի մի՛ գուցէ պատահեսցի և ինքեան այն ինչ՝ որ ինչ պատահեալ էր բաղմաց ի նախորդացն իւրոց, որոց ի պապութիւն հասեալ՝ յեղափոխէին բոլորովին, և ոչ ինչ ոչ կատարէին յառաջնոցն իւրեանց բարի բարի զիտաւորութեանց: Այսքան ահա փեսասկար ազգեցութեամբ ներգործեն, ասէր նա, ի վերայ բնաւորութեան պապին փոխախութիւն վիճակի և ամբոխ բազմութեան շողմարարաց և կուսակցութեանց 463): Անդհանրական մեծաւորն եզուիժաց Օլիվա. յամին իրր 1670, ասէր. «Ամբառնայն ի պապական «իշխանութիւն այնպէս խանգարէ զբարս ընտրելոյն, զի ոչ որ «ոչ կարէ բղձանալ առն բարւոյ զայնպիսի բարձրացումն. նոյն- «պէս չեք որ որ յուսացի՝ թէ ընտրելագոյնն իսկ ի կարգի- «նալաց յորժամ պապ լինիցի, հաստատուն պահեսցէ դար- «ձեալ զգիտաւորութիւնսն բարիս և աստուածահաճոյս՝ զորս «ունէր յեղանել իւրում յայն ամթոս,» 466):

ԶՊղբմայ Է պատմէ բարեկամ նորա կարգինայն Սատոլէր զայս ինչ. «Պապն հանապաղ ունէր ի ձեռն զԱստուածա- «չունչ զիրս, և միանգամայն ունէր զիտաւորութիւնս բարիս, «բայց ժամանակ իշխանութեան նորա լի եղև սխալանք. ընդ

„ամենայն կողմն շրջեալ ջանահնար լինէր խուսափել ի Ժողո-  
 „ւոյն՝ որ ատելի էր նմա և երկիւղալի : Չարաչար առաջնորդեալ  
 „ի պաշտօնէիցն իւրոց՝ խոտորեցաւ յոյժ Աղեմէս յառաջնոցն իւ-  
 „րոց սովորութեանց և յընդարոյս բարութենէ սրտին,» (467) :

Պօղոս Գ (Քարաֆֆա) մինչև ընտրեալ ի պապութիւն՝  
 ջերմաջերմ՝ եռանդեամբ ցանկացող էր բարեկարգութեան Եկե-  
 ղեցւոյ, և քանզի առ Աղեմաւ Ե՛ չգործեցաւ ինչ բարեկարգու-  
 թիւն, ի բաց մեկնեցաւ ի պապական պալատանէն. իսկ յոր-  
 ժամ ինքն պապ եղև. ոչ ինչ ոչ մնաց ի նմա յառաջնոյ  
 փութոյն ի բարեկարգել զԵկեղեցի : Եթող նա զԵկեղեցին  
 յանօգնական վիճակի յայնմ իսկ ժամանակի՝ յորում սուր-  
 հանդակք անդադար նորանոր համբաւս բերէին զյառաջագի-  
 մութեանց բողոքականութեան : Աչ խորհեցաւ նաև ոչ մի ան-  
 գամ յառաջ վարել զԺողովն որ քանի մի ամօք յառաջա-  
 գոյն ընդհատեալ էր : Գլխաւոր պարապմունք նորա էին բազ-  
 մացուցանել և ճոխացուցանել զեղբորորդիս իւր, ծաղկեցու-  
 ցանել զսիրելին իւր կարգադրութիւն, այս ինքն է զկրօնա-  
 քննութիւնն, և հակառակել ընդդէմ Աարդոսի Ե և Փիլիպ-  
 պոսի Բ, թէպէտ և նորա միայն էին նեցուկք ամբութեան պա-  
 պական գրութեան : Պապութիւնն հաստատութեամբ եղեալ  
 էր ի մօտ նկուն առնել ընդ ոտիւք զԹագաւորս և զկայսե-  
 րս (468) :

Անտիրիոս Փանուինիոս քաջ քաջ նկարագրէ զլիակատար  
 փոփոխութիւնն գործեալ ի Պիոսէ Գ (որ էր Յովհաննէս Ան-  
 գեղոս Ե Եփեչի) յամէն 1559 ցամն 1565 : Մինչև ամբար-  
 ձեալ ի գահն պապական՝ էր նա այր մարդասէր, բարեգործ,  
 հեղ, համբերող և անշահասէր. իսկ իրրև եկաց պապ, եղև  
 զայրացիտ, ընչասէր և նախանձոտ. զերծեալ ի Տրիդենտեան  
 Ժողովոյն՝ որ ատելին էր նմա, անձնատուր եղև ի զուարճու-  
 թիւնս և ի շուայտութիւնս, ուտէր և բմպէր անչափօրէն, սի-  
 րէր զփառս և զճոխութիւն, կեղծաւորէր յամենայնի, և խոր-  
 շէր անգամ ի կարգաց աստուածպաշտութեան՝ մեկուսանալով  
 ի մատուռն իւր (469) :

Նոյն անցք անցին ապա և ընդ Իննովկենտիոս Ժ (Փամ-Փիլի), որ յառաջն համարեալ լինէր այր մեծարոյ և անարատ. իսկ իբրև պապ եղև, ընծայեաց աշխարհի զտեսարան նոր, թէ որպէս ի տեղի պապին կառավարէր զամենայն ինչ հարսն նորա, կին փառաւոր և զօշարաղ: Աղէքսանդր է (Փլլաւիոս Քիճի) մինչ կարդինալն էր՝ այր էր յաջողակ և լի ձրրիւք առաւելութեան. իսկ իբրև պապ եղև, հրաման ետ եղուի-թին Օլիվայի համողել զինքն՝ թէ ի մահու չափ համարեսցի նմա՝ եթէ ոչ փոխադրեսցէ ի Հռովմ՝ զեղբորորդիս իւր և արասցէ զնոսա մեծատունս և երևելիս: Գլխաւոր պարապումն նորա էր յետս կալ յամենայն գործոց, և վարել զկեանս յանգորրու և ի հանգստեան 470):

Զպապից վերջին ժամանակաց լաւ համարիմք լուծեամբ անցանել:

Կ.

Ազատութիւն ժողովոց: — Արգելք զուճարման ժողովոյ: — Փալլաւիչինի եւ կարծիք նորա: — Պատճառ չկամելոյ ուրուք ժողով կոչել: — Երդումն նպիսկոպոսաց: — Կարեւոր հարկ ազատութեան:

Դիտողութիւնքն զորս արարին ի Տրիգննտեան Ժողովին եւ պիսկոպոսունքն ոչ Իտալացիք, զնացքն Հռովմայ՝ որ խստագոյնս արգելոյր զրել նաև բացատրութիւնս և մեկնութիւնս վճռոց Ժողովոյն, ինքեան միայնոյ վերապահելով զմեկնութիւնս նոցին, հուսկ ուրեմն և այն՝ զի Հռովմ զբազումս յամենակարևոր վճռոց Ժողովոյն (զոր օրինակ զներողութեանց և զայլոց) թողոյր առանց բնաւ գործադրութեան, — այս ամենայն պատճառ եղև՝ զի նաև վերջին հրաւերն ի նոր Ժողով տինդերական լուսաց: . . Յաշխարհս յորս ներգործէր կրօնաբնութիւն, նաև ցանկալն ևս՝ զի Ժողով ինչ կոչեսցի՝ ի յանցանս գրէր, և զյանցաւորն արկանէր ի վտանգ կորստեան:

Ի պատճառս Տրիգննտեան վճռոյն և ընդդիմակացութեան տէրութեանց՝ հռովմէական աթոռն կորոյս ոչ սակաւս ինչ

յեկամտից իւրոց և յիրաւանց . բայց յաղմէ կողմանէ փոյթ պնդութեան կարգին եղութեաց, կազմութիւն հաստատուն ատենական Թողութոց, և կարգումն նուիրակ անուանեալ դեսպանութեանց՝ որք յառաջն անձանօթք էին, մեծապէս բարձրացուցին զգորտութիւն և զազդեցութիւն Հոռովայ : Յայնձեռեւ ի Հոռով՝ այնպիսի իմն ատելութիւն զոյր ընդդէմ Թողութոց, զի և զանուն իսկ Թողութոց արգելեալ էր չառնուլ ի բերան : Յորժամ վասն լուծանելոյ զվէճն որ յաղագս շնորհաց՝ Մոլինեանք պահանջէին զգումարումն Թողութոց, յամին 1602 : Գոմինիկեանն Փէնեա գրէր . « Ի Հոռով, զէթ ի խնդիրս տեսական ատուածաբանութեան, բառս «իննորո» հալածական է իրրև զեղանակապտութիւն, » 471) :

Այսպէս անցին ամբ 500, և ոչ ուրեք երբէք լսելի եղև յայտնապէս հաստատուն իմն տենչ Թողով կոչելոյ : Յաստուածաբանական դասադիրս և ի դպրոցս սովորութիւն էր ուսուցանել՝ թէ սիւնհոգոսքն ոչ միայն օգտակարք են, այլ և անհրաժեշտ հարկաւ կարևորք . բայց այս, որպէս և այլ ինչ բաղում, մնայր միայն ի տեսական վիճակի . իսկ արդեամբք ամենեքեան իսկ տեսանէին՝ զի Թողութն նշոյնպէս չյարմարին պապական դրութեան, որպէս և ազգային երեսփոխանութիւնն չյարմարէր միապետութեան Լուղովիկոսի ԹՊ : Վարդինալն Փալլաւիչինի լաւ քան զոյր զամենսին բացայայտէր զոյս իմաստ . քանզի ասէր . « Կարձեալ կոչելն զԹողով նոր փորձել է զԱտուած . այնպիսի Թողութումն մտանգաւոր է յոյժ յոյժ, և կորուստ սպառնայ Եկեղեցւոյ, » — Ըստ այսմ՝ այնպէս վարկանի նա՝ թէ իւրն պատմութիւն Տրիդենտեան Թողութոյն զմի և զնոյն սպաւորութիւն գործեսցէ ի վերայ ընթերցողին՝ զոր ինչ և պատմութիւնն Սարիեայ \*) : Պապքն, ասէ Փալլաւիչինի, հանապաղ հակառակ կացեալ են տեղական Թողութոց, » 472) :

(\*) Պօղոս Սմբէլի վէճերիցի (վիճանեալ յամին 1625) անուանէ է իւրով աղաբարձութեամբն, և « Պատմութեամբ Տրիդենտեան Թողութոյն » :

Պիտաւոր պատճառն, որոյ վասն ոչ ևս ցանկայր որ գումարման ժողովոյ, այս ինչէ՝ զի ոչ էր մարթ ակն ունել թէ գտանիցի ի նմա աղարթիւն խորհրդիցսն և կարծեաց եպիսկոպոսացն, որ առաջին և կարեւոր պայման է կանոնաւորութեան որոյ և իցէ սիւնհոգոսի։ Ձայն հաստատէր և պատմութիւն նորոց ժամանակաց, որպէս և խոկումն իսկութեան իրին։ Պապական դուրսիւնն, որ ոչ ճանաչէ ինքնիշխանս զոլ զեպիսկոպոսունն, այլ միայն հպատակս և փոխանորդս պապին, չկարէ հրաման տալ ժողով լինելոյ ըստ նախնի կարգաց Եկեղեցւոյ։ Եթէ եպիսկոպոսունք գիտակ իցին կամաց և կարծեաց պապին զայս ինչ կամ զայն ինչ խնդրոյ, յանդգնութիւն իմն համարեցի նոցա և զուր ջան՝ հակառակ այնմ խօսել. իսկ եթէ անդէտք իցին, նախ պարտին տեղեկանալ, և ըստ այնմ ապա ասել զիւրեանցն կարծիս։ Զչորի խօսելով, ժողով ինչ տիեզերական չկարէ կալ ի համապատիւ աստիճանի ընդ անխալ վարդապետի հաւատոց, թէպէտ և չիք երկրայութիւն՝ զի կարող է ցուցանել աշխարհի զամենայն մեծփայեղբուրսն և զճանդէսս, զճառս եպիսկոպոսաց և զսահմանս սիւնհոգոսի 473)։

Եւ ահա այսր աղագաւ նուիրակք պապին ի Տրիդենտոն յարձակեցան ի վերայ եպիսկոպոսացն այնոցիկ՝ որք համարձակեալ էին ասել զկարծիս իւրեանց, և կոչեցին զնոսա հերետիկոսս և խոզվարարս։ Եպիսկոպոսունք որք երդնուն հաստատուն պահել զիրաւունս, զնախապատուութիւնս, զարօնութիւնս և զիշխանութիւն տեառն իւրեանց՝ պապին, պաշտպան կալ նմա և յամենայնի գործակից լինել յաճումն այնր իշխանութեան, — զի զայս երզումն երդնու ամենայն եպիսկոպոս, — չկարեն համարել զանձինս իւրեանց աղատ անգամս ինքնիշխան ժողովոյ. այլ և ոչ ժողովուրդք քրիստոնէից կարող են այնպիսիս համարել զնոսա։ Ձայս պահանջէ արդէն բնական իրաւունքն և արդարութիւն. զի և չէ մարթ զարսն զայնոսիկ զեպիսկոպոսունս՝ պատասխանատուս առնել վասն վճոց որք չեն ի ձեռս նոցա 474)։ Եւ յորքիկ են աւասիկ պատճառքն զիսաւորք՝ որոց վասն յընթացս ամաց երեք հա-

րիւրոց ոչ եղև ժողով և ոչ մի. և ահա այս աղագաւ խոյս  
նտուռն ամենեքեան յանշնոր աշխարհի սնորի, որպէս անուանէ  
կարգինայն Օրսի զփեղեղերականն և զայլ ժողովս 475):

Իսկութիւն ժողովոյն է լիակատար և ստոյգ ազատութիւն  
ամենայն եպիսկոպոսաց, ազատութիւն ի բարոյական հարկա-  
դրութենէ, յերկիւղէ և ի կաշառաց: Գումարումն արանց՝  
որք զօրութեամբ և քրման տուելոյ համարին անձանց զլիաւոր  
նպատակ և պարտս խղճի՝ խնամ ունել տարածման պատկան  
զօրութեան 476), և որք կեան անդադար ի կատկածանս  
երկիւղի՝ թէ մի գուցէ ձգեսցեն յանձնես զսոցոհութիւն պա-  
լատանն և զկշտամբանս և քրմնազանցութեան, և պատճառս  
տայցեն պէտպէս բժականութեանց ի ղեկավարութեան վիճա-  
կին, — գումարումն այսպիսի մարդկան՝ ասեմ՝ չկարէ ազատ կո-  
չիլ յայնպիսի խնդրս յոր բանն իցէ զիշխանութենէ և զձեռ-  
ներիցութեանց հստովեական աթոռոյն: Աւ արդեամբ իսկ գրե-  
թէ ամենայն խնդիրք (բաց ի սակաւուց ինչ բացառութեանց)  
որք կարող իցեն նիւթ լինել ժողովական խորհրդակցութեան՝  
այդպիսի իսկ ունին յատկութիւն սեպհական, այս ինքն է՝ զի  
վերաբերին կամ պատկան զրութեան և կամ արտօնութեանց  
պատկին: Աւ ոչ մի որ յեպիսկոպոսաց և քրմեալ է զայս ինչ՝  
թէ կերագոյն օրէնք գնացից իւրոց և զօրժողութեանց եղիցի  
բարին և օգուտն նկեղեցոյ և աստուածապաշտութեան. պլ  
և քրմեալ է միայն փոյթ ունել օգտից և շահուց պատկան  
պալատանն: Առ ձեռն պատրաստ կան բազմապատիկ օրինակք՝  
